Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

ԴՈՒՔ ԼՈՒՍԱԼՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ԼԵՌՈՒՄՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԴ
ԷՈՒՄՈՊԱՏԵԼԱՀԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹԿԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՆ՝

www.freebooks.do.am

ՀԱՐՀԱՎԱՆ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:
ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

ՎԱՀԳԵՆ ՏԱԼՅԱՆ

Երգում

ՎԱՀԳԵՆ ՏԱԼՅԱՆ

Ելքում

ՎԵՊ-ՎԱՎԵՐԱՊԱՏՈՒՄ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ԵՐԵՎԱՆ — 1986

ԳՄԴ 84Հ7
Տ 134

Տալյան Վ. Գ.

Տ 134 Շերամ: Վեպ-վավերապատում /Վազգեն Տալյան.— Եր.: Սովետ. գրող, 1986.— 336 էջ.

Վեպը նվիրված է հայ ժողովրդի սիրերգակ գուսան Շերամին: Գիրքը պատմում է մեծ գուսանի կյանքի, նրա ունեցած ստեղծագործական միջավայրի, երգերի ստեղծման և համաժողովրդական ճանաչման մասին:

Տ $\frac{4702080200\ (458))}{705\ (01)\ 86}$ — 86 «Տ» ԳՄԴ 84Հ7

© «Սովետական գրող» հրատարակչություն, 1986

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱԿՈՒՆՔ

1

Հինավուրց Կարս քաղաքում ապրում էր մի արհեստավոր՝ Բաղդասար անունով: Կարծատև էր եղել նրա ուսումը մասնավոր դպրոցում. հետո հայրը՝ Ասատուրը, նրան տվել էր պայտարի աշակերտ: Ասատուրի ընտանիքը վաղուց ծանոթ էր հայրենի զրույցներին ու հերոսական պատումներին: Նրա հարկի տակ հաճախ հյուրընկալվում էին աշուղներն ու հեքիաթասացները, երգիչներն ու նվագածուները և ջահել Բաղդասարի սիրտը հեղեղում երգով: Ու երբ նրա հոգում բորբոքվեց սիրո կրակը, սազ առավ ձեռքը, նվագել սովորեց, սկսեց երգել ու տաղեր հորինել՝ հայերեն ու թուրքերեն, երգեց քրդերեն ու պարսկերեն: Եվ նա աշուղ դարձավ: Իր տաղերը նա ձոնեց մի աղջկա, որն ամենագեղեցիկն էր քաղաքում: Սակայն Բաղդասարը գովերգեց ոչ միայն սիրեցյալ գեղեցկուհուն: Նա իր երգը տարավ արհեստավորների օթևանները, գոմի օդաները, տարավ ժողովրդի մեջ: Եվ որովհետև անթերի էր նրա տաղը, արհեստավոր ու ռանչպար մարդիկ նրա անունը դրեցին Քյամիլի, որ է՝ Կատարյալ: Բայց տաղերը չմարեցին սիրո հուրը աշուղի սրտում. նա ցանկացավ ծխացնել օջախն իր: Եվ դրա բոցավառողը պետք է լիներ այն աղջիկը, որ ամենագեղեցիկն էր ամբողջ քաղաքում, պետք է լիներ Տալիթան և ուրիշ ոչ մեկը:

Աշուղի ձայնը վաղուց լսելի էր դարձել աղջկան: Ու երիտասարդի ծնողները խնամախոսներ ուղարկեցին, բայց վերադարձան մերժված: Բաղդասարը չընկրկեց, բայցև վրդովված մտածեց, թե ինչո՞ւ պիտի իրեն աղջիկ տան, երբ ինքը հասարակ մի արհես-

տավոր է, դեռևս անհայտ մի աշուղ: Արցունքով անցան նաև Ցալիթայի օրերը. և նա իմաց տվեց սիրեցյալին, որ ինքը համաձայն է նրա կինը դառնալու: Ու նրանք խիզախ մի վճիռ կայացրին, որի առաջ նահանջեց մութ ադաթը:

Մթնշաղն արդեն պարուրում էր Կարս քաղաքի հին թաղերից մեկը, երբ Բաղդասարը, որ հենց ինքը աշուղ Քյամիլին էր, սազը ուսից կախ, մոտեցավ սիրեցյալ կույսի տանը: Մոտեցավ, նայեց չորսդին, ապա ստվերի թիկնոցով ծպտված սպասեց:

Լուսամուտի փեղկերն անաղմուկ բացվեցին: Երևաց Տալիթան: Նրա ձեռքին մի մեծ կապոց կար: Աղջիկը նշան արեց, որ տղան կապոցը բռնի, և նետեց ցած: Բաղդասարն այնքան զգույշ որսաց դա, որ շրշյուն անգամ չլսվեց: Մի քանի քայլ հեռացավ ու կանգնեց մոտակա անլուսամուտ պատի տակ: Վերջապես Տալիթան երևաց դռան մեջ, անցավ շեմքը, կամացուկ ծածկեց փեղկերն ու մոտեցավ նրան: Աղջիկը մի հայացք գցեց հայրական տան մթագնող զանգվածին և, արցունքն աչքերին, հեզությամբ քայլեց երիտասարդի ետևից:

...Տալյան տոհմի պատմությունը լռում է, թե ի՞նչ միջոցով նրանք հասան Երևան, ինչպե՞ս է, որ ծնողները չհետապնդեցին նրանց: Հայտնի է լոկ, որ երիտասարդ զույգը հասավ Երևան, ու մի գթասիրտ քահանա նրանց միությունը ամրապնդեց սուրբ պսակով:

Եվ այսպես, Բաղդասարն ու Տալիթան ամուսնացան և համերաշխ ու սիրով ապրեցին Երևանում ինը տարի: Նրանց աղքատիկ տան լռությունը չորս անգամ խախտեցին նորածին մանկանց ճիչերը: Չորս զավակ ունեցան Բաղդասարն ու Տալիթան՝ երկու որդի և երկու դուստր: Ավագ որդու անունը դրեցին Հովհաննես, իսկ կրտսերինը՝ Կարապետ: Բայց կարո՞ղ էին Կարսի օդին ու ջրին սովոր ամուսինները ընտելանալ տասնիններորդ դարասկզբի Երևանի բնական պայմաններին: Տալիթան ավելի դիմացկուն եղավ, իսկ Բաղդասարը սաստիկ տենդից մահացավ: Եվ ջահել կինը մնաց չորս զավակների հետ՝ որբևայրի: Սակայն դժոխային պայմանները չընկճեցին նրան: Եվ նրա անկոտրում կամքը ճշմարիտ ուղի ցույց տվեց: Տալիթան առավ իր չորս որբուկներին ու գնաց հաստատվեց Գյումրի քաղաքում:

Առեղծվածային է, թե ո՞ւմ օգնությամբ էր, որ Տալիթան տուն դրեց, զավակներին իր թևի տակ առավ, շահեց-պահեց, մեծացրեց: Կարսից Գյումրի գաղթած հարազատներն էին երևի, աշուղ

Քյամիլիին ճանաչող ու սիրող սրտացավնե՞րը գուցե... Եվ շուտով Գյումրի քաղաքում բարձր անուն վաստակեց Տալիթայի, կամ ինչպես գյումրեցիները անվանեցին՝ Տալոյի տունը: Ու երբ խոսք էր լինում տոհմի նոր տան կամ տիրուհու մասին, ասում էին՝ Տալոյենց տունը, Տալոյենց տոհմը: Եվ այդ փառավոր կնոջ՝ Տալիթա մամիկի անունից սկիզբ առավ Տալյան ազգանունը:

Տարիներն անցան կարիքի դեմ օրհասական պայքարի մեջ: Քյամիլիի և Տալիթայի Հովհաննես ու Կարապետ որդիները հասակ առան ու գործատուն հիմնեցին: Հովհաննեսը ժառանգել էր հոր բանաստեղծելու շնորհքը, իսկ Կարապետը՝ երգելու: Նրանք սրճարան բաց արեցին, որը հետագայում հռչակվեց որպես Տալոյենց դալֆա: Սա սոսկ սրճարան չէր. երգի ու բանաստեղծության, հեքիաթների ու զրույցների տուն դարձավ տաքուկ ու հարմարավետ այդ փոքրիկ հաստատությունը: Աշխարհի բոլոր կողմերից աշուղներ ու ասացողներ էին գալիս այդտեղ, գուսանների և ժողովրդական բառուբանի հմուտ վարպետների մրցումներ էին տեղի ունենում: Եվ օրավուր սկսեցին նոր անուններ փայլատակել Շիրակի երկնակամարում: Եվ Տալոյենց սրճարանը, արվեստի այդ տունը, տասնամյակներ պահպանում էր Տալիթա մամիկի՝ Տալոյի պանծալի անունը:

Տալոյենց Կարապետն ամուսնացավ Խաթունի հետ. և նրանք ունեցան չորս որդի և մի դուստր՝ Բաղդասար, Գրիգոր, Համբարձում, Հարություն և Փեփրոն: Հովհաննեսի և Կարապետի զավակները կրծատեցին ազգանունը և մինչև քսաներորդ դարի սկիզբը գրվում էին Տալյանց. ապա և նրանց թոռներն սկսեցին գրվել պարզապես Տալյան: Հովհաննեսը եղբորից շուտ վախճանվեց: Եվ սրա ավագ որդին շարունակեց հոր շառավիղը. դա Մկրտիչ Տալյանցն էր, որ հետո աշուղ դարձավ ու հռչակվեց որպես աշուղ Ջամալի, որ նշանակում է գեղեցկություն: Նշանավոր Շարա Տալյանի հայրն էր:

Ու մի օր էլ Ախալքալաքից Գյումրի եկավ Սերովբե Լևոնյանը, որ արդեն երիտասարդ աշուղ էր և Շիրակում հայտնի դարձավ աշուղ Ջիվանի անունով: Նա իր առաջին մկրտությունն ստացավ Տալոյենց սրճարանի կամարների տակ: Երգ ու տաղի այդ տունն էր, որ հաղթանակի դափնի շնորհեց նրան աշուղների մրցման ժամանակ: Նա սիրահարվեց աշուղ Ջամալու քրոջը՝ Աշխենին և ամուսնացավ նրա հետ: Ու Ջիվանին դարձավ Տալյան տոհմի փեսան:

Երեկոն տարածվեց ձյունապատ քաղաքի վրա: Լռեցին ցերեկային ձայները, նոսրացավ անցուդարձը փողոցներում: Բայց չէր լռում երգը Տալոյենց Կարապետի սրճարանում, ուր հեռավոր վայրերից աշուղներ էին իջևանել: Ու երգի համար իրենց կրակը գցող գյումրեցիները խիտ-խիտ լցվել էին սրճարան, որ զմայլվեն նրանցով: Ցաշրիկ վաճառասեղանի մի անկյունում նստած էր Կարապետի միջնեկ որդին՝ փոքրիկ Գրիգորն ու հիացած ունկնդրում էր երգիչներին, երազում նրանց պես նվագել. նրանց պես գոհար տողեր շարել ու երգել:

Տասներկու թե տասներեք տարեկան էր Գրիգորն արդեն, երբ ինքն իրեն, իր անձուկ դուքյանում՝ արհեստանոցում, երգեր էր դնդնում, երգում էր իր քաղցր ձայնով: Սակայն դրանից տարիներ առաջ...

Հիվանդ պառկած էր Գրիգորի հայրը՝ Կարապետը: Նրա կինը՝ Խաթունը, վշտահար նստել էր ցաշրիկ աթոռակին, կզակն առել բուռը և, աջ ու ձախ ճոճվելով, աղոթք էր մրմնջում: Կարապետն ամենից շատ սիրում էր Գրիգորին. կարծես զգում էր, թե ինչ պիտի դառնա որդին. բայց առանց ուսում առնելու կարո՞ղ է նա շնորհքով մարդ դառնալ... Ու մի օր, երբ հիվանդի վիճակը մի փոքր թեթևացավ, աչքերը բացեց, նայեց մի բուռ դարձած կնոջը, ավագ որդուն՝ Բաղդասարին, խոր հառաչեց և խոսեց.

— Ա՛յ կնիկ, Խաթուն, ականջ էրա, թե ինչ կըսեմ· Ես մե բաղձանքմ ունիմ. տեղես որ ելա, Գրիգորիս հոգևոր դպրոց պիտի տամ. թող ուսում առնի՝ մարդ դառնա: Կհասկնա՞ս, ա՛յ կնիկ:

Սակայն Կարապետը չհաղթահարեց ծանր հիվանդությունը: Մեռավ նա և նրա բաղձանքը ո՛չ Խաթունը կարողացավ իրագործել, ոչ էլ ավագ որդին: Իսկ Գրիգորից փոքրերը ի՞նչ կարող էին անել:

Եվ ճարը կտրած Խաթունը Գրիգորին հանեց դպրոցից ու տվեց ատաղձագործի մոտ աշակերտելու, ապա մանրավաճառի, բայց Գրիգորին դուր չեկավ այդ գործը: Եվ նա գնաց աշակերտելու հյուսն վարպետի մոտ:

Ահա արհեստավոր է նա, բայց տաղերը հանգիստ չեն տա-

լիս նրան գիշեր ու ցերեկ: Այդ ի՞նչ երգեր են միտքը գալիս. հոր սրճարանում լսածնե՞րն են միթե: Իսկ սա՞: Այս երգը նա ո՛չ մի տեղ, ո՛չ մեկից չի լսել...

Տե՛ր աստված, ով է հուշում այս երգերն իրեն: Գուցե երկընքում թևաձող աղավնինե՞րը, բարդիների սոսափյո՞ւնը, Ախուրյանի կարկա՞չը... Ու պատանին բարձր ձայնով երգում է: Նա մոտ է կանչում սիրունին, որ իրեն մեկ օրվա կյանք նվիրի, իսկ ինքն իր կյանքից նրան կտա շատ տարիներ...

Մուրճով մեխ է խփում Գրիգորը, թե շաղափով հղկում ինչ-որ պահարանի կողը, դուրով փորում տախտակը, թե մի այլ բան, երգն անբաժան է նրանից: Նեղլիկ արհեստանոցը արճագանքում է սկզբում մեղմ, ապա ուժգնացող ձայնին:

Կարճ տևեց պատանի Գրիգորի աշխատանքը ուրիշի արհեստանոցում: Շուտով նա իր դուքյանն ունեցավ. մայրն ու ավագ եղբայրն օգնեցին: Եվ աշխատում է նա այդտեղ առավոտից իրիկուն: Բարդ իրեր չեն նրա պատրաստածը՝ տաշտ, սնդուկ, պարզունակ պահարան, բայց ապրուստ են բերում դրանք: Հապա էլ ինչո՞վ պիտի օգնի նա մորը, ընտանիքին... Հանկարծ հիշում է, թե հոր սրճարանում երգող աշուղները ինչ գործիքներ էին նվագում. այս մեկը սազ էր նվագում, այն մեկը՝ քյամանի, երրորդը՝ թառ... Եվ մի խենթ միտք շողաց պատանու ուղեղում՝ ինքը սազ պետք է շինի...

Իրիկնամուտ էր արդեն, երբ մայրը եկավ հասավ արհեստանոց:

— Գիրքո՛ր ջան, ընչի՞ ուշացար,— հարցրեց նա:

Տղան խանդավառված գրկեց մորը, համբուրեց սմքած այտը և ներշնչված ասաց.

— Հիմի կուգամ, մա՛ ջան: Դու գնա, քիչմ ետև կուգամ:

Ու գրկելով մոր վտիտ ուսերը, դուրս տարավ: Մայրը կասկածների մեջ մոլորված քայլեց սովորական ճանապարհով· Մինչև տուն հասնելը նրա ականջին հնչում էին որդու բառերը:

Եվ սազ շինեց Գրիգորը, իրիկունը փեշի տակ դրած տարավ տուն, բոլորից թաքուն լարեր գցեց ու սկսեց կամացուկ տնկտնկացնել: Վերջապե՜ս... ինքը նվագում է, ինքը՝ երիտասարդ հյուսնը...

Գրիգորը նստել է իր շինած սնդուկի վրա ու մտամոլոր նայում է դրսում խլվլացող մանուկներին, որ վազվզում են կալա-

չափ հրապարակում, խաղերին հարմար երգեր ասում, բարձրաձայն ծիծաղում, բլբլացնում: Նրանց աշխույժ եռուզեռով հմայված Գրիգորը ոտքի է կանգնում, ժպտում: Աչքերում ինչ-որ կայծեր են շողում: Եվ նա, սազն առնելով ձեռքը, սկսում է երեխաների երգերի չափով խաղալ լարերի հետ ու մեղմիկ երգել: Բայց այս ի՞նչ է... Երեխաների երգն ավելի բազմահնչյուն է, քան սազի երեք լարերն են հնարավորություն տալիս արտահայտելու այդ... Գրիգորը մի պահ շուռումուռ է տալիս սազը և տենդագին մտմտում.

— Է՛հ, սազն էն չէ, ինչ որ կուզեմ...

Նա խորազնին նայեց թթենու այն կոճղին, որ հանգչում էր նոր շինած տաշտի մեջ: Հիշեց, որ թառ շինող վարպետները նման կոճղերից էին ստեղծում թառի գուշը: Նրա աչքի առաջ կանգնեց հոր սրճարանում հաճախ հանդես եկող այն երգիչը, որ ինքն իրեն նվագակցում էր թառով...

Ա՛յ, թառն ավելի հարուստ է հնչյուններով, արձագանքն ավելի խորունկ ու թավ. իսկ սազը...

Գրիգորը նորից նայեց դուրս, երեխաների երգախառն աղմուկին ականջ դրեց ու ձեռքի սազը գցեց դազգահին...

Եվ նա տաշտի միջից թափով խլեց թթենու կոճղը, թեփն ու փոշին փչեց ու բարձր պահած՝ մրմնջաց.

— Սազը թող մնա. ես թառ պիտի շինեմ, թա՛ռ...— բացականչեց նա և սկսեց փորել անտաշ կոճղը:

3

Գիշեր է. տնեցիներից միայն Գրիգորն է արթուն: Պառկել է մութ սենյակում, իր ձեռքով շինած առաջին թառն առել կրծքին ու կարծես զրույց է անում նրա հետ: Լարերը մեղմիկ արձագանքում են նրա շոյանքին: Ու մտածում է Գրիգորը. ինչպե՞ս կարողացավ թառ շինել. մի՞թե ինքը՝ հասարակ հյուսնը, այդքան շնորհք ունի... «Է՛, Գրիգոր, թառ էլ ունեցար. հըբը չալե՞լ ով պիտի սովորեցնի քեզ, օղո՛ւլ...— ախ քաշեց ու հետո, թե՝ հեչ մի՛ վախենա. դու կեղնիս քու վարժապետը»:

Եվ նա մեղմաձայն նվագում է ու հետն էլ երգում. նա ստեղծում է իր նոր տաղը:

Մայրը քնած չէ. անհանգիստ շուռումուռ է գալիս անկողնում: Գրիգորը մի վայրկյան լռում է, թառը պառկեցնում է կողքին ու ձևացնում, թե քնել է: Սենյակում մութ է: Կտուրի թեք պատուհանից սեղանին է ընկել լուսնի շողքը, որը դանդաղ սահում և լուսավորում է երիտասարդի դեմքը: Շուռ է գալիս, նայում նվագարանին. շրթունքները շարժվում են: Եվ նա հազիվ լսելի մրմնջում է, թե ինչպես գարնան թևով հանդ է գնում սիրունը և պղտորում ջահել տղայի արյունը:

— Ա՛յ որդի,— շշնջում է մայրը,— հերիք էղավ, էս է լույսը կբացվի:

Գրիգորը նվագարանն զգուշությամբ դնում է սեղանին, վերմակը քաշում գլխին ու շարունակում դնդնալ:

Մյուս օրը մայրն իր կարծիքը հայտնեց Բաղդասարին՝ վայթե ախպերդ պսակվել կուզե: Եվ Գրիգորին ամուսնացրին: Ամուսնացավ նա, բայց այդ փոքրիկ գործով տունուտեղ կարո՞ղ է պահել: Իրեն արդեն լավ նվագող են համարում, ճիշտ է. բայց հնարավո՞ր է դրանով այնքան վաստակել, որ ընտանիքը անոթի չմնա Եվ մի նոր համարձակ վճիռ լուսավորեց նրա միտքը: Հարկավոր է եռյակ կազմել և երգ ու նվագով ապահովել մոր, կնոջ իրենից փոքր եղբայրների և քրոջ գոյությունը: Ինքը տաղեր հորինելու շնորհք էլ ունի, ուրեմն էլ ինչո՞ւ վախենա դժվարություններից: Եվ անակնկալ դիպվածը նպաստեց նրա վճռի իրականացմանը: .

Գրիգորը նստել է արհեստանոցում ու նվագում է: Հանկարծ երգն ընդհատում է, թառը դնում դազգահին ու ոտքի կանգնում: Քայլում է դեպի դուռը, որ վարագուրվում է ինչ-որ մեկի կերպարանքով: Մարդը մոտենում է: Երիտասարդը բաց է անում դուռը: Եկողը զարմացած է.

— Սուր աչք ունիս, Գրիգոր. ձեռաց տեսար ընձի:

Գրիգորը ժպտում է: Աթոռից փչում է թեփը և հրում ալեհերի կողմը.

— Նստի, ուստա Հագո:

— Ըսես-չըսես, պտի նստիմ. գործ ունիմ հետդ:

Այդ ծերունին Հակոբ Մանուկյանն է՝ Զոնգուր Հագոն. նա եկել է, որ Գրիգորին ընկերակից դարձնի իրեն:

— Մեն-մենակ չալելով ի՞նչ պտի ստանաս... Կուզեմ ըսել, որ գաս ընձի ընկեր էղնիս... Թառ չալողս թողեց հեռացավ:

Երիտասարդը մտածմունքի մեջ ընկավ:

— Էլ ի՞նչ կմտածես, Գրիգոր. լավ թառ նվագող ես, հայտնի երգիչ ես արդեն. էս արհեստով ի՞նչդ պտի տուն պահես, մորդ օգնական էղնիս:

— Լավ, ուստա Հագո. դու ընձեն լավ գիտես, ի՞նչ ըսեմ:

— Ապրի՛ս,— զվարթացավ Ծերունին, գրկեց երիտասարդին, թփթփացրեց մեջքը:— Հերդ որ սաղ էղնիր, ինչքա՞ն պտի ուրախանար... ողորմի՛ հոգուն:

Երկուսն էլ տրտմեցին: Հագոն գնաց: Պատվաբեր հրավերն ընդունված էր:

4

Աշուն է. ասես ոսկե փոշի է շաղ տված ամենուրեք: Բարդիները խաղացնում են իրենց դեղնափայլ ծնծղաները, հացիները գետին են իջեցնում մեղմօրոր տատանվող տերևները:

Գրիգորն իր արհեստանոցում է: Ներսում ու դրսի հրապարակում մարդիկ են հավաքված և լուռ լսում են նրա երգը: Երգն ավարտվեց: Գրիգորը նվագարանը դրեց դազգահի վրա, ծխամորճը լցրեց ու ծխեց: Մեկը մոտեցավ երգչին և ասաց.

— Գրիգո՛ր ջան, էգուց մեկէլօրը ախպորս հարսնիքն է:

Երգիչը թափ տվեց ծխամորճի մոխիրն ու, շեղակի նայելով ընկերոջը՝ բացականչեց.

— Ծո՛, ի՞նչ կըսես.

— Հըբը՛... Հիմի չե՞ս կրնա երգմ հանե նորապսակների վրա:

Հարցն անակնկալ էր. Գրիգորը մի պահ շփեց մորուքն ու պատասխանեց.

— Աշեմ՝ տեսնիմ:

Եվ գիշերային անդորրի մեջ նորից թրթռացին նվագարանի լարերը: Լամպի աղոտ լույսի տակ երգիչը մտմտաց.

Պարտիզում վարդեր բացված՝
Կսպասեն սոխակի.

Երգն ստեղծվեց մի գիշերում և ընդունվեց խանդավառությամբ:

Դրան հետևեցին նորանոր տաղեր: Եվ այնքան բեղմնավոր էր աշուղ Քյամիլիի թոռան քնարը, որ շուտով Գրիգոր Տալյանցը

գրավեց այդ ժամանակի հայտնի բանահավաք ու բանաստեղծ Աղեքսանդր Մխիթարյանցի ուշադրությունը: Եվ նա մի օր դիմեց երգչին.

— Գոքո՛ր, էդքան երգ ես հորինում, երգում ես ու անցնում գնում է. ախր ափսոս են, բեր տպենք, որ չկորչեն, չմոռացվեն:

— Է՛հ,— անփութորեն պատասխանում էր Գրիգորը,— կկորչեն՝ նորը կհնարեմ:

— Զեղա՛վ... քառասուն տարեկան մարդ ես, նշանավոր երգիչ ու բանաստեղծ. մի քանի հատ գրե բեր, ջոկենք ու տպենք: Ես մի գիրք պիտի կազմեմ. էդտեղ կդնեմ:

— Է՛հ, վարժապետ ջան, ես գրե՞լ երբ գիտեմ, որ գրեմ՝ բերեմ:

— Ինչքան որ գիտես՝ հերիք է. բեր, բեր, ես կուղղեմ՝ կտպեմ:

Գրիգորը երկու-երեք երգ է հանձնում իր մեկենասին: Եվ 1900 թվականին լույս տեսած «Խաղեր ու տաղեր» հավաքածուի մեջ, որը կազմել ու խմբագրել էր նշանավոր այդ գրասերը, տպագրվեց երգչի առաջին «Պարտիզում վարդեր բացված» տաղը:

Անցան տարիները արդար քրտինքի և հանդուգն երազանքի ճանապարհով: Գիտուն հովանավորի հոգատար ձեռքը նոր ուղղություն տվեց Տալոյենց Գրիգորին: Եվ երկու տարի անց տպագրվեց նրա երախայրիքը՝ «Երգիչ Գրիգոր Տալյանցի Քնարը» ժողովածուն. Գրքույկի բնաբանն էր բանասերի երկու տողը, ուր երգը համեմատվում է ճախրող թռչունի հետ:

Առաջին գրքույկի պատճառած ուրախությունն աննկարագրելի էր: Քաջալերանքը երգչին ոգևորեց, և նա նոր տաղեր ստեղծեց: Այդ օրերին երկրով մեկ թնդաց զորավար Անդրանիկի անունը· Գրիգորն էլ փառաբանեց նրա քաջությունը: Ընկերների խորհրդով նա նոր ժողովածու կազմեց, որի մեջ զետեղված էր նաև «Նվեր Սասնո հերոս քաջամարտիկ Անդրանիկին» երգը: «Գանգատի շանթերը», այսպես էր այդ գրքույկի անունը: Հեղափոխական և հայրենասիրական երգեր էին դրա էջերում: Գրքույկը լույս տեսավ 1905 թվականին. և ո՛չ հեղինակի անունը կար դրա կազմի վրա, ո՛չ էլ մարդիկ գիտեին, թե որ քաղաքում և որ տպարանում է տպագրվել: Հռչակավոր երգչին ընկերներն ու բարեկամները ջանում էին հեռու պահել ոստիկանության հետապնդումից: Շատ քչերը գիտեին միայն, որ այդ մարտաշունչ մատյանը պատկանում է Գրիգոր Տալյանցի գրչին:

Ու կանչեցին երգչին ամեն տեղից: Իր նվագախումբն առած՝ նա շրջագայեց երկրեերկիր, գովերգեց հերոսություն, սեր ու

[illegible]։ Ման եկավ նա հազար ու մի տեղ և սուր աչքով տեսավ, թե որքան թշվառություն կա ամենուրեք, որքան անարդարություն ու տառապանք։

Եվ բանվորական երգեր գրեց նա. ըմբոստացավ օտար և յուրային կեղեքիչների դեմ, փառաբանեց Զեյթունի քաջերին, ազատագրական պայքարի հերոսներին։

Կեսօր էր։ Տալոյենց տան շեմքին մոտեցավ մի մարդ ու ներս մտնելով ողջունեց երգչի մորը.

— Մի՛ ելնի, մերըս,— ընդառաջ գնաց եկվորը,— ճանաչեցի՞ր՝ Մուշեղն եմ, տալիդ տղեն։

Դռան մեջ երևում է երգիչը։ Գրկախառնվում են։ Մուշեղն ասում է.

— Մի բեր տեսնեմ ի՞նչ նոր բան ես գրել, Գրիգոր։

Երգիչը ցույց է տալիս նոր գրքույկը։ Մուշեղը տեսավ, որ այդ գրքույկին ըմբոստության բնույթ էին տալիս հեղափոխական երգերը, ինչպես նաև՝ «Քարեր, դուք խոսեք», «Զեյթունցիների քայլերգը», «Հնչակյանի ուխտը» տողերը։

Քաղաքի կենտրոնից Բաղդասարի առանձնատանն են հասնում աղաղակներ, հատուկենտ կրակոցների, վազվզոցի ձայներ, ձիերի դոփյուն։ Եվ տանտիրոջ ընտանիքն անհանգստանում է. բոլորը ականջ են դնում այդ աղմուկին. շշուկով են խոսում միմյանց հետ։ Բաղդասարը հրամայում է փակել դուռ ու լուսամուտ։ Դռան առջևից թփթփոց է լսվում. տնեցիներն իրար են անցնում։ Մեկը կամացուկ թակում է դուռը։ Տանտիրոջ որդին բացում է։ Ներս է մտնում Գրիգորը։ Դուռը կրկին ամուր փակվում է։

5

Բաղդասարի տանը կաղալով մոտենում է մի մարդ. դեմքը պատած է մազ-մորուքով։ Մինչև ականջները քաշած փափախը թաքցնում է ճակատը։ Մարդը մի երկու անգամ նայում է չորսդին և կպչում դարպասին, դողացող ձեռքով թակում է։ Դռան մոտ հայտնվում է տանտիրոջ դուստրը։

— Բարի իրիկուն,— խզված ձայնով մաղթում է եկվորը։

— Աստծու բարին։ Ո՞ւմ կուզես,— վախվորած հարցնում է օրիորդը։

Բակ է դուրս գալիս մայրը՝ Երանյակը։

— Քա՛, էդ ո՞վ է, Արաքսի։

— Չիտեմ, մա ջան. կըսե հեռու տեղից եմ եկել։
Երանյակը մոտենում է դարպասին։

— Ո՞վ ես, ախպեր, ի՞նչ մարդ ես։

— Ղոնախ եմ, քուրը՛ս...

Եկվորը մի փոքր կռացած, ներս է մտնում միջանցք, ոտքերը մաքրում և ահառաձ բաց անում սրահի դուռը։

— Բարո՛վ էկար, ախպեր,— ողջունում է Բաղդասարը.— արի, արի նստի։— Աղջի՛, Երան, էս մարդուն ուտելիք բեր, տեղ տուր՝ հանգստանա,— կարգադրում է տանտերը։

Տնեցիներն իրար անցան։ Եկվորն ուշադիր նայեց տանտիրոջը և նկատեց, որ կռացած նստել է աթոռին ու չի կարողանում մեջքն ուղղել։ Երանյակն ուտելիք է դնում սեղանին։ Եկվորը ուտում է ու նայում Գրիգորի կնոջը, որ չոքել է տեգոր առաջն ու կոշիկի քուղերն է կապում։ «Իշիաս ունի ախպերս»,— մտովի եզրակացնում է նա։

— Է՛, ըսա տեսնինք՝ ո՞ւրտից կուգաս, ո՞ւր կերթաս. նպատակդ ի՞նչ է,— հարցուփորձ է անում Բաղդասարը։

— Հեռու տեղից կուգամ,— իր պատմությունն է սկսում եկվորը։

Գրիգորի կինը՝ Սալվինազը, գլուխը բարձրացնում է նրա ձայնի վրա և բացականչում.

— Քա վո՛ւյ, Համբիկն է՝ տիրացախպերը...

Բաղդասարը թափով ուղղեց մեջքը, մի անգամ տնքաց ցավից ու հանգստացավ։ Չէ՞ որ գրեթե կորած եղբայրն էր եկել։ Կամաց վեր կացավ։ Համբարձումը նետվեց նրա գիրկը։

— Վա՛յ, Համբիկ ջան, էկա՞ր վերջապես։ Ողջ-առո՞ղջ ես... Նստի մե պատմե ո՞ի՛ վախենա, ախպորդ տունը քեզի հարցնող չի էղնի։

Երբ բոլորը շրջապատեցին սեղանը, դրսի դուռն ուժգին բախեցին։ Բաղդասարը եղբորն ասաց.

— Դու մի որպե մտի էն սենյակը, ես տեսնիմ՝ ով է։

Համբարձումը թաքնվեց թե չէ, ներս մտավ մայրը՝ Խաթունը։

— Ո՞ւր է Համբիկս։

— Էստեղ եմ, մերըս, աբլա՛ ջան,— թաքստոցից դուրս գալով՝ բացականչեց Համբարձումն ու մորը գրկեց։

— Հըբը ի՞նչըղ էղավ, քա՛...

— Դու ըսա, թե ուրտից կուգաս, մերըս,— հարցրեց որդին։

— Առաջս քարաղը տուն կտանեի: Մեր Հռիփը դեմս ելավ, թե՝ Համբիկն եկել է: Չիտեմ՝ ուրտից էր իմացել: Ես էլ վազեցի էկա... Վա՛յ, Համբիկ ջան, բարով ես եկել,— ասաց Խաթունն ու ահագին զավակին նորից սեղմեց կրծքին:

Անցան հուզմունքի րոպեները. և Համբարձումը պատմեց, որ ինքը Անդրանիկի կամավորական խմբում է եղել:

— Վիրավո՞ր ես, Համբիկ ջան,— սրտացավությամբ հարցրեց Երանյակը:

— Երա՛ն ջան... Տասը տեղից,— տնքոցով պատասխանեց Համբարձումը.— խանչալ էր, որ սրեցին վրես... Է՛, Գրիգո՞ր ուր է:

Խաթունը տրտնջաց, թե նրան հանգիստ չեն թողնում. ամեն օր ակումբներն են տանում նվագելու: Էլ քաղաքացիական, էլ սպայական...

Մութն էր արդեն, երբ Սալվինազն ու կեսուրը գնացին տուն: Մինչև տեղ հասնելը երկուսի խոսակցության նյութն այն էր, թե ինչ կլինի Համբարձումի վիճակը, ինչպես պիտի գնա հասնի իր զորախմբին:

Հազիվ էին նրանք ոտք դրել տուն, ետևներից ներս մտավ Գրիգորը: Նա հոգնած եկել էր սպայական ակումբից և նվագարանը պատից կախելուց հետո ուզում էր չուխան հանել:

— Գիրքո՛ր ջան, շորերդ մի՛ հանե,— կանխեց մայրը:

— Ընչի՞, չպիտի՞ հանգստանամ, մերըս,— դժգոհեց որդին:

— Քա՛, չիտե՞ս... Համբիկն է եկել,— առաջ ընկավ կինը:

— Ինչ կխոսիս,— հանկարծակիի եկած բացականչեց Գրիգորը և շփոթված նայեց նրանց.— Է՛, ի՞նչ դրության մեջ է:

— Ի՞նչ պտի էղնի. տասը տեղից արյունլվիկ են արել:

Եվ Գրիգորը չուխան նորից հագավ, գդակը դրեց, կոշիկները քաշեց ոտքերն ու....

— Էրթամ Արային ձեն տամ, դեղ բերեմ:

Եվ եղբոր գալուստի ուրախությամբ թև առած՝ երգիչը վազեց դեղագործի տուն:

Ամբողջ թաղամասում լոկ մի լապտեր էր լուսավորում փողոցի անկյունը: Թաղի մնացած մասը ընկղմված էր թանձրաձյութ խավարի մեջ: Սակայն ճանապարհն այնքան սովորական էր, որ Գրիգորը մի վայրկյան իսկ կանգ չառավ՝ կողմնորոշվելու: Ահա Արայի տունը: Երգիչը նայեց չորս կողմը: Դիմացի սև եկեղեցին սարսափազդու հսկայի պես անթարթ նայում էր փողոցին: Գրիգորն

ակամա խաչակնքեց երեսը, ապա ձեռքը գցեց դռան թակին: Սրա խուլ դնգոցը արձագանքեց մեռելային լռության մեջ ու հետզհետե մարեց Բոշի մայլի նեղ և ծուռումուռ քուչաների խորքերում:

Ներսից ոտնաձայն լսվեց: Դեղագործի համար տարաժամ այցելու գոյություն չուներ: Օրվա որ ժամն էլ լիներ, մարդիկ իր կարիքը զգում էին. եթե անհրաժեշտ սպեղանի ուներ, ուրեմն պիտի օգներ: Արան մոտեցավ դրսի դռանն ու հազիվ լսելի ձայն տվեց.

— Ո՞վ է:

Գրիգորը համոզված էր, որ իր ընկերն է միայն այդքան շուտ արթնանում և այդպես քայլում հողաթափերով: Եվ նա պատասխանեց.

— Ես եմ, Արա ջան:

Ծանրորեն ժնգաց սողնակը, և կիսաբաց դռնից դեղագործը նայեց դուրս:

— Իա՜...— զարմացավ նա և իսկույն ներս քաշեց ընկերոջը:— Գոքո՞ր, էս ի՞նչ բան է, ի՞նչ է եղել...

— Քելե վեր՝ կըսեմ:

Եվ նրանք զգուշությամբ բարձրացան աստիճաններով: Երբ մտան Արայի սենյակը, երգիչը դեռևս հևալով խոսեց.

— Ախպորս՝ Համբիկին գիտես:

— Գիտեմ:

— Որ Անդրանիկի զինվորն է, էդ էլ գիտես:

— Գիտեմ:

— Հիմի եկել հասել է մեծ ախպորս՝ Բաղդասարի տունը: Մարմնի վրա սաղ տեղ չկա... Անօրենները դաշույնով վիրավորել են տղին. տասը-տասներկու վերք ունի:

— Հը՜մ,— գլուխը տարուբերելով՝ հարեց Արան:

— Մի դեղ պտի տաս, որ քսենք՝ լավանա... Շո՛ւտ էրա:

— Ե՞րբ պտի էրթա:

— Էդքանը չիտեմ:

Արան լամպը վառեց ու՝ բարձր պահած՝ մոտեցավ դեղերի պահարանին: Ընկերն ակնապիշ հետևում էր նրա շարժումներին: Դեղագործը դուրս քաշեց մի արկղ, երկրորդը և երրորդի մեջ գտավ սպեղանին: Նա քսուքով լիքը սրվակը երկարեց ընկերոջն ու հարցրեց.

— Կուզե՞ս՝ գամ քսեմ:

Գրիգորն անհանգստացավ.

— Չէ-չէ-չէ՛... էդպես բան չանես: Ախպորս կնկա շոր են հագցրել ու իջեցրել Բաղդասարի պադվալը: Էդտեղ կպահեն, մինչև լավանա ու... Դու էլ կըսես...

— Ես՞ի՞մ:

— Ես էրթամ. հետո կուգամ կըսեմ՝ ինչն ինչոց է:

Գրիգորը սլանում է ավագ եղբոր տան կողմը, որ նույն Ալեքսանդրովսկայա փողոցի խուլ մասում է գտնվում: Դուռը թակում է և նայում աջ ու ձախ: «Վա՛յ, ախպեր ջան...»,— մտովի ցավակցում է նա: Դուռը բացվում է փափկաձայն: Բացողը Բաղդասարն է: Ոչ մի բառ չեն փոխանակում: Եղբայրը գլխով է անում սենյակների կողմը: Գրիգորը հապշտապ նետվում է ներս: Հարցական հայացքը անխոս հառում է Երանյակի դեմքին: Սա մատով ցույց է տալիս նկուղը և շշնջում.

— Էնտեղ է... Չի էլ կրնա քնի. որտեղը ձեռ տաս, կցավի:

Գրիգորը մեծ հարսի խոսքը լրիվ չի էլ լսում. արագ իջնում է նկուղ: Համբարձումը ոտքի է կանգնում ու նետվում եղբոր կողմը:

— Ախպե՛ր ջան, Գրիգոր ջան...

Երանյակն ու Բաղդասարը նկուղ են իջնում այն պահին, երբ Գրիգորը մերկացրել է վիրավորին, պառկեցրել թախտին ու սպեղանի է քսում վերքերին: Երբ նրան շուռ է տալիս մի կողմից մյուսը, սա տնքում է ծանր հիվանդի պես:

Գրիգորն ավարտում է իր համար անսովոր գործն ու կիսատ սրվակը հանձնում հարսին.

— Առ, Երան ջան, թե պակաս տեղ մնացած կեղնի, դու քսե:

Մի օր անց զինվորին գիշերով տարան քաղաքից դուրս ու ծամփու դրեցին: Նա վերադարձավ ջոկատ:

6

Արաբաջյան Արայի դեղատունը հայտնի էր ամբողջ Ալեքսանդրապոլում: Եվ ոչ միայն քաղաքում, այլև գավառի գյուղերում ու ավաններում: Ծատերը նրան բժիշկ էին անվանում, քանի որ հիվանդություններ նույնպես բուժում էր: Դրա համար էլ գյումրեցիները նրա անունը դրել էին Ապտերկ Արա: Նա հեռու չէր մնում նաև հասարակական անցուդարձից:

Դեղատան սրահի ետևը կար մի փոքրիկ սենյակ. կիսամութ, բայց հարմարավետ: Ցածրիկ սեղանը ծածկված էր սփռոցով և

դրա վրա դրված էին ուտելիք ու խմիչք: Ընկերները դրանով քողարկում էին գաղտնի հավաքույթները:

Այսօր նույնպես սեղանի շուրջը բոլորել են մի քանի հոգի. Հայկ Ամատունին է, Ստամբոլցյանն է, Գրիգոր Տալյանցն է, Արան է... Գրիգորը թառով է եկել: Առայժմ նվագարանը հանգչում է պահարանի գոգին:

— Գոքո՛ր ջան,— դիմում է Ստամբոլցյանը,— Երևան պիտի երթաս:

Մյուսները գլխով հաստատում են Մեխակի ասածը:

— Մենա՞կ,— հարցնում է Գրիգորը:

— Չէ՛, քու եռյակով:

— Երթամ, Մեխակ ջան... Ի՞նչ կա որ:

— Քու երգով պիտի օգնես գործին:

Երգիչը դիմախաղով հասկացրեց, որ ամեն ինչ կարգին կլինի, ողջագուրվեց ընկերների հետ ու վեր կացավ:

Ահա նվագածու եռյակը օրորվում է վագոնի կուպեում: Չեն խոսում: Կողմնակի նայողին թվում է, թե քնած են. բայց քուն չի գալիս աչքերին:

Երևանի կայարանում նրանց դիմավորեցին երեք հոգի. քաղաքացիական հագուստով էին: Երբ երաժիշտներին տեղավորեցին հյուրանոցում, ծպտյալներն զգուշացրին, թե ամբոխը կարող է անհանգստացնել նրանց. բայց իրենք կից շենքում են:

Ժամանելու երրորդ օրը, առավոտյան, հյուրասենյակի դուռը բախեցին: Գրիգորը ձայն տվեց.

— Կարո, ել մի տես ո՞վ է:

Դափահար Կարո Եղիազարյանը թռավ տեղից, դուռը բացեց ու տեսավ, որ երկու սևասքեմ երիտասարդ կանգնած են միջանցքում:

— Բարի ողջո՛ւյն, երաժիշտներ. Տալոյանց Գրիգորն այստե՞ղ է:

— Այստեղ է, ներս համեցեք:

Մինչ այդ Գրիգորն էլ հագնվեց, քամանչահար Հագոն էլ:

— Պարոն Լևոնյանը խնդրում է, որ ձեր եռյակով այցելեք մայր աթոռ՝ Սուրբ Էջմիածին:

— Տղերք, գիտե՞ք էդ ով է:

— Չէ:

— Ջիվանու տղեն է՝ Գարեգինը. Էջմիածնի ճեմարանի վարժապետ է։— Ապա դարձավ Գևորգյան ճեմարանի երիտասարդ սաներին։— Առանց այդ էլ պիտի գայինք, որ ձեր ուսուցիչն էլ կանչում է, ավելի լավ։

Երկու ժամ հետո նվագաճու եռյակի կառքը հասավ Հռիփսիմե լանքին։ Այստեղ նրանց դիմավորեց մի ուրիշ կառք։ Եռյակը ցաճ թռավ, իսկ Գարեգինն արդեն գալիս էր ընդառաջ։

Հաջորդ օրը նրանց տարան այգի, ուր հավաքվել էին վանականները և ճեմարանի սաները։ Կրոնավորների մեջ էր Կոմիտասը։ Գրիգորը մոտեցավ նրան, աջն առավ և ասաց.

— Հա՛յր սուրբ, մենք եկել ենք ճեմարանի ուսանողների համար համերգ տալու։

— Բարի գալուստ, գուսաննե՛ր,— մաղթեց Կոմիտասը։

Լևոնյանը թեքվեց ու վարդապետի ականջին ինչ-որ բան ասաց։ Հետո քայլեց վեհարանի կողմը։ Կոմիտասը ցաճրաճայն մեկնեց նրա գնալու պատճառը։ Մեկ րոպե անց Լևոնյանը վերադարձավ ու հայտնեց կաթողիկոսի կամքը։ Վեհափառն զգուշացրել էր, որ սիրային ոչ մի տաղ չերգվի. թող ծրագրում լինեն միայն գեղջկական ու ժողովրդական երգեր։

— Գործս դժվարացա՛վ,— հառաչեց Գրիգորը, մի ակնթարթ խորհեց ու եզրակացրեց.— թող նրա կամքը լինի։

Ճեմարանի դահլիճը լեփ-լեցուն էր։ Այստեղ մեկը մյուսի ետեվից հնչեցին ազգային-ազատագրական պայքարին ու սրա հերոսներին նվիրված երգեր։ Ունկնդիրները ճայնակցեցին և ոգևորիչ բացականչություններ արճակեցին երգերի կատարման ժամանակ։

Ականջ էր դնում Կոմիտասը երգչին և մտորում, թե ի՞նչ շնորհքի տեր է այս մարդը, որ քնարական բազում տաղերի հետ միասին այսպիսի երգեր է տվել հայ ժողովրդին...

Սրահից դուրս՝ նվագաճուներին մոտեցավ Լևոնյանը և դիմեց տաղերգուին.

— Հորեղբա՛յր, Կոմիտաս վարդապետը ձեզ հրավիրում է իր կացարանը. ուզում է առանձին լսել երգերդ։

Գրիգորը ժպտաց. մյուսները զվարթ նայեցին նրան։

Վանականի կիսամութ կացարանում համրաքայլ ճեմում է Կոմիտասը։ Պատուհանի տարտամ լույսը ստվերից խլում է նրա դեմքը։Ցայտուն են դառնում՝ լայն ճակատը, մորուքը։ Հազիվ

լսելի ծռինչով բացվում է ծանր դուռը: Նվագարանի վիզն առաջ թևի տակ՝ խուց է մտնում Գրիգորը: Նրա ետևից, հուշիկ քայլերով, մտնում են նվագաձուները: Տաղերգուն հանում է գլխարկը և աջ ու ձախ նայում:

— Ողջո՛ւյն ձեզ, գուսաններ,— շվաքի խորքից խորհրդավոր լսվում է վարդապետի ձայնը:

— Ողջո՛ւյն, հայր սուրբ,— պատասխանում են երաժիշտները և սրբազան դողով մոտենում ու համբուրում նրա աջը:

Սկսվում է մտերիմ զրույցը, որի ընթացքում, ասես երկնքից, հնչում են Կոմիտասի տաղերը: Վարդապետը ժպտում է և նշան անում, որ նվագաձուներն սկսեն: Սրանք խանդավառված երգում են՝ «Խնուս գեղի մեջտեղը»:

Կոմիտասը փակում է աչքերը և մեղմորեն կրկնում ծանոթ տաղը: Նրա ձայնը բարձրանում է և դառնում ողբահնչյուն: Վարդապետը սևեռուն նայում է երգչին: Բարի ժպիտը լուսավորում է նրա դեմքը: Տաղերգուն ընկերներին գլխով է անում ու երգում հարըստահարիչների դեմ հորինած երգը: Կոմիտասը տխուր հառաչում է· Հնչում է գուսանի գովերգը՝ նվիրված հերոս զեյթունցիներին: Կոմիտասն ընդոստ ոտքի է կանգնում: Նվագն ընդհատվում է, երգը՝ լռում:

— Ոչ, ո՛չ, շարունակիր, գուսան, շարունակի՛ր...

Երբ եռյակը հնչեցնում է տաղերգուի «Ալ ու ալվան ես հագել» սիրո ու հայրենիքի պաշտպանության երգը, Կոմիտասը ոգեշունչ պատգամում է.

— Ա՛յդ է իսկականը, երգիչ, այդ է հայոց ձայնը... Այդպես պիտի հորինես, Գրիգոր գուսան...

Կոմիտասը մոտենում է սեղանին, գլուխը թեքում և արագարագ գրում է: Գրիգորն ավարտում է երգը և նվագարանը դանդաղ իջեցնում ծնկին. ասես վախենում է, որ կխանգարի վարդապետի մտորումները: Երկար նայում է նրան, սա էլ՝ տաղերգուին:

Իրիկնային մթնշաղի միջով ընթանում է կառքը: Գրիգորի աչքի առջև հառնում է սևասքեմ հանծարը, ոտից գլուխ շողարձակ ու թախծաժպիտ: Վարդապետի շրթունքները շարժվում են...

Երազային տեսիլը սակավ առ սակավ աղոտանում է և հալվում Արագածի մշուշի մեջ...

ԱՐԻ ԻՐԻԿՆԱՀՈՎԻՆ

1

Այգու բացօթյա սրահը լիքն է մարդկանցով: Բեմահարթակին տեղավորված են նվագածուները, նրանց մեջտեղը՝ Գրիգորը: Նա երգում է: Երաժշտության հնչյունները ելևէջ առ ելևէջ ծորում են սաղարթների միջով ու հետզհետե մարում քաղաքի թաղերում: Քիչ անց երգիչը միայնակ ճեմում է ծառուղիում և ծխամորճի ծուխը մանում դեպի վեր: Նրան շրջապատում են ջահել տղաներն ու աղջիկները: Նրա պրպտող հայացքը կանգ է առնում օրիորդներից մեկի վրա: Տաղերգուն մտաբերում է Վարդուհուն: Իր շուրջը խմբվածների մեջ նա չկա. բայց նրա սիրուց, ահա, ծնունդ է առնում իր աղերսանքը՝ սիրուններ, մի՛ք նեղանա, որ ես իմ յարին եմ գովում...

Երգիչը դուրս է գալիս երիտասարդների շրջապատումից և միայնակ հեռանում այգու խորքը: Տաղը շարունակվում է և մերթընդմերթ ընդհատվում, մտքերի ալեկոծությանը ենթարկվում: «Էրթա՞մ, թե՞ չերթամ... Էրթամ ու դառնամ գամ. ինչ կեղնի՞ որ...»:

Երկու երիտասարդ ցածրաձայն խոսելով՝ անցնում են Գրիգորի մոտով: Եվ նրա ականջին հասնում են պատառիկներ նրանց խոսակցությունից.

— Ինչքա՞ն լավ բան է էս անտեր կյանքը,— շշնջում է մեկը:

— Ծո լավն էլ խո՞սք է. բայց որ կմտածես, թե վերջը պտի մեռնիս...— խոր հոգոց է հանում մյուսը:

— Է՛, մեռնելը ոչինչ, Մուկուչ ջան:

— Մեռնելը վաղ թե ուշ կա. բայց որ էսպես մարդու երգը չպիտի լսես...

— Դե՛, ցավալին էլ էդ է, էլի:

Երգիչը ժպտում է և քայլում նրանց հակառակ ուղղությամբ: Նրա գլուխը պտտվում է հակասական մտքերից: Ի՞նչ անի ինքը, երբ այդքան խորն է թափանցել սիրո թավուտը... Նա արագ քայլերով դիմեց դեպի սրահը, թափով վերցրեց թառն ու գնաց փողոցն ի վար:

Հաջորդ առավոտյան Սալվինազն ու բոլոր տնեցիները տեսան, որ տաղերգուն տուն չի եկել: Երկրորդ օրը՝ նույնպես: Զոնգուր Հագոն տեսնողներից իմացել էր, որ Գրիգորը մենակ, կառ-

քով մեկնել է Կարս: Քամանչահարը ընկել էր մտատանջության մեջ. թե գնացել է հարսանիքում կամ հրավերքում նվագելու, ինչո՞ւ մենակ: «Էստեղ մի բան կա՛... Վայթե էն կնիկն էնտեղ է»: Եվ շտապեց երգչի ավագ եղբոր՝ Բաղդասարի մոտ: Սա էլ հետախուզեց, որ Վարդուհին Ալեքպոլում չէ, երեխաներն էլ: Անմիջապես նստեց իր կառքն ու սլացավ Կարսի ծանապարհով:

...Նստել է Գրիգորը հնաոճ, ներկաթափ սեղանի մոտ ու լամպի աղոտ լույսի տակ գրում է: Ուռուցիկ գլուխներով մահճակալին պառկած է Վարդուհին: Նրա կողքին կուչ են եկել երկու մանկիկ: Կնոջ շիկավուն վարսերը շաղ են եկել բարձի վրա և ավելի են ընդգծում նրա գրավչությունը: Գրիգորը հաճախ թեքվում նայում է, գլուխն օրորում, ապա դեմքը կիպ մոտեցնելով սեղանի վրայի թղթին, շարունակում է գրել.

Կապել ես հյուսվդ, բանդդ ես գցել...

«Ա՛խ, Վարդուհի, Վարդուհի՛... Ինչպե՞ս եղավ, որ համոզեց ինձ... Հորեղբոր տղեն՝ Աղաբեգը, հատուկ եկավ խնդրեց քանի անգամ. ըսի՝ բնությանը հակառակ բան է. կնիկն էլ թա՞ռ նվագի: Մարդը եկավ՝ աղաչեց, էս եկավ, էն եկավ, վերջը համոզեցին: Էդ օրվանից էլ սկսվե՛ց...»:

Տաղերգուն մի պահ նայեց մթամած լուսամուտին ու գնաց մտքի ետևից: Հառաչեց, մի երկու տող գրեց, նվագարանը զգուշությամբ վերցրեց ու սկսեց տնկտնկացնել: Հանկարծ ընդհատեց նվագն ու ոտքի կանգնեց: «Հիմի ո՞ւր կերթաս, Տալոյենց Գրիգոր, ո՞ւր կերթաս, ա՛յ օղուլ... Տուն-տեղ, կնիկ-երեխա թողած՝ ընչի՞ կհեռանաս հայրենի երկրից: Դու չէի՞ր, որ էդքան գովեցիր՝ հայրենիք, մայր, ընտանի՛ք... Հիմի ի՞նչ եղավ քեզի, որ ամեն բան թողել կերթաս Պարսկաստան... Էսոր սերը կուզե էդքան հեռո՞ւ տանել քեզի, Տալոյենց տղա. Պարսկաստանը քու հարազատ վաթա՞նն է, որ թողել կնկադ ու զավակներիդ, քոչդ հավաքել, ելել ես կերթաս...»:

Տանջալից տրտմությունը պարուրեց երգչի դեմքը: Հուշիկ քայլեց դռան կողմը: «Գյումրի քաղաքում... Տո՛, հենց ամբողջ երկրում, մեծ պատիվ, հարգանք ունիս, ապրուստ ունիս: Հազար տեղից կկանչեն քեզի,— քմծիծաղեց.— գլուխների վրա բարձր տեղ ունիս: Ուստաբաշի էլ դարձուցին, էլ ի՞նչ կուզես: Էնտեղ հասարակ սազանդար պտի էղնիս, էլի. ուրի՞շ»: Գրիչը դնում է

սեղանին ու զայրացած խոսում. «Զէ՛, իմ տեղը չէ Պարսկաստանը... Հրբը Վարդուհի՞ն...»:

Մտովի կրկնում է իր երգի տողերը, թե ինչպես ինքը քարափի վրա տուն ունի, բայց դարդերն այնքան շատ են, որ գիշերները քուն չունի...

Լսելի ձայնով արտաբերում է.

— Հայրենիքը ետ կկանչե քեզի, ուստա Գոքոր. ետ արի, կըսե, խռովա՞ր քո հարազատ օջախից, Կարոյի՛ տղա...

Վարդուհին բացում է աչքերը.

— Էդ ընչի՞ չես քնի, Գրիգոր. առավոտ ճամփա պտի էրթանք:

— Քնի, քնի՛... կերթանք, հրբը չե՞նք էրթա...

Նայում է բերդի կողմը: Մթության մեջ երևում է մի կառք, որ սլանում է քաղաքի նեղ փողոցով ու սրընթաց ներխուժում հյուրանոցի բակը· Ձիերը դեռ դոփում են գետինը, իսկ Համբարձումը մտրակը խրելով նստելատեղի կողքը, արդեն վազում է սանդուղքով վեր: Նրա ետևից ծանրաքայլ բարձրանում է Բաղդասարը: Քիչ անց շրխկալով բացվում է սենյակի դուռը: Շեմքին ծառանում է Համբարձումը: Ձայրալից նայում է մահճակալին պառկած կնոջը, որ սարսափած նստում է անկողնում և կուրծքը վերմակով ծածկում: Գրիգորը նետվում է եղբորն ընդառաջ, որի թիկունքից երևում է Բաղդասարի խստագիծ ու սպառնալից դեմքը: Գրիգորը շփոթվում է. կռահում է, թե ինչու են եկել եղբայրները: Ավագը վերջապես հատում է կաշկանդվածության կապանքը.

— Ծո՛, դու ի՞նչ ըսիր խղճիդ,— խոսեց նա,— թողեցիր էն հրեշտակի պես հարսիս, խեղճ մորդ... Մերդ մի բուռ է դառել՝ կուչ եկել... էնքան է լացել, որ աչքերը քոռացել են...

— Քելե՛ք, քելեք էրթանք,— դողացող ձայնով ասում է երգիչը.— վերջացավ... էրթանք տուն...— և աղաչական հայացքով նայում է մահճակալին:

Վարդուհին գլխովին ծածկվել է վերմակով և ողբում է իր սիրո փլուզումը: Գրիգորը դնում է գլխարկը, վերցնում նվագարանն ու գնում դեպի դուռը:

— Քելեք էրթանք,— թարս նայում է եղբոր դաշույնին.— էս գիշեր ես իմս առա արդե՞ն... քելեք...

Եվ մռայլված հետևում է եղբայրներին:

Մութ է: Գիշերային խավար անդորրի մեջ լսվում է թեթևա-

:կի վարգող ձիերի դոփյունը: Կառքը միայն նշմարվում է. դրա միջից մերթընդմերթ առկայծում են ձիամորձի բոսոր կրակները: Եղբայրները լուռ են: Լռությունը երբեմն ծվատում են Համբարձումի բացականչությունները. նա հորդորում է ձիերին: Լսվում է մտրակի շաչյունը: Խոր լռության մեջ առանձնապես որոշակի է գետակի կարկաչը:

Գրիգորն անհանգիստ շարժվում է տեղում ու եղբորից թաքուն հառաչում: Բաղդասարը աչքի տակով նայում է նրան, բայց ոչ մի բառ չի ասում: Կառապան եղբայրն էլ մեկ-մեկ ետ է նայում, ապա իբր ձիերի վրա բարկացած՝ շրխկացնում մտրակը... Ինչ-քա՞ն կտրուկ շրջադարձ կատարվեց իրենց հարազատի կյանքում...

Տաղերգուն պինդ սեղմել է շրթունքները: Մտքի առջև տարածված է փոթորկուն մի ծով, և սրա ալիքների վրա տատանվում է առագաստանավը. սա մերթ այս ափին է զարնվում, մերթ՝ այն ափին...

Գրիգորն սթափվեց վայրկյանական նինջից ու սրտի խորքից ախ քաշեց: Կառքը հանդարտ ընթացքով մոտենում է հայրենի քաղաքին: Ձիերի ոտնատրոփը աստիճանաբար հեռանում է: Երգչի հայացքը եթերում նորից որսում է լքված սիրո պատկերը և նրա հոգու ծալքերում խայտում է նոր երգը:

2

Տաղերգուն մոտենում է Արաբաջյանի դեղատանը: Ինչ-որ վտանգ զգալով՝ ետ է նայում, ապա մտնում ներս: Անձայն ողջունում է Արայի օգնականին և անցնում կողքի սենյակը: Սեղանի մոտ նստած են երկու հոգի: Դեղատան տնօրենը, սպիտակ խալաթը հագին, կանգնել է դռան մոտ: Գրիգորը ողջունում է նրան·

— Բարով, ախպերս. էս ի՞նչ բան է՝ ուշ-ուշ կերևաս:

— Կլուբներից կարո՞ղ եմ աչք բանալ, որ գամ: Դե՛, էն գործն էլ արեցինք, էջմիածինն էլ տեսանք, Կոմիտաս վարդապետի հետ էլ ծանոթացանք: Է՛, ի՞նչ կա, ի՞նչ չկա:

— Նստի, նստի՝ կասեմ. հարցիս պատասխանիր, հետո: Ո՞վ է հիմի ամենամեծ մարդը մեզ համար, աշխարհի աշխատավորների համար:

Գրիգորը ծոցագրպանից մի թուղթ հանեց և դեմ արեց ընկերոջը.

— Էս ոտանավորս քո հարցի պատասխանն է, Արա՛ ջան։

Արաբաջյանը կարդաց Կարլ Մարքսին նվիրված ոտանավորը, իսկ հեղինակը երգեց։

— Էս ե՞րբ ես գրել, Գրիգոր. ընչի՞ ձեն չես հանե. Մեխակը, Հայկը գիտե՞ն։

— Որտեղի՞ց իմանան. նոր եմ գրել։ Ասա տեսնեմ՝ հիմի ո՞ր թիվն է։

— 1907։

— Ուրեմն շուտով մի նոր գիրք կունենամ, էս էլ՝ մեջը։

— Գրքիդ անունն ի՞նչ ես դրել։

— Սեր և կռիվ։

— Սիրուց ձեռ չես քաշե, էլի, ուստա Գոքոր,— դիտեց դեղագործը։

— Առանց սիրո կյանք գոյություն չունի,— պնդեց երգիչը։

Նվագարանի հետ զրուցելով, գնում է Գրիգորը փողոցով։ Մեկ էլ աչքն ընկնում է մի բաց լուսամուտի։ Սենյակի մեջ հայելու առաջ մի կին մազերն է սանրում և աջ ու ձախ դառնալով՝ ստուգում իր տեսքը։ Ու երգչի հոգին բացվում է նոր տաղի առաջ.

Ջով գիշեր է, դուրս եկ,
Լուսնյակը նորել է. .

Գրիգորն արագացրեց քայլերը։ Հենց որ հասավ ակումբ, թուղթ ու մատիտ ուզեց, առանձնացավ մի անկյուն ու գրեց, իսկ մի քանի օր անց...

Բարձրանում է տաղերգուն դեպի քաղաքային այգի, որին գյումրեցիները Գորկա են կոչել։ Հանկարծ գամվում է տեղում։ Մի աղջիկ գալիս է ընդառաջ, շորորուն քայլվածքով անցնում ու սահում փողոցն ի վար։ Նրա ծամերի հյուսը, որ հիշեցնում է օձերի թագուհու՝ շահմարի գալարումները, կախվել է մինչև սրունքները և աղջկա շորորալու հետ երերում է նրա թիկունքին։ «Շահմար հյուսդ էրերա», շշնջում է երգիչն ու մի քանի անգամ դառնում նայում է հեռացող աղջկան։ «Շորորա, թառլան, շորորա»,— մրմնջում է գուսանը...

Ու քուրայի բարակ բոցի նման դեպի սիրտն է բարձրանում սիրո կրակը։

3

Անցան օրեր: Երեկո է. Գրիգոր Տալյանի եղյակը գնում է մի հարուստի տուն՝ հրավերքի: Լուռ քայլում է երգիչն ու մտածում՝ տեսնես ովքե՞ր են լինելու այնտեղ. անպայման քաղաքի մեծահարուստները: Է՛հ, իրե՞ն ինչ. ի՞նչ վախենալու բան կա. իր գործն է նվագել, երգել, մարդկանց ուրախացնել կամ տխրեցնել, սեր ու գեղեցկություն գովաբանել:

Նախասրահում երաժիշտները նայեցին միմյանց և կանգ առան. ի՞նչ շքեղություն, ի՛նչ հարստություն... Սանդուղքի գլխին հայտնվեց մի երիտասարդ:

— Ուստա՛ Գոքոր, ինչո՞ւ կանգնեցիր,— վերևից ձայնեց նա.— վեր ելեք, եկեք, համեցեք:

Դանդաղ ու մտմտալով բարձրանում է տաղերգուն. նրա ետևից էլ՝ նվագածու ընկերները:

Բարձրանում է երգիչն ու մտաբերում, թե ինչպես օրեր առաջ արհեստավոր մարդիկ քեֆի էին նստել Դրմփենց բոստանում...

Քանի նա մոտենում է, թասերի զնգոցն ավելի պարզ է դառնում: Տաղերգուն մի ակնթարթ կանգ է առնում, ականջ դնում քեֆ անողների աղմուկին: «Խելառ են, հա՛,— մտովի դիմում է նա խրախճանողներին.— կուգա՞ս, ասին:— Ծո՛, ինչո՞ւ չեմ գա էլ ո՞ր օրվա ընկերն եմ. Փարա կուտանք, ասին: Փարե՞ն որն է, ա՛յ օղուլ. կուզե՞ք՝ ես ձեզի տամ. ո՞ւմ հետ գործ ունիք»: Գրիգորը մոտենում է ընկերներին: Սրանք գրկում են երգչին և տանում նստեցնում են սուփրի պատվավոր տեղը: Նրա համար գինի են լցնում, բայց նա ձեռքով է անում՝ հետո: Ու երգում է գլուխը մի փոքր թեքած գործիքի վրա. երգում է մի քանի օր առաջ ստեղծած տաղը՝ շորորան գեղեցկուհու մասին ..

Հանկարծ թառի լարը կտրվում է և ոլորվում: «Էս վատ նշան է,— տագնապում է Գրիգորն ու թմբիրից սթափվելով, մտնում շքեղ դահլիճ: Դրմփենց բոստանի և արհեստավոր ընկերների մտապատկերը անէանում է: Իր աչքի առաջ է իրական շքեղ սրահը. և նա լույսի առատությունից կկոցում է աչքերը: Եղյակը նստում է և սկսում նվագել: Իրար ետևից հնչում են սիրո տաղերը: Բոլորը ծափահարում են:

Նայում է տաղերգուն կերած-խմած մեծատուններին, և անգուսպ խիզախումը համակում է նրան: «Սրանք էլ են հայրենա-

սեր, չէ՞. հայոց դատը բարձր են դասում. մի՞թե դեմ կլինեն, եթե իրենց հայ եղբայրներին գովեմ»: Եվ նա ոգևորված երգում է հեղափոխական իր երգերից մեկը...

Սեղանակիցները աղմկում են. մեկը կասկածելի հազում է, մյուսը՝ դժգոհ փնթփնթում: Ոմանք քրքջում են: Գրիգորը կասկածով նայում է խմած մարդկանց և բանվորական ուրիշ երգ է կատարում: Ալոշ աղան վեր է կենում ու գոռում է.

— Էդ ի՞նչ կերգես, Տալոյանց. էդ երգը մեզ բոլորովին հարկավոր չէ, իմացա՞ր:

Մեկը ելնում է տեղից ու ճոճվելով մոլտում.

— Ազգային երգ երգե՛...— բղավում է նա.— բանվո՞րս որն է, հեղափոխությո՞ւնս որն է...

Ալոշ աղան հարբած քայլերով մոտենում է երգչին:

— Ծո՛, էդ ո՞ւմ սազը կչալես, հը՞...— Եվ ձեռքը գցում է նվագարանին. երգիչը փախցնում է գործիքը:— Մեր ուզածը երգե, մեր ուզա՛ծը,— կոկորդ է պատռում աղան և այս անգամ ճանկում է թառի լարերը, որ կտրի: Գրիգորը վեր է թռչում տեղից ու ջղայնությունից կակազելով՝ բացականչում.

— Ալո՛շ աղա, ես քեզ համար ծառա չեմ... Դո՛ւ... դու... քո ծառաներուդ վրա իրավունք ունիս... Ես ժողովրդի մարդ եմ...— Եվ Գրիգորը թառը մտցնում է շապկի մեջ, որ հեռանա: Մոտենում է այն երիտասարդն ու խնդրում, որ շարունակեն: Նվագածուներն էլ աղաչանքով նայում են վարպետին: Նա համաձայնում է, խեթ նայում Ալոշ աղային ու շարունակում երգել:

Երաժիշտները գնում են տուն: Վատ տրամադրությունը ցրելու համար տաղերգուն պատմում է.

— Միտքներդ կուգա՞, որ հարսնիքի ժամանակ տպարանատիրոջ տղեն մի հինգնոց ոսկի դեմ արեց, թե դազախիմ չալե· Ես մերժեցի ու դուրս եկա ծխելու: Մի հրավերք էլ մինչև լույս տևեց: Առավոտը Ծերմակ Համոն տասնոցմ ցույց տվեց, թե՝ մեր դռնեն մինչև խանութ նվագելով պտի երթանք: Է՛, ես ի՞նչ պատասխանեցի, Կարո, մի՞տքդ է:

—Ի՞նչդ չէ. նեղացար ու ըսիր՝ ես փողոցի նվագո՞ղ եմ, ինչ եմ...

Երեքն էլ զվարթ ծիծաղեցին:

Արեգակի շողերը ներս են ընկել պատուհանից: Տալոյենց տան մեծ սենյակը լուսավորվել է: Կլոր սեղանին թուղթ ու գրիչ կա. նշմարվում են տողեր: Սեղանից քիչ հեռու նստած է Գրիգորն

ու նվագում է նրա դիմաց՝ դուստրը, Արևհատը երգում է հոր հետ: Դրսից էլ լսելի է նվագն ու ոտքի համաչափ տպտպոցը: Հոր ձայնի հետ լսվում է դստեր բարալիկ դալլայլը: Ճատ չանցած՝ Արևհատը մենակ է երգում.

Սիրում եմ քեզ, խաբար չունիս .

Դրսի խուլ դռանը մոտենում է մի բարձրահասակ երիտասարդ, կանգ է առնում և ականջ դնում: Ահա լսվեց տաղերգուի հորդորը.

— Ապրի՛ս, աղջիկս, ապրիս... Էսքանը միտքդ պահե, Արև ջան, ես առաջ էրթամ. լա՛վ միտքդ պահե:

— Հա՛, միտքս է, հայրիկ:

— Հիմի ես շարունակեմ, չէ՞:

— Շարունակե, հայրիկ:

Հայրը եռանդով զարկում է թառի լարերին, մի հայացքը գցում սեղանի թղթին ու երգում է: Արևհատը հոր հետ կրկնում է ամբողջ տաղը: Դրսի երիտասարդն էլ է երգում մեղմորեն: «Լավն է»,— մտովի եզրակացնում է նա և ժպտում: Նիհարավուն դեմքի վրա երևացող աչք-ունքը ուրախություն են ճառագում: Նրա ականջը որսում է հոր և դստեր խոսակցությունը. շունչը պահած՝ լսում է:

— Է՛հ, էսօր էսքանը հերիք է, չէ՞, Արև ջան,— ասում է հայրը,— մտիհան չե՞ս անի:

— Չէ, հայրիկ, չէ: Կուզե՞ս երգեմ՝ ականջ էրա:

— Երգե:

Արևհատը ծիծաղում է և բարձրաձայն երգում:

— Արև ջան,— խնդումերես խոսում է հայրը, երբ դուստրն ավարտում է,— դու որ չեղնեիր, ի՞նչ պտի անեի. էսքան երգերն ի՞նչդ պտի միտքս պահեի... Դու իմ օգնականն ես, աղջիկս, իմ մուսան ես: Կոմիտաս վարդապետը գիտե՞ս ինչ ըսավ ընձի:

— Ի՞նչ ըսավ, հայրիկ:

— Հարցուց, թե նոտաներ... ինչ ըսա՞վ...

— Եսի՞մ, հայրիկ:

— Հա՛, ըսավ՝ ձայնանիշ ճանաչո՞ւմ ես. ըսի՝ ո՞ւրտից, հայր սուրբ. կապելով կարդալ հազիվ սորվա. հերս մեռավ... պապդ, էլի:

Արևհատը գլխով է անում տխուր:

— Մի խոսքո՛վ... էսքան էլ որ կենեմ, իշտը աստծու զորությամբ է ու քո օգնությամբ:

Երկուսն էլ լռում են, իսկ ակամա ունկնդիր երիտասարդը միայն արտաբերում է.

— Հա՛...

Գրիգորն ասես արձագանքում է նրա բացականչությանը.

— Հա՛, էն օրվա երգս մի՞տքդ է, Արև ջան:

— Ո՞րը, հայրիկ:

— Կայնի մեկ, յար...,— հիշեցնում է հայրը և ուրախ ասում,— տո, ես էլ չեմ մոռացել, գիտե՞ս:

Դուստրը երգում է: Նրան միանում է հայրը և նվագակցում:

Երիտասարդը չի համարձակվում ընդհատել:

— Լավն է, շա՛տ լավն է...— հանկարծ հուզված բացականչում է նա և անսպասելի ուժգին թակում դուռը: Գրիգորը մոտենում է մուտքին ու հարցնում.

— Էդ ո՞վ է:

— Ես եմ, հորեղբայր, ես եմ:

— Իա՛, Շարա ջա՞ն,— զվարթացած ձայնում է տաղերգուն և դուռը բաց անում:— Բարո՛վ էկար. էս ինչպե՞ս է, որ...

— Արմեն Տիգրանյանն է կանչել. օպերա է գրել, չէ՞, «Անուշ»: Կանչել է, որ երգեմ,— ասում է Շարան ու զննաբար նայում Արևհատին:— Էս ինչքա՞ն է մեծացել քույրիկս. կարգին օրիորդ է դարձել: Ի՞նչ էլ լավ էր երգում: Ձայնն էլ իսկականն է:

Տաղերգուն նայում է հեռուն ու երազկոտ ասում.

— Հե՛յ գիտի Տալոյենց տոհմ... երգիչներդ շա՛տ... Շարա ջան, արի նստի:

— Շտապում եմ, հորեղբայր. իրիկունը փորձ պիտի անենք. Արևին էլ պիտի տանեմ:— Սա ուշադիր նայում է երիտասարդին, ապա ամաչելով՝ հայացքը խոնարհում:— Արևն էլ պիտի երգե:

Գրիգորն ուրախացած նայում է դստերը:

— Կերթա՞ս, Արև ջան:

— Եսի՞մ, հայրիկ... թե դու կթողնի՞ս...

Հայրը գրկում է նրան ու ոգևորված խոսում.

— Ընչի չեմ թողնի որ.— ապա դիմում է հորեղբոր թոռանը.— բայց ախր աղջիկս իմ աջ թևն է, Շարա ջան: Առանց Արևիս օգնության ես շատ խեղճ եմ: Ինչքա՞ն ասես երգ կինարեմ, բայց միտքս քիչ մասը կմնա: Արևս իմ հիշողությունն է:— Հառաչում է ու նորից նայում դստերը:

— Մեծ դեր չենք տա, հորեղբայր. ես էլ քուրոջս տուն կբերեմ,— ասում է Շարան ու վեր կենում:

Եվ «Անուշ» օպերայի առաջին ներկայացման մեջ Արևհատ Տալյանը կատարեց Անուշի մոր դերերգը:

Արեգակը դանդաղ ու հանդիսավոր իջնում է դեպի մայրամուտ: Տալոյենց տան հրապարակում խռնվել է կանանց ու երեխաների բազմությունը: Որդյակի ձեռքը բռնած՝ Սալվինազը կանգնել է բաց դռան առաջ ու նայում է շուկայի կողմը: Տների արանքից հայտնվում է մի կառք և կանգ առնում դռան մոտ: Կառքից իջնում է Գրիգորը՝ նվագարանը ձեռքին: Ժպտում է բոլորին: Արագ մոտենում է մորը, և նրանք երկար ողջագուրվում են:

Մեծ օդեն սեղան է բացած. շուրջը հավաքվել են հարազատները:

— Է՞, Գիրքո՛ր ջան, ըսա տեսնիմ՝ ո՞ւր գնացիր, ի՞նչ տեսար, — հարցնում է մայրը:

— Երևան, Ղարաքիլիսա Թիֆլիս, Բաքու, Հաշտարխան, մե՛րս. հայոց տառերի հոբելյանն էր·

— Ի՞նչ կար էնտեղանք:

—Ի՞նչ պտի էղնի. ունեցողը կապրի, չունեցողը՝ հացի կարոտ:

— Վախ-վախ-վա՛խ,— հառաչում են հավաքվածները:

— Բեռլին էլ պտի գնայի, բայց ցուցահանդեսը հետաձգվեց:

Ուշ գիշեր է: Կինն ու որդին քնած են: Սեղանի վրա վառվում է լամպը: Գրիգորը, թառը ծնկին դրած, հակվել է և գրում է. գլուխը բարձրացնում է. շրթունքներն ասես աղոթք են մրմնջում: Դեմքը ոգեշնչված է: Ահա նվագարանն առավ կրծքին, գրեթե անլսելի նվագեց, հետո դրեց սեղանին: Գրեց, ջնջեց, նորից գրեց... Դադար տվեց ու կանգնեց ոտքի: Մեկ-երկու քայլ գնացեկավ, կանգ առավ. նայեց երդիկանման լուսամուտին.

Հիշողությունը հանգիստ չի տալիս... Ինքը նստել է Վարդուհու դիմաց ու նվագում է: Կրկնում է իր շարժումը: Մոտենում են միմյանց...

Անհանգիստ քայլեց, նայեց քնած կնոջն ու մանկիկին. լամպը մարեց ու պառկեց՝ սկզբում աչքերը բաց, հետո թմրեց ու քնեց: Ինչ է սա, երա՞զ, թե՞ իսկական... Մորուքավոր, դուրս ընկած աչքերով մի մարդ բռնել է երգչի կոկորդից ու գոռում է.

— Սովորեցրո՛ւ...

Գրիգորը սարսռաց ու վեր թռավ:

— Քա՛, ինչ էղավ,— քնկոտ հարցրեց Սալվին:

— Հե՛չ, հեչ, քնի, քնի՛...

Ելավ, մթության մեջ գտավ ծխամորճը, թութուն լցրեց, ափըլ-փելով վերցրեց լուցկին, վառեց·

Հուշերը դարձյալ հեղեղեցին նրա էությունը...

Լուսնի լույսով պայծառացած պատին հանկարծ հառնեց Կոմիտասի կերպարանքը: Գրիգորն ակամա խոնարհեց գլուխը:

5

Փետրվար ամիսն է· Տալոյենց Գրիգորն իր ընտանիքով բնակություն է հաստատել հույների թաղի՝ Ռումի Յափուի, միհարկանի շենքում: Տան դիմաց մի փոքր հրապարակ կա և սրա մեջտեղը՝ մատուռ: Քարաշար բարձր ցանկապատն ի վեր հաճախ մագլցում են թաղի մանչուկները և կռիվ-կռիվ խաղում ներքևինների հետ: Գրիգորի տան դուռը փակ է, կրկնափեղկերը՝ գոց:

Մատուռի կողմից, ձեռնափայտը հազիվ գետնին դիպցնելով գալիս է մի մարդ: Նա մոտեցավ տանը, մի պահ կանգնեց՝ ինչ-որ բան մտմտալով: Ձեռնափայտի կորաձև գլխով մի քանի անգամ թույլ հարվածեց դռանը: Ներսից ոտնաձայն լսվեց: Կիսաբաց փեղկից անծանոթին նայեց Գրիգորի կինը՝ Սալվինազը: Նա ամաչելով հարցրեց.

— Ո՞ւմ կուզես, եղբայր:

— Գրիգորը տա՞նն է, հարս ջան.— իր հերթին հարցրեց եկվորը:

— Մի երկու ժամ առաջ է եկել Ղարսից. քնած է:

— Հը՛մ,— արեց մարդը՝ հավանաբար մտահոգված, թե Գրիգորն ինչու՞ է գնացել Կարս, ինչպե՞ս է առողջությունը և նման հարցեր.— Ձեն տուր, հա՛րս ջան. ասա, որ Երվանդ Տեր-Մինասյանն է եկել և կարևոր գործ ունի հետը:

Սալվինազը մեկ էլ նայեց հյուրին, աչքը գցեց ներսի դռանն ու մի պահ տատանվեց. ապա մոտեցավ, բացեց և ականջ դրեց. ամուսինը հանգիստ քնած էր: Երվանդը նկատեց կնոջ անվճռականությունը և կրկնեց խնդրանքը.

— Ձեն տուր, ձեն տուր... հետո էլ կքնի,— ու ժպտաց:

Ներսից լսվեց Գրիգորի ձայնը.

— Էդ ո՞վ է, Սալվի:

— Երվանդ Տեր-Մինասյանն է:

— Շորերս տուր, ա՛յ կնիկ... Էս է՝ կելնիմ: Համեցեք, պարո՛ն Երվանդ:

Մինչ Գրիգորը հագնվում էր, Երվանդը ներս մտավ, ձեռնափայտը հենեց դռան կողին ու շլլապան շուռ տված դրեց սեղանին:

— Էս ինչպե՞ս է, որ եկար, Երվանդ, բա՞ն է պատահել... Ղարսից առավոտն եմ եկել: Հա՛, Սարիղամիշ էլ եղա:

— Էնտե՞ղ ինչ գործ ունեիր, Գրիգոր:

— Հորքուրիս տղեն՝ Մուշեղը, էնտեղ վարժապետ էր. դե՛, ընձի էլ կանչել էին...

— Լավ, հիմա ինձ լսիր. էն խեղճ Հովհաննեսը մեռավ նամակ գրելով, թե՝ Գոքորին ասա, թող շուտ անի՝ գա Բաքու:

— Էն էլ շուտ, հա՞:

— Այո: Ահա նամակները:— Ու Երվանդը գրպանից երկու ծրար հանեց: —Մեկը գրել է դեռևս անցյալ նոյեմբերին. լսիր.

«Ահա այս խորհրդով դիմում եմ քեզ ու խնդրում, որ խոսես ուստա Գոքորի հետ, կարո՞ղ է արդյոք նա յուր խմբովը գալ Բաքու»:— Եվ հետո՝

«Վերջապես ուզում եմ, որ հա՛մ լավ հայերեն երգ լինի, հա՛մ նվագակցություն, հա՛մ պար: Այս ամենի մասին մի խորհուրդ արա ուստա Գոքորի հետ (ինքն էլ կարող է որևէ հետաքրքրական բա՛ն մտածել)...»:

Գրիգորն ուշադիր լսում էր ու նայում նամակին, որ գրված էր իրեն քաջ ծանոթ ձեռագրով, Հովհաննես Հովհաննիսյանի ձեռագրով: Երվանդը նկատեց երգչի գոհունակությունը և, կարծես ավելի տրամադրելու համար, կարդաց հաջորդ նամակից.

«Զարիկոն Զեզ կհանդիպի ու ավելի կպատմի մեր մասին: Գոքորին ասա, որ կարգին չուխա-մուխա հագնեն և ոչ թե պիջակով գան»:

Երգչի ծիծաղն ընդհատեց նամակի ընթերցումը: Ծիծաղեց նաև Երվանդն ու շարունակեց.

«Լավ Ալեքսանդրապոլի լոթու շորերով ավելի տպավորություն կանեն»:

Գրիգորը նորից ժպտաց ու հարցրեց.

— Է՞դ երբ է գրել Հովհաննեսը:

Երվանդը շուռ տվեց թուղթն ու մյուս երեսի սկզբին կարդաց.

— Հինգին փետրվարի:— Հետո ծանոթացրեց մյուս նամակին.

«Այս մտքովն էլ խնդրում եմ բանակցես յուր հետ,— քեզ հետ, էլի,— ընթերցողը մատնացույց արեց Գրիգորին,— ու վերջացնես. եթե կարելի է, մարտի 4-ին թող այստեղ լինին, իսկ 5-ին առավոտը անպատճառ պիտի տեղ հասած լինին, որովհետև բեմի վրա մի ժողովրդական տեսարան պիտի ներկայացվի, որին Գոքորն էլ իր խմբովը մասնակցելու է, ուրեմն գոնե մի անգամ փորձ անելու հնարավորություն լինի»:

Երվանդը կանխեց երգչի հարցումը.

— Քսանհինգը փետրվարի:

— Ուրեմն ի՞նչ:

— Ի՞նչ պետք է լինի. խումբ պիտի կազմես՝ գնաս: Ամոթ բան կլինի, որ հայերը չմասնակցեն: Իսկ ծրագիրը գիտե՞ս:

— Էնքան էլ չէ:

— Տեսարաններ մուսուլմանական, ռուսական, վրացական կյանքից: Հայկական տեսարանները «Ջան գյուլում» են կոչվում:

— Էլ ո՞վ պտի մասնակցե:

— Տիգրան Նալբանդյան... և այլոք: Է՛, Գոքոր, ասա տեսնեմ, ի՞նչ կար Ղարսում, Սարիղամիշում:

— Ամեն ինչ լավ անցավ. բայց մի բան եղավ, որ եթե դաշնակցականները մտքերուն դրածն անեին, հիմի ախպերդ քու դեմդ նստած չէր լինի ու հետդ չէր խոսի: Լավ, էս հետո... իսկ դու մեր սիրելի մարդուն գրե, թե՝ որ ձեռքերս կրակի մեջ էլ էղնին, կելնիմ կուգամ: Աստված կխռովի ընձեն, թե Հովհաննեսի խոսքը չկատարեմ: Հիմա մի բոպե ականջ էրա: Երվանդը գլխի թեթևակի շարժումով համաձայնեց:— Մեր Մուշեղը, որ Սարիղամիշում վարժապետ է եղել, հեղափոխական էր. ու ընձի էլ մեծ օգնություն է ցույց տվել լեզվի կողմից... Մուշեղն ու Ղազարոս Աղայանը շատ մոտիկ են եղել իրար հետ, աշխատել են մեր քաղաքի դպրոցներում: Նրա գաղտնի նամակը գտել են Ղազարոսի մոտ ու բանաստեղծին ձերբակալել...

— Ղազարոս Աղայանի՞ն,— ընդհատեց Երվանդը:

— Հա՛... Մուշեղի տանը հեղափոխականներ կպահվեին: Արկղերով զենք ու փամփուշտ կար էդտեղ՝ հայդուկներու համար: Ես որ կերթայի հորքուրանցս տուն, երկար ժամանակ դուռը կփակեին ու...

— Հետո ի՞նչ եղավ Մուշեղը,— հետաքրքրվեց Երվանդը:

— Աշխատեց Սարիղամիշում, Կաղզվանում, Ախցխալում... Հայկական դպրոցները որ փակեցին, գնաց Բաքու. նավթահանքի կառավարիչի գրասենյակում էր աշխատում: Բոչկեն ընկել էր մեջքին՝ ողնաշարը վնասել: Եկավ Ալեքպոլ ու մահացավ:

— Հա՛,— ծանր շնչեց Երվանդն ու վեր կացավ.— էլ չհիշեցնեմ: Բարով գնաս, բարով գաս.

ԱՆՋՈՒՐ ՊԱՐՏԵԶ

Գնացքը սլանում է Մուղանի դաշտավայրով: Գարնանամուտ է: Արդեն զգացվում է հարավի տաք շունչը: Հորիզոնում նշմարվում են նավթահորերի աշտարակները: Եռյակը կարճատև փորձ կատարեց: Գրիգորը նվագարանը դրեց մահճին ու մտածմունքի մեջ ընկավ: Հիշեց հայրենի Գյումրին, մտաբերեց բոցեղեն սիրո էակին, վաղամեռիկ հարազատին՝ Մուշեղին... Հիշեց ու կարոտով հառաչեց: Միտքն ընկավ կիսազավեշտական մի դեպք, որ տեղի էր ունեցել այնտեղ...

...Ինքը գնում է Հովհաննես Հովհաննիսյանի տուն: Հանկարծ, հենց իր դիմաց, մուտքից դուրս է ճախրում մի աղջիկ: Երգիչը, որն անկարող է զսպել հիացմունքը, ցաճրաճայն կանչում է.

— Կայնի, մեկ աշե, սիրո՛ւն ջան:

Աղջիկը ետ չի նայում, հեռանում է:

— Արևը դիպավ՝ դռնեն դուրս էկար,— քթի տակ մրմնջում է գուսանն ու կանգ առնում, նայում չորսդին: Աղջիկը թռավ գնաց, իսկ ինքը բանաստեղծի տնից անցավ. Գլուխը տարուբերելով ետ դարձավ: Քիչ անց Հովհաննեսին պատմեց պատահածն ու ծիծաղեց, իսկ մտքում արդեն գրեց նոր տաղի առաջին տողերը: Անուրջը ցնդում է, իսկ նա վագոնի լուսամուտից տեսնում է մի նոր պատկեր...

Ահա և Բաքուն: Արևելյան ոճի շենքի շքամուտքի երկու կողմում ազդագրեր են փակցրած «Հայ հասարակական ժողովարան...»:

Ազդագրերը հայտնում են, որ ազգագրական երեկույթը կայանալու է 1914 թվականի մարտի 19-ին:

...Դահլիճը լեփլեցուն է: Օթյակում տեղեր են գրավել երեկոյի կազմակերպիչներից մեկը՝ Հովհաննես Հովհաննիսյանը և իր դստրիկները: Կինը նրանց հետ չէ. նա մասնակցում է պարերին: Բանաստեղծի հետ նստած են պատկառելի մարդիկ: Հանդիսականները ծափողջույններով դիմավորեցին երգիչ Տիգրան Նալբանդյանին: Վերջին հնչյուններին հաջորդեցին՝ բրավո, բիս բացականչությունները: Հովհաննիսյանը դառնում է կողքի ծերունուն.

— Ա՛յ, հիմա կլսե՛ք...

— Երգիչ Գրիգոր Տալյանց,— հայտարարում են բեմից:

— Ուստա Գոքո՛ն է,— հպարտությամբ ասում է բանաստեղծը,— վարպե՛տը... Ահա՛, ահա եկավ...

Բեմում հայտնվում են երեք հոգի աշուղի ավանդական տարազ հագած: Առջևից քայլում է Գրիգորը և անընդհատ գլուխ խոնարհում: Նվագածուները հասնում են իրենց աթոռներին և նույնպես գլուխ խոնարհում: Ծափերն աստիճանաբար դադարում են: Եղյակը նստում է և սկսում նվագել: Հնօրյա երգի վերջին տողերը մարում են օդում.

Դարդեր, վարդեր մեկ եմ հյուսել,
Ձեռքս առել զարդի տեղ .

Ծափերին խառնվում են հիացմունքի բացականչությունները: Հովհաննիսյանի դեմքից չի հեռանում թախծոտ ժպիտը: Նա շոյում է դստեր ծամերը և, առանց աչքը բեմից կտրելու, թրթռուն ձայնով շշնջում.

— Հիանալի է, չէ՞:

Դուստրը գլխով է անում: Տաղերգուն կատարում է ազատագրական պայքարին նվիրված երգը: Ապա բոլորը, շունչները պահած, ունկնդրում են սիրո կրակոտ պոռթկման կանչը... Հովհաննիսյանն սթափվում է խոհերից և խոսում վեհացած.

— Ինչպիսի՜ երգեր են, ի՞նչ նուրբ ու քնքուշ տաղեր...

Իսկ երգը տարածվում է ամենուրեք: Կասպիականի ալիքները փախցնում են սիրո կանչը և թռցնում մինչև բարձունքները:

Հանդիսականներին թվում է, թե սիրո տաղը վերջ չունի. միմիայն դադարում է մի պահ, որպեսզի հետո կարկաչի ավելի ուժգին: Ծափերի տարափի ուղեկցությամբ, գլուխները տարազը

հագին, բեմ է ներխուժում Զարուհին՝ բանաստեղծի կինը: Նվագածուները հնչեցնում են տաղերգուի պարերից մեկը: Զարուհին պարում է այնպես, ասես ճախրում է օդում: Մարմնի նրբին ելևվէջներին հաջորդում են թևերի օճագալար թրթռումները, ոտքերի սահուն հպումները հատակին: Թվում է, թե ուր որ է կսլանա վեր, գետնից կտրվելով: Ջեփյուռի շշունջ է լսվում զգեստի թափանցիկ թևքերի ծածանքից... Հիացմունքի անդորրը մի պահ խախտում է բանաստեղծի հազիվ լսելի ձայնը.

— Կեցցե՛ս, իմ Զարիկո...

Պարուհին հեռացել էր բեմից, իսկ հասարակությունը նոր միայն սթափվեց սքանչացման կապանքից: Եվ դահլիճը դղրդաց բուռն ծափերից...

Երեկոն ավարտվել է: Ժողովուրդը հեռանում է սրահից: Ահա նվագածուների սենյակը: Գործիքներն արդեն տեղավորված են պատյաններում: Դուռը բացվում է. շեմքին կանգնում է բանաստեղծը: Անթարթ հայացքը հառում է Գրիգորի դեմքին. սա էլ ակնդետ նայում է նրան: Այտի վրա արցունքի շիթ է նկատվում, որ փայլում է ադամանդի նման: Հովհաննիսյանը գրկաբաց քայլում է երգչի կողմը: Նրանք ողջագուրվում են: Ո՛չ մի բառ, ո՛չ մի խոսք...

— Դե՛, գնանք, Գոքոր ջան, գնանք մեր տուն, գնանք... քո՛ տունը:

Ձեռքի տարաձական շարժումով բանաստեղծը հրավերի մեջ է առնում եղյակին:

Երկու կառք հանդարտ ընթանում են փողոցով: Անիվների կարմրավուն ճողերը փայլկտում են գազի լապտերների գունատ լույսի ներքո: Բանաստեղծն ու տաղերգուն առջևի կառքի մեջ են: Բոժոժների ծլնգոցի հետ լսվում է բանաստեղծի մեղմ ձայնը.

Մատը անգին մատանի,
Նստել քյարգյահ կբանի ..

Գրիգորը լսում է շունչը պահած: Նրա ուշադրությունից չի վրիպում բանաստեղծի ժպիտը: Նա միայն շշնջում է.

— Ապրի՛ս...

Հովհաննեսը հարցնում է.

— Գոքո՛ր, իսկապես, երեկոյի ժամանակ երգեցի՞ր այս երգը:

— Երգեցի, Հովհաննես ջան, երգեցի՛:

— «Ջալում աղջիկը» չէ՞ սա:

Տաղերգուն հաստատեց:

Իսկ մեծ քաղաքն աստիճանաբար ընկղմվում էր ծովի ջառաչուն աղերսի գիրկը:

2

Այն տարիներին, երբ Հովհաննես Հովհաննիսյանի ընտանիքն ապրում էր Բաքվում, փողոցն ուրիշ անուն ուներ: Սևաքար ջենքի երկրորդ հարկը երկաթյա բազրիքներով պատշգամբներ ուներ, որոնք պարուրված էին բաղեղանման բույսերով: Մայթի եզրին զինվորների պես զգաստ շարվել էին բարդիները: Խաղաղ էր փողոցն այն ժամանակ: Տան դիմացը ցաքրիկ կացարաններ էին, իսկ հեռվում կապտին էր տալիս Ապշերոնի ծովածոցը:

Երեկո է, լույսերը՝ վառ: Դրսում մոլեգնում է հողմը: Աշնան դեղնագորշ տերևները խշխշալով փախչում են հողմահալած: Հեռվից լսվում է ծովի քրթմնջոցը: Առասպելական վիշապ է ասես, որ հառաչում է ծարավից: Անցորդները երբեմն կանգ են առնում, նայում բանաստեղծի լուսամուտներին ու գլուխները տարուբերում՝ այսքան էլ երկար հարսանի՞ք լինի...

Սեղանի շուրջը նստած են ընտանիքի անդամները. կինը՝ Զարուհին, դուստրերը՝ Լուսիկն ու Աննան, իսկ հարևան սենյակում մյուսներն են. Հովհաննեսի որդին՝ Եփրեմը, սրա ընկերը՝ Վարդան Սամվելյանը, Եվան: Սրանք զվարճանում են դհոլ-զուռնայի նվագի ներքո:

Հովհաննեսի ձեռքին է Գրիգորի երգարանը, որ մի տարի առաջ է լույս տեսել Ալեքպոլում: Երաժիշտները նվագում ու երգում են, իսկ տաղերգուն սպասում է, թե ինչ կասի բարեկամն իր տաղարանի մասին: Սակայն բանաստեղծը չի շտապում. թերթում է էջ առ էջ ու հիացմունքով նայում երգչին: Գրիգորին թվում է, թե բանաստեղծն անձայն երգում է:

— Ինչո՞ւ «Անջուր պարտեզ», Գոքոր:

Տաղերգուն մի պահ հայացքը կենտրոնացնում է բանաստեղծի վրա և խոսում.

— Կրթություն չստացա, երաժշտություն չսովորեցի. հոգս ու կարիքից մեջքս ծռվեց... Անջուր մնաց պարտեզս, Հովհաննես ջան, անջո՛ւր մնաց...

Բանաստեղծը գրկեց նրա ուսերն ու բողոքեց.

— Ի՞նչ ես ասում, Գոքոր, ի՞նչ ես ասում... թող որ քո հողը ջուր չստացավ, բայց ի՞նչ եղեմական ծաղկունք բուսան այդ պարտեզում։— Մեկ էլ նա մատը դրեց մի էջի վրա և, իբր ծգնելով մտաբերել, ասաց.— Գոքոր, այս երգդ չեմ լսել։

Տաղերգուն ծիծաղելով բացականչեց.

— Ի՞նչ ես ասում, Հովհաննես ջան...

Բանաստեղծի ժպիտը խնդրող էր՝ կրկին երգիր։ Եվ մոտենալով հարևան սենյակին, կանչեց.

— Եփրեմ, Վարդան, Եվա, հերիք է այդտեղ զվարճանաք. եկեք Գոքորին լսեք։

Դռան զույգ փեղկն էլ թափով բացվեցին, ու սենյակ ներխուժեցին երիտասարդները։ Եվ Գրիգորը երգեց։

Երբ սեղան նստեցին ընթրելու, երգիչը դիմեց բանաստեղծին.

— Հովհաննե՛ս ջան, էսքան տարի երգում եմ ու մի կարգին աշուղական անուն չունիմ եղա՞վ

Բանաստեղծը պատասխանեց.

— Չեղավ, իհարկե. պահանջդ արդարացի է, Գոքոր։ Պարտքս լինի՝ մի փառահեղ անուն գտնեմ քեզ համար։

Եվ ընթրիքը շարունակվեց մեղմիկ տաղերով.

3

Միջօրեն անցել է. մոտենում է ճաշի ժամը։ Բակի սանդուղքից ոտնաձայն է լսվում։ Դռան մեջ հայտնվում է բանաստեղծը։

— Իսկ ո՞ւր է մեր Գոքորը,— տնեցիներն ուսերը վեր են գցում՝ տեղյակ չեն։ Տանտերն անհանգստանում է.— Նա ճշտապահ մարդ է և ճաշի չի եկել։

Բանաստեղծը հագավ վերարկուն ու քայլեց դեպի սանդուղքը։ Վազեց եկավ Եփրեմը, թե՝ ես գնամ գտնեմ։ Նրան միացավ Վարդանը։ Ու երիտասարդները դուրս թռան փողոց։ Հովհաննեսը ծուլորեն հանեց վերարկուն և սկսեց անցուդարձ անել փողոցի պատշգամբում։ Քիչ անց ցնծալի բացականչությամբ նետվեց ներս.

— Եկա՛վ մեր Գոքորը.

Բակի կողմից, ուր շտապեց տանտերը, լսվեց նրա ու երգչի վեճը ճշտապահության մասին: Շուտով նրանք սեղան նստեցին:

— Դե՛, հիմա ասա, թե որտե՞ղ գտան քեզ այս քաջերը:

— Բուլվարում:

— Բացօդյա համերգ էիր սարքել, չէ՞,— ծիծաղելով հարցրեց բանաստեղծը:

— Դե՛... Էսպես եղավ. Տղերքը որ եկան, չորս բոլորս ահագին ժողովուրդ էր հավաքվել արդեն...

— Հետո՛...

— Կեցի՝ հերթով պատմեմ Փողոցում ընձի ճանաչեցին, հետս ման գալով ու խոսելով՝ եկան բուլվար: Հասանք էդ նստարանին թե չէ, աղաչանք, պաղատանք արեցին, թե քու անուշ մուղամներից մի խաղ ասա: Առաջ մեկ-երկու հոգի էին, հետո էնքան հավաքվեցին, որ նստելու տեղ չեղավ: Դե՛, համոզեցին, Հովհաննես ջան, ես էլ չմերժեցի: Ինչու՞ մերժես, որ սրտով կուզեն:

— Հապա թա՞ռը. չէ՞ որ քո նվագարանը տանն էր:

— Չիտեմ, թե էդ թառը որտեղից ծարեցին:

— Երանի թե ես էլ այնտեղ լինեի,— ափսոսաց բանաստեղծը:

— Հը՛բը՛ Գարուն, պայծառ օր, ծաղկած այգի... Ո՞վ էղնի, որ դիմանա, ախպերս: Էդ էլ ասեմ, որ իմ հավեսս էլ եկավ:

— Իսկ իրիկունը որ մտար սենյակդ ու դուրս չեկար, նոր ե՞րգ հորինեցիր:

Երգիչը հոնքի տակով նայեց Հովհաննեսին և ասաց.

— Ինչքան չեղնի բանաստեղծ ես, ձեռաց հասկացար: Ախր էդ անտեր մուսան որ կուգա, հարազատիդ էլ մտիհան կենես, հաց ու ջուրդ էլ:

Մտքում փայլկտեց ու անցավ Վարդուհին... Եվ տաղերգուն թառը սեղմեց կրծքին ու երգեց, թե ինչպես սիրահար երիտասարդը ամեն երեկո, ամեն առավոտ պաշտելի կնոջն է սպասում կարոտով...

Վերջին հնչյունները միաձուլվում են հիացական բացականչություններին:

— Էս մեկն էլ դեռ կարգին չեմ սարքել, Հովհաննես ջան:

Եվ նա մարտական ներշնչմամբ երգեց «Անդրանիկի կոչը»:

Եվ ես մերկ սուրս պիտ փալլատակեմ,
Մինչև որ ուխտս տանիմ ի կատար,
Անգութ օսմանյան գահը խորտակեմ,
Արյամբ պսակեմ հին դատը արդար

Հովհաննեսն ընդոստ ոտքի կանգնեց ու գոչեց.

— Այդ ի՞նչ հող է ձեր հողը, Գոքոր... Հապա քո ելույթը մեր երեկոյի մեջ, որ լուսաստղի պես փայլեց...

Տաղերգուն հուզվեց:

— Էդ էդպես է,— թոթովեց.— դուք էլ աննման էիք կազմել... մի տուն, մի ընտանիք էինք կարծես...— Երկուսն էլ ոտքի ելան:— Չերթա՞նք մի քիչ ման գանք:

— Երթանք. լավ միտք է. ճաշից հետո զբոսնելը օգտակար է:

Ու նրանք քայլերն ուղղեցին դեպի ծովափ:

4

Վաղը հայրենի քաղաք պետք է մեկնի Գրիգորը: Եվ, ահա, վերջին անգամ եկել է հրաժեշտ տալու Կասպից ծովին: Համրաքայլ ծեմում է նա ծովափնյա այգու զով ծառուղիում ու ոգորում բանաստեղծի հետ: «Տարիներ են անցել, Գոքոր. բայց մտաբերու՞մ ես Ալեքպոյի մեր բնակարանը»,— հարցնում է բանաստեղծը: Երգիչը պատասխանում է. «Մոռանալու՞ բան է, Հովհաննես ջան. աչքիս առաջն է ուղղակի»: Եվ տաղերգուն գրեթե լսելի ծիծաղում է: «Էս ո՞վ էր՝ բարև տվեց ու անցավ,— մտքի մեջ հարցնում է ինքն իրեն ու ետ նայում:

Եվ գուսանը շարունակում է զրույցը բանաստեղծի հետ: Մի զույգ, որ գալիս էր դիմացից, ապշած նայեց տարօրինակ մարդուն՝ ինքն իրեն ծիծաղում է: Երգիչն ուշադրություն չդարձրեց նրանց վրա և չուզեց, որ հոգեթով զրույցն ընդհատվի... «Ախ, Գյումրի, Կումայրի...»,— լսեց նա բարեկամի ձայնը: Ակամա նայեց շուրջը:— Տաղանդ տաղանդի ետևից... «Հըբը վանքերը... Ջիվանին լավ է ասել, չէ՞»:

Ու մեղմաձայն երգեց.

Իրանք սնունդ չունին ապրելու համար,
Հինգ հատ վանք են շինել, խելքի աշեցեք...

Հովհաննեսը պետք է գար ու չեկավ ծովափ. ասաց՝ նիստ ունեմ... «Ծ՛ո, քու ժողովդ սրանից լա՞վ է»: Երգչին թվաց, թե

բանաստեղծը ցույց է տալիս իր գրքույկներից մեկը և ասում. «Կգա ժամանակ, եղբայր իմ, երբ աշխարհը սիրո և աշխատանքի թագավորություն կդառնա»: «Ողորմի՛ հորդ. յարաբ կտեսնի՞նք էդ օրը»,— հարցնում է տաղերգուն: «Անպայման,— պընդում է այն մարդը, որ ընկերոջ հետ անցնում էր այդտեղով: «Իա՛,— գարմանում է Գրիգորը,— ինչդ որ Հովհաննեսն ըսեր էդ խոսքը»:

Տաղերգուն նայեց ծովին: Հեռու հորիզոնում մայր էր մտնում բոսոր արևը: Նա արագացրեց քայլերը: Բանաստեղծի տան մոտ նկատեց մի ծանոթ կերպարանք, որ, իրենից առաջ ընկած՝ գնում էր նույն ուղղությամբ:

— Հովհաննես, դո՞ւ ես,— ձայն տվեց Գրիգորը: Մարդը ետ նայեց. իսկապես բանաստեղծն էր:

— Գոքո՞ր, էսքան ուշ որտե՞ղ էիր ման գալիս,— հարցրեց նա:

— Չգիտե՞ս իմ սիրած տեղը:

Ու նրանք միասին մտան տուն·

Մի օր անց Գոքորը մեկնելու է Հովհաննես Հովհաննիսյանի հարազատ օջախից: Ահա բարձրանում են երկու բանաստեղծները սանդուղքով ու ցածրաձայն խոսում վաղվա մասին: Ի՞նչ շուտ անցավ երկու շաբաթը այս հյուրընկալ հարկի ներքո, ինչքան դժվար կլինի անցնել շեմքն այս տաճարի, ուր ամեն երեկոն տաղերի հանդես էր, սիրո շարականների մեղրաձոր ելևէջ...

Նրանք ներս մտան ու տեսան, որ ընթրիքի սեղանն արդեն պատրաստ է, սակայն հարևան սենյակից ոչ մի ձայն չի լսվում:

— Տմբլաչիներն ու՞ր են, —հարցրեց Գրիգորը·

— Դհոլ-զուռնան ճամփու եմ դրել. հերիք եղավ: Այսօր միայն քո եռյակին պտի լսենք: Է՛, կկարոտենք քեզ, Գոքոր, շա՛տ կկարոտենք:

— Կարոտեք թե չէ, կանչեք՝ կուգամ:

Հովհաննեսը լուռ է. միայն հմայված ունկնդրում է երգչին և ժպտում, ինչպես ծովի ալիքը՝ արևի շողից:

— Հայրի՛կ, համեցեք, սեղանը ձեզ է սպասում,— կանչում է Լուսիկը:

— Գոքոր ջան, ուստա՛ Գոքոր,— վերջապես սկսում է բանաստեղծը, երբ բոլորը սեղան են նստում.— վաղը դու և քո ընկերները,— դառնում է նվագածուների կողմը և, մի փոքր խոնարհելով գլուխը, հարգալից շարունակում,— մեկնում եք այստեղից:

Դուք գնում եք Հայաստան, Գյումրի.— կարծատև մի պահ լռում է.— հեռանում եք մեզանից, բայց ձեր երգը մնում է մեր հոգու խորքում...— Սեղանատանը շշուկ անգամ չի լսվում: Բանաստեղծը շարունակում է.— Հիշո՞ւմ ես, Գոքոր, մի օր ասացիր, թե քանի տարի է աշուղ ես, բայց կարգին անուն չունես:— Գրիգորն անխոս հաստատում է նրա ասածը:— Այսօր քեզ պետք է նորից մկրտենք:— Մեղմ ծիծաղը տարածվեց սենյակում...— Ես համոզված չեմ, իհարկե, որ դու բառիս բուն իմաստով աշուղ ես, բայց մի լավ անվան արժանի ես: Դե՛, հիմա կարդա այն բանաստեղծությունը, որ ինձ շատ դուր եկավ·

Տաղերգուն արտասանում է...

...Սիրեցյալից բաժան արյուն է լալիս երգիչը և խնդրում, որ սրտի այգին նա չքանդի: Թեկուզ գցի էշխի բանտը և շահմար հյուսով պինդ կապի, միայն թե չվանի իրենից: Սափորով կենաց ջուր բերի և հագեցնի, որպեսզի սիրահարի հոգին չվառվի: Նրա սիրտը բույն է գեղանի կույսի համար և նրա մուտքին է սպասում...

Բանաստեղծությունն ավարտվեց թե չէ, Հովհաննիսյանը բաժակ բարձրացրեց և առաջարկեց խմել Գրիգոր Տալյանի կենացը: Սա թառն առավ կրծքին ու գլխով նշան արեց նվագակիցներին:

Էլի էսօր սիրտս կուլա,
Սիրած լարին չի տեսել
Էլի ամպեր քուլա-քուլա
Գլխիս դուման են դիզել

Բոլորը ոտքի ելան ու կենաց գավաթներ պարզեցին երգչի կողմը, իսկ բանաստեղծը հրաման արձակեց

— Եփրե՛մ, Վարդա՛ն, հանգցրեք ջահը. թող միայն մոմերը պլպլան...— Տանտիրոջ հրամանը կատարվեց վայրկենապես սենյակն ընկղմվեց կիսախավարի մեջ:— Լսեցեք ինձ, սիրելիներս, ականջ դիր հոգուս ձայնին, Գոքոր,— մի ակնթարթ լռեց, ապա շարունակեց.— դու երգերի կախարդ ես. ոչ թե տաղեր ես հորինել, այլ առասպելական հավքեր, որ դայլայլում են քաղցրաձայն...— Քար լռությունը կապանք է դրել լեզուներին. հայացքները ուղղված են բանաստեղծի շուրթերին: Նա մոտեցավ երգչին. զնգոցով շփվեցին իրար նրանց բաժակները — դու այնպիսի տաղեր ես երկնել, որ նուրբ են, քնքուշ են, ինչպես մետաք-

սը... Դու շերամ ես, իսկական շերամ, մետաքսե երգեր հյուսող աշուղ Շերամ... բանաստեղծ ու երգաստեղծ Շերամ... Ահա՛ քո անունը, հարազատս... Կենացդ, Շերա՛մ...

Բոլորը հոտնկայս խմում են Շերամի կենացը: Նա հանում է թաշկինակը և սրբում քրտնած ճակատը: Հանկարծ վառվում է ջահը: Գուսանն սկսում է խոսել.

— Հովհաննես ջան, էդքան գովասանքի գուցե արժանի չեմ.— բանաստեղծը, թեթևակի տարակուսած՝ սպասում է իր տարեց սանիկի խոսքի շարունակությանը.— բայց բացի քեզնից ո՞վ կարող էր էդքան լավ անուն գտնել ինձ համար.

Եվ Շերամը մոտենում է ու գրկում բանաստեղծին. երգն ու նվագն ալիքվում են նոր ուժգնությամբ:

Արևաձագ էր արդեն, և ծովի ալիքները վետվետում էին վաղորդյան հովից, իսկ բանաստեղծի հարկի տակ դեռ հնչում էին նրբահյուս տաղերը գուսանի:

Գնացքը գալարվում է խոր ձորերով: Շերամը մտախոհ նայում է Դեբեդի ալիքներին ու ծխացնում ծխամորճը: Շոգեքարշը զիլ սուլում է. և ասես այդ ճիչը իր նոր երգի առաջին տողն է:

Օդի մեջ թևաձում են հավքերը և ճռվողում.

ԴՈՒ ԻՄ ՄՈՒՍԱՆ ԵՍ

1

Ամառ է: Ճիրակի ոստանը ապրում է իր սովորական կյանքով. դաշտերում ոսկեղեն արտերն են նազում, բանջարանոցներում փարթամորեն աճում են վարունգն ու ստեպղինը, բոստաններում տարածվել է կանաչը, և դդումի լայնատերև ցողունները մագլցում են ցանկապատերն ի վեր:

Շուկայում եռուզեռ է: Սրա դիմաց արհեստանոցներ կան՝ թիթեղագործների, կոշկակարների, դարբինների: Շուկայի, կամ ինչպես անվանում էին՝ չարսուի դեմուդեմ սրճարան կա նաև. Այդտեղ է եղել ժամանակին Տալոյենց դայֆեն...

Գրիգոր Տալյանի, որ արդեն Շերամ տիտղոսանունն ուներ, և եղբոր՝ Հարությունի ընտանիքներն այդ տարիներին ապրում

էին մոտակա թաղամասում. սակայն ամենակրտսերի ընտանիքի որոշ անդամներ դեռ մնում էին հին տանը: Այստեղ էր կենում նաև մայրը՝ Խաթունը: Ընդարձակ բակի չափ հրապարակից որ ներս էիր մտնում, ընկնում էիր մեծ օդեն, ինչպես անվանում էին սեղանատունը: Դիմացի և աջակողմյան պատի երկայնքով թախտ էր կապած ու դրա վրա, մինչև թախտի ծայրը, երկարուկ բարձեր էին շարված: Խաթուն մամն այդ ժամանակ գրեթե զրկվել էր տեսողությունից և ամբողջ օրը ծալապատիկ նստում էր դրա խոր անկյունում, թազբեհ քաշում ու զրուցում էր տնեցիների հետ: Շերամի ավագ եղբայրը՝ Բաղդասարը և երգչից երկու-երեք տարով փոքրը՝ Համբարձումը, վաղուց էին հեռացել հայրենի քաղաքից: Ավագն ընտանիքով բնակություն էր հաստատել Թիֆլիսում, իսկ Համբարձումը հասել էր Հյուսիսային Կովկաս ու հիմնավորվել Արմավիրում: Ալեքպոլում մնացել էին երգիչ եղբայրն ու Հարությունը:

Տաղերգուն նյարդային վիճակում էր. և բժիշկները խորհուրդ էին տվել սրտաբաց ու լուսավոր տուն վարձել: Եվ նա էլ, ահա, ապրում էր նոր տանը: Սակայն կապը հայրենական օջախի հետ չէր կտրում. ամեն օր այցելում էր մորը, նրա օրհնանքն առնում ու գնում նոր տունը

Ամռան կեսօրին, երբ հրապարակում դարձյալ չէր լռում երեխաների աղմուկը, իր հայրական տանը մոտեցավ նա: Մռայլ էր: Հավանաբար հիշեց Կոմիտասին և Հովհաննիսյանին, մտաբերեց Աստրախանի շքեղ տոնը: Իսկ այստեղ՝ բժիշկ Տեր-Մարտիրոսյանը պնդում է, որ ինքը գնա Թիֆլիս և բուժվի: Հապա Վարդուհի՞ն, որ ժպտում է այնքան հմայիչ: Լա՛վ, ընտանիքն առնի գնա, իսկ նա՞. .

Մռայլ էր ուստա Գոքորը. նույնիսկ տան առաջ վազվզող երեխաներին խոլոր նայեց: Նա թեթևակի ողջունեց կանանց, որոնք ամաչելով ցրվեցին իրենց տները, ապա մոտեցավ խուլ դռանը դանդաղորեն, մտավ նախամուտքը և խոնջացած հնձվորի պես փլվեց աթոռին: Վազեց եկավ Սոֆիկը:

— Անոթի չե՞ս, աղա ջան[1]:

— Չէ, հարս ջան:

— Գիրքոր ջան, դո՞ւ ես,— հարցրեց մայրը:

---

[1] Հարսներն ու աղջիկները երգչին ասում էին «աղա». Ծ. Հ.

— Հա՛, մերս, ես եմ։— Մոտեցավ մորը, շրթունքները հպեց նրա խորշոմած այտին։ Մայրը համբուրեց որդու ճակատը և հարցրեց.

— Գիրքո՛ր ջան, դարդոտ կերևաս. ի՞նչ է եղել. խո հիվանդ-միվանդ չե՞ս, բալա ջան։

— Էլ ի՞նչ էղնի, մերս,— հառաչեց որդին.— պատերազմ է սկսվել։

— Վո՛ւյ, քոռանամ ես, էդ ինչ զուլում էր,— արձագանքեց մայրը և նստած տեղում վշտահար ծոծվեց։— Հըբը ի՞նչդ պտի էղնի մեր դրությունը։

— Չիտեմ, չիտե՛մ...

Այդ րոպեին ներս մտան Սալվինազն ու դուստրը՝ Արևհատը։

— Ա՛յ, հիմի որ բարի է, մերս.. Սալվիիս ու Արևիս երեսները տեսա։

— Սստված ողորմած է, Գիրքոր ջան։

Քիչ անց հավաքվեցին տնեցիները. եկավ Հարությունը, սրա ավագ որդին՝ Գուրգենը, ուսումնարանից՝ Վարդգեսը։

— Տղոցը կռիվ չտանի՞ն, Գիրքոր ջան,— տխրամած ասաց մայրը։

— Թուրքերը վրա կուտան,— մեջ գցեց Հարությունը։

— Ծո՛, հըբը ռուս զորքն ի՞նչ է, Հարութիկ. հրեշտակի պես մեզի կպաշտպանե,— վստահեցնում է տաղերգուն ու, ծխամորճը լցնելով՝ քաշվում է իր նախկին սենյակը։ Նա սկսում է գրել.

Այս սոսկալի երկունքը
Պետք է ծնի մեզ նոր կյանք .

Գիշեր է. Գրիգորը մեղմահնչյուն նվագում է և հորինում մոր և որդու հրաժեշտի երգը։ Մայրը որդուն ազատագրական պայքարի է ուղարկում և պատգամում, որ նա հերոս լինի, իսկ ինքը կաղոթի նրա համար։

Հեռվից գուսանի ականջին է հասնում շների հաչոցը։ Մի գամփռ երկար ու ճիգ ոռնում է լուսնի վրա։ Որդին շուռումուռ է գալիս անկողնում։ Նվագարանը նորից երգչի կրծքին է։ Նա ստեղծագործում է։ Կայարանում ճչում է մի շոգեքարշ։ Սա հիշեցնում է ասես, որ ինքը պետք է հեռանա հայրենի քաղաքից, իսկ Վարդուհին մնա ու տառապի, տանջվի իր կարոտից։ Եվ հրեղեն ալիքը հորդեց սրտից ու տարածվեց ամբողջ մարմնում։

Զույգ ձեռքով բռնեց գլուխն ու քայլեց պատից պատ: «Երկու թաղ էն կողմն է ու շուտ-շուտ չեմ էրթա տեսնի... Անխի՛ղճ Գրիգոր...»:

Պառկեց, տապկտեց, հառաչեց, աչքերը փակեց, որ հեռացնի սիրեցյալի ճերմակազգեստ պատկերը... Ուժասպառ եղավ: Քրտինքը պատեց մարմինը:

Այգաբացը երգիչն, այնուամենայնիվ, դիմավորեց երգով: Զարմացավ, որ դրա վերնագիրը շուտ գտավ: Ինքն ավետում է լուսաբացը և ասում, որ ծաղկունքի ծոցում, անուշ քնով, իր յարն է քնած...

Վերջապես քնեց տաղերգուն: Նվագարանն, ահա, հարազատի պես հանգչում է կողքին: Կինը գորովագութ նայում է նրան, որդուն և անաղմուկ դուրս գնում սենյակից:

Առավոտյան Շերամը ելավ, քայլեց սենյակում ու տառապալից մտմտաց. «Ի՞նչ անուն տամ գրքիս...»: Պատկերացրեց պատերազմը. «Գազաննե՛ր,— մռլտաց:— Արշավում են վառելով ու կոտորելով...»:

Հանկարծ գետինը դղրդացնելով անցավ վայրագ հեծելազորը: Կեռասայր յաթաղանի շաչն ու շառաչը, պարսիկ զինվորների բղավոցները լցվեցին հոգնած գլուխը: Աչքերը փակեց: Մեկ էլ Սայաթ-Նովայի զայրալից աղաղակը շանթեց լսելիքը... «Անգի՛ուսպ մարդիկ...»: Ցշշացրեց այրվող վառոդի պես:

Մանչուկը խլրտաց անկողնում: Հայրը քայլեց դեպի սեղանը. ձեռքը խփեց ծակատին.

— Գտա՛... «Անգուսպ արշավ»:

Գրի առավ այն երգերի վերնագրերը, որ պետք է դնի գրքույկի մեջ: Սրանք կլինեն երգչի ցասման ճիչերը պատերազմի դեմ:

2

Զարմանալի զուգադիպություններ են լինում կյանքում. պատերազմն արդեն սև թևերն է թափահարում, իսկ այստեղ պատրաստվում են հարսանիքի: Դրա համար էլ արտակարգ մարդաշատ է շուկա տանող փողոցը: Արդեն իրիկնանում է, իսկ ելումուտը գուսան Շերամի նոր տան դռնով ավելի է աշխուժանում: Մեծ սեղան է բացած դահլիճի մի ծայրից մյուսը: Չէ՞ որ հարյուրավոր հյուրեր պիտի ներկա լինեն նրա դստեր հարսանիքին:

Սրահի կողքի սենյակում նստած է երգիչը. ծխում է: Ինչո՞ւ

է նա այդքան մտախոհ: Նստել է մենակ և ինչ-որ բան է մտածում: «Առավոտն աղջիկս էլ իմ հարկի տակ չի լինի՛... Իսկ ո՞վ պիտի դառնա հավատարիմ օգնականս: Վարդգեսն էլ նոր-նոր է նոտա սովորում. ո՞վ գիտե՝ երբ հասնի հոր հավարին»:

Աչքի առաջ դարձյալ հառնեց Կոմիտասը: «Հե՛յ գիտի, Կոմիտաս վարդապետ, լուսավո՛ր հոգի: Տեսնիս իմացա՞վ, որ հիմի Շերամ են ասում ինձ»:

Այս ի՞նչ է. վարդապետի թիկունքից մի կին սևեռուն նայում է իրեն: Նա է՝ պաշտելին... Տաղերգուն զույգ ձեռքով փարատում է տեսիլքը, սակայն հայացքը որոնում է նրան, և երգիչը ցանկանում է, որ այդ պատկերը երկար մնա աչքի դեմ:

Սենյակներից մեկում հարսանեկան զգեստ են հագցնում Արևհատին: Իսկ երգիչը շարունակում է խորհել ու թախծել: Մոտեցավ լուսամուտին, հայացքը հառեց դիմացի մատուռին: «Աղջիկս որ չեղներ, երգերս թռել գնացել էին չվող հավքերի պես: Է՛հ, ի՞նչ անեմ. թող նա հիմի էլ շենացնե փեսիս տունը: Հայկ Մարկոսյանը դաբաղ Հարութիկի տղեն է, ոսկի բիլազուկով... Էնպես արհեստ ունի, որ կյանքում խեղճ չի մնա»:

Աչքն ընկավ նվագարանին: Կա կարծես տխուր լռությամբ խոսում է իր հետ:

Գործիքն իջեցրեց ու նրբորեն նվագեց:

Ստեղծվեց տաղը, որի լույսի մեջ ժպտում էր գեղանին:

Հանկարծ մի ուրիշ մտահղացում առկայծեց ուղեղում: Ինքը պետք է երգ նվիրի իր դստերը, իր նեցուկին...

Հարսանիքի նախորդ օրը նվագաձուների միջև խոսքուզրույց եղավ, թե ո՞ր եռյակը պետք է նվագի Շերամի աղջկա հարսանիքին:

— Ուստա Գոքորի հարգանքն էնքան մեծ է,— խոսեց մեկը, — որ վազելով պտի էրթանք:

— Հըբը ի՞նչ. աշխարհք կթնդա նրա անունը,— ավելացրեց տարեց մի նվագաձու, իսկ մի երիտասարդ պատմեց.

—Ես, ուստա Գոքորն ու դաֆչի Թաթոսը գնացել էինք հրավերք՝ նվագելու: Բերեցին աթոռներ դրեցին, որ նստինք: Վարպետը ձեռ տվեց աթոռին ու տեսավ, որ դրա երեսին մեխեր կան: Թառը մի կողմ դրեց ու կանչեց. «Կացին բերեք, չաքուծ բերեք...»: «Ես ըսի՝ ուստա Գոքոր, էլ ընչի՞ կգոռաս»: «Հըբը ի՞նչ անեմ,— ասաց,— մեխերը չե՞ս տեսնի. ես աթոռին նստե՞լ կեղնի»: Ես ձեն չհանեցի. մի լավ աթոռ բերեցի, թե՝ ըհը՛, նստի: Իսկ մեխե-

ռով աթոռը տվրա դրեցի ուրիշ տեղ: Ուստա Գոքորը նայեց ընձի, նայեց ու ասաց՝ ապրիս, դու ընձեն խելացի ես:

Նվագածուները քահ-քահ ծիծաղեցին ու հենց այդտեղ որոշեցին, թե հաջորդ օրը ով պիտի գնա ծաղկեցնելու վարպետի ուրախությունը:

Եվ ահա, ընդարձակ սրահում թնդում է հարսանիքը, իսկ երգիչ հայրը տխուր է, խոր մտքերի մեջ կորած: Ջննախուզ հայացքով նայում է բոլորին, և ամենից շատ՝ նորապսակներին: Հոտնկայս մի քանի խոսք է ասում դստեր մասին, ախ քաշում և մաղթում.

— Բախտավոր էղնիս, Արև ջան, բախտավոր էղնիս, Հա՛լկ ջան...

Մինչև վերջին կաթիլը խմում է նա գինին, իսկ երաժիշտները երգում ու նվագում են: Հարսանքավորները լուռ ունկնդրում են տաղերգուի հարսանլաց հիմնը, որ և՛ ուրախություն, և՛ տխրություն է բերում բոլորի հոգուն.

Պարտիզում վարդեր բացված՝
Կսպասեն սոխակի

3

Ուշ գիշեր էր: Բոլորը տեղավորվել էին փեսայի տանը բացված սեղանների շուրջը, երբ Շերամն արժանապատվությամբ ելավ տեղից ու, ներողություն խնդրելով՝ դուրս գնաց: Շատերը կարծեցին թե՝ ծխելու: Անցավ սպասման մի քանի րոպեն. և ահա, դռան մեջ երևաց նա՝ թառը ձեռքին: Նվագածուները լռեցին և ուշադիր նայեցին նրան· Դիմելով դստերն ու փեսային, տաղերգուն սկսեց նվագել: Երաժիշտները ականջ դրեցին երգի նախանվագին ու տարակուսանքով նայեցին վարպետին: Այս ի՞նչ տաղ է. իրենք երբեք չեն լսել: Հարսանքավորները նույնպես կարծիքներ փոխանակեցին շշուկով. իսկ գուսանն սկսեց երգել.

Դու իմ մուսան ես,
Առանց քեզի երգել չեմ կարող
Սրտիս տավիղը,
Բացի քեզնից, էլ չունիմ լարող...

Դափահարն սկզբում երկչոտ, ապա հետզհետե գտնելով ռիթմը, նվագակցեց: Վարպետը շարունակեց ու վերջացրեց խանդա-

վառված: Մի փոքր անց երգչին սկսեցին ձայնակցել սեղանակիցներից ոմանք: Սոֆիկը թեքվեց ու տեգոր կնոջ՝ Սալվինազի ականջին ինչ-որ բան ասաց:

— Մարդդ թազա ե՞րգ է հնարել,— կամացուկ հարցրեց նրա մյուս կողմը կուչ եկած Խաթունը:

— Հա՛, խանում աբլա,— գրեթե անտարբեր արձագանքեց հարսը:

Բաղդասարի դուստրը՝ Արաքսին, արդեն երգում էր հորեղբոր հետ, բայց ցածրաձայն:

Իսկ տաղը հետզհետե մեղմացավ և ավելի քաղցրալուր դարձավ. խարույկի նման վառվեց, վառվեց սիրո մեղեդին ու անթեղվեց մարդկանց սրտերում:

Ծիրանագույն արշալույսը թեթև ծածանքով ողողում էր Արագածի լանջերը, երբ բոլորը հոտնկայս խմեցին Շերամի կենացը. իսկ նա մի խոսք ուղղեց նվագածուներին ու մատները փափկորեն խաղացրեց նվագարանի լարերի վրա: Եվ հնչեց դարերի խորքից հասած տաղն ի փառաբանումն առավոտու.

Առավոտ լուսո, արեգակն արդար...

Լույսի և զարթոնքի գովքը շարունակվեց. և հավքերը այգաբացի ուրախ ճռվողյունով դիմավորեցին ծնունդը օրվա: Եվ ասես ունկնդիր էին երգչի հոգու տվայտանքներին:

ԱՆՀԱՂԹ ԱՌՅՈՒԾԻ ԵՐԳԸ

1

Դստեր հարսանիքից հետո մի փոքր խաղաղվեց երգչի հոգին: Նա շարունակեց հանդես գալ ակումբներում ու տոնահանդեսներում. նույնիսկ մարտաշունչ երգեր հորինեց:

Հարյուրավոր ծնողներ որդիներին ճամփու են դնում անհայտ հեռուներ: Մայրերի և քույրերի արցունքը հեղեղ է դարձել: Կըծղում են արտերը, բոստանների բերքը հավաքող չկա: Ծինելավոր մարդիկ օրավուր շատացան... Եվ Շերամը գրեց, թե աշխարհի

կանաչ գարունը գնացել է, ու սևաթև աշուն է գալիս, իսկ վարդենին սգում է ավերված այգում...

Մութ գիշերները արթուն լուսացնող տաղերգուն կարծես լսում է հրանոթների որոտը:

Ահա չվում են կռունկները. երբևէ կվերադառնա՞ն նրանք արդյոք...

Կռունկները եկան անցան, հեռացան...
Մեր վաթանեն մեզ մի խաբար չբերին...

Առավոտ վաղ երգիչը քայլեց ընկերների կողմը.

— Էրթամ տեսնիմ նրա՞նք ինչ կըսեն էս անիծված պատերազմի մասին.

Ակամա սկսեց հաշվել, թե քանի երգ կտեղավորի նոր գրքույկում: «Դարավոր առյուծը» անպայման կգետեղի: Սրա մեջ գուսանը պատկերեց ժողովրդի պոռթկումը: Սա մամռոտ ու մռայլ խորշից դուրս է թռչում որպես անհաղթ առյուծ և թակարդներն ու շղթաները հիմքից խորտակում:

— Ժողովուրդն էդպես է,— քթի տակ խոսեց Շերամը,— որ ոտքի կանգնեց, գահ ու գահակալ ջարդուփշուր կանի:

Երկար խոսեցին երաժիշտները երկրի դրության, կռվի ու ժողովրդի վիճակի մասին· Արյունալի ճակատամարտերը մոտենում են Կարսին: Բարբարոսները որ մոտեցան Էրզրումին...

Շերամը գնում է տուն: Շուկայի առաջով անցնելիս դեմը կանգնեց Վարդուհին: «Իա՛,— ապշեց երգիչը,— դո՞ւ որտեղից եկար...» Կնոջ տեսիլքը ցնդեց ծխի նման:

Ականջի մեջ զնգաց նրա ծիծաղը: Սարսռաց: Քրքիջը կամաց-կամաց թուլացավ ու կորավ, ինչպես առուն ավազի մեջ: Ետ նայեց, տեսավ եկեղեցու գմբեթի փայլող խաչը և երեսը խաչակնքեց: «Տե՛ր, ողորմյա, տե՛ր, ողորմյա...», բարբառեց նա ու թեքվեց Պլպլան ժամի փողոցը: Մեկն ասես քաշեց թևն ու շշնջաց. «Ո՞ւր կերթաս, Գրիգոր. իմ տան ճամփեն մտիհա՞ն ես արել...»:

— Մեղա՛ աստծու, մեղա՛ աստծու,— խոսեց նա և բացեց Վարդուհու դուռը:

Իրիկնամուտ էր, երբ գնաց տուն: Սալվին դեմ ելավ նրան և կշտամբեց.

— Ու՞ր ես, քա՛. Օֆիցերսկի կլուբից ֆայտոնով եկել էին քու ետևից:

— Ժամանա՞կ են գտել... չորսդին կռիվ, արյունահեղությո՛ւն...

Մտավ ներս, որ մի քիչ հանգստանա: Բայց հանգստացա՞վ արդյոք... Աչքը հազիվ էր փակել, ականջի մեջ ծորաց սիրեցյալի նրբին ձայնը: Շուռ եկավ մյուս կողքին: Նստեց, նայեց փակ դռանը: «Լավ է, որ Սալվին էստեղ չէ. ձեռաց կհասկանար»: Գլուխը նորից դրեց բարձին, բայց ջղայնացած հիշեց բժիշկների պահանջը. «Ի՞նչ մարդիկ են. կըսեն՝ անպայման տեղափոխվի Թիֆլիս. Կիսատ ընտանիքով ինչպե՞ս էրթամ ուրիշ քաղաք: Վարդգեսն ուսումնարանը չի ավարտել, Արևս կմնա էստեղ... Վարդուհի՞ն... Ղասաբյանցի տպարանից էլ պահանջում են, որ գիրքս շուտ հանձնեմ. իսկական ժամանակն է»: Հանկարծ մի միտք պայծառացրեց նրա ուղեղը.

«Բայց բժիշկներու ասածը խելքին մոտիկ բան է, գիտե՞ս... կհեռանամ՝ կմոռանամ: Է՛հ, Գրիգոր, Գրիգոր. կմոռանա՞ս, թե՞ կարոտից կվառիս անվերջ...»:

Անցան րոպեներ. և հուսադիր մտքերին դարձյալ հաջորդեցին ցավալի ապրումները: Վեր թռավ, ծխամորճն առավ ատամների արանքը և ագահաբար ծծեց դառը ծուխը: Նյարդային դող անցավ մարմնով:

— Սալվի՛,— գոչեց:

Կինն իսկույն հայտնվեց սենյակում:

— Սալվի ջան, ընձի մենակ մ՛ի թողնի...

Կինը զարմացած նայեց ամուսնու տենդալից աչքերին, մտովի խաչ հանեց.

«Տեր աստված, խղճա՛ մեզի»:

Իրիկնամուտին տաղերգուն հագավ արխալուխն ու չուխան, նվագարանի վիզը սեղմեց թևի տակ ու գնաց:

Տարեց մի մարդ դանդաղ մոտեցավ մատուռին, շրթունքները թեթևակի դիպցրեց պատին ու, ձեռքերը կարկառելով երկինք՝ մրմնջաց.

— Փառքդ շատ էղնի, տե՛ր աստված:

Նա քայլերն ուղղեց միհարկանի տան կողմը: Հասավ դռանը, թավ բեղերը սղալեց ու մատների նոճերով կամաց ծեծեց:

— Ո՞վ է,— ձայն տվեցին ներսից,— ինչ՞ կուզեք:

— Բաց, քեռի, ես եմ՝ Թաթոսը, Հոռոմսիմի մարդը:

Մեկը մոտեցավ, կիսաբաց արեց դուռը և աչքերը կկոցելով նորից հարցրեց.

— Ասիր ով ե՞ս։— Եկվորը հայտնեց իր ով լինելը։— Վա՛յ, Թաթոս ջան, դու ե՞ս։

Թաթոսն անցավ ներս ու քեռուն գրկեց։ Երկուսն էլ մտան երգչի սենյակն ու նստեցին։ Թաթոսն ուշադիր նայեց քեռուն և նրա խումար աչքերի մեջ տենդային նյարդայնության կայծեր նշմարեց։ «Չէ՛, էնքան չէ, էնքան չէ, ինչքան կըսեին էս ու էն,— մտքում ծանրութեթև արեց և ասաց.— Թիֆլիս էի գնացել։ Մեծ քեռին ու Կարապետ եղբայրն ըսին, թե Գրիգորին շուտ բեր Թիֆլիս։

Շերամը շեղ հայացքով տնտղեց նրա միտքը, քմծիծաղեց ու պատասխանն ուշացրեց հարցով.

— Է՞, ըսա տեսնիմ, ախպերս ի՞նչ կենե, Երա՞նն ինչպես է, Արիստակեսը։

— Բոլորն էլ լավ են։ Դու՞ ինչղ ես։

— Լավ եմ, բայց բժիշկները կստիպեն, որ քաղաքից հեռանամ։

— Է՛, որ բժիշկները կպահանջեն, պտի հեռանաս. ինչ կեղնի՞ որ։

— Եսի՞մ, տեսնինք...— հանկարծ փոխեց խոսքը.— Արաքսուն պսակե՞լ են.— դարձյալ խոսքը փոխեց.— գործո՞վ ես եկել, թե՞...

— Հիմի կըսեմ, քեռի՛. թող մե շունչ քաշեմ։

Թաթոսը ելավ, հանեց թեթև վերարկուն։ Քեռին իսկույն առավ նրա ձեռքից, կախեց ու նստեց նրա կողքին։ Մեկ էլ մոտեցավ լուսամուտին.— էս կնի՞կն ուր մնաց. ըսավ շուտ կուգամ ո՛ւ...

— Լավ, քեռի ջան, արի նստի. գործ ունիմ հետդ։

Գրիգորը լրջացավ։ Թութունն այնքան պինդ հուպ տվեց ծխամորձի բնիկում, որ կողմնակի նայողին կթվար, թե պիտի ճաքի։ «Չէ՛, քեռու վիճակը լավ չէ,— մտածեց Թաթոսը.— ի՞նչ էլ էղնի, պետք է տանիմ»։

— Քեռի, գիտե՞ս ինչ։— Շերամը ժպտաց և ուսերը վեր մղեց. ուզեց հասկացնել, թե չգիտի։— Իմացի,— իր խոսքն առաջ տարավ փեսան,— որ էնտեղի գյումրեցիներն են պահանջել, որ դու անպատճառ էրթաս Թիֆլիս։— Երգիչը զարմացած նայեց նրան։— Ո՛վ հանդիպեց, հարցրեց՝ ուստա Գոքորը ե՞րբ պտի գա Թիֆլիս։ Բաղդասար քեռին էլ ստիպեց, որ քեզի տանիմ էնտեղ։— Գրիգորն ուշադիր լսում էր։— Էնքան խնդրող կար, քեռի, որ հաշիվը կորցրել եմ։— Թաթոսը մի պահ լռեց, ապա խնդրեց.— մե՛ղք են, քեռի ջան, կարոտով կմնան. էրթանք։

— Հաստա՞տ,— կասկածոտ հարցրեց տաղերգուն և ինքն իրեն՝ հբը էնի՞կ։

Երեկոյան Թաթոսը գնաց տուն, իսկ ինքը՝ սիրեցյալի մոտ։

2

Թիֆլիսի Պուշկինի փողոցին զուգահեռ ձգվում էր Սոլոմոնյան փողոցը։ Այնտեղ, «Մշակ» լրագրի շենքին կից գտնվում էր Բաղդասարի ավագ որդու՝ Կարապետի բնակարանը։ Հենց այդ տանն էլ իջևանեց Շերամը։ Կարապետի կինը՝ Մաշոն, որ Նար-Դոսի քենին էր, սրտաբաց ընդունեց ամուսնու հորեղբորն ու սրա փեսային։ Տաղերգուն նվագարանը հանձնեց Կարապետի որդուն ու կեսկատակ հարցրեց.

— Հյուր չե՞ք ընդունե։

— Վա՛հ, ի՞նչ իս ասում, հորեղբայր. դուն ի՞նչ ղոնախ, աբա՛... Տո՛, դուն խոմ ղոնախ չիս, դուն մեր սիրելի հայրիկն ես, Թաթոսն էլ մեր գլխի վրա տեղ ունի, մաշ... Համեցեք, համեցե՛ք...

Երեկոյան Կարապետի տանը հրավերք եղավ։ Հավաքվել էին հարազատներն ու բարեկամները, ծանոթներն ու մոտիկ ընկերները։ Նրանք ցանկություն հայտնեցին լսել երգչին։ Եվ հնչեցին նրա հին ու նոր տաղերը։ Բաղդասարը ժպտուն հայացքը բևեռեց եղբոր շրթունքներին, երբ լսեց.

Մի բալա է էս իմ յարը,
Մի յանղուն է՝ հուր ու բոց.

Սրան հետևեցին ուրիշ երգեր։ Բայց Շերամն անհանգիստ քնեց գիշերը։ Մղձավանջային պատկերները հաջորդում էին մեկը մյուսին։ Մերթ նրան թվում էր, թե կինը՝ Սալվինազը սրտաճմլիկ լացով է դիմավորում իրեն, մերթ Բաղդասարը զայրացած ինչ-որ խոսք է ասում։ Ահա և Զոնգուր Հագոն, որ հեգնական ժպտում է և գլուխը ճոճում աջ ու ձախ։ Վարդուհին, թևերը պարզած՝ կանչում է իրեն, իսկ հարսը՝ Սոֆիկը, նրան ամոթանք է տալիս, բռունցքը թափահարելով...

Կարապետն անքուն հետևում էր. երբեմն արթնացնում հորեղբորն ու հանգստացնում։ Միայն լուսադեմին տաղերգուն քնեց խոր քնով։ Տանտերն անշարժ պառկել էր և մտածում էր. վաղն ինչպե՞ս կլինի, երբ նրան տանի Հավլաբար՝ նվագելու։

Տոթ երեկո է. ծառերի սաղարթն անշարժ է: Մարդիկ շոգից նետվել են բակ ու փողոց, փախել են այգիները: Կարապետի տանն էլ շոգ է, և նա հորեղբոր հետ հեռանում է դեպի Մուշտայիդ կոչված այգին: Նրա հայրը Պուշկինի փողոցում իջևանատուն ունի: Այդտեղ գրեթե ամեն օր կերուխում է կազմակերպում նա, հավաքում Թիֆլիսում ապրող գյումրեցիներին, կարսեցի, էրզրումցի և այլ վայրերից եկած հայերին և, հանուն հորեղբոր ապաքինման, հրավերք անում՝ հոգեբանորեն բուժում նրան: Երբեմն քաղաքից դուրս էլ է տանում, ուրախացնում:

Այդ երեկոյան էլ նման մի հավաքույթ էր Բաղդասարի բնակարանում: Ու երբ եղբայրն ու որդին դուռը բացին, տանտերն ասաց.

— Արի, արի, ախպե՛ր ջան, արի քովս:

Տաղերգուն հոնքի տակով նայեց նրան, ժպտաց ու նստեց: Մի ակնթարթ միայն հիշեց Կարսի հյուրանոցի դիպվածը. մռայլվեց, ապա սկսեց նվագել ու երգել: Երգում էր, սակայն ակնթարթներով հիշում էր հարազատներին ու տխրում:

Երբ նա ու եղբոր որդին հրավերքից հետո բարձրացան տուն, և ինքը առանձնացավ քնելու, ծանր խոհերը նորից համակեցին նրան: Դարձյալ փայլկտեց ու անցավ Վարդուհու տեսիլքը... Ելավ, հանեց ծխամորճը և դուրս գնաց պատշգամբ: Գնաց-եկավ անհանգիստ: Կարապետը մոտեցավ.

— Հորեղբա՛յր, քնի, հանգստացի, որ էգուց պիտի էրթանք Օրիանտ հյուրանոցը:

— Ի՞նչ գործ ունիմ էնտեղ:

— Մարդ կա, որ կուզե երգերդ պլաստինկի վրա վերցնե. Պետրոգրադից է եկել: Ֆիրման է նրան ուղարկել ձայնագրելու: Դու պիտի երգես, ինքը՝ ձայնագրե:

— Չեմ կրնա, Կարապետ ջան, ձեռքս կդողա... Ի՞նչ գործ ունիմ, է՛...

— Ես կնվագեմ, դու կերգես,— հոգու տագնապը չեզոքացնող տոնով փորձեց համոզել Կարապետը:— Տղամարդու պես պահե քեզի, հորեղբա՛յր:

Հետո սա երկար շուռումուռ եկավ անկողնում, երկար ընկավ մտքի ետևից...

Առավոտյան Կարապետը շուկայից եկավ, պարենով լի զամբյուղը դրեց ու մոտեցավ հորեղբոր սենյակին: Երգիչը դեռ քնած էր: Քիչ անց նրա որդին վազեց մոր մոտ, թե՝ պապին վեր է կա-

ցել: Մաշոն, որ նախաճաշ էր պատրաստում, շոլեց փոքրիկի գլուխն ու ծիծաղելով ասաց.

— Վեր պտի կենա, բա՛ս. խոմ մինչև իրիկուն չի՞ քնի, գե՛թաղվա:

Նախաճաշից հետո Շերամը թառն առավ ձեռքը. նկատեց, որ գործիքը լարից ընկել է: Լարը տեղը բերեց ու ոտքի կանգնեց:

— Ամեն ինչ լավ է,— գոհ արտաբերեց նա:— Արի չերթանք, Կարապետ ջան. եսի՞մ՝ ո՞վ է, ի՞նչ է...

— Չեղա՛վ, հորեղբայր. խո մե մարդու գործ չէ՞. ֆիրմային եմ. խոստացե. չեղնի՞ կուզես ընձի սևերես անել:

Տաղերգուն ինչ-որ բառ ծամծմեց, հետո, թե՝

— Քելե, ախպեր, քելե. ինչ եղավ՝ եղավ:

Ճանապարհին մի քանի րոպե լուռ էին: Երբ թեքվեցին Գոլովինյան պողոտա, երգիչն աչքի պոչով նայեց եղբոր որդուն և, պարզ չէ ,նրա հասցեին, թե մեկ ուրիշի, քմծիծաղ տվեց: Կարապետը չհարցրեց ոչինչ. «Մարդ է, մի բան միտքն ընկավ, ի՞նչ անենք»:

— Վարդուհուն կճանչե՞ս,— անսպասելի դիմեց երգիչը:

— Ընչի՞ կհարցնես որ,— հոնքերը կիտեց Կարապետը.— հերըս պատմել է նրա մասին, բայց չեմ տեսել...

Շերամը լրջացավ ու քայլեց գլխահակ. ապա խոսակցության նյութը փոխեց.

— Սալվիս իմ ձեռքը շատ դառնություն քաշե՛ց...

— Սալվի քույրիկը քեզի կպաշտե, հորեղբայր. ինքն էլ, զաթի, պաշտելու մարդ է:

Հորեղբայրը չպատասխանեց: Շուտով նրանք մտան հյուրանոց և անցան այն սենյակը, որտեղ պետք է ձայնագրեին տաղերը[1]:

---

[1] Ձայնագրվեց երկու երգ, որոնց ձայնասկավառակները ինչ-ինչ ծանապարհով անցան մի հայ կոշկակարի ձեռքը. Այս մարդը գրամոֆոնի և մի շարք ձայնասկավառակների հետ գնեց նաև դրանք. Շերամի մահվանից հետո մենք փորձեցինք գտնել այդ մասունքները 1918 թ., հալածանքից ու սովից փրկվելու համար, կոշկակարի ընտանիքը փախավ Խաշուրի և ապա այդ բոլորը փոխանակեց երկու պարկ ցորենի հետ: Մենք գտանք այդ կոշկակարի տունը Թիֆլիսում, սակայն ձայնասկավառակների որոնումը ապարդյուն գործ կլիներ Ծ. Հ.

3

Հաջորդ կեսօրին, հենց որ Կարապետն ու հորեղբայրը մտան տուն, Մաշոն վրա պրծավ.

— Տո՛, ո՞ւր իք գնացել, քա՛... մեռա սպասելով:

Շերամը սրտանց ծիծաղեց, իսկ ամուսինը պարզաբանեց.

— Մանգլիս էինք գնացել, Մաշո ջան. հորեղբորս տարել էի ման գալու. լավ չէ՞. հերըս էլ էր հետներս:

— Ինչո՞ւ լավ չէ. մագրամ ես էլ կգայի, էլի:

Մտան հորեղբոր սենյակը: Կարապետը ծանրումեծ նստեց ու պատրաստվեց լուրջ խոսակցության: Նրան հայտնել էին, թե Թիֆլիս է եկել մի աշուղ և, իմանալով, որ այստեղ է նշանավոր հայ գուսանը, ցանկություն է հայտնել մրցել նրա հետ:

— Ո՞վ է, անունն ի՞նչ է:

— Չգիտեմ, հորեղբայր. ասում են շատ էլ հայտնի չէ·

Շերամի հոգում շողաց իր արժանապատվության զգացումը, և նա խոսեց.

— Ուրեմն ինձ պես երգիչը պիտի մրցե նրա հետ:

Կարապետն ուրախացավ. նա զգաց, որ հորեղբայրն իր ուժերին վստահ է և ճիշտ է գնահատում ինքն իրեն: Բայց այս ի՞նչ է. ինչո՞ւ է հորեղբայրը գլուխը բացասաբար շարժում. չլինի՞ վախեցավ:

— Չէ, չէ՛, Կարապետ ջան. էդ տեսակ մարդուց հեռու մնամ՝ լավ է:

Կարապետն ապշեց. այդքան էլ հանկարծակի փոփոխությո՞ւն տրամադրության մեջ: Բայց ինքը չի նահանջի հարազատի երկչոտության դեմ:

— Տղամարդ կեցի, հորեղբայր. էդ աշուղն ի՞նչ է, որ քո ուժին դիմանա:

— Աստված սիրես՝ մի՛ համոզե. չեմ կարող, կդողամ:

— Էղա՞վ, առյուծն է՞լ կատվի դեմ դողա:

— Ես եմ առյուծը, հա՞:

— Բա ո՞վ է... Թքիր էդ քո վախիդ վրա: Ժողովուրդը կպահանջե, որ դու քաջ Անդրանիկի պես բեմ ելնիս ու հաղթես քու հակառակորդին:

Տաղերգուն հիշեց իր վաղեմի գովերգի տողերը·

Հայոց կուսանք դափնյա պսակ թող հյուսեն,
Քնքուշ ձեռամբ քո ճակատը պսակեն...

Կարապետն իսկույն նվագարանը տվեց նրա ձեռքը։

— Ե՞րբ է էդ՝ մրցում է, ինչ է։

— Էգուց է. ռեմեսլեննի կլուբը։

— Դե լա՛վ, էրթանք. էնտեղ կերևա։

Միխայլովյան փողոցով, որ սկիզբ է առնում Վորոնցովի կամուրջի մոտից, ընթանում էր երկու կառք։ Առաջինում բազմել էին՝ Շերամն ու իր եղբայրը. նրանց դիմացի նեղլիկ նստելատեղին մի կերպ տեղավորվել էր գիրուկ Կարապետը։ Ետևի կառքում Բաղդասարի կինն էր, դուստրը՝ Արաքսին և հարսը՝ Մաշոն։ Միջնեկ որդին՝ Արիստակեսը, բարձրացել նստել էր կառապանի կողքին։

Ակումբի դարպասի առջև մեծ բազմություն էր հավաքվել։ Ու հենց որ մարդիկ տեսան եկողներին, դեմ վազեցին։

— Սրի, արի, ուստա Գոքոր,— դիմեց մի գյումրեցի,— ժողովուրդը քեզի կսպասե։

Կարապետն օգնեց, որ հորեղբայրը հանգիստ իջնի կառքից։ Սա հարցրեց հայրենակցին.

— Շա՞տ ժողովուրդ կա։

— Իա՛, էս ի՞նչ կըսե... Ըսա խթխթալու հնար կա՞. ասեղ գցես՝ գետին չի ընկնի։

Ամառային թատրոնը ընդարձակ մի սրահ էր, որտեղ շարված էին երկար թիկունքավոր նստարաններ։ Սրանց վրա, կիպ-կպած՝ տեղավորվել էին տարբեր ազգությունների արհեստավորներ, նվագածուներ, ծառայողներ, ուսանողներ։ Գդակներից երևում էր, որ հանդեսին ներկա են նաև թիֆլիսաբնակ բազմաթիվ պարսիկներ։ Սրանց միջից, սազը ձեռքին, առաջ եկավ աշուղը և խոնարհ գլուխ տվեց Շերամին։ Կարապետը նկատեց, որ հորեղբայրը արևվելյան ոճով ողջունեց նրան։ Քիչ անց կարգադրիչը հայտարարեց, որ մրցումն սկսվում է։

Պարսիկ աշուղը սնապարծ քայլվածքով դիմեց դեպի բեմ։ Նրան ծափերով ուղեկցեցին բոլորը։ Նա բեմ ելավ, խոնարհվեց, ի նշան շնորհակալության և, նստելով աթոռին, սկսեց փորձել լարերի հնչեղությունը։ Հետո պարային քայլերով շարժվեց աջ ու ձախ՝ գլուխը թափահարելով։ Սրտոհով մեկ ծորացին պարս-

կական մեղեդիները: Աշուղը սազը թափահարում էր և հաճախ բարակ ձայնով կլկլացնում, ապա ցաձրացնում, առաջացնելով մելամաղձոտ ելևէջներ:

Նա երգում էր հին հայտնի մուղամներ:

4

Բաղդասարն ու Կարապետը նստել էին Շերամի երկու կողմն ու շշուկով կարձիքներ էին փոխանակում: Նա ականջի պոչով լսում էր նրանց ասածը, բայցև աչքից բաց չէր թողնում կրկեսային շարժուձև անող աշուղին:

Միանգամից պայթող ծափահարությունը հանկարծակիի բերեց Շերամին. նա մի փոքր խեղճացավ և ծուռ ժպտաց: Կարապետը լսեց նրա հոգոցը և զգաց՝ հորեղբոր տրամադրությունն ընկավ. բռնեց նրա թևն ու սեղմեց՝ մի՛ հուսահատվիր. ապա ձեռքը թափահարեց և ասաց հեգնական.

— Էդպես պապս էլ կարող էր կլկլացնել:

Բաղդասարը նայեց եղբորը, իսկ որդուն ասաց.

— Հեչ մի՛ ըսե, պապդ չալել չիտեր, հըմը քաղցր ձեն ուներ ու լավ էլ երգում էր. հազար տեղից իրան դայֆեն էկած աշուղներուն էլ լավ պատիվ կուտար. հալ էղնեին թե թուրք:— Տաղերգուն գլխով հաստատեց եղբոր խոսքը. սա շշնջաց նրա ականջին.— հըբը կըսեին՝ էնպես կչալե, որ կբժժի՞ս·

Եղբայրը ծիծաղեց և ավելացրեց.

— Չէ՛, մարդը անսխալ կնվագե. քաղցր էլ ձեն ունի:

Կարապետն ուշադիր լսեց եղբայրների զրույցը և ավելացրեց.

— Բան չունիմ ըսելու, բայց պատռի-տրաքի՝ քեզի չի հասնի:

Դեմքի արտահայտությունից երևաց, որ հորեղբայրը շոյվեց, սակայն խոսք չասաց:

Այդ րոպեին պարսիկ աշուղը հատուկենտ ծափերի ներքո, մի քանի անգամ գլուխ տվեց ու, աթոռն առնելով՝ գնաց բեմի ձախ անկյունում նստեց: Կարգադրիչը հայտարարեց.

— Բեմ է հրավիրվում աշուղ Շերամը:

Նրա խոսքը կիսատ մնաց. ծափերն այնպես որոտացին, որ թվաց, թե սրահի կտուրը փուլ եկավ: Գուսանը ելավ տեղից և աջ ու ձախ գլուխ տվեց: Պարսիկ աշուղն էլ բեմից յուրովի ողջունեց նրան: Կարապետը հորն աչքով արեց. հասկացավ ակնարկը և գլուխը բարձրացրեց:

— Հաղթությո՛ւն քեզ, Տալոյենց Գրիգոր,— գոչեցին ամեն կողմից:

Շերամը կարգի բերեց արխալուղը, չուխան, հարդարեց մազերը և նայեց շուրջը: Նկատեց Շուշանիկին՝ քրոջ դստերը, և կամացուկ հարցրեց.

— Զոտքը բերե՞լ ես:

— Հա՛, քեռի ջան, ես քու սովորությունդ չգիտե՞մ:

— Դե մե հատմ չուխես մաքրե, թեզ էրա... մազ-մուզ չեղնի, թել-բա՞ն...

Շուշանիկը հանեց փոքրիկ խոզանակն ու արագ-արագ մաքրեց չուխան:

— Ապրե՛ս,— գովեց տաղերգուն ու ձեռքը մեկնեց եղբոր որդու բռնած նվագարանին:

— Հաղթանակը քոնն է վերջ ու վերջնական,— որպես կոչ նետեց երգչի հին կուսակիցը՝ Մութաֆյանը, բառափոխելով նրա վաղեմի երգի տողը[1]:

Շերամը հանդիսավոր քայլերով մոտեցավ բեմին, բարձրացավ աստիճաններով ու երբ հասավ կենտրոնին, նվագարանը գրկած գլուխ տվեց ու նստեց: Դահլիճում բացարձակ լռություն տիրեց: Նա կարգադրիչին մոտ կանչեց. սա շտապ մոտեցավ, իմացավ, թե ինչ է ուզում երգիչն ու թիկունքով աթոռը տարավ՝ բերեց անթիկունքը: Աշուղ Սավդային ժպտաց և հարցական նայեց մրցակցին, իսկ սա նստեց ու մի պահ հապաղեց: Հայ, պարսիկ և այլազգի հանդիսականները հայացքները հառեցին բեմին: Գուսանը նվագեց իր սիրած մեղեդիներից մեկը՝ Մաուր Ինդին: Ակումբում և այգու ամբողջ տարածքում զնգաց նրա նվագը: Եվ մարդկանց հոսանքն ալիք-ալիք շարժվեց դեպի համերգասրահ: Իսկ Շերամն այնպիսի մոլուցքով էր նվագում, որ հանդիսականները զարմացած ելան կանգնեցին: Աշուղ Սավդային էլ գլուխն էր օրորում:

Մի քանի րոպե թառը կրծքին դրած նվագելուց հետո երգիչը գուշը հենում էր ծնկին, նվագում ինչպես քյամանի, ապա նորից

---

[1] Այդ երգը, որ գրված է 1905 թ. և ունի «Փութանք առաջ» խորագիրը, երգվում էր «Վարշավյանկայի» եղանակով: Երգի իսկական տողերն այսպիսին են՝

Հաղթանակը մոտ է վերջ ու վերջնական,
Հուսախաբ չենք լինիլ՝ մերն է ապագան.

Ծ. Հ.

սեղմում կրծքին, մեկ էլ թափով բարձրացնում գլխից վեր և նույն եռանդով, խոսեցնելուց հետո, կրկին գիրկն էր առնում:

— Վա՛հ,— դուրս թռավ բազմության միջից:

Տաղերգուն թառը խաղալիքի նման պտտեց, պտտեց, նորից դրեց կրծքին... Եվ ամբողջ այգում հնչեց արևելյան ախորժալուր մեղեդու հևքը: Դեռ վերջին հնչյունները չէին մարել, որ համազարկեցին ծափերը: Ոտքի կանգնեց նաև աշուղ Սավդային: Շերամը մոտեցավ նախաբեմին, վերցրեց նետված ծաղիկներից մի փունջ ու հրամցրեց մրցակցին: Աշուղն իսկական արևելցու նման խոնարհում արեց, իսկ մրցակիցը վերադարձավ իր տեղն ու երգեց.

Մարալի պես ման ես գալիս,
Որսորդից փախած նմանիս...

Բոլոր տաղավարների, այգու բոլոր ծառուղիների ժողովուրդն արդեն հավաքվել էր այդ սրահում: Հայ երգչի ձայնը հրապուրել էր բոլորին:

Վերջապես Շերամը ոտքի ելավ: Կարգադրիչը ուզեց բեմ գալ, որպեսզի հայտարարի մրցման արդյունքը, պարսիկ աշուղը մի քանի քայլ արեց տաղերգուի կողմը, համբուրեց իր սազի գուշն ու տվեց նրան:

— Հաղթեցի՛ր, ուստա, իմ սազը քեզ է պատկանում:

Այս ի՞նչ է. ամբողջ սրահը կարկամած նայում է բեմին: Բոլորի համար պարզ է՝ հաղթողը Շերամն է, բայց... նույնիսկ ծափահարություն չկա: Իսկ տաղերգուն իր նվագարանը հանձնեց կարգադրիչին, քայլեց դեպի աշուղը և ասաց.

— Վարպետի ձեռքից սազն առնելը անպատվություն է թե՛ քեզ համար, ուստա Սավդայի, թե՛ ինձ համար:

Եվ նա աշուղի սազը ասպետորեն հանձնեց տիրոջը: Սա շփոթված գրկեց իր նվագարանն ու հայերեն բարբառեց.

— Երկնքի՛ չափ շնորհակալ եմ, վարպետ Շերամ:

Եվ որոտընդոստ ծափերի փոթորիկը դղրդացրեց սրահը, այգին, թաղամասը:

Ջույգ կառքերը տուն էին դառնում: Կարապետը նստել էր հորեղբոր կողքին ու մեջքը գրկել: Երբ Քուռ գետի մեծ կամուրջն անցան, նա ասաց.

— Տեսա՞ր, հորեղբայր... էդպես հաղթելը մենակ քո ուժիդ բանն է:

Կեսգիշեր էր, երբ հասան տուն: Շերամը մնաց եղբոր մոտ. նրանք անմիջապես պառկեցին քնելու, բայց մինչև աքլորականչ խոսում էին երգչի հետագա ծրագրերի շուրջը:

Լռությունն առաջինը խզեց Բաղդասարը, կամ ինչպես հարսներն էին ասում, աղախպերը:

— Էգուց-մեկէլ օրը դու պտի էրթաս ընտանիքիդ քովը, չէ՞, Գրիգոր:

—Հըբը ի՞նչ պտի անեմ,— պատասխանեց տաղերգուն.— էլ մնալ չի էղնի. տասն օր է՝ էստեղ եմ:

— է՛, ի՞նչ անենք. մի ամիս էլ որ մնաս, մի տարի էլ որ մնաս, ո՞վ քեզի կըսե՝ գնա: Փա՛ռք աստծու, ղոնախ չես, ախպորդ տունն է:

Շերամը ծգնեց տեսնել եղբոր դեմքի արտահայտությունը, բայց չտեսավ. սակայն պարզ պատկերացրեց նրա ծանրախոհությունը:

— Ճիշտ է, հըմը՛...

— Զեղնի՞ էնոր համար կշտապիս,— ակնարկեց եղբայրը:

— Զէ՛, ախպեր ջան, չէ՛,— կտրուկ խոսեց երգիչը, իսկ մտքում՝ տեսնես ինչպե՞ս է, ի՞նչ է անում...

Նա խոր հոգոց հանեց. եղբայրը բան չասաց և խոսքի նյութը շեղեց այլ ուղղությամբ:

— Բժիշկներն ի՞նչ խորհուրդ կուտան քեզի:

Եղբայրը քմծիծաղեց: Բաղդասարն, իհարկե, չտեսավ այդ. բայց նրա յուրօրինակ փռթկոցից հասկացավ, որ տաղերգուն թերահավատ է բժիշկների խորհուրդների նկատմամբ:

— Բժիշկներուն որ լսես, կըսեն՝ հենց էսօր տուն-տեղ հավաքե ու ճամփա ընկի Թիֆլիս. Ալեքսանդրապոլը քայքայում է առողջությունդ:

Բաղդասարը հառաչեց: «Բանաստեղծ, երգիչ մարդ է. հոգին խորն է... ի՞նչ իմանաս՝ ներսը ինչ կա»:

— Ճիշտ կըսեն,— մի փոքր ուշացումով արձագանքեց եղբայրը.— որ էնտեղ մնացիր, ի՞նչ պտի օգտվիս: Ինչքան շուտ գաս, էնքան լավ: Թե տան մասին կմտածես, հե՛չ մի մտածե. էս շենքը քեզի փեշքաշ:

— Իսկ գո՞րծ. էստեղ ո՞վ ինձ գործ կուտա. երեխոցս խո անոթի չպտի՞ թողնիմ,— ասաց երգիչը:

— Իա՛,— Բաղդասարը նստեց անկողնում.— չեղանք-չեղանք, էդքան է՞լ չեղանք, որ քեզի գործի դնենք:

— Հա, դե՛...

— Համ էլ երեկվա ահագին ժողովուրդը խո իզուր տեղը չէ՞ր եկել: Հազար բարեկամ վաստակեցիր էնտեղ. Թիֆլիսի կեսը գյումրեցի են ու ախալքալաքցի, Ախցխայից ու Տաճկաստանից գաղթած... Բա Թիֆլիսի հայե՛րը... ձեռքերու վրա կպահեն քեզի:

Եղբայրն ընդհատեց մեծի խոսքը.

— Ալեքպոլում մի բժիշկ Տիրոսյան կա. ընձի դեղ-մեղ կուտա. կըսե՝ ես քեզի բողկի պես կդարձնեմ:

— Կհավատա՞ս,— փորփրեց Բաղդասարը:

— Ես ավելի շուտ հավատի բժշկությանը կհավատամ: Մի տարի ֆուրղունով գնացի Ղանլիջա՝ Սուրբ Գևորգ. ողջ-առողջ դարձա տուն:

Մի պահ երկուսն էլ լռեցին, որովհետև հերևան սենյակից Երանյակը ձայն տվեց, թե էդքան ի՞նչ կխոսիք. քնեք՝ հանգստացեք...

Զանցած մի րոպե Բաղդասարը նորից հարցրեց.

— Հիմի ի՞նչ կըսես. Կարապետին հետդ կուղարկեմ, տանի հասցնի տուն ու դառնա:

— Լավ, թող ձեր կամքը էղնի, ախպեր ջան... կուգամ,— կես գոհ, կես դժգոհ ասաց Գրիգորն ու հիշեց անցած երեկոյի այնքան բազմամարդ լինելը:

Բաղդասարն ուզեց ավելի հաստատուն դարձնել որոշումը:

— Մազաչափ էլ կասկած մի ունենա, Գրիգոր. թե մեկ-երկու ամիս նեղության մեջ էլ էղնիս, որ՝ դժվար, մենք պահապան հրեշտակի պես քովդ կանգնած ենք:

— Համաձայն եմ, ախպեր ջան:

— Ամե՛ն,— զրույցը փակեց ավագ եղբայրը:

Նման մի բան էլ տաղերգուն ասաց, բայց արդեն քնելով:

ՃԱՆԱՊԱՐՀՍ ԸՆԿԱՎ ԹԻՖԼԻՍ

1

Շերամն արդեն տանն է. իր Սալվինազի, իր զավակների մոտ: Նա հիշեց Կարապետին, որ հորեղբորը հասցրեց հայրենի Գյումրի և ինքը վերադարձավ տուն: «Ա՛յ, իսկական բժիշկս նա

էր»: Մոտեցավ լուսամուտին: Երեխաները ծիչ ու աղմուկով վազվզում էին մատուռի շուրջը, բարձրանում ցանկապատին և այնտեղից քարկոծում ներքևի «հակառակորդին»: Սրանք էլ պակաս չէին... «Իա՛,— բացականչեց երգիչը,— էս ի՞նչ լաց էր... Սալվի՛, վայթե տղես կուլա...»: Եվ նա կնոջ հետ դուրս վազեց: Մանչուկը, քունքը բռնած՝ ցանկապատի ետևի կողմից իջավ ու լաց լինելով, ընկավ մոր գիրկը:

— Ո՞վ զարկեց,— սրան-նրան հարցրեց հայրը:

Երեխաները ծնծղուկների պես ցրիվ եկան ու փախան, իսկ նրա փոքրիկը, մոր ձեռքը բռնած՝ գնում էր տուն: Մայրը խանձիլ դրեց տղայի քունքին, և արյունը կտրվեց:

Հայրը մտավ ներս: Մատուռի շրջակայքում երեխա չէր մնացել: Բայց թե որտեղից որտեղ միտքն ընկավ իր ընկեր Հայկը. ինքն էլ չիմացավ: Տագնապով ու ծանր մտքերով լցված հոգին տակնուվրա էր լինում. և նրա ուղեղում բազմաթիվ անցողիկ ու պատահական դեպքեր ու մարդիկ մի քաոս էին առաջացնում:

— Դո՞ւ ինչու մտար գլուխս,— Հայկի հասցեին դժգոհեց երգիչն ու փորձեց վանել այդ մտապատկերը: Բայց ականջի մեջ պարզ հնչեց ընկերոջ խոսքի շարունակությունը: Նա նվագածուների մոտ ասաց.

— Մի երկու տարի առաջ ուստա Գոքորը Կարսում արդէն երգում էր իր մի քանի նոր երգերը: Որ կերգեր «Արխալուղդ ով է կարել»... պա՛... ինչդ որ մայիսի ծաղիկը դաշտի մեջ բուսնի:

— Էդ ո՞վ չգիտե որ,— նկատեց նվագածուներից մեկը:

Բայց Հայկը չի դադարել ցույց տալ իր տեղյակությունը տարբեր երաժիշտների մասին:

— Աղջաղալոնց Կարոն լավ երգիչ էր,— ասաց,— Սամսոն Կարապետյանը՝ Ֆիզայու տղեն, լավ թառ նվագող էր...

— Գիտենք,— մեջ գցեց Կարոն·

Հայկը շարունակեց.

— Բայց Գոքորի դերը շատ մեծ է. հա՛մ բանաստեղծ է, հա՛մ եղանակ կինարե, հա՛մ կնվագե, հա՛մ կերգե... էդպես բան ո՞վ է տեսել·

Ճերամը ելավ գնաց Բոստանջյան Գրիշի սրճարանը: Ճանապարհին միտքն ընկավ, թե ինչպես ժամանակին իրենք չքավոր ընկերներին, բարեկամներին և հարևաններին տոն օրերին բաժին էին ուղարկում, իսկ դաշնակցականները ձեռ էին առնում: Գուսանի հոգում մոլեգնում էր տառապանքը, որ

պատերազմի վերջը չի երևում: Եվ որպեսզի տանջող հարցերին պատասխան գտնի, գնում էր վաղեմի ընկերոջ՝ Արայի մոտ: Զրույցներին երբեմն մասնակցում էր Տեր Խորենը: Սա երկու ֆուրգոն փամփուշտ էր ուղարկել Արթիկ: Այստեղի քահանան էլ գաղափարակից էր. և նրա օգնությամբ թաքցրել էին, որ ուղարկեն հայդուկներին:

— Վերջը ի՞նչ պիտի էղնի, Արա ջան,— անհանգիստ հարցրեց տաղերգուն:

— Չգիտե՞ս ինչ պտի էղնի... Թուրքերն էլ միացան Գերմանիային: Ռուսաստանն էլ զորք է հանել դրանց դեմ... որ հարձակում են սկսել Ղարսի ու Սարիղամիշի վրա...

— Անիծյալները ներխուժել են Պարսկաստան,— միջամտեց Խորենը,— և արշավում են Բաքվի վրա:

— Հովհաննեսի ընտանիքը Բաքվում է ախր,— վշտացավ Շերամը:

— Ես իմացել եմ, որ ռուսական զորքը հաղթել է Սարիղամիշի ճակատում,— խոսեց արթիկցի քահանան:

Շերամն ուրախացավ ու չգիտես՝ սիրտը հանգստացնելու համար, թե ինչ, երգեց «Զեյթունցիների քայլերգը»: Ընկերների մրա ամենից ավելի ազդեց վերջին քառատողը: Գուսանի հոգին ելք որոնեց. և նա պատմեց Արդության դպրոցում կազմակերպած տոնաճառի մասին, ուր երգում էր նաև իր քենին· Երգի ուսուցիչն էր Արմեն Տիգրանյանը: Ընձի հետ էին՝ Մալուլենց Մարտինն ու դաֆչի Թաթոսը: Մենք էլ շատ նվագեցինք ու երգեցինք...

Արայի աչքից չվրիպեցին հոգեկան մոլուցքի այն բոցկլտումները, որ երևացին տաղերգուի հայացքում: Եվ նա ժպտալով ասաց.

— Կեցի ես էլ մի բան պատմեմ, ախպերս: Պարտնո Մեխակին խո գիտես, չէ՞, Գոքոր:

— Էդ ինչպես է՞, որ դու գիտես ու ես չգիտեմ,— քթի մեջ խնդաց երգիչը:— Տասնութ տարեկան էր, որ Ստամբոլցյան Մեխակն առավ եկավ Սուրբ Նշանի ետևը՝ հավաքույթի. Էնտեղ ծանոթացա:

— Ճիշտ է: Պարտնոն կըսեր, թե անցյալ տարի, իրա հարսնատեսին դու կնվագեիր. չոնգուրը՝ Հաջին էր, դաֆչին՝ Արտաշը.— Շերամը գլխով արեց: Արան շարունակեց.— Պարտնո Մեխակը ջահել է, բայց քու բնավորությունդ լավ գիտե, քու հագուստ-կա-

պուստդ տեղը-տեղին կնկարագրե: Ասում է, թե քեֆի ժամանակ չպիտի ասես՝ Գոքոր, էս երգե, էն նվագե. պատվեր ընդունել չես սիրում, չէ՞...— տաղերգուն նորից գլխի շարժումով հաստատեց ճշտությունը.— չես սիրում, որ պատվերի հետ էլ փող կուղարկեն:

Տեր Խորենն էլ զվարթ շեշտ ավելացրեց ընկերների հոգաձության վրա Շերամի նկատմամբ:

— Արհեստավորները, ուտել-խմելուց հետո, դուրս են եկել, որ տուն գնան, տեսել են՝ Գորկայի երկայնքով այնքան ժողովուրդ է հավաքվել, որ հնար չի եղել անցնելու: Ծո՛, ուստա Գոքորի ձենին են հավաքվել մարդիկ...

Պարտնո Մեխակը նկարչի պես էր պատկերում Շերամի արտաքինը.

— Գոքորի պես կարգուկանոնով, մաքուր հագնող չկար քաղաքում: Գդակը՝ շապխան, սև ու փայլուն կտորից պետք է լիներ, չուխան՝ կաստոր կոչված կտորից, կարճ՝ ծնկներից չորս մատ ցաճր. արխալուղը՝ ճմեռը պլպլան կտորից, իսկ ամառը՝ չեսուչայից: Շալվարը սև զոլավոր կտորից էր կարել տալիս. և անպայման մինչև կրունկները պիտի հասներ և աբշլագով լիներ: Կոշիկները շտիբլետ մասերով և ունկերով, որ դուրս էր քաշում միայն հագնելիս: Կապում էր արծաթե գոտի՝ երկուսուկես սանտիմետր լայնքով, ոչ հաստ, ոչ էլ լայն. սա համարում էին հարստության գոտի. նուրբ ու գեղեցիկ, ճարմանդը հարթ, համեստ. ոչ մի գունդ կամ գնդաձև մի բան՝ վրան: Մատանի չէր դնում, իսկ ժամացույց միշտ ուներ. ոսկե շղթայով, որի երկարությունը քսան սանտիմետր պիտի լիներ: Ժամացույցը արխալուղի փոքր գրպանն էր դնում:

2

1915 թվականի հունվարն էր: Ցուրտը շղթայել էր կյանքը, սառեցրել ամեն ինչ. իսկ Շերամը նստել էր տանը և սպասում էր, նվագարանն էր լարում և մտածում ճմռան սաստկության ու կյանքի մասին. «Էս ի՞նչ զարհուրելի ճմեռ է, տե՛ր աստված: Սրտիս վրա ինչղ որ ծանր մի քար դրած էղնին... պատերազմից է, ինչից է՝ չիտեմ: Է՛, մենք որ մեր տներու մեջ նստած կսառինք, հըբը խեղճ զինվորները ի՞նչղ պտի դիմանան բաց դաշտում»:

Տանջալից մտքերն այնպես ծնշեցին հոգին, ինչպես ծանր սառույցը՝ գետակի խայտացող ալիքները: Եվ այնպես հառաչեց նա, որ մյուս սենյակից ահաբեկված եկավ կինը.

— Քա՛, ի՞նչ էղավ, անհանգի՞ստ ես,— հարցրեց։

— Բան չկա, Սալվի ջան, բա՛ն չկա. Օֆիցերսկի կլուբից պտի գան տանին. էդոնց կսպասեմ։

Սալվին խաղաղված դուրս գնաց։ Այդ րոպեին տան մոտերքից զանգակների ծլնգոց լսվեց։ Կառքը կանգնեց դռանը։ Շերամը հագավ վերարկուն, գլխարկը դրեց, թեթևակի թափ տվեց փեշերը, ինքն իրեն դիտեց հայելու մեջ ու սպասողական կեցվածք ընդունեց։ Դուռը կամացուկ բացվեց. ներս մտավ երիտասարդ մի սպա Նա գդակը հանեց, ձախ ձեռքով հպեց կողքին ու, երկարաձտքերի կրունկներն իրար զարկելով՝ ողջունեց երգչին։ Խթանները գնգացին։ Տաղերգուն ժպիտով պատասխանեց երիտասարդի ողջույնին. նույնիսկ ձեռքը մոտեցրեց գլխարկի հովարին ու մի փոքր անվարժ պատվի առավ։

— Բարի իրիկո՛ւն, ասաց նա.— երթա՞նք։

— Այո, պարո՛ն Տալյան,— խրոխտ պատասխանեց սպան։

Նրանք ելան փողոց, մոտեցան կառքին. կառապանը զվարթ ողջունեց երգչին.

— Բարի իրիկուն, ուստա՛ Գոքոր։

— Բարև... իա՛, Ալեք ջան, դո՞ւ ես։

— Հըբը ո՞վ պտի էղնի. ես հեչ կթողնիմ, որ ուրիշը քեզի տեղմ տանի.

Այդ խոսքի վրա սպաները ծիծաղեցին։ Զայնն արձագանքեց սառն ու զուլալ օդում։

Ահա կառքը սահուն ընթանում է դեպի Ալեքսանդրյան փողոց։ Ձիերի դոփյունը ձյան վրա դառնում է խուլ. ասես հեռվում թըմբուկ են գարկում համաչափ։ Սպաները հաճախ բառեր են փոխանակում երգչի հետ։ Նրանց հետաքրքրում է, թե ինչ երգ է հորինել նա, ինչու էր գնացել Թիֆլիս։ Տաղերգուի պատասխանները կցկտուր են։ Նա իր մտքի ետևից է թռչում։ Տասնհինգ թվականն էլ եկավ, երկիրը չխաղաղվեց. թուրքերը նորից մտքներին դրել են բնաջնջել հայոց ազգը... Եվ նա հարցնում է կողքի նըստած մայորին.

— Ամենաթունդ կռիվները ո՞րտեղ են, կարո՞ղ ես ասել։

Մայորը նայեց մյուսին, ժպտաց ու դարձավ Շերամին.

— Ուստա՛ Գոքոր, դու հարցրու, թե որտե՞ղ կռիվ չկա։

— Հա, դե՛...— անորոշ ծոր տվեց երգիչը.— աշխարհը խառնըվել է իրա՛ր...— և հոգոց հանեց։

Նա նորից խորասուզվեց խառնիծաղանջ մտորումների մեջ։ Մեկ էլ սթափվեց ու խոսեց.

— Տղերք ջան, չկարծեք, թե չգիտեմ՝ ինչ պտի երգեմ էնտեղ, բայց տեսեք, թե էս երգս հարմա՞ր է։— Եվ նա մեղմաձայն երգեց.

Զմեռն անցկացավ, գարուն է արդեն,
Ծաղկունք բացվեցան, բլբուլք թող երգեն...

Եվ հետո՝

Ջենքի շաչյունեն թնդում է երկիր.
Հերո՛ս, հայրենիքիդ օգնության հասիր...

Կառքի վերնոցը ցած է քաշած, բայց ուժասպառ բուքը դեռ սուլում է և սողոսկում դրա տակ։ Ճնկներին քաշած մոմլաթը դողդողում է քամուց։ Երևում է, Շերամի տաղերին վաղուց հաղորդակից սպաներն ու կառապանը անթմբիր ունկնդրում են։

— Իսկակա՞նն է, ուստա Գոքոր... Ի՞նչ էլ ժամանակին ես գրել,— հիացած ասում է մայորը։

Տաղերգուն ոգևորված է։ Նա պատմում է, որ տարիներ առաջ գրեց մի ասք «Ջավենն ու Ջարոն»։

...Քուրդ բեգը առևանգում է Ջավենի պաշտելի էակին՝ Ջարոյին ու նրա ընկերոջ հարսնացուին և տանում գցում է իր հարեմը։ Ջավենն ու ընկերը վերադառնում են ազատագրական մարտերից և իմանում դաժան իրողությունը։ Նրանք, քսան հեծյալների գլուխն անցած՝ սլանում են ազատելու գերված կույսերին։ Ազատում են նրանց ու վերադարձնում հայրենի վայրերը...

Շերամը նկատեց, որ զինվորականները ուշադիր լսում են իրեն։

— Մի քանի հատ էլ սիրային երգեր երգեմ, չէ՞,— հարցրեց մայորին։

— Իհարկե, առանց սիրո ի՞նչ կյանք։

Կեսգիշեր էր, երբ տաղերգուն վերադարձավ տուն։

Մռայլ եկավ գարունը։ Արևոտ օրերին անգամ մարդիկ վշտալի ժպիտներով էին դիմավորում միմյանց։

Շերամը գնում էր ակումբ, թե պարզապես արվեստակից ընկերների շրջանում սիրտը բաց անելու, շատ քիչ մարդիկ էին հանդիպում, որ զվարթ ողջունեին իրեն. կարծես թե բոլորը, լսողությունը լարած՝ ականջ էին դնում դեռևս հեռավոր պատե-

բազմի խուլ որոտներին: Նրա ծանապարհին պատահում էին նաև երիտասարդներ, որ պարապ-սարապ թափառում էին փողոցում, անհոգ կատակում ու ծիծաղում: «Իա՛, սրանք պատերազմից բոլորովին լուր չունե՞ն»: Մտմտում էր նա և գնում, ուր կանչել էին: Այսօր էլ նա մտքում շարեց իր երգի տողերը.

Սիրել գիտես, կռվել չիտես,
Ո՛վ հսկա երիտասարդ ..

Տան ծանապարհին հանդիպեց ընկերը՝ Ուռում Սիմոնը. սա էլ երգչի հոգին հանգստացնելու փոխարեն հաղորդեց, որ Թուրքիայի կառավարության գլխավորները՝ Էնվեր, Թալեաթ ու Ջեմալ փաշաները երկրի քրիստոնյա բնակչությանը բնաջնջում են: Եվ նա չգնաց տուն. քայլերն ուղղեց Արայի կողմը. գուցե սա՞ մխիթարական մի լուր հաղորդի: Բայց նա կարդաց ահավոր ցեղասպանության կցկտուր հաղորդումները:

Արան թավ հոնքերը կիտել էր այնպես, որ թվում էր, թե սրանց ծանրությունից էր գլուխը հակվել կրծքին· Նա հասկանում էր ընկերոջ փոթորկվող հոգին:

— Ծո՛, ընչի՞ չես խոսի, ախպերս... Մեր դրությունն ի՞նչ պտի էղնի·

— Գոքո՛ր, խելքդ գլուխդ թոփ էրա. ռուս զորքը չի թողնի, որ թշնամին առաջ գա: Երեկ-մեկէլ օրը մերոնք Մուշն են գրավել ու կերթան դեպի Սասունի սարերը: Թե Գերմանիան էն կողմից չսեղմե՛ր...

— Ի՞նչ կուզես ըսա, դրությունը խառն է,— ասաց տաղերգուն,— պղտորվան զուլալ ջրերը, Արա ջան: Է՛հ, տա աստված՝ մերոնք հաղթեն...

Արան մխիթարելով ծամփու դրեց ընկերոջը: Իսկ կինը տագնապած դիմավորեց.

— Քա՛, ի՞նչ էղար. բժիշկ Տեր-Մարտիրոսյանն էր եկել:

— Ի՞նչ կուզեր:

— Կըսեր՝ հըլը էստե՞ղ եք:

— Օ՛ֆ, էդ էլ էնպես կշտապեցնե՝ հայ-հավար գնացեք:

— Վայթե հարկավոր է, ի՞նչ գիտես:

— Հարկավորը՝ հարկավոր է, Սալվի, ընկերներս էլ կպահանջեն:

—Կտեսնի՞ս... Թե՞ չես ուզե հեռանալ,— կիսաբերան ասաց կինը

Ներս մտան: Շերամը հասկանում էր, թե կինն ինչ է ակնարկում: Ուզում է ասել, թե՝ «Վարդուհուց չես ուզում հեռու մնալ»:

Իրիկուն էր արդեն, ծրագվառոց, երբ ներս մտան նրա եղբայրն ու հարսը, Արևը, Հայկը, Վարդգեսը: Նրանք բոլորեցին սեղանի շուրջը իրիկնահացի, և թվում էր, թե մոռացվեցին պատերազմն էլ, կյանքի դժվարություններն էլ:

3

Մայիսյան առավոտ է: Կերոնների պես երկինք հառնած բարդիների դալար տերևները նազանքով պարեցնում է զեփյուռը: Բոստանների ու ծահիծների կողմից թևատարած սուրում են արագիլները, իջնում իրենց նման լայնաթև բներին ու ձագերի բաց կտուցների մեջ դնում բերած ավարը:

Քաղաքային այգու բլուրից հոգնաբեկ իջնում է Շերամը: Մինչև լուսաբաց երգել է հասարակական հանդեսին, որ նվիրված էր պատերազմի զոհերի հիշատակին: Որբանոցներն էլ արդեն ընդունել են հարյուրավոր ծնողազուրկ երեխաների: Մի երկու օր հետո էլ նրանց համար երեկո պիտի լինի: Եվ նա հիշեց հոգին տակնուվրա անող տաղը հայոց ու երգեց տխրաձայն.

Կանչե, կռունկ, կանչե, քանի գարուն է

«Լավ գարուն է, խո՜սք չկա...»: Գլուխը բարձրացրե՛ց, նայեց սրաթռիչ, ասես սև հագած ծիծեռնակներին, Արագածի ուսից աշխարհին ժպտացող արևին...

Այս ո՞ւր է գնում ինքը. ինչո՞ւ թեքվեց Տալոյենց սրճարանի կողմը, որ հիմա չկա: Մոտեցավ սրճարանի դռանն ու մի ակընթարթ կանգ առավ...

«Ամատունին, Արան, մեկէլոնք էլ ըսին՝ գնա, մի՛ տատանվի. հեռու խո չէ՞, շուտ-շուտ կուգաս, էլի... Հըբը թո՛ռըս, որ պտի ծնվի... Փա՛ռքդ շատ, տեր աստված, թոռի տեր էլ պտի դառնանք»·

Եվ նա կտրուկ մի շարժումով բացեց սրճարանի դուռը: Մի սեղանի շուրջը երկու հոգի էին նստած: Դուռը բացվելուն պես ոտքի կանգնեցին, գդակները հանեցին ու բացականչեցին.

— Բարի լո՛ւյս, վարպետ:

— Իա՛, ղուրբանդ էղնիմ, ուստա՛ Գոքոր... Արի, արի նստի:

— Բարով, Օնիկ ջան, բարով, Եգոր ջան:

Սրճարանատերն էլ բարձրաձայն ողջունեց և ավելացրեց.

— Համեցեք, ուստա Գոքոր, համեցեք. մե՛ծ պատիվ էրիր։

Շերամը ժպտաց, գլխով արեց և ասաց.

— Շնորհակալ եմ, Համո ջան. ես քիչ պտի մնամ. ղալֆեմ խմեմ ու էրթամ տուն՝ հանգստանամ։

Նայեց շուրջը։ Նրա աչքովն ընկավ իր մտերիմներից մեկը՝ բոստանչի Հարությունը, որ առանձին սեղանի մոտ նստած՝ նայում է իրեն։ Մոտեցավ նրան ու նստեց։— Էս ինչքան շո՞ւտ ես էկել, Հարութ ջան։ Տխուր կերևաս, ի՞նչ է եղել։

— Բան չէ, քավո՛ր ջան. մերս հիվանդ պառկած է։

— Մերդ հիվանդ է, լավ կեղնի, բա՛ն չկա,— հուսադրեց ու նայեց սրճարանատիրոջ կողմը, որ սուրճն արդեն բերում էր։ Հարությունը կարծես կռահեց, թե ինչ պետք է հարցներ քավորը, հաղորդեց.

— Քավո՛ր ջան, ռուսները վերցրել են՝ Ալաշկերտը, Բիթլիսը, Մուշը։ Էնքան հայ ընտանիքներ են փրկել... Երեկ մեր բարեկամներից մեկն էլ քաշվեքաշ հասավ մեր տուն. վիրավոր չուլուչափուտը վրեն...

— Է՛, ի՞նչ արիք,— անհամբեր հարցրեց Շերամը։

— Ի՞նչ պտի անենք. լողացուցինք, շոր տվինք՝ հագավ ու էնքան դադրած էր, որ հաց էլ չկերավ. թախտին ընկնելն ու քնելը մեկ էղավ։ Լռեցին։— Իմացել եմ, որ Թիֆլիս կերթաս, քավոր ջան,— լռությունը խզեց Հարությունը.

Տաղերգուն շեղակի նայեց նրան.

— Ծո՛, ի՞նչ անեմ. բժիշկներու ձեռքեն մա՞րդ կպրծնի. էնպես կպահանջեն, ինչղ որ կյանքիս տերն իրանք էղնին։

— Հըբը ի՞նչ. էստեղ որ մնաս՝ կկորիս։ Գյումրեցիք հա՛մ կուզեն, որ չերթաս, համ էլ կուզեն, որ ավելի խաղաղ տեղ ապրիս։

Շերամը չէր միջամտում։ Ելավ, թառն առավ թևի տակ ու դիմեց ներկաներին.

— Տղե՛րք ջան, ներող էղեք. էրթամ։

Ելավ փողոց, նայեց սիրեցյալի տան կողմը, մի քանի քայլ արեց նրա նրբանցքով, կանգ առավ, մտածեց, երկու մատով շփեց կզակն ու ետ դարձավ դեպի տուն։ «Հըբը էնո՞ր ինչղ թողնիմ՝ էրթամ... էնիկ էլ մեղք է...»։

4

Տալոյենց հին, միհարկանի, անշուք տան հետ ուղիղ անկյունով միանում է գաղթական Արուսի գետնափոր կացարանը: Սրա կողքով ներքև է ձգվում նեղ մի արանք: Այդտեղով, ահա, բարձրանում է մի երիտասարդ: Նա դուրս եկավ հրապարակն ու կանգ առավ, աչքերը կկոցելով՝ նայեց Տալոյենց տանը: Մի պահ վարանեց ու քայլեց այդ կողմը և, որովհետև անապակի դուռը բաց էր, մտածեց՝ թակի՞, թե՞ ուղղակի մտնի· Տեսավ, որ դրանից ներս ապակեպատ դուռ էլ կա, ոտք դրեց դրանց արանքն ու մատով տկտկացրեց ապակին: Դռան ետևը հայտնվեց սուրանկյուն դիմագծերով մի երիտասարդ:

— Ո՞վ է, Գուրգեն ջան,— ներսից լսվեց բարալիկ մի ձայն:

— Չգիտեմ, մա՛ ջան. ջահել տղա է.— ետ նայելով, պատասխանեց Գուրգենը:— Ներս արի,— հրավիրեց նա եկվորին:

Անծանոթ երիտասարդը մտավ ներս ու մի պահ կանգնած մնաց. նայեց գլխաշորը գագաթին ծալած կնոջը, իսկ Գուրգենը ճանաչեց նրան.

— Նկարիչ է, մայրիկ:

— Պետրոս Ռափայելյա՛ն,— ներկայացավ անծանոթը.— Ձեր որդու անունը լսել եմ, ասում են նկարում է քիչ-միչ,— ու ժպտաց:

— Հա՛, Պետրոս ջան, շնորհք ունի,— հաստատեց մայրը և գնաց պարենատան կողմը:

Գուրգենը հարցրեց.

— Ի՞նչը բերեց քեզ մեր տուն:

— Ուզում եմ նկարել Շերամին՝ Գրիգոր Տալյանցին,— պարզաբանեց Պետրոսը:

— Ինձ ցույց տուր հորեղբորդ սենյակը:

Գուրգենը բացեց կիսամութ սենյակի դուռն ու նկարչին հրավիրեց ներս: Պետրոսը դիտեց չորս բոլորը: Նրա ուշադրությունը գրավեց դռան վերևի փոքրիկ պատուհանը: Մինչ նա մանրազնին դիտում էր բնակարանը, Գուրգենի մայրը որոշ տեղեկություններ էր տալիս ընտանիքի մասին:

— Երգիչն էստե՞ղ է քնում,— Սոֆիկի խոսքը կտրեց նկարիչը: Գուրգենը նկատեց նրա զարմանքն ու ասաց.

— Հորեղբորանքս հիմի ուրիշ տեղ կապրին, մատուռի դեմը. գիտե՞ս·

— Գիտեմ. բայց էստեղ երկար է ապրել, չէ՞:

Գուրգենը գլխով արեց.

— Առանձին սենյակ էլ է ունեցել,— և նկարչին առաջնորդեց հրապարակի կողմը: Պետրոսն այս սենյակն էլ զննեց ու ավելացրեց.

— Որպես ֆոն ես էն սենյակը կդարձնեմ. հին տան համար բնորոշ է: Է՞, հիմի կգա՞ս՝ ցույց տաս նոր տունը:

Ու նրանք գնացին: Կարճ ճանապարհն էլ բավական եղավ, որ Պետրոսը նկարագրեր իր և նվագաձուների հանդիպումը: Սրանք նկատեցին, որ շլյապավոր ջահելը դեսուդեն է նայում, թե՝ ու՞մ կուզես:

— Ես նկարիչ եմ. կուզեմ հին գյումրեցի, զուռնաչի, դհոլչիբան նկարեմ:

— Այ, բարով էկա՛ր. իսկական տեղն էլ ընկել ես, երիտասարդ հին գյումրեցի կուզես, չէ՞·

— Էդպես մի նպատակ ունեմ,— հաստատում է նկարիչը·

— Ապրիս, իշտը էսոնք բոլորն էլ հին գյումրեցի են, նկարե:

Պետրոսը նկարակալը հարմարեցրեց, ցածրիկ աթոռակը դրեց, վրձինն առավ ձեռքը և պատմելով, թե ում է նկարել մինչ այդ, ուզեց սկսել գործը, երբ տարեց դափահար Թաթոսը դիմեց նրան.

— Հըլը կեցի, ջահե՛լ ջան. դու·գյումրեցի՞ ես:

— Այո:

— Որ գյումրեցի ես, ուստա Գոքորի պես երգչին թողած՝ մեզի՞ պտի նկարես: Էսոնք բոլորը, ես էլ հետները, թառ ու քամանչա նվագողներ ենք. դաֆչի էլ կա, էսպես-էնպես... Հըմի մենք մեր ուստաբաշին ունինք. գիտե՞ս ով է:

— Չէ:

— Որ չիտես՝ ականջ էրա: Մեր ուստաբաշին հայտնի երգիչ Տալոյենց Գոքորն է, Շերամը: Իսկ Ջիվանուն գիտե՞ս:

— Գիտեմ, հորեղբայր:

— Ողորմի պապերու՛դ... հենց նա է Գոքորին ուստաբաշի կարգել. էնոր էլ ողորմի հոգուն: Ինքը Թիֆլիս պտի էրթար, տեղը դատարկ կմնար. ինքն էլ ամենաարժանի մարդուն դրեց՝ Գրիգոր Տալյանին: Ու էդ օրվանից Տալոյենց Գրիգորը դարձավ ուստա Գոքոր, հասկացա՞ր:

— Հասկացա:

— Էնոր գրած երգերը մարդու հոգին դրախտ կտանին. ուրիշ երգեր են, ուրի՛շ...

Թաթոսը խոսքը կտրեց ու խորազնին նայեց նկարչին: Սա արդեն հասկացել էր, թե առաջին հերթին ում պետք է նկարի, և տուփը փակեց, աթոռակը ձեռքն առավ, նկարակալը կախեց ուսից ու սպասողական դիրք ընդունեց:

— Դե՛, գնա, հը՛ը մե ուստա Գոքորին նկարե, ղուրբան, հետո՝ մեր աչքի վրա. արի՝ տեսնինք... Էրթա՛ս բարով·

Գուրգենը լսեց այս պատմությունն ու անձայն ծիծաղեց: Նրանք արդեն հասել էին Շերամի նոր բնակարանին:

5

Նրանց առջև դուռը բացեց տաղերգուի կինը՝ Սալվինազը: Ներսից լսվեց ֆլեյտայի դայլայլը:

— Վա՛րդ ջան, սպասե,— սենյակի կողմը դառնալով՝ կանչեց մայրը,— մարդ է եկել, բան կհարցնե.— մեկ էլ տեսավ տեգոր որդուն ու բացականչեց.— քա վո՛ւյ, Գուրգեն ջան, դուն է՞լ հետն ես... նե՛րս Լկեք

Երիտասարդները ներս մտան: Ֆլեյտան զույգ ձեռքով բռնած՝ նրանց դիմավորեց տաղերգուի որդին՝ Վարդգեսը:

— Պետրոսը եկել է, որ հորեղբորս նկարե, հարսխանում:

Տանտիրուհին նրանց առաջնորդեց դեպի ընդարձակ սրահը:

— Նստեք,— ֆլեյտայով աթոռները մատնացույց անելով, առաջարկեց գանգրահեր, կանոնավոր դիմագծերով Վարդգեսը:

— Չէ՛,— առարկեց նկարիչը,— դեռ մի տեսնեմ, թե ինչ տունուտեղ ունի Շերամը:— Եվ նա անցավ կողքի սենյակը, դուրս եկավ բակ, մտավ մեծ սրահը, մոտեցավ բարձր լուսամուտին, մի պահ դիտեց մատուռը ..— Ու՞ր է տանտերը,— հարցրեց:

— Իրիկվանից նվագելու է գնացել. որբերի օգտին է, ինչ է՝ չիտեմ,— պատասխանեց երգչի կինը: Մի որպե սպասողական դրություն տիրեց: Դրսից ոտնաձայն լսվեց:— Էկավ,— հայտնեց նա:

Նվագարանի գլուխը գրկած ներս մտավ Շերամը: Բարևեց: Պետրոսն ու Գուրգենը ոտքի ելան:

— Գուրգե՞ն, դու՞ ես,— հարցրեց տաղերգուն, թառը հանձնելով կնոջը:— Իսկ էդ ջահե՞լն ով է:

— Նկարիչ է, Պետրոս Ռափայելյանը, կուզե նկարել քեզի:

Երգիչն ասաց.

— Ուրախ եմ... Սալվի՛, մե օգնե՝ չուխես հանեմ:

— Չէ, չէ՛, վարպետ, մի քիչ էդպես մնա՝ տեսնիմ,— խնդրեց նկարիչն ու ոտից գլուխ զննեց նրան.— հենց էդպես էլ կնկարեմ:— Եվ թղթապանակը բացեց, արագ-արագ ուրվանկարեց կերպարը, ապա հարցրեց,— ե՞րբ է հարմար, որ գամ կարգին նկարեմ:

Շերամը համաձայնեց, որ հաջորդ օրը նկարիչն սկսի իր գործը և հարցրեց.

— Ի՞նչ նպատակով կուզես նկարել, Պետրոս ջան:

— Նշանավոր գյումրեցիների պորտրեներ եմ անում... Դե՛, ինձ համար էլ լավ փորձ է:— Եվ նա համառոտակի պատմեց, թե ինչ տեղի ունեցավ նվագաձուների հավաքատեղիում:

Երբ Գուրգենի հետ ելան՝ փողոց, նա ասաց.

— Էդ ի՞նչ տեսակ մարդ է հորեղբայրդ, Գուրգեն. պարզ, հասարակ, բարի. բոլորովին չի երևում, թե երկրով մեկ հայտնի երգիչ է:

Մայիսյան տաք կեսօր էր, երբ նկարիչը, բեռնավորված, նորից մտավ Շերամի տունը: Նկարակալը մի ուսից էր կախված, ներկատուփը՝ մյուս: Մի ձեռքին փայտե կմախքի վրա քաշած կտավն էր, մյուսին՝ իր պատրաստած շրջանակը: Շատ չմնաց նա այդտեղ: Նկարեց կերպարի ֆոնը, պատվանդանը, որի վրա պետք է հենվեր երգիչն արմունկով, թեք պատուհանից դիմացի պատին ընկած լուսավոր լայն բիծը: Հետո ելավ, հավաքեց նկարչական պարագաները և գնաց մատուռի կողմը:

Շերամը տանն էր, դուռը նա բացեց:

— Ապրի՛ս, Պետրոս ջան, ճշտապահ ես, էդպես մարդիկ իմ սրտին մոտիկ են: Էդ ի՞նչ է,— նկարչի ձեռքի շրջանակը տեսնելով, հարցրեց:

— Շրջանակն է:

Երգիչը խնդաց: Նկարիչը զարմացած նայեց նրան, բայց չհամարձակվեց դիտողություն անել:

— Ինչու՞ ինձ չասեցիր, Պետրոս ջան. էնպես մի շրջանակ շինեի, որ քեֆդ գար: Դու չգիտե՞ս, որ ես արհեստով հյուսն եմ, փայտի հետ գործ ունենալու սեր ունիմ: Մեր էն տան պահարանները, դռներն ու լուսամուտները տեսա՞ր:— Պետրոսը գլխով արեց:— Բոլորը ես ու ախպերս ենք սարքել. սնդուկ, կամոդ էլ

որ հավաս ունենամ՝ կշինեմ: Թառերս էլ ես կսարքեմ... Մե թառս բեր, Սալվի՛:

Շերամի կրտսեր եղբոր կինն այդ օրն այդտեղ էր. թռավ տեղից:

— Հիմի՛ բերեմ, աղա ջան.— ու գնաց բերեց:

Եվ գործիքը շուռումուռ տալով, տաղերգուն պատմեց, թե ինչպես ինքը թթենու մի կոճղ առնում բերում էր տուն, փորփրում, հղկում և գուշն էր պատրաստում, հետո կոթն էր սարքում...

— Չգիտեի՛...— ապշած ծոր տվեց նկարիչն ու սկսեց նկարել: Սոֆիկն էլ, թե՝

— Հո չե՞մ խանգարե, որ տեգորս մասին մի բան պատմեմ:

— Չէ, չէ, հարսխանում,— տնեցիների պես պատասխանեց նկարիչը:

— Թառը ձե՞ռքս պտի նկարես, Պետրոս ջան:

— Չէ, հորեղբայր. մեկ էլ տեսար՝ սկսեցիր երգել. ես էլ էնքան հուզվեցի, որ վրձինս ծուռ գնաց:

Բնորդը ծիծաղեց.

— Վա՛յ, ապրիս դու, ի՞նչ ըսեմ:

— Դու հանգիստ կանգնիր, թևդ էս սեղանին դիր ու մատուռի կողմը նայիր,— պատվիրեց նկարիչը և դարձավ Սոֆիկին.— Է՞, հարսխանում, լսում եմ:

— Հա՛,— սկսեց Սոֆիկը,— տեգրս որ առաջին անգամ թառ շինեց, բերեց տուն՝ բոլորիս ցույց տվեց: Շատ էր ուրախացել: Մենք էլ զարմացանք ու ըսինք՝ քա, աղա ջան, էդ թառը դու՞ ես շինել:— Չէ՛, սատանեքը շինեցին,— ասաց:— Ճիշտ ասա:— Խելա՛ռ, ես շինեցի, ես. էս ձեռքերովս:— Հետո թառը կոկեց պրծավ, փարդա քաշեց, սիմերը գցեց ու սկսեց չալել: Մյուս օրն՝ առավոտն ասաց ընձի.— Է՞, հարս ջան, շապիկը կարե, փյուսկուլո՛վ... Միտքդ կուգա՞, աղա ջան:— Տեգրը, առանց թեքվելու, գլուխը տմբացրեց: Սոֆիկը շարունակեց.— Թեզ էրա,— ըսավ,— գառս, լավ կարե: Գիտես, թե շապիկը մե՞նք կձևեինք... միշտ էլ ինքը կձևեր, հըբը՛:

Նկարիչը գլուխն օրորեց ու մտածեց.— «Էս մարդը հազարփեշա է»:

Տաղերգուն ժպտում էր ու սիրագորով նայում հարսին. իսկ սա շարունակեց.

— Խո չե՞մ խանգարե,— կրկին հարցրեց նա։

— Ոչ, ոչ, հարսխանում, ընդհակառակը։

— Տեգրս որ գիշերը տուն կուգար, թառը կուտար ընձի ու կըսեր. «Սոֆիկ ջան, զգույշ էղի». ես էլ զգույշ էի։ Հըմը մի անգամ...

— Ի՞նչ կարիք կա, որ էդ էլ կպատմես, միջամտեց երգիչը։

— Քա ընչի՞, աղա ջան. թող պատմությունս կիսատ չմնա։ Հըմը մի անգամ, ինչղ էղավ, շուշա դուռը բացի թե չէ, պատեն կախած թառը ընկավ ու ծեղքավ...— Նկարիչը մի պահ դադարեցրեց աշխատանքը. վրձինը մնաց օդում։— Որ ծեղքավ, լալով վերուցի, ախուվախ արեցի։ Տեգրս դուրս էկավ՝ տեսա՛վ, որ դարդոտեր եմ, ըսավ. «Դարդ մի՛ էնե, հարս ջան, էլի կշինեմ. էդոր համար կտրորվի՞ս. հեչ մի տրորվի, էլի կշինեմ...»։ Մի վայրկյան լռեց, ապա խոսքն ավարտեց.— Էսպես ջիգյարով է տեգրս։

Նկարիչը վրձինը ցած դրեց.

— Վարպե՛տ, մի քիչ հանգստանանք, չէ՞.— ու ձեռքերը տուփի միջի լաթով սրբեց։

— Հըբը ի՞նչ... Սալվի՛, հաց-մաց բեր,— ձայն տվեց կնոջը, որ խոհանոցում էր։

Քիչ անց Շերամը հեռացավ սեղանից ու նվագարանն առավ ձեռքը։ Շուտով ամբողջ տունը ողողվեց երաժշտությամբ։ Տաղերգուն գովերգում էր նախշուն աչերը, որ զարկեցին սրտին ու գերեցին իրեն...

Նկարելիս Պետրոսը նկատեց, որ երգիչն անհանգիստ է. մեկ դուրս է նայում, մեկ ինչ-որ բառեր է արտասանում աղոթքի նման, մեկ տխրում է...

Նկարիչը տարակուսանքի մեջ էր, բայց և այնպես, դիմանկարն ավարտեց։

Դրսի դռան ծռոցից տաղերգուն վեր թռավ։

— Սալվի՛, գլուխս կցավի. էրթամ՝ պառկիմ...

Եվ նա գնաց իր սենյակը։ Շուտով կնոջ ականջին հասավ ամուսնու ձայնը. նա երգ էր հորինում՝ Ճանապարհս ընկավ Թիֆլիս...

Իրիկնամուտ էր, երբ եկան հրավերքի կանչելու նրան, բայց մերժված վերադարձան։ Վշտահար Սալվինազը շտապեց դեղագործ Լեյբովիչ Աբրահամի խանութը, որ դեղ բերի։

6

Շոգեքարշը երկար շչակեց, հերարձակ ծուխը ծածանելով մտավ թունելի մեջ: Ասես խելագար մի կին էր դա, որ, թուխ ծամերը քամուն տված, սլանում էր անհայտ հեռուներ. Շերամը նստեց ու մտքերի մեջ ընկավ. Հենց այդ պահին շոգեքարշը դուրս պրծավ կաշկանդող խավարից ու սլացավ ձախակողմյան բլուրների փեշերով: Տաղերգուն հիշեց...

Ահա, ինքը, Երզնկայից հասած արյունալի լուրերից ճնշված, գնում է դեղագործ Լեյբովիչի տուն: Հասավ, դուռը թակեց ու սպասեց: Բացեց տանտիրոջ կինը և առանց այլևայլության ներս թողեց նրան: Այցելուն երկար չմնաց Աբրահամի տանը. ինչ-որ դեղ ուզեց և, իր կասկածները փարատելու համար, խոսք բացեց Թիֆլիս գնալու մասին. ինչքան չլինի բժշկի պես մարդ է դեղագործը:

— Անպատճառ գնա, Գրիգոր, Ալեքպոլում ու՞ր է կարգին բժիշկ, իսկ էնտեղինները գիտնական են, խո բժիշկ չեն·

— Հա՛, Աբրահամ. ստամոքսս էլ լավ չէ, համ էլ շատ կջղայնանամ.

Դեղագործը կտրեց նրա խոսքը.

— Բժիշկներուց բացի, էնտեղ էն տեսակ հանքային ջրեր կան, ո՛ր...

— Ճի՞շտ կըսես:

— Իա՛, հըբը ի՞նչ: Ախպերս քանի տարի է էնտեղ կապրի. շատ գոհ է:

Շերամը թիկնեց վագոնի չոր մահճին դրած բարձին ու փորձեց քնել, բայց նորից ելավ նստեց· «Նրան էլ չտեսա, որ մնաս բարով անեի:— Մտածեց, ախ քաշեց, աչքը գցեց կուչուրած կնոջն ու մուշ-մուշ քնած տղային, արմունկները հենեց սեղանիկին, դեմքն առավ ափերի մեջ, ու ծանր մտքերը նորից պաշարեցին նրան:— Էնոր մեղքը ո՞րն է, չհասկցա. սիրելը մե՞ղք է որ...»: Նայում է երգիչը լուսամուտից, և օրերի պատկերները անցնում են տրտում հայացքի առջևով, ինչպես երկաթգծի երկայնքով շարված սյուները:

Անցան Ղալթաղչի կայարանը: Նույնանուն գյուղի դիմաց երկինք է խոյացել բարձր մի լեռ, որի հակադիր լանջի վերևում,

դարեր շարունակ, կանգուն է մնացել մի ուխտատեղի՝ Սուրբ Օհաննեսի վանքը:

Ծերամը երկար նայեց գիրկընդխառն քնած կնոջն ու մանչուկին...

... Սրանով հղի էր Սալվին, երբ կեսուրի, տեգոր կնոջ հետ, իր ուղեկցությամբ, բոկոտն, Սլեքպոլից ճամփա ընկավ ու եկավ հասավ այդտեղ Աղոթեց երկար, հայացքը հառած աստվածածնի պատկերին, մոմ վառեց, որպեսզի գոնե վերջին զավակը՝ տաշտաքերը ողջ մնա. Երկու տղա կորցրեց՝ հերիք է· Եվ ծնվեց վերջին տղան:

Հենց այդ վայրկյանին երգչի ականջը ծակեց նրա ծիծաղը... «Նա է, կխնդա. կըսե՝ Գրիգոր, նպատակս փորս թողիր՝ կերթաս...»:

Մատներով խցկեց ականջները և աչքերը փակեց, ծխամորճը թութուն լցրեց ու հեռացավ կուպեից, որ դառը ծուխը չանհանգըստացնի հարազատներին: Մտովի երգեց.

Ճանապարհս ընկավ Թիֆլիս,
Կրակ լցվավ մեջ իմ սրտիս...

Դարձյալ հիշեց, որ նորալուսնի ժամանակ եթե իր պարզամիտ կնոջ երեսին՝ ապա լուսնին նայի, գործը հաջող ընթացք կունենա:

Ահա Նալբանդ գյուղը: Սրա եզրին ծվարել է կայարանը:

Լուսամուտից աղոտ նշմարվում է լապտերի դեղնավուն բոցը:

... Պատանի էր դեռևս, երբ երեք ընկերով որոշեցին փախչել Թիֆլիս:

Երեկո էր արդեն, որ հասան այս գյուղը: Եղիսաբեթ քրոջ ամուսինը, ձին չափ գցած, հասավ նրանց ետևից և կտրեց տղաների ճանապարհը: Ծառս եղած նժույգից վախեցած պատանիները կուչ եկան ճամփեզրի փոսում: Ձիավորը մտրակը շրխկացրեց օդում ու մի քանի հարված հասցրեց Գրիգորի ուղեկիցներին:

— Կփախնիք, հա՞, լակոտնե՛ր,— գոչեց նա,— ո՞ւր կփախնիք, հը՞...

Տղաները պապանձվել էին վախից. միայն գլուխներն էին առել ձեռքերի վահանների մեջ: Հեծյալը մեկ-երկու անգամ էլ շրխկոցով խփեց Գրիգորի մեջքին ու թևից քաշելով գցեց թարքը:

— Ամուր բռնե՞ն,— և աչքերը խոլորեց վրան։ Գրիգորը վախվխելով՝ ասաց.

— Հրբը ընկերներս...

— Սու՛ս,— սաստեց փեսան,— ընկեր-մընկեր չիտեմ, փախըստակա՞ն,— և ձին քառատրոփ քշեց քաղաքի կողմը։ «Ընկերներս ոտքով էին եկել քաղաք,— մտաբերեց տաղերգուն,— խեղճերը շատ էին մրսել»։

Մոտեցավ միջանցքի լուսամուտին, որ ավելի լավ տեսնի դեպքի վայրը։

7

Քունը չէր տանում, ինչքան էլ թազբեհ քաշեց, բան դուրս չեկավ։ Հիշողությունները համառորեն խցկվում էին գլուխը։

... Ահա դափահար Կարոն՝ Կարապետ Եդիգարյանը։ Սրան կատակով Քոթի Մրո էին ասում, երևի արաբի պես թխամաշկ լինելու համար։ «Տասնհինգ տարի է, որ ընձի հետ կնվագե ու կերգե, բայց էդպես էլ ընձի լավ չճանաչեց»,— անցավ Շերամի մտքով, և նա գլուխը տարակուսանքով օրորեց։

... Կարոյի հայրը մեռել էր։ Առավոտյան որդին տխուր-տրտում ներկայացավ Գրիգորին։ Սա զարմացած նայեց նրա մթագնած դեմքին ու, ինքն էլ հոնքերը կիտելով, հարցրեց.

— Կարո՞, ի՞նչ է եղել։

Կարոն խոնավ հայացքով նայեց վարպետին ու կակազեց.

— Հերըս... մեռա՛վ...

Եվ ոսկեջրած գոտին քանդեց ու մեկնեց վարպետին։ Մինչ այդ երգիչն ուշադիր զննում էր նրա շարժումները։ Ու երբ Կարոյի դողդողացող ձեռքից կախ ընկած գոտին տեսավ և ականջը խոցեց ընկերոջ խնդրանքը, թե՝ էսիկ առ, մե քանի մանեթ տուր... հորըս թաղեմ,— պոռթկաց նրա երեսին.

— Ծ՛ո, էդ ի՞նչ կենես, հիմար... Վերցրո՛ւ, վերցրու՝ կապե մեջքդ.— և աչքերը փայլատակեցին զայրույթից.— ըհը՝ քսան մանեթ, ա՛ռ... ինչքան էլ որ կպակսի՝ արի կուտամ։

Նորից ոտքի կանգնեց։ Գնացքի անիվները տկտկոցով ասես հաստատում էին նրա բարի արարքը։ «Էս անտեր քու՞նն ընչի փախավ ինձնից...»,— սրտնեղած մտածեց նա, պառկեց, աչքերը պինդ փակեց, բայց իզուր։

... Կայարանում հոծ բազմություն է խռնվել: Եկել են իրենց Գոքորին ճամփու դնելու: Ահա եղբայրը՝ Հարությունը, հարսը՝ Սոֆիկը, որ գլխաշորի ծայրը հաճախ մոտեցնում է աչքերին:

— Մի՛ լա, հարս ջան, մի՛ լա... շուտ կուգամ վաթանս...

Կինը շարժվեց տեղում, թևը երկարեց ու գրկեց երեխային: Շերամը մտքի մեջ դնդնաց.

Անուշ վաթան, քեզնից հեռու մնացի ..

Հանկարծ աչքի առաջ կուչ եկավ մայրը՝ Խաթունը: «Հրբը մե՞րս ընչի չեկավ կայարան,— ախ քաշեց.— է՛, կուրանում է խեղճ մայրիկս... աբլա՛ ջան...»,— թախծեց:

Ահա և քույրը՝ Փեփրոնը. վիզը ծռել է և արցունքի միջից անթարթ նայում է եղբորը.

Գնացքի հեռանալուց հետո էլ դեռ լսվում էր նվագածու ընկերների տխուր մեղեդին.

Սալվին աչքը բացեց ու տեսավ, որ ամուսինը դեռ նստած՝ լուսամուտից դուրս է նայում:

— Ինչի՞ չես քնի, Գրիգոր,— խղճալի հարցրեց նա:

Ուշ գիշեր էր, երբ քունը ծանրորեն կախվեց կոպերից, ինչպես կշռաքարերը: Բայց էլի հանգիստ չէր: Երազները խուռներամ պտտվում էին նրա շուրջը:

Երազում թե արթմնի՝ ականջին հնչեցին վաղուց հորինած երգերը: «Ի՞նչ երգեր էին, ո՞ւր կորան»: Բայց ոչ քնի մեջ, ոչ էլ լուսաբացին, երբ արթնացավ, չհիշեց դրանք.

...Դեղագործ Արաբաջյան Արան մտերմություն էր հաստատել հնչակյան մի զինվորի՝ Խնկոյենց Մկոյի հետ. սա էլ ձիու սայլով բերդից զենք էր դուրս բերում և տալիս իրենց խմբին: Մկոյին սպանեցին դաշնակցականները և գցեցին Մուրտառ Ձայը. ոստիկանները շուն բերեցին ու գտան նրա դիակը:

Տաղերգուն հոգոց հանեց ու կնոջը հարցրեց.

— Սալվի՛ ջան, քանի՛ տարի մեր քաղաքի սազանդարների մեծը ես էի, չէ՞. Թիֆլիս ո՞վ պտի ընձի բանի տեղ դնե:

— Քա՛, ընչի՞ էդպես կըսես. ամեն տեղ էլ դու պատիվ ունիս:

Լույսը վաղուց բացվել էր: Լեռների թիկունքից երկինք էին մխրճվել արեգակի լուսեղեն սվինները: Ուղևորներն արդեն հաց էին ուտում կամ իջնում կայարաններում, իսկ Շերամը չէր հանգըստանում: Ջղային շարժումով ձեռքը գցեց նվագարանին: Մար-

դիկ թառի ծնկծնկոց լսեցին թե չէ, հավաքվեցին, որ ականջ դնեն...

Գնացքն անցնում էր Քուռ գետի կամուրջով: Տաղերգուն ոտքի ելավ, ծակատը շփեց, քունքերը տրորեց, ուզեց գնալ դեպի մուտքը, բայց կինը ետ պահեց.

— Մե նստի, Գրիգո՛ր, նստի՝ բան պտի ըսեմ:

Ամուսինը դառնորեն խնդաց.

— Ի՞նչ պտի ըսես... Աղջիկս էնտեղ մնաց, Վարդս մնաց, ախպերս, մերս, քուրերս... ես փախել՝ կերթամ... Չէ՛, ես էստեղ չեմ ապրի, Սալվի. կերթամ ջուրը կգցեմ ընձի...

— Քա՛, նստի մե՛...

Մանչուկն արթնացել էր ու, ժպիտը դեմքին՝ նայում էր հորը:

— Միտքդ կուգա՞, Գրիգոր, որ մի օր սոուզ էի եփել...

Շերամը կռահեց, որ կինն ուզում է իր ուշադրությունը շեղել լուրջ նյութից, և ծիծաղեց: Մի քանի րոպե լուռ մնացին:

Փոքրիկը մոտեցավ լուսամուտին:

Շուտով պետք է երևար Թիֆլիսը:

Ի՞նչ էր խոստանում այս քաղաքը տաղերգուին, ինչպե՞ս կդիմավորեր վաստակած երգչին: Կուրախացնե՞ր արդյոք նա իր տաղերով ազգությունների այդ կենտրոնին: Կընդունե՞ն արդյոք այլազգի մարդիկ հայոց հոգուց բխած երգերը...

Իսկ իր կյանքի էությունը, աստվածային իր սերը քանի գնում, այնքան հեռանում է իրենից...

ԵՐԲ ԱԼԵԿՈԾ ԾՈՎԻ ՎՐԱ

1

Թիֆլիսը Շերամին դիմավորեց ջերմորեն: Կայարան էին եկել բոլոր ազգականները, հարազատները, վաղեմի ընկերները, նոր ծանոթները: Եվ Նրան, կնոջն ու որդուն պատվով հասցրին տուն: Երեկոյան հրավերք արեցին: Տաղերգուն կատարեց վերջին տարիներին հորինած երգերը:

Ոսկեծամ աշուն էր սկսվել Վրաստանում: Մեղմ, ինչպես սիրահարի համբույրը, առատ, ինչպես դրախտային այգին: Կերուխումն ավելի ուրախ դարձավ, երբ ներս մտան՝ դափահար Կարոն, քամանչահար Հաջին և ուրիշ նվագածուներ: Աղմկալից քեֆը տևեց մինչև լույս: Առավոտյան գինովցած խրախճանողները ցրվեցին, իսկ տնեցիները անկողին մտան: Սակայն երգչի հոգին երկար ժամանակ չէր հանգստանում: Կասկածը նորից սողոսկեց նրա սիրտը. արդյո՞ք այսպես կշարունակվի իր կյանքը նոր տեղում, կսիրե՞ն այստեղ իր տաղերը...

Նրա կասկածն ավելի տանջալի դարձավ, երբ տնեցիներից ամեն մեկը գնաց իր գործին: Տանը մնացին եղբոր դուստրն ու որդին՝ Արաքսին ու Սամվելը, որը հորեղբոր մանչուկի հետ իջավ փողոց: Եվ ի՞նչ խոսեր ինքը կնոջ ու Մաշոյի հետ. ինչո՞վ կարող էին նրանք փարատել իր կասկածները...

Եվ նա նվագարանն առավ ձեռքը, բայց անտրամադիր կրկնեց տարիներ առաջ հորինածները. այնքան թույլ-թույլ, որ շատը կիսատ թողեց: Դրանցից մեկն էր միայն, որ հիշեցնում էր տարիների անհոգ կյանքը... Սրան հետևեց մյուսը, որն ավելի տրտում էր: Եվ աչքի առաջ ավելի պարզ լուսավորվեց հեռավոր սիրեցյալը: Դրանից ջղայնացած՝ նա թառը թափով մտցրեց շապկի մեջ ու կոպիտ կերպով դրեց սեղանին: Նորից ընկավ մտքերի մեջ: Այս տաղերից շատերը չհաստրեց դնել վերջին գրքույկի մեջ. նորերն էլ կգրի. բայց դրանց համար ո՞վ շնորհակալ կլինի, ո՞վ կտպագրի...

Կծարվի՞ մեկն արդյոք, որ գնահատի...

Մեկ էլ չուխան հագավ, գլխարկը դրեց ու քայլեց դեպի դուռը: Կինն զգուշությամբ հարցրեց.

— Ո՞ւր կերթաս:

— Էնիկ խո էստեղ չէ՞, որ մտածես, թե էնոր քովը կերթամ: Փրկչի ժամի դուռը խայտառակ արեցիք. էլ ի՞նչ կուզես...— և դուրս գնաց:

Մաշոն լսեց դռան ձայնն ու վազեց.

— Հարսխանում,— տեգերկանանց նման դիմեց նրան,— լաց իս ըլու՞մ, քա՜: Գանա հորեղբայրը քեզ բեդամաղ արե՞ց...

— Չէ, Մաշո ջան... բան չեղավ,— կոծկեց Սալվին:

Մաշոն տեղյակ էր Շերամի և Վարդուհու սիրավեպին և հարազատ քրոջ պես գորովագութ էր Սալվինազի նկատմամբ.

զգում էր նաև, թե որքան խորն է նրա սերը ամուսնու հանդեպ։

Շատ չանցած տաղերգուն վերադարձավ։ Կանայք զարմանքով նկատեցին՝ նա ժպտում է ներողություն հայցողի նման։

— Գնացի՝ տեսնեմ ախպերս ի՞նչ է անում։ Մի քիչ խոսեցինք ու եկա։ Աղջի՛, Սալվի,— դարձավ կնոջը,— էդ ինչքան կսիրե քեզի տեգրդ. հըբը Երանյա՛կը... ինչղ որ քուրըդ էղնի։

Սալվին թախծոտ ժպտաց և, ուսերը վեր գցելով՝ կարծեց.

— Եսի՞մ։

Մեկ-երկու օր հետո երգչի ընտանիքը տեղափոխվեց Պուշկինի 19 շենքը։ Կարապետն ամեն օր այցելում էր նրանց, հորեղբորը հիշեցնում անցած տարվա հաջողությունը և հուսադրում, որ չմտածի, ամեն ինչ լավ կլինի։

— Գործ էլ կունենաս, միջոցներ էլ կունենաս. օտար տեղ խո չէ՞, հորեղբայր։

Գարնանամուտ է, բայց ցուրտը դեռ մոլեգնում է Թիֆլիսում։ Սառը քամուց մերկ ծառերը ծռծվում են սրթսրթալով ու շաղ տալիս ձյուղերին դեռևս մնացած տերևները։ Քամին խուժում է տանիքների տակ ու անտես ձեռքերով թմբկահարում թիթեղաձաձկ տանիքները։ Մարդիկ այնքան արագ են անցնում մայթերով, որ թվում է, թե հողմն է հրելով առաջ տանում նրանց։

Եղանակը վատ է, բայց Շերամն ու դափահար Կարոն շտապում են Հավլաբար. հրավերք կա՝ պիտի նվագեն։ Երիտասարդ քամանչահար Սաշան է գործի դրել. ինքն էլ է նվագելու այնտեղ։ Տասներորդ անգամ է, որ տաղերգուն գնում է նվագելու և հիշում է, թե ինչպես սկսվեց իր կյանքը վրաց ոստանում։ Եվ էլի եղբոր որդի՝ Կարապետը եղավ նախաձեռնողը։

— Քելե, հորեղբայր, քելե՛,— դրդեց նա,— ինչու՞ թողնես, որ էդ խոսնակ թառիդ վրա թոզ նստի. եղունգդ չարժողները գործի տեր դարձան, դու պիտի պարա՞պ մնաս։

Նվագաձուների հավաքատեղիի ժխորն ու ծանր օդը ծանոթ էր Շերամին. բայց երբ Կարապետն ու ինքը մտան ծխով լցված սրահը, կանգ առավ շեմքին։ Երաժշտական տարբեր գործիքների ձայնի վրա ժպտաց, բայց և դժգոհեց.

— Էս ինչքան էլ ծխում են տնաշենները։

Սրահում այնպիսի աղմուկ էր, որ երգչի բարձրաձայն հազալն անգամ չլսվեց: Նա եղբոր որդուն հարցուփորձ արեց, թե սա ով է, սա ինչ է նվագում, նա ինչ է նվագում, և Կարապետը ծանոթացրեց: Ու երբ ասաց, թե հեռու նստածն էլ Կարապետյան Սամսոնն է, տաղերգուն ուրախ զարմանքով նկատեց.

— Ծո՛, ի՞նչ կըսես... Ախր էդիկ աշուղ Ֆիզայու տղեն է...— Եվ շտապեց ծանոթ թառահարի կողմը.— բարև, Սամսոն ջան. հազիվ նշմարեցի քեզի:

— Ուստա՛ Գոքոր, բարով ես եկել,— վարպետի ձեռքը սեղմելով բացականչեց Սամսոնը: Կարապետը տեղեկացրեց.

— Հորեղբայրս ընտանիքով էստեղ պետք է ապրի:

— Աշխատելու ես, չէ՞, վարպետ:

— Պարապ մնալն ընձի համար չէ ըսած, Սամսոն ջան,— պարզաբանեց գուսանը:— Ես դեռ էնքան հայտնի մարդ չեմ, որ ձեռքերս ծալած նստիմ՝ ուրիշներն ընձի ապրեցնեն:

Նրանց շուրջը խմբված նվագածուները ծիծաղեցին: Մոտեցավ դափահար Մաշտին ու թիկունքից գրկեց երգչի ուսերը:

— Բարով իս էկի, ուստաբաշի՛ Գրիգոր. համա թե գործ կոնինք միասին, հա՛...

Ուստաբաշին նստեց Սամսոնի դիմացը:

— Յա՛, տեր աստված,— կանչեց նա և զառերը գլորեց նարդու մեջ:

Հետո մոտեցավ նվագածուների խմբին, որ աշխույժ վիճում էին աշխարհի գործերի շուրջը: Իմացավ, որ ռուսական զորքը Արևմտյան Հայաստանի մեծագույն մասն ազատագրել է: Նա հիշեցրեց, որ ինքը հայ կամավորական ջոկատներից մեկի հրամանատար Գևորգ Չաուշի հիշատակին ողբերգ է գրել.

Հերոսն ընկավ, հա՛լք, ողբացեք,
Տխրաժամն է Հայաստանի...

... Եվ հիմա Շերամն ու Կարոն շտապում են գործի տասներորդ անգամ:

Հաջորդ օրվա առավոտյան ամբողջ շենքը վեր թռավ խլացնող աղմուկից: Ձիերի դոփյունին խառնվել էր մտրակների շաչյունը, կանանց ու երեխաների լացուկոծին՝ խոպոտ հիշոցները: Շենքի վերին թևում ապրող պրոֆեսոր Թառայանը դուրս նետ-

վեց պատշգամբ՝ ծերմակ մազերը ցաքուցրիվ, թիկնոցը կիսով չափ հագած: Ծենքի ամբողջ ճակատը բռնած լայն պատշգամբի ներքևից վազելով եկան տաղերգուն և կինը: Նրանք մոտեցան Երևանյան հրապարակի կողմի բազրիքին ու նայեցին ցած: Իսկ այստեղ, մթերային խանութի դռանը հավաքված բազմության վրա հարձակվել էին հեծյալ ոստիկանները և գանակոծում, ձիերի սմբակների տակ էին գցում կանանց, երեխաներին, ծերունիներին:

— Ցրվե՛ք, չփլաղներ,— գոռում էին հալածողներն ու խարազաններով դաղում ամբողջ գիշերը մի կտոր կորեկ հացի համար մայթի վրա կուչուրած մարդկանց: Կանայք ճչում էին, աղեկտուր լալիս ու, երեխաներին գրկած՝ փախչում փրփրած նժույգների առջևից:

— Անիծվե՛ք դուք, գազանե՛ր...— արցունքախառն գոչում էին մայրերը:

Մի ծերունի փորձում էր չոքեչոք դուրս գալ ձիու փորատակից: Մի քանի պատանի հեռացել էին ու, սալարկին կանգնած՝ ցեխոտ ձեռքերով սրբում էին արցունքը: Նրանց հայացքը մայրերի վրա էր, բայց չէին համարձակվում նետվել նրանց օգնելու, քանի որ մայրերն անընդհատ ճչում էին.

— Մի՛ եկեք, մի՛ եկեք...

Պրոֆեսորը բերեց իր գավազանն ու թափահարեց, որ շպրտի ոստիկանների վրա: Սրանցից մեկը նկատեց այդ և կրակեց նրա կողմը: Երգչի տաբաթը ճանկեց իր մանչուկը:

— Փախի՛ տուն,— սաստեց հայրը:

Սալվինազի կողքից էլ պոկվեց տեգոր թոռը՝ Անդրանիկը: Եվ երեխաները վազեցին տուն: Տաղերգուն ու հարևանները գլխահակ, մռայլ գնացին իրենց բնակարանները: Մինչև իրիկուն նրանց լսելիքը կտրատում էին սոված կանանց ճիչն ու երեխաների լացը: Ծերամի աչքի առջևից չէր հեռանում այն ծերունին, որ կատաղած նժույգների ոտքերի արանքում որոնում էր իր ակնոցը: Ոստիկանությունն այսպես պատասխանեց ժողովրդի բողոքին, իսկ քաղցն ու կարիքը խեղդում էին մարդկանց:

Հանգիստ չունեցավ երգիչն այդ օրերին: Եվ տխուր տաղերը հոսեցին, ինչպես ձմռան կարծր սառույցի տակով ահառած հոսում է զուլալ առուն:

Նրա նվագակից Հաջին, հրակարմիր մազերով այդ մարդը,

իրիկնադեմին եկավ, որ գործի գնան, ձեռնունայն վերադարձավ։

Տաղերգուն առանձնացավ մյուս սենյակում, մտաբերեց տխուր երգերը և նորը գրեց...

3

Առավոտյան Շերամն իր փոքրաթիվ ընտանիքով տեղափոխվեց բակի կողմի բնակարանը. Գուցե ուզում էր հանգի՞ստ շարունակել իր բուն գործը. բայց արդյո՞ք անդորր գտավ նա այդտեղ։ Հետագա տարիները բարդ հոգսերով հագեցրին նրա կյանքը։

Արևհատն Ալեքպոլում արու զավակ ծնեց, որն արդեն մեկ տարեկան է. Վարդգեսն ուսումնարանն ավարտել է։ Եկողներն ասում են, թե նրան էլ, շատ երիտասարդների հետ, ուղարկել են Կարսի կողմը. և այնտեղի բերդի գնդում բուժակ է. մեկն էլ, թե՝ Արմենկոմի որբանոցում է բուժակ... Որի՞ն հավատաս։ «Մինչև Արևս ու Վարդս չգան, հոգիս չի հանգստանա,— մտածում էր տաղերգուն։— Էս տղին էլ դպրոց պտի տանք»։

Նա հաճախ դիմում էր ծխամորճի և թազբեհի օգնությանը, բայց համրիչն անվերջ շառով էր վերջանում։ Եվ նա թազբեհը ջղայնացած շպրտում էր, իսկ հետո ինքն իր միամտության վրա ծիծաղում։

Շերամի բնակարանն սկսվում էր փայտյա երկար սանդուղքի գլխամասից։ Բնակարանի առջև լայն պատշգամբ կար, որն աստիճանաբար նեղանում էր դեպի բակը։ Դրանից մինչև փողոցի հաջորդ շենքը տարածված էր թիթեղածածկ տանիքը. սա չոր մրգի և այլ խանութների կտուրն էր։ Բակում երկհարկանի տուն կար, որտեղ ասորիներ ու հայեր էին ապրում։ Երևանյան հրապարակի կողմը գտնվող շենքում բնակվում էին նաև հրեաներ ու վրացիներ։ Եվ այդ ու հարևան շենքերը, բակերի կողմից, պատշգամբներ և անցումներ ունեին։ Իսկ երգիչն արդեն սովորություն էր դարձրել դուրս գալ իր պատշգամբն ու, նստելով աթոռին, նվագել ու երգել։

Առաջին ծանոթությունը հարևանների հետ կայացավ նման անսովոր պայմաններում։ Ահա նա գովերգում է սիրեցյալին ու դուրս հրավիրում, քանի որ զով գիշեր է, իսկ ինքը մենակ է ման գալիս. կամ խնդրում է, որ գեղեցկուհին կանգնի և գոնե նայի իրեն։ Մի օր էլ մտաբերեց վիրավոր զինվորներին օգնու-

թյան հասնող որդուն ու երգեց իր հայրենասիրական մի տաղը նրանց մասին:

Երգեց պրծավ, նվագարանի գուշը հենեց ծնկին ու դադար առավ:

— Էսօր գործի չե՞ս էրթա, Գրիգոր,— հարցրեց կինը:

— Հըբը ի՞նչ պտի էնեմ. վայթե լուսաբացին գամ: Դու մենակ տես, որ էդ տղեն շուտ գա տուն, դուրսը չմնա:

Հարևան տարեց ամուսինները մտել էին տուն, բայց հենց որ երգիչը շարունակեց նվագը, նրանք ելան միջանցք, նստեցին ցածրիկ աթոռներին ու դարձան ունկնդիր: Բայց միայն նրանք չէին, որ լսում էին երգչին: Շրջակա բոլոր շենքերի պատշգամբները, սանդուղքները, անցումներն ու բակերը կամաց-կամաց լցվում էին մարդկանցով: Հնչում էր երգը: Ունկնդիրները չէին հեռանում իրենց «օթյակներից»: Երբեմն յարը մոռացվում էր ու Շերամը հոգու խռովքն էր արտահայտում հայոց աշխարհի ծանր վիճակի վերաբերյալ.

Սև ամպերը հայոց երկինք պատեցին,
Պայծառ արևն ու լուսինը ծածկեցին...

Երգի հենց կեսին, անսպասելի բան կատարվեց: Ներքևի մուտքից մինչև երկրորդ հարկ ձգվող սանդուղքը դմբդմբացնելով՝ բարձրանում էին մարդիկ: Երգն ընդհատվեց:

— Սալվի ,— կանչեց խուճապած երգիչը,— ա՛ռ, առ տար՝ պահե...— և նվագարանը տվեց դռան մեջ հայտնված կնոջը,— շապիկը հագցրու՝ չերևա:— Ասես մարտական զենքն էր հանձնում համհարզին՝ ռազմի դաշտում ընկնելուց առաջ:

Սանդուղքի վերևի դուռը մելամաղձոտ ճռինչով բացվեց, ու հարթակին երևացին երկու տղամարդ: Նրանք խոնարհ գլուխ տվեցին ու միաբերան ողջունեցին:

— Բարև, հարևան:

— Բարով եկաք,— տարակուսած ու մի քիչ թեթևացած հոգով՝ ծոր տվեց երգիչը.— առաջ եկեք... Սալվի՛, աթոռ բեր:

Տաղերգուին մոտեցավ թուխ դեմքով, թավ բեղերով ու թերմաշ բաճկոնը գաջի ու ներկի բծերով ծածկված, գիրուկ տղամարդը: Նա պինդ-պինդ սեղմեց Շերամի ձեռքն ու խոսեց.

— Գրիգո՛ր ախպեր, ես էլ, Սամսոնն էլ քու ներքևի հարևաններն ենք,— և բութ մատը տնկեց դեպի ետ:— Ես ծեփա-

գորշ Դավիթն եմ — և ցույց տվեց իր բաճկոնը.— դուզ ա, ասորի եմ, համա քեզի պես որ հարևան ունեմ, ի՞նչ ասորի, ի՞նչ հայ, ի՞նչ վրացի։— Երգիչը գլխով արեց. իհարկե։— Էս էլ մեր դվորնիկն ա, Սամսոնը։

— Ես ձեր կողմերից եմ, վարպետ, ղարսեցի եմ,— Դավթի խոսքը կտրեց դռնապանը։

— Հաստա՞տ։ Այս անգամ դռնապանը գլխով արեց՝ այո։— Սամսո՞ն ջան, իմ պապս էլ ղարսեցի էր, աշուղ էր. խնամոնքս էլ Ղարսի Բայրաղտար գյուղից են։

Սամսոնը հավանությամբ նայեց ծեփագործին ու իմաստալից շարժում արեց՝ խոսիր, է...

— Մեր օղլուշաղն էլ, Եվան, էլի,— ծանոթությունը ամրապնդեց Դավիթը,— իմացել ա քու երգը, ըսավ՝ Դավու՛թ, գնա ծանոթ էղի։

— Լավ եք արել,— ասես շփոթված խոսեց երգիչն ու հրավիրեց.— դե, նստեք... Սալվի, թառս բեր։

Դավիթն ու Սամսոնը իրար նայեցին ու նստեցին։ Տաղերգուն երգեց։

— Էս երգիս անունը՝ Լինենք եղբայրներ է. շուտվա երգ է։

Նախ պարզաբանեց նա երգի միտքը, հետո կատարեց։ Հեղինակը կոչ է անում համերաշխ լինել, փշրել ազգային ատելության շղթաները, սիրել միմյանց և ուխտել նվիրվելու հեղափոխության մեծ գործին. ռուս լինի, հայ լինի, վրացի, հույն, պարսիկ... Հարևանների սիրտը շահեց մանավանդ, որ երգիչը խաղաղ կյանք է ցանկանում բոլոր ազգություններին, նա քարոզում է, թե քո ազգը սիրիր, կյանքդ նվիրիր նրան, բայց օտարին էլ եղբայր համարիր։

— Իսկակա՞նն է,— հուզված ասաց Դավիթը,— բա ո՞նց։

Սամսոնն անհամարձակ խնդրեց, որ երգիչ հարևանը մի երկու տաղ էլ երգի։ Ճերամը ժպտաց ու երիտասարդի պես կատարեց։

4

Վրա հասավ ձմեռը։ Նոր տարին սկսվեց հակասական լուրերով, կուսակցությունների բախումներով։ Ամեն ինչ խառնվել էր իրար։ Ժողովրդի վիճակը քանի գնում ծանրանում էր. հաց

ծարելն անգամ դժվարացել էր: Շուկայում վխտում էին բանակից ծողոպրած զինվորները և իրենց հանդերձանքը վաճառքի հանում: Սպեկուլյացիան տարածվել էր համաճարակի պես: Ոչ ոք չէր հասկանում, թե ով է երկրի տերը:

Շերամը նստել է իր ցուրտ սենյակում ու մտածում է, թե ինչ պիտի լինի սրա վերջը:

Մտաբերում է նա, որ մի երկու ամիս առաջ տղայի հետ անցնում էր փողոցով: Մեկ էլ զգաց, որ մանչուկը փորձում է ազատել ձեռքն իր բռից: Ազդանշան էր ասես, որպեսզի հայրը նույնպես նայի փողոցի մյուս կողմում աղմկող դարբնոցին:

Հևում էր փուքսը, մոլեգնում էր կարմրաբոց քուրան, իսկ դարբինները, մուրճերի համաչափ զարկերով, ծեծում էին սալին դրված երկաթը: Որդին հմայված դիտում էր դարբնոցի եռուզեռը: Հայրն էլ ակամա նայեց և մի հայացք փոխանակեց նրա հետ: Իսկ մանչուկը խոր հոգոց հանեց և վախվորած դիմեց հորը.

— Հայրի՛կ, ի՞նչ կլինի, որ ինձ...— և կզակով ցույց տվեց դարբնոցը,— դարբնի աշկերտ տաս...

Հայրը զարմացած նայեց տղային, ապա քաշեց իր կողմը:

— Խելառ խո չե՞ս... ուսում առ, ուսո՛ւմ...

Երբ նրանք հեռացել էին դարբնոցից, հայրը նկատեց. որ տղան անընդհատ ետ է նայում: Եվ հասկացավ նրա ցանկությունը, բայց ասաց.

— Է՛, ես անուսում մնացի, դու է՞լ կուզես իմ օրն ընկնիս, հա՞: Ախպերդ, կտեսնի՞ս, ուսումնարանն ավարտեց էկավ. որ համալսարան էլ չմտնի, էլի կրթություն ունի, խեղճ չի մնա...— դարձավ տղային.— Ի՞նչ է, դպրոց չե՞ս ուզե երթալ:

— Կուզե՛մ... —անորոշ ասաց տղան:

Մի քանի օր անց, երբ տաղերգուն գնաց նվագածուների հավաքատեղին, նրան դիմավորեցին զարմանքի աղմուկով.

— Տո՛, ու՞ր ես, լավ մարդ, մեռանք քեզի սպասելով:

— Ինչ է եղե՞լ, որ:

— Վա՛հ, մի՛ սրան մտիկ արեք,— հավաքվածներին դիմեց Մաշտին.— չի իմանում, տո՛:

— Թագավորին թախտից գցել են, ուստա՛ Գոքոր,— խոսեց Սամսոն Կարապետյանը.— Ռուսաստանում հեղափոխություն է:

— Է՜հ, աչքներդ լույս, տղերք ջան: Հըբը ո՞վ է երկրի տերը:

— Ժամանակավոր կառավարություն է ստեղծվել:

Մոտ մեկ ամիս հետո, մարտի սկզբին, ժամանակավոր կառավարությունը վերացրեց Կովկասի փոխարքայությունը և ստեղծեց Անդրկովկասի հատուկ կոմիտե՝ Օզակոմ: Բայց ոչ այս քայլը, ոչ էլ Կարսի քառասուն հազար զինվորների ցույցը և զինվորական խորհուրդ ստեղծելը դրությունն արմատապես չփոխեցին: Վրաստանում սկսեցին գլուխ բարձրացնել մենշևիկները. աշխատավոր հայերի վիճակն ավելի վատացավ:

Ճերամն անասելի տագնապ և հուսահատություն ապրեց· Չէ՞ որ դստեր ընտանիքը դեռևս վիշապի երախին մոտ է. ավագ որդին՝ Վարդգեսն էլ ուսումնարանից հետո իր անելիքը դեռ չգիտե: Հապա փեսա՞ն՝ Հայկ Մարկոսյանը, Ալեքպոլի բոլշևիկյան կոմիտեի անդամ է, բայց... մա՞յրն ինչ դրության մեջ է, եղբոր ընտանիքը...

Եվ ալեկոծվեց երգչի հոգին ու թելադրեց՝ ինքը պայքարի երգեր պետք է գրի:

Այսօր նա կնոջ ու կրտսեր որդու հետ գնում է Հոռոմսիմ քրոջ աղջկա՝ Շուշանիկի տուն:

— Աշխարհը խառնվել է իրար, քեռի՛ ջան,— ասել է Շուշանիկը,— էնպես ժամանակ է, որ քուրն ախպորը մտիհան կանի, ախպերն ախպորը կդավաճանե, մերը՝ զավակին. մենք էլ որ չերթանք-գանք, ու՞ր կհասնի:

Անցնում էին օրերն իրար ետևից, մեկը մեկից խառնաշփոթ, մեկը մյուսից անորոշ: Աշնանամուտ է արդեն, բայց ոչ մի բարելավում չկա. փետրվարյան հեղափոխությունից հետո մարդիկ պարկերով թղթադրամ էին տուն տանում, բայց այդքանով մի ֆունտ հաց էլ չէին կարողանում գնել: Ճերամը շարունակեց աշխատել ճաշարանում. մեկ-մեկ էլ Հաջու և Կարոյի հետ գնում էր գործի՝ հարսանիք կամ հրավերք: Նոր երգեր էին ցանկանում մարդիկ: Նույնիսկ Հովնանյան դպրոցի օրիորդները մեկ-երկու անգամ նրան հրավիրեցին ավարտական երեկոներին: Եվ նա այդ տարիներին հորինեց երգեր, որ բոլորի սրտին մոտ էին: Նա չմոռացավ նաև աշխատավոր մարդուն: Հնարավո՞ր բան էր անտարբեր լինել ամեն օր աչքի առաջ տառապող ու լավ կյանքի ձգտող ընչազուրկներին:

Հեղափոխական, ազատագրական պայքարի երգերի և 1905 թվականի գրքույկի վերնագիրն էր «Գանգատի շանթերը»: Բայց այդ ժողովածուն լույս տեսավ առանց հեղինակի անվան: «Փութանք առաջ» երգն էլ որ ոստիկանության ձեռքն ընկներ, պրծավ,— մտովի պատճառաբանեց տաղերգուն:— «Գիրքս որ գաղտնագրված չլիներ, հիմի Սիբիրում փտել էի»:

«Անզուսպ արշավ» գրքույկի մեջ Շերամը մերժում է քնքուշ սերը գեղեցիկ աղջկա և դիմում հայրենիքին, թե՝ էլ ինչպե՞ս սիրի քնքուշ աղջկան և ալ վարդը, «Երբ ընկնում են անդ եղբարքս հարազատ»։ Ե՛վ այդ տարիներին, և՛ հետագայում միշտ թարմ հնչեց գուլալ ջրերի տխուր մեղեդին: Հեղինակն, ինչպես ռումբ հարստահարողի ճակատին է զարկել՝ «Լպիրշ բռնակալ» բառերը և համոզված հայտարարել, որ կխորտակեն նրան։

Նման շատ տողեր հիշեց երգիչը, երբ երեկոյան իջնում էր տան մոտի նկուղային գինետունը նվագելու: Նա այդտեղ երգում էր սիրո մասին, բայց դրանց արանքներում միտքը թռչում էր ուրիշ տեղ...

Ռուսաստանի հեղափոխության ալիքներն արդեն բախվում են Անդրկովկասի սահմաններին: Իսկ այս գինետանը ի՞նչ մարդ ասես կա: Եվ նա ավելի ուժգին էր նվագում ու բարձրաձայն հնչեցնում այնպիսի երգեր, որ թվում էր, թե սիրային են. օրինակ՝ Ալ ու ալվան ես հագել: Նվագածու ընկերները հետևում էին նրա օրինակին, քանի որ գիտեին, թե Ռուսաստանում ինչ է կատարվում, իսկ այստեղ իշխանության գլուխ են անցել մենշևիկները, Հայաստանում՝ դաշնակները, Ադրբեջանում՝ մուսավաթականները:

— Ժողովուրդը կռվի է պատրաստվում,— մի օր հնչակյան խմբակում հայտարարեց Լազոն, ավագը:

5

Դարձյալ ձմեռ էր, դարձյալ փետրվար· Քամու ամենաթույլ շունչն անգամ կտրում էր դաշույնի պես: Ցուրտ էր, բայց Շերամն ահա նվագարանն առած գնում էր ընկերների մոտ: «Էս ինչքա՞ն սուտուղորթ լուրեր են տարածված, ախպեր»: Նա լավ գիտեր, թե գաղափարակից մարդկանց շրջանում ինչպես պիտի ցույց տա իր արվեստը: Մի երգի մեջ բանվորների արտասուքն ու քրտինքը ծով են դառել և տնքում են բռնակալության նավի

տակ, մյուս երգը խարազանում է իշխողին... Շատ անգամ ընկերները խնդրում էին երգել «Անդրանիկի կոչը»: Եվ նա կատարում էր նրանց կամքը:

Հանդիպումից անցել էր մի քանի օր: Իրիկնամուտին երկու հոգի անցան Աբաս-Աբաթյան հրապարակը և Մուղնու նեղ փողոցով քայլեցին դեպի Բելբութովյանը, ապա անջատ-անջատ բարձրացան Կուսանաց վանքի առաջով·

Եկեղեցու մոտ է ապրում Լազոն· Այդ կարճատև հավաքույթների ժամանակ Շերամը երգում էր սիրահարական երգեր, երբ կասկածում էին, թե մենշևիկյան խուզարկուները կարող են մոտերքում լինել·

Արևն ելավ նազով կամաց,
Գիշեր, փեշդ քեզ քաշե...

Այսպես քայլ առ քայլ մոտենում էր աշունը: Կյանքը հոսում էր պղտոր հեղեղի պես:

Անհանգստությունն առանձնապես ճնշող էր Շերամի ընտանիքում: Կինն անվերջ հարցուփորձ էր անում, թե ի՞նչ նոր լուր կա Ալեքպոլից, ի՞նչ եղան՝ Արևը, Հայկը, թոռը, ի՞նչ վիճակում է տեգոր ընտանիքը, կեսուրը, ո՞ղջ են արդյոք մյուս հարազատները: Ամուսինը միայն գիտեր, որ նոր՝ Խորհրդային Ռուսաստանը հաշտության պայմանագիր է կնքում Գերմանիայի հետ. ուրեմն պատերազմը երևի շուտ վերջանա. հապա թուրքական բանակը, որ մոտենում է իր հայրենի քաղաքի՞ն...

6

Վաղորդյան անդորրը և ճնճղուկների ճռվողյունն ավելի խորունկ էին դարձնում մարդկանց քունն այդ ժամերին: Եվ հանկարծ... Հանկարծ ամբողջ շենքում տարածվեց մուտքի դռանը տեղացող հարվածների որոտը: Ինչ-որ մեկը ցնցում էր փեղկերը, բռունցքով այնպես էր թակում, որ ամեն ինչ ճռնչում էր:

Ամենից շուտ արթնացավ... Ո՛չ, չարթնացավ, այլ տեղից վեր թռավ Սալվին և, մի վայրկյան անկողնում նստած՝ ականջ դրեց: Արթնացավ նաև տղան:

— Դրսի դուռը ծեծում են, էրթամ բանամ...

Ամուսինը ուշ էր եկել գործից. և ծանր քնից հազիվ բացեց աչքերը, տեսավ, որ կինն շտապում է դուրս, հարցրեց.

— Ի՞նչ է եղել, Սալվի,— ու հենց որ կինը սենյակի դուռն իր ետևից ծածկեց, աչքերը նորից փակեց. նրան թվաց, թե այդ բոլորը երազ է: Մեկ էլ զգաց, որ տղան ուսը ցնցում է.

— Հայրի՛կ, հայրի՛կ, ել... մայրիկը կուլա...

Շերամն արագ նստեց անկողնում, տաբաթը քաշեց ոտքերն ու թաթերով ափլփեց հատակը, գտավ հողաթափերը և շտապեց դուրս: Նրա ականջին հասավ կնոջ ոչ այն է լացը, ոչ այն է խնդալը:

— Քոռանա՛ր լուսս, քոռանար մերդ... էս ի՞նչ օրի եք:

Շերամը նետվեց պատշգամբ: Սանդուղքի դռան զույգ փեղկն էլ կրնկին բաց էին, ու դստրիկի բարուրը գրկած՝ ներս էր մտել Արևհատը: Նա մի կապոց ձեռքին, մյուսով բռնել էր առաջնեկի ձեռքն ու քալլում էր դեպի իրենց բնակարանը, հոր բնակարանը:

— Քոռանա՛մ ես, Արև ջան, քոռանամ ես,— անընդհատ կրկնում էր Սալվին:

Տաղերգուն հասավ դստերն ու գրկեց:

— Քելեք տուն, քելեք տուն, շուտ արեք... ոտքի վրա հազիվ կկայնիս, Արև՛ ջան:

Իսկ Արևհատը խոսել անգամ չէր կարողանում. միայն տխուր ժպտում էր. Տատն ու թոռն արդեն տուն էին մտել, նրանց ետևից էլ՝ դուստրը: Մեկ էլ դարձավ ու տեսավ, որ հայրը սանդուղքի գլխից նայում է ներքև, հարցրեց.

— Ի՞նչ կաշես, հերըս:

— Հըբը Հայկո՞ս ուր է. չեղնի՞ վարն է... էլի՞ բեռ ունիք,— վրա տվեց նա:

— Չէ, հայրիկ, Հայկը մնաց էնտեղ...

Հայրը մի պահ շվարեց, նույնիսկ չհավատաց լսածին, բայց հասկացավ, որ դուստրը ամեն ինչ կպատմի, երբ մի քիչ ուշքի գա:

Ահա նստած են նրանք սենյակում և լուռ են. խոսելու ու՞ժ չունեն, թե՞ կարոտից են պապանձվել: Գուցե ձայն չեն հանում, որ բարուրի մանկիկը չարթնանա՞: Եվ հենց սա էր, որ, խզեց լռությունը:

— Քոռանամ ես, Արև ջան, բարուրն ընչի՞ է էսքան կեղտոտ։

— Է՛, մերս, որ իմանաս՝ ինչ ենք քաշել, մինչև հասել ենք էստեղ...

Տաղերգուն տխուր-տրտում ելավ պատշգամբ, որ ծխի հետ դարդերը քամուն տա։ Ի՞նչ պետք է լինի իր գերդաստանի վիճակը։ Վարդգեսը մի բուռ սենյակ ունի իրենց շենքում. լավ պարապում է, սովորում. փոքր տղան դպրոցում է. այդ էլ լավ։ Աղջիկն էլ, ահա, երեխաների հետ եկավ հասավ. «Լավ է, փրկվեց աղջիկս...», հապա փեսա՞ն...

Քանի անգամ ետ ու առաջ արեց Շերամը ու ծրագիր կազմեց, թե ինչպես դասավորի կյանքը։ Ա՛յ, ջահել ժամանակ ուրիշ էր. իսկ հիմա՞...

Ահա բոլորը սեղան են նստել։ Արևհատը թեյ է խմում ագահաբար. քանի՛ ամիս է, ինչ իսկականը չի ճաշակել։ Եվ նա պատմեց իր տանջալից ոդիսականը...

... Թուրքերը մոտենում էին Ալեքսանդրապոլին։ Բոլշևիկյան ընդհատակի գործիչները հասկացան, որ կանանց ու երեխաներին այդտեղ թողնելը անիմաստ կլինի։ Եվ որոշվեց նրանց հեռացնել քաղաքից։ Սրանց թվում էին նաև Հայկ Մարկոսյանի կինն ու երեխաները։ Աղջիկն այդ գարնանն էր ծնվել ու դեռ խանձարուրի մեջ էր։ Ի՞նչ էլ լիներ, նրանք պետք է հեռանային։ Իսկ ու՞ր. Հայկն ինքը պետք է ասեր՝ ուր։ Ամենից նպատակահարմարը Թիֆլիս ուղարկելն էր, բայց ճանապարհը բա՞ց էր արդյոք։ Լոռվա ընկերները տեղեկացրին, որ դեռևս բաց է, սակայն գնացքները օրումեջ էին շարժվում դեպի Վրաստան։ Եվ որոշվեց, որ Մարկոսյանի ընտանիքը ճանապարհ ընկնի հենց վաղը։

Երկու մտերիմ ընկերների օգնությամբ Հայկը կնոջն ու երեխաներին հասցրեց կայարան։ Ընկերներից մեկը երկաթուղային էր. նա օգնեց այդ գործում։ Մեծ դժվարությամբ մոտեցրին գնացքին, բայց այն, ինչ կատարվում էր այդտեղ, անհնար էր նկարագրել։ Ավելի դժոխային տեսարան էր ներկայացնում այն վագոնի ներսը, ուր գերմարդկային ծիգով հրեց Հայկն իր կնոջը։ Նրա մի ձեռքին կապոց կար, իսկ մյուս ձեռքով կրծքին էր սեղմել մի քանի ամսական դստրիկին։ Նրա առջևից, սրան ու նրան հրելով՝ առաջ էր խցկվում կինն ու ճչում.

— Ամա՞ն, երեխեքս... Հա՛յկ, որտե՞ղ ես...

Ամուսնու շունչը կտրվում էր, այնքան որ սեղմում էին հուսահատ մարդիկ:

— Էստեղ եմ, Արև ջան...— մի կերպ գոռում էր Հայկը.— Դու գնա, ես երեխաներին կհասցնեմ քեզ...

Իսկ կնոջ անհանգիստ հայացքը զավակներին էր փնտրում.

Վերջապես Արևհատն ընկավ մի անկյուն ու ետ նայեց՝ ո՛չ Հայկը կար, ո՛չ էլ Գուրգեն անունով այն երկաթուղայինը, որ երեք տարեկան մանչուկին ուսին դրած էր հասցրել մինչև վագոնի դուռը:

— Արև՛.. — խլացուցիչ ժխորի միջից հանկարծ լսեց ամուսնու ձայնը.— բռնե՛ տղիս...

Ի՞նչ աներ մայրը... Նա ձեռքերը պարզել էր լուսամուտի կողմն ու կանչում էր.

— Տու՛ր, Հայկ, տու՛ր...

Լուսամուտին մոտ կանգնած տղամարդն իսկույն որսաց նետված մանչուկին ու հանձնեց մորը, որի ծնկներն արդեն ծալվում էին ուր որ է ուշաթափ կլիներ: Տղայի լացն ու հոր կանչը նրան սթափեցրին:

— Հա՛յկ, Գուրգե՛ն... Աղջի՞կս ուր է... Վա՛խ, մեջքս ջարդեցին... Հա՛յկ...

Լուսամուտից ներս գցեցին մի բարուր:

— Հա՛յկ, Հա՛յկ, հըբը դու՞,— ճչաց կինը:

— Կուգամ, Արև ջան, կուգա՛մ...

Իսկ Արևը լաց լացեց կսկծալի: Մեկ էլ նորից մի սուր միտք շանթեց նրա ուղեղը՝ աղջի՞կս ուր է...

Եվ նա ալեկոծվող ամբոխի ոտքերի տակից գտավ աղջկա բարուրը. որսաց և այնպես սեղմեց կրծքին, որ թվում էր, թե դիվային ուժ էր պետք, որպեսզի նրանից պոկեր նորածնին: Ու մինչև Սանահին հասնելը նա ոչ մի բան չէր հիշում: Մեկ-երկու բարի մարդ նստելու տեղ տվեցին ուշակորույս մորը. սակայն ինչ ճիգ ու ջանք էլ գործադրեցին, բարուրը պոկել նրանից չկարողացան

Դառնաղի արցունքով պատմում էր Արևհատը, իսկ պապը թոռնիկին նստեցրել էր ծնկին ու շրթունքներն անվերջ հպում էր նրա թուխ մազերին: Կինն էլ, գլուխն աջ ու ձախ ճոճելով, վաշվիշ էր անում:

Հետագա փորձությունների պատմությունն այս էր...

... Գնացքը սողալով էր ընթանում առաջ: Առավոտ վաղ հասան Սանահին և երկար կանգնեցին այդտեղ: Կայարանապետն ու ոստիկանության ներկայացուցիչները հայտնեցին, որ գնացքն այլևս չի շարունակի ճանապարհը, և բոլոր ուղևորներին իջեցրին: Իջավ նաև Արևհատը՝ բարուրը գրկած, իսկ մանչուկը ճանկել էր մոր փեշը: Նրանք մի քիչ հեռացան ու կանգնեցին մի անշուք տան մոտ, որի ծխնելույզից ծուխ էր ոլորվում դեպի երկինք: Մեկ էլ տան դուռը բացվեց, ու շեմքին երևաց մի տարեց կին:

— Բարև՛, քիրա, ո՞րդիանց եք, ու՞ր եք գնում,— հարցրեց:

— Չիտեմ՝ ուր, քույրիկ ջան:

Եվ Արևհատը պատմեց իրենց գլխին եկածն ու բացատրեց, թե ուր են ուզում գնալ:

— Վի՛յ, քիրա ջան,— ձեռքը ծնոտին դնելով՝ վշվշաց կինը:— Էլ ընչի՞ եք ըտի կանգնել. եկեք մեր տուն, մխելի տաքացեք: Սոված էլ կլինեք. հաց կուտեք, եդնա կիմանանք՝ ինչ անենք:

Հաջորդ առավոտյան, բարի կնոջ օգնությամբ, Արևհատն ու իր զավակները եկան կայարանի դուռը: Նրանց դեմ կանգնեց միջահասակ մի մարդ:

— Իա՛, Արև ջան, դու՞ ես... Էստեղ ի՞նչ կենես,— հարցրեց:

— Քա՛, էդ ո՞վ էր,— միջամտեց Սալվին:

— Եղսաբեթ հորքուրանց Աղասին, մերս, մաշինիստը: Ես Էնքան զարմացա, որ բարևս էլ մոռացա. ընկա Աղասու գիրկն ու լացի:

— Տո, մի՛ լա, մի՛, Արև ջան,— մխիթարեց Աղասին — էս ու՞ր կերթաք:

Երբ Արևհատը նրան պատմեց ամեն ինչ, մեքենավարը խոստացավ իր շոգեքարշով նրանց տեղ հասցնել: Բերեց Թիֆլիս և ինքը վերադարձավ. ժամանակ չուներ, որ նրանց հետ գար քեռու տուն: Մեկ էլ տեսար՝ սահմանը փակեցին:

— Է՛հ, փառք աստծու, փա՛ռք աստծու,— դստեր փրկվելու պատմությունը ամփոփեց հայրը.— փառք աստծու, որ ողջառողջ եկաք հասաք... Մե Հայկոս էլ գա, էլ բան չեմ ուզե:

Լավատեսական խոսքին հաջորդեց սիրտ մաշող մտորումը... Իսկ մա՞յրը ինչ եղավ. տեսնես ծար ու ծամփա ցույց տվող հանդիպե՞ց: «Ու՞մ դարդն է կտրվել, որ ձեռքը բռնե ու լուսավոր ծամփա դուրս բերե»,— եզրակացրեց Շերամը: Հանկարծ շանթի պես

խոցեց նրա միտքը. «Վարդուհու պես սիրունին ինչու՞ պիտի հանգիստ թողնեն կեղտոտ թուրքերը...».

Եվ գուսանը չէր իմանում, թե ու՞ր նետվի ինքը, որ գոնե մի ճշմարիտ լուր իմանա...

Մտահոգությունն ավելի թանձրացավ գուսանի կյանքում, և կարիքի կմախքացած կերպարանքն ավելի հաճախ թակեց նրա դուռը: Հայրենի քաղաքում գերի մնացած հարազատների սոսկալուկ գոյությունը, անհայտ ճամփաներին ձեռքը օգնության պարզած մոր պատկերը գիշերն անգամ տանջում էին նրան: Իսկ կինը միայն ասում էր

— Շատ մի՛ մտածե, աստված ողորմած է:

Եվ տաղերգուն հանգստացած ննջում էր, բայց առավոտյան շտապում էր ընկերների մոտ: Ճանապարհին ելք էր որոնում ստեղծված դրությունից:

Շատ լավ եղավ, որ աղջիկն ու թոռները փրկվեցին, բայց մեկը երկուս դարձավ: Անտեր փողն էլ խո գին չունի՞... «թղթի կտոր».

Մենշևիկները ճնշումն անտանելի դարձրին ազգային փոքրամասնությունների նկատմամբ: Ունևորներն ավելի անբարտավան դարձան. Եվ տաղերգուն մտաբերեց մի քանի օր առաջ կատարված դեպքը:

Կինը եգիպտացորենի ալյուրից խմոր արեց ու տվեց փոքր որդու ձեռքը, թե՝ տար փուռը. ճաղի կլինի, երեխաները կուտեն: Տղան էլ տարավ և ուշացավ. դպրոցից էլ ետ ընկավ: Երեկոյան գնաց ճաղին բերելու, բայց այնքան մնաց, որ հայրն շտապեց որդու ետևից: Գնաց տեսավ, որ փռի տերը հարուստների գաթան ու փախլավան թխում տալիս է, իսկ իրենց ճաղին դեռ պատրաստ չէ: Երգիչը մտավ թե չէ, սա մեղմացավ ու թեժաթուխ ճաղին տվեց նրան. Եվ հայր ու որդի գնացին տուն:

Ծանր օրեր էին, բայց Շերամն ստիպված նոր երգեր հորինեց, ամեն օր գնաց նվագելու. մի՞թե ինքը կորած մարդ է, որ սովի մագիլները սեղմեն կոկորդը: Հաջորդ առավոտյան նա մոտեցավ հավաքատեղիի դռանը, բայց ներս չմտավ. քայլեց դեպի Նախալովկա: Ընկերներից իմացել էր, որ Երվանդ Տեր-Մինասյանը, թուրքերի ձեռքից ազատված՝ հասել է Թիֆլիս ու բնակվում է այդ թաղամասում. Տունը գտավ ու ներս մտավ: Մի քանի խոսքից հետո հարցրեց

— Հովհաննեսից խաբար չունի՞ս, ինչպե՞ս է։

— Ստեփան Շահումյանը նրան նշանակել է էնտեղ լուսաբաժնի վարիչ։

— Իհարկե,— գոհունակությամբ ասաց երգիչը,— լույսի պես մարդը պիտի լինի լուսավորության վարիչը։

— Իսկ Ալյոշա Ջափարիձեին գիտե՞ս, Գոքոր։

— Էնքան էլ չէ. ո՞վ է։

— Շահումյանի տեղակալն է։

— Էդ ի՞նչ ուժեղ խումբ է,— հպարտությամբ արձագանքեց տաղերգուն։

Իսկ Երվանդը ուրախացավ, որ երգչի դուստրը մի կերպ հասել է տուն։

Կարճահասակ մի՛ մարդ, թղթապանակը թևի տակ սեղմած, արագ քայլերով անցնում է ցուրտ փողոցով։ Նա գրեթե վազում է՝ վերարկուի օձիքը բարձրացրած։ Կոշիկների ներբանները համարյա թե պոկված են, և մայթի փոսիկներում լճացած անձրևաջուրը թրջում է ոտքերը։ Շտապողը երաժիշտ Դանիել Ղազարյանն է։ Նա դասի պիտի հասնի. մի դպրոցը Հավլաբարում է, մյուսը՝ բուսաբանական այգու մոտերքը։ Դպրոցի շեմքին նրան դիմավորում է պահակը։

— Պարո՛ն Ղազարյան, ոտքո՞վ եք եկել,— հարցնում է նա։

— Այո,— մրսած ձայնով պատասխանում է երաժիշտը։— Հենց գիտես մենակ ե՞ս եմ տանը... ընտանիքս մեծ է. նույնիսկ հաց հասցնելը դժվար է։

— Հա՛, դժվար ա, պարո՛ն Ղազարյան։

Մի քանի ժամ անց Դանիելը հասավ տուն և համեստ ճաշից հետո մոտեցավ գրասեղանին, որի կողքին դրված էր հնաոճ ու տեղ-տեղ ներկը թափած դաշնամուրը։ Նա սկսեց զբաղվել իր թղթերով, իսկ եղբայրը՝ Գրիգորը, որ հազիվ մի պնակ ապուր է կուլ տվել, թախտին պառկած՝ հանգստանում է։

Մյուս օրը սանդուղքի ներքևից մեկը ձայն տվեց.

— Դանե՛լ, տանն ե՞ս։

Դանիելի կինը՝ Կատյան, որը նույնպես գյումրեցի էր ու գիտեր, որ Շերամն էլ է Թիֆլիսում, և որի միջոցով էլ ծանոթացել էին նա և կոմպոզիտորը, մոտեցավ սանդուղքին.

— Տանն է, տանն է, ուստա՛ Գոքոր. վերև համեցեք։

Քիչ հետո տաղերգուն ներս մտավ: Նա արխալուղի վրա պիջակ է հագել, գլխարկի կարերի թելը գունաթափվել է և ավելի նկատելի է դեռևս մուգ կտորի վրա: Նա մոտեցավ Դանիելին ու տեսավ, որ տխուր է:

— Քիչ մնաց, Դանել ջան, քի՛չ մնաց. սրանց կյանքը կարճ է. ռուս ժողովուրդը մեզի էս դրության մեջ չի թողնի: Էն խոսքը չգիտե՞ս՝ կատվի մանգզիլը...

— Գիտեմ, Շերամ. կատվի մանգզիլը մինչև մարագն է:

— Ապրի՛ս, ողորմի հորը դ... է՞, էսօր տրամադրություն ունի՞ս, որ մի քիչ գործ անենք:

— Ոչինչ, ունեմ,— ապշեցնող լավատեսությամբ պատասխանեց Դանիելն ու մոտեցավ դաշնամուրին:

Տաղերգուն էլ նրա կողքին տեղ գրավեց:

— Ախր էն օրվանից մի երկու երգ էլ եմ գրել:

Դանիելը թեքվեց նրա կողմն ու զարմացած նայեց, ապա գլուխն օրորելով բացեց նոտաների տետրը:

— Հապա, վարպետ, տես երգդ ճի՞շտ եմ ձայնագրել,— հարցրեց նա և սկսեց նախանվագը:

Շուտով սենյակում տարածվեց կոմպոզիտորի քաղցր ձայնը. նա երգում էր:

Շերամն ուշադիր լսում էր: Մեկ էլ բռնեց Դանիելի ձեռքը:

— Գիտե՞ս, էս մասն էնքան էլ լավ դուրս չի եկել, Դանել ջան:

Երաժիշտը նայեց նոտաներին և հնչեցրեց մի քանի ձայնանիշ, ապա և կրկներգը:

Դանիելին ամենից շատ դուր եկավ մի քառատողը, որ նա երգեց խոր հուզմունքով, նրա հետ էլ՝ գուսանը:

— Կերևա, որ էնքան էլ հուրի-փերի չէ յարս, չէ՞:

Երկուսն էլ ծիծաղեցին. և կոմպոզիտորը ուղղեց սխալը:

— Հապա մյուս երգդ լսիր, Շերամ,— ասաց նա և նվագեց, «Ճամփորդ եմ» տաղը:

Հեղինակն անխոս լսեց նվագն ու երաժշտի հետ երգեց վերջին տողերը:

— Հիմա ականջ էրա նոր երգս, Դանել ջան,— անսպասելի առաջարկեց տաղերգուն:

Երաժիշտը մի պահ անթարթ նայեց նրան. հայացքի մեջ զարմանք կար։ Շերամն սկսեց երգել, իսկ նա ուրվագծեց իր անելիքն ու վերջակետ դրեց։

Գուսանի և Դանիել Ղազարյանի բարեկամությունը, որ ամրապնդվել էր այդ քաղաքում, օրըստօրե ավելի մտերմիկ էր դառնում։ Այդ օրը նրանք աշխատեցին մինչև ճաշ։ Շերամը վեր կացավ. ներս մտավ տանտիկինը և ասաց.

— Գրիգո՛ր եղբայր, բորշ ունինք, բայց առանց մսի է. բերեմ՝ կեր։

Շերամը մի վայրկյան տատանվեց, ապա նայեց տանտիկնոջն ու մերժեց.

— Չէ, Կատուշ քույրիկ. թե կրնաս մե բաժակմ չայ տուր. ես սախարին ունիմ։ Խո գիտես, չէ՞, որ շաքարը սև աղվես է դարձել։

Տաղերգուն ձեռքը տարավ գրպանը, իսկ Կատյան թել բերեց, ամեն ինչ հետը։ Թելից հետո գուսանը ելավ տեղից և ասաց.

— Է՛հ, ես էրթամ. մեկ էլ ե՞րբ գամ։

— Երբ որ նոր երգ կունենաս,— պատասխանեց Դանիելը։

— Ըսել է՝ կիրակի օրը, հա՞։

Բոլորը քրքջացին։

Զարմանալի է, թե այդ մարդիկ, այդ խառնաշփոթ օրերին, ինչ ուժ ու եռանդ ունեին այդպես ստեղծագործելու...

Շերամը դարձյալ շտապում է գործի։ Գնում է Արհեստավորաց ակումբ՝ նվագելու։

Ո՞վ գիտե, թե այսօր ինչ մարդիկ են հավաքվել այնտեղ. գուցե նրանց մեծ մասն ուզում է, որ ինքը սիրո տաղեր հնչեցնի թող այդպես լինի։ Ունևորները երբեք չեն կռահի, որ «Էլի էսօր սիրտս կուլա» երգը ազգի դժնդակ օրերի պատկերն է ցույց տալիս և ոչ թե սիրուհու պատճառած ցավից է երգչի սիրտը լալիս։

8

Այսօր նա գործ չունի. ճաշարանը փակ է, հրավերք ու հարսանիք էլ չկա։ Գնում է և անիծում հայրենի քաղաքի բկին չոքած հրեշին։ Հապա Վրաստանի տիրակալնե՞րը... Ռուսաստա-

նում մոլեգնում է քաղաքացիական պատերազմը: Լուրերն այնտեղից խիստ տարբեր են. մի օր ասում են հաղթել են կարմիրները, մի օր էլ, թե՝ սպիտակները զավթել են այս կամ այն քաղաքը: Աշխարհը խառն է... «Էդ տղեն էլ ու՞ր ելավ գնաց Արմավիր: Է՛հ, ո՞վ գիտե՝ էն ախպե՞րս ինչ հալի է... Հովհաննեսն էլ Բաքվից է եկել Երվանդի մոտ»:

Շերամը մտացրիվ նայեց Քուռ գետի պղտոր ալիքներին ու հառաչեց:

Ավագ որդին Հյուսիսային Կովկասում է, իսկ դասընկերը, Արտավազդը՝ այստեղ: Ցաքուցրիվ եղան մարդիկ... Մեկ էլ հիշեց, որ Երվանդը վեց-յոթ տարի առաջ Ալեքսոլի Արդության դպրոցի և Առևտրական ուսումնարանի ուսուցիչ է եղել: Մի տարի Տաճկաստանից էջմիածին էին եկել հինգ թե վեց վարդապետ: Ու երբ վերադառնում էին Պոլիս, Երվանդը հրավիրեց իրենց տուն, իսկ առանց գուսանի ի՞նչ հրավերք կարող էր լինել: Դրանից հետո հոգևոր հայրերը միաբերան հայտարարեցին.

— Եթե կուզես հայոց երգ լսել, ապա պետք է ունկնդրես Շերամին:

Եվ ահա, տաղերգուն, տրամվայում ծոծվելով՝ գնում է Նախալովկա: Նա թառը դրել է կողքին ու պինդ բռնել: Տնից դուրս գալիս Սալվին հարցրեց.

— Քա՛, շաբաթը քանի՞ անգամ կերթաս Երվանդենց:

— Կերթամ, խո չեմ մնա: Գիտե՞ս Երվանդի հետ ով կապրի, աղջի՛. Հովհաննես Հովհաննիսյանը, հըբը՛... Ընձի որ մկրտեց՝ Շերամ: Երկուսն էլ ընտանիքներով եկել են, որ թուրքի ճանկերից ազատվին:

Երգիչը մտավ այն շենքը, որտեղ ապրում էին Երվանդն ու Հովհաննեսը: Այստեղ նա ոչ միայն հաճույք էր պատճառում իր տաղերով, այլև ընդմիջման պահերին լսում նրանց խոսքը մենշևիկյան դաժան տիրապետության և ազգուրաց դաշնակցականների մասին:

Ուշ երեկո էր, երբ տաղերգուն վերադարձավ և անմիջապես հարցրեց երեխաների մասին:

— Անունդ շատ տվեցին ու քնեցին,— ասաց Սալվին:

— Գիտե՞ս՝ ինչքան կսիրեն քեզ, հայրիկ,— ավելացրեց Արևհատը:

— Գիտեմ, գիտե՛մ,— ծորուն ասաց երգիչը:— Էսոնց պարտ-

քի տակից էլ պտի դուրս գամ, չէ՞, Արև ջան. էդ ավելի դժվար գործ է:

Առավոտյան Շերամը, սովորականի պես, քայլեց դեպի նվագածուների հավաքատեղին: Այդ ընթացքում նա շատ հանգամանքներ ծանրութեթև արեց:

Մեկ էլ նրա առջև, ասես իսկական, կանգնեց Վարդգեսի դասընկերը՝ Սանոյանը: Իր որդու հետ շատ մտերիմ էր, փեսայի՝ Հայկի հետ էլ ընկերություն էր անում: Հիմի Թիֆլիսում է. թե որտեղ է ապրում, երգիչը չգիտի. բայց մի քանի օր առաջ եկավ, կանչեց իրեն նվագելու: Ճանապարհին բացատրեց, թե ուր են գնում:

— Ուստա՛ Գոքոր,— սկսեց նա,— Ղարիբենց Եգորին խո գիտես:

— Լավ,— հաստատեց տաղերգուն,— որ մինուճար մի աղջիկ ունի:

— Էդ է ,որ կա: Դրա հետ ամուսնացել էր մի ամերիկացի:

... Ամերիկացին ինչ-որ ներկայացուցիչ էր եղել Ալեքպոլում. ազգանունը՝ Ջոնսոն: Եկել էր Թիֆլիս: Կինը՝ Ասյան, խնդրեց Սանոյանին, թե ինչպես վարվեն, որ այդ ամերիկացուն ցույց տան, թե հայերը դարավոր մշակույթ ունեն, մեծ արվեստ ունեն: Որոշեցին հրավերք անել ու կանչել Շերամին:

Հրավերքին եկել էին բավական ունևոր մարդիկ: Տաղերգուն էլ այդ տարին հագնված էր շատ համեստ: Նվագարանի շապիկն էլ գունաթափ կտորից էր:

Երբ նա ներս մտավ ու խոնարհ գլուխ տվեց, շատերն իրար նայեցին, քչփչացին և զուսպ կերպով պատասխանեցին նրա բարևին: Բայց երբ նա հպարտ դիրքով բազմեց աթոռին, թառը սեղմեց կրծքին ու սկսեց տաղերի շարանը, ներկաները ժպտացին ներողամտաբար. ոմանք էլ գլխի շարժումով հավանություն տվեցին:

Առաջին երգից հետո բացարձակ լռություն տիրեց: Բոլորը լրջացան և ապա ծափահարեցին: Ծափահարություն հարուցողը «Դու իմ մուսան ես» տաղն էր:

Հետո նա կատարեց նաև ուրիշ երգեր:

Շերամը երգում էր ոգևորված, նվագում եռանդով: Ներկաների մեջ՝ ո՛չ շարժում, ,ո՛չ ծպտուն. ասես կախարդվել էին բոլորը: Միայն Ջոնսոնի կինն էր, որ շշուկով թարգմանում էր երգչի

ստեղծագործությունները ամուսնու համար. իսկ սա գլխով մեկ հավանության շարժում էր անում, մեկ էլ տարուբերում ապշած:

Տաղերգուն հոգնեց, նվագարանը դրեց մի կողմ և կարդաց մի բանաստեղծություն:

Երբ վերջացրեց, ամերիկացին մոտեցավ ու գովեստի խոսք ասաց: Մի փոքր անց, Շերամը նվագարանը զգեստավորեց ու վեր կացավ: Նա մոտեցավ, սեղանին դրած բաժակի միջից տասը ռսկի վերցրեց, իսկ մնացածը թողեց: Ջոնսոնը բացականչեց.

— Օքե՛յ... Իթ իս ջենտլմեն... վերի գուդ...[1]

Հայտնի չեղավ, թե ամերիկացին ու իր գյումրեցի կինը ուր գնացին հետո:

Շերամն էլ գնաց տուն: Նրան ուղեկցում էր Սանոյանը:

Նա երգչին հասցրեց մինչև նրա բնակարանը և հրաժեշտ տվեց:

9

Դուռը թակեցին կեսօրից հետո. կինը բացեց, մի քիչ խեթ-խեթ նայեց այցելուին ու նրա ձեռքը բռնած մանչուկին:

— Բարև՛, Սալվի քույրիկ,— բարեկամաբար ողջունեց եկվորը:

— Բարով էկար... Ու՞մ կուզես:

— Ուստա Գոքորը տունը չէ՞:

— Տունն է. առավոտ կանուխ է եկել,— պատասխանեց տանտիրուհին ու սպասողական նայեց նրան, ապա դիմախաղով հասկացրեց, թե չի իմանում՝ ինչ ասի: Այդ րոպեին ներսից լսվեց Շերամի ձայնը.

— Էդ ո՞վ է, Սալվի:

— Չիտեմ, քեզի կուզե:

Այցելուն բարձր ձայնով կանչեց.

— Ես եմ, ուստա Գոքոր, Երկան Ալեքը:

— Ծո՛, Ալեք ջան, ներս արի,— ձայն տվեց տանտերը. նրա խոսքին հետևեց հողաթափերի քստքստոցը: Դռան մեջ երևաց տաղերգուն.— արի, արի՝ տեսնիմ. ի՞նչդ գտար մեր տունը:

— Մարդ հարցնելով Երուսաղեմ էլ կհասնի, ուստա՛ Գոքոր,— ասաց Ալեքն ու, տղայի ձեռքից բռնած՝ ներս մտավ:

Շերամն արագ հագավ շորերը: Ալեքն անծանոթի հայացքով նայեց Արևհատին, որ դստրիկին էր քնեցնում:

---

[1] Այս մարդը ջենտլմեն է.. շատ լավ է.. Ծ. Հ.

— Աղջիկս է՝ Արևհատը,— ծանոթացրեց Սալվին։

— Գիտես, թե չե՞մ ճանչե, Սալվի քույրիկ. Հայկ Մարկոսյանի կինը չէ՞։

— Հա՛, քոռանա՛մ ես, փեսես էնտեղ մնաց,— լացեց մայրը։

— Բան չկա, քուրըս. էնիկ էնպես արհեստ ունի, որ թուրքի հետ էլ լեզու կգտնի։

Արևհատը ծածուկ սրբեց արցունքը։ Հայրը զարմացած նայեց դստերը և հանգստացրեց.

— Խելառ խո չե՞ս, ընչի՞ կուլաս, Արև ջան... Հայկին ուր էլ գցես, դուրս կպրծնի։

Ալեքն ու մանչուկը գնացին թե չէ, Սալվին դիմեց ամուսնուն.

— Գրիգո՛ր, էսոր ընչի՞ կըսեն Երկան Ալեք. բոյ էլ չունի կարգին։

— Տո, բոյի համար հո չե՞ն դրել անունը, խելո՛ք... Ալեքի պես խնամքով մարդ մեր քաղաքում չկար. խեղճերու, որբերու նեղ օրին հասնող, հոգատար, առատաձեռն մարդ է՝ երկար ձեռք, էլի. դրա համար էլ անունը դրել են Երկան Ալեք.

— Ի՞նչ կըսեր, որ։

— Էգուց հրավերք ունին. ընտրովի մարդիկ պտի հավաքվին իրանց տունը։ Ասաց՝ որ չգաս, համ չենք առնի։ Ջաթի կյանքը դժոխք է դարձել. դու էլ որ չուրախացնես, ուրեմն երթանք ջուրն ընկնինք։

Երբ Շերամը ներս մտավ Երկան Ալեքի բնակարանը, տանտերը թռավ տեղից ու շտապեց նրան ընդառաջ։ Երգիչը սուր աչքով նայեց շուրջը և իսկույն նկատեց՝ սրահի անկյունում բազմել էր մի տղամարդ։ Նրա հագին զինվորական բաճկոն կար. և նկատելի էին ուսադիրների տեղերը։

Առաջին երգը, որ կատարեց Շերամը, Կոմիտասի հավանաձներից մեկն էր, երբ մայր ու որդի հրաժեշտ են տալիս միմյանց։ Դրան հետևեց «Սիրուններ, միք նեղանա» երգը։ Երգում էր նա, բայց աչքը զինվորականի խրոխտ դեմքից չէր հեռացնում. իսկ սա թեքվեց ու կողքի տղամարդու ականջին ինչ-որ բան շշնջաց։ Երբ ծափահարությունը դադարեց, տաղերգուն կատարեց «Անդրանիկին» երգը. ապա նվագարանը դրեց սեղանին, կնտնտոցը՝ արխալուղի գրպանն ու ձխամորձը հանեց։ Զինվորականի մոտ նստած Ալեքը հասավ երգչին.

— Ուստա՛ Գոքոր,— շշնջաց,— գիտե՞ս, որ Անդրանիկը իմ կողքի մարդն է։

— Հաստա՞տ կըսես,— զարմացավ երգիչն ու, լցրած ծխամորձը գրպանը կոխելով, աճապարեց։— Հերոս զորավարը իմ աչքի առա՞ջ... Երազ է ուղղակի...

Ու մինչ Ալեքն ասաց, թե՝ արի ծանոթացնեմ մոտիկից, Շերամն առաջ ընկավ ու երկյուղածությամբ բռնեց զորավարի զորեղ ձեռքը։

— Երջանի՛կ եմ, Անդրանիկ...— հուզմունքից կակազեց տաղերգուն։

Զորավարն էլ ժպտաց թավ բեղի տակ և խոսեց

— Լսել եմ ձեր մասին, գուսան. ականջիս հաճախ է հնչել Գրիգոր Տալյանի՝ Շերամի երգը...

— Շնորհակալ եմ, զորավա՛ր։

Մտերմիկ զրույցն սկսվեց հուզալից և շարունակվեց ամբողջ երեկոյի ընթացքում։ Այն րոպեներին, երբ գուսանը երգում էր, հերոսն աչքը նրանից չէր կտրում. իսկ սա մտքում անվերջ կրկնում էր.

— Մարդ սեփական աչքերուն էլ չի հավատա...

Մի քանի հայրենասիրական և քնարական երգից հետո նա շտապեց զորավարի մոտ և զրույցի ժամանակ, մի առիթով, տեղեկացրեց.

— Գիտե՞ս, որ էդ երգս առաջին անգամ տպվել է «Նվեր Սասնո հերոս քաջամարտիկ Անդրանիկին» վերնագրով, 1905 թվին։

Անդրանիկը թեքվեց, սևեռուն նայեց Շերամին, գլուխը զարմանքով տարուբերեց ու միայն ասաց.

— Շնորհակա՛լ եմ, գուսան. բայց այդ գովքը ավելի շատ վերաբերում է իմ քաջերին։

— Շատ ճիշտ է։ Հիմի լսիր. մի երգ էլ ունեմ, որ քու խոսքիդ հաստատումն է։

Ու Շերամը գնաց իր եռյակի մոտ և բարձր ոգևորությամբ երգեց.

Անվախ ֆիտահնե՛ր, շուրջս բոլորվեք,
Հայրենյաց սերը ձեզ կոչ է անում,
Անսանձ բարկության վրեժով այրվեք...
Արծիվն հաղթական դրոշն է տանում։

Հետո զորավարը պատմեց, թե որտեղ է ծնվել ինքը, որ բանակում է ծառայել և ինչ նպատակներ ունի: Տաղերգուն էլ պատմեց, թե էլ ինչ երգեր է նվիրել հայոց քաջերին և ինչ գրքույկներ ունի լույս ընծայած, ապա ավելացրեց.

— Քեզի պես զենքով չեմ կռվել, բայց ինչքան որ կհասկնամ, երգն էլ զենքից պակաս չէ:

— Իհարկե. երբեմն ավելի զորեղ է,— համոզված խոսեց զորավարը:

Երբ Անդրանիկն արդեն Թիֆլիսում չէր, Շերամն իմացավ, թե ինչ հեռագիր է հղել նա Ստեփան Շահումյանին:

ՓԵՏՐՎԱՐԻՑ ՓԵՏՐՎԱՐ

1

Տագնապալի օրերով սկսվեց 1920 թվականը: Եվ Շերամի ընտանիքում տխուր պահերն ավելի շատ եղան, քան ուրախ: Երեխաներն էին լոկ, որ մի փոքր ցրում էին մեծերի մռայլությունը: Երգչի կրտսեր որդուն էլ վտարել էին դպրոցից ուսման վարձ չտալու համար: Շերամն այնքան նյարդային էր դարձել, որ եղբոր կամ նրա կնոջ հետ ունեցած հուսադրող զրույցներն անգամ ջղայնացնում էին նրան:

Մի օր նա մոտեցավ դստերը, որ տխուր-տրտում նստել էր, ձեռքն ուսին դրեց և ուրիշ ոչինչ: Սակայն Արևհատը դրանից հակառակ զգացումն ունեցավ. փղձկաց ու թոթովեց.

— Բա ի՞նչ անեմ, հերըս. գազանը դեռ նստած է էնտեղ. մի լուր բերող էլ չկա... Ո՞վ գիտե, Հայկի գլուխն ինչ օրին են բերել...

Հայրը չիմացավ՝ ինչ ասի. միայն բերանը բացուխուփ արեց: Եվ լռությունը թուխպի պես ծանրացավ նրա տանը. իսկ ինքը դուրս գնաց ու, պատշգամբում քայլելով՝ ծխեց: Մտավ ներս, թառը շապկահան արեց ու մեղմաձայն սկսեց երգել: Տնեցիները լուռ ականջ էին դնում: Նա կատարեց զվարթ մի տաղ, երևի վշտալի մթնոլորտը ցրելու համար: Միտքը արձվի նման թռավ հեռու՝ մերթ Արմավիր, որտեղ գտնվում էին Վարդգեսն ու Բաղդասարի որդիները, մերթ անօրենի ծիրաններում հեծող հարա-

զատներին ու տառապալից սիրո էակը, որ աչքեր ունի ծավի, խումար, աղեղ ունքեր ունի, որ խարտյաշ կամարներ են...

Տնեցիները կշտամբանքով լի հայացքները հառեցին նրա վրա... Իսկ նա հուզված ավարտեց.

Մերոդ քեզի ինչո՞ւ բերեց ..
Սրտիս կրակ տալու համար

Կնոջ աչքերից երևում էր, որ հիշեց իր ախոյանին՝ սիրուն Վարդուհուն: Սա ինչքան էլ դառնություններ պատճառեց իրեն, չկարողացավ իրենից խլել երգչին: Սալվին հպարտացավ ինքն իրենով ու հաղթական նայեց ամուսնուն:

Ծերամը մեղմացրեց ձայնը. կրտսեր թոռնիկն արդեն փակում էր աչքերը: Նա մտաբերեց իր հին, բայց հոգով նոր մի տաղը:

. Ո՞ւր այն սիրտը, որ ինձ սեր էր խոստանում,
Ո՞ւր այն հոգին, որ կխաղար իմ սրտում ..

«Քսան տարի առաջ եմ գրել... Ինչքա՜ն գեղեցիկ էր Վարդուհին էն ժամանակ: Ինչքա՜ն էլ անուշ ձեն ուներ... Վայթե հիմի էլ նույնն է: Ե՞րբ պիտի տեսնիմ մեկ էլ: Մարդն էլ մեռավ, խեղճը ձեռքը ծոցը մնաց. »

Հետո նվագարանը դրեց մի կողմ ու ելավ պատշգամբ:

Երբ իջավ փողոց, որ գնա նվագածուների հավաքատեղին, նրան մոտեցավ երիտասարդ մի կին ու բարևեց:

— Բարև՛, աղջիկս,— պատասխանեց երգիչը.— ո՞վ ես, ու՞մ աղջիկն ես:

— Պետրոսին հիշու՞մ եք, Պետրոս Ռափայելյանին, որ ձեզ՝ նկարեց Ալեքպոլում:

— Պետրոս Ռափայելյա՜ն, Պետրոս Ռափայելյա՜ն...— մտքի խորքերը պրպտեց տաղերգուն.— հա՛, հիշեցի... Ինչքա՜ն տաղանդավոր տղա էր... Ու՞ր է հիմի. դու նրա ի՞նչն ես,— կցկտուր հարցուփորձեց:

— Ես նրա քույրն եմ... անունս Ջվարթ է:

— Անունդ Ջվարթ է, բայց դու զվարթ չես երևա:

— Եղբայրս չկա...— Ծերամը հոնքերը կիտեց. Ջվարթը շարունակեց.— մենք ընտանիքով Թիֆլիս ենք եկել տասնութ թվին: Եղբայրս սպա էր. էստեղ չմնաց, վերադարձավ Ալեքպոլ, թե՝ որտեղ բանակն է, էնտեղ էլ հրամանատարը պետք է լինի...—

Զվարթը թաշկինակը մոտեցրեց աչքերին: Տաղերգուն հազաց. կոկորդին ասես մի գունդ էր դեմ առել...— Եվ ետ գնաց... Ճանապարհին...— կակազելով, խոսքն ավարտեց Զվարթը,— սպանել էին...

— Վա՛խ, Պետրոս...— հուզված ասաց երգիչը.— քանի՞ տարեկան էր:

— Քսաներկու:

— Ջահել-ջիվա՜ն... շնորհքո՜վ... Կին, երեխա ունե՞ր:

— Կինն էլ է նկարիչ. նկարել է Նիկողայոս Տիգրանյանի մոր պորտրեն:— Շերամը ցավով ծտծտացրեց:— Կինը՝ Սառան եղբորս էլ էր նկարել: Պետրոսի նկարները ծնողներս տեղափոխել են այստեղ:

Այգու մոտ նրանք միմյանց ձեռք սեղմեցին. բաժանվելիս տաղերգուն ասաց.

— Էլի արի մեր տուն, աղջի՛կս:

Զվարթը գլխով արեց ու մտավ այգի:

Շերամը հասավ հավաքատեղին ու հենց որ բացեց դուռը, աղմուկը պարուրեց նրան:

— Ի՞նչ է եղել, տղե՛րք,— հարցրեց Հաջուն:

Սա անտարբեր նայեց վարպետին և ուսերը թոթվեց: Մոտեցավ Կարոն.

— Չգիտե՞ս, ուստա Գոքոր, կարմիր բանակը մոտեցել է Ադրբեջանի սահմանին:

Վարպետը գրկեց դափահարին և ցնծալից բացականչեց.

— Ապրի՛ս, Կարո ջան, լավ լուր հաղորդեցիր:

Նա քիչ մնաց այդտեղ. շտապեց տուն, որ ուրախ լուրը հաղորդի յուրայիններին:

Գարնանամուտի կեսգիշեր է: Խաղաղ քնած են բոլորը: Ոչ մի ձայն չի խանգարում անդորրը: Հանկարծ դրսի դուռը կամացուկ թակեցին՝ մեկ, երկու, երեք... Պատասխան չկա: Միմիայն Սալվին ճիգով մի պահ վանեց նինջը և ականջ դրեց: Դուռն այլևս չթակեցին, բայց ծանր երազը մղձավանջային դարձրեց նրա այգաբացի քունը...

... Երկու սև անգղ փշրեցին լուսամուտի ապակիներն ու կռինչով ներխուժեցին սենյակ: Երեխաներն օգնություն են աղերսում. բայց այս ի՞նչ է, ոչ ոք օգնության չի հասնում... Մյուս անգղն էլ հարձակվեց Արևհատի դստրիկի վրա: Սալվին շուռ

եկավ անկողնում, ասես երկաթե ցցերի վրա էր պառկած: Եվ երբ գիշատիչը թառեց թոռան գլխավերևն ու կտուցը մոտեցրեց տղայի աչքերին, տատը ճչաց ու վեր թռավ: Դրսի դուռն ավելի ուժգին բախեցին, մի քանի անգամ:

— Քա՛, ելեք,— գոչեց նա ու, շալը գցելով ուսերին՝ դուրս նետվեց:

Տեղից թռավ նաև ամուսինը. հողաթափերը գցեց ոտքերն ու վազեց պատշգամբ: Տեսավ, որ կինը բռնել է մեկի թևն ու տանում է տուն: Եկվորը կաղում է և տնքում: Եթե Շերամը չհասներ ու չբռներ մյուս թևը, մարդը պիտի տապալվեր հենց շեմքին:

— Մայրի՛կ, ես եմ... Հայկն եմ, հայրի՛կ...— հազիվ արտաբերեց նա ու նստեց միջանցքի հատակին:

Նրա գավազանը, որ ծառի հաստ մի ճյուղ էր, թռել էր մի կողմ, ոտքերը ծալվել էին, իսկ նիհարած դեմքի վրա աչքերը չէին երևում: Մորուքն ու բեղերը պատել էին դեմքը, այտերն ու վիզը. գլխի մազերը թախկել էին ճակատին՝ ասես սոսնձով կպցրած: Արևհատը զույգ ձեռքով բռնել էր ամուսնու գլուխը և ապշած զննում էր:

— Հա՛յկ ջան, Հա՛յկ ջան...— անվերջ կրկնում էր նա, իսկ ամուսինը ժպտում էր և հարցնում.

— Արև ջան .. բալիկնե՛րս.

Կինը լալիս էր և գլխով անում՝ լավ են, փառք աստծու:

— Ե՛լ, Հայկ ջան, ե՛լ, Հայկո ջան,— լացխնդում թոթովում էր տաղերգուն,— էս ի՞նչ բախտավորություն էր, տե՛ր աստված...

Երեխաները մոտեցել էին և հոնքերը կիտած նայում էին հորը· Ո՞վ է այս մարդը, որ իրենց մորը «Արև ջան» է ասում. աղքատ է երևի. Իսկ Արևհատի դստրիկը կախվել էր մոր փեշից ու նրա ետևից վախեցած դիտում էր անծանոթին.

2

Փեսայի գալուց հետո Շերամը հանգստացավ: Հայկը շատ հոգնած էր, բայց էլի գիշերն ուշ քնեց. ցածրաձայն զրուցում էր աներոջ հետ: Եվ ինչ խնդիրներ ասես, որ չշոշափեցին նրանք գիշերվա այդ խաղաղ ժամերին· Սակայն առաջին խնդիրը, որի լուծումը կախված էր քաղաքական իրադրությունից և ընդհատակի առաջադրանքներից, դա բոլշևիկյան բջիջ կազմակերպելն էր:

Հայկը շատ գաղտնիքներ չբացահայտեց, բայց ասաց, որ իր հետ Թիֆլիս են եկել երկու ընկեր՝ Թաթոսն ու Գևորգը:

Շերամի սենյակում լռություն էր տիրում. բոլորը քնած էին: Ուժասպառ էին եղել թե՛ ուրախությունից, թե՛ հուզմունքից: Բայց նա վաղ արթնացավ ու ելավ պատշգամբ: Նրան դիմավորեց անվանակիցը:

— Գրիգո՛ր եղբայր, կարծեմ հյուր ունեք, չէ՞— հարցրեց:

Տաղերգուն թարս նայեց նրան և ծամծմեց.

— Չէ՛... ի՞նչ հյուր...

Հարևանն աղվեսային մի ժպիտ խաղացրեց դեմքին ու անցավ գնաց: «Էս չեղա՛վ,— մտածեց երգիչը,— Հայկի համար ուրիշ սենյակ պիտի գտնենք»: Եվ իր կարծիքը հայտնեց փեսային:

— Լավ, հայրիկ, Ջիգրաշեն եկեղեցու մոտ մի ընկեր ունեմ. տեսնենք... գերմանական եկեղեցու դեմը մի խուլ փողոց կա՝ էնտեղ:

Հայկը ոտք դրեց փողոց թե չէ, վերուվար նայեց ու գլուխը կախ՝ քայլեց Երևանյան հրապարակի կողմը: Աներն էլ թառն առավ ու տնից դուրս ելավ:

— Քա՛, թա՞ռդ ընչի կտանիս էս ժամին,— կասկածով հարցրեց կինը:

— Շատ հարցեր մի՛ տա, Սալվի ջան. ես գիտեմ՝ ինչու. հետո կիմանաս.

Նա անցավ սովորական ճանապարհով ու հասավ Լազոյի տուն. համառոտակի պատմեց ամեն ինչ: Նա այնքան շուտ վերադարձավ, որ հարազատները զարմացան, բայց ոչինչ չհարցրին: Եվ գնաց գործի·

Երեք օր անց Հայկի ընտանիքը տեղափոխվեց այլ բնակարան: Մինչ այդ աներոջ տնից դուրս չէր գալիս և միմիայն հարազատներին էր պատմում, թե ինչպես Ալեքպոլում թուրք բարձրաստիճան սպաների կանանց համար ընտիր կոշիկներ էր կարում և դրանով նրանց ուշադրությունը շեղում բոլշևիկյան ընդհատակի գործունեությունից: Գաղտնի ժողովներին, թերթերի, ապա և «Հեղափոխական երգեր» ժողովածուի տպագրելուն, թռուցիկներ ու կոչեր տարածելու գործին, իրենից բացի, մասնակցում էին՝ Հ. Ամատունին, Բ. Լոգյանը, Գ. Հանեսօղլյանը և մյուսները:

Ծերամը լսում էր փեսայի պատմածները և մտմտում, որ ժամանակի ոգուն հարմար երգեր ստեղծի: Շարունակում էր նաև ետծաշյա հանպատրաստից համերգները, որպեսզի Հայկի և կազմակերպվող բջիջի գործունեությունից հեռու պահի մենշևիկ լրտեսներին: Երբեմն նա հորինում էր նաև խրատական տաղեր: Սրանք համընկնում էին քաղքենի մարդկանց ճաշակին, չնայած որ մեկ-մեկ վատ չէին ստացվում: Մի անգամ էլ կամացուկ երգեց տարիներ առաջ գրած և այդ օրերին հարմար տողերը.

Հագուստս հանում են, կասեն՝ համբերի,
Ճրագս մարում են, կասեն՝ համբերի,
Օջախս քանդում են, կասեն՝ համբերի.
Մինչև ե՞րբ համբերեմ, մինչև ե՞րբ, ասեք,
Մարդիկ լեզու չունեն, քարե՛ր, դուք խոսեք:

Գիշեր լիներ, թե ցերեկ, երազում լիներ, թե արթմնի, հաճախակի մտաբերում էր Նրան ու դիմում անուշ տեսիլքին.

Խեղճ հովիվ եմ սարի գլխին,
Անտեր, մենակ՝ դարի գլխին.
Ես մատաղ իմ յարի գլխին..

Իսկ այս տաղի կրկներգը պակաս չէր վրդովում մարդկանց, թե ինչպես են երգչից խլում սիրեցյալին, թե ինչպես են անօրեն ճնշողները տանջում նրան:

Ամպամած առավոտ էր, երբ կասկածելի մի մարդ բարձրացավ սանդուղքով: Սալվին իսկույն դուրս ելավ ու հարցական նայեց նրան. ձայն չհանեց: Մոտեցավ ու տեսավ գլխաբաց մի մարդու, որն ուզում էր ծեծել ապակին: Սալվին բացեց դուռը: Ներս մտավ վայելուչ հագնված մեկը և հարցրեց.

— Տանտերն ո՞վ է:

Ահաբեկված կինը ցույց տվեց երկար և մութ միջանցքը, որի վերջում տեգոր՝ Բաղդասարի բնակարանն էր: Անծանոթը ետ-ետ նայելով քայլեց այդ կողմը և շուտով տանտիրոջ հետ եկավ դեպի սանդուղքը: Նա անցավ առաջ ու սողոսկեց դռան արանքով: Հենց այդ րոպեին ներս մտավ Ծերամն ու երկար նայեց մարդու ետևից:

— Էդ ո՞վ էր:

— Չիտեմ. կհարցներ, թե ազատ սենյակ չկա՞:

— Չեղնի՞ Հայկի հոտն առել են...

Եվ տաղերգուն ավելի տագնապեց:

3

Ապրիլը բացվեց բուռն ծաղկումով. բայց ի՞նչ իմանար կանաչ-կարմիր հագած բնությունը, որ դրախտանման վրաց աշխարհում, ցարական բռնակալությունից հետո, տիրապետող է դարձել ժողովրդի ազատությանը հակառակորդ մի իշխանություն: Ի՞նչ իմանային աշխատավոր վրացիները, որ իրենց հետ կողք կողքի տասնյակ տարիներ քրտինք թափող հայ, ռուս և այլ ազգությունների պատկանող բանվորները վրաց ժողովրդի բարեկամները չեն: Բոլշևիկները և սրանց հարող մի խումբ հնչակյաններ, իհարկե, մարդկանց բացատրում էին ճշմարտությունը. բայց նրանցից շատերին նետում էին բանտերը:

Խուզարկությունները ամենօրյա բնույթ ստացան: Օրըստօրե ավելի դաժան դարձան բռնություններն առանձնապես այլազգի գործիչների նկատմամբ: Պուշկինի № 19 շենքի վրա նույնպես կախվեց վտանգը: Սրա բակում և հարևան շենքում ապրող հայերն ու հրեաները կասկածի տակ ընկան, իսկ ասորի ծեփագործ Դավթին մի քանի օր նետեցին պահնորդական բաժնի նկուղը:

Արհեստավոր մարդը պայմանով ազատ արձակվեց: Մութ երեկոյան նա բարձրացավ Շերամի պստշգամբն ու երկնչելով թակեց դուռը: Բարեբախտաբար երգիչը տանն էր: Առանց հարցնելու մոտեցավ և, աչքերը կկոցելով՝ փորձեց կռահել, թե ով է:

— Ես եմ, հարևան, Դավիթն եմ.

Դուռն անաղմուկ բացվեց, ու ծեփագործը ներս անցավ: Նա հակիրճ պատմեց ամեն ինչ: Այդ րոպեին պատշգամբից ոտնաձայն լսվեց. հարևաններից ինչ-որ մեկը գնում էր լվացարանի կողմը: Տաղերգուն աչքով արեց Դավթին ու զայրացած բացականչեց.

— Շատ էլ լավ են արել. տե՛ղն է քեզ: Ա՛յ մարդ, դու քու արհեստին աշե, ի՞նչ գործ ունես ուրիշներու հետ...— Ծեփագործը հասկացավ հարևանի կեղծ զայրույթի իմաստը. ու երբ դուրս էր գալիս նրա տնից, երգիչը բարձրաձայն ասաց.— Էգուց արի, էրթանք տեսնինք՝ մեր Կարապետն ինչ ռեմոնտ կուզե անել:

— Աչքիս վրա,— պատասխանեց Դավիթն ու իջավ տուն:

Բարձրանում է Սալվին սանդուղքով. բայց ինչքան էլ զգույշ լինեն քայլերը, աստիճանները ճռճռում են: Հենց առաջին ոտնատրոփից հետո վերևում կանգնած կինը ձայն տվեց.

— Ո՞վ է:

Մայրն իսկույն ճանաչեց, որ Արևն է. զարմացած ձայն տվեց: Արևհատը սենյակում հավաքվածներին հայտնեց, որ մայրիկն է: Նրանք զվարթ քրքջացին: Հայկը հետո պատմեց, թե ինչ կասկածելի մարդ է երևացել իրենց մուտքում: Եվ եթե հսկիչի աչալրջությունը չլիներ, վատ բան կստացվեր, չնայած որ իրենք սուտ «քեֆ» սարքեցին, ու մենշևիկ խուզարկուն հեռացավ իշացած:

Մի օր էլ հորեղբոր տուն եկավ Կարապետը և խորհուրդ տվեց, որ Հայկի ընտանիքը նորից գա առաջվա տեղը, քանի որ մենշևիկների կյանքն արդեն կարծ է:

— Հա՛, հորեղբայր, մտիհան պտի անեի. էն երգդ, որ կըսես՝ Սեր իմ, սիրուն ես... բառերը գրե՞ս՝ տաս:

Շերամը նախ երգեց ցաշրաձայն.

Յար ջան, յարանիդ մատաղ,
Լեզվիդ, բերանիդ մատաղ,
Լսել եմ՝ յար ես ծարել.
Սերիդ, սիրաձիդ մատաղ:

— Ջարմանալի մարդ ես, հորեղբայր:

— Ընչի՞:

— Բա ի՞նչ. իրեն հերիք չէ, սիրաձին էլ մատաղ կեղնիս:

— Դու վերջը լսե, վերջը...

— Երգե՝ լսեմ:

Եվ վաթսուներեք տարեկան Շերամն այս երգով դիմում է սիրեցյալին, թե պատրաստ է նրա դռանը ղուլ լինել, ոտքի տակ սմբուլ լինել, էշխի համար խաղ կանչել. իսկ եթե դա էլ քիչ է, թև կառնի և բլբուլ կդառնա: Ինչ զոհողության ասես դիմում է սիրահարը, միայն թե անծար չթողնի գեղեցկուհին իրեն: Ոճիր կանի, թող դատի, գերին կլինի, թող ազատի... Եվ այնուամենանիվ՝

Ով էլ ընձեն քեզ խլե,
Տունը քանդե հարամին...

Այս տողերը երգելով, Կարապետն իջավ փողոց:

Հայկն իր ընտանիքով նորից եկավ Պուշկինի 19 շենքը և փոքրը սենյակում արհեստանոց ստեղծեց: Նրա ընկերը՝ Բագրատ Լոգյանն էլ՝ Ելիզավետյան փողոցում. ու մերթ այնտեղ էր հավաքվում բոլշևիկյան ընդհատակյա բջիջը, մերթ այստեղ:

4

Ապրիլի վերջն էր, բայց օդը դեռ սառն էր: Այդ առավոտյան էլ Շերամը, թեթև վերարկուն հագին, մոտեցավ նվագաձուների հավաքատեղիին: «Էս ի՞նչ բան է,— ապշած մտածեց նա, փակ դռան ապակուց ներս նայելով.— մեռելատու՞ն է: Դողդոջուն մատներով զգուշությամբ հրեց դուռը: Սա վնգստաց ծեծված շան պես:— Տե՛ր, ողորմյա, տեր, ողորմյա՛,— շշնջաց նա, մտավ ներս և, աչքերը լայն բացած՝ նայեց շուրջը:

Հավաքատեղին գրեթե դատարկ էր. մեկ-երկու հոգի, մռայլ ու գլխահակ, նստել էին հեռավոր անկյունում և նայում էին հատակին, որի վրա սփռված էին տամայի քարեր, դոմինոյի սև քառանկյունիներ. սրանց սպիտակ բոլորակ աչքերն ասես սարսափած՝ դիտում էին առաստաղը: Մեկ-երկու դափ պատառոտված ընկած էին այս ու այն կողմ. Ահա և Ջումշուդը թառը. Սրա փարդան պատռել էին, իսկ լարերը՝ պոկել: Նվագաձուն էլ նստել էր սեղանի մոտ ու ոչ ոքի երեսին չէր նայում: Շերամը մոտեցավ նրան:

— Դու էլ վախտ գտար կյալու, հելի՛,— մռլտաց Ջումշուդը.

Տաղերգուն մի պահ սառած հայացքով նայեց շուրջն ու դանդաղ նստեց դարաբաղցու կողքը: Սա պատմեց, թե ինչպես երկու հոգի ներխուժեցին և խուզարկեցին ամբողջ շենքը. կասկածելի բան, իհարկե, չգտան, բայց փրփրած, բերաններից հայհոյանք թափելով հեռացան:

Երգիչը երկար չմնաց այդտեղ. Լազոյին պիտի հայտներ կատարվածի մասին: Եվ նա շտապեց Մուղնու Ս. Գևորգ եկեղեցու կողմը:

Եթե մեկնումեկը ուշ երեկոյան անցներ նրա պատշգամբով ու ներս նայեր, կտեսներ, որ երգիչը թղթին է հանձնում իր հուզված սրտի տվայտանքները.

Հերիք երգես, երված բլբուլ,
Փշերի մեջ, չոր չոլերում,
Հերիք մնաս, խորված բլբուլ,
Երգդ այստեղ չեն հասկանում...

Ջարմանալի ելևէջներով ընթացավ այնուհետև Շերամի կյանքը: Անարդարության դեմ գրած ըմբոստ երգերի կողքին երբեմն

հոգին սիրո թևեր էր առնում ու սլանում հեռու: Գովերգում էր Արազում լողացած ու փերի դարձած, ապա ղանավուզ շապիկ հագած գեղեցկուհուն: Երբեմն գուսանի երկինքն ամպում էր և մռայլվում...

Մի քանի քայլ այն կողմ, շենքի ծակատային մասում, ապրում են՝ դուստրը, փեսան ու թոռները. նրանք էլ հանգիստ չունեն: Գրեթե ամեն օր, փոքր սենյակում, որտեղ կոշկակարի արհեստանոցն է, հավաքվում են բջջի անդամները՝ Բագրատ Լոգյանը, Թադևոս Թադևոսյանը, Վազգանուշ Հակոբյանը, Գրիգոր Գրիգորյանը, Աղասին և մի երկու վրացի, որոնք աշխատում են Ադելխանովի գործարանում: Տաղերգուն բոլորին էլ լավ է ծանաչում:

Մի օր էլ, երբ կինը տուն մտավ տրտնջալով, նա հարցրեց.

— Ի՞նչ է եղել, ա՛յ կնիկ:

— Քա՛, աղջիկս սառավ պահակ կանգնելով... Ինչքան էլ երկա՞ր տևեց դրանց ժողովը:

— Սուս կեցի, պե՛տք է... Մի բան տար հագցրու:

Երգիչն էլ իր կողմից էր քողարկում բջջի ժողովը. նա անդադար նվագում էր ու երգում: Որտեղից որտեղ միտքն էր ընկել զոհված շնորհալի մի բանաստեղծ. և այդ օրը կրկնում ու հղկում էր նրան նվիրված տաղը:

. Սգում է Մասիսը, դառն արտասուքը խառնում Արաքսին. չէ՞ որ նրա մուսաներից մեկն էլ խլեցին մահվան ծիրանները...

Սակայն սիրո հնչյունները կրկին ու կրկին համառորեն մխրճվում էին սիրտը

Գալիս եմ դուռդ իբրև մերկ աղքատ.
Մի լինիր անսիրտ, եղիր գթառատ ..

«Ախ, էլի եկար մտար հոգուս մեջ, Վարդուհի...»,— տրտնջաց, հետո նվագարանի լարերը թրթռացնելով՝ ավարտեց.

Առանց քեզ չի փայլի աստղը իմ կենաց

Եվ սիրո նոր տաղը դարձավ տաշած քար ու դրվեց տաղարանի պատին:

Դուստրն այսօր էլ կանգնել է սանդուղքի գլխին և պատրաստ է զգուշացնելու ամուսնուն և նրա ընկերներին, եթե կասկածելի մեկը երևա երկար սանդուղքի թեկուզ ներքևում: Եվ այդ մեկը

հայտնվեց ճաշից հետո, երբ կոշկակարի արհեստանոցում բարձրաձայն վիճում էին։

Առեղծվածային է կյանքը. լուրջ իրադրության մեջ երբեմն առկայծում է զավեշտական դիպվածը...

Ահա, սանդուղքով բարձրանում է մի մարդ։ Քայլերն այնքան հաստատուն են ու ծանր, որ աստիճանները տնքում են, ասես դժգոհ։ Արևհատը լարեց տեսողությունը. նայեց սրտի դողով. «Իմաց տա՞մ...— շանթեց ուղեղում, սակայն նորից նայեց կեղտոտ ապակու միջով.— Ես էլ ե՞րբ պտի մաքրենք, որ մարդ բան տեսնի»։ Նորից լարեց տեսողությունը։ Եկողի հագին փայլուն կոճակներով համազգեստ կա, իսկ գլխին՝ ո՛չ այն է ոստիկանի, ո՛չ այն է երկաթուղայինի պաշտոնական գդակ։ «Հը՞,— ասես ամուսնուն մտովի հարցրեց հսկիչը,— իմաց տա՞մ, թե՞ չէ»։ Մինչ նա կորոշեր, մարդը մոտեցավ ու դուռը թակեց. մի վայրկյան սպասեց. ապա քիթը կպցրեց ապակուն.ու չուռ'ած աչքերով նայեց ներս։ Արևհատը նետվեց արհեստանոց։

— Հայկ,— շշնջաց,— Էնտեղ մարդ կա...— ու թռավ իր տեղը։

Հաջորդ վայրկյանին արհեստանոցում մնաց միայն Հայկը. մյուսները դուրս ցատկեցին ծակատային պատշգամբ, այնտեղից էլ մտան հարևանի տունը։ Տանտերն իսկույն հանեց գինու կիսատ շշերը, սեղանին դասավորեց ափսեները, որոնց մեջ հաց կար, պանիր ու կանաչի։ Հսկիչը նորից հայտնվեց շեմքին ու դիմախաղով հասկացրեց, թե այն մարդը չի հեռանում. ավելի ուժգին է ծեծում դուռը։ Ասաց ու վազեց իր տեղը։ Հայկն անխոս ներս կանչեց ընկերներին ու պատվիրեց.

— Դուք՝ էստեղ կերեք-խմեք, ես մի տեսնեմ, թե ո՞վ է վախեցրել կնկաս,— ու գնաց։ Շուտով լսվեց ընկերների ձայնը։ Երգում էին վրացական երգեր, բաժակները զնգոցով խփում իրար։ Հայկը մոտեցավ մուտքի դռանն ու հարցրեց.

— Ո՞վ է։

Եկվորն իսկույն ճանաչեց նրան ու զվարթ ձայնով կանչեց.

— Ծո՛, Հայկ, Հայկ, ես եմ՝ Աղասին... բա՛ց դուռը։

Հայկը ժպտուն կշտամբանքով նայեց կնոջն ու դուռը բացեց։ Աղասին ոտք դրեց հարթակին թե չէ, նրան գիրկն առավ ու մեծ-մեծ թաթերով սեղմեց կրծքին։

— Արև ջան, հորքուրիդ թոռն է, չծանաչեցի՞ր, մաշինիստ Աղասին։

— Հա՛, հա՛, քուրս. էն Աղասին, որ քեզի պարավոզով հասցրեց Թիֆլիս, մի՞տքդ է:

Մի որպե անց փոքրիկ արհեստանոցում շատ մարդ էր հավաքվել: Ու մտերմիկ զրույցը տևեց մինչև կեսգիշեր:

5

Այս ի՞նչ խաղաղություն տիրեց քաղաքում. ինչու՞ սկվեցին մենշևիկները. ինչու՞ այլևս դաժան հալածանքների չեն դիմում...

Ուշ երեկո էր, երբ դրսի դուռն ուժգին բախեցին: Շերամը հայացքը սևեռեց դեմը նստած դստերը՝ հո էսօր «բոլշևիկները» գաղտնի ժողով չունե՞ն: Արևհատը բացասաբար շարժեց գլուխն ու ավելացրեց.

— Էսօր Բագրատի արհեստանոցում են, հայրի՛կ,— ու գնաց երեխաների մոտ. հայրը հետևեց նրան:

— Տեսնես ո՞վ է էս ժամին,— տրտնջաց նա, բայց դուռը բացեց:

Ուրախ ժպիտը դեմքին ու գրեթե պարելով, ներս ընկավ Ջումշուդը. քիչ էր մնում նրան գլորեր գետին:

— Պա՛... հինչ ա ըլալ, հինչ ա ըլա՛լ, ուստա Գոքոր... տառուսը մեզ:

Տանտերը Ջումշուդին հրեց իր բնակարանի կողմը, իսկ դստերը ձեռքով արեց՝ գնա երեխաներիդ մոտ: Արևհատը ետ-ետ նայելով գնաց: Երբ երկուսը ներս մտան աղմուկով, Սալվին արթնացավ ու հետաքրքրվեց:

— Քնի, Սալվի ջան, քնի,— ոգևորիչ լուր իմանալու սպասումով հորդորեց ամուսինը: Դեռևս հևասպառ թառահարը ընկնելով աթոռին, գոչեց.

— Կարմիր բանակը Բաքին առել ա, է՛, Բաքին, ուստա Գոքոր...

Ջումշուդն ուզում էր վազել հայտնել նաև մյուս նվագածուներին, բայց Շերամն զգուշացրեց.

— Հե՛չ մի շտապի. ո՞վ գիտե՝ ինչպես կընդունեն. մեկը կուրախանա ընձի պես, մեկն էլ կտխրի:

Առավոտը բացվեց թե չէ, երգիչն շտապեց փեսայի մոտ: Հայկը, կաշվե գոգնոցը վիզը գցած՝ նստել էր ծակոտկեն անթիկունք աթոռակին և կոշիկ էր կարում: Նա մուրճով խփում էր ռանտին ու

շվացնում աներոջ երգը՝ «Թառը դոշիս»: Սա, ժպիտը դեմքին, դիմեց նրան.

— Բա կըսես հեչ լսողություն չունի՞ս:

Փեսան խնդաց.

— Լսողություն չունիմ, հայրիկ, բայց քու երգերը շատ կսիրեմ:

— Իմացե՞լ ես,— միանգամից ընդհատեց տաղերգուն:

— Ի՞նչը,— դադարեցնելով գործը և մուրծը օդում պահած՝ հարցրեց Հայկը և կանխեց աներոջ հաղորդումը.— Բաքվի գրավո՞ւմը:

Աներոջ բերանը բաց մնաց. ախր ինքը պիտի փեսային հասցներ տենչալի լուրը:

— Մեզի էլ կհասնի, չէ՞:

— Բա ի՞նչ. խո Վրաստանը աշխարհքից դուրս չէ՞:

— Հայաստանը՞:

— Համբերե, հայրիկ, շա՛տ բան կեղնի. մենք էլ էստեղ քնած չենք:

— Դե լավ, աշխատի, աշխատի, Հայկո՛ ջան...— ու թեթևացած՝ քայլեց դեպի դուռը:

Մի շաբաթ տևեց այդ ուրախությունը: Մենշևիկները հավանաբար գիտեին հարևան երկրում խորհրդային կարգեր հաստատվելու մասին և նորից սաստկացրին իրենց ծնշումը: Հայկի և Բագրատի արհեստանոցներում հաճախակի դարձան ծաշկաժողովները, որտեղ քննում էին ընդհատակյա կոմիտեի հետ կապն ուժեղացնելու և օգնելու խնդիրը, ինչպես նաև կոշկակար բանվորների շրջանում բացատրական աշխատանք կատարելու հարցը: Շերամի այցելությունները Լազոյի տուն նույնպես հազվադեպ չէին:

Մայիսի տոնը բոլշևիկներն անցկացրին քաղաքից հեռու՝ Մանգլիսի անտառում Մի քանի օր հետո լուր ստացվեց Ալեքպոլի մայիսյան ապստամբության մասին: Բջիջն ուշադրությունը լարեց. սպասում էին ցնծալի հաղթանակի, բայց ցավալի տեղեկություն հասավ նրանց: Պարտվել էր ապստամբությունը: Նշանակում է, ղեկավարներին դաշնակները կբռնեն ու...

Շերամն իմացել էր այդ, և գիշերը, նվագելուց եկավ թե չէ, կամացուկ ծեծեց փեսայի դուռը: Պատասխան չեղավ: Երգիչը կռացավ ու բանալու անցքով նայեց: Տեսավ, որ չորս հոգի անլսելի խորհրդակցում են: Թակոցը լսեցին, ձայները կտրեցին ու, հոնքերը կիտած՝ հայացքները գամեցին մեկ դռանը, մեկ միմյանց:

— Հայկո՛, ես եմ։

Փեսան դուռը կիսաբաց արեց և հազիվ լսելի ասաց.

— Գնա քնի, հայրի՛կ... առավոտը կխոսինք։

Առավոտ վաղ, հենց որ Հայկը մտավ նրա սենյակը, աները վեր թռավ ու վախեցած հարցրեց.

— Հը՞... ի՞նչ եղավ...

Մի որպե անց, նրանք նստել էին կիսասենյակում ու խոսում էին։ Պարզվեց, որ ապստամբության ժամանակ Գևորգ Հանեսօղլյանը ղեկավարել է թերթերի, թռուցիկների և հեղափոխական կոչերի հրատարակումն ու տարածումը։ Նրան մահվան են դատապարտել, բայց կարողացել է փախչել Լոռի. ուր որ է, պետք է հայտնվի Թիֆլիսում։ Դաշնակները սպանել են Ղարիբջանյանին, Մուսայելյանին, Սևյանին և այլ ղեկավարների, իսկ Զանգեզուրում անդունդն են նետել շատ կոմունիստների։

— Վա՛խ-վա՛խ-, վա՛խ-վա՛խ .. էդ ի՞նչ զուլում էր, Հայկո ջան,— իր կսկծալի տառապանքը չսզպեց Շերամը

— Հայրի՛կ, մենք էնտեղ պիտի լինեինք։

— Ի՞նչ կխոսիս, դուք է՞լ զոհ գնալիք ..— Եվ տաղերգուն անհանգիստ քայլեց սենյակում։

6

Անցան օրեր. Ուրախալի լուրերի հետ մեկտեղ Վրաստան էին հասնում նաև սրտաճմլիկ տեղեկություններ։ Ադրբեջանի երկնակամարում ծագել էր նոր արեգակ, իսկ Հայաստանը հեծում էր դաշնակցականների ծանր լծի տակ։ Եվ տաղերգու գուսանը մերթ ածապարում էր Մութաֆյանի տուն, մերթ նվագածուների կոլեկտիվ, մերթ կնոջ հետ այցելում մոտիկ ապրող Հռիփին՝ Ջիվանու դստերը։

Մի առավոտ էլ նա արթնացավ հեծկլտոցի ձայնից։ Սկզբում պառկած տեղն ականջ դրեց, ապա նստեց անկողնու վրա և լսեց։ Կանայք հավանաբար զգացին, որ նա արթնացել է, և հեծկլտոցը լացի փոխվեց. Նրա գլուխը ցավում էր կարծատև քնելուց, բայց տաբաթը քաշեց ոտքերն ու մոտեցավ պատին։ Նայեց պատի ետևն ու տեսավ, որ կինն ու դուստրը լալիս են։

— Ի՞նչ է եղել, ընչի՞ կուլաք։

— Հե՛չ, հայրիկ,— կոծկեց Արևհատը։

— Ի՞նչդ թե՝ հեչ,— սկսեց զայրանալ երգիչը.— որ բան չի էղել, ընչի՞ կուլաք, է՛,— պնդեց նա իր հարցումը:

— Հայկը գիշերը գնաց,— վշտալի խոսեց դուստրը.— մի տոպրակի մեջ հաց ու պանիր դրեց, կուրտկեն հագավ ու...— լացը խեղդելով, տեղեկացրեց:

Հայրը չէր իմանում՝ ինչ ասի:

— Հըբը՛...— ծորուն արտաբերեց նա: Դուստրը հասկացավ հոր միտքը:

— Ու՞ր գնաց, ընչի՞ գնաց՝ չիտեմ:

Լռեցին:

Եվ ամբողջ օրը Շերամը տանջալից մտքերի հորձանքում տարուբերվեց թափուր նավակի նման՝ ու՞ր գնաց, ինչու՞ գնաց, մեկնա՞կ էր, թե՞ ընկերները հետն էին... Շտապեց Բագրատի արհեստանոց. սա էլ չկար. Թաթոսն էլ տանը չէր: Ճաշին հասավ Լազոյի թաղը. սա էլ չկար: Կինն ասաց, թե բռնեցին տարան:

Այլևս հարցուփորձ չարեց: Աճապարեց տուն: Ճանապարհին ալեկոծ ապրումների մեջ էր. «Գիտեմ, գիտեմ՝ ուր գնաց. չեղնի՞՝ Ալեքպոլ. ինչդ որ մտքին դրել էր: «Ես խո դեզերտիր չե՞մ,— ըսավ,— ինչպես մյուսները, էնպես էլ՝ ես»: Նա հիշեց իր ու փեսայի զրույցը: Ալեքպոլի Գավկոմի անդամ էին նաև՝ Գևորգը, Բագրատը, Թադևոսը, Աղասին... Մեծ գործ է, որ կանալք էլ են գնացել՝ Վազգանուշը, Վարդուշը... «Է՛հ, վերջը մարդիկ իրանց սրբազան պարտքն են կատարում, կրնա՞ս բան ըսե».

Հետո տաղերգուի միտքը սուրաց հայրենի քաղաքի կողմը: Թազբեհը հանեց գրպանից և ինչքան քաշեց, համրանքը լավ ելք չունեցավ: Բռունցքը բարձրացրեց, որ նետի բակ... Հանկարծ հիշեց, որ դա Վարդուհու նվերն է՝ մաքուր դեղին սաթից:

Շերամը ձեռքը թափ տվեց ու գնաց Արևհատին հանգստացնելու: Հետո հիշեց մի ընկերոջ խնդրանքը՝ երգ գրել իր հարսնացուին նվիրված:

«Է՛, կարո՞ղ եմ գրել...»:

Բայց, այնուամենայնիվ, մտքում սկսեց հյուսել երգի տողերը...

Մոտալուտ աշունն արդեն ցույց էր տալիս իր դեմքը: Հովերի մեղեդիներն ամեն կողմից շոյում էին մարդկանց լսելիքը: Հաճելի զովությունը հաղթել էր ամռան տոթը. արդեն պակասել էր Մթաճմինդա բարձրացողների թիվը:

Ետծաշյա ժամերին տաղերգուն գնում նստում էր Պուշկինի պուրակում, ծանոթների հետ զրուցում: Այդտեղ էր լինում նաև Գուրգենը: Սա վախեցավ, երբ իմացավ Լազոյի ձերբակալման մասին: Պուրակ եկավ նաև նրա հարևանը, որ անտիկվար խանութի վաճառող էր:

Շերամը նրան բարևեց սովորական ձևով ու ծոցագրպանից հանեց նոր ոտանավորը:

— Կարդա, կարդա՛, Գրիգոր դայի,— խոսեց հարևանը:

Գուրգենը միայն գլխով արեց ու տեղը փոխեց հարևանի հետ. ձախ ականջը լավ չէր լսում: Երգիչը թուղթը մոտեցրեց աչքերին ու կարդաց՝ «Երկրի բողոքը».

Ջուլումն իջավ՝ հորքս տունը կործանեց,
Ջալումն ելավ՝ սրտիս իղձը խափանեց,
Հոդեին ընկավ՝ լափեց կարմիր վարդերս,
Հեղեղն եկավ քշեց անգին զարդերս .

Ունկնդիրները տխրեցին. իսկ նա մեկ սրան նայեց, մեկ՝ նրան և թուղթը ծալեց դրեց գրպանը: Գուրգենի հարևանը ելավ տեղից.

— Ես գնամ գործի... ծառայությունն է...

Մի քիչ հետո վազեց եկավ Շերամի կրտսերը· Հայրը տագնապեց.

— Ի՞նչ է եղել.

— Հայրիկ, Վարդն եկավ.

Տաղերգուն ընդոստ վեր կացավ: Մանչուկը վազեց տուն, հայրն էլ ետևից:

Շերամը ելավ բակ, հետո վերադարձավ ներքևի միջանցքն ու բարձրացավ սանդուղքով, մտքում ասելով. «Էս սանդուղքն էսքան երկար չէր ինչդ որ»:

Վարդգեսն անխոս փարվեց հոր կրծքին, իսկ հայրը միայն կրկնում էր.

— Վարդ ջան, Վարդ ջան...

Հետագայում Վարդգեսն ինքը տնօրինեց իր բախտը. ընդունվեց համալսարանի բժշկական ֆակուլտետը և կոնսերվատորիա, աշխատանքի անցավ Արհեստավորաց ակումբի օպերետի խմբում, եղավ ներկայացումների մասնակիցը: Շուտով Պահարեի լիբրետոյի հիման վրա գրեց «Գյուլիզար» երաժշտական դրաման: Եվ Շերամը հուսալի հպարտություն ապրեց. որդին կխորանա երաժշտության մեջ, և իր հին ու նոր տաղերը կփրկվեն կորստից:

7

Դեկտեմբերը սովորականի պես սարսռեցնող էր Թիֆլիսում· Վառելիքը ոսկու գին ուներ։

Բարանայից ու Քարվանսարայից գյուղացիներ էին գալիս՝ որն իր հարազատի տուն, որն ինչ-որ ապրանք վաճառելու, որն էլ պարզապես ծողոպրել էր կրակի բերանից·

Ահա, Քարվանսարայից Բարանա անցնելով՝ եկել Թիֆլիս էր հասել մի աշուղ. Ու երբ Շերամն շտապեց նվագաձուների մոտ, որպեսզի ականջով լսած լուրերն ավելի հավաստի դարձնի, նրան ներկայացրին աշուղին։ Տաղերգուն տեղյակ էր, որ իր դուստրն ու Բագրատի կինը ընդհատակյա կոմիտեից դրամ են ստանում ամուսինների փոխարեն, բայց աշուղի պես հաստատ ոչ ոք չէր ասել, թե Տասնմեկերորդ կարմիր բանակը շարժվում է դեպի Երևան։ Նա երգեց մի բայաթի Կասպից ծովից ծագող արևի մասին· Հենց որ աշուղն ավարտեց, անցավ Քուռ գետին նայող սրահ, Շերամը և մի քանի նվագաձու հետևեցին նրան։ Քիչ անց երգահանն այնքան ոգևորվեց, որ աշուղի սազն առավ ու երգեց իր վաղուցվա տաղերից մեկը։ Ինքն անվանել էր դա «Ընդդիմախոսություն»։

.. Երիտասարդը սազ է վերցրել ու գովերգում է գեղանի կույսին հավատացնում է, որ նրա սերն իր սրտին տիրել է և ինքն աշուղ է դարձել։ Իսկ աղջիկն ասում է, որ տղան սազը մի կողմ դնի, հրացան առնի և գնա թշնամու դեմ կռիվ։ Երբ երիտասարդը թշնամուն կհաղթի, նոր աղջիկը նրան կսիրի։

Տունդարձի ճանապարհին տաղերգուն մտովի շարեց նոր բանաստեղծության տողերը։ Տուն հասնելուն պես, որդուց թուղթ ու մատիտ ուզեց ու գրեց ամբողջը։

Նա գովերգեց վեհ գաղափարի որդիներին. թող կարմիր դրոշը բարձր ծածանվի և թող լիաշեն երկրից վերանան չարի սերմերը։ Այդտեղ նա խորհուրդ է տալիս մոռանալ հին լալկան երգերը, չէ՞ որ աշխարհից ջնջվել է գարշելի նեռը.

Նա համատեղ աշխատանքի կոչ է անում, քանի որ՝

Սրենք մեր խոփեր չութ ու գութանի,
Արդար վաստակը ոչ ոք չի տանի։

Այդպիսի ոգևորություն Շերամը վաղուց չէր ապրել. չէ՞ որ այսօր կամ վաղը Վրաստանում էլ բանվորը կդառնա երկրի տերը։ Վերջին տողը գրեց ուշ երեկոյան։ Տրամադրությունն այնքան բարձր էր, որ կնոջը ձեն տվեց.

— Մի րոպե լսիր, անխե՛լք. էնպես բան է եղել, որ ուրախությունից չգիտեմ՝ ինչ անեմ։

— Ի՞նչ է եղել։

— Հայկոս շուտով կուգա. Հայաստանն ազատվել է ծանր լծից։

Հետո գնաց, որ աղջկան էլ հաղորդի ուրախ լուրը։

Դուռը կիսաբաց եղավ։ Պապը տեսավ, որ սեղանի մոտ նստած թոռնիկները շփոթ էին ուտում։ Մոտեցավ, կսկուծ-կսկուծ համբուրեց նրանց ուռած թշիկները, ապա հարցական նայեց դստերը։ Արևհատը հասկացավ հոր հայացքի իմաստը։ Իսկ հայրը հաղորդեց հայոց հողի ազատագրման մասին, որ լսել էր ընկերներից։

— Աղջիկս լավ չի ուտե, հայրի՛կ,— գանգատվեց դուստրը,— չիտեմ՝ ինչ անեմ։

— Մեկ-մեկ մաքուր օդի դուրս բեր, Արև ջան,— խորհուրդ տվեց հայրն ու շտապեց Բագրատի տուն, որ նրա կնոջն էլ հաղորդի ամեն ինչ։

Չգիտես որտեղից, այդ լուրն իմացել էին նաև երգչի հարևանները՝ Մարտիրոսյանն ու Հակոբյանը։ Եղբայրը գիտեր ու գիտեր։ Նա անասելի ուրախացավ. չէ՞ որ միջնեկ որդին ձերբակալված էր. մենշևիկները նրան արտաքսել էին Թիֆլիսից։ Եվ նա կազատվեր բանտից։

Երեկոյան հարևան անվանակիցը, որ եկել էր Պարսկաստանից և դաշնակցության № 4 ցուցակի կողմնակիցն էր, կամացուկ բացեց երգչի դուռը։ Նա տեսավ, որ հարևանը պատրաստվում է դուրս գնալ։

— Գործի՞ ես գնում, ադաշ,— հարցրեց։

— Բա ի՞նչ անեմ, որ չգնամ,— պատասխանեց Շերամը,— էս տարվա տարին պարապ նստած ընտանի՞ք կարող եմ պահել։

Նրանք միասին իջան փողոց։ Այդ ընթացքում Մարտիրոսյանը հետաքրքրվեց, թե ծի՞շտ է, որ Հայաստանն արդեն թոթափել է դաշնակների լուծը։ Շերամն այնպես կկոցեց աչքերը, որ կարծես հարևանին այնքան էլ լավ չէր տեսնում։ «Ես քու միտքդ

գիտեմ, քամելեո՞ն,— չգիտես որտեղից հիշեց այս օտար բառը,— ես քու ըսաձդ չեմ»:

Անվանակիցը նայեց նրան և հասկացավ, որ երգիչը գաղտնիք հայտնող չէ: «Հապա ասում էին՝ միամիտ մարդ է՞»,— մտաձեց, իսկ հարևանը, թե. — ես ի՞նչ գիտեմ, հազար մարդ, հազար տեսակ խոսք .. կըսեն, էլի, եսի՞մ:

Եվ նրանք ներքևում բաժանվեցին·

8

Շերամի ընտանիքը նոր տարին տխուր դիմավորեց. ո՛չ տոնաձառ, ո՛չ խաղալիք, ո՛չ աղանդներ. երեխաներին էլ ի՞նչ նոր տարի, ի՞նչ երգ ու պար: Նույնիսկ ձյուն չտեղաց, որը միանգամայն ձրի հաճույք էր հատկապես մանուկների համար: Դեկտեմբերի նախավերջին գիշերը ճաշարանատեր Դաթիկոն պահանջեց, որ նրա եռյակը անպայման ճաշարանում լինի, որպեսզի դիմավորեն ամանորը:

Հունվարի մեկի օրը տաղերգուն ոչ մի տեղ չգնաց. իսկ նվագակիցները եկան, որ ուրախացնեն նրան, ընտանիքի անդամներին, առանձնապես թոռներին: Մի երգի սկզբին ընկերները հիշեցրին, թե դա այդպես չէր սկսվում՝

Տոնաձառը կանաչ է, բլբուլն անուշ կկանչե ..

— Է հա՛... Էսօր ի՞նչ օր է,— հարցրեց երգիչը,— նոր տարի չէ՞:

Եվ Կարոն կատարեց տարիներ առաջ հորինած տարբերակը: Շերամը, որ թառով նվագակցում էր, նայեց կնոջն ու երգեց վերջին տողերը.

Մատնուս ակը խալիս է,
Էսօր ինձ աչքալիս է.
Ծաղիկ քաղեմ՝ դեմ էրթամ,
Ֆիդան լարս գալիս է

Անցավ ամանորը, անցավ հունվարի խոնավ սառնամանիքը: Հազվադեպ դարձան իշխանության կամայականությունները: Շերամն այնքան հաճախ էր այցելում արվեստակիցներին, որ սրանք անհանգստանում էին.

— Զեղնի՞ բան է պատահել, ուստա Գոքոր. տուն-տեղ ինչ-պե՞ս են:

— Չէ՛, ի՞նչ պտի պատահի. մեր տան չորս բոլորը ագենտ-մագենտ չի էրևա, ես էլ ըսի, թե նոր բան-ման կա:

Լազոյի ազատ արձակվելու լուրը իմացավ Մութաֆյանից: Սա մթնով ներս ընկավ, թե՝ չե՞ս զարմանա. էլ շպիոն-բան չի երևա մեր փողոցում: Տաղերգուն խնդաց.

— Ընչի՞ պտի զարմանամ. կվախենան, թե հանկարծ բոլշևիկը դուրս թռնի մութ-մութ տեղերից ու իրանց զարկե-սպանե...

Ու երկուսն էլ ծիծաղեցին:

Շերամն ամեն օր դուրս էր գալիս փողոց, մտնում Պուշկինի պուրակ, իբր զբոսնելու նպատակով, կանգնում դիտում էր փոքրիկ հրապարակում խռնված զորքին: Բավական էր, որ մեկ-երկու բառ փոխանակեր մի ծանոթի հետ. իսկույն մոտենում էր հրամանատարն ու բարկացած շպրտում.

— Ծադի մոշորդի աքեդան:[1]

Երգիչը ետ-ետ նայելով գնում էր տուն ու մտքում խնդալով ասում. «Ծո՛, հըլը իդոնց աշե, քեչա հագած սալդատներով կուզեն մերոնց հաղթեն, հայ-հու՛յ... Հեչ չի երևա, թե զինվորներ են, զորք է:— Ու ցածրաձայն քրքջաց.— ոնց որ իշով մաձուն ծախող գեղացի լինեն... խնդալու բան է»: Եվ ծիծաղելով նա տուն մտավ: Կինը վախեցած հարցրեց.

— Քա՛, ի՞նչ էղավ. քեզուքեզ կխնդաս...

— Մի՛ վախենա, Սալվի ջան, խելքս չեմ թոցրել. էսոնց զորքի վրա կխնդամ: Մի տեսնիս... Ա՛յ, հողը ձեր գլխուն, հողը ձեր գլխուն.— փողոցի կողմը դառնալով՝ շարունակեց Շերամը.— էդ հալով էլ ռուս զորքի դեմ պտի կռվին... Կաղ իշով քարավան կմտնին:

Կինը քթի տակ ծիծաղեց:

— Ողորմի Ջիվան տացուի հոգուն. ինչքա՞ն լավ է ըսել, չէ՞. իրա մասին է, բայց էսոնց էլ կսազե...

---

[1] Գնա կորի այստեղից (Կրաց)· Ծ. Հ.

ՃԱԳԵՑ ԱՐԵՎ, ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ

1

1921, փետրվար. Թիֆլիս: Պաղ քամին ոռնում է փողոցներում, խոնավ պուրակներում իրար զարկում ծառերի մերկ ճյուղերը, ներխուժում բակերն ու նրբանցքները, զարնվում փակուղիների պատերին, վեր մագլցում ու կատաղած վագրի նման ետ ցատկում ու գետնատարած սողում դուրս:

Մութ է քաղաքում. մութ է նաև Արևհատի բնակարանում: Կրկնափեղկերի բարակ ճեղքերից թափանցում է լուսնի հազիվ նշմարելի լույսը: Ճերամն ու կինը գիշերում են այստեղ, որպեսզի միասին լինեն, միմյանց սատարող:

Ամայի և լուռ էր փողոցում, բակում, ամենուրեք: Երգիչը գնաց իր պատշգամբը, նայեց չորսդին, վերադարձավ ու նստեց տեղը: Սալվին սթափվեց թմրությունից ու հարցրեց.

— Դուրսը ի՞նչ կա, Գրիգոր:

— Զեն-ձուն չկա, Սալվի՝ անապա՛տ: Արիստակեսին ու՞ր քշեցին էս դահիճները, տեսնիս:

— Աղախպերը[1] կըսե՝ Քութալիսի բանտն է:

— Հա՛...— և փսփսում, որ դուստրը չլսի.— Հայկոս էլ չեկա՞վ...

Ու քթի տակ մղմղացրեց այդ օրերին հորինածը, ասես փեսային նվիրված երգը: Նորից մոտեցավ դռանը, ձեռքով ականջը թեքեց առաջ, որ ավելի լավ լսի հեռվից հասնող ձայները:

— Թնդանոթներու ձենը կտրավ... չեղնի՞...,— անհանգիստ գնաց-եկավ:— Զէ՛, չի կարող պատահել...

Նորից դուրս գնաց, քայլեց պատշգամբում: Խառնիխուռն մտքերից ականջները խշշացին:

Քանի օր է՝ թնդանոթների խուլ որոտ է լսվում հեռվից: Աշխատավոր մարդկանց հոգում լուսավոր հույսեր է ծնում դա: Նրանք գիտեն, որ կարմիր բանակը մոտեցել է Վրաստանի մայրաքաղաքին: Ե՞րբ պիտի նա խորտակի մենշևիկյան խաժամուժի դիմադրությունը և հաղթական դոփյունով անցնի քաղաքի փողոցներով ու հրապարակներով...

---

[1] Աղախպեր մեծ տագրոջն է ասում. Ծ. Հ.

— Քիչ մնաց, քիչ մնաց,— ինքն իրեն կրկնելով նա մտավ իր սենյակը, ստուգեց՝ երեխաները ծածկված են, թե ոչ, հետո պառկեց թախտին, որ մի քիչ ննջի, բայց նորից մոտեցավ սեղանին: Գրիչ չառավ ձեռքը. միայն վերհիշեց իր վաղեմի տաղը, որով դիմում է գարնանը, որ շուտ բացվի և իրեն էլ նոր կյանք պարգևի: Մի րոպե աչքերը փակեց և հանկարծ վեր թռավ ու վազեց կնոջ մոտ:

— Սալվի՛, Սալվի՛, կրակեցին, չէ՞:

— Չէ՛, էլ չեն կրակե:

«Փամփուշտնե՞րը վերջացան, ինչ է»,— մտորեց գուսանը:

Շերամը քիչ էր դուրս գալիս տնից. օրվա մեծ մասը հարազատների հետ էր. երբեմն էլ նոր երգ էր ստեղծում: Վերջին տարիներին չէր լռում նրա քնարը: Ինչքան էլ ծանր լիներ դրությունը, նվագածու ընկերները նրա համար գործ գտնում էին: Հայտնի «Սիմպատիան» լիներ (Ավետիքի պադվալը), թե այլևայլ տներում հրավերք կամ քեֆ, նա ցանկալի երգիչն էր այդտեղ: Ճաշարանը փակ էր, սակայն դրա հաճախորդները լավ գիտեին Շերամի տունը. իսկ նա հո չէ՞ր կարող միշտ հին երգեր հրամցնել երկրպագուներին: Մի անգամ էլ նա կրկնեց տարիներ առաջ հորինածը և ուրախացավ, որ չի մոռացել: Հին բարքերից գանգատվում է ջահել աղջիկը և ըմբոստանում, որ անօրեն ժամանակ է եկել, երբ յարը յարին չի գտնում...

Երբ Շերամը գրում էր «Ինչ բրդել ես» սուր երգիծանքը, կինը դժգոհեց.

— Ամա՜ն, դու էլ... մեր հալը, քու՝ էդ երգերդ:

Ամուսինն ընդհատեց ու մեղմությամբ կշտամբեց.

— Խելառ-խելառ ի՞նչ կխոսիս. որ ես էլ նստիմ ու լամ, բա մեկէլնե՞րն ինչ անեն...— և շարունակեց.

Քանի հարուստ էիր, խիղծդ էր աղքատ,
Ջրկում էիր մարդկանց, տանջում անընդհատ...

Սակայն դրանով նա չբավարարվեց. ստեղծեց «Քյասիբն ու հարուստը» երգը, ուր ծաղրում է հարուստի տմարդի վերաբերմունքը դեպի ընչազուրկը:

Մի օր էլ Սալվին զարմանքով լսեց «Սարեր, կաղաչեմ» տաղը: Նա և՛ հպարտացավ, որ ամուսինը այդ տարիքում նման երգ է ստեղծել, և՛ կասկածեց: Նրա հոգում գլուխ բարձրացրեց սիրո

տառապանքը. «Էլի Վարդուհուն է միտքը գցել»: Բայց այդ զգացումը նա ի հայտ չբերեց. լռելյայն ու սիրով մինչև վերջ ականջ դրեց. միայն ախ քաշեց:

— Տո՛, խելառ, ընչի՞ դարդոտար,— խոսեց ամուսինը.— սրանից հետո էլ էսպես երգեր պտի գրեմ. նշանակություն մի՛ տա:

Առավոտյան նա դարձյալ չլսեց հրանոթների որոտը և շտապեց Մութաֆյանի մոտ, ապա երկուսն էլ վազեցին Լազոյի տուն: Վերադարձավ ճաշին և անմիջապես գնաց եղբոր սենյակը:

— Ե՞րբ պտի գան մերոնք, է՛... Գան՝ պրծինք էս դառը կյանքից,— տրտնջաց Բաղդասարը:

— Քիչ մնաց, կազատվինք սրանց ձեռքից, լա՛վ իմացի.

— Հաստա՞տ:

— Իա՛, մի բան գիտեմ, որ կըսեմ:— Նա աղոտ կերպով տեղեկացել էր, որ քաղաքի բանվորները պատրաստվում են ապստամբության:— Էնպես, որ մերոնք կրակեն, թե չկրակեն, էսօր-էգուց Թիֆլիս են, հըբը՛... —իր խոսքն ավարտեց եղբայրն ու գնաց:

Այդքան ուրախ նրան դեռևս չէին տեսել. այնքան բարձր էր տրամադրությունը, որ տեղը հանգիստ չէր նստում: Իսկ հեռվում նորից որոտացին հրանոթները. մարդիկ նույնիսկ առանձին կրակոցներ լսեցին: Շենքի տղաները առավոտյան ելան փողոց ու ականջ դրեցին.

— Տեսնես ո՞ր կողմից պիտի գան·

Սպասում էին թե՛ հայերը, թե՛ հրեաները, թե՛ ասորիները, թե՛ վրացիները, թե՛ քրդերն ու ռուսները: Դպրոցները փակ էին, բայց դասընկերները հաճախ հանդիպում էին միմյանց և գնում էին, ուր հետաքրքիր էր:

Շերամի կրտսեր որդին, եղբոր թոռը՝ Անդրանիկը, դռնապան Սամսոնի մանչուկը անցան Վորոնցովի կամուրջը, բարձրացան դեպի Ներսիսյան դպրոցի նոր շենքն ու երկաթգծով քայլեցին մոտեցող կրակոցների ուղղությամբ:

— Գնանք՝ կռիվ տեսնենք,— միամտորեն որոշեցին նրանք ու վազեցին առաջ: Բայց տղաների աշխույժ զրույցը միանգամից ընդհատեց մի զինվոր և հրամայեց.

— Սդեք[1]!

---

[1] Կանգ առ (վրաց.) Ծ. Հ.

Նրա հրացանից վախեցած՝ տղաները փախան ետ, գլորվեցին երկաթգծի հողաթմբով և ինչքան ուժ ունեին, սլացան տուն: Սակայն հանգստություն չունեցան նրանք: Մի կտոր հաց կրծելուց և մի կում ջուր խմելուց հետո, իբր զբոսնելու նպատակով, անխափան անցան Գոլովինյան պողոտայով, մտան Միխայլովյան՛ալգին, հետո հասան մինչև Մելիք-Ազարյանցի գեղեցիկ շենքը, իջան մինչև Վերայի կամուրջը, նորից եկան վերև: Ու երբ կանգ առան Արամյանցի հյուրանոցի դիմաց, մտաբերեցին, որ մի քանի ամիս առաջ այդտեղ զգաստ կանգնած էր շոտլանդացի ժամապահը: Սրա հագին վանդակավոր կտորից կարված շրջազգեստ կար, որ ճիծաղ էր հարուցում: Եվ տղաները քրքջացին: Հիշեցին նաև, թե ինչպես իրենք չհեռացան. սպասեցին այնքան, մինչև որ անգլիական բանակի շոտլանդացի ժամապահին փոխարինեց հնդիկ զինվորը՝ չալման գլխին:

2

Գիշերը գնդակոծությունը կրկին դադարեց. տարօրինակ էր: Մարդիկ այնքան էին ընտելացել դրան, որ լրջորեն անհանգստացան: Չլինի՞ թե մենշևիկների թաղիքազգեստ «զորքը» կարմիր բանակի ջոկատներին ետ մղեց քաղաքից: Ո՛չ Շերամը, ո՛չ նրա եղբայրը և ոչ էլ հարևանները հանգիստ չունեցան այդ գիշեր:

— Ի՞նչ պիտի լինի վերջը,— սրտի դողով դիմում էին երգչին մոտիկ մարդիկ. նա կիմանա. չէ՞ որ բոլշևիկ փեսա ունի, ինքն էլ դրանց գաղափարներից հեռու չէ:

— Սովից կկոտորվենք,— տրտնջում էր ծեփագործի կինը՝ Եվան.— երեխեքիս էլ աքսոր կքշեն:

— Գիժ-գիժ դուրս մի՛ տա, դու էլ,— սաստում էր ամուսինը,— մեռած խոմ չե՞նք, որ ես շովինիստները մերոնց ձեռք տան:

— Մարդդ էնպես արհեստ ունի, Եվա՛ քույրիկ, որ անոթի չեք մնա,— հույս էր տալիս երգիչը.— համ էլ ռուս զորքը որ գա, հացն էլ հետը կուգա, մեր ազատությունն էլ:

Լուսաբացից առաջ Բաղդասարը կամացուկ բացեց եղբոր դուռը. նրա ետևից մտավ կինը, որին Արևհատը, նրա եղբայրն ու զավակները Մեծ մայրիկ էին ասում: Ամուսինները եկան, մի պահ լռեցին նստեցին գլուխները կախ, ապա դիմեցին նրան.

— Գրիգո՞ր,— խոսք բացեց Բաղդասարը,— էս ընչի՞ չեն կրակե... խո բան-ման չկա՞:

— Ի՞նչ պտի էղնի, ախպե՛ր:

— Եսի՞մ...

Ծերամը ժպիտը դեմքին բացատրեց.

— Ռուս ժողովրդից ուժով կրնա՞ էղնի, ախպեր ջան:

Ամուսիններն իրար նայեցին:

— Աստված բերնեդ լսե, Գրիգոր,— թեթևացած շունչ քաշեց եղբոր կինը:

— Հե՛չ մի մտածե, Երան, վերջը թե բարի չեղավ, ի՞նչ կուզես ըսա,— համոզված հայտարարեց երգիչը:

Նրանց հեռանալուց հետո նա անհանգիստ անցուդարձ արեց սենյակում, մի քանի անգամ ելավ պատշգամբ, գնաց դստերը հույս տալու և փակ կրկնափեղկերից նայեց փողոց, վերադարձավ տուն, նստեց սեղանի մոտ ու փորձեց գրել: Ապա ուշադիր նայեց բկացավով հիվանդ որդուն ու զայրացավ. «Էնքան դուրս ընկավ, որ մրսեց... Ինչքա՞ն էլ հեռու տեղ էին գնացել Անդրոյի հետ...— Եվ մտովի կշտամբեց, բայց և ուրախացավ.— տեսնու՞մ ես դրանց. բան կհասկանան...»:

Սակայն ի՞նչ էր ստեղծում գուսանը: Իր մետաքսանման տաղերից հետո էլի՞ խոսք ուներ ասելու աշխարհին: Սիրային ե՞րգ էր հորինում, իր գեղեցկուհու՞ն էր գովերգում արդյոք...

Կինս արթնացավ որդու տնքոցից, մոտեցավ, ծածկեց նրան ու, դստեր բնակարանը գնալիս, աչք գցեց թղթին: Երգիչը գրել էր.

Մշուշ, մարախ, բուք ու բորան,
Արնոտ ամպեր չքվան, կորան,
Ծագեց արև, կարմիր արև,
Անգին ընկեր, ողջույն, բարև...

Հետո զանգի նման կոչնակեց նրա լավատեսությունը մի այլ բանաստեղծության մեջ: Մուրճի և գրչի կռիվը եղբայրական հաղթանակով կվերջանա: Գրելն ընդհատեց, կարդաց գրածը, ականջ դրեց շների հաչոցին...

Բնակարանի դուռը թակեցին: Տաղերգուն անմիջապես բաց արեց: Ներս մտան երկու հոգի. ո՛չ բարև, ո՛չ խոսակցություն: Անցան փոքր սենյակը, քչփչացին և անաղմուկ դուրս ելան:

Գորշ լուսաբացը ծանրորեն բացում էր աչքերը, երբ Շերամը ձեռքը թեթևակի դիպցրեց կնոջ ուսին ու ձեն տվեց.

— Ել, Սալվի ջան, ե՛լ... հերիք է քնիս:

— Երբ քնա՞ որ,— դժգոհեց կինը,— գիտես չիմացա՞, որ մարդիկ էկան, գնացին: Ո՞վ էին, Գրիգոր:

— Տո՛, ել, ե՛լ. ուրախ լուր բերին,— և շշնջաց.— Հայկոյիս ընկերներն էին, էստեղի տղերքը... Կուգան, մերոնք կուգա՛ն...

Եվ շտապեցին Արևհատի մոտ: Երեխաները քնած էին, իսկ մայրը ինչ-որ ձայներ լսելով փողոցից, մոտեցել էր լուսամուտին ու զարմացած նայում էր: Հենց այդ պահին հայրը ոտք դրեց սենյակ ու գոչեց.

— Ել, Արև ջան, ե՛լ. հիմի մերոնք կուգան, Հայկը կուգա՛... Տո՛, էս փեղկերը բացեք, մե բացեք, տնաշենե՛ր. թող լույս լինի. մութ տեղն ընչի՞ եք նստել:

Ու մինչ Վարդգեսը բաց էր անում կրկնափեղկերը, մայրը գրկել էր դստերն ու արցունք էին թափում: Երեխաներն էլ ապշահար մեկ սրան էին նայում, մեկ նրան: Առանձին հետաքրքրություն էր ներկայացնում պապը, որ պտտվում էր սենյակում, ասես պարում էր: Հետո նա, առանց քաշվելու, մտավ այս հարևանի տունը, այն հարևանի տունը:

Մինչև որ կինը ելավ պատշգամբ, Շերամն արդեն իջել էր բակ և Սամսոնին ու Դավթին աչքալույս մաղթել: Ահա նա, արագարագ, մեկ-երկու աստիճան լոք տալով՝ կրկին խուժեց իր սենյակն ու նվագարանն առավ ձեռքը. ապա որդուն ուրախացրեց.

— Գիտե՞ս, որ մերոնք կուգան:

Պատանիների խումբը, սանդուղքը դղրդացնելով վազեց փողոց, խուռներամ սուրաց դեպի հրապարակ: Մանթաշովի քարվանսարային հասան թե չէ, անկյունից անհամարձակ, ասես պահմտոցի խաղալով՝ ծիկրակեցին:

— Վա՛հ,— դուրս թռավ մեկի բերանից:

Բոլորը նայեցին նրա հայացքի ուղղությամբ՝ քաղաքային վարչության պատշգամբին: Սրա բազրիքից սպիտակ դրոշակ էր կախված: Թվում էր, թե հերարձակ պառավ էր դա, որ գլխահակ թեքվել է ննջեցյալի վրա: Բայց տղաները ոչ թե տխրեցին, այլ ուրախացան: Չէ՞ որ սպիտակ դրոշակը անձնատուր լինելու նշան է: Շերամի որդին կամացուկ հայտնեց.

— Մենշևիկները հանձնվել են:

Մի անցորդ լսեց այդ և բացականչեց.

— Հանձնվի՞լ, հը՛... ի՞նչ հանձնվիլ, տո՛... փախիլ են, բա՛ս։

Այդ րոպեին Շեյթանբազար կոչված թաղամասի կողմից մոտոցիկլի ճրթճրթոց լսվեց. և մի րոպե անց, անվադողերի դժժոցով Երևանյան հրապարակ խուժեցին երկու մոտոցիկլ։ Դրանք քշում էին կաշվե բաճկոններ հագած և ձեռնափի չափ մթամած ակնոցներ դրած երկու թխադեմ զինվորական։ Նրանց կաշվե սաղավարտների ճակատներին կարմրին էին տալիս աստղերը։ Նրանց իսկույն շրջապատեց այդտեղ հասած բազմությունը։

Պատանիները չէին լսում, թե քաղաքացիները ինչ էին հարցնում եկածներին, բայց ենթադրում էին, որ մարդիկ հետաքրքրվում էին կարմիր բանակի հաղթանակով։ Իսկ հրապարակը հետզհետե լցվում էր հոծ շարքերով։ Խմբերն արդեն գալիս էին կարմիր դրոշակներ ծածանելով ու երգելով։ Քաղաքային վարչության պատշգամբից թռուցիկներ էին շաղ տալիս ժողովրդի մեջ։

— Բա մեր զորքն ու՞ր է,— հանկարծ հարցրեց տղաներից մեկը։

Եվ ամբողջ խումբը շուռ եկավ ու վազեց Պուշկինի փողոցով ներքև։ Շուկայի կողմից, որ «Սալդատսկի բազար» անունն ուներ, ասես նվագի ելևէջներին ենթակա, համաչափ դոփում էին սալահատակը։ Հեծյալները հոգնած, բայց հնարավորին չափ հպարտ՝ օրորվում էին թամբերի վրա։ Նրանք ժպտում էին աջ ու ձախ, ձեռքերի թափահարումով ողջունում ամբողջ փողոցի երկայնքով խումբ-խումբ հավաքված մարդկանց։ Իսկ ժողովուրդը հմայված դիտում էր հաղթության երթը։ Ստեպ-ստեպ լսում էին բարձրագոչ ողջույններ.

— Կեցցե՛ կարմիր բանակը։

— Կեցցե՛ Լենինը։

— Վաշա՛...[1]

— Ուռա՛...

Ու մինչև Մթածմինդա լեռն ու մինչև թուխ ամպերը օդը լեցուն էր փառաբանական կոչերով ու երգերով։

Պատանիների խումբն այնքան էր մոտեցել ձիերին, որ զինվորները թեքվում էին թամբերի վրայից և զգուշացնում, որ մի քիչ հեռու մնան։ Տղաներն սկզբում չէին նկատել, որ ծերունի

---

[1] Կեցցե՛ (վրաց.). Ծ. Հ.

գուսանն էլ է փողոց դուրս եկել: Իսկ նա, հուզմունքից արցունքոտ աչքերով նայում էր հաղթական հանդարտությամբ դեպի հրապարակ ընթացող գնդերին և անվարժ ռուսերենով գոչում.

— Բարով եկաք, տավա՛րիշչ ջան, հազար բարով եկաք, բրա՛տ ջան...— ու ձեռքերը դեպի երկինք կարկառած մրմնջում էր նա.— փա՛ռք քեզ, աստված:

Հեծյալները ծիծաղում էին և նույնպես ողջունում նրան.

— Здравствуй, отец, здравствуй!

— Ողջու՛յն, հայրիկ,— հայերեն արձագանքեց մի զինվոր և թամբից այնքան կռացավ, որ բռնեց երգչի ձեռքը.— եկանք վերջապես:

— Բարով եկաք, ընկերնե՛ր, բարով եկաք:

Հեծյալներից շատերը հայերեն չէին հասկանում, բայց կռահում էին, թե ինչ է ասում մանկան պես հրծվող տաղերգուն: Որտեղից որտեղ հայտնվեց դափահար Կարոն. նրա մի ձեռքին վարպետի թառն էր, իսկ մյուսին՝ իր դափը: Երբ նվագարանը տվեց նրան, սա դարձավ ու ծիծաղեց.

— Ծո՛, Կարո, էս ի՞նչ լավ էրիր:

Ու նրանք հենց փողոցում սկսեցին նվագել ու երգել տաղերգուի հեղափոխական երգերից մեկը. իսկ վերջում՝

Պարզենք դրոշակներ, ելնենք գունդիգունդ,
Փութանք առաջ, առաջ, բանվո՛ր ժողովուրդ.

Երգում էր նա՝ ծերունի գուսանը, կյանքում առաջին անգամ փողոցում, իսկ հայացքը մեկառմեկ զննում էր հեծյալների դեմքերը. գուցե բոլշևիկ փեսան նույնպե՞ս դրանց մեջ լինի: Եվ ամբողջ փողոցը, հրապարակում ծովացած ժողովուրդը, ամբողջ քաղաքը, երգում էր այդ մարտական երգը:

Այդ պահին պատանիների խումբը, Անդրանիկի ետևն ընկած, վազում էր տուն, որ տնեցիներին հաղորդի ուրախ լուրը և պարծենա, թե ինչքան մոտիկից տեսան կարմիր հեծելազորը, սմբակների տակից կայծեր թռցնող նժույգներին ու լսեցին հաղթանակ տարած ժողովրդի ձայնը:

3

Ծերամի օջախում մեծ տոն էր: Այնքան մարդ էր հավաքվել, որ նույնիսկ կանգնելու տեղ չկար: Եկել էին Բաղդասարն ու Երանյակը, Կարապետն ու Մաշոն, Արևհատն ու Արաքսին, Դա-

վիթն ու Եվան, Սամսոնն ու իր կինը՝ Ալմաստը. պատիվ էին արել նաև նրա արվեստակիցները՝ Կարո Եդիգարյանը, Հաջին, Սամսոն Կարապետյանը, Սաշա Օգանեզաշվիլին, նույն ինքը՝ Ալեքսանդր Օհանյանը:

Երբ հավաքվածները վեր կացան գնալու, տանտերն ասաց.

— Ու՞ր եք գնում, մի քիչ մնացեք:

— Չէ՛, հայրիկ, մեզ էնտեղ սպասում են,— ցույց տալով հրապարակի կողմը, ակնարկեց Հայկի ընկերներից մեկը: Երգիչը չհարցրեց, թե ով է սպասում. նա լավ գիտեր, որ նոր կարգեր են հաստատվում և ժողովրդի ջանքերն այդ գործի համար խիստ անհրաժեշտ են: Փեսայի ընկերները գնացին. բայց գուսանը, որ հասել էր իր երազանքի իրականացմանը, ոչ մի ժամ հանգիստ չունեցավ այնուհետև: Ամեն օր՝ մի նոր երգ, մի նոր բանաստեղծություն:

Հաղթանակի երկրորդ օրը անսպասելի եկավ եղբոր կրտսեր որդին՝ Սամվելը. նա հոր տանն արդեն եղել էր, բայց հորեղբորը չայցելել չէր կարող: Եկավ՝ կաշվե բաճկոնով, կաշվե կեպիով, փայլուն սապոգները ոտքերին:

Բոլորը վեր թռան տեղներից: Սամվելը նետվեց հորեղբոր կողմը, ապա նրան գիրկն առավ Սալվին.

— Բոյի՛դ մեռնեմ, Սամվել ջան. դու Բաքու չէի՞ր:

— Բա որտե՞ղ էր, Սալվի,— հարեց երգիչը,— չգիտե՞ս, որ տղեն Լեգրանի շոֆերի օգնականն է:

Սամվելն ուղղեց գլխարկը, գոտին պնդացրեց, պատվի առավ և ասաց.

— Հորեղբա՛յր, կարևոր գործ ունեմ, պետք է գնամ:

— Գնա, բալամ, գնա. դու էլ գնա,— և ռուսերեն ավելացրեց.— իդի, դորոգոյ:

Սամվելն արագ ելավ դուրս, իսկ հորեղբայրը նստեց և սկսեց գրել:

— Իա՛, էս ընչի՞ բան դուրս չի գա,— բարկացավ և թուղթը շուռ տվեց:

Շերամի կրտսեր որդին իր հասակակիցների հետ անդադար թափառում էին քաղաքում, գնում մերձակա ավանները, որ տեսնեն, թե ինչ նոր բան կա: Ավագ որդին էլ ուսուցչուհի էր գտել, որ եղբայրը պարապի և ուսումը շարունակի:

Գուսանը նոր ոտանավոր էր գրել և մտմտում էր, թե ուր տանի, որ տպագրեն: Մեկ էլ հիշեց, որ Թիֆլիսում հայերեն շաբա-

թաթերթ է լույս տեսնում: «Ի՞նչ էլ մազալու անուն են դրել՝ Կարմիր աքլոր,— նկատեց մտքի մեջ և ուղևորվեց խմբագրություն: Հասավ ու մանրազնին դիտեց հին Թիֆլիսին բնորոշ շենքը, որ փայտե դրվագներով ընդարձակ պատշգամբ ուներ, որի ծաձկի տակ՝ փորագրված կամարներ, իսկ շքամուտքի առջև քարե լայն սանդուղք կար: Մուտքի դուռը նույնպես փայտյա քանդակներ ուներ, որոնց ետևը փայլում էր ապակին: «Թավա՞դ է ապրել էստեղ, թե՞ մեծ նկարիչ,— մտածեց տաղերգուն ու զգուշավոր քայլերով բարձրացավ աստիճաններով: Նա նկատեց, որ դռան աջ կողմում բռնակ է կախված:

— Զանգի համար է, գիտե՞ս,— եզրակացրեց, բայց ձեռք չտվեց դրան:

Թեթևակի վարանումից հետո Շերամը բարձրացավ փայտե սանդուղքով ու կանգ առավ մի շքեղ դռան առաջ: Եվ քանի որ մի քիչ մութ էր այդտեղ, աչքերը կկոցելով կարդաց ցուցանակն ու անհամարձակ թակեց: Ներսից լսվեց՝ համեցեք: Երգիչը հրեց դուռն ու նայեց ներս: Սեղանի ետևը նստած էր լայնաձակատ մի մարդ:

— Մտեք, մտեք, մի՛ ամաչեք,— բամբ ձայնով հրավիրեց նա Շերամին:

Տաղերգուն մտավ ներս ու նայեց աջ ու ձախ: Մարդը ծիծաղեց:— Ներս արի, ուստա՛ Գոքոր, ներս արի:— Ու մոտեցավ, որ օգնի ծերունի գուսանին: Սա ձեռքով արեց՝ պետք չէ: Մի ակընթարթ նայեց շուրջը:

— Շնորհակալ եմ,— ասաց և հայացքը գամեց խմբագրի վրա:— Է՛... դու ինձ որտեղի՞ց ես ճանաչում:

— Ճանաչում եմ, էլի, հայրիկ. արի նստիր.— և նա աթոռ առաջարկեց:

Շերամը նստեց ու մեկ էլ ուշադիր նայեց նրան:

— Գյումրեցի՞ ես,— հարցրեց:

— Ո՛չ, վարպետ, գյումրեցի չեմ. անպայման գյումրեցի՞ պետք է լինեմ, որ քեզ ճանաչեմ: Ես Թոուզ գյուղից եմ, գիտե՞ս, Շամշադինից:

— Մի քիչ գիտեմ... Ղարաբաղին մոտի՞կ է:

— Հա՛, մոտիկ է:

— Է՛, անունդ ի՞նչ է:

— Ես գրող եմ, հայրիկ. անունս Մաթևոս է, ազգանունս՝ Դարբինյան, լսե՞լ ես:

— Ի՞նչ մեղքս թաքցնեմ, Մաթևոս ջան, դեռ չեմ լսել... Հա՛, իսկապես, Վարդգեսիս ծանոթն ես, չէ՞:

— Այո,— մի քիչ ուշացած պատասխանեց խմբագիրը.— Վարդգեսի հետ միասին ենք աշխատելու. հայ արվեստի տուն ենք ստեղծում՝ Հայարտուն:

— Է՛, դու խմբագիրն ես, չէ՞:

— Ուրիշ մարդ որ չլինի, ես եմ:

Տաղերգուն ժպտաց և հոնքի տակից նայեց Նրան:

— Կերևա՝ հանաքչի ես:— Մաթևոսը որոտալից ծիծաղեց:— Մի ոտանավոր եմ բերել, տա՞մ:

— Տուր, իհարկե, տուր, Շերամ. թթու հո չե՞ս դնելու:

Այս անգամ երկուսն էլ սրտանց ծիծաղեցին: Տաղերգուն մատները մի թեթև թքոտեց ու ծոցագրպանից մի թուղթ հանեց տվեց խմբագրին.

— Մի տես՝ բանի նմա՞ն է:

— Եղանակ է՞լ ունի:

— Դեռ չէ:

Խմբագիրը վերցրեց երկծալ թուղթը և կարդաց.

— «Նոր արեգակ»... լա՛վ է,— և ընթերցումը շարունակեց.

Արի, աքլա՛ր, կարմիր աքլար,
Ձեն ձենի տանք ու կանչենք,
Ընկնինք ման գանք արար աշխարհ,
Ջանգի նման ղողանջենք.

— Հիանալի՛ է, վարպետ,— բացականչեց խմբագիրը:

— Տկինը կարդա, Մաթևոս ջան, տկի՞նը,— կեսկատակ մեջ գցեց տաղերգուն:

... Հաջորդ տողերում նա կոչ է անում, որ ձեն տան բոլոր բանվորներին ու մշակներին, աշխարհի բոլոր տանջված մարդկանց, թե ծագել է նոր արեգակ՝ Ելեք տոնենք նոր տարի:

— Լավ է, լա՛վ է,— ժպտուն հայացքը ուղղելով ծերունուն, խոսեց Մաթևոսը:— Օհո՛, զատիկն ու մայիսն էլ ես միացրել իրար, վարպետ:

— Դե... էդպես է, էլի:

Դարբինյանն առանձին պաթոսով կարդաց վերջին տողերն ու երկար նայեց նրան:

— Է՞, բանի նմա՞ն է,— հարցրեց երգիչը:

— Իսկակա՛նն է,— համոզված ասաց Մաթևոսն ու թուղթը դրեց սեղանի մեջտեղի դարակը.— հենց առաջիկա համարում կտպենք:

— Շնորհակալ եմ,— ոտքի կանգնելով՝ ասաց տաղերգուն.— ցտեսությու՛ն:

Դարբինյանը պինդ սեղմեց նրա ձեռքն ու, հրաժեշտ տալիս՝ հիշեցրեց.

— Շուտ-շուտ արի, ուստա՛ Գոքոր, աշուղ Շերամ, վարպե՞տ. շուտ-շուտ արի:

4

Կյանքի արթնացման որքա՞ն պահեր են լինում վաղ առավոտյան...

Արեգակն իր առաջին շողերով կյանք է պարգևում աշխարհին, այգաբացին են ծնվում մանուկներ անթիվ, առավոտյան են հնչում դպրոցի զանգերը, լուսաբացին են արոտ տանում հովիվներն իրենց կուտակ-կուտակ ամպերի նման հոտերը: Վաղորդյան ժամերին են հպարտ աքաղաղները արթնացնում մարդկանց, արևաձագին են շաչում գործարանների շչակները և արարման կանչում աշխատավորներին, այգաբացին է հնչում հորովելը ռանչպարի...

Եվ մի պաղ առավոտուն էլ բարի լույս ծագեց գուսան Շերամի հարկի տակ: Արթնանալուն մոտ էր, երբ ականջին հասավ դստեր անունը.

— Արևհա՛տ...

Ցատկեց տեղից, մի պահ սպասեց՝ ձայն չկա. գուցե թվա՞ց իրեն: Արագ հագնվեց և այն է, ուզում էր ոտքի կանգնել, մեկը դարձյալ կանչեց ներքևից.

— Արևհա՛տ... Արև՛...

Թափով նստեց թախտին և, աչքերը լայն բացած՝ ձեռքը ետ տարավ, ցնցեց կնոջ ուսը: Սալվին բացեց աչքերը.

— Քա՛, ի՞նչ է եղել:

— Սու՛ս,— ամուսինը մատով խաչեց շրթունքները,— հըլը ականջ էրա:

Կինն էլ նստեց տեղում: Ու հենց այդ վայրկյանին՝

— Արև՛... հայրի՛կ...

Մի՞թե կարող էր այլևս հապաղել: Ոստնեց դրսի դռան կող-

մը. փորձեց բաց անել՝ չկարողացավ. ու՞ժը չպատեց, ինչ է... Բայց չէ՞ որ նման դեպքում ամենանվազ մարդն էլ առյուծ է դառնում: Ամբողջ կարողությամբ ձգեց՝ չեղավ, ոտքով հարվաձեց, պոռթկումով բռնցքահարեց՝ չբացվեց: Նորից ձգեց մոլուցքով... Եվ անընդմեջ կրկնում էր.

— Հայկո՛ս եկավ, Հայկո՛ս եկավ... Հայկ Մարկոսյանն էկավ...

Նրա կողքին կանգնաձ էր Սալվին:

— Քա՛, ընչի՞ չի բացվի, քոռանա՛մ ես... ժանգոտե՞լ է:

Ձերամը հայհոյեց ու նորից քաշեց փականքը:

— Հա՛յկ, Հայկո՛ ջան...— թրթռաց նրա ձայնը.— ընչի՞ ուշացար, տնաշենի տղա...

Կինը գլխաշորի ծոթը մոտեցրեց աչքերին: Այդ ժամանակ դուռը բացվեց: Ու երգիչը սուրաց ներքև. նրա ետևից էլ՝ Վարդգեսը: Հայկն աներոջն առավ թևերի մեջ: Վարդգեսը ուսից իջեցրեց գյուղացու խուրջինը:

— Արևն ու՞ր է, հայրիկ,— կմկմաց Հայկը: Առանց նրա հարցին պատասխանելու, աները գոռաց.

— Սալվի՛, տո մե աղջկաս կանչե, աղջկա՛ս:

Այս աղմուկն արթնացրեց նաև Բաղդասարին ու կնոջը:

Ահա, փեսա և աներ դանդաղ բարձրանում են վերև: Վարդգեսն էլ խուրջինը ուսն է գցել ու հետևում է նրանց: Հազիվ էին նրանք հասել վերևի աստիճանին, երբ Արևհատը նետվեց ամուսնու գիրկը: Նա ուժ չուներ մի բառ իսկ արտասանելու:

Հարևանները տեսան, թե ինչպես հարազատները գտան միմյանց ու քաշվեցին իրենց կացարանները: Արդեն միջանցք էին դուրս եկել նաև Հայկի փոքրիկները: Հայրը մեղմորեն մի կողմ հրեց կնոջը և գրկեց զավակներին:

Թվում էր, թե երգչի հոգին հանգստացավ. փեսան եկավ ու իր ընտանիքի գլուխն անցավ. կշարունակի բանեցնել արհեստը, լավ գործ կանի, լավ էլ տուն կպահի: Այո, որոշ ժամանակ նա հանգիստ էր: Բայց երբ ավագ որդին ստիպված եղավ բժշկական ուսումը շարունակել Դոնի Ռոստովի ինստիտուտում, ձեռքն առնելով աստանդականի ցուպը, հայրը տխուր օրեր ապրեց: Դրան ավելացավ եղբոր՝ Բաղդասարի մտահոգությունը միջնեկ որդու ուշացման կապակցությամբ: Բացի այդ, ինքն էլ պետք է շարունակեր ապրուստ հայթայթել այդ զզվելի ճաշարանում:

Ծանր էին Ձերամի խոհերը. բայց նա հաձույքով ընդունեց

փեսայի խնդրանքը՝ գնալ ուրախացնելու ընկերներին. իսկ նրանք խումբ-խումբ այցելում էին Հայկին և շնորհավորում հաջող վերադարձը:

Ահա, Շերամը նստել է դստեր հյուրերով լեփ-լեցուն բնակարանում ու պայծառ հայացքով դիտում է խնջույքի նախապատրաստությունը: Հայկը հրավիրել է ոչ միայն մտերիմներին ու հարազատներին, այլև կուսակցական և արհեստակից ընկերներին: Եվ ահա եկան նրա ընկերները: Կոշկակար Մխիթարյան Դավիթը նույնիսկ տկծորով գինի էր բերել: Գուսանի համար հետաքրքիր էին նրանք: Եվ նա, դիմավորելով ամեն մեկին, մտաբերում էր նրանց տարօրինակ մականունները և զուսպ ծիծաղում: «Շատ բամբառակ է Հայկոս, հա՜: Ի՞նչ խնդալու անուն ըսես դրել է ընկերներու վրա»: Իր մականունը շատ հասարակ է՝ Պուշկինսկի Հայկ, պրծավ գնաց. իսկ, ա՛յ, հիմա որ ներս մտավ՝ քեֆը լավ, Ինդուս Լևոնն է: Ծննդյան անունն, իհարկե, Լևոն է. բայց որովհետև հնդիկի նման թխադեմ է, Հայկը նրա անունը դրել է Ինդուս Լևոն: Մյուս Լևոնի մականունը Բեղերով Երեխա է: Ա՛յ, տեսեք, ի՞նչ բարեհամբույր դեմք ունի և մանկան ժպիտ. ձայնն էլ մանկական է. դրա համար էլ անունը մնացել է՝ Բեղերով Երեխա:

Ահա եկավ Գյագուռի Թաթոսը՝ տանտիրոջ մտերիմ ընկերը: Սրա պապը հիվանդ ձիեր է գնելիս եղել և բուժելուց հետո՝ ծախել. այդ գործը կոչվել է գյագուռի փեշակ:

Սանդուղքով բարձրանում է գիրուկ Բագրատ Լոգյանը իր կնոջ՝ սիրունատես Ամալյայի հետ: Բագրատը նույնպես ծանր օրեր է տեսել, ինչպես Հայկը:

Եկան՝ Ֆիդո Արշակը, Ալեքսանդր Շահսուվարյանը: Երբ ներս մտավ հարևան շենքում ապրող դերձակը, ոմանք փոթկացրին: «Կայնած Մեռել» մականունը շշուկով անցավ հավաքվածների միջով: Տաղերգու գուսանն անչափ ուրախացավ, երբ տեսավ եղբոր որդուն՝ Կարապետին, և այն էլ թառը ձեռքին: Մի քիչ հետո, պատյանով դափը թևի տակ սեղմած, արագ-արագ բարձրացավ Եդիգարյան Կարոն: Սրա հայտնվելն էլ ժպիտ առաջացրեց: Չէ՞ որ դա ինքը Քոթի Մրոն է:

Բոլորի ուշադրությունը գրավեց բարձրահասակ, համակրելի արտաքինով Սաշա Օգանեզաշվիլին: Սրա քամանչան դրված էր ծաշակով կարված պատյանի մեջ: Երբ նա ոտք դրեց տուն, բոլորը գլուխ տվեցին: Սաշան սեղմեց Կարապետի, ապա Շերամի ձեռքը և խոսեց.

— Հաճույքով եկա էստի, ուստա՛ Գոքոր։ Գիտենաս, որ քու խաթրը շատ մեծ է, ախպե՛ր։

— Շնորհակալ եմ, Սաշա ջան։ Փեսիս հետ ծանոթ չե՞ս։

— Ո՞րդիան պտի ծանոթ ըլիմ, ուստա՛ Գոքոր. մենակ էնքան գիտեմ, վուր քու փեսեն է. նշանակում է՝ լավ մարդ է,— և նա մոտեցավ ու ձեռք տվեց Հայկին։

Եվ Հայկ Մարկոսյանի բնակարանում ծայր առավ ու ծավալվեց տաղերի ծփանքը։ Ամենից շատ երգում էր անները։ Նրան համահնչյուն նվագում էին թե՛ Կարոն, թե՛ Սաշան. իսկ Կարապետը հորեղբորն օգնում էր իր թառով։ Մեկ էլ Շերամն ինչ-որ բան ասաց Սաշային։ Ու երբ լռություն տիրեց, սա նվագեց Սայաթ-Նովայի «Աշխարհումս ախ չիմ քաշին». Կարոն էլ երգեց։

Տաղ տաղի ետևից, երգ երգից բխող, պարեր կրակոտ։ Իսկ Շերամն այդ երգահանդեսը պսակեց Նաղաշ Հովնաթանի «Վրաստանա գոզալները» գովքի իրեն արժանի կատարմամբ։

Հեռվում իրենց ծուղրուղուն զլեցին աքաղաղները։ Նրանց ձայնակցեցին գործարանների շչակները։ Քաղաքն արթնանում էր խաղաղ քնից։

5

Երկրորդ ազատաշունչ գարունն է Շիրակում։ Եվ իր ծննդավայրին այցելության է եկել կարոտած զավակը, հինավուրց Կումայրիի նորագույն ժամանակների որդին՝ Շերամը։ Ահա նա իր եղբոր՝ Հարություն Տալյանի հարկի տակ է։ Նրան կանչել են, որ իր տաղերով ուրախացնի մարդկանց, երազանքներն առավել պայծառ դարձնի։

— Որ չկանչեին էլ, գիտես թե չպտի՞ գայի, հա՛րս ջան,— ասում է նա եղբոր կնոջը՝ Սոֆիկին,— կրնա՞մ մի որպե մտիհան անեմ անուշ վաթանս... Միտքդ կուգա՞ հին երգս՝

Անուշ վաթան, քեզնից բաժան մնացի...

— Էդ երգդ շատ տխուր է, աղա ջան,— հիշելով նահատակ ամուսնուն, թոնթորաց Սոֆիկը։

Պայթում են բողբոջներն այգիներում և արդեն բացված ծաղիկները լուսեղեն ժպիտներով ողջունում են մարդկանց։ Բայց այս ի՞նչ որոտ է Ալաջայի կողմը։ Շերամը հագնում է շորերը, որ գնա քաղաքամեջ։ Նրա կուրացած մայրը՝ Խաթունը, առաջվա

պես թախտի անկյունում նստած, հագուստի շրշյուն է լսում և հարցնում.

— Գիրքո՞ր:

— Ի՞նչ է, մա՛ ջան:

— Տե՞ղ կերթաս:

— Հա՛, մա ջան, կերթամ տեսնիմ, թե ով որ ընձի կանչել է, ի՞նչ կըսեն, ե՞րբ պտի սկսենք գործը:

Մայրը ձայն չի հանում. միայն մտմտում է, թե ի՞նչ անհանգիստ մարդ է որդին. ջահել ժամանակ այդպես, հիմա այդպես. և մտորումը եզրափակում է ախ քաշելով:

Որդին կարծեց, թե մայրը ննջեց. դուռն անաղմուկ բացեց ու դուրս գնաց: Եվ ահա նա ընկերների շրջապատում է: Ոմանք կարոտով վրա են պրծնում, գրկում նրան, ոմանք հարգանքով բարևում են:

— Ծո՛, տղերք, էդ ի՞նչ տրաքոցներ են Ալաջայի կողմը,— հետաքրքրվեց տաղերգուն:

— Չիտե՞ս, ուստա Գոքոր,— հարցի նման պատասխանեց ջահել նվագածու Արծրունը.— մեր կառավարությունը որոշել է ջրանցք շինել, որ Շիրակի դաշտերը ջրվեն, չոր հողերը բաղ ու բախչա դառնան:

— Ի՞նչ կըսես... տո՛, էդ ի՞նչ լավ բան է: Խեղճ գյուղացիք մեռան քարուքռայի հետ կռիվ տալով:

— Հա՛, մեր պետությունը Շիրակ գավառը դրախտ պիտի դարձնե,— ավելացրեց Էրզրումցի Գևորգը:

Շերամը նստեց, էլի հարցուփորձ արեց և իմացավ, որ Լենինը նամակ է գրել Կովկասի բոլշևիկներին և խորհուրդ է տվել սկսել ոռոգման գործը, իսկ նամակը Հայաստան է հասցրել Ալ. Մյասնիկյանը:

— Տղե՛րք,— կրկին խոսք բացեց երգիչը,— իսկ գիտե՞ք, որ Շորագյալի հողերը ջրովի դարձնելը վաղուց ժողովրդի մտքի մեջ եղել է.— մի ակնթարթ ձայնը կտրեց, նայեց ընկերներին և սկսեց.— աշուղ Մալուլ կար, գիտե՞ք:

— Չիտենք, չիտենք, էդ է՞լ չիտենք, ուստա՛ Գոքոր,— պարծեցավ դափահար Թաթոսը:

— Իշտը՛, էդ Մալուլը մե միտքմ է հայտնել երգով, թե խնդիրը պետք է հասցնել «Մշակ» թերթին. ինչքա՞ն լավ կեղնի, որ Արփաչայի ջուրը իզուր չերթա կորի, իսկ Շիրակի հողերը ծարավ մնան: Ախր ինքն էլ որ պարտիզպան է եղել, գետի իզուր հոսելը

սրտի վրա դարդ է մնացել: Մեծամեծ մարդիկ լսել են ու բանի տեղ չեն դրել. գետի առաջն առնեին, լիճ կապեին ու ջրեին դաշտերը: Ու նրա բաղձանքն էդպես անկատար է մնացել:— Մի պահ լռեց.— բա մեր Ջիվանի՞ն...— Ջիվանու անունը լարեց ախալցիխեցի Վաղոյի ուշադրությունը:

— Ի՞նչ է ըսել Ջիվանին,— հարցրեց նա:

Տաղերգուն ծիծաղեց նրա անտեղյակության վրա և պարզաբանեց.

— Ջիվանին էլ երգ է կապել. ըսել է՝ Դարձիր, ո՛վ Ախուրյան, դարձիր:

Վաղոն ընդհատեց նրա խոսքն ու, նվագարանը դեմ անելով՝ խնդրեց.

— Ղուրբա՞նդ էղնիմ, ուստա Գոքոր, մե երգե, էլի:

Շերամը ժպտաց, թառն առավ ու սկսեց նվագել ու երգել.

Ջուր ես հոսում աննպատակ,
Դարձիր, ո՛վ Ախուրյան, դարձիր,
Ծարաված է ամբողջ Շիրակ,
Դարձիր, ո՛վ Ախուրյան, դարձիր...

Մյուս օրը Շերամը մտքին դրեց գնալ Քաղաքային խորհուրդ: Եվ ահա, խոհուն ժպիտը դեմքին, անցնում է նա փողոցով: Ծանոթները բարևում են նրան, իսկ ինքը մատները մոտեցնում է գլխարկի հովարին, գլուխը մի փոքր խոնարհում և պատասխանում ողջույններին: Հանկարծ նրա ականջը որսում է իր երգի ելևէջները. մի պահ կանգնում է և փորձում որոշել, թե ով է երգողը: Գլխի է ընկնում, որ դիմացի մայթին աշխատող քարտաշն է. տաշում է քարն ու հետն էլ մղմղացնում.

Դու իմ մուսան ես...

Տաղերգուն ներողամտաբար ժպտում է երգի աղավաղումների համար, անցնում փողոցն ու կանգնում քարտաշի գլխավերևը: Երբ բանվորը վերջացնում է երգը, բարևում է նրան: Քարտաշը բարձրացնում է գլուխն ու պատասխանում:

— Էդ ի՞նչ ես երգում,— հարցնում է Շերամը:

— Մեր ուստա Գոքորի երգն է:

— Հա՞... մուրձդ տուր:

Քարտաշն ակամա ենթարկվում է: Ուստա Գոքորը մոտենում է տաշած քարին ու մի քանի հարվածով կտոր-կտոր անում:

— Իա՛, էս ի՞նչ էրիր, ա՛յ մարդ, քարս ջարդեցիր:

— Հրբը որ դու իմ երգը ջարդեցիր, լա՞վ է:

Քարտաշը ոտքի է կանգնում.

— Ընչի՞, դու ով ե՞ս որ...

— Ես հենց քու ըսաձդ Գոքորն եմ, Շերամը:

Քարտաշը վրա է պրծնում, գրկում ու բացականչում.

— Վա՛յ, ուստա Գոքոր ջա՞ն, Շերամ ջան... ես քու հոգուդ մեռնիմ...

Դափահար Պետրոս Մինասյանը հետո պատմում էր, թե քարտաշը և Տալոյենց Գոքորն այնքան մտերմացան, ուղղակի բարեկամ դարձան:

Ահա, ետ-ետ նայելով ու գլուխը տարուբերելով՝ Շերամը հասնում է Քաղխորհուրդ և մտնում Արսեն Եսայանի սենյակը:

— Բարև՛, Արսեն ջան:

— Բարով եկար, Շերամ: Ի՞նչ կա,— ցույց տալով աթոռը, հետաքրքրվեց նախագահը:

Երգիչը նստեց ծռռացող աթոռին, նայեց այս ու այն կողմ, շոշափեց աթոռի կողերն ու խոսեց.

— Էս աթոռդ երգիչ կերևա, Արսեն ջան.— ու երկուսն էլ ծիծաղեցին:

— Ոչի՞նչ, շուտով ամեն ինչ կարգի կընկնի:

— Էն տեսակ մեծ գործը որ դուք պտի սկսեք, էս աթոռի էղածն ի՞նչ է որ:

Տաղերգուն խոսեց Շիրջրանցքի մասին, ապա հիշատակեց Մալուլի և Ջիվանու բաղձանքը:

— Շուտով կսկսենք,— հավաստիացրեց նախագահը:

Շերամը վեր կացավ, գլխարկը դրեց ու ելավ դուրս: Եսայանը նայեց նրա ետևից և ասաց.

— Ի՛նչ մարդ է, ի՛նչ մարդ. ամեն ինչով հետաքրքրվում է:

Ուշ աշնանը Շերամն իմացավ, թե ինչ հանդիսավոր պայմաններում են սկսել Շիրակի ջրանցքի կառուցումը: Նա խոր կարոտով լցվեց դեպի հայրենի քաղաքն ու հարազատները, և այնքան տենչաց սիրեցյալին, որ մազ էր մնում՝ ճամփա ընկներ ու քայլեր դեպի ծննդավայրը: Եվ նա հորինեց «Ծննդավայրս» ոտանավորն ու գնաց նվագածուների մոտ, որ նրանց կարծիքը հարցնի. ասենք՝ Սամսոն Կարապետյանի. ինչքան չլինի աշուղի տղա է:

Քանի նա մոտենում էր հավաքատեղիին, այնքան ավելի բարձր էր խոսում ինքն իրեն: Կանգ առավ ու քիչ էր մնում ետ դառնար, բայց Սամսոնը տեսավ նրան ու ձայն տվեց.

— Ուստա՛ Գոքոր, արի, ետ մի՛ դառնա:

— Մի բան միտքս ընկավ, Սամսոն ջան, բայց չիտեմ ընչի չգրեցի:

Եվ նա արտասանեց, իսկ ականատես Կարոն պատմեց...

Ճիրակի ջրանցքի կառուցման հանդեսին ժամանել էին հազարավոր մարդիկ՝ գյուղացիներ, բանվորներ, ծառայողներ և սովետական բանակի ներկայացուցիչներ: Այդտեղ էին՝ փողային նվագախումբը, դհոլ-զուռնայի եռյակները: Եկել էին նաև բարձր դասարանների աշակերտները, որոնց շարքերի առջևից քայլում էին թմբկահարները: Շուտով ժամանեցին նաև Հայաստանի կառավարության ղեկավարները, «Ջրանցքի շաբաթ» կազմակերպող հանձնաժողովի անդամները: Երբ պայթյունները լռեցին, աղմուկ-աղաղակը մեղմացավ, և մարդիկ, հենց քարերի մեջ, սուրբ տոնի սեղաններ բացին, հայտարարվեց դադար: Եվ ահա, հանդես եկավ նվագածուների եռյակը: Նրանք երգեցին հայ ժողովրդի ազատագրման երգերը: Հնչեց նաև Շերամի երգը.

... Թող միշտ անբաժան լինեն մուրճն ու գութանը, մարդիկ մեկտեղ ապրեն, մեկտեղ ջանք թափեն, որովհետև արդար գործն է, որ կյանք է տալիս բոլորին, իսկ վերջում՝

Թող այս լինի հավերժական,
Անզուսպ կռիվ մեր հաղթական...

Արևը մայր էր մտնում արդեն, երբ հանդիսավոր արարողությունը վերջացավ, ու մարդիկ բռնեցին տունդարձի ճամփան: Եվ բոլորը խոսում էին այն մասին, որ կառավարությունը որոշել է այդ մեծ կառույցը հաջող ավարտելու համար դիմել նաև աշխատավորների օգնությանը:

— Թեկուզ հենց էս րոպեիս,— ասաց մեկը:

— Ո՞վ կարող է մերժել,— խոսեց մյուսը:

— Չեղած բան է, որ հրաժարվենք,— ավելացրեց երրորդը:

6

Ձմեռը Ճիրակում սաստկաշունչ է լինում. Սառնամանիքը շղթայակապ է անում մարդկանց ձեռքերն ու ոտքերը, դեմքերը ծածկում եղյամով. երիտասարդ մարդիկ ծերունիների են նմանվում, իսկ կանայք՝ ծերմակավարս պառավների: Ծառերն ու թփերը բյուրեղյա կերտվածքներ են հիշեցնում և ավելի լուսեղեն

դարձնում ամեն ինչ: Իսկ այս հոծ բազմությունն ու՞ր է շտապում, մի՞թե ծեր ու մանուկ ամանորի հանդեսի են գնում:

Մի խումբ Պոլիգոնի կողմից եկավ մտավ նախկին առևտրական ուսումնարանի լուսավորված շենքը, ուր 1922 թվականին տեղավորված էր Լուսաշխի տունը: Ներքևի թաղից ածապարում էին աղջիկներ ու տղաներ, որոնցից մի քանիսի հագին ուսանողական համազգեստ կար: Արհեստավորները գալիս էին ինչ-որ երգեր դնդնալով: Ձեռնափայտ-հովանոցներով ու մորթե գդակներով եկողները քաղաքում դեռևս գոյություն ունեցող Սմերկոմի ուսումնարանի ուսուցիչներն էին և մտավորականության ներկայացուցիչները:

— Էդ երգը էդպես չեն երգե, Մկրտիչ,— մուտքի առջև ընկերոջը դարձավ արհեստավորներից մեկը:

— Հըբը ի՞նչդ կերգեն, ասա, էլի,— առարկեց Մկրտիչը:

Եվ ընկերը փորձեց՝

Սարի լանջին ման եմ գալիս...

— Էղավ՝ գնաց,— ընդհատեց Մկրտիչը.— լավ էլ ման կուգաս սարի լանջին: Ա՛յ, էսօր ինքը ցույց կտա, թե սարի լանջին ինչպես պիտի ման գաս:

Ետևից եկող երեք նվագածուները ծիծաղեցին: Վիճողները ճանաչեցին դրանցից երկուսին. մեկը քաղաքում արդեն հայտնի Արծրունն էր. նրա ձեռքին քամանչա կար, իսկ մյուսի թևի տակ դափ կար. սա էլ Թաթոսն էր: Երրորդին դժվարանում էին հիշել, որովհետև հազվադեպ էր լինում քաղաքում: Նրա գլխին փափախանման տափակ գդակ կար, իսկ հագինը թանձր վերարկու էր: Երբ տղաները մի կողմ քաշվեցին ու ողջունեցին նրանց, Մկրտիչը բոթեց ընկերոջ կողքը.

— Ա՛յ, հենց դա էլ Շերամն էր,— շշնջաց:

— Շուտ ասեիր, էլի, տնաշեն,— դժգոհեց ընկերը:

Եվ նրանք շտապեցին դեպի մուտքը: Սա անընդհատ բացվում ու փակվում էր և ասես ներս քաշում հանդիսականներին: Երեք ընկերները դռանը հասան այն ժամանակ, երբ երաժիշտներն արդեն ներսն էին: Մեկ-երկու հոգի կանգ առան ու փորձեցին կարդալ ազդագիրը. բայց միայն նշմարեցին «Շիրկանալի օգտին» և «Շերամ» բառերը:

Մեծ դահլիճում այնքան մարդ է հավաքվել, որ ուշացողները ոտքի վրա էին մնում: Հետո հայտնվեց համերգի կարգադրիչը՝

Արմեն Տիգրանյանը և հայտարարեց, որ Թիֆլիսից իր հետ ժամանել են մի խումբ երգիչներ. նրանք կներկայացնեն մի քանի տեսարան «Անուշ» օպերայից: Ապա նա բեմ հրավիրեց Տիգրան Նալբանդյանին:

Քիչ անց երևաց գուռնա-դհոլի եռյակը. տա բավական ժամանակ նվագեց, իսկ բեմում մարդ չերևաց: Ապա կնոջ բարձր ձայն լսվեց: Երեկոյի կարգադրիչներից մեկը հայտնեց.

— Հիմա արևելյան պարերով հանդես կգա նշանավոր արտիստուհի Եկատերինա Դուրյան-Արմենյանը,— ազդարարեց նա և ինքն առաջինն սկսեց ծափահարել: Նրա օրինակին հետևեցին հանդիսականները: Դհոլ-գուռնան նորից գլեց իր աղմկոտ նվագը, սակայն պարուհին չերևաց: Հավանաբար նրան մոտեցավ Տիգրանյանը: Արտիստուհին այս անգամ խոսեց մի փոքր մեղմացած.

— Ես կպարեմ միմիայն Տալոյենց Գոքորի նվագի ներքո:

Նման լություն չէր լսել այս դահլիճը: Շուտով նվագողներին մոտեցավ կարգադրիչը և ինչ-որ բան ասաց ժպտալով և անցավ բեմի ետևը: Նրան հետևեցին նվագածուները: Սպասողական դրությունը երկար չտևեց: Ահա բեմում երևաց Շերամի եռյակը: Դահլիճում մոլեգին ծափահարեցին:

— Մեր Գոքո՛րը...— բղավում էին ահել ու ջահել:

— Ուստա՛ Գոքոր, մի ցույց տուր, թե դայրով մարդը ինչպես պտի ման գա սարի լանջին,— ամենից բարձր գոչեց այն երիտասարդը, որ շենք մտնելուց առաջ վիճում էր ընկերոջ հետ:

Շերամը կրծքին էր սեղմել նվագարանն ու ժպտում էր, իսկ Արծրունը կնտնտոցով հարգանքի հարվածներ էր հասցնում քամանչայի գուշին. Թաթոսն էլ մատների ծայրերով տկտկացնում էր բոլորակ դափը: Ծափահարությունը հետզհետե մեղմացավ. եռյակը նստեց իր տեղը և սկսեց նվագել: Տաղերգուն կատարեց իր հայտնի «Սարի լանջին» տաղը:

Այնուհետև դափահարը երգեց՝ «Սև-մութ ամպերը»:

Շուտով սկսվեց Դուրյան-Արմենյանի պարահանդեսը: Մի պար հաջորդում էր մյուսին: Արտիստուհին իջավ բեմից և բարձր պահած տարավ մի սինի: Ու երբ դրա մեջ զնգոցով թափվեցին ոսկե և արծաթե դրամները, նա մի պահ տեղում պարային ձևեր արեց, հետո վիթի նման սահեց կարգերի արանքներով: Արտիստուհու շնորհքով հրապուրված էին բոլորը: Ահա և հնչեց գուսանի «Շուշանիկ» պարերգը.

Եվ արտիստուհին ապշեցրեց բոլորին իր ձկուն գալարումներով:

— Բրա՛վո,— գոչեց մեկն ու մի բուռ ոսկեդրամ, ասպետական ժեստով, լցրեց մի քանի անգամ դատարկված սինին:

Արտիստուհին ավարտեց իր պարաշարը, հեզությամբ ռեվերանս արեց, աղջկային վազքով բարձրացավ բեմ, փութով մոտեցավ Շերամին, ձեռքը սեղմեց և համբուրեց ճակատը. Գուսանն էլ գրկեց նրան և այտը համբուրեց:

Ուշ գիշեր էր արդեն, երբ Շիրջրանցքի օգտին կայացած հանդեսն ավարտվեց: Մեկառմեկ հանգան լապտերները, վերջին անգամ շրխկաց շքամուտքի դուռը, և երաժիշտները քայլեցին տուն:

Երեկոյի եկամուտի մեծ մասը նվիրվեց ջրանցքի շինարարությանը: Բայց սրանով չսահմանափակվեցին մուծումները կենսական այդ կառույցի օգտին: Այդ տարվա «Խորհրդային Հայաստան» թերթում հրապարակվեց մի թղթակցություն, որի մեջ բերված թվերը ցույց են տալիս, թե ինչ վիթխարի զոհողության դիմեցին Հայաստանի կառավարությունն ու ժողովուրդը, որպեսզի գործն առաջ գնա:

... Ալեքսանդրապոլի կոմունիստները որոշեցին շինարարության օգտին նվիրել իրենց 7 օրվա հասանելիք ալյուր-պարենը, սովետական ծառայողները՝ 4 օրվա, կարմիրբանակայինները՝ 3 օրվա:

Սա հայ ժողովրդի շատ փոքր մի խմբի պատասխանն էր կառուցման կոմիտեի կոչին: Տասնհինգ հազար դեսյատին վարելահող ոռոգել կարողանալը և հինգ հազար ձիաուժ էլեկտրաէներգիա ստանալն այն օրերին հսկայական առաջխաղացում էր:

ԱՆՎԵՐՋԱՆԱԼԻ ԵՆ ԾԱՄՓԱՆԵՐԸ ՍԻՐՈ

1

Թիֆլիս. գարուն. ուշ առավոտ: Նվագածուների հավաքատեղիում այնքան մարդ կա, որ թվում է, թե մեկն էլ գա, ներս մտնել չի կարող: Մի խմբի կենտրոնում կանգնել է Շերամն ու պատմում է նախորդ տարվա դեպքերի մասին: Մանրամասնու-

թյամբ նկարագրեց ժողովրդի խանդավառությունը, երբ հայտնի դարձավ Հայաստանի կառավարության որոշումը Շիրակի ջրանցք կառուցելու վերաբերյալ: Նա չմոռացավ նաև դրան նվիրված ծոխ համերգը:

— Ծո՛, էդ ի՞նչ տեսակ հոգի ունի իմ քաղաքի ժողովուրդը,— բացականչեց նա,— վայթե էդքան երգ սիրող մարդ ոչ մի տեղ չեղնի:

Սրահի հեռավոր անկյունում նստել էր Սաշան ու մեղմորեն նվագում էր. չէ՞ որ երեկոյան Շերամի հետ գործի պիտի գնար:

Դուռը թակեցին: Վիճողներն անմիջապես լռեցին, խաղացողներն իսկույն կտրեցին չխկչխկոցը: Նվագածուներից մեկն արագ մոտեցավ, դուռը բացեց: Նրա դիմաց կանգնած էր բարձրահասակ մի կին, որի նրբամաշկ դեմքը վաղեմի գեղեցկության գծերն ուներ դեռևս: Աչքերը՝ ռեհանի գույնի, իսկ հոնքերը՝ բարակ կամարներ աչքերի վրա: Ծամերը դեռ պահպանել էին շիկավուն երանգը. դրանց մեջ արդեն նշմարվում էին սպիտակ թելեր: Ուսերը մի փոքր առաջ էին թեքված և զգալ էին տալիս, որ մեջքը կռանում է: Նրա գլխին լայնեզր գլխարկ կար, ոտքերին՝ լաքապատ կիսակոշիկներ:

Նվագածուն, որ իրեն աջուղ Գարունով էր հորջորջում, մի պահ դիտեց այդ կնոջն ու նոր միայն հարցրեց.

— Ու՞մ եք ուզում, տիկին:

Կնոջ պատասխանից հետո դարձավ ու կանչեց.

— Ուստա՛ Գոքոր, քեզի կուզեն:

Շերամը վեր կացավ ու շրթունքները տարակուսանքից սեղմած՝ ձեռքը մեխեց կրծքին ու գլուխը վարուվեր անելով , ելավ փողոց և հայացքը հառեց կնոջ դեմքին.

— Վարդուհի՞...

Վարդուհին ժպտաց, իսկ երգիչը մտքում, թե՝ «Ըսի՝ դեռ մի գա, մի քիչ սպասե...»:

Եվ սիրտը թրթռաց: Ե՛վ ուրախ էր, որ նորից պետք է բորբոքվի սիրո հուրը, և՛ թախծալի ապրումներ ունեցավ, որ, այնուամենայնիվ, հեռու պիտի լինի նրանից:

— Չէի՞ր սպասե, Գրիգոր... Ամեն ինչ ծախծխեցի ու եկա... Էստեղ տուն վարձեցի...

Տաղերգուն աչքի պոչով նկատեց, որ ընկերներն իրենց են նայում և դողդոջուն ձայնով շշնջաց.

— Հեռու՞ է տունդ... հեռու՞ է... Վարդուհի՛...

Նա մի ակնթարթ հայացքը կտրեց երգչի դեմքից և ասաց.

— Չէ, էնքան հեռու չէ. Միխայլովսկու վերջն է... Ընչի՞:

— Էստեղ անհարմար է, տղերքը մեզի կաշեն...

Վարդուհին հասկացավ նրա միտքը:

— Քելե տուն,— հրավիրեց ու խորազնին նայեց նրան.— չե՞ս գա:

— Հը՛մ,— տատանվեց տաղերգուն՝ աչքը դռանը գցելով.— Էրթանք, էրթա՞նք... կեցի ընկերներուս զգուշացնեմ... Ախր իրիկունը գործի եմ:— Ու մտքի մեջ ափսոսաց, որ երեկոյան չի կարող սիրեցյալի հետ լինել:

Եվ առանց սպասելու Վարդուհու հավանությանը, աղերսագին ժպտալով, մտավ ներս, Սաշային վստահեցրեց, թե անպայման կգա: Ու երբ դուրս էր գալիս, նվագածուներն ամեն կողմից հարցեր տեղացին.

— Էդ ո՞վ էր, տո՛:

— Լամազի քալի իղո, բի՛ծո (գեղեցիկ կին էր),— հիացավ Գարունովը:

Օգանեզաշվիլին ակնդետ նայեց տաղերգուի կարոտակեզ աչքերին և, իբր իմիջիայլոց առաջարկեց.

— Ուզում ի՞ս էսօր գործի չերթանք, Գոքոր... Էս օրն էլ թող ղուրբան ըլի էդ գյոզալին...

— Ինչ կուզե էղնի, Սաշա ջան... կուգամ,— մի փոքր անվճռական եզրակացրեց Շերամը:

Եվ նա ու Վարդուհին տրամվայ նստեցին ու գնացին իջան նրա տան առաջ: Երգիչը մի պահ կանգնեց, թափանցող հայացքով նայեց նրան ու հարցրեց.

— Տանը խո մարդ չկա՞:

— Չէ, ո՞վ պիտի էղնի: Երեխաներս ուսումնարան են գնացել: Մի վախենա, շատ չեմ պահե քեզի:— Բայց սրտի խորքից ախ քաշեց:

Տուն մտան թե չէ Վարդուհին փարվեց սիրահարին, գլուխը դրեց նրա կրծքին ու թոթովեց.

— Էլ չէի կարող դիմանալ, Գրիգոր... ու՛ժ չունեի... Չէի՞ր ուզե, որ իրար մոտիկ էղնեինք,— Ու մտածեց... «Երանի էն օրերին, որ ջահել էինք...»:

Իսկ տաղերգուն բուռն կրքով գրկեց նրան, երիտասարդի ուժով առավ թևերին...

Մի րոպե անց, երբ Վարդուհին կառչեց գուսանից, սա նուրբ հպումով վանեց նրան, որ Սաշային տված խոստումը կատարի. կինը թնկթնկաց.

— Ի՞նչ անեի, ասա, ո՞վ ունեի Ալեքպոլ, որ մնայի. սիրտս ու հոգիս էստեղ, ես էնտեղ՝ մենակ...

Շերամը գրկեց նրա մեջքը և ականջի մեջ ասաց կամացուկ, ասես որևէ մեկը կարող էր լսել նրանց սիրո խոստովանությունը.

— Շատ, շա՛տ էի կարոտցել քեզի, Վարդուհի՛ս...— և հապաղեց.— բայց էնտեղ ըսի... ամեն տարի...

Վարդուհին ընդհատեց նրա խոսքը.

— Ամբո՛ղջ մի տարի...— ու դառը խնդաց:

Տաղերգուն երկդիմի տրտնջաց.

— Էստեղ խո մենակ չե՞մ, խո ազատ չե՞մ... Տղերքս արդեն մեծ են, Հայկն էլ կարգին տուն ու տեղ ունի մեր շենքում: Սալվին էլ, ինչ էլ էղնի, գլխու կընկնի...

Վարդուհին կարծես չէր լսում նրա խոսքը...

— Անթառամ է մեր սերը, ի՛մ երգիչ, ի՛մ...

Բայց Շերամը չթողեց, որ նա շարունակի և համբույրների տարափ տեղաց նրա շուրթերին, մի քանի կնճիռներով թեթևակի ճառագայթված այտերին, ցոլանքով փայլող աչքերին...

— Գրիգոր, կնի՞կդ ինչպես է,— անսպասելի հարցրեց Վարդուհին ոչ առանց ցավակցության:

— Է՛հ, մեկ լավ, մեկ վատ... Ընչի՞...— Ու նորից գրկեց սիրեցյալի ուսերը, երբ ոտքի ելավ գնալու:— Նրա համբերությունը ծով է, իմացի,— և հառաչեց ու ավելացրեց,— բայց ծովն էլ ափեր ունի՛...

Եվ գրեթե անլսելի արտասանեց.

Խոր, մեծ ծովեր, մեղմացուցեք
Ալիքները ձեր կատաղած...

Վարդուհին ժպտաց, փորձեց մտաբերել այդ երգի շարունակությունը, չգտավ և հանկարծակի հարցրեց.

— Ուզում ես, որ վե՞րջ տանք, Գրիգոր:

— Չէ, չէ, ի՞նչ վերջ տալ, էսպես սիրուն վերջ տալ չի լինի,— թույլ կարծրությամբ հարեց տաղերգուն:— Անվերջանալի են ճամփաները սիրո, Վարդուհի՛...

Կնոջ հայացքում գուսանը տեսավ, որ վճռականությունը տեղի տվեց և պաղատանքը խոնավացրեց նրա աչքերը: Նա ընկճված խոսեց.

— Չեմ կարող, Գրիգոր... կվառվիմ՝ մոխիր կդառնամ...

— Սերը քեզ էլ բանաստեղծ դարձրեց, Վա՛րդս:

— Դու լավ գիտես, որ մի քանի տող ունիմ գրած,— և խոստովանեց.— բայց իմ գրածն ուր, քո գրածն ուր... Գրիգո՛ր Ոսկեբերան...

Եվ նա թախծալի ժպտաց:

— Լավ, ես էրթամ... Կոլեկտիվ չգաս. ես կուգամ տունդ:

Եվ Վարդուհին խոսեց սրսփան ձայնով.

— Ա՛խ, Գրիգոր. ես ի՞նչ կրակ էր՝ գցեցիր հոգուս մեջ...

Տաղերգուն ձայն չհանեց: Անխոս բացեց դուռն ու անշտապ ելավ փողոց:

Եվ նրբակերտ հուշարձանի պես նորից դեպի աստղերը հառնեց նրանց անմարելի սերը...

Եվ ինչպիսի՜ ավյունով երգեց Շերամն այդ իրիկուն... Ասես վերաբացվել էր երիտասարդական ձայնի ակունքը, իսկ նվագը՝ վարպետական: Նրա այդ փայլատակման վրա ապշել էին ոչ միայն ունկնդիրները, այլև նվագաձու ընկերները: Սրանք էլ նվագում ու ձայնակցում էին աներևակայելի եռանդով:

Շերամը գլխահակ մոտեցավ հավաքատեղիին: Այնքան անտրամադիր էր, որ մի երկու ծանոթի բարևն անգամ չառավ: «Էլի հեռացար նրանից, Գոքոր, էլի հեռացա՛ր,— ցավով խորհեց: Եվ սիրո տառապանքը թպրտացրեց նրա սիրտը նոր ուժով: «Բա որ Հայկոս ու Վարդս հասկացան կամ տեսա՞ն,— մտորեց նա:— Էդքան կամքի ուժ ունի՞ս, Գոքոր, որ հեռու մնաս քառասուն տարվա սիրուց, էդպես սիրող սրտից... Չէ՜, ախպեր, լինելու բան չէ»:

Արդեն մոտեցել էր հավաքատեղիին, բայց չէր ուզում մտնել, սակայն ինչպե՞ս չմտնի, երբ Հաջու հետ հաստատ չպայմանավորվեց, թե որտեղ հանդիպեն գործի գնալու համար:

Քիչ հետո նա փութկոտ քայլերով գնում էր տուն և մտորում, թե ինչ բարդ արարած է մարդը... Ե՛վ խուսափում է Վարդուհուց, որ այդ տարիքին անպատիվ չլինի, և՛ անզուսպ կերպով ձգտում է նրան:

Սալվին կռահում էր, թե ինչու է ամուսնու հոգին դարձյալ տակնուվրա լինում, բայց, ինչպես տարիներ շարունակ, հանուն

նրա սիրո, հանուն նրա և իր պատվին, ներս էր գցում ու տառապում էր, տառապում: Նա տեղյակ էր, որ Վարդուհին տեղափոխվել է Թիֆլիս: Լուրը նրան էր հասցրել իր հորեղբոր աղջիկը, որ արդեն ապրում էր այդտեղ, սակայն այդ մասին Գրիգորին ոչինչ չասաց:

Այսօր էլ տաղերգուն գնում էր նվագելու և մտածում, թե՝ ինչ լավ կլինի, եթե իրեն կանչեն հայրենի քաղաք. որոշ ժամանակ կհեռանա, կասկածները ցրիվ կտա ու հոգով էլ մի փոքր կխաղաղվի: «Հը՜մ,— հեգնեց ինքն իրեն».— էլ ի՞նչ խաղաղվել, երբ ամեն րոպե Շերամն իր կողքին էր զգում նրան՝ Վարդուհուն, անմեկնելի իր սիրուն: Եվ այնքան իրական, որ երբեմն ձեռքը տանում էր, որ սեղմի նրա դաստակը:

Նա անմշուշ մտաբերեց իրենց զուլալ սիրո առաջին օրը...

Ահա Վարդուհին մի քանի հնչյուն կորզեց նվագարանից, ապա իր ձեռքի գորշիքը նետեց մի կողմ ու մղվեց դեպի տաղերգուն:

— Չէ, Գրիգոր, չէ՜... չեմ ուզե սովորել... Ու՞մ համար նվագեմ, ու՞մ գովեմ... Դու ես իմ մուրազը, դու ես բուն դրել հոգուս մեջ, միայն դու...

Եվ նա աննկարագրելի ուժով գրկեց երգչին. այնպես, որ Գրիգորը չկարողացավ դուրս պրծնել նրա թրթռացող բազուկներից: Երգիչն ամուր հպվեց նրան:

— Սալվի՛ն... երեխանե՜րս...— շփոթված բարբառեց գուսանը:

— Ա՛խ, ի՞նչ անեմ... Հազար կին էլ ունենաս, իմ սիրտն ու հոգին, ահա՝ քու ոտքիդ տակ են, Գրիգոր: Մի՛ մերժի իմ երկնային սերը, անխի՜ղճ. Աստված կպատժի մեզ, թե որ մենք իրար չսիրենք, Գրիգո՛ր... Մի՛ մերժի սրբության պես մաքուր իմ սերը...

Ու կսկծալի լացեց: Տաղերգուն շվարած շուրջը նայեց, ասես օգնություն էր հայցում ինչ-որ անհայտ փրկչից:

— Էդպես բան մի՛ ըսե, Վարդուհի... Գիտես, թե ես քեզի չե՞մ սիրե... Պաշտելու չափ կսիրեմ, երկրպագելու՜ չափ... Բայց ախր... մարդդ... Ալեքսանը...

Վարդուհին կտրեց նրա խոսքը ձեռքի կացնային թափահարումով, թռավ, ոտքի կանգնեց և ավելի անքակտելի կպավ երգչին: Իսկ Գրիգորի աչքի առջև ծառացան իր զավակները, որ ծվարել էին մոր թևերի տակ: Եվ ասես վիճելով նրանց հետ, Վարդուհուն այնպես սեղմեց կրծքին, որ նա երանության մեջ փակեց ծավի աչքերը և շշնջաց.

— Ի՛մ խելառ սեր, իմ գուսա՜ն...

Գրիգորի ուղեղում լուսարձակեց դեռևս անմշակ երգի առաջին տողը.

Թառլան, թառլան իմ յարը...

Վարդուհու աչքերին շողացին արցունքի ադամանդյա կաթիլները...

Տուն գնալիս Գրիգորին թվում էր, թե ինքը ոչ թե քայլում է մութ փողոցով, այլ թև է առել ու ծախրում է լուսեղեն, բայց ամպոտ սիրո երկնակամարում...

Եվ ահա, Ալեքսանդրապոլից հրավեր ստացվեց: Դա այնքան ուրախացրեց երգչին, որ կնոջն էլ մասնակից արեց: Բայց ինչպե՞ս կարող էր հասկանալ Սալվին այդ արտասովոր սերը, երբ անբացատրելի սովորական էր դարձել իր և ամուսնու գոյությունն իրար կողքի, այնքան առօրեական:

— Գնա, Գրիգոր, գնա. լավ կեղնի,— խոսակցության ծայրը կապ գցեց կինը:

Սալվինազի հոգում բախվում էին երկու զգացում. լավ է, որ ամուսինը հեռու կլինի Նրանից ու հոգին կհանգստանա, վատ է, որ տան պես տաքուկ անկյուն չի ունենա:

Սեպտեմբերին Շերամը մեկնեց հայրենի քաղաք: Այդ ժամանակավոր անջատումը իմացավ Վարդուհին ու հնարամիտ կերպով գտավ մի առիթ, որ ինքն էլ առանձին մեկնի այնտեղ: Տեղեկացել էր, որ հորեղբոր թոռը հիվանդ պառկած է. ու գնաց: Այնտեղ Վարդուհին, իբր պատահաբար, ման գալով անցավ նվագաձուների հավաքատեղիի դռնով, ներս նայեց ու տեսավ, որ Շերամը ներսում է: Եվ որովհետև չէր եղել մի օր, որ կին երևար նվագաձուների կոլեկտիվի մոտերքը, տաղերգուն նրան նկատեց:

Վարդուհին դանդաղ քայլեց դեպի կայարան և հաճախ ետ-ետ նայեց: Գուսանը գալիս էր իր կողմը:

Ընկերները հետո իմացան նրանց հանդիպման մասին ու զարմացած տարուբերեցին գլուխները:

— Մոտ յոթանասուն տարեկան է, չէ՞, ուստա Գոքորը, տղերք, — դիմեց նրանցից մեկը մյուսին:

— Ծո՛, ըսենք, թե՝ հա. բայց ի՜նչ յոթանասուն ծնկի կբերի նրան, ի՜նչ ութանասուն, ի՜նչ հարյուր,— խոսեց Արծրունը:

Ասացին ու ծիծաղեցին:

2

Աշնան սկիզբն ամեն տեղ էլ լավ է. ո՛չ շոգ է արդեն, ոչ էլ ցուրտ է դեռևս: Իսկ Շիրակի մայրաքաղաքում այնքան անուշ օրեր են լինում, որ շոգ կամ ցուրտ վայրերից եկած մարդիկ այլևս չեն ուզում վերադառնալ: Եվ որքա՜ն երգ կա այստեղ... Թվում է, թե քաղաքի հիմքում, շաղախի փոխարեն, երաժշտություն է լցրած:

Շերամը դուրս եկավ հայրական տնից, իջավ շուկայի փողոցով ու քայլեց դեպի հոգևոր թեմ: Հանդիպողների համար ուղղակի հանելուկ էր, թե երգիչն ինչու՞ է գնում այդ շենքի կողմը: Մտերիմ մարդիկ հայացքով հետևում էին նրան, իսկ նա, գլուխը բարձր, անցավ հոգևոր տան շենքի մոտով ու մտավ բակ: Նա արդեն ծամփու էր դրել Վարդուհուն և շատ անգամ հոգին հանգըստացնում էր երաժիշտների շրջանում: Բայց այդ օրը...

— Էս ու՞ր կերթա ուստա Գոքորը, Պետրոս,— տարակուսած հարցրեց տարեց գլումրեցին իր ընկերոջը:

Սա երկար նայեց երգչի ետևից, հոնքերը կիտեց ու խոսեց.

— Իբր թե գլումրեցի ես դու էլ,— կշտամբեց Պետրոսը.— չիտե՞ս էն հայաթն ինչ կա՝

— Հա՛, նոր գլխու ընկա, ա՛յ օղուլ,— կզակը վերուվար անելով, ասաց զրուցակիցը:

— Հա ու ջան: Մարդը կերթա էն մեծ ճաշարանը, հիմի որ ռեստորան կըսեն: Կուզե՞ս էսօր իրիկուն էրթանք ականջ անենք:

— Իա՛, էդպես բա՞նն էլ չուզենան. Գոքորին ականջ անելն ու դրախտ էրթալը մի հաշիվ է:

Ու երկուսն էլ հազալով խնդացին:

Շերամը գրեթե ամեն օր այցելում էր նվագածուների հավաքատեղի, լսում արվեստակիցներին, իր նոր երգերը սովորեցնում: Նրան երբեմն խնդրում էին, որ գործիքներն ստուգի, ականջները ոլորի՝ հնչեղությունը կարգի բերի: Նվագածուներն այդտեղ նաև փորձեր էին անում: Շերամի համար առանձնապես հաճելի էին դրանք, քանի որ աշխատանքի ապացույց էին: Թիֆլիսում կամ այստեղի տանը նվագն էլ որ չլիներ, ինքը մի փայտ կառներ, գրպանից կհաներ գրչահատը և կտաշեր, կկոկեր, կհարթեր ու մի բան կշիներ: Այսօր էլ իր համար կնտնտոց էր սարքում: Գրպանից հանել էր ոսկորե սանրի լայն մի ատամ, որ եղբոր տանը

մանրափուշ խարտոցով հարթել էր, բունելու տեղին մեղրամոմ էր ամրացնում: Մեկ էլ գլուխը բարձրացրեց ու կանչեց.

— Ծո՛, Գևորգ, մե թառդ տուր՝ տեսնիմ:

Էրզրումցի Գևորգը նվագարանն իսկույն տվեց նրան: Գուսանը զննող հայացքով տնտղեց գործիքն ու, ծտծտացնելով՝ գլուխը տարուբերեց:

— Էս ծակը չե՞ս տեսնի. ընչի՞ փարդա չես քաշե:

Գևորգը չէր խոսում. իսկ Թաթոսը չկարողացավ զսպել պոռթկուն ծիծաղն ու, քաշվելով սրահի հեռավոր անկյունը, քահ-քահ քրքջաց: Գևորգը վազեց ու դիմացի կոշկակարից մի բուռ շրեշ բերեց, Տաղերգուն անձամբ վարպետորեն կարկատեց նվագարանի թաղանթը:

Հաջորդ օրն ստուգեց գործիքն ու սկսեց նվագել: Նրա ձայնը զնգաց սրահում, և թագավորեց լռությունը: Ղազոյենց Կարոյի ձեռքն էլ մնաց օդում, նարդու քարը՝ մատների արանքում: Բոլորն ականջները սրած՝ լսում էին վարպետի նոր երգը, որ գովում էր աննման աչքերը, գեհեն աչքերը: Տաղն ավարտվում էր՝

Երկինքն էլ չունի ձեզ նման աստղեր...

Հետո Շերամին խնդրեցին, որ կատարի «Փնջլիկ-մնջլիկը»:

Երբ փորձն սկսեցին, տաղերգուն քաշվեց մի կողմ, նստեց ու աշխատեց հիշել բոլորի անունները :«Սա արզրումցի Գևորգն է, իմացա՛նք. էն մեկը Բոշի տղա Խաչոն է, ջութակահար է... Ծո՛, Թաթոսը հըլը կխնդա, տես, է՛...— մտածեց ու ժպտաց: Նրա մտքերն ընդհատվեցին: Ներս մտավ հաղթանդամ մի երաժիշտ, երկարուկ պատլանով նվագարանը թևի տակ:— Ըհը՛,— շարունակեց նա.— էս էլ Վաղոն է, Խոշոր Վաղոն, ախցխացի է. կլառնետ կփչե: Զուռնի ձենը ականջը խլացրեց, հիմի եվրոպական զուռնա կփչե»:

Վաղոն մոտեցավ ու սեղմեց վարպետի ձեռքը: Սա նայեց տարբեր անկյուններում փորձ անող նվագածուներին ու մոտ կանչեց Արծրունին.

— Էն ջահել դաֆչին ո՞վ է:

— Վաղինակն է, Զաքմիշենց Հակոբի տղեն: Հերը գլխարկ կարող է: Ինքն էլ շատ շնորհքով տղա է:

— Լավ էլ ձեն ունի. ուրիշներու պես դաֆն էլ չի ջարդե:

— Տեսնի՞ս, սալդատի պես էլ դիք կայնած է:

— Երգիչն էդպես պիտի կանգնի, որ ձենն ազատ դուրս գա:

Դափահարը կամացուկ տկտկացնում էր գործիքն ու մեղմաձայն երգում Ջիվանու «Սպիտակ մազերը»: «Ա՛յ, էդ տղեն իսկական ընկերս կեղնի,— կշռադատեց Շերամը.— ջահել է, բայց ոչինչ... Վայթե հետս նվագելով ինձ էլ ջահելցնե»:— Եվ կանչեց. — Մոտիկ արի:— Երիտասարդը մոտեցավ:— Ինձ հետ կուզենա՞ս նվագել:

Վաղինակի կասկածոտ հայացքից երևում էր, որ ականջներին չի հավատում. նույնիսկ շուրջը նայեց՝ վարպետն ուրիշ մարդու հո չի՞ դիմում: Նրա շփոթմունքը փարատեց ինքը Շերամը:

— Քեզի հետ եմ, Վաղինակ, ընչի՞ չորս բոլորդ կաշես... Ընձի հետ կուզենա՞ս նվագել.

Երիտասարդը բառ չգտավ ասելու: Ինչպե՞ս, ամբողջ երկրում հռչակված երգիչն իրեն՝ ջահել նվագածուին վստահեց... Եվ նա վերջապես ասաց.

— Ուրախությա՛մբ, հորեղբայր:

— Ապրի՛ս, Վաղո ջան. մի բան էլ երգիր՝ տեսնեմ:

Ու երիտասարդը թրթռուն, բայց իսկույն կայունացող ձայնով կատարեց վարպետի հայտնի տաղը՝ «Դու իմ մուսան ես»: Հետո վարպետն առաջարկեց.

— Էգուցվանից կուգաս:

Եվ ամբողջ երեք ամիս համերաշխ ու սիրով աշխատեցին տարեց գուսանն ու ջահել երգիչը:

Շերամը Թիֆլիս վերադարձավ թե չէ, իրիկնամուտին շտապեց Վարդուհուն տեսնելու: Նրանց հանդիպումն այնքան ջերմ եղավ, որ կարծես թե վերջերս չէր, որ տեսան իրար: Տաղերգուն իմացավ, որ այդ քաղաքում է գտնվում նաև իր հորաքրոջ թոռը՝ Հրարփի Աղբալյանը, որը Մուշեղ Մամիկոնյանի դուստրն է և հոր մահից հետո ապրում է այդտեղ: Եվ նա պարտք համարեց այցելել նրան: Շատ լավ օրերի մասին խոսեցին նրանք: Հրարփին պատմեց նաև, թե ինչպես Մարիետա Շահինյանի ամուսինը՝ թարգմանիչ Հակոբ Խաչատրյանցը եկել էր իրենց տուն...

— Գնանք Գոքորին լսենք,— առաջարկեց Հակոբը: Ու մենք եկանք Սիոնի մոտի ճաշարանը, որտեղ դու նվագում էիր: Եկանք ճաշին, դուրս եկանք երեկոյան: Բոլորս զմայլված լսեցինք երգերդ: Մանավանդ Հակոբը. հո կարգին հաց չկերա՞վ... ուզում էր անդադար լսել քեզ: Հուզված լսեց... Հետո քեզ կանչեցինք մեր սեղանի մոտ, մի՞տքդ է...

— Էդ տեսակ հանդիպումը չի մոռացվի,— հաստատեց տաղերգուն։

— Հակոբն ու դու այնքան մտերմացաք, որ մենք չէինք համարձակվում ընդհատել ձեր քաղցր զրույցը։ Վերջում Հակոբը խնդրեց, որ դու էլի երգես...

— Հա՛, լավ օրեր էին,— ափսոսանքով փակեց երգիչն ու ոտքի ելավ։

3

Զմռան այդ սրսուռ ալգաբացը տագնապալի էր։ Տաղերգուն վեր թռավ խայթվածի պես, մի վայրկյան արձանացավ անկողնում և շունչը պահած ականջ դրեց։ Այս ի՞նչ վայնասուն է. չէ՛, ի՞նչ վայնասուն... Քաղաքը ճչում է հազարավոր կոկորդներով։ Ի՞նչ աղետ է գահավիժել երկրի գլխին, տե՛ր աստված։ Քաղաքի բոլոր գործարանների շչակները սարսռեցնող ճիչ են ժայթքում։ Դրանց ողբին խառնվել է շոգեքարշերի կականը։

Սալվին ելավ պատշգամբ ու կանգնեց ամուսնու կողքին։ Արթնացան՝ Հայկը, Արևհատը, Վարդգեսը, Բաղդասարն ու Երանյակը, հարևանները, երեխաները։ Բոլորն անխոս խմբվեցին Շերամի շուրջն ու լռելյայն ականջ դրեցին։ Գործարանների և շոգեքարշերի աղեկտուր լացին միացավ փողոց ելած ավտոմեքենաների շչակների ձայնը։

Երգիչը հագավ վերարկուն ու ծանրաքայլ իջավ սանդուղքով։ Նա անզսպելի զգաց փողոց դուրս գալու և մարդկանց հետ հաղորդակից լինելու պահանջը. և մի վայրկյան անց հայտնվեց դրսում։ Հայկն շտապեց արհեստակից ընկերների մոտ՝ մտահոգությունը փարատելու։

Փողոցով սուրում էր պաղ քամին. մարդիկ անցնում էին վազքի քայլերով՝ կուչ եկած ու վերարկուների օձիքները ծեփած ծոծրակներին, գդակները իջեցրած հոնքերի վրա։ Խմբերը վազում էին դեպի Երևանյան հրապարակ. թվում էր, թե շարունակվող շեփորահարումն էր, որ նրանց մղում էր դեպի վեր։ Շերամը մոտեցավ մի տարեց մարդու և հարցրեց.

— Էս ու՞ր կերթա ժողովուրդը, ախպե՛ր ջան։

Մարդը տխուր զարմանքով նայեց նրան ու մրմնջաց.

— Լե՛նինն է մահացել, ախպերս, Լե՞նինը...

Շերամը տեսավ հրապարակ լցվող բազմությունը և, ծանրա-

ցած ոտքերը փոխելով, շարունակեց ճանապարհը: Ահա և հրապարակը: Հրապարա՞կ է երևում, որ... Լոկ մարդկային ծովն է, որ ալեկոծվում է այդտեղ: Սև երիզներով դրոշակներն են փողփողում այս ու այն շենքի վրա: Քաղաքային խորհրդի պատշգամբից կախված է լայնաձուփ դրոշը սգո: Դրված է Լենինի մեծադիր նկարը. որքա՞ն էլ հմայիչ է առաջնորդի ժպիտը... Շերամը մտավ բազմության մեջ, արանքներով մի կերպ անցավ ու մոտեցավ պատշգամբին, զգաստ կանգնեց և լսում է ծառախոսին: Սա կոչ էր անում խտացնել լենինյան կուսակցության շարքերը:

— Մեռավ Լենինը, բայց կա՛ նրա ուսմունքը, ապրում է լենինի՛զմը...

«Հըբը ի՞նչ, իհարկե. էդպես մարդու ուսմունքն ինչու՞ պտի մեռնի»: Անձայն հավանություն տվեց նա և վշտահար քայլեց տան կողմը:

Դեռ ճչում էին գործարանների շչակները երկար ու ճիգ. հեռվից լսվում էր մահվան քայլերգը:

Կեսօրին Շերամը մոտեցավ Քուռ գետի կամուրջին, հենվեց բազրիքին ու երկար նայեց ձմեռային հանդարտությամբ հոսող ալյակներին:

Ակամա հիշեց իր տաղը զուլալ ջրերի պղտորվելու մասին...

Նա մեջքն ուղղեց ու, զայրալից դժգոհությունը դեմքին, քայլեց դեպի հավաքատեղին: «Ծո՛, էս բժշկությունն էլ սուտ դուրս եկավ»,— եզրակացրեց նա:

Նրան դեմ եկավ մի դափահար: Եվ Շերամը նրա հետ մտավ ներս:

— Է՛, տղերք ջան, զուլում էկավ մեր գլխին... Չեմ հավատա, գիտե՞ք. մեզի կյանք տվեց, ինքը կյանքից զրկվեց: Կարո՞ղ է էս տեսակ անարդարություն էղնի:

Սրահում բազմաթիվ նվագաձուներ են հավաքվել. մի քանիսը նստած, մյուսները կանգնած՝ տխուր խոսակցում են: Տաղերգուն քաշվում է մի անկյուն, հանում մատիտը. պրպտում է գրպանները...

— Տղե՛րք, մե թուղթ տվեք, շուտ արեք՝ մտքես կփախնի:

— Ի՞նչը, վարպետ,— հարցնում է տեղկոմի նախագահ Մացակ Ազատյանը:

— Չիտե՞ս ինչը... Մե թուղթ տուր, Մացո ջան. գրեմ, քանի մտիհան չեմ արել:

Մացակը մի տրցակ թուղթ ձեռքին մոտեցավ սեղանին.

— Ա՛ռ, վարպետ ջան, մեկի տեղը տասը թուղթ եմ տալիս. գրի, ինչքան քեֆդ տա:

— Շնորհակալ եմ, բայց չկարծես, թե բանաստեղծություն գրելը փլավ ուտել է... Ինչքա՞ն քեֆդ տա...

Շերամը գլուխը թղթին կպցրած՝ գրում է.

Մեծ Լենինը այս օրերը գուշակեց...

Ընկերները լարված նայում են նրան. երևի դժվար է մեծ մարդուն վայել բանաստեղծություն գրելը: Գտնվեց նաև երկրորդ տողը.

Մարդկությանը լավ ծրագիր մշակեց...

— Էղա՛վ,— ինքն իրեն խոսեց նա.— է, հետո՞:

Վեր կացավ, թղթերը ծալեց դրեց գրպանը, մատիտը, արհեստավորի հին սովորության համաձայն, խրեց ականջի ետևն ու գնաց դեպի դուռը:

— Ու՞ր, ուստա Գոքոր,— հարցրեց Մացակը:

— Էնքան թուղթ տվիր, որ բան դուրս չեկավ,— լուրջ տոնով կատակեց վարպետը, դուռը բացեց, որ դուրս գնա, Մացակը, թե՝

— Իրիկունը Սերոժի հետ գործի պիտի էրթաս:

— Լա՛վ,— ասաց Շերամն ու ոտքը դուրս դրեց.— էրթամ՝ տունը հանգիստ գրեմ:

4

Առավոտ է, պարզ առավոտ. արևը փայլում է, բայց չի տաքացնում: Շերամն անցնում է Սոլոլակը, թեքվում աջ ու քայլում ներկայիս Զերժինսկու փողոցով: Նա իր ոտանավորը տանում է «Մարտակոչ» լրագրի խմբագրություն: Բարձրանում է սանդուղքով, բաց է անում դուռը. սա ծանր ծռնչում է: «Ձե՞թ ընչի չեն քսե»,— տարակուսեց, ապա շեմքին կանգնեց ու հարցրեց.

— Կերևա՝ խմբագիրը դու ես:

— Ես եմ:

— Ես էլ աշուղ եմ, բանաստեղծ, ու իմ խոսքը կուզեմ ասել Լենինի մասին:

Եվ նա գրած թուղթը դրեց սեղանին, ձեռքով հարթեց ու պարզեց խմբագրին: «Ինչ կանոնավոր մարդ է, ծուռ բան չի սիրում»,— մտածեց խմբագիրն ու կարդաց.

Մեծ Լենինը այս օրերը գուշակեց,
Մարդկությանը լավ ծրագիր մշակեց,
Շատ տանջանք ու դառնություններ ճաշակեց.
Լույս ծրագիր մեզի թողեց ու գնաց,
Իրեն հավերժ անմահ անունը մնաց:

Չհանգստացավ, սակայն, տաղերգուի հոգին: Օրըստօրե ավելի վեհանում էր նրա հայացքի դեմ մեծագույն հանճարի կերպարը: Եվ նա նոր երգ գրեց:

Ահա նստել է նա որդու՝ Վարդգեսի սենյակում ու երգում է Լենինին նվիրված իր ճոներգը: Դռան մոտ դրված է փոքրիկ երգեհոնը. որդին նվագակցում է.

Հանգիստ քեզ, հանճար, հանգիստ անմահիդ,
Անշեջ, անսպառ, բազմալույս ջահիդ...

Հնչեցին երգի վերջին նիշերը: Որդին տեղափոխվեց սեղանի մոտ և սկսեց նոտագրել: Մերթընդմերթ բարձրացնում է ձեռքն ու կարծես չափ է տալիս աներևույթ երգչախմբին. նորից թեքվում է սեղանին ու շարունակում գրել. երբեմն կրկնել է տալիս առանձին ֆրազներ. գրում է.

Ճիրիմիդ շուրջը անթառամ վարդեր,
Թող բուրեն հավերժ, երգեն սոխակներ.
Եվ կապույտ երկնից՝ արև, աստղ, լուսին
Ամենայն աշխարհ արարքդ խոսին·

Մահերգն աստիճանաբար մեղմացավ, տարածվեց հեռուներում ու մարեց:

Ետճաշյա ժամ է: Ճերամը նստել է պատշգամբում և ծուլորեն քաշում է թազբեհի հատիկները. Մեկ էլ գունդ արեց ափերի մեջ ու գայրացած գրպանը դրեց:

— Անտե՛ր մնաս... Ինչքա՞ն քաշեցի՝ շառ էկավ:

Ծխամորճը հանեց, մախորկա լցրեց, լուցկին վառեց, որ մոտեցնի, ուշացրեց և թու-թու... անելով՝ նետեց մի կողմ: Մեկ էլ հրաժարվեց ծխելուց, ծխամորճը դատարկեց ու դրեց գրպանը: Մտավ տուն և դուրս եկավ նվագարանը ձեռքին. սկսեց փորձ անել: Դրսի դուռը ճռռաց ու մի նիհար երիտասարդ, պատյանով նվագարանը բռնած՝ կանգնեց հարթակին:

— Բարև՛ ձեզ,— անհամարձակ կմկմաց նա:

— Բարով էկար,— պատասխանեց Ճերամը:

— Ինձ Հաջին է ուղարկել ձեզ մոտ. ուզում եմ երգել սովորել:

— Հը՛մ,— արեց տաղերգուն՝ թառի գուշը հենելով ծնկին,— մոտիկ արի՝ տեսնիմ: Անունդ ի՞նչ է:

— Գեղամ:

— Է՛, ձեն ունի՞ս:

— Ը՛... ը՛... երգեմ՝ տես, վարպետ,— ասաց Գեղամը, նստեց, քամանչայի ծայրը դրեց ծնկին ու ծզվզացրեց:

— Տղա՛ ջան, գործիքդ քիչմ էսպես բռնե,— ցույց տվեց Շերամը:

Նորեկն սկսեց երգել վարպետի տաղերից մեկը: Դա «Լե-լե, յարըմն» էր: Ճիգ ու ջանք չէր խնայում, որ լավ ստացվի, բայց տաղերգուն ընդհատեց.

— Կեցի, կեցի՛, Գեղամ ջան, հանգիստ երգե, մի ճգմգվի:

Գեղամը կարմրեց ու ձայնը կտրեց:

— Ոչինչ, ոչի՞նչ... Համ էլ բառերու վրա՛ ուշքդ պահե: Պտի սորվիս, հեշտ չէ:

Եվ Շերամն ինքը երգեց: Գեղամը բերանբաց լսում էր. աչքերն էլ չէր թարթում. «Էսպես երբ կրնամ երգե՞ որ»,— մտածեց:

— Եթե անպատճառ սովորել կուզես, պտի չարչարվիս. թե չէ բան դուրս չի գա: Էսօր էսքանը:

Գեղամը հարցրեց.

— Վարպե՛տ, իսկ ձեզ ո՞վ է սովորեցրել:

— Է՛, Գեղամ ջան, ի՞նչ սովորեցնել, ինչ բա՞ն... Ես վարժապետ չեմ ունեցել, բայց հիմի, տե՛ս, վարժապետ պտի դառնամ:

Գեղամը ոտքի ելավ:

— Էլի՞ գամ, թե՞ չէ,— հարցրեց:

— Արի, արի, բա ի՞նչ. շատ պտի պարապիս:

Գեղամն սկսեց դաս առնել: Մի քանի օր անց մի թերթիկ տվեց ուսուցչին, որի վրա գրված էր վարպետի «Ղանավուզ շապիկ» երգը:

Վարպետն սկզբում ինքը կատարեց, իսկ Գեղամը շունչը պահած լսեց:

Մի պահ երիտասարդին համակեց հուսահատությունը. «Չէ՛, Գեղամ, զուր է. մինչև էսպես երգել կարողանաս, կյանքդ կերթա»:

Վարպետն ավարտեց ու հորդորեց նրան, որ փորձի: Ուսուցիչը նկատեց նրա վախն ու խորհուրդ տվեց.

— Մի՛ նեղվի, Գեղամ ջան. ձենդ կա, բայց... Երգելը լավ բան է. երգելով մարդու կյանքը կավելանա:

Ու Գեղամը վառ հույսեր փայփայելով գնաց:

ԱՄԵՆՈՒՐԵՔ ՏԱՂԱՐԱՆՆ Է ԱՍՏՂԵՐԻ

1

Ամառային այգուց լսվում է մերթ ջութակների դայլայլը, մերթ շեփորների ծիչը, մերթ թմբուկների խուլ որոտը, մերթ գալարափողի թավ մռլտոցը: Երբեմն բոլոր նվագարանների ձայները միաձուլվում են, և թնդում է համերգը: Երբեմն էլ կտրուկ ընդհատվում է համահնչուն մեղեդին:

... Ահա, անապատով, փափուկ ոտնատրոփով, դանդաղ ընթանում է ուղտերի քարավանը...

Նվագախումբը փորձում է Ալեքսանդր Սպենդիարյանի «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը:

Փորձն ավարտված է: Եվ ցերեկային այգու ծառուղիներում տիրապետում է սաղարթի սոսափյունը, ծաղիկների շշունջը և թռչնիկների ծռվողյունը: Անուշ հոգնությունը խմբավարին մեղմասահ իջեցնում է բեմահարթակից: Նրան ընդառաջ է վազում կոնսերվատորիան նոր ավարտած և ստեղծագործական առաջին քայլերն անող Վարդգես Տալյանը: Նա պինդ-պինդ սեղմում է հռչակավոր կոմպոզիտորի ձեռքը և հայտնում իր հիացմունքը:

Միմիայն երեկոյան, համերգից հետո, Վարդգեսը պատմեց իր և ընտանիքի մասին: Չէ՞ որ կոմպոզիտորն ուզեց իմանալ Տալյան տոհմի պատմությունը: Երբ երիտասարդ երաժիշտը խոսեց հոր մասին և հպարտացավ, թե ինչքան տաղեր է ստեղծել նա, Սպենդիարյանը զարմացած բացականչեց.

— Ի՞նչ եք ասում, Վարդգե՛ս Գրիգորևիչ.

— Այո՛, Ալեքսանդր Աֆանասևիչ. մոտ երկու հարյուր...

— Իսկ որտե՞ղ է ապրում նա հիմա,— անհամբեր մարդու արագախոսությամբ հարցրեց Սպենդիարյանը:

— Այստեղ՝ Թիֆլիսում,— պատասխանեց Վարդգեսը:

— Իսկապե՞ս,— երեխայի նման ուրախացավ կոմպոզիտորը. — դե՛, շուտ գնանք տեսնենք նրան, երիտասա՛րդ, գնանք լսենք նրան:

Վարդգեսը ժպտաց ու բռնելով մեծ երաժշտի թևը, առաջնորդեց դեպի հանդերձարան:

— Ալեքսա՛նդր Աֆանասևիչ,— ասաց նա,— դուք հիմա հոգնած եք,— Սպենդիարյանը գլխով արեց՝ այո, շա՛տ...— գնանք՝ հանգստացեք, իսկ առավոտյան Հայարտանը կլսենք հայրիկիս երգերը, Շերամի տաղերը:

Եվ արվեստի քուրմերի հանդիպումը տեղի ունեցավ: Շերամը սեղմեց կոմպոզիտորի աջը, և սա զգաց նախկին արհեստավորի կոպտավուն սեղմումը. ժպտաց ու ձեռքը մեկնեց նվագարանին: Տաղերգուն իսկույն նրան հանձնեց թառը: Սպենդիարյանի զարմանքը պենսնեի տակից ավելի շողակն երևաց, երբ երգիչն ասաց, թե գործիքն ինքն է շինել: Կոմպոզիտորը մի վայրկյան շուռումուռ տվեց դա, դիմախաղով հավանության նշան արեց ու հանձնեց տիրոջն այնպես, ինչպես նորածնի բարուրը կհանձնեն երջանկաժպիտ հորը:

Եվ սկսվեց պատարագի նման հանդիսավոր ու ոգեկոչության պես խորհրդավոր մենահամերգը: Շերամն սկզբում կատարեց Լենինին նվիրված երգը: Եվ սրա բանաստեղծական տողերն ու մահերգ հիշեցնող մեղեդին տրտմության քող քաշեցին նրանց դեմքերին: Երգիչն ավարտեց տխուր երդումը և սպասեց գնահատականին.

— Վատ չէ, վատ չէ՛,— խոսեց կոմպոզիտորը:

— Հայրիկիս ամբողջ ստեղծագործության լեյտմոտիվը լիրիկան է՛ եղել.— Սպենդիարյանը դիմախաղով հավանություն հայտնեց:— Հայրի՛կ,— դարձավ որդին,— դու մյուս երգերիցդ կատարիր:

Շերամը ժպտաց, հարգալից նայեց կոմպոզիտորին ու մտավ իր տարերքի մեջ: Եվ դահլիճում տարածվեց խորտակված սիրո և հույսի տաղը.

Էլի էսօր սիրտս կուլա,
Սիրած յարին չի տեսել,
Էլի ամպեր քուլա-քուլա
Գլխիս դուման են դիզել

Սպենդիարյանին առանձնապես դուր եկան կրկներգի տարբերակները:

Մեծ կոմպոզիտորը գուսանի դեմ նստած՝ ուշադրությամբ ունկնդրում էր նրա սիրո ձայնը և ըմբոշխնում կենարար մեղեդիները: Մանկան անմեղ ու վճիտ հայացքով նայում էր նա տաղերգուի դեմքին, խումար աչքերին և մտածում:

Շերամը նվագում էր երիտասարդի ավյունով. նվագարանն այնպես էր շարժում, որ թվում էր, թե դա ինքն է թռչում վեր, սուրում վար: Երգչի մատներն այնպես էին խաղում լարերի վրա, որ ասես ոչ թե նվագում է, այլ գուրգուրում է նվագարանը:

Սպենդիարյանի հայացքը համառ որսորդի պես հետևում էր նրա ձեռքերին. սրանց վրա ցցուն բեկբեկված էին արհեստավորին բնորոշ երակները:

Ծորում էր մեղմօրոր երաժշտությունը և թափանցում կոմպոզիտորի հոգու խորքերը: Նրա հայացքը երգչի ձեռքերից սահեց վեր ու կանգ առավ տաղերգուի դեմքի վրա. բայց մտորումներն ընդհատեց քնարական նրբահյուս տաղը: Մեծ երաժիշտը համակ լսողություն դարձավ, երբ հնչեց.

...Վարդ էի, փուշ եմ դառել,
Մեկ անթև դուշ եմ դառել .

Ընդմիջումների ժամանակ Սպենդիարյանը հարցուփորձ էր անում, և Վարդգեսը բացատրում էր որոշ բառեր ու դարձվածքներ: Նա հաղորդեց, որ հայրը տարիներ առաջ հորինել է «Գալիս եմ դուռդ»:

— Դա՞ որն է,— հետաքրքրվեց կոմպոզիտորը:

Վարդգեսը խնդրեց, որ հայրը կատարի նրա ցանկությունը: Սպենդիարյանի ուշադրությունից չվրիպեց, որ երգչի հագինը հասարակ բլուզ է և պիջակ: Ու նա որդուն հարցրեց. մի՞թե հայրը միշտ այդ հագուստով է եղել:

— Ո՛չ, Ալեքսանդր Աֆանասևիչ, արխալուղ և չուխա է հագել:

Եվ բացատրեց, թե ինչ է արխալուղը, ինչ է չուխան:

— Հիմի՞ ինչ երգեմ,— հարցրեց Շերամը:

— Ի՞նչ ուզում եք. ես լսում եմ ամբողջ ուշադրությամբ:

Հայրը նայեց որդուն ու ժպտաց. Վարդգեսը հուշեց

— «Դարձի մեկ աշե», հայրիկ.— ապա դառնալով կոմպոզիտորի կողմը, ծանոթացրեց.— հորինել է քսան տարի առաջ:

Կատարելուց հետո Շերամը պատմեց, թե ինչ պայմաններում է ստեղծվել այս երգը. ու երեքն էլ ինքնաբուխ ծիծաղեցին: Հետո, լեռների ծաղկաբույր հովի նման, լսելիքը շոյեց՝ «Սիրում եմ քեզ», իսկ «Շորորան» ապշեցրեց իր կատարելությամբ: Սպենդիարյանը շուտ եկավ Վարդգեսի կողմը և ռուսերեն հայտնեց իր տպավորությունը

— Վարդգե՛ս Գրիգորևիչ, ես հիացած եմ. ֆորմաների ինչպիսի՛ կատարելություն, նյուանսների ինչպիսի՛ նրբություն...

Մի երգի կատարման ժամանակ կոմպոզիտորը թաշկինակը մոտեցրեց աչքերին: Շերամը դադարեցրեց նվագը, իսկ նա ձեռքով

արեց՝ շարունակիր: Եվ հնչեց հավերժական սիրո լուսավոր շարականը...

Սպենդիարյանը, հայացքը երգչին բևեռած՝ մտորումների թավուտն էր մտել... «Զարմանալի՛ է. հասարակ հյուսնը, հազիվ գրաճանաչ դարձած, նոտաներից բոլորովին անտեղյակ մարդն այսպիսի տաղեր է հորինել: Հանճարե՛ղ է...»:

Այդ յուրահատուկ մենահամերգից հետո Սպենդիարյանը անառարկելի մի պահանջ դրեց Վարդգես Տալյանի առաջ.

— Եթե դուք, Վարդգե՛ս Գրիգորևիչ, այս անգնահատելի գոհարները չնոտագրեք և չհոգաք տպագրության գործը, աններելի հանցանք կատարած կլինեք:

— Արդեն սկսել է,— որդուն կշտամբանքից պաշտպանելու համար միջամտեց Շերամն ու նվագարանն ուզեց դնել շապկի մեջ:

— Ինչու՞ եք շտապում, վարպե՛տ,— հարցրեց կոմպոզիտորը:

— Իրիկունը գործի պտի էրթամ:

— Ի՞նչ գործ,— Սպենդիարյանը հարցականն ուղղեց երիտասարդին:— Մի՞թե ժողովրդին այսպիսի գանձեր նվիրելը մեծագործություն չէ.

Շերամը գլուխը կախեց. ի՞նչ ասի, որ արդարանա:

— Դե՛... մի քիչ նվագում եմ...

Որդին աչքերը խոնարհեց. հայրը դարձյալ վահանեց նրան.— տղես երկու տեղ կաշխատի. դեռ ընկերոջ հետ էլ Քամոյան եկեղեցում խումբ ունի:

— Վարպե՛տ, մի երգ ևս,— խնդրեց կոմպոզիտորը:

Տաղերգուն նվագարանը նորից հանեց չթե պատյանից, և քիչ անց՝ Ամպերն ելան բլուր-բլուր, Մասիս սարի կատարեն... Սպենդիարյանն աչքերը փակ՝ ունկնդրում էր: Հնչեց նաև «Մի բալա է» տաղը: Վարդգեսը կամացուկ բացատրում էր օտարամուտ բառերը՝ յանդուն և այլն:

— Է՛, ես էրթամ, ընկերներս կսպասեն,— և ձեռքը պարզեց Սպենդիարյանին: Նա սեղմեց, իսկ Շերամը ջոյուն ժպիտով նայեց մեծ երաժշտի զարմանալի ջինջ աչքերին: Հրաժեշտի պահը կաշկանդել էր նրանց լեզուն:

Աշնան սկզբին Շերամը դարձյալ հայրենի քաղաքում էր: Այցելեց նվագածու ընկերներին, բարեկամներին ,եղավ քաղաքային խորհրդում ու հետաքրքրվեց, թե ինչ վիճակում է ջրանցքի գործը: Եղավ նաև Սալվինազի եղբոր ընտանիքում, որ Շորագյալից

գաղթելուց հետո ապրում էր այդտեղ: Նա չմոռացավ նաև հին ընկերոջը՝ Արաբաջյան Արային: Մի խոսքով, պարտք համարեց չանտեսել ոչ մի հոգեհարազատի: Իմացավ, որ վաղեմի կուսակիցը՝ Մեխակ Ստամբոլցյանը, եկել է կրտսեր եղբորը՝ Արտաշեսին տեսության և շտապեց նրանց տուն: Հենց այդտեղ էլ որոշեցին գնալ ու տեսնել բանաստեղծուհի Շուշանիկ Կուրղինյանին: Եվ ահա, երեք բարեկամները նրա տան շեմին են:

Մեխակը զգուշությամբ հրեց մի քիչ խարխուլ տան դուռը: Երեքն էլ մտան ու կանգ առան միջանցքում: Բանաստեղծուհին կռացել էր տաշտակի վրա և լվացք էր անում: Ոտնաձայն լսելով շուռ եկավ, տեսավ հին ընկերներին և տխուր ժպտաց. սրբեց ձեռքերի օճառաջուրը և ողջունեց նրանց: Տաղերգուն նայեց շուրջը: Հնամյա կացարանի պատկերը ճնշող էր: Շուշանիկը նրանց հրավիրեց սենյակ և առաջարկեց նստել, ապա դիմեց Արտաշեսին.

— Ի՞նչ լավ եք արել, որ Գոքորին էլ եք բերել:

— Է՛, Շուշանիկ ջան, տանդ տեղը չիտեի, թե չէ...— և համենայն դեպս, հարցրեց.— ի՞նչդ ես, Շուշանիկ:

— Է՛հ, ի՞նչ ըսեմ, Գոքոր. կապրիմ հըլը որ:

Գուսանն իմացել էր նրա դստեր մասին, բայց չհամբերեց և հարցրեց.

— Անուշդ ու՞ր է:

— Ընտանիքով Երևանում են:

— Է՛, չե՞ն գա տեսության:

— Հըբը չե՞ն գա. կուգան, թոռներուս էլ կբերեն.

Մեխակը խրատող հայացքով նայեց երգչին, իսկ Արտաշեսը սեղմեց նրա թևը՝ ուրիշ բան խոսի... Ու Շերամը փոխեց զրույցի նյութը.

— Շուշանի՛կ ջան, էլի կգրես, չէ՞... Մի ժամանակ անունդ կթնդար ամեն տեղ:

— Մեկ-մեկ մուսան ինձ էլ կայցելե, Գոքոր. էս տարիքիս՝ լավ է, էլի. իսկ դու՞:

— Փառք աստծու, մեկ-մեկ էլ իմ դուռս կծեծե:— Ծիծաղեցին:— Էդ անտեր մուսան հիմի դժվար կուգա. հիվա՞նդ է, ինչ է՝ չգիտեմ:

Մեխակն ու Արտաշեսը չէին ուզում միջամտել բանաստեղծների զրույցին: Մեկ էլ Շուշանիկը բարալիկ ձայնով երգեց.

— Դու իմ մուսան ես, առանց քեզի երգել չեմ կարող ..

— Իշտը էդ է՛... կպատահի, որ առանց մուսա էլ կերգեմ,

ի՞նչ անեմ. մարդ կա՝ տրամադրության չի աշե. ինչքան կուզես ըսա՝ ետ տար քո խաչը

Շուշանիկը դառը ժպտաց և ասաց.

— Է՛, մարդկանց ի՞նչ կա, Գոքոր

— Հակոբ Հակոբյանն ու դու աշխատավոր մարդուն շատ եք գովերգել։

— Դու էլ պակաս չես մնացել։

— Դե՛, մենք աշխատավոր, մեր ժողովուրդն աշխատավոր. էլ ու՞մ պիտի գովենք։

— Իհարկե, իհարկե.

Մեխակն ու Արտաշեսն արդեն ոտքի էին ելել։

— Լվացքդ պաղավ, Շուշանիկ ջան. մենք էրթանք,— և տրամադրող նայեց մյուսներին։ Բոլորը խնդացին։ Բանաստեղծուհու տրամադրությունն էլ բարձրացավ և նա առաջարկեց.

— Քանի էստեղ ես, մեկ-մեկ արի, Գոքոր։

— Կուգամ, հըբը ի՞նչ։

Եվ նրանք դուրս ելան։

2

Առավոտյան շուտ եկավ հավաքատեղի։ Նա չէր կարծում, թե այդ ժամին որևէ մեկը կլինի այդտեղ. բայց երբ դուռը կիսաբաց արեց, սրահի հեռավոր անկյունում նկատեց Սամսոնին։ Սա շուտ էր եկել, որ հանգիստ նորոգի գործիքը։ Զարմացած նայեց Շերամին։ Նա հասկացավ, որ գուսանի վրայից տան հոտ չի գալիս. ինչ-որ հաճելի բուրմունք կար նրա վրա։ «Ուրեմն նրա մոտից է եկել». հետո, թե՝

— Բարի լու՛յս ուստա Գոքոր. էս ի՞նչ բան է, ինչու՞ ես էսքան շուտ եկել։

— Բարի լույս, Սամսոն ջան. ուշ գնացի տուն ու անտեր քունս չտարավ։ Է՛, Հաջուն էլ թաղեցինք. հետո թե հերթն ումն է, վայթե աստված էլ չիմանա։

Քիսան հանեց, ծխամորձը թութուն լցրեց, նստեց լուսամուտի մոտ, ծխեց ու նայեց գետի թավալգլոր ալիքներին։ Սրանք մղեցին նրան մտորումների։ Գրպանից հանեց դեղձի կորիզներից պատրաստած թազբեհն ու սկսեց քաշել հատիկները։ Թե ինչպես արեց, որ վերջում «խեր» եկավ, չիմացավ. բայց ուրախ նայեց դրան ու դրեց գրպանը։ Սակայն տրտմությունը դարձյալ խառնվեց նրա մտքերի կոհակներին։

Աչքի առաջ կանգնեց Զոնգուր Հագոն, որ սրճարանատեր ու երգապաշտ Տալոյենց Կարապետի որդուն ընկերացրեց իրեն: Նրա միջոցով Գրիգորը հայտնի դարձավ որպես երգիչ և մոտ քսանհինգ տարի նվագեց նրա հետ· ... Մտաբերեց Ալեքպոլի քաղաքային ակումբի առաջին երեկոն· Դրանից մի քանի օր առաջ Հագոն, հյուսնի արհեստանոցում Գրիգորին հարցրել էր.

— Նվագել գիտե՞ս. հըլը թառդ լարե՝ տեսնիմ:

Գրիգորը թառն այնպես լարեց, որ փորձված քամանչահարը գոհ մնաց: Հետո երիտասարդը նվագեց ժողովրդական մի պարեղանակ. սա նույնպես գոհացրեց վարպետին: Չորս օր անց եկան հայտնեցին, թե շաբաթ օրը ակումբում երեկույթ պետք է լինի: Մինչ այդ, Գրիգորը չէր իմանում, թե «կլուբն» ինչ է: Սկսեցին նվագել: Ներս մտնողը զարմանում էր՝ «Ո՞վ է էս տղեն: Խաչոն ու՞ր է»: Հագոն ասում էր.

— Տալոյենց Կարոյի տղեն է:

Ակումբի անդամներից մեկը խնդրեց, որ ջահելը մի բան նվագի. սա շփոթվեց: Վարպետը սրտապնդեց նրան և հուշեց, որ «Բայաթի Շիրազ» նվագի: Նվագեց. Հավաքվածները ծափահարեցին և ասացին.

— Հագոյից ու Խաչոյից լավ կնվագես, ա՛լ տղա

Այնուհետև Ղարաբաղից եկավ Ջումշուդն ու Գրիգորին սովորեցրեց պարսկական և ուրիշ արևելյան եղանակներ նվագել: Հիշեց նաև, թե ինչպես Կարսից եկողներ էին լինում, որ իրեն լսեն:

...Ահա և Ֆիդանենց Հարությունը կամ, ինչպես Ալեքպոլում ու Թիֆլիսում անվանում էին՝ դափահար Մաշտին: Այնտեղ Բոստանջոնց սրճարանում էին նվագում, հետո էլ այստեղ՝ հարսանիքներում, քեֆերում, համերգներում. ակումբներից էլ հեռու չէին, օրինակ՝ Արհեստավորաց:

— Էս դհոլչու անունն էլ է Գարուն.. — չէ, չէ՛.. Գարունով, հըբը՛,— քմծիծաղեց.— լավ էլ խումբ ունեինք, հե՛չ մի ըսե,— հոգոց հանեց:

Աշուղական խումբը կազմակերպվեց երկու տարի առաջ. ինքն էր, Կոտոն, Առաքելը՝ Միրզա Շահբաթյանը, Գարունը· Խմբի ղեկավարը Սաշա Օգանեզաշվիլին էր:

Համերգներով հանդես էին գալիս՝ Կարմիր բանակի տանը, Կաշեգործների, Ադելխանովի գործարանի ակումբներում, Արաքսյանի թատրոնում, Ուսուցչի տանը, Ջագէսի ու Մցխեթայի բնակիչների առջև:

Լինում էին նաև աշուղների մրցումներ:

Մեկ էլ միտքն ընկավ սիրեցյալը: Եվ նա քալլեց դեպի դուռը:

— Էրթամ տեսնիմ ինչ է անում, ինչպես է դրությունը:

Հենց այդ րոպեին ներս մտավ Լևոն Կարախանը քամանչան ձեռքին և ասաց.

— Էգուց Մուշտալիդում կոնցերտ պիտի տանք: Մոսկովից մեծ մարդիկ են եկել, ուզում են ականջ անեն:

— Լավ, կուգամ:

Եվ Շերամը հրաժեշտ տվեց ընկերոջն ու ճանապարհը թեքեց Պլեխանովի պողոտայի կողմը

Այդ համերգից հետո էր, որ Լենինականից ժամանած Գևորգ Հանեսօղլյանը հաղորդեց, որ երգչին հրավիրում են հայրենի քաղաք՝ ակումբներում հանդես գալու. համ էլ հունիսին ավարտվելու է Շիրակի ջրանցքի շինարարությունը և նա քաղաքի ցանկալի հյուրը կլինի. Հայրը փորձեց համոզել որդուն՝ Վարդգեսին, որ գա հետը, բայց նա կապված էր երաժշտական ուսումնարանի տարեվերջի քննությունների գործին, իսկ կրտսերն ավարտում էր միջնակարգը և խելքին փչել էր մեկնել գյուղ·

— Միայն նա հո չի՞, հերըս. կուսակցությունը կոչ է արել՝ երեսներս դեպի գյուղ. և շատ շրջանավարտներ դիմել են Հայաստանի Լուսժողկոմատի ներկայացուցչին, որ գնան գյուղերը:

— Կտեսնի՞ս էդոնց. մա՛րդ են դառել.

Շիրջրանցքի բացումը հունիսի վերջերին պետք է լինի, երբ որ... Բայց ինքը կարո՞ղ է չգնալ ու իր աչքով չտեսնել հարազատ դաշտերի ուրախությունը.

— Դու էլ ամեն տարի կերթաս. չե՞ս հոգնի, քա՛,— մտահոգ խոսեց կինը: Շերամը յուրօրինակ շարժում արեց.

— Ի՞նչ կխոսիս. որ կկանչեն, չերթալը նամարդություն կեղնի... Ջրանցք են շինել, ա՛յ կնիկ. ամբողջ Շիրակի հողերը պտի ջրեն..

3

Աստղալից երկնքի վիթխարի գմբեթը ծածկել էր վրաց աշխարհի հնօրյա ոստանն ու շրջակա լեռները, երբ զարդափնջերով երիզված մի կառք դուրս եկավ Թիֆլիսից ու ճամփա ընկավ դեպի հարավ: Եվ քանի հեռանում էր քաղաքից, աստղերն ավելի պայծառանում էին, իսկ երկնակամարը սև ձյութի պես կախվում

էր երկրի վրա: Կառքի ուղևորները սկզբում ձայն չէին հանում: «Վա՛յ, լոթի գյումրեցիները, վա՛յ... Էնտեղից էստեղ ֆայտոն են ուղարկել, թե՝ առանց ուստա Գոքորի որ եկաք, տուն չենք թողնի...»— մտորում էր Շերամն ու նայում աջ ու ձախ ննջող ընկերներին: Կարոն հենվել է դափի կողին ու քնել, իսկ Լևոնը քամանչան դրել է իջեցված վերնոցի հիմքին, գլուխը ետ գցել ու ընկղմվել Մորփեոսի գիրկը: Դիմացի նեղլիկ նստարանին կուչ են եկել՝ Սենեքերիմն ու արթիկցի Վահանը: Սենեքերիմը դեռ սթափ է. նայում է վարպետին և մտաբերում, թե ինչպես նա իրեն Թիֆլիսում տարել էր հետը նվագելու, ասելով.

— Մեր երկրացի է, նոր է եկել. թող խեղճ չմնա: Ընտանիք կպահե, բոլուկմ երեխա ունի:

Շերամը երեխաներ շատ էր սիրում: Նստում էր պատշգամբում, թազբեհ քաշում. ու երբ տեսնում էր, որ դստեր աղջիկը տոտիտոտի մոտենում է, աչքերը փակում էր, թե իբր ննջում է. թոռնիկն էլ թազբեհը փախցնում էր: Պապը, իբր հանկարծ, արթնանում էր և. իբր տենդոտելով՝ [illegible]

— Վա՛յ, ծիտիկն ու՞ր թռավ, ու՞ր տարավ խաղալիքս՝

Եվ դեսուդեն էր ընկնում, իսկ երեխաները ծիծաղում էին, հետո խնդրում, որ պատմի իր հորինած «Զաքյուրկա» հեքիաթը: Երբեմն էլ թառն առնում էր, մտնում եղբոր աղջկա՝ Արաքսու սենյակն ու կամացուկ երգում նրա մանչուկի մահճակալի մոտ. սա էլ յուրովի արձագանքում էր ու քնում:

Տաղերգուն հիշեց այս ամենը, և որպեսզի ինքն էլ չքնի, նվագարանը ձեռքն առավ ու սկսեց մեղմորեն երգել: Կարոն սթափվեց և ուզեց դափը գործի դնել, վարպետը բռնեց նրա թևը՝ պետք չէ: Լևոնն իսկույն կռահեց երգչի մտադրությունը և քամանչային ձեռք չտվեց: Եվ գիշերվա ծոցում գեղգեղաց տաղն աստղերի: Երգում էր գուսանը մեղմաձայն ու երկինքն ասես բացում էր աստղային աչքերն ու թարթում հուզմունքից: Բոլոր ձայները պապանձվել էին:

Կառքն անցնում էր Աղստև գետի քարքարոտ ափով: Անհամար ծաղիկների բուրմունքը միահյուսվել էր գետի կարկաչին և թվում էր, թե դրա ալյակներն են, որ բուրմունք են տարածում անտառներում ու ծերպերում, իսկ ծաղիկները մեղմ քչփչում են իրար հետ:

Գիշերեցին մի գյուղում և առավոտյան շարունակեցին ճանապարհը:

Մոտենում էր երեկոն: Ժղրիդների համերգն աստիճանաբար ուժեղացավ: Կառքը հանդարտ օրորվում էր դեպի Ճիրակ: Եվ իրիկնային սյուքի պես հնչում էր տաղը.

Ջով գիշեր է, դուրս եկ,
Լուսնյակը նորել է
Նուշ աղջիկ, քո սիրուց
Հանգիստս կորել է

Կառապանն էլ հազիվ լսելի ձայնակցում էր երգչին: Եվ տաղն արձագանքեց մթամած սաղարթներում, գետի շառաչուն ալիքներում: Երբ անցնում էին ինչ-որ ավանի միջով, մի քանի դուռ բացվեցին, ու շեմքերին մարդիկ հայտնվեցին· Նրանք ականջ էին դնում գիշերային մեղեդին.

Աստղեր կշողշողան կապուտակ երկնքեն,
Վառեցիր իմ հոգին քո սև-սև աչերեն.

— Ա՛յ տղա, էն ո՞վ ա,— լսվեց մոտակա տան դռնից.— մխելի բարձր ասա, ախպե՛ր ..

— Է՛, ուստա Գոքոր,— խոսեց կառապան Կռունկը,— կտեսնի՞ս, օտար մարդոց սրտին էլ դուր եկավ երգդ·

Մի գիշեր էլ նրանց հյուրընկալեցին Գուգարքի կենտրոնում: Լույսը բացվել էր արդեն, որ կառքն անցավ անտառոտ լեռների ստորոտներով և ընթացավ դեպի Համամլու: Մոտիկից լսվում էր Փամբակ գետի ջրքիջը:

Կուժը ուսիդ՝ աղբյուր կերթաս
Ծաղկոտ դաշտի վրայով .

զնգաց Ճերամի ձայնը. Այս անգամ Կարոն իրեն զսպել չկարողացավ, դափը շապկահան արեց ու համաչափ նվագակցեց· Լևոնը լացացրեց քամանչան, որն ասես խոսեց տաղերգուի լեզվով, թե՝ ամեն գիշեր ուխտ եմ գնում էն պարզ, անուշ աղբյուրին...

Կառապանը դանդաղեցրեց ձիերի ընթացքը և ասաց.

— Դու երգե, ուստա՛ Գոքոր. ձենիդ դուրբան: Հիմի կիջնիմ, քյահիլաններուս կջրեմ, գարի կուտամ. համ էլ թող քիչմ հանգըստանան: Կուզե՞ք դուք էլ իջեք. աղբյուրը մոտիկ է. վայ թե հաց էլ ուտեք:

Եվ Կռունկը կանաչի վրա փռեց իր կիսամուշտակն ու նրանց հրավիրեց նստելու։ Իրիկնամուտին հասան Լենինական. իսկ մի քանի օր անց՝ 1925 թվականի հունիսի 21-ին...

Ծանրորեն ու հանդիսավոր ճռինչով բարձրացավ ջրարգելակը և Արփա լճից սկիզբ առնող Ախուրյան գետի ջուրը ցնծալից գոչգոչյունով հորդեց Շիրջրանցքի հունը։ Սարերից ու ձորերից որոտացին զինվորական վաշտերի համազարկերը, հաղթական կեցցե և ուռա բացականչությունները, դղրդացին թմբուկները, զիլ ճչացին զուռնաները, վեր նետվեցին հազարավոր գլխարկներ...

Նույն օրը երեկոյան տեղի ունեցավ Հայաստանի Կենտգործկոմի հանդիսավոր նիստը, որի օրակարգի հարցերից մեկը Շիրականալի կառուցման վարչության հաշվետվությունն էր։ Ապա որոշում ընդունվեց Շիրակի ջրանցքը Լենինի անունով կոչելու մասին։ Լենինական ժամանած հյուրերի կազմում էին՝ Անատոլի Լունաչարսկին, նշանավոր գիտնական ու ճանապարհորդ Ֆրիտյոֆ Նանսենը, Նիկոլայ Իլյիչ Պոդվոյսկին, հռչակավոր քանդակագործ Սերգեյ Մերկուրովը, բանաստեղծ Հակոբ Հակոբյանը։

Հայրենի քաղաք հասնելու հաջորդ օրը, առավոտյան, Շերամը քայլեց դեպի նշանավոր ռեստորանը։ Կառապանը տեսավ նրան ու մտածեց.

— Փա ոք քեզ, աստված, ուստա Կոքորրս ողջ-առողջ ասցրր Գյումրի, էլ քեֆիս քեֆ չի հասնի

Կեսօրին տաղերգուն հանդիպեց կառապանին և հայտնեց ճաշարանի տեղը։

— Գիտեմ, գիտեմ,— հավաստիացրեց Կռունկը։

— Մեկ-մեկ կուգաս Էնտեղ, ես էլ սիրածդ երգերը կերգեմ։

— Անպատճառ, ուստա Գոքոր։ Մեռած էլ որ էղնիմ, կելնիմ՝ կուգամ։

— Խելառ-խելառ ի՞նչ կխոսիս. թշնամիդ մեռնի։

Ու նրանք ձիձաղելով բաժանվեցին։ Մի երկու օր հետո Շերամն այցելեց նվագածուներին։ Նրան աղմկալից դիմավորեցին։

— Ինչ էլ ժամասակին ես եկել։

— Էն գյումրեցի ուռումն է՞լ է եկել՝ Մերկուրովը։

— Առանց էնոր բա՞ն կեղնի,— ասաց Թաթոսը։

Հենց այդ պահին ներս մտավ բարձրահասակ ու թիկնեղ Արտավազդ Սանոյանը։ Դուան մեջ կանգնեց թե չէ, սրահը մթնեց։

— Ծո՜, Արտո, դո՞ւ ես,— տեղից կանչեց տաղերգուն,— բարև։ Քիչմ առաջ արի, երեսդ տեսնինք։

— Ուստա՛ Գոքոր, բարով ես էկել.— և Սանոյանը մոտեցավ ու խոնարհաբար սեղմեց երգչի աջը։

— Ընկե՛ր Սանոյան, վարպետը կըսե, թե Սերգեյ Մերկուրովը եկե՞լ է,— դիմեց Արծրունը։

— Հա՛, էստեղ է. էկել է թե չէ, հարցրել է՝ թազա քյուֆուրմուֆուր չիտե՞ք։ Համ էլ՝ որ ընձի կուզեք պատիվ տալ, չանախ դրեք՝ սապոժնիկի դազգահի վրա ուտեմ։

Նվագածուները միահամուռ քրքջացին և իսկույն լռեցին, Սանոյանից սպասելով զավեշտական պատումներ քանդակագործի մասին.

— Հիմի ըսեմ, տղե՛րք. ուստա Գոքոր, դու էլ լավ ականջ էրա։ Ուրեմն, Սերգեյը որ ուսումն ավարտած կուգա, հերը կհարցնե թե՝ ի՞նչ ես սովորել. էդքան փող ծախսեցինք ուսմանդ վրա, կերար, խմեցիր... վերջը ի՞նչ ես դառել։ Սերգեյը կըսե. «Կավից-բանից մարդ կշինեմ». «Ծո՛, ըսա բրուտ ես դարձել, էլի... Զորի մալլեն լիքը բրուտներ կան». «Ես բրուտ չեմ, հերըս. քանդակագործ եմ դառել՝ սկուլպտոր, կհասկնա՛ս»։

... Հայրը՝ Յորոն, կասկածով նայում է որդուն, բայց հետո, երբ տեսնում է նրա քանդակները, համոզվում է, որ տղան իզուր չի վատնել այդքան միջոցները.

— Մի օր էլ,— շարունակեց Սանոյանը,— Սերգեյը հոր քանդակն էնպես է անում, որ կենդանի մարդուց չի տարբերվում։ Քանդակում է ու պառկեցնում վերմակի տակ։ Մերը մոտենում է, ձեռ տալիս ու լաց է լինում, թե՝ ուռում Յորոն մեռել է, սառել է՛...

Սրահում որոտաց աղմկալից ջրքիջը։

... Եվ հայրը համոզվել է, որ տղան կարգին մարդ է դարձել։

Հետո Արտավազդն ասաց, թե իրեն ուղարկել են, որ Ճերամին և իր ընկերներին հրավիրի հանդիսավոր երեկոյին։ Սակայն երգչին մտահոգեց չուխա և արխալուղ ճարելու խնդիրը։

— Հե՛չ մի մտածե, ուստա Գոքոր, ես ունիմ,— վստահեցրեց Սանոյանը.— իրիկվա կողմը կուգամ ձեր տուն՝ կերթանք։

4

Հունիսյան երեկոն աշխույժ եռուզեռով լցնում էր քաղաքը։ Վերջալույսը շողշողացնում էր Արագածի ձյունապատ, ամառնամուտի տաք գրոհին դիմադրող գագաթները։ Արեգակի շողերն

ընկել էին Պլպլան ժամի գմբեթի լուսամուտներին ու չարաճճիությամբ խաղում էին դրսնց կրծքին: Այդտեղից մինչև Տալոյենց հարյուրամյա տունը ձգված էր ուղիղ մի փողոց: Դեպի այդ տունն էր ընթանում մի կառք, որի մեջ բազմել էին Սանոյանն ու կինը: Կառքը կանգ առավ: Արտավազդն իջավ ու ձեռքը պարզեց տիկնոջը, նրա գոգի փաթեթը վերցրեց և ապա օգնեց, որ իջնի: Մի քանի րոպե անց փողոց ելան՝ Սանոյանն ու Շերամը, որի հագին չուխա կար և արխալուղ. արծաթե գոտին գրկել էր նրա գիրացող մեջքը, իսկ ժամացույցի բարակ շղթան փայլում էր կրծքին:

— Իսկակա՛նն է, ուստա Գոքոր. ինչդ որ առաջվանն էղնիս,— ոտից գլուխ զննելով երգչին, բացականչեց Արտավազդը: Ապա նրանք կառք նստեցին ու մեկնեցին:

— Էդ հանդեսը ու՞մ տանն է,— հարցրեց Շերամը:

— Գևորգ Հանեսօղլյանի. էնպես մի դահլիճ ունի, որ հազար հոգի կտեղավորվի:

— Մե ծերից մեկէլը ձենս կհասնի՞:

— Վա՛յ, քու տունը շինվի... Ես պստիկ էի, հըմը լավ միտքս կուգա, որ Գորկեն կերգեիր, քաղաքի մեկէլ ծերը ձեն կուտար:

Շուտով նրանք հասան նախկին Սլաբոդկա կոչված թաղամասը: Քանդակազարդ պատուհաններից, սև ու կարմիր տուֆի շարվածքից երևում էր, որ դա հին գյումրեցու տուն է եղել: Եռյակին դիմավորեց տանտերը՝ Լենինականի Քաղաքային խորհրդի նախագահի տեղակալը: Շերամը ներս մտավ թե չէ, մի հայացքով ընկալեց ծանոթ ու անծանոթ հյուրերին, մտովի նախագծեց երեկոյի ծրագիրը և նստեց[1]: Նստեցին նաև նվագածուները: Տաղերգուն անմիջապես նկատեց բարձրահասակ, պենսնեով մարդուն. դա Լունաչարսկին էր, իսկ կողքին կանգնածը կինն էր:

Շերամը քամանչահար Լևոնի ականջին մի բան ասաց: Ու մինչ նվագածու եռյակը կատարում էր «Փութանք առաջ» քայլերգը, Նիկոլայ Իլյիչ Պոդվոյսկին թեքվեց Գևորգ Հանեսօղլյանի կողմն ու խնդրեց, որ նա որոշ տեղեկություններ տա տաղերգուի և նրա ընկերների մասին: Երբ Գևորգն ասաց, թե իր մեծ հայրենակիցն այդ երգը գրել է 1905 թվականին, հյուրերը զարմանքի բացականչություն արձակեցին: Շերամը ժպտաց: Սանոյանն

---

[1] Այդպիսի սովորություն ուներ նա տեսնում էր, թե ինչ հասարակություն է ներկա և ըստ այդմ կազմում ծրագիրը· Նաև լավ կառավարելու կարգ ու կանոն էր սահմանել. (Կ. Դուրգարյանի հուշերից):

ընկերոջը խորհուրդ տվեց, որ Կարլ Մարքսին նվիրված երգի մասին էլ ասի.

— Ի՞նչ եք ասում,— զարմացավ Նիկոլայ Իլյիչը,— հապա, հապա։— Եվ սեղանի մյուս կողմը նստած Լունաչարսկուն բացատրեց ամեն ինչ։

Շերամը նախ կանգնած արտասանեց երգի տեքստը, որ Մերկուրովը ցածրաձայն թարգմանեց, ապա և երգեցին։

Աշխույժ, չարաճճի ժպիտով բանաստեղծ Հակոբ Հակոբյանը կարդաց իր «Բոլշևիկ է Շիրկանալը»։ Ոտքի կանգնեց Մերկուրովը։

— Մեր քաղաքի անունը Լենինական է հիմի, ընկե՛ր Եսայան,— դիմեց քաղխորհրդի նախագահին, որը նստած էր սեղանի վերի գլուխը.— բա մեր Շերամը Լենինի մասին երգ չունի՞։

— Ընչի՞ չունի, Սերգեյ Դմիտրիևիչ, մեկի տեղը՝ երկուսը.— և նշան արեց տաղերգուին։ Եոյակը կատարեց այդ երգերը։ Գևորգը հեռվից աչքով հասկացրեց վարպետին, որ երգեն նաև սիրո մեղեդիներ։

Եվ մերժված սիրո տաղը, որ այնքան ծանոթ էր գյումրեցիներին, թափանցեց նաև Լունաչարսկու հոգու խորքը, իսկ նորվեգացի Նանսենը խնդրում էր, որ Անատոլի Վասիլևիչը երգի մոտավոր իմաստը հաղորդի իրեն։

Կենաց բաժակներ բարձրացվեցին ջրանցքի շինարարների, քաղաքի և հանրապետության ղեկավարների պատվին։ Հետո Կարոն, Լևոնի նվագակցությամբ, երգեց Սայաթ-Նովայի «Աշխարումըս ախ չիմ քաշի» տաղը։ Հանդիսականները շունչները պահեցին։ Ի կենաց հայ երաժշտության բոլորը բաժակները պարպեցին հոտնկայս. Մի կողմից լսվեց դաշնամուրի նվագ, ու Շերամը երգեց իր «Դարձի, մեկ աշե» երգը։ Արսենը թարգմանեց.

Էդ չքնաղ մարմնիդ էլ ի՞նչ զարդարվել,
Երբ բնությունն է քեզի նկարել...

Ֆրիտյոֆ Նանսենը լռելյայն ունկնդրում էր և շրթունքները շարժում. ասես երգչի հետ կրկնում էր տաղը։

Ներս բերվեց տեղի ճաշատեսակներից մեկը՝ չանախը։ Մատուցողները սեղանի տարբեր հատվածներում դրեցին երեք ծավալուն կավե ամանների մեջ քլթքլթացող կերակուրը։ Ու Մերկուրովը անզոր եղավ զսպելու իր հիացմունքը։

— Օխա՜յ...— կկոցած աչքերի հայացքը բևեռելով Լունաչարսկու կնոջ, հետո Նանսենի դեմքերին, թևերի իմաստալից շարժումով խոհարար Գրիշային հասկացրեց, թե գյումրեցու ձևով չի կարող ուտել ընդհանուր ամանից: Մատուցողը գլխի ընկավ. և նրա օգնականները կավե չանախներ դրեցին յուրաքանչյուր խրախճանողի առջև: Քանդակագործը տոլստովկա կոչված երկար վերնաշապկի թևքերը քշտեց և, հյուրերի ու համաքաղաքացիների ժպտուն զարմանքի ներքո մոտի մեծ ամանից կերակուր լցրեց իր քրեղանի մեջ, պոկեց վարդերես լավաշի մի պատառ ու դրանով մսի կտորը տարավ բերանը:

— Ըհըմ-ըհըմ-ըհը՜մ...— արտաբերեց նա և ծաշոտ մատները լպստեց.— Ծո՛, էս ինչքա՞ն համով է ..

Սերգեյ Դմիտրիևիչի դիմաց նստած էր տիկին Լունաչարսկին: Նա հիացմունքով նայում էր մեծահամբավ արվեստագետին.

Մեկ էլ փռթկացրեց և արմունկով հրեց ամուսնու կողքը:

Սա նայեց իր վաղուցվա մտերմին ու ժպտաց:

— Այդպես ուտելը վատ չէ, գիտե՞ս,— շշնջաց Անատոլի Վասիլևիչը կնոջ ականջին.

Եվ մի վայրկյան էլ չանցած՝ գդալը մի կողմ դրեց, թևքերը քշտեց և նույն ձևով սկսեց ուտել:

Սանոյանն ու Հանեսօղլյանը նստած էին իրար կողքի: Ու երբ եղյակը պատրաստվում էր շարունակել նվագը, նրանք դադարեցրին իրենց զրույցը·

Նանսենն Արսենին մի խոսք ասաց ու ցույց տվեց Շերամին:

— Վարպե՛տ Շերամ,— դիմեց Եսայանը.— մեր թանկագին բարեկամը խնդրում է, որ դու երգես էն ամենալավ երգերիցդ մեկը:

Հնչեց անձնազոհ սիրո տաղը, որին ունկնդիրներն իրենք էլ սկսեցին ձայնակցել:

... Սիրեցյալին խլում տանում են չար մարդիկ և տանջալից որպեներ ստեղծում սիրահարի կյանքում: Եվ նա դիմում է բնության գթասրտությանը ..

Լսելով մոտավոր թարգմանությունը, Լունաչարսկին գոչեց.

— Բրա՛վո...

Այս կանչի վրա Ֆրիտյոֆ Նանսենը ծափահարեց և ուզեց իմանալ որոշ բառերի իմաստը: Ու երբ նրա համար պարզ դարձավ այդ, բացականչեց.

— Օ՜, դա հիասքանչ է:

Անատոլի Վասիլևիչն ավելացրեց.

— Դա երգչի ձայնը չէ, դա սրտի՛ ձայնն է...

Ապա նա ծոցատետրի թերթիկի վրա արագ-արագ գրեց մի երկտող ու տվեց Շերամին: Սա տեսավ, որ իր մասին է, չիմացավ՝ ինչ անի և ուղարկեց Գևորգին: Հանեսօղլյանը բարձրաձայն կարդաց երկտողն ու դրեց գրպանը. երևի տպագրելու համար: Իսկ Շերամը գլուխ տալով շնորհակալություն հայտնեց ու երգեց.

Բաղը մտա՝ ջոկեցի,
Կարմիր վարդը պոկեցի.
Ա՛մպ, թե աստված կսիրես,
Մեկ լուսնյակին դեմ կեցի .

Թարգմանիչներն այդտեղ հմուտ չէին, սակայն հյուրերը հասկացան, թե ինչու է սիրահարը ամպին ուղղում իր խնդրանքը. չէ՞ որ ինքը պետք է հասնի սիրեցյալի տուն:

Խնջույքը շարունակվում էր, իսկ եռյակը հնչեցնում էր երգ երգի ետևից՝ Շիրին, Պաղդասար Դպիր, Նաղաշ Հովնաթան, Սայաթ-Նովա, Ֆիզայի, Պայծառե, Ջիվանի... Կարոն էլ երգեց իր վարպետի տաղերից մեկը:

Ոտքի ելավ վայելչակազմ Ֆրիտյոֆ Նանսենը, եվրոպացու ծաշակով կոկիկ հագնված: Եվ լռությունն իր շղարշը փռեց ամբողջ սրահի վրա: Նանսենի ձեռքին գինու բաժակ կար. թեթևակի դողից, որ հուզմունքի նշան էր, ըմպելիքն անհանգիստ շողշողում էր գավաթի մեջ: Թավ հոնքերի տակից կապտավուն լույս էին արձակում զարմանալի ջինջ, իր հեռավոր երկրի ծովաջրի նման աչքերը: Ցորնագույն մազերի մի փունջ կախվել էր քունքի վրա: Նա իր մայրենի լեզվով, ցածրաձայն, որ ծովի ծփանք էր հիշեցնում, կենաց խոսք ասաց: Իհարկե, ներկաները բան չհասկացան, բայց շիտակ ու բարի ժպիտից, որ ուղղված էր երգիչների գլխավորին, և որ նա երկու անգամ տվեց նրա անունը, պարզ դարձավ, որ դրվատանքի խոսքը հենց նրա մասին է: Շերամը մի ձեռքով նվագարանը բռնած, տեղից ելավ, ձեռքը դրեց կրծքին ու գլուխ խոնարհեց:

— Ծո՛, ուստա Գոքորը Նանսենի լեզու՞ն ուրտից գիտե,— շշնջաց Արտավազդը Գևորգի ականջին: Սա խեղդվելով ծիծաղեց և ասաց.

— Գոքորի հետ հանա՞ք կենես, Արտո, հըլը մի քանի երգ էլ Մշո բարբառով է գրել:

— Իա՛, մշեցու լեզուն ու՞ր, նորվեգացունն՝ ուր, ա՛լ օղուլ:

Նանսենի խոսքի ընթացքում Շերամը չնստեց. գինու բաժակը բարձր պահած՝ մոտեցավ ու հպեց նրա գավաթին, ապա գնաց իր տեղը:

Երբ Ֆրիտյոֆ Նանսենը խոսում էր Արսեն Եսայանի հետ, դեմքի արտահայտությունից երևաց, որ հետաքրքրվում է տաղերգուի կյանքով: Հետո իմացվեց, որ գիտնականը ցանկացել է իմանալ, թե որտե՞ղ է սովորել երգիչը, երաժշտություն գիտի՞, թե՞ ոչ... Եսայանն ու Հանեսօղլյանը, Լունաչարսկու միջոցով, պատմել են ամեն ինչ:

Շերամը ոտք դրեց տուն ու տեսավ, որ կինը հիվանդ պառկած է:

— Բարի լո՛ւս, Սալվի ջան,— ողջունեց ամուսինը.— էդ ի՞նչ է, հիվանդ ես, հա՞:

— Գլուխս կցավի. դու էլ ուշացար:

— Բա՞ն է պատահել:

— Նստի՝ ըսեմ:— Երգիչը նստեց:— Քուրոջս եմ գտել, քուրո՛ջս՝ Սաթոյին:

Երգիչը թռավ տեղից:

— Ու՞րտեղ է, ի՞նչ կենե:

— Համամլու է. երկաթգծի վարպետի տանը ծառայող է:

Տաղերգուն վրդովված գնաց-եկավ սենյակում.

— Ամո՛թ քեզ, Տալոյենց Գրիգոր, ամո՛թ քեզ, Շերամ... դու էդքան հայտնի էղնիս ու քենիդ ուրիշի տանը. . Նամակ գրենք՝ թող գա:

Եվ նա շարադրեց նամակը, իսկ վերջում ավելացրեց. «Ընչի՞ կմնաս էդտեղ, քենի ջան. մենք Թիֆլիսում ենք, արի մեզ մոտ»:

Տասն օր էլ չէր անցել, որ Սաթոն եկավ: Հետո նա պատմեց իր գլխին եկածը:

... Թուրք ասկյարը վրա տվեց Կարսի գավառի Բայրաղտար գյուղին: Փախեփախն սկսվեց: Եվ տասնութ տարեկան գյուղացի աղջնակը, իր եղբոր ու հարսների հետ, գաղթեց Աշտարակի Մուղնի գյուղը: Այնուհետև ընկավ Ալեքսանդրապոլի որբանոցը: Շատ չանցած՝ հայտնվեց Համամլուում:

Նրա Թիֆլիս գալուց մեկ ամիս հետո դռնապան Սամսոնը եկավ երգչի մոտ որպես խնամախոս: Սաթենիկին նա ուզում էր իր համագյուղացի Վաղարշակի համար:

Երկու հոգի բարձրանում են Գուդովիչի փողոցով: Աշնանամուտի իրիկնային օդը նրանց տրամադրում էր ասուլիսի: Ջրուցակիցներից մեկի ուսն ի վար կախված է նվագարանը. այդ մարդը Ճերամն է: Նրա գլխարկի տակից սպիտակ շիթերով ասես ծորում են ճերմակող մազերը: Մյուսի ուսից կախված է նկարչի էտյուդատուփը: Սա անհամեմատ ջահել է: Փարթամ մազերը երբեմն քաշքըշում է թեթև քամին:

— Աշո՛տ ջան, էդ մեր Աղասին գյումրեցի է, չէ՞:

— Այո, վարպետ, գյումրեցի է: Իսկ գիտե՞ս, թե մեր քաղաքացիները կատակով ինչ են ասում այդպիսի դեպքում. Ասում են, թե՝ հըբը կարգին մարդը ու՞րտից կեղնի·

— Հա-հա-հա-հա՛... Էդոնք էլ շատ են չափազանցրել, թե որ Աղասու մասին ըսենք, ճիշտ է:

— Նա հիմա աշխատում է կոմկուսի Անդրկովկասյան երկրային կոմիտեում, բանաստեղծ է:

Վերելքն ավելի կտրուկ դարձավ. Նկարիչ Աշոտ Սաֆարյանը նայեց տաղերգուի դեմքին՝ հո չհոգնե՞ց... ու կանգ առավ·

— Ընչի՞ կանգնեցիր:

— Ես կարծեցի հոգնեցիր·

— Չէ՛, ման գալ շատ կսիրեմ. ոտքով, գիտե՞ս.

Ճանապարհը շարունակեցին. իսկ իրիկնամուտի մթնշաղը թանձրանում էր.

Աղասի Վարդանյանն ապրում էր մենակ. Ու երբ Ճերամն ու Աշոտը մտան միջանցք, նա արդեն այնտեղ էր: Թիկնեղ էր ու գինվորականի պես ձգված: Նա շնորհակալ եղավ, որ տաղերգուն չի մերժել իր խնդրանքը և եկել է մենակյացի կյանքին բանաստեղծական շունչ հաղորդելու: Աշոտը դարձավ Աղասուն և, ակնարկելով Ճերունի երգչին, ասաց.

— Ինչքա՞ն լավ ճամփու ընկեր է վարպետը, գիտե՞ս·

— Մինչև Հնդստան էլ էրթաս՝ չի հոգնի,— սրախոսեց երգիչը:

Երբ նրանք սենյակ մտան ու նստեցին, Ճերամը հանկարծ մտաբերեց Աղասու եղբորը, որի հարսանիքին ինքը նվագել էր.

— 1910 թվին էր, չէ՞,— հարցրեց, բայց զղջաց, որովհետև տանտերը խորը ախ քաշեց, իսկ նկարիչը գլուխը կախեց· Երգիչը

մեկ սրան նայեց, մեկ տանտիրոջն ու զգուշությամբ ավելացրեց.— ի՞նչ է եղել որ... ու՞րտեղ է հիմի:

Աղասին գլուխը բարձրացրեց. հոնքերը կիտված էին, շրթունքները՝ սեղմված:

— Արտաշեսը չկա, Շերա՛մ... նրան սպանեցին հեղափոխության խառը ժամանակ: Մատնողներ էին եղել. չէ՞ որ նա իսկրայական էր, սոցիալ-դեմոկրատ, Լենինի կողմնակիցը:

Նկարիչն ու Աղասին լուռ սպասում էին, որ երգիչը խաղաղվի և գուցե կարողանա փարատել իրենց տխրությունը: Սակայն նա սկսեց հենց տխուր ելևէջներից...

Դողդոջուն լուսաբացը բարձրացնում էր արևելքի մթամած վարագույրը, երբ նրանք հրաժեշտ տվեցին միմյանց:

ՀԱՋԱՐ ԷՐՆԵԿ ԷՆ ԳԻՇԵՐԻՆ

1

Դստեր բնակարանի մի դուռը բացվում է շենքի ճակատային պատշգամբի վրա: Շերամը հավանաբար ճանճրացել է խանութների թիթեղաձաձկ կտուրներին նայելուց և այստեղից դիտում է փողոցի անցուդարձը: Արևհատը երեխաներին դպրոց է տարել, իսկ փեսան «վար է իջել» ինչ-որ գործով: Եվ տաղերգուն մերթընդմերթ վեր է կենում, քայլում պատշգամբի մի ծայրից մյուսը, ապա նստում ու ոտնաթաթը թփթփացնելով՝ դնդնում:

Նա կրկին ելավ, մոտեցավ բազրիքին ու նայեց ներքևի մարդկանց: Հանկարծ հոնքերը կիտեց և հայացքը գամեց մի զինվորականի վրա. այդ ո՞վ է, որ թեքվում է իրենց շենքի կողմը: Երիտասարդի ուսից կախված է ծանոթ ներկատուփը: «Էս ո՞վ է տեսնիս,— մտածեց երգիչն ու շտապեց պատշգամբի մյուս ծայրը: Հասավ այն պահին, երբ զինվորականն արդեն մտել էր շենքից. Աճապարեց իր հարկաբաժինն ու տեսավ, որ կինը գրկել է զինվորականին և համբուրում է չորուկ այտերը:

— Իա՛,— զարմացավ,— Գուրգե՞ն. էս ե՞րբ ես եկել.

— Քա՛, դու էլ. հարցուփորձի ժամանա՞կ է. Քելե, Գուրգեն ջան, քելե տուն, անոթի կեղնիս·

— Չէ՛, հարսխանում, շտապում եմ գորանոց։

Հորեղբայրը հարցրեց.

— Կազարմե՞ն պտի մնաս, ա՛յ տղա։

— Իհարկե. վերապատրաստման են ուղարկել, չէ՞։

Երբ տուն մտան, Գուրգենը ցույց տվեց ձեռքի պարագաները և ասաց.

— Սրանք պիտի թողնեմ ձեզ մոտ, որ էգուց գամ ու սկսեմ նկարել։— Ասաց ու դուրս թռավ։

Հաջորդ առավոտյան Գուրգեն Տալլանն արդեն նստել էր ցաձր աթոռակին ու նկարում էր։ Նրանից մի քիչ հեռու բազմել էր հորեղբայրը։

— Հորեղբա՞յր, ընչի՞ չես խոսի։

— Չե՞մ խանգարե։

— Բոլորովի՛ն. մտիհա՞ն ես արել, որ երբ Պետրոսը քեզ նկարում էր, շատ հարցեր էր տալիս. մերս էլ թառերիդ պատմությունն էր անում։ Խոսելով ավելի լավ է մտաձում մարդ։

— Որ էդպես է, մի հարց տամ։

— Մեկն էլ, երկուսն էլ։

— Ո՞ր թվին նկարեց Պետրոսն ընձի, գիտե՞ս։

— Գիտեմ. նկարի վրա թիվը կա՝ 1915։

— Էս քանի տարին նկարս չէ՞ փչացել։— Լռեցին։— Ա՛յ տղա, գիտե՞ս թե առաջ դու ձիթաներկով չէիր նկարե։

— Էնտեղ էնպիսի ուսուցիչ ունեմ, ո՛ր... Նա խորհուրդ տվեց։ Գիտե՞ս ով է էդ մարդը, հորեղբայր. Աշոտ Սաֆարյանն է.

— Ծո՛... Աշոտին լավ գիտեմ. անցյալ տարի էստեղ էր։

Գուրգենը ժպտաց և սկսեց ոնգալին մի մեղեդի։

— Էդ ի՞նչ կմոմռաս, Գուրգեն ջան-— հարցրեց։

— Սպենդիարյանի «Հեջազն» է, հորեղբայր. շատ եմ սիրում,— և երիտասարդը շարունակեց շրթնանվագը։ Երգիչը մի պահ նայեց եղբոր որդու շրթունքներին ու հարցրեց.

— Դու տեսե՞լ ես էդ մարդուն։

— Չէ, իսկ դու՞։

Ձերամը քթի տակ խնդաց ու ոգևորված պատմեց կոմպոզիտորի հետ ունեցած հանդիպման մասին։ Երիտասարդը ձեռքերը լաթով սրբեց, նկարչական պարագաները հավաքեց, լցրեց ներկատուփի մեջ ու ելավ։— Էսօր՝ էսքան։

Երբ տուփի փակիչը չխկաց, տանտերը հարցրեց.

— Էսօր է՞լ չպիտի ճաշես հորեղբորդ տանը։

Գուրգենը ջերմությամբ գրկեց նրան ու եզրափակեց.

— Հիմի պիտի գնամ ռազ-դվա անելու, հորեղբայր, հետո՝ ճաշ զորանոցում ու երեկոյան՝ պարապմունք:

— Էգուց որ ճաշի չեկար, էլ անունս չտաս:

— Էգուց, էգու՛ց...— շրթնանվագը շարունակելով՝ շեշտակի դարձավ ու զինվորի պես կտրուկ ասաց.— Էգուց՝ անպայման,— ու թռավ դուրս:

— Խելա՛ռ է,— կես տխուր, կես ուրախ խոսեց Շերամը — կյանքը սիրունցնելու՛ խելառ...

2

Շերամը դարձյալ գնում է հայրենի օրրանը: Անցան Համամլուն: Գնացքը մոտենում է Ղալթաղչի կայարանին. նույնանուն գյուղը թափանցիկ մշուշով է պարուրված: Երգիչը նայում է գյուղին ու մտաբերում...

Կրտսեր որդին աշխատեց այդտեղ. քրջիկ ու կոնչոլ կերավ գյուղացու ընտանիքի հետ, խնոցի հարելը տեսավ և սրա կարագն ու թանը ճաշակեց· Նա անբեղ-անմորուք ուսուցիչ եղավ հոգե կտուրով, խորդուբորդ գետնով կիսամութ օթախում, որ դպրոց էր կոչվում. թե՛ ուսուցիչ էր, թե՛ վարիչ էր, թե՛ դաստիարակ: Եվ ահա պատանի ուսուցիչը ժամանել էր հորանց:

— Է՞, ասա տեսնիմ, վարժապետ ջան. ինչպե՞ս ես պարապում. ժամ-ժամանակ ունի՞ս. օրական քանի՞ դաս ես անում:

— Չգիտեմ, հայրի՛կ,— պատասխանեց որդին,— առավոտ նախիրը գյուղից դուրս են տանում թե չէ, դասերն սկսում եմ: Իրիկունը նախիրը գյուղ է մտնում՝ վերջացնում եմ:

Ծնողները ծիծաղեցին:

— Իա՛, էդքան էլ դա՞ս անեն, ա՛յ տղա:

— Ի՞նչ անեմ, հայրիկ, ժամացույց չունեմ:

Հայրը ձեռքը տարավ գրպանը, մեծ լպուկ քարի նման ժամացույցը հանեց ու հենց շղթայով տվեց որդուն:

— Ա՛ռ,— ասաց նա,— քեզի՝ նվեր. դիր ջեբդ ու ժամով դաս էրա, թե չէ հալումաշ կեղնիս:

Որդին ժպտաց ու ժամացույցը դրեց տաբաթի գրպանը: Դրան հետևեց հոր մյուս հարցը, թե՝ ճմռանն ինչո՞վ են տաքացնում դպրոց կոչվածը:

— Ամեն մի աշակերտ մի աթար է բերում,— խոստովանեց

տղան,— դնում եմ թիթեղյա վառարանն ու վառում: Մինչև որ ծուխը քաշվում է, բոլորս հազում ենք և արցունքներս սրբում, ու հետո նոր...

— Քոռանա՛ր լուսս, բալա ջան,— որդու խոսքը վաշվիշով ընդհատեց մայրը:

Շերամը հիշեց այս դիպվածն ու խորը ախ քաշեց:

Անցան Ջաջուռի թունելը. մոտենում են քաղաքին: Հեռվից նկատելի է, որ կառամատույցում բազմություն կա: Շոգեքարշի ճիչն սթափեցնում է մարդկանց· Բոլորն աչքերով փնտրում են այն ելքը, որի մեջ պետք է երևա նշանավոր հայրենակից երգիչը: Ու հենց որ նա գնացքից իջավ, ընկավ շրջապատման մեջ:

— Քիչմ կամաց, տնաշեննե՛ր, թառս կջարդեք,— զգուշացրեց նա, երբ գրկեց վաղուցվա ընկերը՝ դեղագործ Արան:

— Ծո՛, ինչ լավ երիր՝ եկար. կարոտցել էինք ձենիդ,— գոչեց նա:

— Դու էն ըսա՝ ի՞նչդ եք, ի՞նչդ չեք:

— Լավ ենք, սիրո վառ երգիչ, լավ ենք,— խմբի միջից լսվեց Տիգրան Նալբանդյանի ձայնը:

— Պիտի երգենք, չէ՞, Տիգրան ջան... Բաքվի համերգը մի՞տքդ է,— տրտում հարցրեց տաղերգուն:

— Որ գնացիր որպես Գոքոր, վերադարձար որպես Շերամ, չէ՞:

Մի փոքր հեռվից գուսանի ականջը որսաց իր երգերից մեկը.

Հազար էրնեկ էն գիշերին ..

Շերամը տխրադեմ դարձավ ձայնի կողմը.

— Տիգրա՞ն, էդ երգողը մեր Հայկը չէ՞, Հայկազ Տալյանը:

— Կարծեմ նա է, վարպետ:

Հայկի հետ գրկված՝ մոտենում էր համակրելի, նրանից մի փոքր ավելի բարձրահասակ մեկը և երգում:

— Տո՛, Համիկն է, Համազասպ Կարանյանը...

Երգիչները կիպ մոտեցան տաղերգուին:

— Բարև՛, հորեղբայր, բարով ես եկել,— նրա զույգ ձեռքն էլ առնելով իր ափերի մեջ, ողջունեց Հայկը: Համիկը կշտամբեց·

— Ծո՛, գոնե մե ձեռքն ազատ թող, մենք էլ օգտվինք:

Բազմությունը քրքջաց: Այդ րոպեին տաղերգուին մոտեցավ մի աղջիկ ու գիրկն ընկավ: Շերամը շփոթված նայեց Արային:

— Արաքսին է, մի՛ զարմանա,— պարզեց դեղագործը.— գիշեր-ցերեկ քու երգերդ է հոգու մեջ։

Այդ միջոցին նրա կողքին կանգնեց մի ուրիշ կին։ Դա էլ Հայաստան Քյոսաբաբյանն էր։

— Կինս է, ուստա Գոքոր,— ծանոթացրեց Ցոլակը։

— Ֆայտոնը քեզի կսպասե,— մոտեցավ Արծրունը.

Վարպետը քայլեց դեպի կառքը։ Հրապարակ սլացավ մի ավտոմեքենա և կանգ առավ նրանցից մի քիչ հեռու·

— Սպասեք, սպասե՛ք,— արագ մոտենալով, բացականչեց Սամվել Զատիկյանը.

— Ընկեր Բոգեմսկին է,— շշուկով տեղեկացրեց Արծրունը.— մեր Գեղաշխ միության նախագահը։

— Դե՛, գնանք, Շերամ,— ձեռքը ավտոյի կողմը պարզած՝ առաջարկեց նա։

— Չնեղանաս, ընկե՛ր Զատիկյան,— մի տեսակ քաշվելով, առարկեց տաղերգուն.— Ֆայտոն նստելուն կարոտցել եմ. թույլ տուր ֆայտոնով էրթամ տուն։

Զատիկյանը մի ակնթարթ հապաղեց, ապա զվարթ ասաց.

— Խնդրեմ, խնդրե՛մ, վարպետ, քո կամքն է·

Տաղերգուն մոտեցավ և արժանապատվությամբ բազմեց Հայկի և Համիկի մեջտեղը Արծրունն ու Արան նստեցին նրանց դիմաց. Եվ կառքը, բոժոժները զնգզնգացնելով՝ սլացավ քաղաք։

Լուռումունջ կանգնել է Գրիգոր Տալյանը հայրական տան առաջ ու մտախոհ նայում է գորշացած քարերին, ներկաթափ դռանը, ճռված լուսամուտին և հառաչում սրտի խորքից. Նրա կողքին փոքրիկ բռունցքը սեղմած շուրթերին, արձանացել է հարսը՝ Սոֆիկը։

Շերամը մտնում է տուն, նվագարանը հանձնում հարսին ու հայացքը սահեցնում ծանոթ իրերի, գոսացած պատերի ու հեծաններին հենակ դրած սյուների վրայով. հետո շրջում է նա տան բոլոր անկյունները... Այս էլ ահա, իր յուղաներկ նկարը, որ տարիներ շարունակ կախված է պատից.

— Ողորմի՜ ջահել-ջիվան ննջեցյալ Պետրոս Ռափայելյանի հոգուն, հա՛րս ջան,— մրմնջաց երգիչը.

— Ողորմի՛ հոգուն, աղա ջան. հորնումորից առաջ ընկավ...— լացեց Սոֆիկը, որ կրնկակոխ հետևում էր տեգորը։

Շերամը նստեց թախտին ու թախծեց.

— Հե՛յ գիտի Տալոյենց տուն. ի՞նչ եղավ քո երգը, ու՞ր գնացին քեզի շունչ-կենդանություն տվող մարդի՞կ...

... Այս հարկի տակ է ծնվել ինքը, այս թաղում մեծացել... Այս թախտին է տասնյակ տարիներ կուչ եկել մայրը...

Անցնում է նա ծանոթ փողոցներով, բարձրանում է քաղաքային այգի, կանգնում բարձունքի վրա և նայում հարազատ ոստանին:

Հանկարծ ականջը որսում է իր իսկ ձայնը: Ինքը գովերգում է գեղանի կույսի ոսկեթել մազերը, անուշ լեզուն, նազերը, հուր ու կայծակ աչերը:

— Է՛, ու՞ր է հիմի,— ինքն իրեն հարցրեց ու հենց իր երգի տողերով էլ պատասխանեց...

Ձեռքը թափ տվեց.

— Է՛հ, Գրիգոր Տալյան .. Շերամ կոչեցյալ... անցավ գնաց...

Հանդարտ քայլերով իջնում է նա քաղաք, ու տաղերը, ինչպես գառները հովվի հետ, քայլում են իրեն համընթաց:

3

Արկղի երկարուկ կոթից բռնած՝ ատաղձագործը բարձրանում է դեպի Գորկան, ապա պիտի թեքվի աջ ու գնա տուն: Արկղի միջից երևում են գործիքների կոթերը: Թվում է, թե դրանք էլ են հոգնել օրվա աշխատանքից և, արկղի կողին թիկնած՝ ննջում են: Քաղխորհրդի կոմունալ բաժնում շատ մարդիկ են աշխատում, մտածում է բանվորը, բայց Գրիգոր Ղազարյանից լավը չկա. իրեն միշտ աջակցում է աշխատանքի, հողամաս ստանալու և այլ հարցերում.

Արհեստավորին մոտենում է ընկերներից մեկը և հարցնում.

— Բարև՛, Արտաշ. ես ու՞ր կերթաս.

— Բարև՛, Սենիկ ջան. զարմանալու հարց կուտաս. ամբողջ օրը բանելուց հետո կարգին մարդը ու՞ր պտի էրթա:

— Օրինակ՝ ես տնեն կուգամ, որ էրթամ երաժիշտների կոլեկտիվ, տեսնիմ՝ ուստա Գոքորն ենտե՞ղ է, Շերամը:

— Ծո՛, ի՞նչ կխոսիս... էկե՞լ է:

— Եկել է, եկե՛լ...— հաղորդեց Սենիկն ու շտապեց ցած:

Արտաշը տատանվեց՝ գնա տու՞ն, թե՞ իջնի վար: Ախր հոգնած է, համ էլ սոված... Եվ նա գնաց տան կողմը· Մի քանի քայլ արեց ու մեկեն կանգ առավ նախկին Առևտրական ուսումնարանի շեն-

քի առջև: Նրա հայացքը գամվեց պատին փակցրած ազդագրին: Մոտեցավ և սկսեց կարդալ: Եվ քանի հայացքն իջավ տողերով ներքև, այնքան դեմքը պայծառացավ: Նորից կարդաց: Ազդագրում գրված էր, թե լուսբաժնի դահլիճում գրող-երաժիշտ Գրիգոր Տալյանի ստեղծագործական 40-ամյա գործունեությանը նվիրված համերգ է, երեկո:

— Էս ինչ էլ ընտիր երգիչնե՛ր կմասնակցեն... Է՛լ երգեցիկ խումբ, է՛լ Կարո Կարապետյան... Տո՛, հըբը ինքը՝ Գոքորը... Էնիկ որ բոլորին գլխեց:— Արտաշը ձեռքը մեկնեց, որ արկղը վերցնի, բայց ետ պահեց:— Տեսնինք տոմսերը որտեղ պտի ձեռք բերենք: Ըհը՝ Երանոսյանի ու Մազմանյանի խանութներում, մեկ էլ «Կարմիր ճաշարանում»: Շատ լա՛վ.— ասաց. ու երբ կարդաց, որ գեղարվեստական ղեկավարը Դանիել Ղազարյանն է, ուրախ ծիծաղեց.— Ծո՛, էս խո մեր Գրիշայի ախպերն է... Դե՛, Փափանենց Արտաշ, ետ մի՛ մնա:

Եվ բանվոր մարդը վերցրեց գործիքներով լիքը արկղն ու վայրէջքով դարձավ ետ: Ահա և Երանոսյանի խանութը: Արտաշը մտավ ներս և շուտով դուրս եկավ գլխաբաց, բա ի՞նչ եղավ գդակը... Ահա՝ ձախ ձեռքով նա կրծքին է սեղմել ինչ-որ բանով լցված գլխարկը, իսկ աջից կախված է արկղը:

— Էս ի՞նչ լավ եղավ,— շեմքին կանգնած և հպարտորեն սրան-նրան նայելով, խոսեց նա և գոհունակ ժպտաց, ապա ուղևորվեց տուն:

Գնում էր և ողջունում ծանոթ և անծանոթ քաղաքացիներին: Սրանք զարմանում էին, թե ի՞նչ է պատահել Փափանենց Արտաշին. շատ ուրախ է երևում: Իսկ ատաղձագործը հասավ տուն, արկղը դրեց ուր պետք էր ու դեմ եկած կնոջն ասաց.

— Ա՛յ կնիկ, էնպես մե տեղմ պտի էրթանք, որ կյանքիդ մեջ մտիհան չենես:

Բայց կնոջ աչքը ուռած-փքված գլխարկի վրա էր. և նա զգուշությամբ հարցրեց.

— Էդի՞կ ինչ է:

— Մի կտոր հաց ուտեմ, հետո կըսեմ. ձեռք չտա՛ս...— Կնոջ հայացքը տոգաձ գդակից չէր կտրվում:— Շուտ էրա, ա՛յ կնիկ. գելի պես անոթի եմ:

Կուշտ կերավ արհեստավորը, մուշուրբով ջուրը քաշեց գլուխը, բեղերը սղալեց ու ոտքի ելավ·

— Է՞,— հետաքրքրվեց կինը։

Եվ Արտաշը խորհրդավոր շշուկով հաղորդեց.

— Կնիկ ջան, գլխարկիս մեջ ոսկի է, ոսկի՛...

Կինը սարսափած նայեց ամուսնուն ու մտածեց. «Խելո՞ւ մարդս, աստվա՛ծ ջան»։ Իսկ ամուսինն այնքան զգույշ դրեց գդակը սեղանին, որ կինը եզրակացրեց, թե դրա մեջ շատ-շատ հավկիթ կարող է լինել. Արտաշը պատմեց ամեն ինչ, բայց վերջաբանով.

— Որ ըսի ոսկի է, ինչի՞ չհավատացիր։

Այդ օրն Արտաշը ամբողջ քաղաքը ման եկավ ու գդակի մեջ լցրած տոմսերը բաժանեց արհեստակիցներին, բարեկամներին և ընկերներին՝ ասելով.

— Թող մեր ազիզ ախպոր համերգը լիքը դահլիճով ու փառավոր էղնի։

Երբեմն էլ փողոցով մեկ գոռում էր,— Գոքորն է եկել, Գոքո՛րը. .

Երեկոյան արհեստավորը հանդիպեց Գրիգոր Ղազարյանին։ Արտաշը գլխից իջեցրեց գդակը, մի քանի տոմս հանեց ու տվեց նրան։

— Ի՞նչ կարիք կա, Արտաշ ջան,— առարկեց Գրիգորը։

— Պատվով տվածս ետ մի՛ դարձնե, հատու՛կ կխնդրեմ։

— Ախր եղբայրս՝ Դանիելը, հենց այդ երեկոյի կարգադրիչն է, գեղարվեստական ղեկավարը։

— Ի՞նչ անենք, Գրիշ ջան. սրտես անցել է, պտի տամ. կուզե ախպերդ Հայաստանի թագավորն էղնի։

Գրիգորը սրտանց ծիծաղեց ու շնորհակալ եղավ.

— Չարժե, Գրի՛շ ջան, մեծ բանմ չէ...— հետո շեղակի նայեց նրան ու մի տոմս էլ պարզեց։

— Սա՞ ում տամ,— հարցրեց Ղազարյանը.

— Տար տուր ձեր հաշվապահ Պապաշին. չարժե, հըմը տուր. թող գա մեր Գոքորի երգը ականջ էնե, գուցե թե հոգին կակուղնա, բարի մարդ դառնա։

Գրիշան գլուխն օրորեց ու տոմսը դրեց գրպանը։

Համերգից մի երկու օր առաջ պարզվեց, որ լուսաբաժնի վարիչ Հովսեփ Կարախանյանը դահլիճի վարձը չի վերցնելու, իսկ Սամվել Ջատիկյանն իր մոտ հրավիրեց կարգադրիչ հանձնաժողովի անդամներին, որպեսզի ստուգի արաձն ու անելիքը։ Եկել էին խմբավարներ՝ ուստա Խաչոն և Աշոն, Դանիել Ղազարյանը, որ

նաև պետք է զեկուցեր Շերամի մասին: Տպվել էր երեկոյի ծրագիրը, որ ներկայացրին: Ջատիկյանը հետաքրքրվեց, թե ինչ վիճակում է տոմսերի տարաձումը:

— Շատ անհարմար կլինի, որ այդքան մեծ արտիստը գա հայրենի քաղաք, ու մենք կարգին երեկո չկազմակերպենք,— խոսեց արհմիության նախագահը·— Շերամին մենք չենք հրավիրել: Նշանակում է՝ մենք պետք է օգտվենք մեր նշանավոր հայրենակցի ներկայությունից:

Դանիել Ղազարյանը խոսելու թույլտվություն ստացավ ու պատմեց, թե ինչ ազնիվ արարք է կատարել հասարակ արհեստավոր Փափանենց Արտաշը տոմսերի խնդրում· Նախագահը ժպտաց ու հակիրճ շարադրեց իր տպավորությունը:

— Կրկնում եմ՝ Շերամը մեծ արտիստ է: Ա՛յ, նա տնտեսական նեղ դրության մեջ է ընկել և ստիպված է ճաշարանում նվագել...— հոնքերը կիտեց. երևի նրան տանջում էր այն հոգսը, որ չի կարողանում նման երգչին արժանավայել օգնություն ցույց տալ:— Հարյուր անգամ հանդիպել եմ նրան· Երբ որ մենք՝ նրա մտերիմ մարդիկս, սրտանց ցանկանում էինք նրան լսել և հրավիրում էինք, թառն առնում գալիս էր· Երբեք, այո, երբե՛ք փողի հարց չէր դնում: Մի օր Գոքորին ասի,— շարունակեց Ջատիկյանը,— բոլորը խորհրդային երգ ու ոտանավոր են գրում. ի՞նչ է մտածում ինքը: Նա պատասխանեց. «Սեր եմ երգել, սեր էլ պտի գովեմ. կուզես նեղացի, կուզես՝ չէ»: Բայց հետո գրեց·

Մայիսյան երեկոն չէր պատճառը, որ գյումրեցիների հոսանքը հեղեղել էր դեպի լուսաշխի դահլիճ ճգվող վերելքը·

Ահա դահլիճում ափեափ նստած են հանդիսականները: Առաջին կարգի կենտրոնում նստել է Փափանենց Արտաշը, իսկ մի կողմը վեհորեն բազմել է կինը· Ատաղձագործի մյուս կողմում Գրիշան է, Գրիգոր Ղազարյանը: Դահլիճի լայն դռները փակ չեն. չէ՞ որ ընդարձակ միջանցքում էլ մեծ բազմություն կա.·

Ճեմասրահով անցան կարգադրիչ հանձնաժողովի անդամները՝ Ջատիկյանը, Դանիել Ղազարյանը, Կարո Կարապետյանը, Ցոլակ Քյոսաբաբյանը: Երևաց դահլիճի տնօրենը՝ Հովսեփ Կարախանյանը: Բացարձակ լռությունից հասկացվեց, որ շուտով համերգն սկսվելու է: Բեմ ելած Ս. Ջատիկյանը հայտնեց զեկուցողի անունը, ապա ներկայացրեց երաժշտական ստուդիայի խումբը, որ կատարեց Շերամի՝ «Յար ջան» և «Անջիգյար» երգերը, իսկ Հայաստան Քյոսաբաբյանը՝ «Ինչ ես նստել» («Անգութ դատաս-

տան»)՝ տաղը: Հնչեց նաև Նիկ. Տիգրանյանի «Շահնազը», Ց. Քյոսաբաբյանի նվագով, իսկ Հլոյանը երգեց «Դու իմ մուսան ես»:

Հենց այդ պահին, աշուղական հնամենի տարազը հագին, բեմում հայտնվեց Շերամը: Բոլորը ոտքի կանգնեցին ու ծափահարեցին, իսկ նա գլխից վեր բարձրացրեց նվագարանը, խոնարհվեց ու նստեց: Նա կատարեց իր նոր երգերից երկուսը՝ «Էլի դու պիտի համբերես» և «Մոդեն էսպես է»:

Առանձին ոգևորություն առաջացրեց Համազասպ Կարանյանի կատարումը՝ «Հազար էրնեկ» և «Մի բալա է»: Երգիչ Տիգրան Նալբանդյանը փայլեց Դ. Ղազարյանի «Լանջեր մարջանի» թավշյա կատարումով: Համերգը վերջացավ Շերամի «Սուսան սմբուլ» տաղով, որը Կարո Կարապետյանի նվագախմբի հետ երգեց Վաղինակ Զաքմիշյանը.

Գրիգոր Ղազարյանն ու Փափանենց Արտաշը միասին էին գնում տուն: Լուռ էին. երեկոյի տպավորությունն այնքան ուժեղ էր, որ չգիտեին՝ ինչ խոսեն:

— Տեսա՞ր, Արտաշ,— լռությունն առաջինը խզեց Գրիշան:— Հետո էլ ասում են, թե «Մարգարեն իր գավառում պատիվ չունի»: Շերամը լրիվ հերքեց դա:

— Մենակ իր գավառո՞ւմ պատիվ ունի...— Եվ Արտաշն ավելացրեց.— համ էլ կըսեն, թե տանու տերտերին «Օրհնյա ի տեր» չկա... Էդ էլ ստվեց:

Ամեն ինչ հասկանալի էր:

Դարձյալ կայարան: Մեկնելու պատրաստ գնացքն առաջին գծի վրա է. շոգեքարշը փնչացնում է ջրից դուրս եկած գոմեշի նման: Տարեց գյումրեցիներով շրջապատված՝ գնացքին է մոտենում Շերամը: Նա համբուրում է եղբոր զավակներին, կրծքին է սեղմում Հայկ Տալյանին, Արաբաջյան Արային: Երգչին է մոտենում Համազասպ Կարանյանը և գգվում: Մոտենում են՝ Դանիելն ու եղբայրը:

— Ադաշ, դու՞ էլ,— զվարթ բացականչում է տաղերգուն:

— Մի՞թե կարող էի անմասն մնալ, Շերա՛մ,— ասում է նրա անվանակիցը:

Գուսանը դառնում է, որ մոտենա վագոնին, նրա առաջն է կանգնում ատաղձագործը: Գրիշան ծանոթացնում է.

— Փափանենց Արտաշն է, Շերամ, չե՞ս ճանաչում:

Արտաշը փորձում է երգչի ձեռքը համբուրել։

— Ծո՛, Արտաշ, ես խո տեր Ագուլը չե՞մ, որ ձեռքս կպագես։

— Ուստա՛ Գոքոր, դու ավելի բարձր ես. քեզի գլխներուս վրա պիտի պահենք. քու երգերդ որ չեղնի՞ն...

Նրանց մոտեցավ Հովսեփ Կարախանյանը և տաղերգուին առաջնորդեց դեպի գնացքը։ Երգիչը բարձրացավ կանգնեց վագոնի դռան մեջ։ Սանդուղքին ելավ Սամվել Ջատիկյանը։ Շերամը ձեռքը դրեց նրա ուսին և ասաց.

— Իզուր մի՛ բարձրանա, Սամվել ջան. էդքան նեղություն քաշեցիր ընձի համար, հիմի էլ կուգաս ճամփու դնելու՞։

Մի գեր մարդ մոտեցավ ու բացականչեց.

— Ընկե՛ր Բոգեմսկի, դու իջի, գործդ շատ է. ես կերթամ հետը։

Սամվելը ծիծաղելով առարկեց.

— Հազարից մեկ Գրիգոր Տալյանը եկել է Լենինական, ես չերթամ ճամփու դնելու, դու էրթա՞ս, ընկեր Կաֆաֆով

Շերամը փորձեց համոզել երկուսին էլ.

— Ախպեր, կերևա, որ չկշտացաք. սպասեք մի երգ էլ ասեմ ու ճամփա ընկնիմ.—ու երգեց.

Ես ջահել եմ, յարս՝ պառավ,
Ո՞ւրտից էկավ՝ ընձի առավ,
Գլխիս խաթաբալա դառավ .

Բազմությունը քրքջաց։ Մեկը գոռաց.

— Ծո՛, էդ երգը ընձի վրա է հանել։

— Ա՛յ օղուլ, իսկական իմ պատկերս է, ի՞նչ կխոսիս.— առարկեց մյուսը։

Նորից՝ սրտաբուխ քրքիջ։ Ծիծաղեց նաև երգիչը։ Հնչեց երրորդ զանգը։ Բազմությունն սկսեց լքել կառամատույցը։ Հանկարծ վագոնի բաց լուսամուտից տարածվեց սիրահարների անջատման ու նվիրվածության տաղը.

Ճամփորդ եմ, ջանի՛դ դուրբան,
Կաց բարով, ջա՛ն սիրեկան.
Սիրտս քեզ մոտ կթողնիմ,
Չեղնի մնաս անգյուման

Գնացքը հեռանում է, իսկ սիրո մեղեդին լսվում է երկար, երկա՛ր։ Շոգեքարշը սուլում է կարճատև. կարծես չի ուզում խանգարել լեռների խորխորատներում արձագանքող տաղի ալիքներին։

4

Թիֆլիսի Սոլոլակ կոչված փողոցով հանդարտ ու մտախոհ քայլում է մի պատկառելի մարդ: Ձախ թևին գցած է աշնանային թեթև վերարկուն, իսկ աջով նա բռնել է զանգվածային ճեռնափայտի կոր գլուխը: Լայնեզր գդակը ծածկում է նրա ճակատը: Ահա նա մոտեցավ Հայարտանն ու մի պահ կանգ առավ շքամուտքի առջև: Դռան մեջ երևաց բարձրահասակ ու գեղեցկադեմ մի տղամարդ: Սա իսկույն ճանաչեց եկվորին ու ցնծագին բացականչեց.

— Ավետիք Իսահակյա՞ն... Բարի գալու՛ստ:

Բանաստեղծը սեղմեց նրա ճեռքը և խոսեց.

— Դուք այստեղի տնօրենն եք կարծեմ·

— Այո. Հովհաննես Պողոսյան: Երևի ինձ մոտ եք գալիս, Վարպետ:

— Կգամ, իհարկե՛. . հիմա չէ. հիմա ես կուզենայի տեսնել ու լսել պատանեկության տարիների ընկերոջս, երգիչ Գրիգոր Տալյանին. գիտե՞ք:

— Ինչպես չէ, շա՛տ լավ:

— Իսկ որտե՞ղ է նա նվագում ասում են ինչ-որ ճաշարանում.— լրջացած հարցրեց Իսահակյանը·

— Ուղեկցե՞մ ձեզ:

— Ո՛չ, ներեցեք... Երկուսս էլ որ մտնենք այնտեղ, կմատնենք մեզ...

— Այո:

— Դե՛, դուք գնացեք, ուր անհրաժեշտ է ձեզ, իսկ ես կգնամ ու կվայելեմ նրա տաղերի հաճույքը.— և պոետը ժպտաց իր նշաձև աչքերով: Պողոսյանը բացատրեց, թե ինչպես գտնի երգչին: Ու երբ նա գլխարկը հանեց ի նշան հարգալից հրաժեշտի, մի կողմի վրա սանրած թուխ և ալիքավոր մազերը կախվեցին ականջին: Պոետը նույնպես բարձրացրեց շլյապան ու բռնեց ետդարձի ճամփան.

Նստել է բանաստեղծը ճաշարանի կիսամութ անկյունում, ձեռքը դիմհար արել ճակատին և սպասում է: Նա երբեմն ըմպում է առջևը դրված գինին և հայացքն ուղղում այն կողմ, որտեղ պետք է երևան նվագածուները: Գլխարկը չի հանել. տաղերգուն որ տեսավ, ամբողջ տպավորությունը կփչանա. թող նա ազատ երգի: Պոետի աչքերը նման են ամրոցի դիտանցքների. ինքն

ամբողջ սրահը տեսնում է, բայց իրեն նայողը չի նշմարում, թե ինչ կայծեր են բռնկում նրա հայացքի խորքում:

Երկար, շատ երկար ժամանակ է, որ պոետը չի ունկնդրել գյումրեցիների սիրելի երգչին: Վերջապես երևաց նա՝ Շերամը: Նրա ետևից հարթակ բարձրացան դափահար Կարոն, քամանչահար Առաքելն ու կլառնետ նվագող Արտուշ Շահբազյանը: Նստեցին, դիտեցին սրահը, սեղանների շուրջը բոլորած մարդկանց և սկսեցին նվագել ինչ-որ պար: Ավետիքին մոտեցավ ճաշարանի վարիչն ու հետաքրքրվեց, թե է՞լ ինչ է ուզում պատվարժան այցելուն:

— Բան չեմ ուզում. թառ նվագողին ասեք թող իր երգերից կատարի. չասեք, թե ես եմ խնդրել:

Ճաշարանի վարիչը ձեռքը սեղմեց աչքին ու հեռացավ: Քիչ անց բանաստեղծի լսելիքը շոյեց վաղեմի տաղը:

Երգում էր Շերամն ու մտածում. «Ո՞վ է ուզել իմ երգը, տեսնիս.— ներքուստ հարցրեց ինքն իրեն և զննող հայացքով ստուգեց սեղանների շուրջը նստած մարդկանց: Կանգ առավ շլյապավորի վրա:— Չեղնի՞ գյումրեցի է...» ու երգեց «Վարդ ցանեցի» տաղը: «Ինձ նմա՞ն...— հոգոց հանեց պոետը.— սիրեցի՝ յարս տարան...»: Ու զայրմանքը կիսաբաց արեց նրա շուրթերը. տաղերգուն երգեց հենց այդ.—

Սիրեցի՝ յարս տարան,
Յարա տվին ու տարան...

Իսահակյանը մի կում էլ ըմպեց գինուց և աչքերը կիսախուփ՝ ականջ դրեց: Շերամը երգն ավարտեց ու Կարոյի ականջին ինչ-որ բան ասաց, աչքերով ցույց տալով հեռու նստած այցելուին: Դափահարն ուսերի շարժումով պատասխանեց, որ չի ճանաչում: Անորոշությունը կարծես ավելի զնգուն դարձրեց երգչի ձայնը...

Իսահակյանն այնքան հուզվեց, որ գլխարկն ինքնաբերաբար հրեց դեպի գագաթը:

Այստեղ էր, որ բացահայտվեց կիսաձպտյալ պոետը: Նվագածուները տարակուսանքով նայեցին վարպետին. ինչու՞ ընդհատեց երգը... Իսկ երգիչը թառը դրեց սեղանին ու նետվեց սրահ: Սեղաններին ու աթոռներին ոտ գցելով, նա սլացավ կիսամութ անկյունը, թևերը լայն բացած՝ վրա պրծավ ոտքի կանգնած բանաստեղծին:

— Վա՛յ, Ավո ջան, եկե՞լ ես,— մրմնջաց տաղերգուն ու գրկեց նրան:

Սրահում նստածները դարձան ողջագուրվողների կողմն ու ակամայից գավաթները բարձրացրին.

— Ձեր կենացն ըլի, ախպե՛րտինք,— ջերմությամբ բացականչեցին նրանք:

Ճերամն ու Իսահակյանը գլխով շնորհակալություն հայտնեցին նրանց, հետո նստեցին իրար դիմաց ու զրույցի բռնվեցին:

— Է՞, Գոքոր ջան, ի՞նչդ ես, լա՞վ ես:

— Էստից լավ էլ ի՞նչ եղնի, Ավո ջան,— բանաստեղծի գալուստն ակնարկելով՝ հուզված ասաց երգիչը: Հարազատ բարբառը թախծալի ժպիտ ցոլացրեց պոետի աչքերում:— Էս ի՞նչդ որ էկել ես.

Իսահակյանն ախ քաշեց ու թոթովեց.

— Աշխարհի հեռուները հասավ հայրենիքիս ձայնը, Գոքո՛ր, ու ես էլ ըսի՝ մայրդ որ կանչում է, գնա, մա՛րդ աստծո:

— Շատ լավ ես արել, Ավո ջան...— Եվ Ճերամը ծաշարանի ժպտադեմ վարիչին մոտ կանչեց, որ ուտելիք ու խմիչք պատվիրի: Պոետը բռնեց նրա ձեռքը.

— Ոչինչ հարկավոր չէ, Գոքոր. ես եկել եմ, որ քու երգդ լսեմ:

— Ո՞րը կուզես,— նրա պահանջին պատրաստակամ՝ հարցրեց երգիչը:

— Մի սքանչելի երգ ունեիր, է՛... Արի իրիկնահովին...

— Մեկտեղ էրթանք մեծ արտը...— լրացրեց հեղինակը և չսպասեց, որ Ավետիքը շարունակի խոսքը. իսկույն գնաց իր տեղը, նվագարանը գրկեց ու երգեց: Եվ ամբողջ սրահը քարացավ լռության մեջ:

Արի իրիկնահովին
Մեկտեղ էրթանք մեծ արտը,
Քնինք էն անուշ զովին,
Մոռնանք աշխարհի դարդը

Երգն ավարտվեց: Տաղերգուն նորից մոտեցավ մտերիմին: «Տարօրինակ արարած է մարդը. երբեմն տխուր երգից հետո զվարթանում է, իսկ ուրախ երգից հետո՝ տխրում»: Այս հայտնությունն անցավ Իսահակյանի մտքով, երբ բարեկամը նրա հոգին պարուրեց վերջին ելևէջով.

Քնինք, զարթինք, էրնեկ տանք
Էս թանկագին գիշերին...
Անջաղ անուշ օր տեսանք...
Էրնեկ լուանի աչքերին·

Բանաստեղծը ժպտուն հայացքն ուղղեց երգչի վրա և ասաց.

— Դուք արտի մեջ քեֆ կքաշեք, Գոքոր, լուսնի՞ն ընչի երանի կուտաս:

Շերամն ակնթարթային մի հայացք գցեց Վարպետի դեմքին և արդարացավ.

— Դե՛... բանաստեղծություն է, էլի. դու խո ընձեն լավ գիտես: Է՛, լավ չէ՞ էդպես:

— Դրանից լավ վայթե չլիներ,— խոսեց Իսահակյանն ու նայելով երգչին, խորհեց. «Հե՛յ գիտի ջահելություն, ուստա՛ Գոքոր... Ծերացել ես, բարեկամս»: Ապա ելավ տեղից, վերարկուն անփութորեն գցեց թևին, ձեռնափայտը վերցրեց և ասելիքն ուղղեց նրան.— չէ՛, Գոքոր, լավ ես մնացել՝ տեսքդ, ձա՛յնդ... տեսողությունդ ինչպես է:

— Ակնոց չեմ դնե, Ավո ջան. էնպես կգրեմ: Մե քիչմ էլ նստի: Չե՞ս ուզե, որ էլի երգեմ:

— Ուզում եմ, շա՛տ եմ ուզում,— թախանձեց Իսահակյանը:

Շերամն իսկույն անցավ իր տեղն ու շարունակեց ընդհատված տաղարանը: Պոետը հարմարվեց աթոռի եզրին և ամբողջովին լսողություն դարձավ: Երգիչն իրար ետևից հնչեցրեց հին ու նոր տաղերը:

... Ահա նա թառը դոշին, զոր ու գիշեր, սիրեցյալի գովքն է անում, ահա նա աղաչանքն ուղղում է լեռներին, որ իրեն ծամփա տան... Իսկ երբ սրահի կամարներն արձագանքեցին որսկան ախպոր ձայնին, Ավետիքն աչքը գցեց ջահելության ընկերոջ շուրթերին.

— Մի որսկան էլ դու ես, Գոքո՛ր,— շշնջաց բանաստեղծը: Եվ դեռ չէր հասցրել վերջակետ դնել իր մտքին, երբ գուսանը սրտերը ողողեց հայոց տխուր, բայց և ըմբոստություն անթեղած տողերով.

Սև-մութ ամպեր ծակտիդ դիզվան,
Դուման հագար, Ալագյա՛զ...

— Երկար կյա՛նք քեզ, Գոքոր,— կիսաձայն արտասանեց պոետն ու, բաժակը գլխից վեր բարձրացնելով՝ հայացքն ուղղեց սրտակցին. սա՝ երգելով էլ գլուխ խոնարհեց ի նշան շնորհակալության:

5

Մայթն ի վեր հանգիստ ընթանում են բանաստեղծն ու տաղերգուն. ասես ոչ թե քայլում են, այլ սահում են եթերով: Գլխահակ են մի փոքր. խոհերի՞ց, թե՞ հուզմունքից...

— Գոքո՛ր,— լռությունը վանեց բանաստեղծը. ու Շերամն ամբողջ դեմքով դարձավ դեպի նա. ուզում էր զույգ ականջով լսել մտերիմ մարդու խոսքը.— Էն որ մի ժամանակ գովում էիր՝ հրեշտակ... ի՞նչ եղավ:

Տաղերգուն հասկացավ, որ Իսահակյանը գիտե իր երկարամյա սիրո գաղտնիքը:

— Է՛, Ավո ջան,— հառաչեց նա.— հրեշտա՞կ մնաց,— և դնդնաց՝ դու հրեշտակ էիր, չքնաղ դիցուհի...

— Այն ժամանակ «էիր» չես ասել:

— Էն վաղ էր. հիմի էդպես կըսեմ, ի՞նչ կարող ես անել:— Իսկ մտքում ներողություն խնդրեց Վարդուհուց, որ ստեց:

Բարեկամների զրույցին փողոցի աղմուկը չէր խանգարում. որ չխոսեին անգամ, միմյանց աչքերից ամեն ինչ կհասկանային: Բայց երգիչն աշխատեց շեղել այդ նյութից նրա ուշադրությունը:

— Ավո՛ ջան,—երազկոտ նայելով բանաստեղծին, խոսեց նա.— միտքդ կուգա՞, որ մի շկատուկա էիր նվիրել աղջկաս՝ Արևին:

— Շատ լավ, էսօրվա պես:

— Էդ էլ որ ընկել ջարդվել էր...

— Արևն էլ հոնգուր-հոնգուր կուլար.— երգչի խոսքը կտրեց Վարպետը.— ես էլ որ եկա ձեր տուն, տեսա՝ խեղճ աղջիկը արցունք է թափում զարդատուփի համար...

— Ըսիր՝ մի՛ լա, բալիկ ջան,— այս անգամ Ավետիքի խոսքը դողդոջուն ձայնով կտրեց երգիչը,— նորը կբերեմ:

— Չեմ հիշում, բերեցի՞, թե՞ չէ:

— Իա՛, բերեցիր, բա ի՞նչ արեցիր:

— Այո, ամենաանխիղճ մարդը կլինի նա, ով անմեղ երեխային կխաբի:— Մի պահ խոհուն լռություն տիրեց:— Գոքո՛ր,— նորից խոսեց բանաստեղծը,— Էն որ երգում էիր՝ Սարեր, կաղաչեմ, ե՞րբ ես գրել:

— Նոր չէ, Ավո ջան, տասնհինգ-քսան տարի կեղնի:

— Է՛, կարելի՞ է իմանալ՝ ու՞մ ես նվիրել:

Շերամը խորազնին նայեց բարեկամի աչքերին ու գլուխն օրորեց՝ տես, թե որտեղից բռնացրեց:

— Դրանից շատ առաջ էլ գրել եմ՝ Ամպերն ելան... Էդ երկուսն էլ նվիրված են մի սիրուն ուսուցչուհու...

Իսահակյանը հոնքերը հարցական կիտեց, բայց չուզեց ընդհատել հետաքրքիր պատմությունը: Տաղերգուն շարունակեց.

— Մի ժամանակ որ Ալեքպոլում ընթերցանական երեկոներ կունենայինք, գիտե՞ս:

— Գիտեմ, գիտեմ, հետո՞:

— Մե հորքուրիմ տղա ունեի՝ Մուշեղը. նա երկար տարիներ ուսուցիչ էր եղել, վերջը եկել հաստատվել էր Գյումրի: Ուսումնական, լեզու իմացող մարդ էր...

— Ճանաչում եմ,— անհամբերությամբ հաստատեց Իսահակյանը:

— Նա էր տանում ինձ այդ երեկոներին. ինքն էլ կազմակերպիչներից մեկն էր: Հավաքվում էին վարժապետ-վարժուհիներ, ուրիշուրիշ մտավորական մարդիկ. կարտասանեին, երգ կըսեին... Ես էլ թառս կառնեի, կերթայի մասնակցելու:

— Լա՛վ,— սիրուն ուսուցչուհու դրվագին սպասելով՝ շտապեցրեց բանաստեղծը:

— Մի օր էլ, սովորականից դուրս շատ որ նվագեցի ու երգեցի, կրակ կտրած ուղղակի.— պոետը ծիծաղեց.— ըսածս ուսուցչուհին մոտեցավ, թառը ձեռքես առավ ու ըսավ՝ հերիք է նվագես, ուստա Գոքոր, հանգստացի...

— Հը՛մ,— բազմանշանակ մեջ գցեց Իսահակյանը:

Շերամը նայեց ժպիտի մեջ փակագծված նրա շրթունքներին ու շարունակեց.

— Դու մի ասա, էդ աղջիկն ուժեղ սիրահարվել է ինձ. ջիգյարը կցավեր ընձի համար:

— Հետաքրքիր է. հետո՞,— անթարթ նայելով երգչին, հարցրեց պոետը:

— Մյուս օրը բացատրվանք: Ես հասկացրի, որ ամոթ է. ես կնիկ, երեխաներ ունիմ... խորհուրդ տվեցի՝ թե գնա ամուսնացի, բախտավորվի, ջահել ես...

Հուսալից ժպիտը բանաստեղծի դեմքից չէր հեռանում: Զրուցընկերը շարունակեց.

— Մի տարի էդպես ման եկանք. էնքան նամուս ունեի, որ էնոր ձեռք չտվի. թե մեկ-մեկ համբուրվեինք, էդ էր:

— Հավատա՞մ,— ծիծաղը հազիվ զսպելով՝ հարցրեց Վարպետը:

— Իա՜, եղա՞վ. էլ մարդ չկա՝ խաբեմ, քեզի՞ պտի խաբեմ... Հա՛, վերջը աղջիկը գնաց Կաղզվան, մարդ առավ: Հըմը՜, ի՞նչ մեղքս թաքցնեմ... Էնոր կարոտը մնաց հոգուս մեջ. ես էլ գրեցի՝ Ամպերն ելան, հետո էլ՝ Սարեր, կաղաչեմ...

— Սարե՛ր, կաղաչեմ, իջեք, ցածրացեք, գնում եմ յարիս, մեկ ծամփա բացեք,— խոր հոգոց հանելով՝ արտասանեց պոետը...— Բոցեղեն սիրո կարոտն է քեզ տանջել, Գոքոր...

— Իշտը՜,— կարծ կապեց Շերամը,— դու ականջ էրա էդ պատմության շարունակությունը:

Նրանք զրուցելով ետ դարձան ճաշարանի կողմը, բայց ճանապարհը շեղեցին և, իրենց համար աննկատելի, անցան փոդոցն ու մտան Պուշկինի պուրակը: Այստեղ կանգուն էր ռուս մեծ բանաստեղծի բրոնզե կիսանդրին: Մարմարյա կարմրավուն պատվանդանի վրա ավելի հպարտորեն էր հիմնավորվել նրա դիմաքանդակը: Իսահակյանը մի պահ ակնածալից սիրով նայեց դրան և հանկարծ հիշելով, որ երգչի իրական լեգենդը կիսատ մնաց, խոսեց.

— Հա՜, Գոքոր, պատմիր, պատմիր:

— Անցան տարիներ: Էդ աղջիկն էկավ հասավ Թիֆլիս. մարդն էր մեռել, թե՝ ինչ, չգիտեմ... Եկավ՝ ինձ գտավ: Քիչ կմնար սերը թաժանար... Դե՜, ես էլ արդեն էն չէի...

— Ափսո՜ս,— չգիտես կատակով թե լուրջ, մտերիմին գրգռեց Իսահակյանը:

— Չէ, չէ՛, Ավո ջան, բան չէր դուրս գա... Բայց էդ անիծվածն ինչղ որ ավելի սիրունցաճ էղներ... Է՛հ,— հառաչեց տաղերգուն,— ի՞նչ օգուտ:

— Ափսո՜ս,— կրկնեց բանաստեղծը: Շերամը տխուր ժպտաց և ամփոփեց.

— Հենց էդ ժամանակ էլ գրեցի.

Քեզանից մաս չունիմ, կուրծքդ մի՛ բանա,
Իզուր ինձ մի՜ տանջիր, էլ չեմ դիմանա.
Անսիրտ, անջիգյար, խեղճ եմ, ապիկար:

— Գոքո՛ր, դու երգե, երգե,— տրամադրեց Իսահակյանը,— խոսքդ լավն է, բայց եղանակով որ կըսես, ավելի համով-հոտով կեղնի:

Եվ Շերամը մեղմաձայն երգեց շարունակությունը:

— Է՞, երգդ ազդե՞ց գեղեցկուհու վրա:

— Չիտեմ, ազդեց, թե չազդեց, բայց խո ստեղծվեց... Համ էլ էն հրեշտակ ըսածդ Թիֆլիսում էր արդեն:

— Կարևորը երգն է,— երկդիմի եզրակացրեց բանաստեղծը:— Դե՛, Գոքոր ջան, ես գնամ:

— Հըբը տուն չպտի՞ գաս:

— Չէ՛, գործ ունիմ, պիտի գնամ:

— Դունեն ետ դառնալը լավ չէ, գիտե՞ս:

— Գիտեմ, բայց սա էնքան էլ քո դուռը չէ,— խնդաց Իսահակյանը:

Նրանք դուրս ելան պուրակից ու հրաժեշտի երկարատև ձեռքսեղմումով բաժանվեցին:

— Ե՞րբ պտի էրթաս ընտանիքդ բերելու,— անվստահ. հետաքրքրքրվեց Շերամը·

— Շուտով:

— Գնալուցդ առաջ որ տանս շեմքը ոտք չես դրել, կնեղանամ:

— Հայրենի տաղերն ականջիս մեջ պահած պիտի էրթամ, Գոքո՛ր ..

Եվ ամեն մեկը գնաց իր ճամփով:

6

Իրիկնամուտ էր: Շերամի տանը սովորական եռուզեռ էր: Հանկարծ ուժգին ցնցումը սասանեց ամբողջ շենքը: Լվացարանի կողմից խլացուցիչ դղրդյուն լսվեց:

— Երկրաշա՛րժ է,— գոչեց տանտերն ու շտապեց պատշգամբ, մոտեցավ ընդհանուր լվացարանին ու շվարած նայեց բակ: Սրա արտաքին պատը փլվել էր. և աղյուսների կույտը դիզվել էր ներքևում: Մոտեցավ փլվածքի եզրին ու գլուխը տարուբերեց. «Սա վատ նշան է»: Սալվինազը ցավով նայեց ամուսնուն. ուզեց ասել՝ չլինի՞ Լենինականի մոտերքից է, բայց բերան չբացեց. ախր Գրիգորի եղբոր ընտանիքն այնտեղ է, քույրը՝ Փեփրոնը մեծով-փոքրով այնտեղ են:

— Մերոնց բան չեղնի՞, Սալվի,— հարցրեց ամուսինը:

— Քա՛, չէ, չէ՛. անպատճառ էնտե՞ղ պտի էղնի:

Այդ րոպեին ներս մտան Հայկն ու Բաղդասարի փեսան, Գեղամը: Շերամը վեր թռավ: Հայկը սևեռուն նայեց աներոջն ու հոգեբանի պես հասկացավ նրա վիճակը:

— Ընչի՞ ելար, հայրի՛կ։

— Եսի՞մ. դուք որ վազելով էկաք, ըսի՝ չեղնի՞, թե ձեր տնեռու մեջ...

— Չէ՛, հայրիկ, բան չի եղել։

Ներս մտան Սաթոն ու Վաղարշակը։ Սրանք էլ ասացին, թե իրենց տունն անվնաս է։ Հայկը Գեղամին մի կողմ տարավ ու փսփսաց, թե աներոջ հոգին հանգիստ չէ։ Եվ նրանք այդ գիշեր քեֆ սարքեցին նրա տանը, որպեսզի տխուր մտքերը ցրվեն։ Սակայն առավոտն էլ ուրախություն չբերեց. Ահա դուռը բացվեց ու մի ծանոթ ձայն հարցրեց.

— Կարելի՞ է։

Դռանն առաջինը մոտեցավ Սալվինազը, բայց չիմացավ ինչ պատասխանի և տուն հրավիրեց անծանոթին։ Ներս մտավ բարեհամբույր մի մարդ. նրա ձեռքին բրեզենտի պատյանով ջութակ կար։ Տանտերը ծանաչեց Ղազոյենց Կարոյին·

— Ես մենակ չեմ, ուստա Գոքոր,— մտերմաբար ասաց ջութակահարը։

— Ի՞նչ անենք,— նրա ռուսի վրայով դռան կողմը դիմեց տանտերը։

Կարոյի ետևից ներս մտան մի քանի նվագածու։

— Ծո-ծո-ծո-ծո՛... Էս ի՞նչ ջոկովի տղերք են... համեցեք։

Եվ Շերամը կնոջը ծանոթացրեց ընկերների հետ։ Հարությունն ինչ-որ կատակ արեց։ Բոլորը ծիծաղեցին։ Բայց գուսանին թվաց, թե անուրախ ծիծաղ էր դա։ Հերթով նայեց բոլորին։ «Մի բան եղել է, տեսնես ի՞նչ է»,— մտածեց նա։

— Սա՞ ով է, Կարո. գիտեմ, թե Վաղոն է. երե՞սը ընչի է ծածկել դափով՝ նորահարսի պես։

Վաղինակն անմիջապես մոտեցավ ու բացականչեց.

— Բարև, վարպետ. վարագույրի ետևի՞ց էլ մարդու կտեսնիս։

Երբ բոլորը նստեցին, տաղերգուն, ասես շոշափելով նրանց տրամադրությունը՝ խոսեց.

— Տղե՛րք, աչքիս մի տեսակ կերևաք. ի՞նչ է եղել, պարզ ասեք։

Եվ նրանք պատմեցին, թե ինչ ահավոր երկրաշարժ եղավ Լենինականում, ինչքան տուն քանդվեց, ինչքան մարդ մնաց անօթևան։

— Վախ-վախ-վա՛խ...— հառաչեց երգիչը, իսկ կինը զույգ ձեռքով ծեծեց ծնկները — Է՞, կառավարությունը չօգնե՞ց։

— Ինչպե՞ս չօգնեց. շատ մեծ օգնություն ցույց տվեց, ուստա Գոքոր,— ասաց Արծրունը.— Է՛լ տնակներ, է՛լ անկողին, է՛լ վրան... հագուստ, սնունդ... ամեն բան: Համ էլ երկրաշարժի օրերին Լենինական եկան՝ Կալինինը, Ռիկովը, Օրջոնիկիձեն, Սեմաշկոն՝ մեր խորհրդային կառավարության ղեկավարները:

Մի րոպե լռեցին: Մեկ էլ Արծրունը քթի տակ ծիծաղեց. բոլորը զարմացած նայեցին նրան:

— Ընչի՞ կխնդաս,— տարակուսեց Շերամը:

— Խնդալուս պատճառը Փափանենց Արտաշն է: Էդ բնիկ գյումրեցին երկրաշարժի ժամանակ, չուխայի փեշը թորթոփ էրած՝ կուգա կոմունալ բաժին, թե՝ Պապաշան ու՞ր է»:— ի՞նչ պտի անես,— հարցնում է Ղազարյան Գրիշան:— «Նալոգս եմ բերել. քաղաքը քանդվել է, շինել է պետք: Համ էլ չըսեք, թե Արտաշը հանգամանքից օգտվեց ու տուրքը չտվեց»: Պապաշան կոմունալ տնտեսության հաշվապահն է:

— Արտաշը նրան էլ գտավ, փողն էլ տարավ հանձնեց ֆինբաժին,— ավելացրեց Կարոն:

— Բայց կառավարությունը կարծեմ զիջել էր բոլորի պարտքերը, չէ՞. ում ունեցվածքը քանդվել էր,— հարցրեց Վաղինակը:

— Ճիշտ է, Արտաշի արհեստանոցն էլ շատ տների ու խանութների հետ փուլ էր եկել. բայց էդ մարդը չուզեց, որ խիղճը տանջե:

— Ծո՛, բոստանի փողն էլ էր բերել,— մեջ գցեց կլառնետ նվագող Հարությունը:

— Հիմի էսպես զինված-պատրաստված ու՞ր կերթաք,— հարցի հետ հայացքը նվագարանների վրայով սահեցրեց Շերամը:

Նվագածուներն ասացին, որ գնում են ներկայացումներ տալու՝ Բաթումիում, Ախալցիխեում, Ախալքալաքում, ապա Եվլախում, Ստեփանակերտում, Շուշիում. Կարոն խնդրեց, որ վարպետն էլ միանա իրենց խմբին, բայց նա հրաժարվեց, քանի որ ինքն էլ, կինն էլ հիվանդ են:

Արվեստակիցներին ճանապարհ դնելուց հետո տաղերգուն ավելի անհանգստացավ: Երկրաշարժը ավերել է հայրենի քաղաքը:

Ու երգիչը երկար ժամանակ քայլում էր պատշգամբում, ինքն իրեն խոսում, իսկ ուշ գիշերին ոտանավոր գրեց երկրաշարժի մասին, տարերային այդ աղետի դեմ:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՎԱՐԴԵՐ ՈՒ ՓՇԵՐ ԲԱՐՁՈՒՆՔԻ ԾԱՄՓԻՆ

1

Նորից գարուն է վրաց աշխարհում. բայց սևակնած է այս գարունը: Հիվանդ է Շերամի կողակիցը՝ Սալվինազը: Մի րոպեով ելնում է տեղից, որ զբաղվի տան գործերով, բնբնա տափուկ-տափուկ ու նորից պառկի: Տագնապով է համակված նաև երգչի հոգին: Հայրենի քաղաքն ավերվեց, կինը հիվանդացավ, Վարդուհու տան մի պատն էլ ճաք է տվել...

Այո, աղետալի սկսվեց 1927 թվականը տաղերգուի համար: Մարտի քսանն իր ծննդյան օրն է, բայց ի՞նչ ուրախություն, երբ տանտիրուհին ծանր հիվանդ է: Ավագ որդին ամեն ինչ անում է, որ մայրը լավանա, բայց... Արևհատն էլ օրվա մեծ մասը մոր կողքին է, իսկ Կրտսեր որդին գյուղից մեկնել է Երևան, որ համալսարանի ընդունելության պայմաններն իմանա: Փեսային էլ հրավիրել են այնտեղ աշխատելու. ուր որ է՝ կծանապարհվի:

... Ինչքա՜ն անարդարություն կա կյանքում: Ի՞նչ մեղք է գործել ինքը, աստված, որ այդքան դաժանորեն պատժում ես:

Յոթանասուն տարեկան երգիչը յոթ հազար անգամ մարդկանց հոգին արևոտ հովիտներ տարավ, իսկ ինքը, ահա, կարկտահարվում է...

Ու նա երգեց իր նվագարանին ճոնած վշտալի երգը, ապա ըմբոստացավ իր իսկ վիատության դեմ...

— Ո՛չ, խիզախ երգիչը ծնկի չի գա հարվածների առաջ: Ինքը դեռ ուժեղ է, դեռ կարող է դիմադրել: Անջուր պարտեզը կծաղկի նորից: Խենթավուն մարտին է ծնվել, մաքառմամբ հասել յոթանասուներորդ գարնան և ահա...

Լենինականից հրավեր է ստացել. այնտեղ ուզում են իր յոթանասունամյակը կատարել: «Է՛, սիրելի հայրենակիցներ, գեշ օրեր եք ընտրել հոբելյանիս համար»: Վշտացավ նա և հաղորդեց՝ որ հետաձգեն: Եվ նա տխուր-տրտում կանչեց դստերը, որ մնա մոր մոտ. ինքը պետք է գնա վար՝ նվագաձուների հավաքատեղին:

Մարտի վերջին կնոջ վիճակը վատացավ: Դուստրն ու ավագ որդին երկու շաբաթ մորից չէին հեռանում: Հայրը տեսնում էր այդ և ավելի գորովագութ դառնում. Մի օր էլ, երբ հիվանդի ուշքը տեղը եկավ, աչքերը բացեց, նայեց շուրջն ու նվաղած ձայնով հարցրեց.

— Հըբը ու՞ր է, չեկա՞վ...

Շերամն արագ մոտեցավ կնոջ անկողնուն՝ հուսադրեց.

— Կուգա, կուգա, Սալվի ջան. էս է՝ կուգա, մի՛ անհանգստանա:

Հիվանդն աչքերը փակեց ու հազիվ լսելի ինչ-որ բառեր շշնջաց. տաղերգուն հասկացավ ու կսկծաց. Երևի մայրը հույս չուներ, թե ուսուցիչ որդին իրեն ողջ կտեսնի և ինքն իր վերջին պատգամը կտա նրան:

Վարդգեսը շարունակում էր բուժումը լավագույն բժիշկների խորհրդի համաձայն: Յոթերորդ օրը կաթվածը խփեց:

Շերամը միշտ տանն էր. ոչ մի հրավեր չէր ընդունում, ոչ մի կանչի չէր արձագանքում: Նստում էր հիվանդի անկողնու մոտ և խոնավ հայացքը՝ նրա դեմքին, մերթ սրտի խորքից ախ էր քաշում, մերթ սրտապնդում ինքն իրեն: Մի գիշեր էլ, երբ Արևհատն ուժասպառ եղավ, նրան խորհուրդ տվեցին, որ գնա մի քիչ քնի: Եվ դուստրը, մոր դեմքին երկար նայելուց հետո, գնաց պառկեց: Լուսադեմին Շերամը պատշգամբ ելավ և այնպես նայեց Լոռվա սարերի կողմը, որ կարծես թե կրտսեր որդին ուր որ է պիտի երևա: Հանկարծ նրա լսողությունը շանթեց աղեկտուր լացը: Թռավ ներս: Կնոջ երեսը ծածկած էր:

Ուսուցիչ որդին գյուղից եկավ մոր թաղման օրը:

2

Վագոնն օրորոցի պես է. իսկ անիվները չխկչխկում են, ինչպես դրա գլխաձողին շարված հատիկները: Եվ դա անդիմադրելի քուն է բերում: Դրսում թանձրացող խավարը նույնպես պարուրում է նինջով: Հատուկենտ լապտերները մթության անմեկնելի էջերի բազմակետերն են ասես: Նայում է Շերամը խավարի խոր-

հրդավոր դեմքին ու կյանքի բազում մանրամասներ մտաբերում...

... Ո՞վ է սա. կարծես աստղերից է կաթել և կնոջ կերպարանքով մոտենում է իրեն: Ոտից գլուխ ծերմակ հագած այդ կինը՝ կերոնի նման կանգնում է դեմն ու ժպտում: Տաղերգուն ընկրկում է և մեղանչողի պես շշնջում.

— Սալվի՛... Սալվի՛ ջան...

Տեսիլքն անհետանում է: Շերամը դեմքը թաղում է ափերի գոգում ու մղկտալի լալիս: Ապա վեր է կենում, գնում-գալիս վագոնի մեջ և ակամա նայում տարբեր դիրքերով ննջող ուղևորներին, նստում տեղն ու մտովի հայհոյում տոմսավաճառին. «Չէր կարող էնպես մի տոմս տալ, որ կուպեում մենակ չլինեմ: Սալվիից հետո՝ մենակ, էստեղ՝ մենա՛կ...»: Վագոնի դատարկությունն էլ ասես անխղճաբար կրկնում էր.

— Մենա՛կ... մենա՛կ... մենա՛կ...

Նա ձեռքը գցեց նվագարանին, ինչպես զինվորը վտանգի պահին՝ հրացանին. շապիկի տակ պահ մտած լարերը խուլ զնգացին:

Գնացքը կանգ առավ ինչ-որ կայարանում. «Ո՞ր կայարանն է, տեսնիս», անցավ նրա մտքով: Ուզեց իջնել, բայց երկու քայլ չարած՝ ետ եկավ, նստեց, նվագարանը հանեց շապկից և, ինչպես որդուն կփաղաքշեր, շոյեց գուշը, ձեռքը սահեցրեց սադաֆով պատած կոթի երկայնքով, մատները խաղացրեց ականջների վրա ու նորից շապիկ հագցրեց, որ Սալվինազն էր կարել, ախուոֆ արեց ու մտաբերեց...

... Ինքն ավարտում է թառ շինելու գործը: Չորսդին ընկած են խարտոցներ, շուշաթղթի ծվեններ, սադաֆի պատառիկներ: Մի քիչ այն կողմ՝ շրեշի ու սոսնձի ամաններն են, փարդալի ոլորված շերտերը: Ահա նվագարանը սեղմեց կրծքին, ինչպես սիրահարին ու երգեց:

Տարիների ընթացքում այդ գործիքի մարմինը ծածկվեց ոսկի մոնոգրամներով, ոսկեզօծ ծաղիկներով...

Շերամը ձեռքը տարավ ծոցագրպանն ու շոշափեց այն թուղթը, որ տվեցին Թիֆլիսում: Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչը հայտնել էր երգչի ավագ որդուն, թե Բաքվում Անդրկովկասի աշուղների համագումար պետք է կայանա. Հայաստանի միակ արժանավոր մասնակիցը Շերամն է: Վարդգեսը գրությունը տվել է հորը, հասցրել կայարան ու բարի ճանապարհ մաղթել: Եվ հիմա հայրը մեն-մենակ գնում է համագումար. գնում է այն

քաղաքը, որտեղ իր անունը Ծերամ դրեցին: Հիշելով իր անկաշառ բարեկամին՝ Հովհաննես Հովհաննիսյանին, երգիչն ի խորոց սրտի հառաչեց:

Գնացքը դանդաղ շարժվեց տեղից: Վագոն մտան երկու ուղևոր ու մոտեցան երգչի կուպեին:

— Հո զբաղված չէ, պապա՛շա,— հարցրեց նրանցից մեկը:

— Չէ, չէ, որդի՛, զբաղված չէ, համեցեք,— հյուրընկալորեն դիմավորեց երգիչը: Նա նույնիսկ ուրախացավ, որ մենակ չի մնա:

Երկուսն էլ նստեցին տաղերգուի դիմաց ու մի որպե հայացքով զննեցին նրան. Մեկի աչքն ընկավ նվագարանին:

— Պապա՛շա, վայ թե աշուղ ես, հը՞,— հարցրեց առաջինը:

— Գիտես թե,— զվարթ պատասխանեց Ծերամը:

Երկուսն էլ լայնբերան ժպտացին:

— Ի՞նչ հաջողություն է, չէ՞, Միքայել,— ընկերոջը դիմեց մեկը:

— Բա ո՞նց. սաղ գիշեր քեֆ անելով կերթանք:

Ծերամը կասկածով նայեց նրանց. նրան թվաց, թե երկուսն էլ խմած են: «Ի՞նչ անենք, մարդ են, մի քիչ խմել են»,— ներողամտաբար եզրակացրեց նա· Եվ այնքան բարեկամաբար տրամադրվեց, որ հաջորդ իսկ վայրկյանին շարադրեց իր կյանքի պատմությունը: Վերջում էլ ասաց, թե ինչքան երգ ունի և ինչու է գնում Բաքու: Նորեկ ուղևորները մերթ իր ու մերթ թառի վրա աչք գցելով, լսում էին նրա պատմությունը:

Մարդիկ խնդրեցին նվագարանը ցույց տալ: Ցույց տվեց՝ հիացան: Ինքն էլ ոգևորված, բայց ցածրաձայն երգեց՝ «Թառը դոշիս»: Հետո նա գործիքը մտցրեց շապկի մեջ, բուկը պինդ կապեց ու դրեց իր մահճին:

— Աշու՛ղ, էդտեղ որ դնես, քնած տեղդ կգցես ու կջարդես:

Գուսանն աքլորացավ:

— Ընչի՞ պիտի քնեմ... չե՛մ քնի:— Մի վայրկյան լռելուց ու մեկառմեկ նրանց զննելուց հետո նա հորանջեց ու խեղճացած խոսեց.— հըմը քունս կտանի, է՛... Ծերացել եմ, ա՛յ բալամ, ծերացել:

Նայեց աջ ու ձախ· Նրանք ծիծաղեցին:

— Քնի, պապաշա, քնի՛: Մեր քունը չի տանում. աչքներս թառիդ վրա կպահենք

Եվ Ծերամը հայացքը հառեց լուսամուտից դուրս տարածված

մութ շրջապատին, աղոտ ծրագներին, ականջ դրեց անիվների չխկչխկոցին, թմրեց ու քնեց:

Քիչ հետո խալթվածի պես վեր թռավ: Կուպեում ոչ ոք չկար. միջանցքում նույնպես: Անհանգիստ ընկավ դեսուդեն, նայեց այս կուպեն, այն կուպեն... Վերադարձավ իր տեղը և անսպասելի հայտնությունից կարկամեց՝ նվագարանը չկար: Այստեղ դրեց՝ վերևի մահճի մոտ... չկա՞... Խելագարի պես վազեց միջանցքով, նորից եկավ իր կուպեն, բարձրացավ, ափլփեց մահիճը... չկա՞... չոքեց, ու որքան տեսողությունը ներում էր, նայեց նստարանի տակ... չկա՞...

— Հըբը ի՞նչ էնեմ, հըբը ի՞նչ էնեմ.. — զույգ ձեռքով ափռեց գլուխն ու կշտամբեց ինքն իրեն... միամի՛տ մարդ, չքնեիր, էլի՞...

Վազեց տամբուր, մոլեգին թափով քաշեց դրսի դուռը. սա բացվեց: Որոշակի լսվեց անիվների թմբկահարումը, ռելսերին քսվելու ծզզոցը:

— Զթռնի՞մ՝ վազեց էդոնց ետևեն,— կալծակեց նրա ուղեղում.— բայց ո՞ր կողմն էրթամ:

Գնացքն ասես հասկացավ նրա վտանգավոր քայլի առաջիկա հետևանքը. ընթացքն արագացրեց: Երգիչն ամբողջ բարկությամբ վրա զարկեց դուռը և արագաքայլ գնաց իր տեղը. նստեց:

— Ինչքա՞ն միամիտն ես, Գրիգոր. բոլորին լավ մարդու տեղ կդնես.— ծնկին շմփացնելով՝ խոսեց նա: Նորից մոտեցավ դրսի դռանը, ձեռքը գցեց բռնակին, բացեց... «Հը՞,— անորոշ հարցրեց իրեն.— տեսնիս ո՞ր կայարանում իջան»: Մոտեցան մի երկու մարդ ու պինդ բռնեցին նրա թևը. չէ՞ որ կընկնի և...

— Թա՛ռս, տղերք, աննմա՛ն թառս տարան...

Մի քանի հոգի նայեցին իրար, ապա ցավակցելով՝ հարցրին.

— Ովքե՞ր էին, հայրիկ, ի՞նչ տեսակ մարդիկ էին:

Ծերամն այլայլված՝ աչքը մեկ սրա երեսին գցեց, մեկ նրա և հենց իր դյուրահավատության դեմ ծառացած՝ գոչեց.

— Տո՛, ես ի՞նչ գիտեմ. .— Եվ նա հակիրճ պատմեց այն երկուսի մասին.— Խնդրեցին, թե մի երկու երգ ասա ու...

Մի խումբ ուղևորներ Ծերամին տարան իրենց կուպեն, որ հանգըստանա: Նրանց սփոփելն ավելի զայրացրեց նրան: Պարզվեց, որ հափշտակիչներին ոչ ոք չէր տեսել. քնած են եղել, թե ինչ...

Եվ այսպես, իր ձեռքով ստեղծած, այդքան տարի փայփայած

սքանչելի Նվագարանը, որ կարող էր զարդարել ուզաձդ թանգարանի ցուցափեղկը, անհետացել էր:

Ի՞նչ աներ Շերամը: Հայաստանի Լուսժողկոմատի գործուղման վկայականը գրպանում էր, լավ. որդու նամակը կոմպոզիտոր Անտոն Մայիլյանին, որ մինչև աշուղների համագումարը մնա նրա տանը, այդ էլ կա, լավ. բայց առանց թառի՞... Ի՞նչ էլ լինի, պետք է գնա և Անտոնին պատմի ամեն ինչ. գուցե նա մի ծար անի:

3

Նվագարանից զրկված երգիչն իջավ գնացքից, մի պահ կանգնեց կառամատույցում, ուշադիր զննեց անցորդներին...

... Մի՞թե սա այն Բաքուն չէ, որ տասներեք տարի առաջ փառքով ու պատվով դիմավորեց իրեն և փառքով ու պատվով էլ ճանապարհ դրեց: «Էս ինչքա՞ն է փոխվել աշխարհը»,— քթի տակ խոսեց նա և գլխահակ քայլեց Գոգոլի փողոցի ուղղությամբ, որտեղ ապրում էր կոմպոզիտոր Անտոն Մայիլյանը: Մտմտալով մոտեցավ, կանգնեց շքամուտքի առաջ. հիացած նայեց դղյականման շենքին և ասես մոռացած իր կորուստը՝ մտավ ներս: Մոտեցավ կաղնեփայտից կերտած դռանը և անհամարձակ թակեց: Դուռը բացվեց, և նրա առջև հայտնվեց ակնոցավոր մի մարդ:

— Ես Անտոն Մայիլյանի մոտ եմ եկել,— ասաց Շերամը:

— Անտոն Մայիլյանը ես եմ, հայրի՛կ. ներս համեցեք,— հրավիրեց կոմպոզիտորը:

— Դե՛... ես էլ Գրիգոր Տալյանն եմ, Շերամը... բայց...

— Արի, արի, Շերամ, համեցեք. ինչու՞ կանգնեցիր... Ինչ-որ բա՞ն է պատահել:

— Թա՛ռս, Անտոն ջան, գյոզալմ թառս... ծամփեն գողցան,— լալագին խոսեց տաղերգուն, ոտք դնելով նախշուն գորգին:

Անտոնը շշնջաց

— Գողացա՞ն... ինչպե՞ս...

— Համոզեցին՝ քնեցրին ու...— երգիչն այլևս չկարողացավ շարունակել. միայն ձեռքը տարավ ծոցագրպանը, դողացող մատներով հանեց որդու նամակն ու տվեց Մայիլյանին: Երկուսն էլ նստեցին բազկաթոռներին, իրար դիմաց, ու լռեցին:

— Հը՛, ավազակնե՛ր,— բացականչեց կոմպոզիտորը, ապա ձգարը բացեց ու կարդաց Վարդգեսի նամակը: Հետո անցավ մյուս սենյակը, մի սազ բերեց, տվեց երգչին, ասելով.— իմ ունեցածը սա է: Շերամը խոր հոգոց հանեց.

— Չէ՛, Անտոն ջան, սրանով Գարանը հարսնառ չի էրթա...

— Հա՛, իհարկե: Դե՛, ոչինչ, Ճերամ, ոչինչ. սիրտդ լեն պահիր,— հուսադրեց,— մինչև համագումար դեռ ժամանակ կա:

Երգիչը մտածմունքի մեջ ընկավ: Մայիլյանը նկատեց, որ նա չի հանգստանում, առաջարկեց.

— Ճերա՛մ, կարո՞ղ ես ինձ ցույց տալ այն տունը, որտեղ ուստա Գոքորը Ճերամ դարձավ. հը՞, կարո՞ղ ես:

Երգիչն ասես թև առավ:

— Ընչի՞ չեմ կարող,— խանդավառվեց նա և գլխարկը դրեց. բայց վերարկուի մի թևը հագավ թե չէ, մտացրիվ նայեց Անտոնին.— հը՞, կրնա՞մ գտնի էդ տունը,— ասաց և անհույս նստեց:

— Ինչու՞ նստեցիր,— դիմեց կոմպոզիտորը.— գնանք:

— Վայթե չկարողանամ գտնել:

— Ո՞ր փողոցն է, հիշու՞մ ես:

— Էն ժամանակ՝ Բալախանսկայա... Կայարանին մոտիկ է:

— Հրաշալի՛... Դե՛, գնանք:

Երբ երգիչն ու կոմպոզիտորը հասան տեղ, Ճերամը ճանկեց նրա թևը և ուրախ բացականչեց.

— Ըհը՛, սա է,— և այնպես նայեց շենքին, որ ասես հնադարյան տաճար էր տեսել,— էստեղ էր ապրում Հովհաննեսը... Ա՛յ, էն լուսամուտներն իրենցն էին:— Եվ տխրեց:

Մայիլյանը թևանցուկ արեց նրան ու տարավ շենքի բակը: Մտան Հովհաննիսյանի նախկին բնակարանը և երկար դիտեցին:

Հաջորդ առավոտյան կոմպոզիտորը տեսավ, որ իր հյուրն անհանգիստ քայլում է պատշգամբում, խոսում ինքն իրեն և թունդ հայհոյում հափշտակիչներին: Մոտեցավ.

— Էլի՞ կորստիդ մասին ես մտածում:

— Է՛հ, որ մտածեցի՝ ի՞նչ... Տղիս ի՞նչ պատասխան պտի տամ:

— Եթե ուզում ես, մի նամակ կգրեմ Վարդգես Գրիգորևիչին:

— Էդպես մի բան որ անես, շատ լավ կեղնի:

Մտան սենյակ: Այստեղ դրված էին դաշնամուրն ու գրասեղանը: Մայիլյանը մի քանի տող գրեց ու տվեց երգչին, ապա առաջարկեց.

— Ճերա՛մ, մեկ-երկու տաղդ երգիր, տեսնեմ կարո՞ղ եմ ձայնագրել:— Եվ առաջինն ինքը մոտեցավ դաշնամուրին, մատները սահեցրեց ստեղների վրայով ու սպասումով դարձավ նրան.— դե՛, լսում եմ:

Տաղերգուն ասաց.

— Անտո՛ն ջան. մի տես՝ ինչ եմ գրել էսօր,— ու կարդաց.—

Հայաստանից ինձ ղրկեցին մեծ գործի,
Շտապ-շտապ վագոն մտա, գնացի,
Քունս տարավ, հազիվ մի ժամ քնեցի,
Թառս գողցան՝ ձեռքս ծոցս մնացի.

Մալիլյանը թախծալի ժպտաց ու գլուխը տարուբերեց: Եվ հենց որ ուզում էր անցնել բուն գործին, երգիչը թևը բռնեց.

— Էս երկու տողն էլ ականջ էրա, հետո:

Եվ նա կարդաց այն տողերն, ուր ասում է, թե մտավ Բաքու առանց թառի, սիրտը կոտրած. և շքեղ քաղաքը աչքին դարձավ խիստ անդուր:

— Լավ ես գրել, Շերամ. բայց մի բոպե մոռացիր ու երգդ երգիր,— տաղերգուի մտատանջությունը ցրեց կոմպոզիտորը:

Քիչ անց գուսանն սկսեց երգել՝ սազով նվագակցելով ինքն իրեն.

Մազերդ ոսկեշող, ունքերդ կամար,
Աչքերդ գոհարներ՝ պատկերիդ հարմար...

Կոմպոզիտորն իսկույն գտավ տաղի նրբերանգները և համարձակ նվագակցեց·

Գուսանը սազն իսկույն մի կողմ դրեց ու շարունակեց ազատ երգել իր հին տաղերից մեկը:

— Ե՞րբ ես գրել, Շերամ:

— Շա՞տ է միտքս, Անտոն ջան. նշանված էլ չէի:

Հետո նա էլի երգեց.

Լուսնյակը ցոլաց, գնաց,
Անցավ ամպի տակ՝ մնաց...
Ամեն մարդ սիրածն առավ,
Իմ յարս բաժան մնաց·

— Խե՛ղճ Շերամ,— առերևույթ տրտմությամբ խոսեց կոմպոզիտորը:

— Ընչի՞,— հետաքրքրվեց երգիչը:

— Դե՛, յարդ բաժան մնաց, չէ՞:

— Հա՛, որոշ ժամանակով:

Ու երկուսն էլ աղմկալի ծիծաղեցին:

— Ծերա՛մ,— անսպասելի դիմեց Մայիլյանը,— ասա տեսնեմ, թե ինչպե՞ս ես հորինում, ախր:

— Եսի՞մ. դե՛, իրան-իրան կուգա: Թառը ձեռքս առնիմ թե չէ՛...

— Ինչքան ուզում եմ էդպես ինքնաբուխ գրել, չի ստացվում:

— Համեստություն ես անում, Անտոն ջան,— խնդաց երգիչը:

Երբ երգի ժամն անցավ, տանտիրոջը հետաքրքրեց, թե կորցրած թառը գնե՞լ էր:

— Կյանքիս մեջ ուրիշից թառ առած չկամ. ա՛յ, էս ձեռքերովս եմ շինել բոլորը: Ինչքա՜ն էլ նվիրել եմ սրան ու նրան...— Ու երգիչը պատմեց գործիքների մասին:— Ճա՛տ եմ նվիրել, Անտոն ջան, շա՛տ.. Կշինեի, մեկ-երկու տարի կնվագեի, հետո կնվիրեի մոտիկ մարդկանց՝ ընկերներիս, բարեկամներիս, նվեր կուտայի ու նորը կշինեի:

— Այդքան որ նվիրել ես, այս մեկի համար ինչու՞ այդքան հուզվեցիր:

— Էդ մեկը ուրիշ թառ էր, ուրի՛շ...— Եվ տաղերգուն հառաչեց:— Համ էլ համագումարի միակ հայը ես եմ, ախր...

Կոմպոզիտորը գլխով արեց:

— Իշտը՛...— խոսքը ծրարեց երգիչը:

Երեկոյան Անտոն Մայիլյանը նրան տարավ կայարան ու ծամփու դրեց, որ գործիքով գա հասնի համագումարին:

4

Ծերամը Բաքվից վերադարձել է հոգնած. վախվխելով մոտենում է որդու դռանն ու թակում: Ներսից կնոջ ձայն է լսվում: Գուսանը կռահում է, որ դա Վարդգեսի հարսնացուն է՝ Շահանդուխտը, և ներս է մտնում: Քիչ անց գալիս է որդին ու զննող հայացքով նայում հորը:

— Ժամանակից շուտ ինչու՞ եկար, հայրիկ. ի՞նչ է եղել.

Հայրը դեմ արեց Անտոն Մայիլյանի երկտողը. որդին կարդաց և զայրացավ: Հետո նվագարան գնեցին ու միասին մեկնեցին. բայց համագումարը չկայացավ. քիչ աշուղներ էին եկել:

Հայր ու որդի Թիֆլիս վերադարձան ավելի տխուր, քան Ծերամը՝ նվիրական թառի կորստից հետո: Հասան տուն: Վարդգեսը քաշվեց իր սենյակը, իսկ հայրն իր բնակարանի դուռը բացեց,

կանգնեց շեմին, խորը հոգոց հանեց ու մի պահ դժվարացավ մտնել: «Տունդ դատարկվեց, Գրիգո՛ր Տալյան: Սալվիդ ձեռքեդ գնաց, թառդ տարան... Դու էլ արդեն էն չես, որ թառ շինես... նա էլ մոտդ չէ... էհ...»:

Մտավ ներս, ընկավ թախտին, գլուխն առավ ափերի մեջ: Հոգնած էր ճանապարհից, բայց չուզեց հանգստանալ. տան դատարկությունն ու լռությունը ակցանել էին կոկորդը: Անաղմուկ ու ճանրորեն իջավ սանդուղքով: Նվագաձուների կոլեկտիվում մի քանի րոպե զրուցեց տղաների հետ և քայլերն ուղղեց Վարդուհու տան կողմը: «Ո՞վ կարող է նրա պես սփոփել, հանգստացնել»,— մտմտաց երգիչը:

Ամռանը կրտսեր որդին պարապեց քրոջ բնակարանում ու մեկնեց Երևան: Շուտով ընդունվեց համալսարան: Այդ տարվա միակ ուրախությունը հոր կյանքում թերևս այդ էր. «Քուր ու ախպեր էնտեղ լավ կեղնին. Վարդգեսն էլ էստեղ կնշանվի: Բա ե՞ս»:

Վրա հասավ ձմեռը: Շերամի կացարանը կրկնակի ցրտեց. ո՛չ մարդկային շունչ կար այդտեղ, ո՛չ պլպլացող ճրագ, ո՛չ հոգատար ձեռքերի տաք գուրգուրանք... Մեծ գործ է անում ավագ որդին հոր տաղերը սերունդներին ժառանգելու համար: Հորդորեց, որ ծերունի երգիչն իր կյանքի պատմությունն էլ գրի... «Էլ ի՞նչ պիտի անի խեղճ տղես. խո չի կրնա գա՝ ինձի շահե-պահե»:

Լենինականից ստացված հրավերն ասես այդ հարցի պատասխանն էր:

Ճիշտ է, այնտեղ իր հետաձգված հոբելյանն են ուզում կատարել. բայց արդյո՞ք դա կլուծի իր կյանքի դժվարին խնդիրը:

Եվ ուղեղը շամփրում էր նույն տանջող հարցը..

— Չիտեմ, չիտեմ, չիտե՛մ,— ինքն իրեն խոսելով, ահա նա պատրաստվում է:

Ինչքան էլ ձմեռն աղետալի լիներ, ստեղծագործելու անզուսպ պահանջը նրան մղում էր դեպի սեղանը: Խորթությամբ վերաբերվելով ուրիշի շինած գործիքին, ի՞նչ կշահես:

Եվ Շերամը հիշողությամբ վերականգնեց ու գրի առավ երկու հին ոտանավորները: Սրանցից մեկը, որ վերնագրել էր «Իմ կյանքը», հենց իր ողբերգական վիճակի պատկերն էր:

Գրեց, կարդաց, սրտի խորքից ախ քաշեց ու դրեց այն հաստ տետրի մեջ, որտեղ կրտսեր որդին սկսել էր գրի առնել հոր տաղերը: Մի երկու օր անց կարդաց իր մի այլ ոտանավորը և քիչ մնաց պատռեր, բայց ետ կանգնեց:

Հայտնի չէ՝ գիտե՞ր Պ. Դուրյանի «Իմ մահը», թե՞ ինքնուրույն մտահղացում էր դա:

... Եթե սիրտը տանեն, հոգին հանեն, եթե շունչն էլ կտրեն, ինքը դեռ կապրի. Բայց եթե անունն ու հիշատակը կորչեն, այն ժամանակ ինքն ստույգ կմեռնի:

Այդ պահին ներս մտավ Վարդգեսը:

— Հայրի՛կ, նոր բա՞ն ես գրել,— հարցրեց նա:

— Չէ՛, կյանքիս մասին գրած հին ոտանավորները միտքս ընկան. տեսա, որ շատ տխուր են.— նայեց որդուն ու պարզեց վերջինը.— էս էլ հին է. առ՝ կարդա:

Վարդգեսը կարդաց, շուրջը աչք ածեց ու մտածեց. «Հա՛ լավ չէ հորս դրությունը»: Թուղթը վերադարձրեց և ասաց.

— Վեր կաց, հերըս, վեր կաց՝ գնանք. Շագան հիմի մեզ է սպասում:

Հայրը երկար նայեց որդու աչքերին ու կիսաբերան խոսեց.

— Վա՛րդ ջան,— խոսքն ընդհատեց.— ընձի կթվա, թե Շահանեն...— նորից ընդհատեց.— Էնքան էլ ուրախ չէ իմ գնալուն:

— Ի՞նչ ես խոսում,— մի փոքր բարկացած առարկեց որդին,— ընդհակառակը, որ չես գալիս, անհանգստանում է:

Լույսը նոր էր բացվում, երբ ելավ, թելնիկը դրեց նավթավառին ու մտմտաց. «Էրթամ աշխատիմ, գուցե դարդերս մոռանամ»: Հետո գնաց Արմեն Տիգրանյանի տուն: Ընտանիքի տաքուկ անկյան կարոտն էր, որ նրան մղում էր այս ու այն օջախը: Արմենին ասաց, որ իրեն կանչել են Լենինական. գիտես, թե հոբելյան պիտի կատարեն:

— Մենա՞կ պիտի գնաս:

— Ի՞նչ կեղնի որ,— գդալն ափսեի մեջ դնելով, հարցրեց Շերամը.— հիմի էլ խո վտանգ չկա՞.

— Այո, բայց հո ջահել չե՞ս:

— Որ պառվցել եմ, ընկնիմ մեռնի՞մ:— Արմենն ուզեց առարկել, բայց նա կանխեց — դեռ շատ նպատակներ ունիմ կատարելու:

Արմենը քմծիծաղեց.

— Վայթե կնիկ էլ առնես, չէ՞:

— Հը՛,— թոնթորաց երգիչը.— կնիկ ունեցողի համար հեշտ է խոսելը. էս տարիքիս բա ի՞նչ անեմ. կարո՞ղ եմ Սալվիիս ետ բերել:

Բոլորը տխրեցին, իսկ կոմպոզիտորի կինը՝ Աշխենը, որ Սալվինազի քեռու աղջիկն էր, լուռ լացեց: Տաղերգուն ճաշը կիսատ թողեց ու հրաժեշտ տվեց:

5

Շերամը մռայլ և անտրամադիր է դասավորում շորերը պայուսակի մեջ և խոսում ինքն իրեն: Մի՞թե կարելի է մեղադրել նրան, երբ ամբողջ կյանքում ընտանեկան խնամքի սովոր երգիչը մնացել է որբևայրի: Հայացքն ակամա կանգ առավ կնոջ նկարի վրա:

— Սալվի՛ ջան, Սալվի՛...— մենախոսեց նա,— մե գլուխդ վեր հանե՝ տես Գրիգորդ ի՞նչ դրության մեջ է...— Աչքը գցեց առաստաղին ու բողոքն ուղղեց արարչին.— Անխի՛ղճ աստված, ընձի՞ տեսար դու. ի՞նչ մեղք էի գործել, որ էս տեսակ պատիժ կամեցար քո ծառային...— Հայացքը նորից բևեռեց կնոջ նկարին.— Ի՞նչ անեմ, Սալվի ջան, հեռացար, ընձի անտեր-անտիրական թողիր: Ի՞նչ անեմ, ըսա տեսնիմ, մի խորհուրդ տուր մեղավորիս... — Սրբեց արցունքոտ աչքերը, վերցրեց պայուսակը, դուռը փակեց և դանդաղ իջավ փողոց:

Վագոնի ճոճումը ասես քաշում, իրար է կպցնում վշտահարի կոպերը· Եվ ննջում է նա գլուխն ափերին հենած ու փութանցիկ երազ տեսնում: Ահա Սալվին դագաղի մեջ պառկած՝ ժպտում է... «Էս ի՞նչ սարսափելի երազ է»,— հենց երազի մեջ մտածում է նա: Ձեռքի թափահարումով փորձում է վանել մղձավանջը: Ձեռքը դիպչում է վագոնի լուսամուտին, նա վեր է թռչում ցնցվելով: Երազի տպավորության ներքո քայլում է միջանցքով, ծխում ու ճգնում դիտել խավար դաշտերը և խորհում է...

Ոմանք կարծում են, թե փառքի արժանանալու կամ դրամ վաստակելու համար է, որ ինքն ամեն տարի շտապում է իր ծննդավայրը: Ինչպե՞ս հասկացնի մարդկանց, որ ինքը մազապուրծ փախչում է իր փակ դռնից, անճրագ կացարանից ու կեղծ բարեպաշտությունից:

Նա Լենինական եկավ սրտացավ մարդկանց խորհուրդը լսելու նաև:

Ահա, ինքն ու եղբոր կինը՝ Սոֆիկը, ոտք դրեցին սենյակ:

— Կանչել են, որ ընձի հոբելյան անեն, հա՛րս ջան,— տուն մտնելուն պես ասաց նա:— Է՛, գիտես թե Սալվիս կսպասեր, որ յոթանասուն տարեկան դառնամ թե չէ, հեռանա ինձնից...

Սոֆիկը չկարողացավ որևէ բան ասել. միայն գլխաշորի ծայրը մոտեցրեց աչքերին:

Հետո Շերամը գնաց նվագաձուների մոտ, այցելեց քույրերի զավակներին ու Վարդգեսի դասընկերոջը՝ Արտավազդ Սանոյանին: Եղբայրների պես հանդիպեցին ինքն ու Արաբաջյան Արան: Բոլորն էլ իմացել էին երգչի կնոջ մահը, տեղեկացել նվագարանի կորստի մասին և ցավակցեցին հարազատի պես:

— Հիմի ի՞նչ պտի անես, Գոքոր,— հարցրեց Արան:

— Ինչ կա՞, որ ինչ անեմ:

— Էդ տարիքիդ հարսի, աղջկա ումուդի՞ն պտի մնաս.

— Չիտեմ:

Երբ մտավ Սանոյանի տուն, սա էլ հուսադրեց ու խորհուրդ տվեց:

Նվագաձուների հավաքատեղիում տեսավ Արծրունին. սա էլ ցավակցեց և ըստ սովորության, շրթունքները գրեթե փակ՝ հարցրեց.

— Էն կինը որտե՞ղ է, ուստա Գոքոր:

Շերամը հասկացավ՝ ում մասին է խոսքը:

— Թիֆլիսում է:

— Ինձնից քեզ խորհուրդ չի հասնի, բայց որ ընկնիս աշխարհք ման գաս, նրանից համապատասխանը չես գտնի:

Տանը Սոֆիկն էլ՝

— Էստեղից որ էրթաս, էլի՞ մեն-մենակ պտի մնաս:

— Ի՞նչ անեմ: Խելացի մարդիկ խորհուրդ կուտան, թե ում լավ եմ ճանաչում, նրա հետ միանամ:

— Վարդուհու՞:

— Դե՛, նրա անունը կուտան, էլի...

Շերամն այդ օրը հրավիրված էր Սանոյանի աներոջ տունը. այստեղ պիտի լիներ նաև Ավետիք Իսահակյանը: Այս պարագան ուրախացրեց երգչին. և նա թառն առավ ու գնաց: Ավետիքը շատ ջերմ ընդունեց նրան և խոսքի վերջում ասաց.

— Էլ երկար մի՛ մտաձե, Գոքոր. հանդերձյալ աշխարհից դեռ ոչ ոք չի եկել, որ կինդ գա: Վարդուհին ինչ է, ինչ չէ, շունչ է տանդ մեջ, նեղ օրիդ հասնող, քո մուսան է, Գոքոր, քեզ ոգևորող մուսան:

Այդ խորհրդից էր, թե իր կյանքի բարդ խնդրի լուծմանն ընդհուպ մոտենալուց, երգչի տրամադրությունը մի փոքր բարձրացավ: Հրավերքը ղեկավարում էր Իսահակյանը և շատ սիրով էր երգչի

հետ. սա էլ հաճույքով կատարում էր բանաստեղծի խնդրանքը: Դեմքին ծիծաղ խաղաց: Եվ նա պատմեց.

— Տարիներ առաջ էստեղ մի դեպք պատահեց, Ավո ջան: Էն ժամանակ գյումրեցիք դեռ չէին ընտելացել իմ Շերամ անվանս: Մի օր ռադիոն հայտարարում է, թե Գալոյանը կկատարի Շերամի «Դու իմ մուսան ես» երգը:

.. Բարձրախոսի մոտ հավաքվել էին ընտանիքի անդամները և լսում էին: Մեկ էլ տան մեծը, թե՝ էս Շերամն ո՞վ է, որ մեր ուստա Գոքորի երգն իրանով է արել...— Պառավ տանտիրուհին նեղսրտում է.— կեցի տեսնինք՝ ի՞նչ կըսեն:— Հենց էդ րոպեին ռադիոն հայտնում է, թե ով է Շերամը: Եվ ծերունի ունկնդիրը հանգստանում է:

Իսահակյանը ծիծաղեց: Սանոյանը դարձավ տաղերգուին.

— Իսկ միտքդ կուգա՞, որ Անի էինք գնացել: Եկել էին նաև Սիրանույշը, Իսահակ Ալիխանյանը, Հովհաննես Աբելյանն իր կնոջ հետ: Քեզի հրավիրել էր Աբելյանը, թե՝ քելե, մեր Բագրատունյաց մայրաքաղաքը տես, նվագե, երգե...

— Աբելյանի կինն էլ էնքան լացեց,— մեջ գցեց տաղերգուն,— որ մարդը ըսավ, թե՝ Գոքոր, կինս մեռավ լալով. էդ երգդ մի՛ երգե:

Իսահակյանը հետաքրքրվեց.

— Էդ ո՞ր երգդ է, Գոքոր. ըսա՝ տեսնինք Արտոն էլ կուլա՞:

Սանոյանը խրոխտացավ, բայց հետո նահանջեց.

— Կարող է պատահել.

Շերամը երգեց իր «Մայրական ողբը», ապա արտասանեց ոտանավորը գյումրեցիների մասին.

... Համեստ են, չարքաշ, կյանքի կռվից խուսափող չեն, փողով լինեն թե անփող, ապրել գիտեն մեր գյումրեցիք:

Նրանք բարի սիրտ ունեն, ցորեն էլ որ չլինի, գարի կուտեն. ինչքան էլ զարնվեն չարի ու քարի, էլի ապրել գիտեն գյումրեցիք...

Շերամը մի զննող հայացք գցեց Ավետիքի մագնիսի պես ձգող աչքերին և զգաց, որ ոտանավորը նրան դուր եկավ. առանձնապես վերջին տողերը, որոնք գովում են գյումրեցիներին որպես անկեղծ հոգի ունեցող, որպես հաստատ մարդիկ և ոչ ստվերներ:

Շերամի ծննդյան յոթանասունամյակի օրերին Իսահակյանին հրավիրեցին Երևան: Երգիչը վշտացավ դրա համար, բայց ի՞նչ կարող էր անել:

Դրանից առաջ տեղի էր ունեցել հետևյալ իրողությունը, որի մասին պատմել էր Գրիգոր Դուրգարյանը՝ տաղերգուի արհեստավոր ընկերը...

... 1927—28 ուսումնական տարվա կեսին նրա որդու՝ Կարոյի դասարան բերեցին մի նորեկ աշակերտի: Նրան ընդունել էին Նիկողայոս Տիգրանյանի հատուկ խնդրանքով: Նորեկ պատանին՝ Օնիկը, շատ բաներ գիտեր, որ մյուսները չէին իմանում: Եղել էր Թիֆլիսում, Լենինգրադում, Երևանում, անձամբ տեսել էր Ռոմանոս Մելիքյանին և շատ ուրիշ նշանավոր արվեստագետների:

Մի օր էլ Օնիկը Կարոյին ու մի ուրիշ ընկերոջ հրավիրեց իրենց տուն: Երբ բարձրացան փայտյա աստիճաններով, ներսից լսվեց մի կերկերուն ձայն.

— Ո՞վ է, ի՞նչ եք ուզում:

— Դա ինքը Նիկոլայ Ֆադեիչն է,— ասաց Օնիկը,— կամաց քայլեք, որ չխանգարեք, նա գրում է:

— Բայց նա կույր չէ՞,— շշնջաց Օնիկի ընկերը,— ինչպե՞ս է գրում:

— Նա կոմպոզիտոր է:

Տղաներն առաջին անգամ էին լսում այդ բառը:

Սայանյան Օնիկը որբ էր: Ապրել էր Ռուսաստանում, մի հայ ազգականի մոտ: Նիկողայոս Տիգրանյանը նրան բերել էր ու որդեգրել .Եվ նա դարձել էր կույր կոմպոզիտորի ուղեկցողն ամեն տեղ:

Մի օր տղաները դաս էին սովորում, երբ դռան զանգը հնչեց: Օնիկը վազեց ներքև ու վերադարձավ մի ծրար ձեռքին: Դրա մեջ հրավիրատոմս կար:

Այդ օրը Խորառձառի ակումբում, քաղաքի հասարակությունը նշելու էր Շերամի 70-ամյակը: Հրավիրել էին նաև կոմպոզիտորին, բայց տղաները չգիտեին, թե ով է Շերամը: Տիգրանյանը զարմացավ դրա վրա և ասաց. որ Շերամը բնիկ գյումրեցի է և տպագրված գրքեր ունի:

Կարոն ասաց, որ իրենց տանը կարմիր կողով բարակ մի երգարան կա, բայց դա գրել է ոչ թե Շերամը, այլ Գրիգոր Տալյանը:

— Այդ Գրիգոր Տալյանը հենց ինքը Շերամն է, հասկացա՞ք։

Հետո նա պատմեց Տալյանների երաժշտասեր ընտանիքի մասին և ավելացրեց, որ տղաներին էլ կտանի երեկոյին։

Ակումբի դահլիճում հավաքված հանդիսականները հոտնկայս ծափահարում էին սիրելի հոբելյարին։ Մի մորուքավոր ծերունի ճառ էր ասում, բայց տղաների ուշադրությունը բևեռված էր բեմին, որտեղ նստած էին պատկառելի մարդիկ. դրանց մեջ էր նաև Նիկողայոս Տիգրանյանը։

Վերջապես համերգն սկսվեց։ Երգում էին Շերամի երգերը։ Մեկ էլ դաշնամուրին մոտեցավ կոմպոզիտորը և նվագեց «Էլի երկինս ամպել է», որ դաշնամուրի համար մշակել էր ինքը։

7

Շերամը դարձյալ գնացքում է։ Նա վերադառնում է տուն։ Եվ մտաչքի առջևով, բենգալյան կրակների նման, առկայծում և անցնում են հոբելյանական հանդեսի ոգևորիչ պատկերները...

Համերգը տևեց մինչև ուշ գիշեր։ Երգապաշտ գյումրեցիների համար ի՞նչ նշանակություն ունի դա, թեկուզ մայրամուտից մայրամուտ։ Մինչև վերջին վայրկյանը սրահում մնացին քաղաքի ղեկավարները և նվագածուները, մտավորականներն ու արհեստավորները, հարազատներն ու բարեկամները. և ունկնդրեցին երգչի նոր տաղերը հայրենիքին ու սիրեցյալին նվիրված։

Հանկարծ հայացքը պատնեշվեց իր կացարանի դռնով։ Սենյակը պատկերացավ մութ և ցուրտ։ Շոգեքարշի ճիչն սթափեցրեց նրան։ Նայեց դուրս։ Գնացքն անցնում էր Քուռ գետի կամուրջով. անիվների թմբկահարումն էլ փափկացավ։

Ահա բարձրանում է Շերամը երկար սանդուղքով. բայց չգիտես՝ քայլերն են ծանր, թե՞ մտորումները։ Կանգ առավ սանդուղքի կեսին, նայեց վերևի դռանը, ապա շարունակեց տհաճ վերելքը։ Աչքն ընկավ թևի տակ խեղճացած նվագարանի գլխին և ախ քաշեց։ Դուռը գողունի բացեց, անցավ իր պատշգամբը, պայուսակը դրեց դռան առաջ, թառը կախեց սյան վրա ցցված մեխից ու թշնամու պես նայեց իր փակ մուտքին։

— Չէ՛, էսպես չի էղնի,— ցածրաձայն խոսեց և շեղ հայացքն ուղղեց Վարդգեսի դռան կողմը։ Այնտեղից լսվում էր երգեհոնի ձայնը։— Էս անգամ ես չպիտի բանամ։— Մոտեցավ ու շոշափելու

նման թակեց որդու դռան՝ ապակին: Վարդգեսը թափով բացեց դուռ զարմացած դիմեց հորը.

— Վա՜յ, հայրիկ, եկա՞ր:

— Հա՜, եկա...

— Ի՞նչ է, էլի թա՞ռդ ես կորցրել, թե՞ բանալիդ:

— Չեմ կորցրել, Վա՜րդ ջան,— խուզարկու հայացքը թափանցեց որդու աչքերի մեջ,— ձեռքս չի զորա, որ էլի ես բանամ իմ փակ դուռը:

Որդին անորոշ մի հայացք գցեց հոր դեմքին: Հայրը մի րոպե հապաղեց, ապա խոսեց.

— Վարդգե՜ս ջան, որդիս, —ասես անհաղթահարելի մի ծանրություն բարձրացնելով, շարունակեց,— հասկացիր իմ դրությունը...

Որդին մտորեց, որ ինքը կամուսնանա և իր կինը հոր հոգսը կքաշի:

Ծերամը կռահեց, թե ինչ պիտի ասի որդին, ձեռքը թափ տվեց և հաստատուն քայլեց դեպի մուտքը: Պայուսակն ու նվագարանը թողեց իր պատշգամբում և իջավ փողոց: Որդու ականջին հասավ հոր զայրալից քայլերի դմբդմբոցը աստիճանների վրա:

Եվ տաղերգուն, ծովում խեղդվողի նման, ձեռքը գցեց այն կռվանին, որ տարիներ առաջ իրեն փրկեց հոգեկան տառապանքից: Կարապետի կինը, ժպտուն ու մարդամոտ այդ արարածը, այնպես դիմավորեց նրան, որ կարծես տասը տարի չէր տեսել: Ներս մտավ Կարապետը.

— Իա՜, հորեղբա՜յր, էս որտեղի՞ց ես գալիս էդպես հագածկապած:— Ծերամը հապաղեց:— Է՞, ասա տեսնի՞նք՝ ի՞նչ է եղել:

Մաշոյի դեմքի սիրալիր արտահայտությունը ոչ մի վայրկյան չէր վարագուրվում. սա թեթևացրեց երգչի հոգին. Նա ամեն ինչ պատմեց եղբոր որդուն: Կարապետը խոսեց.

— Է՜, ջահել են, հորեղբայր. էդոնց ջուրը դարիվեր կերթա. խորունկ չեն մտածե, թե քու տարիքի մարդու համար կինն ինչ նշանակություն ունի.— մի րոպե լռելյայն մտմտացին երկուսն էլ, ապա տանտերը վեր կացավ ու դիմեց հորեղբորը.— կուզե՞ս հենց հիմի էրթանք Վարդուհուն բերենք տուն:

Հորեղբայրը գրկեց նրան և ասաց.

— Ապրի՛ արևդ, Կարապետ ջան. էս անգամ էլ դու պտի փրկես ինձ:

Ներս մտած Մաշոն տեսավ, որ երկուսն էլ կանգնած են, զարմացած բացականչեց.

— Վա՛հ, էս ու՞ր իք պատրաստվում, տո՛. վռազ խոմ չի՞, քա՛... Մի պինդ հաց կուտենք, իժում ուր ուզում եք կերթանք։— Տղամարդիկ իրար երեսի նայեցին։— Մա՛շ, բա ո՞նց. սովածին ո՞վ ականջ կանի, տո՛...

Ճաշից հետո երեքն էլ գնացին Վարդուհու տուն։ Սա շատ սիրալիր ընդունեց նրանց, հյուրասիրեց, բայց խնդրեց, որ չշտապեն, որովհետև ինքն էլ պետք է մտածի, տան ու զավակների գործերը դասավորի։ Գրիգորի տուն մտնել մի փոքր դժվարանում էր։ Վարդգեսից էր ակնածում, թե՞ ինչ։

Երկու շաբաթ անց, նա արդեն Ճերամի հարկի տակ էր։

Երգիչն ուրախ էր դրա համար. չէ՞ որ տունը լցվեց լույսով ու ջերմությամբ, իսկ գուսանի հոգին՝ վստահությամբ ապագայի նկատմամբ։

Վարդգեսն էլ, վերջիվերջո, հաշտվեց. այնքան էլ անտարբեր չէր խորթ մոր վերաբերմամբ։ Գուցե հոր վիճակի թեթևանա՞լը համոզեց նրան, որ դա անհրաժեշտ քայլ էր այդ պարագային։ Գնալ-գալ առանձնապես չուներ, սակայն շարունակում էր կապված լինել հոր հետ։ Չէ՞ որ ավելի լրջորեն պետք է զբաղվեր նրա ստեղծագործությունները նոտագրելով։

Եվ տաղերգուն ամեն անգամ որդու մոտից իր բնակարանը մտնելիս տեսնում էր կնոջ մի փոքր տխուր դեմքը և հուսադրում.

— Վերջը լավ կեղնի, Վարդուհի՛. էդպես խո չի՞ մնա... Ամենախոր վերքն էլ վաղ թե ուշ լավանում է։

— Է՛, դու չգիտե՞ս, որ Վարդգեսին ես շատ եմ սիրում, որդուս՝ Գուրգենի չափ։

— Ընչի՞ չիտեմ, չե՞մ տեսնի, որ մեկ-մեկ էլ կկանչես, հաց ու ջուր կուտաս։ Հարազատ մոր պես կսիրես։ Էնպես զավակ չէ, որ մայր չլինես նրա համար։

Վարդուհին պատասխանեց միայն աչքերի գորովալից ժպիտով. Ճերամը լոկ մի խոսքով կապեց խոսակցության հանգույցը.

— Ի՞շտը՛ էդպես է կյանքը՛...

ԲԱՂԵՆ ԹՌԱԾ ԲԼԲՈՒԼ ԵՄ

1

Պատշգամբում հայտնվեց մի կին՝ աղջկա ձեռքը բռնած, դեմքը մոտեցրեց լուսամուտին ու ներս նայեց: Փոքրիկը շշնջաց.

— Մամա՛, երգում են:

— Սուս, Էմմա ջան, պապիկն է:

Մայրը տեսել էր, որ տանտիկինը գլուխը դրել է երգչի ուսին և լսում է նրա երգը, ինքն էլ ձայնակցում: Մայրն ու դստրիկը մի փոքր հեռացան լուսամուտից: Ներսից լսվում էր երիտասարդ մոր վաղուց ծանոթ տաղը, որ շուտով դադարեց: Նրանք մոտեցան դռանը. մայրը կամացուկ թակեց:

— Ո՞վ է,— հարցրին սենյակից. դուռը բացեց Վարդուհին: Նրա ուսի վերևից զույգին նայում էր Շերամը:

— Իա՛, Արև ջա՞ն... նե՛րս արի, ներս արի,— ուրախ ողջունեց հայրը:

— Արի՛, Արև ջան,— մայրաբար հրավիրեց տանտիկինը՝ վիզը ծռած ու խղճալի ժպտալով. նա շոյեց փոքրիկ աղջկա ծամերը և կոնֆետ պարզեց նրան.— ա՛ռ, աչիկո...

Էմման խեթ նայեց նրան ու վերցրեց:

Հայրն ու դուստրը երկար դիտեցին միմյանց և հասկացան իրար: Վարդուհին քաղցրավենիք դրեց սեղանին, թխվածք, մուրաբա, հաց ու պանիր: Լրիվ հրաժարվել նրա սիրալիր հյուրասիրությունից անհարմար էր. հայրն էլ ասաց.

— Արև՛ ջան, հարազատ հորդ տունն ես եկել, մի՛ ամաչի. օտար խո չե՞ս: Վարդուհին էլ մորդ տեղն է, բալա ջան:

Ու երբ Վարդուհին գրկեց Արևին, սա չվանեց նրան:

Հյուրերը մի-մի բաժակ թել խմեցին, թխվածք ճաշակեցին ու ոտքի ելան.

Երբ հայրը, նրա դուստրն ու թոռնիկը մտան Շահանդուխտի բաց արած դռնից, Վարդգեսը քրոջ հետ ողջագուրվեց և կաթոգին համբուրեց Էմմային: Այս տեսարանը երգչի դեմքին մի լուսե ժպիտ ծաղկեցրեց:

Թիֆլիսի մեղմ ու թովիչ երեկո էր: Հախուռն ու աղմկալից հողմի պես ներխուժեց Ռոմանոս Մելիքյանը. նա զույգ թևերն էլ վեր կարկառեց ու թավ, մի փոքր խռպոտ ձայնով, գոչեց.

— Ողջու՛յն երգ ու տաղի ուխտավորներին:

Եվ որովհետև բարձրահասակ էր, քիչ մնաց ձեռքերը դիպչեին առաստաղից կախված ջահին. իսկ երկար մազերն այնպես շաղ տվեց դեպի ետ, որ թվաց, թե զեփյուռը դրանց թափահարումից առաջացավ: Վարդգեսը ժպտալով ձեռքը մեկնեց մտերիմ մարդուն, և նրա ձեռքը թաղվեց Ռոմանոսի լայն բռան մեջ:

Օր չէր լինում, որ Ռոմանոսը չայցելեր այս տունը: Գալիս էր երեկոյան. չէ՞ որ այդ ժամերին քաղաքի աղմուկն արդեն մարած էր լինում: Ու հենց որ նա մտնում էր, թելասեղանն անմիջապես տանում էին պատշգամբ, իսկ Ծահանդուխտն այնքան բուրավետ թել էր պատրաստում, որ ցանկալի այցելուն գոնե մի գավաթ չխմել չէր կարող: Այդ երեկո նրա հաճույքը բազմապատիկ դարձավ. ոչ միայն ամուսիններն էին տանը, այլև ներկա էր ինքը՝ Ծերամը:

— Հա՛,— մեկեն ոտքի կանգնեց Ռոմանոսն ու խորհրդավոր ձևով հայտարարեց.— մե՛ծն Ծերամ և որդին նորա՝ Վարդգես, պատրաստվեցե՛ք:— Բոլորը սևեռուն նայեցին նրան: Նա շարունակեց.— Քրիստափոր Ստեպանովիչ Քուշնարյանը գալիս է Անդրկովկաս: Գիտական արշավախմբով ժամանում է, որ հայկական երգեր հավաքի՝ ժողովրդական, աշուղական և այլն: Վարդգե՛ս, հայրիկին պատրաստիր. հայրդ նրա ձեռքից չի պրծնի·

— Ես պատրաստ եմ, Ռոմանոս ջան,— վստահեցրեց տաղերգուն:

— Դե՛ որ պատրաստ ես, մի քանիսը ցույց տուր խնդրեմ:

Ծերամն անհապաղ մերկացրեց նվագարանն ու, սեղմելով կրծքին, սկսեց: Մեկ էլ, թե՝

— Աղջկաս՞ հետ ծանո՞թ ես:

— Իհարկե:

— Գիտե՞ս, որ «Դու իմ մուսան ես» Արևիս եմ նվիրել·

— Այդ էլ գիտեմ:

— Դեմ խո չե՞ս, որ ես ու աղջիկս իրար հետ երգենք:

Կոմպոզիտորը պատասխանեց ծափահարությամբ և ժպտաց այնպես, որ բերանը փակագծող կնճիռներն ավելի խորացան: Ու մինչև ուշ երեկո տևեց համերգը· Երբ Ռոմանոսը վեր կացավ որ գնա, ասաց.

— Այսպիսի բավականություն ես երբե՛ք չեմ ստացել: Զարմանալի՜ մարդ ես, Ծերամ, դու պարզապես հոգնել չգիտես... Քանի՞ տարեկան ես:

— Հե՜չ,— մի ակնթարթ լռեց. ասես հաշվում էր մտքում.— կարծես թե յոթանասուներկուս եմ, չէ՞, Վարդ ջան:

Վարդգեսը գլխով արեց: Հյուրը թևերն այնքան լայն տարածեց, որ երևի մի դարավոր կաղնի կամփոփեր գրկում:

Նա փողոց ելավ երգելով: Այնքան հուզված էր երգում, որ անցորդները նայում էին նրա ետևից.

Ի՞նչ ես նստել խաս բաղի մեջ, ջան, աղջիկ,
Բլբուլի հետ ձեն ես բռնել ու երգում ..

Վերջին տողերում ձայնը բարձրացրեց.

Ի՞նչ մեղք ունիմ, որ դու այդպես
Անգութ դատաստան արիր .

— Իսկապես, շա՜տ անգութ դատաստան է, շա՜տ...

Եվ Ռոմանոսն այնպես քայլեց թևերը թափահարելով, որ կարծես թե շտապում էր դատական ատյան՝ բողոք ներկայացնելու անարդար վճռի դեմ:

2

Հնարավո՞ր է արդյոք, որ տաղերը արբեցնող բուրմունք ունենան, հեռվից հեռու հրապուրեն մարդկանց, հազարավոր կիլոմետրեր քայլել տան ու...

Հայոց տաղերի հրապույրն էր ահա, որ Քրիստափոր Քուշնարյանին հեռավոր Լենինգրադից կանչեց բերեց Անդրկովկաս· Անդադրում ճանապարհորդի պես նա եկավ հասավ իր Ծննդավայրը՝ Թիֆլիս, ծանոթացավ երգիչ Գրիգոր Տալյանի՝ Շերամի հետ, գրի առավ նրա և այլոց տաղերն ու տարավ ռուսաց հողը, որ ցույց տա աշխարհին, թե ինչ արվեստ է ստեղծել իր հարազատ հալ ժողովուրդը:

Քուշնարյանը Հայարտան սրահում է: Բաց դաշնամուրի առջև նստած է Վարդգեսը. ինչ-որ արարողության է սպասում. Մի փոքր այն կողմ, հայացքը երաժշտագետի մտախոհ դեմքին, նստել է Շերամը: Նա նույնպես հրամանի է սպասում: Քուշնարյանը պայուսակից հանեց ձայնագրիչ սարքը՝ ֆոնոգրաֆը և հարմարեցրեց սեղանին, ապա երգչին հրավիրեց մոտիկ:

— Ի՞նչ ես երգելու, վարպետ,— հարցրեց ձայնագրողը·

— Սիրում եմ քեզ:

— Ի՞նձ,— կատակեց երաժշտագետը, երևի գուսանի տրամադրությունը բարձր պահելու համար:

— Ճիշտը որ ասեմ, Քրիստափոր ջան, քեզ էլ շատ սիրեցի. հեռու տեղից որ եկել հասել ես էստեղ երգի համար, ինչու՞ չպիտի սիրեմ. բայց էս երգս վաղուցվա է. մի սիրուն կնոջ վրա եմ հնարել: Անունը...

— Հասկանում եմ,— աչքի պոչով նայելով Վարդգեսին, ընդհատեց երաժշտագետը,— հապա մի փորձենք:

Շերամը երգեց ու երբ ավարտեց, Քուշնարյանը խնդրեց նրա որդուն.

— Վարդե՛ս Գրիգորևիչ, կարո՞ղ եք սա դաշնամուրով:

— Կարող եմ,— պատասխանեց երիտասարդն ու նվագեց մեղեդին:

— Պարզ է,— եզրակացրեց երաժշտագետն ու միացրեց ֆոնոգրաֆը: Ձայնագրումը հաջող ստացվեց:

Հաջորդը ձայնագրելուց առաջ տաղերգուն անհանգիստ շարժումներ արեց, զննեց տաբուրետկայի ոտքերը, ստուգեց լարերը: Քիչ անց սրահում հնչեց սիրահարի ձայնը, որ վարդ է ցանել, սակայն դարդ է քաղել, յար է փնտրել ու յարա գտել... Մեկ-երկու տաղից հետո Քուշնարյանը գլանները տեղավորեց բնիկներում և հետաքրքրվեց.

— Վարպե՛տ, լսել եմ, որ դուք տաբուրետկայի ետևի ոտքերի տակ փայտեր էիք դնել տալիս. ինչու՞ համար:

Շերամը քմծիծաղով նայեց նրան և կեսկատակ ասաց.

— Կա-չկա դու գիտես, բայց ինձ ես փորձում,— և նայեց որդուն.— ինչ որ է, ասեմ:

Եվ նա բացատրեց, թե ինչու: Այդպես էր անում, որպեսզի նստած երգողի թոքերը չճնշվեն ու ձայնն ազատ դուրս գա: Քուշնարյանը սեղմեց շրթունքները և գլուխը վեր մղեց, իսկ երբ մոտեցավ դաշնամուրին, որպեսզի իբր լարումն ստուգի, Վարդգեսի ականջին շշնջաց.

— Տեսնու՞մ եք, թե ձեր հայրը ինչպիսի նրբություններ գիտե:

Այսպես ձայնագրեցին տասնհինգ երգ:

Վաղեմի տաղերից մեկի կեսն անցան հաջող: Հանկարծ երգիչն ընդհատեց կատարումը: Երաժշտագետն ու որդին աչքները գցեցին նրա վրա: Հայրը դժգոհ տարուբերեց գլուխը: Մի քանի երգից հետո՝ նոր խաթարում: Շերամն ավելի զայրացավ իր վրա.

— Թու՛... էս անտեր ձե՞նս ընչի խռպվավ:

— Ի՞նչ է նշանակում դա,— ներողամիտ ժպիտը բարեհամբույր դեմքին հարցրեց Քուշնարյանը: Երգիչն զգաց, որ նա խաթարման համար չէր, որ տեղեկացավ, ստուգաբանեց.

— Դե՛:.. խռպվավ, էլի. այսինքն կտրվեց, խանգարվեց:

Շուտով սրահում խոխոջաց զուլալ առվակը.

Բաղեն թռած բլբուլ եմ...

Երաժշտագետը աչքերով հետևում էր սարքի աշխատանքին և ունկնդրում տաղը. Հետո ձայնափողից հնչեց երգչի ձայնը: Աշխատանքը տևեց մինչև իրիկուն. Քուշնարյանը հարցրեց.

— Հոգնեցի՞ր, Շերամ:

— Ի՞նչ արեցի, որ հոգնեմ. սովորական գործս է. համ էլ երաժշտությունից ով է հոգնե՞լ, որ ես հոգնեմ... մենակ անհոգի՛ մարդիկ:

Տաղերգուին հանգիստ տալու համար Քուշնարյանն ընդմիջում էր և հետաքրքրվում տարբեր աշուղների ու երգահանների կյանքով: Շերամը հաճույքով պատասխանում էր. ամենևին չէր զգացվում, թե նա ցանկանում է փայլել իր գիտեցածով.

— Սիրում եմ Շիրինին. գիտեմ նրա «Ակնարկյան»,— և հառաչեց ափսոսանքով.— երեխա եմ եղել, երբ նա մահացել է:

Երաժշտագետը չուզեց, որ նա շարունակի խոսակցությունը. ուրիշ հարց տվեց.

— Իսկ նվագողներից ի՞նչ ընկերներ եք ունեցել:

— Բալա Մելիքյանի հայրը չափազանց մոտ մարդ էր:

Վարդգեսը հուշեց.

— Օգանեզաշվիլու մասին պատմիր Քրիստափոր Ստեպանովիչին, հայրիկ.

— Հա՛,— լիաբերան խոսեց Շերամը,— ա՛յ, կատարյալ երաժիշտ... Ուղղակի արտիստ էր Սաշան: Կարծեմ քամանչան էլ լավացրեց, չէ՞:— Ունկնդիրները հարեցին՝ կատարելագործեց:— Իշտը էդ կուզեմ ասել,— հապաղեց երգիչը:— Ես ու նա շատ ենք նվագել ակումբներում, հարսանիքներին ու հրավերքներին: Մի աշուղական խմբի ղեկավարն էր. և մեծ հաջողություն ունեցանք:

— Շարունակենք մեր գործը, Շերամ,— ֆոնոգրաֆին մոտենալով, առաջարկեց Քուշնարյանը:

— Էսքանը հերիք չէ՞, Քրիստափոր ջան,— հարցրեց տաղերգուն:

Երաժշտագետը խորամանկ մի հայացք գցեց երգչի վրա, ապա նրա որդու:

— Քանի՞ երգ ես հորինել,— հարցրեց:— Տաղերգուն նայեց դուրս և պատասխանեց:— Դե՛, ուրեմն,— համոզեց Քուշնարյանը:

Շերամը շարունակեց նոր եռանդով:

Մի տաղի հաղորդած խանդավառությունն էր պատճառը, թե հուզմունքը, մնաց անհայտ: Գուսանը տեսավ, որ Քուշնարյանը փլվեց աթոռին ու մի քանի րոպե մնաց այդպես: Հետո խոսակցությունը շուռ տվեց այլ ուղղությամբ.

— Հայ կոմպոզիտորներից ու՞մ եք ճանաչում, վարպետ:

— Կարա-Մուրզային հիշում եմ, բայց մոտիկություն չեմ ունեցել: Եկմալյանին շատ եմ սիրում. ափսո՛ս, որ չեմ տեսել: Ա՛յ, Ռոմանոս Մելիքյանն ուրիշ... Էդ էլ թող Վարդգես Գրիգորևիչն ասի:

Վարդգեսը նկարագրեց, թե Ռոմանոսն ինչքան է սիրում հալրիկին: Ճիշտ է, երգ չի նոտագրել, բայց...

— Իսկ Վարդգես Գրիգորևիչը՞:

— Տղիս արածը դեռ ոչ մեկը չի արել,— մի վայրկյան մտախոհ լռությունից հետո պարծեցավ Շերամը:— Հա՛, մոռացա ասեմ. Գրիգոր Սյունին առանձին, առանց ինձ, մշակել է իմ «Զեյթունցիների քայլերգը»:

Եվ նա երգեց դա, իսկ Քուշնարյանը ձայնագրեց:

— Անուշավան Տեր-Ղևոնդյանն էլ ժողովրդից լսել է «Խնուս գեղի մեջտեղը» հին երգս ու մշակել է:

Երեքն էլ զվարթացան, երբ տաղերգուն կատարեց «Մշակի սերը»:

Ճալկես գցեմ քթոցս,
Զամիչ լցնեմ ջեբ-ծոցս,
Վաղուց յարիս չեմ տեսել,
Կրակն է լցվել ծոցս

Այսքան աշխույժ և նստած տեղն ասես պարելով, նա վաղուց չէր երգել:

Ձայնագրությունն ավարտվեց: Երաժշտագետը որոշ տվյալներ լրացրեց Շերամի մասին և ավելացրեց.

— Դե՛, հիմա ձեր տեղն իմացանք: Ա՛յ, մյուս տարի հրավիրված եմ դասախոսելու Երևանի կոնսերվատորիայում. կգամ ու մի շարք երգեր էլ կձայնագրեմ: Իմ կարծիքով այնտեղ էլ լուրջ կզբաղվեն ձեր գործով:

— Շնորհակա՛լ եմ,— ասաց Շերամը։— Հիմի չի՞ էղնի, որ մի քիչ էլ պատմես քո կյանքից։

— Ի՞նչ կա որ, կարելի է,— պատրաստակամ համաձայնեց Քուշնարյանը։

Եվ նա շարադրեց իր կյանքի հակիրճ պատմությունը, որն սկսել էր Թիֆլիսում։ Այդ գործը, որ նա տարիներ շարունակ անում է, մեծ արդյունքի է հասել արդեն։ Առաջ էլ ինքը շրջել է Անդրկովկասում. այդ ժամանակ նա գլխավորում էր Լենինգրադի թատրոնի և երաժշտության ինստիտուտի գիտարշավը Հայաստան։ Նոր Բայազետում, Շիրակում և Ապարանում ժողովրդական երգեր է հավաքել. ավելի քան 550 նյութ. Նույն տարին նրա ջանքերով Լենինգրադում տեղի ունեցավ հայ արվեստի ցուցադրություն։ Հանդես եկան՝ Վ. Արիստակեսյանի պարի խումբը, Սաշա Օգանեզաշվիլին։ Թառ նվագում էր Բալա Մելիքյանը, դուդուկ՝ Եգանյանը, երգիչն էր Շուլավրեցին։ Այդ համերգն ունկնդրում էին նաև Նիկողայոս Մառը և Հովսեփ Օրբելին։

— Ափսոս, որ ես չեմ եղել,— տրտնջաց երգիչը։

Քուշնարյանը մի շարժում արեց, որ նշանակում էր՝ մի օր էլ դա կլինի։

3

Սկզբում՝ ձեռնափայտի չոր թխկոց։ Մի վայրկյան հետո մեկը ծեծեց դռան ապակին։ Ներսից պատասխան չեղավ։

— Քելեք, մարդ չկա։

Բնակարանի շեմքին հայտնվեց տարեց մի կին։

— Ու՞մ եք ուզում։

— Շերամի բնակարանը սա չէ՞, տիկին,— քաղաքավարությամբ հարցրեց շլյապավորը։

— Սա է, բայց ինքը տանը չէ. գնացել է երաժիշտների կոլեկտիվ,— պատասխանեց կինը։

Շլյապավորը մի պահ հայացքը գամեց կնոջ վաղեմի հրապուրանքը պահպանած դեմքին ու դարձավ բարձրահասակին.

— Էդ ո՞րտեղ է, Արտավազդ։

— Գնանք, վարպետ, գիտեմ տեղը։

Նվագածուների հավաքատեղիում քիչ մարդ կար։ Պոտոյան Խաչիկը թափով բացեց դուռն ու ներս հրավիրեց Ավետիք Իսահակյանին և Արտավազդ Սանոյանին։ Նրանց ականջներում գեղգեղացին տարբեր նվագարանները։

— Ուստա՛ Գոքոր, մի տես ո՞վ է եկել,— դիմեց Խաչիկը:

Շերամն անմիջապես կռահեց, որ Ավետիքն է եկել ու շտապեց ընդառաջ:

— Խոստումդ կատարեցիր, Ավո ջան, շնորհակալ եմ,— խոսեց նա:

— Պիտի էրթամ, Գոքոր. եկա, որ մնաս բարով անեմ: Բայց ինչքան մու՞թն է տանդ սանդուղքը:

— Պապիս տարին շինած տուն է, բա ի՞նչ պիտի էղնի:

— Քեզի պես երգչի տան ճամփեն իրավունք չունի մութ լինելու:

Եվ, չնայած ջերմությանը, նրանց զրույցի սկիզբը վատ շարած պատի նմանվեց. երգն էր պակաս, թե գալիք հրաժեշտն էր մեղավոր. ո՞վ գիտե: Այնուամենայնիվ, Վարպետը շուտ գտավ կտրված թելի ծայրը:

— Զուխա, արխալուղ ես հագել, Գոքոր, ո՞ւր պտի էրթաս:

— Ուսուցչի տուն, խմբով ելույթ պտի ունենանք. կուզե՞ս արի ականջ էրա:

— Չէ, Գոքոր, պետք է այցելեմ վրաց բանաստեղծներին: Եթե վաղն ազատ ես, բարձրանանք ֆունիկուլյոր:

— Հըբը խո չոր-չոր չպտի՞ բաժնվինք: Խաչիկին էլ կբերեմ հետս·

Նրանք պայմանավորվեցին, թե որտեղ պիտի հանդիպեն և ինչպես գնան ուզած տեղը:

Ահա բարձրանում է բանաստեղծի խումբը կառք նստած՝ բեկբեկվող կաճանով դեպի Մամա Դավիթի վանքը:

Մինչև սրբավայրը նրանք սակավախոս էին: Այդտեղ գլխահակ կանգնեցին Գրիբոյեդովի և նրա կնոջ՝ Նինա Ճավճավաձեի շիրիմների մոտ, լռությամբ հարգեցին ռուս մեծ բանաստեղծի և վրաց տոհմիկ տիկնոջ հիշատակը, ծաղիկներ դրեցին գերեզմաններին ու դանդաղ քայլեցին դեպի կանգ առած վագոնը:

Մի րոպե անց, ոտք դրեցին վերին կայարանի խորտկարանը:

Միջօրեի ժամ էր և այդտեղ մի քանի հոգի կային միայն:

Հենց որ սեղան նստեցին, տաղերգուն սկսեց երգել, իսկ Խաչիկը կոտորակ տեղաց դափի թաղանթին:

Շերամը գովում էր այն մարդկանց, ով միշտ քեֆ է անում և ոչ թե ոսկի դիզում, քանի որ, միևնույն է, ոչինչ չի տանի այս աշխարհից...

Շուտով երգիչն զգաց, որ բանաստեղծի ուզածն այդ չէ: Եվ հնչեց այն տաղը, որի մեջ երևակայության թռիչքն անսանձելի է...

Սիրո հրեշտակը անկաշկանդ մխրճվում է երկնքի խորքն ու խաղ է անում աստղերի հետ, ինչպես հավասարների հետ: Իսկ սիրավառ գուսանը տենչում է.

Թև առնեի, դուշ էղնեի՝ թռնեի,
Վեր սլացող էն թռչնիկը բռնեի .

Ավետիքը թախծալի ժպտաց. իսկ երբ լսեց, որ գեղեցկուհին մետաքս է, ոսկե թաս է, և ով նրան գեթ մի անգամ տեսնի, այլևս նրան դարդ ու ցավը չի մոտենա, մեռմորեն ձայնակցեց·

«Ճամփորդ եմ» տաղը գուսանը փոփոխված երգեց.

Ճամփորդ ես, ջանիդ դուրբան,
Գնաս բարով, ջան, սիրեկան...

— Էսօրվա օրը թող էսպես երգվի, Ավո՛ ջան· Բարով գնաս, բարով գաս,— և մի կում անելով, բաժակը ցած դրեց:

Մի փոքր խորհելուց հետո բանաստեղծը խոսեց.

— Կուգամ, Գոքոր, էնպես կուգամ, որ էլ չերթամ. մինչև վերջին շունչս մնամ հայրենիքի գրկում. կաղնու պես արմատներս մխրճեմ հայրենի հողի մեջ և անսասան կանգնեմ.— Եվ ավելացրեց.— երգիր, Գոքոր. ի՞նչ խոսք կբռնի երգերիդ տեղը...

Եվ Շերամը հնչեցրեց սիրո, կարոտի, նվիրվածության տաղերը, իսկ Խաչիկը շոյանքով խփում էր դափին ու ձայնակցում.

Սիրուններ, միք նեղանա ..

Ավետիքը մի քանի րոպե անթարթ նայում էր երգչին. թվում էր, թե նա ոչ միայն ականջով է լսում սիրո տվայտանքը, այլև աչքերով: Ու երբ Շերամը սիրունների սերը մերժեց, հայտարարելով, թե՝ յարս սև, դուք ալ հագեք, էլի յարիս եմ գովում, բանաստեղծը գլուխը տարուբերեց ու շշնջաց.

— Ասպետակա՞ն նվիրվածություն...

Իսկ երգիչը իր սիրո տառապանությունը հավաստեց վերջին հնգատողով.

Ամենքդ մեկ-մեկ փերի,
Աչքիս առաջ ման եք գալի,
Բայց ինձ չեք կարող գերի..
Էլի յարիս եմ գովում,
Էլի փերիս եմ գովում

Հետո Շերամը մի այլ տաղով նույնպես հաստատեց այդ միտքը: Նա դիմում է սիրեցյալին և ասում, որ միշտ նրան պետք է սիրի, նրա համար երգի. իսկ վերջին տողերն անսասան դարձրին երգչի ստոյիկյան անդրդվելիությունը.

Ինչքան էլ որ հոգիս տանջես,
Ոչ մի վայրկյան չեմ վշտանա .

Վրա հասավ մի պահ, որը կարելի է բանաստեղծական դադար անվանել: Շերամը ծոցագրպանից հանեց մի թուղթ ու կարդաց.

Մազերիցդ տուր քնարիս,
Տուր քնարիս լար հյուսեմ,
Մատներիս տակ թող մրմնջա քու սերդ .

Իսահակյանն ընդհատեց.

— Սպասի՛ր, Գոքոր, էս երգդ ես էլ եմ հիշում.— երգիչը գլխի շարժումով հաստատեց.— բերեցիր՝ ինձ էլ ցույց տվեցիր, մի՞տքդ է:

— Միտքս է, բա ի՞նչ է. մե երկու տողի մեջ քու մատդ էլ է խառը:

Բանաստեղծը ձեռքը թափ տվեց.

— Հիմքը որ խախուտ լիներ, Գոքոր, իմ մատը բան չէր կարող անել:

— Շատ գովեցիր,— կեսկատակ թոթովեց երգիչը.

— Տարօրինակ մարդ ես. դու քո մեծությունը չես գիտակցում. Ողորմած հոգի Մխիթարյանցը զոռով է ստիպել, որ երգերդ տպի, կարծում ես տեղյակ չե՞մ:

Շերամն ամոթխած նայելով գետնին՝ բերանփակ խնդաց, ապա մի թուղթ էլ հանեց ու կարդաց մի քանի տարի առաջ գրածը:

... Գուսանի սրտի խորքում խոշոր վերքեր կան և նա կանչում է սիրեցյալին, որ բուժի իր ցավերը: Իրեն «դեղ ու դեղդիր» պետք չեն. միայն թե...

Ծառեր ծաղկան, ծաղկունք բացվան, խունացան,
Քեզի լալով, երկու աչքս կուրացան,
Ես չեմ ուզում մահից հետո սեգ արձան.
Միայն դու եկ, հետս խոսիր, բարևե,
Էդ ինձ համար կյանք է և թե արև է.

Իսահակյանը խորունկ մի հայացք գցեց երգչի խումար աչքերին և աղոթողի նման կարդաց վերջին հինգ տողը.

... Սիրահարը չի ուզում շքեղ պալատում ապրել, չի ցանկանում ո՛չ ոսկի, ո՛չ գոհար, ո՛չ սրտի հրձվանք. չի ուզում լինել մյուս կյանքի դրախտում. միայն թե իր պաշտելին հետը խոսի ու բարևի...

Բանաստեղծը նորից ու նորից կարդաց տաղերգուի աղերսանքը և թեթև ուղղումներ արեց: Նա կոպերն այնպես փակեց, որ աչքերի բացվածքները սայրի նման սուր դարձան:

Շերամը շարունակեց իր տաղարանը: Եվ եթե նա ամբողջ գիշեր երգեր այդ բարձունքի վրա, թուքստոցից հետզհետե հայտնվող աստղերի թարթուն ժպիտների ներքո, ո՛չ հոգնությունը կայցելեր հրապուրված երգապաշտներին, ո՛չ քունը կթմրեցներ նրանց ուղեղը:

Մյուս երգերը կատարեց Խաչիկը: Դափն զգուշությամբ մատնահարելով էլ նա ոտքի կանգնեց: Սարահարթը ողողեց՝ Աչքդ խումար, ապա և Էսօր Արազն ես գնացել տաղերի մեղեդին...

Իսահակյանը նայեց Գոքորին ու մտածեց.

— Սիրո անսպառ աղբյուր է էս մարդը...

Իսկ երգը հնչում էր.

Ախ, հիվանդ եմ, չեմ կրնա,
Միրտս քեզնեն չի դառնա .

Լեռնալանջի ձորակներում տարածվեց «Մաճկալ ես» անուշ խոնջանք բերող տաղը:

Երգով արբեցած խումբը հանդարտ իջնում էր Մթաձմինդայի կաճանով:

Թանձրանում էր գիշերը, աստղալից շղարշը փռելով քաղաքի և շրջակա բլուրների վրա:

4

Ավետիք Իսահակյանին ճանապարհ դնելուց հետո Շերամի տրամադրությունը երկար ժամանակ ընկած մնաց: «Գնաց մեր

Ավոն... Պիտի էրթար, բա ի՞նչ պիտի աներ, բունն էնտեղ, ճուտն էնտեղ»: Ակամա հիշեց անցած օրերի այն դիպվածը, երբ ինքն ու չքնաղ Վարդուհին փորձեցին փախչել Պարսկաստան... «Խելառ ջահել էինք, խելառ ջահե՛լ»:

Նա հիմա իր կինն է: Եվ իր հոգու մեջ երբեմն կայծկլտում է ստեղծագործելու կրակը. և դրա աղբյուրը դարձյալ Նա է, այս հիասքանչ էակը:

Նոր ոտանավորներ է գրում Շերամը, երգեր հորինում: Այո, ինքը դեռ ապրում է, քանի որ տաղերն ամեն օր իրեն մղում են գրիչ վերցնելու և գրելու:

Ապշեցուցիչ երկունք էր ապրում նա: Նման ժամերին էր, որ աշխույժ ու պարզ երգ ստեղծեց ձուկ խաշող, կաթի սերը քաշող և երգչի կյանքը մաշող կնոջ մասին, պարերգ հորինեց կերպաս հագած սիրուն աղջկա մասին: Տաղերգուն ավետեց նաև, որ իր երգերն արդեն ուրախ ծիծաղ են: Սակայն սիրո անուշ թախիծը մերթընդմերթ զգացնել էր տալիս: Նա փորձում էր զսպել ելած սիրտը, բայց՝ արդեն մութն ընկել է և ինքը նրա ճամփին է սպասում, նրա լուսեղեն տեսքին է կարոտել... Գիշեր ու ցերեկ քուն չունի սիրահարը և Նրան հիշելով՝ անվերջ տանջվում է...

Անցնում են օրերը, և Շերամը հետզհետե դառնում է խրատող, կյանքին փիլիսոփայորեն նայող: Նա դառնում է մի նոր առաքյալ և քարոզում լինել տոկուն և խավար գիշերից չնեղվել, քանի որ շուտով լույս կծագի:

Խստորեն ծաղրում է կյանքի արատները և սրանց կրողներին, խարազանում է քաղքենիներին ու ցոփակյացներին:

Այս երգիծական տողերի մեղեդին զարմացրեց Վարդգեսին, և նա եռանդով նոտագրեց:

Վարդգեսին դուր եկան թե եղանակը, թե խոսքը:

— Եղանակն էլ նոր է, գիտե՞ս, —որդու հետաքրքրությունը շարժելու համար ասաց հայրը:

— Էդ էլ էգուց գրենք:

— Կուզե՞ս հեչ մի գրե՞ք

— Ի՞նչ ես խոսում. մոռացե՞լ ես Սպենդիարյանի հրամանը:

Շերամը երբեմն մենակ էր մնում տանը. բայց դա այն ողբալի մենակությունը չէր, որ նա ապրեց սիրելի Սալվինազից հետո: Ուր որ է իր Վարդուհին տուն կգա, և տունը կլցվի տանտիրուհու խոսք ու զրույցով, նրա ոտնաձայնով: Բացի դրանից, հոր ականջը որսում է որդու երգեհոնի հնչքը:

Քիչ անց նրա մտորումներին փոխարինում էր նոր մտահղացումների իրականացումը: Կյանքի աջ և ահյակ կողմերի նկատմամբ նա չէր կարող անտարբեր լինել: Նա լավ գիտեր, թե ովքեր են նոր աշխարհ կառուցում, հայրենի հողը մշակում ու ծաղկեցնում, բարիքներ ստեղծում:

Այսօրվա միայնության ժամերին էլ նա նոր ոտանավոր գրեց. «Բանվոր երգ»— կոչ արեց նա: Մի քանի օր հետո ստեղծեց մի երգ, որով գովերգում էր գեղջկուհուն: Գրեց, վերանայեց և հաջորդ օրը մտավ որդու սենյակը:

— Մի տես՝ լա՞վն է, Վարդ ջան,— գրոտած թուղթը մեկնելով, հարցրեց հայրը: Վարդգեսը կարդաց շրթունքները սեղմած, նայեց հոր ծերմակած մազերին և հայտնեց իր կարծիքը.

— Վատը չէ, հայրիկ. եղանակ էլ ունի՞:

— Իհարկե, նվագեմ՝ ականջ էրա:

Նվագեց ու երգեց, իսկ որդին արագ ուրվագծեց ձայները, ապա հարցրեց.

— Ախպորս երգը կարդացե՞լ ես:

— «Էս բերքը բարին ա, ցորենը կալին ա...»,— երգելով պատասխանեց հայրը:

— Նրա ազդեցությունը կա:

— Է՛հ, ի՞նչ կեղնի որ. տղիս երգն է, խո օտարի մալ չէ՞:

Հայր և որդի ուրախ ծիծաղեցին:

Վարդգեսը քիչ ժամանակ էր գտնում նոտագրման գործին նվիրվելու. սակայն այդքանն էլ բավական էր հոր երբեմն ալիքվող թախիծը փարատելու համար: Եվ միայն այդ չէր, որ տաղերգուի հոգին թեթև էր պահում: Նրա սիրտը բացվում էր նաև նվագածու ընկերների շրջանում: Հավաքատեղի նա գնում էր ոտքով ու քթի տակ դնդնալով: Այդ ճանապարհին էլ նա խիզախեց մեկերկու գործ ստեղծել:

Հենց որ Ծերամը հավաքատեղիի դուռը բաց էր անում, սրահում եղածները ոտքի էին կանգնում ու խոնարհ գլուխ տալիս: Ընկերների շրջանում նա և՛ կատակում էր, և՛ զրուցում տարբեր խնդիրների շուրջը, և՛ խաղերով զբաղվում: Նրան թվում էր, թե արդեն ցամաքել է ստեղծագործելու երբեմնի հորդաբուխ աղբյուրը, բայց դեպքից դեպք նորից բռնկում էին նրա հոգու թրթռումները:

5

Այսպես անցավ և՛ սովորական, և՛ անսովոր մի տարի ևս:

Ծիծեռնակների կանչով ու ծաղկանց ժպիտով բացվեց Շերամի յոթանասունհինգերորդ գարունը: Ու գարնան զեփյուռի թևով մի նամակ եկավ իջևանեց Վարդգես Տալյանի դռան արանքում: Փոստատարը թակեց դուռը, բայց հույսը կտրելով, ծրարը խրեց երկու փեղկի արանքն ու իջավ փողոց: Այդ ձայնի վրա դուրս եկավ Վարդուհին, աչքերը կկոցելով՝ շեղակի նայեց փեղկերի արանքում սեղմված նամակին ու մտավ տուն: «Մեր Վարդգեսը կնեղանա, որ ձեռ տամ նամակին,— մտորեց նա,— հըբը ի՞նչ. էդպես է պետք»:

Հաջորդ առավոտյան հայրը ոտք դրեց որդու սենյակը, որ հերթական երգը նոտագրեն:

— Բարի լու՛յս, Վարդգես Գրիգորևիչ,— բարձր տրամադրությամբ ողջունեց հայրը:

— Բարև, Գրիգո՛ր Կարապետովիչ,— նույն զվարթությամբ դիմավորեց որդին:

Տաղերգուն տեսավ, որ սեղանին փռված նոտաթղթի վրա նամակ կա:

— Ախպորդ նամա՞կն է,— աչքը ծրարին՝ հարցրեց հայրը:

— Չէ, հայրիկ, ուրիշ նամակ է. քեզ համար օգտակար ու ձեռնտու:

— Հաստա՞տ:

— Մի բան էլ ավելի... Նստիր, նստիր՝ կասեմ:

Հայրն իր նվագարանը պառկեցրեց երգեհոնի վրա և, հայացքը որդու դեմքին՝ սպասեց: Վարդգեսը գրիչը ցած դրեց ու ծրարի միջից հանեց պաշտոնական մի թուղթ: Հայրը կնտնտոցով քորեց ծոծրակը և երկիմաստ նայեց թղթին: Որդին ցրեց նրա տարակուսանքը.

— Պայմանագիր է, հե՛րըս,— ասաց նա:

— Ո՞ր պետության հետ,— կատակեց հայրը:

— Հայաստանի...— որդին մի պահ հապաղեց.— ռադիոկենտրոնի հետ:

— Հը՛մ,— արեց հայրը:

— Նամակն ինձ է հասցեագրված, իսկ պայմանագիրը՝ քեզ: Քեզ, հայրիկ, հրավիրում են Երևան, որ ռադիոյի սոլիստներին սովորեցնես քո երգերը:

— Հա՛... նշանակում է,— ձգեց հայրը:

— Նշանակում է մենակ պիտի գնաս,— որդին շեշտեց «մենակ» բառը, որովհետև հայրը կարող էր ասել, թե կնոջն էլ տանի:— Ի՞նչ է, քի՞չ ես գնացել մենակ, թե՞ տիկին Վարդուհուն էլ ես ուզում տանել:

— Չէ՛, կուզեմ ասել՝ նվագող տանի՞մ հետս: Դե՛, նա էլ որ գա, գեշ չի էղնի, բայց...

— Չէ, չէ:— Եվ Վարդգեսը պաշտոնական թուղթը դրեց հոր առջև:— Դեռ իմ աչքի առաջ ստորագրիր, որ համաձայն ես պայմաններին:

Շերամը հարմար նստեց, թուղթը մոտեցրեց աչքերին, գտավ ստորագրելու տեղը, մի անգամ էլ նայեց կողքին կանգնած որդու դեմքին ու խնամքով ստորագրեց՝ Գր. Տալյան, Շերամ: Մեկ էլ որ աչքն ընկավ պայմանագրին, տեսավ, որ իր անունից վերև մի ստորագրություն էլ կա:

— Էս ո՞վ է, Վարդ ջան,— հարցրեց:

— Ռուբեն Թերլեմեզյանն է՝ երաժշտական բաժնի վարիչը:

Հայրը վեր կացավ: Չայնագրում այդպես էլ չեղավ: Եվ նոտայի թերթիկը դատարկ մնաց: Վարդգեսը գրեց հոր հին տաղերից մեկի վերնագիրը միայն՝ «Տխուր հառաչանքներ», գծեց սոլի բանալին և էլի ինչ-որ նշաններ... և ուրիշ ոչինչ: Դա 1907 թ. հորինած հայրենասիրական երգ էր, որի վերջում տաղերգուն ասում է.

Սիրտս ցավոտ, հոգիս կուլա, ես կողբամ,
Վշտերիս հետ օլոր-մոլոր ման կուգամ.
Ինչպե՞ս սիրեմ քնքուշ աղջիկն ու ալ վարդ,
Երբ ընկնում են անդ եղբարքս հարազատ:

Շերամին թվաց, թե այն հինգ գիծը, որոնցով պիտի ընթանար մեղեդին, հենց իր ծանապարհն է դեպի հայոց մայրաքաղաք: «Էսքան տարվա մեջ ինչքա՞ն փոխված կեղնի Երևանը,— մտածեց նա և հենց այդ երեկոյան էլ գրեց «Սիրո քարավան» ոտանավորը:

Հայաստանի հրավերը, սակայն, ալարկոտ հանգստությամբ չպարուրեց Շերամին: Նա շարունակեց տքնաջան աշխատել, նոր ոտանավորներ գրեց, երգեր հորինեց:

Մեկնելու նախօրյակն է: Յոթանասունհինգամյա տաղերգուն

նստել է իր պատշգամբում և մտմտում է իր անելիքը Երևանում: Այդ օրը կինը խոսք բացեց.

— Ընչի՞ մենակ կերթաս:

— Բա ու՞մ հետ էրթամ, Վարդուհի ջան. Ես խո հյուրանոցում չպիտի մնամ, աղջկաս տունը շեն մնա: Քեզ էլ որ տանիմ հետս, ուզեմ-չուզեմ հյուրանոց պիտի գնամ, թեպետ Արևի հոգին էն տեսակ չէ, որ քեզ սիրով չընդունե:

Կինը ձայն չհանեց, ամուսինն էլ չէր ուզում շարունակել: Հագավ ու գնաց կոլեկտիվ: Քայլեց ու կրկնեց իր ոտանավորը, թե՝ իր ծամփան ձգվում է դեպի Երևան և ինքը իր հետ տանում է

Սիրով բարձած քարավան.

Հաջորդ կեսօրին, երբ Վարդուհին Վարդգեսին հրավիրեց իրենց տուն նախաճաշի, հայրը հետաքրքրվեց կրտսեր որդու բախտով: Վարդգեսն էլ տեղեկացրեց, որ դեռ չգիտե: Նա ավելացրեց, որ Երևանի կոնսերվատորիային կից երաժշտական կաբինետ է ստեղծվում. աշուղական ու ժողովրդական երգեր պետք է հավաքեն և ուսումնասիրեն: Բայց հոր մտքում կրտսերն էր: Եվ ահա մի օր Վարդգեսն ասաց.

— Հայրի՛կ, իմացա, որ ախպորս ուղարկում են Ստեփանավանի շրջան:

— Էլի՞ գյուղ:

— Այո, հերըս, ուսուցչության:

— Բա մեղք չէ՞ էդ տղեն, Վարդ ջան,— տրտմելով խոսեց հայրը.— հա կչլեն էսդին-էնդին. գար էստեղ, էլի, կամ Լենինական:

Սրանով կրտսերի հարցը փակվեց, բայց հոր սիրտն անհանգիստ էր. «Է՛, լավ է, որ մերը չկա ու տաշտաքերի չարչարանքը չի տեսնի... Տասնյոթ տարեկանից գործի մեջ է. խելա՛ռ տղա, վարժապետ ջան»:

Երբ Շերամը հասավ Երևան, կրտսեր որդին այնտեղ չէր արդեն: Ամառն անցկացրել էր անտառոտ Գուգարքի հանգստի տանը, մի քանի օր մնացել մայրաքաղաքում ու մեկնել աշխատանքի:

ՍԻՐՈ ՔԱՐԱՎԱՆԱՊԵՏԸ

1

Շերամն իջավ գնացքից, մի պահ կանգնեց կառամատույցին, նայեց շուրջը, քաղաք շտապող ուղևորներին... Նրա աչքից չվրիպեցին վագոնների մոտ խմբված ու դեպի ելքն շտապող մարդիկ, լսողությունից՝ դիմավորողների ծիծաղն ու զվարթ-ծիչերը: «Արևս որ իմանար՝ կուգամ, բոբիկ ոտքով էլ կվազեր դեմս,— անցավ նրա մտքով:— Քելե, Գրիգոր Տալյան, քելե՛... ինչքան շուտ, էնքան լավ»:

Ահա և կառքը, որ կանգնեց հենց իր առջև.

— Տպոու՛...— արգելակելու ազդանշան տվեց կառապանն ու դարձավ տաղերգուի կողմը.— արի, քեռի՛ ջան, արի տանե՛մ... Խի՞ շվարեցիր. բարո՛վ ես եկել:

Շերամը ձեռքով հովարեց աչքերը և մի վայրկյան դիտեց շիկավուն կառապանին:

— Բարև՛, երիտասարդ. անունդ ի՞նչ է:

— Հայ-հա՛յ, Կակալոյենց Սուրենին էլ չես ծանաչու՞մ... Ըստի ում հարցնես, ինձ գիտեն, բա՛...

— Ուրեմն նշանավոր մարդ ես:

— Բա ո՞նց... Դե՛ լավ, նստի, քեռի ջան. էնպես թոցնեմ՝ ծտի պես: Ըստոնք հո ձիեր չեն, ղուշ են, է՛ ղուշ:

— Զէ՛,— կառքում բազմելուց ու նվագարանը կողքին դնելուց հետո, ասաց Շերամը,— շատ էլ ծտի պես մի՛ թռցնի. վաղուց Երևան չեմ եղել. էնպես քշե, որ չորս բոլորս աշեմ՝ տեսնիմ ինչ փոփոխություն կա.

Սուրենը նկատեց նրա թառն ու հարցրեց.

— Դու հո սազանդար չե՞ս, քեռի:

— Էդպես մե բանմ... Ես աշուղ Շերամն եմ:

Կառապանը շուռ եկավ ու զարմանքով բացականչեց:

— Հա՛...

Մի քիչ տեղ գնացին անխոս: Մեկ էլ ուղևորը հարցրեց.

— Ձիերդ ո՞րտեղի ձիեր են, Սուրե՛ն ջան·

— Կակալոյենց Սուրեն, —ուղղեց կառապանը.

— Թող էդպես էղնի:

— Մալականի ձիեր են, քեռի ջան:

— Շերամ,— լրացրեց տաղերգուն:

— Թող էդպես էղնի,— նույն հումորով ավելացրեց կառապանն ու ծիծաղեց:

Խնդաց նաև երգիչը: Մի փողոց էլ անցան: Սուրենը չթողեց, որ ուղևորը ննջի և հարցրեց.

— Բա խի՞ ավտոյով չգնացիր, քեռի Շերամ:

— Քու զանգուլակավոր ֆայտոնն ի՞նչ պակաս ավտո է. ձիերի հոտը ավտոյի հոտից գե՞շ է որ:

— Ես ըստոնց հոգուն մատաղ... մարալ են, մարա՛լ...

— Մարալ ջան, հեզ արի,— մեղմաձայն երգեց Շերամը:

Կառապանն ասես ոգևորվեց դրանից ու մտրակն օդում շաչեցնելով երգեց.

Երևան բաղ եմ արել,
Ջիգյարս դաղ եմ արել ...

Ուղևորը շարունակեց.

Դոստ ու դուշմանի միջին, ա՛յ բալամ,
Լացս ծիծաղ եմ արել .

Երկուսն էլ այնքան բարձր ծիծաղեցին, որ անցորդները զարմացած մտածեցին՝ խմած են:

Կառքը կանգ առավ Սվերդլովի փողոցի № 32 տան առաջ: Կակալոյենց Սուրենը բարձրաձայն արգելակեց ձիերի ընթացքը: Քարե սանդուղքով վազեվազ իջավ Շերամի ավագ թոռը՝ Կառլոսը, դարձավ պատշգամբի կողմն ու գոչեց.

— Մամա՛, մա՛... պապը եկավ:

Իսկ մայրն արդեն պատշգամբում էր:

— Քա՛, հերըս էկավ, հե՛րըս,— հարևաններին ուրախացրեց Արևհատը:— Հայրիկ, հայրի՛կ ջան,— դիմեց հորը,— ընչի իմաց չտվիր՝ գայինք կայարան:

— Ի՞նչ նշանակություն ունի, Արև ջան. էկա հասա, էլի:

Հենց դարպասի մոտ հայրն ու դուստրը պինդ-պինդ գրկախառնվեցին, կսկուծ-կսկուծ համբուրվեցին և, իրար մեջք գրկած՝ բարձրացան վերև:

Հաջորդ կեսօրին, երբ Կառլոսը դասից տուն եկավ, պապ ու թոռ քայլեցին դեպի ռադիոկենտրոն: Թոռանը տարօրինակ թվաց, որ պապն իր նվագարանը չվստահեց իրեն:

— Չէ՛, Կառլո ջան, թառիս վիզը որ թևիս տակ չի էղնի, ինչդ որ թև էլ չունենամ,— տրամաբանեց նա։— Թոռը ծիծաղեց։— Կխնդաս, չէ՞,— նկատեց Շերամն ու հանկարծակի փոխեց խոսքը.— իսկ դու գիտե՞ս, թե քո անվան Ս տառն ինչ է նշանակում։

— Ի՞նչ պիտի նշանակի, պա՛պ ջան, անվանս մասնիկն է.

— Չէ՛,— երկարացրեց տաղերգուն,— Ս տառը նշանակում է՝ իմս, իմ Կառլոն, հըբը՛...

Թոռը չհամոզվեց, իհարկե, բայց մինչև պապի կյանքի վերջը միայն նրան հանդուրժեց, որ իրեն Կառլո ասի։ «Պապս ինձ իտալացի դարձրեց»,— մտմտում էր նա։ Իսկ այդ օրը պապին հաջողությամբ հասցրեց մինչև հյուրանոցի հինգերորդ հարկը, որտեղ գտնվում էր ռադիոկենտրոնի երաժշտական բաժինը։

Ահա և Ռուբեն Թերլեմեզյանը, որ արագ քայլերով գալիս է երգչին ընդառաջ։ Նա կաղնեկոծղի նման ամուր կազմվածք ունի, մարզիկի պես կուռ ու մկանուտ է։ Այս ամենը նրան չխանգարեց, որ առանց քաշվելու գրկի գուսանին։ Սրա թոռանը բարևելուց հետո, նա ցածրաձայն մեղանչեց.

— Հազա՛ր ներողություն, Շերամ. ես և Արտակը պարտավոր էինք ածապարել և ձեզ առոք-փառոք հասցնել ձեր ռեզիդենցիան։

Շերամը նայեց թոռանը. սա գլխի ընկավ, որ պապը չհասկացավ «ածապարել» և «ռեզիդենցիա» բառերը։ Անհարմար վիճակից դուրս գալու համար երգիչն ասաց.

— Բան չկա, բա՞ն չկա, Ռուբեն ջան։ Գործի մեջ եք, ժամանակ չունեք։ Իմ ոտքով որ էկա, խո խասս չխավարա՞վ. թե՞ պագոններս վար իջեցուցին։

Բոլորն արձագանքեցին ծիծաղով, իսկ մոտեցած Արտակ Տոնիկյանը ձեռքը դրեց սրտին ու, վիզը ծռելով՝ խոսեց.

— Ռուբենը ճիշտ է ասում. բայց մենք կաշխատենք քավել մեր մեղքը։

— Դե՛...— եզրափակեց Շերամը։

Հաջորդ օրը առանց որևէ ուղեկցի նա բարձրանում էր ռադիոյի երաժշտական բաժին։ Նրա ոտնաձայնի վրա սենյակներից մեկի դռանը հայտնվեց մի կին։ Ու՞մ եք ուզում, հայացքով հարցրեց նա։ Գուսանը ձեռքով հասկացրեց, որ վերին հարկն է գնում, և շարունակեց վերելքը։ Մտքերով այնքան տարված էր, որ ներս մտավ առանց դուռը թակելու։ Բարևելուց հետո հայացքով չափուձև արեց սենյակը և հարցրեց.

— Էղած-չեղած է՞ս է ձեր զալը։

— Առայժմ այսքան է, վարպետ,— տեղեկացրեց Արտակը։

— Հա՛,— ծոր տվեց Շերամը,— էս բուռմ տեղը ի՞նչդ պտի զնգա երգչի ձայնը։

Արտակը տխուր ժպտաց ու թեթևակի կակազելով արդարացավ.

— Ի՞նչ արած, պիտի բավարարվենք աստծու տվածով։

— Էդ ինչքա՛ն անխիղճ է երգչի աստվածը։— Մի րոպե լուռ դիտեց շուրջը և հանկարծ, արձագանքն ստուգելու համար, երգեց.

Սազը դոշիս եմ դրել,
Սերդ սրտիս է տիրել,
Քնքուշ աղջիկ, ալվան ծաղիկ, իմ նանիկ.

Նրա ձայնը լսե՞ց, թե՞ արդեն պիտի գար սենյակ, ներս եկավ Թերլեմեզյանը, ապա անհամարձակ քայլերով շեմքն անցավ բարձրահասակ ու համակրելի մի երիտասարդ։

— Ահա և մեր երգիչը, վարպե՛տ,— հայտարարեց Ռուբենը։ Շերամը նստած տեղից, մի տեսակ խղճալի, նայեց ջահելին ու հարցրեց.

— Անունդ ի՞նչ է, ղուրբա՛ն։

— Գուրգեն։

— Գուրգեն Գալոյանն է, վարպետ,— ծանոթացրեց Արտակը։

Շերամը գլուխը կախեց, ասես ամաչեց։

— Ուրեմն էստեղ պտի պարապինք, չէ՞,— դեռևս տարակուսած հարցրեց։

— Այսօր այստեղ, վաղը մի բան կմտածենք,— վստահեցրեց Ռուբենը։

— Այսօր այստեղ, վաղը այնտեղ,— երգեց վարպետն ու լռեց, որ Գուրգենն էլ ձայնակցի։— Գիտե՞ս սա ում երգն է, երիտասարդ,— հարցով վերջացրեց նա։

— Աշուղ Ջիվանունն է, վարպետ։

— Ապրի՛ս, գիտես... ողորմի՛ հոգուն։

— Դուք պարապեցեք, մենք նախագահի մոտ գործ ունենք։ Գնանք, Արտա՛կ,— դիմեց բաժնի վարիչը։ Հանկարծ դարձավ, թե.— այդ ո՞ր երգդ էր, Շերամ, որ քիչ առաջ հնչեցրիր։

— Հարյուր տարվա երգ է, «Ընդդիմախոսություն» է անունը։

— Ուրեմն ծնվելուց առա՞ջ ես հորինել։

Տաղերգուն փոթկոցով խնդաց, զվարթ նայեց Ռուբենին և ավելացրեց.

— Էդպես կերևա:

Ու մինչ վարիչն ու տեղակալը ինչ-որ թղթեր վերցնելով դուրս ելան, Շերամն ուշի-ուշով նայեց երիտասարդին, նվագարանը շապկահան արեց ու հարցրեց.

— Իմ երգերից ո՞րը գիտես, Գուրգեն ջան:

— Ջով գիշեր է, Մի բալա է, Սիրում եմ քեզ...

— Հը՛մ,— արեց վարպետը:— Է՛, օրինակ՝ «Ջով գիշեր է» երգս կրնա՞ս թեփից հանե:— Երգիչը ժպտաց: Դասատուն բացատրեց.— ես արհեստով հյուսն եմ. էդ ըսածս էլ մեր արհեստին է վերաբերում: Փայտագործ վարպետը կարող է շատ ընտիր բաներ շինել, չէ՞,— երգիչը գլխով արեց.— բայց եթե էդ սիրուն առարկաները թողեց թեփի մեջ կորած, չհանեց, չմաքրեց, չկոկեց, ուրեմն նա վարպետ չէ: Թեփե հանելն էդ իմաստն ունի: Հիմի ես երգեմ՝ դու ականջ էրա, հետո էլ՝ դու:

Եվ նա սկսեց կատարել: Ու երբ Գուրգենը երգեց առաջին տողերը, գուսանը գոհունակությամբ նայեց նրան ու հարցրեց.

— Դու հեչ սիրահարված չե՞ս եղել:

Գուրգենը շառագունեց ու ծամծմեց.

— Ո՞նց ասեմ... էդպես մի բան եղել է...

— Էնոր սիրուց հանգիստդ չե՞ս կորցրել:

— Կորցրել եմ, բա ի՞նչ եմ արել:

— Ուրեմն էդպես էլ պտի երգես, ղուրբան· Արի մեկ էլ փորձենք:

Եվ վարպետն ու աշակերտը նորից կատարեցին: Ծափահարելով ներխուժեցին Ռուբենն ու Արտակը:

— Հրաշալի՛ էր, Շերամ:

— Իա՛,— զարմացավ տաղերգուն.— ականջ կենեիք, հա՞:

— Մենք նախագահի մոտ համարյա թե գործ չունեինք, Շերամ,— խոստովանեց Արտակը,— պարզապես ուզեցինք, որ դուք ազատ զգաք. վա՞տ վարվեցինք:

— Բան չեմ ըսե, հըմը դռան ետևեն ականջ անելը լավ չէ:

— Ներողություն, ուստա՛ Գոքոր, էլ չենք անի,— երեխայի նման խոստացավ Ռուբենը:

Եվ բոլորը աղմկալից խնդացին: Հետո Արտակը խոսեց.

— Համ էլ Ռուբենը հետաքրքրվեց, թե «Ընդդիմախոսություն» երգդ ի՞նչ բովանդակություն ունի: Ես էլ ասացի, որ աղջիկը տղա-

լից պահանջում է, որ սազը մի կողմ դնի, հրացան առնի, գնա թշնամուն հաղթի, նոր ինքը նրան կսիրի:

— Ինչ էլ գիտե՞ս, Արտակ ջան:

— Իհարկե. էլ ի՞նչ երաժշտագետ, որ այդ էլ չիմանամ... Հետո ասացի, թե տղան համառում է սիրո մեջ, բայց հայրենասեր աղջիկը իր խոսքին հաստատ է մնում:

— Էդպես էլ պիտի էղնի, բա ի՞նչ:

Պարապմունքը վերջացավ: Գուրգենը թևանցուկ արեց տաղուսուլցին ու տարավ հասցրեց տուն. Ծերունին ասաց.

— Սա աղջկաս տունն է, Գուրգեն ջան. գնանք վերև: Աղջիկս ու փեսաս էնպես մարդիկ են, որ օտարն էլ գա, ետ դարձնել չկա:

— Չէ՛, վարպետ, պիտի գնամ... ընկերոջս հարսնիքն է իրիկունը:

— Ի՞նչ կըսես... ուրախությունով էղնի. հըմը կոկորդիդ զոռ չտաս, իմացա՞ր:

Երգիչը դիմախաղով վստահեցրեց նրան՝ անհոգ մնա:

2

Վարդգեսն ու Շահանդուխտը Թիֆլիս վերադարձան երեկոյան և իսկույն դուրս գնացին: Հայրը տեղյակ էր, որ նրանք մեկնել էին իր կրտսեր որդու մոտ՝ Գյուլազարակ: Հաջորդ առավոտյան նա մտավ որդու սենյակն ու հարցրեց.

— Տղես ի՞նչդ է, Վարդ ջան, խո հիվանդ-միվանդ չէ՞:

Որդին քմծիծաղեց.

— Ի՞նչ հիվանդ, ի՛նչ բան, հերըս, շատ լավ է, ինչպես մոր գոգը նստած երեխան:

— Փառք աստծու, փա՛ռք աստծու,— աթոռի վրա անհանգիստ շարժվելով՝ գոհացավ հայրը:

— Ի՞նչ հարգանք, ի՞նչ պատիվ. կարծես էդ գյուղի զավակն է... Ասենք հարազատ չէ՞, ինչ է:

— Էդ ի՞նչդ որ:

— Հայրիկ, տղեդ նշանվել է մի սիրուն աղջկա հետ. անունը Հասմիկ է: Ախպերս նրանց տանն է ապրում, մենք էլ էնտեղ էինք:— Երգիչն ախ քաշեց: Որդին ասաց,— լավ աղջիկ է, գիտե՞ս, հայրիկ:

— Աստված պահե· Բա գյուղու՞մ պտի մնան·

— Չէ, շուտով ես կտեղափոխվեմ Շահանեի տունը, էս սենյակն էլ կտամ ախպորս:

Պարզ չէ, ուրախացա՞վ, թե՞ տրտմեց հայրը: Նրա մտահոգությունը լավ ըմբռնեց որդին: Հոր ջահել օրերին թևութիկունքը դուստրն էր՝ Արևհատը, տաղերի անաղարտ ամբարողը, իսկ հետո՝ ինքը: Գրի է առնում հոր արարչության պտուղները և պահում դրանք որպես գանձարանի մասունքներ: Ինքն էլ որ հեռանա, ի՞նչ պիտի անի հայրը. չէ՞ որ նոր երգեր էլ է հորինում:

Անցան օրեր, և Հասմիկը տեղափոխվեց Թիֆլիս, ամուսնացավ գուսանի կրտսեր որդու հետ, սկսեց սովորել մանկավարժական տեխնիկումում և արյունակցի պես մտերմացավ կեսրայրի հետ: Շերամի անկեղծ բարեկամը դարձավ նաև Նիժարաձե ընտանիքը, մանավանդ տիկին Թամարայի ամուսինը՝ Ժորան: Սա շատ առույգ ու կատակասեր մարդ էր և օր չէր լինում, որ ինքն ու երգահանը, իրենց անվարժ ռուսերենով, զրույցի չբռնվեին. Եվ վրացի այդ տղամարդը զմայլվում էր նրա տաղերով: Հարևան շենքում ապրող Հայկ և Ջաբել Մալյանները նույնպես սրտակից մտերիմներ դարձան: Նրանք եղել էին օպերային թատրոնում, որտեղ տարբեր ազգությունների աշուղների մրցում էր տեղի ունեցել, և բոլորին պատմում էին.

— Ժողովուրդը ոչ մեկին այնպես չընդունեց, ինչպես Շերամին. ծափահարությունից թատրոնի շենքը դմբում էր:

Երգահան գուսանի կրտսեր որդին բնակություն հաստատեց եղբոր անձուկ կացարանում, հոր բնակարանից մի քանի քայլ հեռու: Նա սկսեց աշխատել Հավլաբարի դպրոցներում: Հայրը շատ անգամ դժգոհում էր նրա մոտ ինքն իրենից.

— Ութանասունս շատ էլ հեռու չէ, ա՛յ որդի, հարսի՛կ ջան. իրիկունը կգրեմ, առավոտը՝ կջնջեմ:

— Ի՞նչ էլ լինի, անթեղած կրակն էլ մեկ-մեկ բոց է տալիս, հայրիկ,— խրախուսում էր որդին:

— Հույսդ մի՛ կտրի, հայրիկ,— մխիթարում էր հարսը,— ա՛յ, էն ե՞րբ ես գրել՝ «Սիրտս քեզ եմ տվել». հալա մի ասա, էլի·

— Մի քանի տարի առաջ եմ գրել·— Եվ հիշելով շարեց տողերը...

3

Կեսօր է Երևանում՝ հունիսյան միջօրե. շո՞գ է՝ շոգ չէ, զո՞վ է՝ զով չէ. սովորական ամառնամուտ: Այդ ժամին, կուլտուրայի տան դիմացի շենքից համեղ ճաշերի ախորժալի բուրմունք էր

գալիս: Երկու անցորդ կանգ առան այդ տան առաջ, մի քանի խոսք փոխանակեցին ու անցան:

Իսկ ճաշ պատրաստող Արաքսին, երգը շուրթերին, պտտվում էր կաթսայի շուրջը: Ու երբ մեկ էլ շերեփը բարձրացրեց, որ ճաշը խառնի, տեղում քարացավ: Բաց լուսամուտից ներս հորդեց հընչյունների ամբողջ մի պարս:

— Թառի ձեն է գալիս... Երգողն էլ տղամարդ է: Ինչքան ծանոթ է...

Ու երբ հնչեց վաղուց ծանոթ տաղը, երգչուհին բացականչեց.

— Շերամն է, Շերա՛մը...

Ու հենց բապուծներով նա վազեց համերգասրահ և կանգնեց մանկուց պաշտելի երգահանի առջև:

— Բարով ես եկել, Շերամ ջան:

Մինչ պատկառելին կպատասխաներ նրա ողջույնին, Արաքսի Գյուլզադյանը երկար ու մտասևեռ նայեց նրա աչքերին, գրկի նվագարանին ու բարբառեց.

— Ու՞մ տունն ես իջել, Շերամ ջան:

Տաղերգուն աչքը գցեց նրա գոգնոցին, բապուծներին ու դժգոհ պատասխանեց.

— Բարով, Արաքսի ջան: Աղջկաս տունն եմ իջել:

Հետո Արաքսին մերթ նրան, մերթ երիտասարդ երգչուհուն նայելով, որին վարպետը երգ էր սովորեցնում, հարցրեց.

— Ինձ հե՞տ երբ պտի պարապիս:

Շերամը հուսադրեց.

— Հենց էգուց էլ կարող ենք սկսել:

Արաքսին անսպասելի գոչեց.

— Վու՛յ, ճաշս վառավ, Շերամ...

Ու քանդած գոգնոցը թափահարելով նա սլացավ փողոց, ապա աստիճանները զույգ-զույգ լոք անելով մտավ տուն, գոգնոցը շպրտեց թախտին, կաթսան վերցրեց և, աճխացած պարունակությամբ հանդերձ՝ տարավ նետեց բակի աղբարկղը: Հետո ներս գնաց, զզվանքով խոլրտեց նավթավառին ու ոտքով այնպես զարկեց, որ սա քիչ մնաց շուռ գար:

Շերամն այնպես վերադարձավ Թիֆլիս, որ կարծես հայրական տուն էր դառնում: Վարդուհին հարցրեց.

— Ընչի՞ ուշացար, Գրիգոր, շատ անհանգիստ էի:

— Ընչի՞ էիր անհանգիստ, Վարդուհի ջան,— սիրագորով

պատասխանեց ամուսինն ու գրկեց նրան։— Մարդիկ երգ կուզեին, ես էլ երգ կուտայի, վա՞տ գործ էի անում։

— Եսի՞մ, մտածում էի, թե հանկարծ չհիվանդանաս։

— Ջաթի ես հիվանդ եմ, քեզնեն ճար կուզեմ...— երգի տողով խոսեց նա և ավելացրեց.— մի վախենա, սիրելիս, ընձի գրող չի դիպնի։ Է՞, Վարդգեսը խո չի՞ հարցրել։

— Մի անգամ եկավ կնկա հետ, նստեցին, ահագին խոսեցինք, բայց չմնացին, ասին ճաշել ենք ու ելան գնացին.

Կեսգիշերին Շերամն արթնացավ ու մտածմունքի մեջ ընկավ, թե ինչու՞ վերջին տարիներին սիրո մասին հատուկենտ երգ է գրում, ուրեմն ծերանու՞մ է ինքը. Ապա հուսադրեց. «Բնական ճանապարհդ էդ է»։ Հետագա օրերին ժամեր շարունակ նա անցկացրեց արվեստակից ընկերների շրջանում։ Ավելի շատ նվագաձու տղաներին սովորեցնում էր իր հին ու նոր տաղերը, խորհուրդներով օգնում նրանց։ Այս միջավայրում էր, որ Երևանում հաստատվելու մտադրությունն ավելի հիմնավոր դարձավ։ Տուն գնալիս նա հաճախ մտածում էր. «Սրանք կամաց-կամաց կերթան եվրոպականի կողմը։ Կլառնետն ու ջութակը դհոլի հետ ախպեր են դարձրել։ Զէ՛, քու ցանաձդ Հայաստանի հողում պտի ճլի, պտուղ տա։ Ուր էլ էրթաս, էնտեղ է քո վերջին հանգրվանը»։

4

Այսքան ուրախ գարուն Շերամն իր կյանքում քիչ էր տեսել։ Երևանում տաղուսույց լինելն էր պատճառը, թե հետզհետե մակընթացող հրապույրն իր ստեղծագործությունների նկատմամբ, թե իր ցանկալի մասնակցությունը աշուղական երեկոներին. գուցե Սալվինազի աստիճանաբար սրբազնացող պատկերի հայտնությունն իր աչքին, գուցեև բուռն սիրո և մեղմ խղճահարության պոռթկումներն իր վաղեմի ու նորոգ սիրեցյալի՝ Վարդուհու նկատմամբ, ո՞վ գիտե։

Այնուամենայնիվ, գարունը արևոտ օրեր պարգևեց երգչին։ Թևերը հզորացել էին ու մղումն անսանձելի դարձել։ Եվ նա մի օր մտածեց. «Ընչի՞ չերթանք գյուղ ու քաղաք, երգով ոգևորենք մարդկանց, եռանդի բերենք»։

Առավոտ էր, որ նա շտապեց ընկերների մոտ։

— Պողո՛ս,— դիմեց նա դափահարին,— քելե մի քանի օրով էրթանք Ղարաքիլիսա, Ալավերդի։

— Էնտեղի թունավոր օդի՞ն ես կարոտել։

— Իա՜, հազարավոր մարդկանց համար թունավոր չէ ու մեզի համար թունավո՞ր է: Ընչի՞, լավ չի՞ էղնի: Էնտեղ, գիտես թե, հեռավոր մի ծանոթ ունիմ, դերասան Աշոտ Մաթևոսյանը:

— Է՜, թե կուզես՝ էրթանք,— կիսադժկամ ասաց Պողոսը:

— Շատ լավ էլ կուզեմ, բա ի՞նչ. հերիք չէ՞ էստեղ թթվենք. կարգին գործ էլ չկա, ծուտի-պուտի, ծնգլ-մնգլ...

Պողոսը քրքջաց: Քամանչահար Լևոնն ավելի շուտ համաձայնեց: Մյուս օրը, երեկոյան, եռյակն արդեն գնացքում էր: Նույնիսկ վագոնում փորձ արեցին ի հաճույս ուղևորների: Սրանք այնքան ուրախացան, որ ամեն մեկը եռյակին հրավիրեց իր տուն:

— Համեցեք, քե՛ մատաղ. իմ պալատը հրեն հա՜, սարի ծերին. համ լենուբոլ, համ օդը մաքուր, ջուրն էլ անմահական,— գովեց մի պղնձագործ:

— Ընչի՞, ա՛յ տա, իմ շենը քոնիցն ինչո՞վ ա պակաս,— միջամտեց մի գյուղացի.— ի՞նչ անենք, թե գեղացի ենք:

— Մթամ թե ես գեղացի չեմ էլե՞լ,— ավելացրեց բանվորը:

— Լավ, լավ, ընչի՞ կվիճեք,— հանգստացրեց Շերամը,— դեռ մի տեղ հասնինք՝ կերևա:

Երբ նրա ընկերները և ուղևորներից ոմանք քնեցին, նա գրպանից մի թուղթ հանեց ու կազմեց համերգի ծրագիրը: Բազմազան էր դա. և՛ Շիրին կար, և՛ Պաղտասար Դպիր կար, և՛ Նաղաշ Հովնաթան, և՛ Սայաթ-Նովա, և՛ Ջիվանի... Կային նաև իր մեկ-երկու տաղը. ժողովրդականն էլ իր տեղն ուներ:

Ահա, երեք երաժիշտներն էլ, ինչպես երեք հրացանակիրներ ամեն մեկն իր ձևով գործիքները բռնած, քայլում են դեպի պղնձաձուլական կոմբինատի ակումբը: Առջևից գնում է Շերամը՝ նվագարանի վիզը թևի տակ սեղմած: Նա հրացանակրի ավելի է նման, քան մյուսները: Նրա երկու կողմից քայլում են՝ դափահար Պողոսն ու քամանչահար Լևոնը:

Երեքն էլ քայլում են անխոս: Հասան ակումբի դռանն ու կանգ առան. փակ է: Մեկ էլ տեսան, որ թանձր արտահագուստով մի մարդ գնում է կոմբինատ: Երբ նա անցնում էր նվագաձուների մոտով, գուսանը մոտեցավ ու հարցրեց.

— Ախպե՛ր ջան, էստեղ մի տեղ չկա՞, որ կոֆե խմենք:

Բանվորը ցույց տվեց ճաշարանն ու շտապեց իր գործին: Իսկ ճաշարանում ասացին, թե իրենց մոտ սուրճ չի լինում. և ընդհանրապես Ալավերդիում սուրճ խմելու սովորություն չկա:

Կեսօրին եռյակը ոտք դրեց ակումբի վարիչի ընդունարանը։

— Ընկեր Մաթևոսյանն էստե՞ղ է,— հարցրեց երգահանը։

— Էստեղ ա,— պատասխանեց ինչ-որ թղթերով զբաղված մի մարդ,— համա նրան բոլորն էստեղ Աշմաթ են ասում։

— Թող էդպես լինի,— համաձայնեց երգիչը։

Աշոտ Մաթևոսյանը նրանց այնպես ընդունեց, որ թվաց, թե վաղուց էր սպասում։

— Վահ, ինչու՞ եք կանգնել, նստեք. փափուկ աթոռներ դեռ չունեմ, բայց ոչինչ։

— Մենք սալդաթի նման ենք, ընկեր Մաթևոսյան, փափուկ տեղի սովոր չենք,— ավելացրեց Պողոսը։

Ու երեքն էլ, ասես մի հրամանի ենթակա, միանգամից նստեցին։

— Դե՛, ասա տեսնենք, վարպետ, մեզ մոտ պետք է մնա՞ք, թե՞ անցնեք գնաք,— զրույցն սկսեց Աշմաթը։

— Թե որ մեր գալուն ուրախ էղնիք, կմնանք. թե չէ, մնանք՝ ի՞նչ անենք։

— Իհարկե, ուրախ ենք։

Շերամը մի պահ սպասեց վարիչի հարցին. իսկ սա արդեն կռահում էր, թե նա ինչ պետք է ուզի. միայն թե չէր իմանում՝ ինչպես ձևակերպի հարցը։ Բայց սկսեց ոչ թե ակումբի տնօրենը, այլ տաղերգուն։

— Աշո՛տ ջան,— բանակցությունը մտերմաբար բացեց նա,— կտեսնիս, չէ՞, որ խումբս զինված-պատրաստված է եկել Ալավերդի,— ձեռքի տարածական շարժումով եռյակի անդամներին ներկայացրեց գլխավորը։

— Տեսնում եմ,— հաստատեց տնօրենը և մեղմաձայն երգեց. — Զինված-պատրաստված Զեյթունի քաջեր...

— Տո՛, կեցի հըլը՛... Էդ երգը ես էլ գիտեմ.— խնդաց Շերամը։

Բոլորն էլ այնպիսի որոտմունքով քրքջացին, որ ընդունարանի աշխատողը ներս ընկավ, թե՝ ի՞նչ պատահեց։ Իսկ ծիծաղ հարուցողն այս էր։ Քայլերգը Շերամը հորինել էր, երբ Գրիգոր Տալյան էր դեռևս. այնինչ այդ պահին կատակում էր, թե ինքն էլ գիտե դա. կարծես ուրիշն է ստեղծել։

— Հետո՞,— երկարեց Աշմաթի հարցականը.— հիմի... ուզածդ ի՞նչ է, Շերամ։

Գուսանը կոկորդն աղմուկով մաքրեց և կայարանից նոր-նոր ընթացք առած գնացքի պես ասաց.

— Մեր ուզածն էն է, որ ակումբիդ դահլիճը մի քանի օր տրամադրես մեզ:

— Մի քանի օ՞ր,— դիմողի խոսքը կտրեց տնօրենը:

— Է, հա՛, սխալ ասեցի՞, տղերք,— նվագածուներին դիմեց Շերամը:

Ու երեքն էլ աչքները տնկեցին Աշմաթի վրա:

— Ախր... չեմ կարող, վարպետ ջան, Շերամ ջան:

Հանկարծակիի եկած երաժիշտները մռայլվեցին:

— Ինչու՞, Աշոտ ջան,— խաղաղասիրաբար հարցրեց տաղերգուն:

— Ներկայացումներ ունեմ, սիրելի վարպետ. Ղարաքիլիսայից դերասաններ են եկել և մեր խմբի հետ պիես պիտի բեմադրեն: Անհարմար է, որ ետ դարձնեմ.

Շերամը փորձեց համոզել.

— Մինչև որ նրանք պատրաստվեն, մենք մեր գործը կվերջացնենք: Բարիկենդանի առակը գիտես, չէ՞... Մինչև որ նրանք...

— Ի՞նչ ուզում ես ասա, վարպետ. հնարավոր չէ, ազնիվ խոսք: Ուզու՞մ եք գնացեք Ղարաքիլիսա, հետո...— Նվագածուները ոտքի ելան: Ակումբի տնօրենը տագնապով նայեց նրանց և հարցրեց.— ու՞ր:

— Գնանք քարտուղարի մոտ,— առաջարկեց եռյակապետը:

Պողոսը վերցրեց իր դափը, Լևոնն՝ իր քամանչան, ու քայլեցին դեպի դուռը: Երգահանը ոտքը կախ գցեց ու դարձավ վարիչին.

— Դու էլ պիտի գաս, Աշոտ ջան:

— Ե՞ս ինչու գամ, Շերամ:

— Ինչպե՞ս թե՝ ինչու· Խնդրողը մենք ենք, մերժողը՝ դու: Մի մարդ պիտի լինի՞, որ մեր դատը կտրե: Քարտուղարից լավը որտեղի՞ց գտնենք:

Աշմաթն առանց առարկելու սեղանի դարակը փակեց, աթոռը հրեց դրա երեսատակը, կեպին քաշեց գլուխն ու հետևեց նվագածուներին:

Քարտուղարը ոտքի վրա սեղմեց գուսանի ձեռքը, բարի գալուստ մաղթեց, իսկ ակումբի տնօրենին բարևեց ու հրավիրեց, որ նստեն:

— Լսում եմ Ձեզ,— դիմեց նա Շերամին:

— Ապրի արևդ,— մաղթեց երգիչն ու գլխով արեց. քարտու-

դարը շնորհակալություն հայտնեց։— Թիֆլիսից ելել եկել ենք, որ համերգ տանք, մեր ժողովրդին ուրախացնենք։

— Շատ հաճելի է,— գովեց քարտուղարը։

— Ես գիտեմ, որ ժողովուրդը անուշ երգի ու տաղի կարոտ է։ Էդպես չէ՞։

— Ճիշտ է։

— Իսկ, ա՛յ, մեր ընկեր Աշմաթը դահլիճը չի ուզում տալ։ Ես էլ չեմ կարողանում լեզու գտնել հետը։

Քարտուղարը գլուխը տարուբերեց և Աշոտին ասաց.

— Եղբա՛յր, հասկանու՞մ ես, ախր սա հայտնի Շերամն է, ընկեր Աշմաթ։

Տաղերգուն դրանից համարձակություն առավ ու դարձավ նրան.

— Դու գիտե՞ս ես ով եմ։

— Գիտեմ, գիտեմ,— խեղճացած պատասխանեց Աշոտը,— շատ լավ գիտեմ։

— Չէ, չգիտե՛ս... «Նա մի նազ ունի» երգս լսե՞լ ես։

— Այո, լսել եմ, Թիֆլիսում։ Ձեր տանը մոտիկ Ավետիքի պադվալը կար, էնտեղ· Համ էլ ես քեզ վաղուց եմ ճանաչում։— Քարտուղարը չէր միջամտում։ Աշոտը շարունակեց.— Մի՞տքդ է Երկան Ալեքի ճաշարանը...

— Իհարկե։ Ալեքի պես մարդուն մոռանալ կլինի՞։

— Նա իմ փեսան է,— զարմացրեց Աշոտը։

— Հաստա՞տ,— անվստահ հարցրեց երգիչը։

— Հաստատ։ Ես եկել էի նրա մոտ, հենց էդտեղ էլ ծանոթացա քեզ հետ ու լսեցի երգերդ։

— Է՞,— միավանկեց գուսանը։

— Էլ ի՞նչ՝ է. «Արի, Գոքոր,— ուրախ կանչեց Ալեքը, երբ դու մտար ճաշարան։— Էս էլ իմ աներձագս է»։ Ու մենք ծանոթացանք։

Հետո Շերամը համերգների ծրագիրը ցույց տվեց քարտուղարին և հավանության արժանացավ։ Հենց նույն օրն էլ սկսվեցին համերգները։

5

Փայտե երկարուկ սանդուղքով բարձրանում է նիհար ու ջղուտ մի երիտասարդ։ Սակայն ինչու՞ կանգ առավ նա և երկայնամատ

ձեռքերով ականջները թեքեց առաջ. ինչ-որ ձայն է լսում: Ապա անաղմուկ բարձրացավ մինչև վերևի դուռն ու կանգնեց: Ընդհատված երգը շարունակվեց: Հենվելով պատին, երիտասարդը դռան ապակուց նայեց: Ձախ կողմում լայն պատշգամբ կա. բայց ու՞ր է նվագողը: Հավանաբար քաշվել է պատշգամբի անկյունը: Աջ կողմում եկվորը աթոռներին նստած ու միջանցքում կանգնած մարդիկ տեսավ. «Քանի դեռ երաժիշտը նոր երգի չի անցել, պետք է մտնել,— որոշեց երիտասարդը և դուռը բացեց ու թեքվեց ձախ: Երգիչը տեսավ այցելուին և, կնտնտոցն արագ գցելով գրպանը, սեղմեց նրա ձեռքը:

— Ծանոթանանք,— ասաց երիտասարդը.— Արամ Քոչարյան:

— Շերա՛մ, Գրիգոր Տալյան,— ներկայացավ երգիչը:

Հավաքված հարևանները գնացին իրենց բնակարանները: Արամի աչքով ընկան կից շենքերի սանդուղքներին ու պատշգամբներում խումբ-խումբ հավաքված մարդիկ:

— Ի՞նչ ժողովուրդ է, վարպե՛տ,— հարցրեց նա:

— Ամեն օր էդպես հավաքվում են ու ականջ դնում, Արամ ջան: Համ ժողովուրդը բավականություն կստանա, համ էլ ձենս կբացվի:

Եկավ Վարդուհին ու տեսնելով, որ երկուսն էլ ոտքի վրա են, կշտամբեց.

— Ինչու՞ եք էստեղ կանգնել, Գրիգոր, ներս համեցեք,— ու հրապուրիչ ժպտաց:

Ներս մտան: Արամը զննաբար նայեց շուրջը և ասաց.

— Երևանում ձեզ ավելի լավ բնակարան կտան, վարպետ:

Շերամը մի վայրկյան խորհեց ու եզրակացրեց.

— Կուզես ասել, թե Հայաստան տեղափոխվեմ, չէ՞:

— Իհարկե. լավ չի՞ լինի:

— Ինչու՞ չէ: Արևհատիս ավելի մոտիկ կլինեմ, գնալ-գալուն էլ վերջ կտամ: Մեկ է, որ տարին մեկ կերթամ վարժապետության,— Արամը ժպտաց — երգերս կսովորեցնեմ երգիչներին: Բայց որ կոմպոզիտոր որդիս էստեղ է ապրում, էդ մի քիչ դժվարացնում է գործս, Արամ ջան:

Եվ տանտերը մտմտաց վերջնական պատասխանը: Նրան օգնեց Քոչարյանը, պատմելով, թե որքան արդյունավետ գործեր է կատարում Երևանի կոնսերվատորիան: Իսկ տանտիրուհին իսկույն սեղան սարքեց ու, որպեսզի չընդհատի նրանց զրույցը, ձեռքով նշան արեց, որ ճաշակեն. Արամը շնորհակալություն

հայտնեց ու շարունակեց:— Հենց այս տարի հիմնադրում ենք երաժշտական կաբինետ:

— Ի՞նչ պետք է անի էդ կաբինետը,— հարցրեց Շերամը:

— Մեծ գործ: Ա՛յ, դուք, օրինակ՝ ինչքան լավ-լավ երգեր եք ստեղծել, ճի՞շտ է:— Երգահանն ուսերը վեր գցեց, այսինքն՝ չգիտեմ, բայցև գլխի շարժումով հաստատեց:— Կաբինետն էլ կզբաղվի այդ գոհարները ձայնագրելով: Մեր անելիքներից մեկն էլ ժողովրդական երգեր հավաքագրելն է:

— Էդ ինչ բարի գործ եք սկսել, Արամ ջան,— ոգևորվեց տաղերգուն:

— Այո. դրա համար էլ եկել եմ Թիֆլիս, որ պայմանավորվենք, թե մեր սիրելի երգահան Շերամը ե՞րբ պիտի բնակություն հաստատի Հայաստանի մայրաքաղաքում:

Գուսանն ախ քաշեց և հարցով փորփրեց.

— Իսկ որդիս որ նոտագրում է՞:

— Վարդգես Գրիգորևիչը շատ զբաղված մարդ է. մենակ ինչպե՞ս կարող է ժամանակ գտնել դրա համար:

— Էդ էլ խելացի է, իհարկե,— հաստատեց երգիչը:

— Իսկ դուք տեղյա՞կ եք, որ ձեր և Ջիվանու բազմաթիվ երգեր Երևանի և Էջմիածնի բոլոր սազանդարների երգացանկի թագն ու պսակն են կազմում:

Շերամը ձայն չհանեց:

— Ժողովուրդը պետք է շնորհակալ լինի ձեզնից, վարպետ,— ձեռքը մտերմաբար նրա ծնկին դնելով՝ խոսեց Քոչարյանը:

— Էդպես է, լավ ասիր: Բայց գիտե՞ս, որ երգերս ձայնագրել են՝ Դանիել Ղազարյանն էլ, Կուշնարովն էլ:

— Դե՛, նրանք նույնպես փառավոր աշխատանք են կատարել:

— Իսկ ո՞ր երգերս են, որ շատ են երգվում. համ էլ ընչի՞ մենակ Երևանն ու Էջմիածինը:

— Ամբողջ հայ ժողովուրդն է երգում դրանք.— ու երգեց՝ Մեկ սիրտ էրա, հե՛յ, անջիգյար...

— Վարդ ցանեցի,— ուղղումով ընդհատեց գուսանը.— է՞լ:

— Դու իմ մուսան ես, Շորորա,— թվեց Արամը:

Տաղերգուն մտաբերեց յուրաքանչյուր տաղի ստեղծման շարժառիթն ու հառաչեց...

Արամը լավ էր ըմբռնում նրա հոգու վայրիվերումները և շարունակեց թվել:

Իսկ Շերամն ամեն տաղի անունը տալիս մի տող թեկուզ երգում էր մեղմիկ:

— Ուրեմն,— հարցականով եզրակացության հանգեցրեց տաղերգուն:

— Ուրեմն, անհետաձգելի պահանջ է, որ բոլոր երգերդ գրի առնվեն... Եվ գիտե՞ք,— ավելի մոտեցավ նրան,— այդ երգերն ինձ ծանոթ են դեռ մանկությունից:

— Ինչպե՞ս, դու որտեղացի ե՞ս որ,— անսպասելի հարցրեց Շերամը:

— Էջմիածնեցի եմ, վարպետ:

— Կեցի հըլը՛,— մտերմիկ ձևի անցավ երգիչը,— իմ աննման Հովհաննեսի հայրենակի՞ցն ես, Արամ ջան, նրա երկրի ջու՞րն ես խմել... Ծո՛, էդ ի՞նչ օրհնված հող է ձեր հողը... Բա Կոմիտասը, որ...

Մեղմօրոր գնացքում, երբ երիտասարդի քունը փախել էր յոթ սարի ետև, նա մտորում էր. «Եվ այդպիսի տաղերի ստեղծողին ես մինչև օրս չէի ճանաչում, չէի տեսել: Ափսոս, Արամ Քոչարյան, հազար ափսոս,— ինքն իրեն կշտամբում էր երաժշտագետը, հիշելով տաղերգուի ծյունի պես ճերմակ մազերը, մշուշի նրբահյուս քողով պատած աչքերը, հազիվ ուժգնացող ձայնը...— այնուամենայնիվ, բախտդ բերեց, Արամ, որ տեսար ու լսեցիր փառքի գագաթին դեռևս կանգուն գուսանին, բանաստեղծին ու երգահանին»:

Եվ Արամ Քոչարյանը նորից ու նորից պատկերացրեց նրան: «Ութ տասնյակ տարիների բեռը չի ընկճել այդ մարդուն: Որքա՜ն առույգ էր նա, որքան ջերմ ու սրտամոտ, մանկան պես անմիջական... Որքան էլ պայծառ է հիշողությունը»:

Այդ ամբողջ օրվա կատարվածն Արամը մտաբերեց սիրահարված պատանու պես: Շերամի ավագ որդու հետ նա նույնպես խոսեց: Վարդգեսը վստահեցրեց, որ կաբինետի արաձն իրեն շատ կօգնի: Միայն թե հայրը շուտ գա Երևան:

Արամն ինչ-որ թնդյունի արձագանք լսեց ձորի ապառաժների միջից. ենթադրեց, որ երկրաբաններն են աշխատում: Եվ նա կրկին անդրադարձավ բնաձին մեծ տաղանդը գտնելու մտքին: Ո՞ր երկրաբանը կարող է այնպես հպարտանալ իր պեղումների արդյունքով, ինչպես ինքն է հպարտանում: Չէ՞ որ ինքը գտել է մի գանձ, որի հետ չեն կարող համեմատվել թեկուզև ոսկու ահա-

գին բնակտորները, կամ բազմակարատ ադամանդը ինչ-որ արքայի թագի վրա...

Եվ Արամը քնեց մեղքերը քաված ծերունու նման:

6

Յոթ տարեկան աղջնակ էր նա: Արտաքինով այնքան աչքի չէր ընկնում, որքան այծյամի աշխուժությամբ: Վազեր, թռչկոտեր թե պարեր, երգը շուրթերից չէր իջնում: Հայրն արհեստավոր մարդ էր, բայց զավակների ցանկություններն անկատար չէր թողնում: Հապա մա՛յրը... Ինչպես Ալեքպոլում էին ասում՝ խանում-խաթուն, տնարար: Բայց տան ամենազնգուն ուրախությունն Արաքսին էր: Աղջնակի երգելու շնորհքը ամենից առաջ դասատուն հայտնաբերեց՝ Արղության դպրոցի երգեցողության ուսուցիչ Պարույր Բաբայանը: Ու փոքրիկը մտավ դպրոցի երգչախումբ:

Մի օր էլ, երբ աղջիկն արդեն տասներկու տարեկան էր և մեծերը համոզված էին, թե այդ տարիքի աղջիկը օրվա մեծ մասը տանը պիտի նստի, մայրը ձայն տվեց.

— Արաքսի՛, Արաքսի՛, արի, տեղ պիտի էրթանք:— Պատասխան չեղավ: Մայրը բարկացած գոչեց.— աղջի, չոգկա՛ծ, որտե՞ղ ես...

Դարձյալ ոչ մի պատասխան: Մայրը մոտեցավ տնից ոչ հեռու սրճարանին ու զարմացած գամվեց տեղում: Արաքսին կանգնել էր փակ դռան առաջ և ունկնդրում էր ներսից լսվող երգը

— Աղջի՛,— կանչեց մայրը:

— Սու՛ս, մա ջան,— շշնջաց Արաքսին ու բարալիկ մատով կիսեց շուրթերը.— արի, ականջ էրա. տե՛ս, ինչքա՞ն լավ կերգե էն պապիկը:

Մայրը հետաքրքրությունը զսպել չկարողացավ ու դռան բաց փեղկից ներս նայեց.

— Քա վու՛յ, Տալոյենց Գոքորն է:

— Էդ ո՞վ է որ, մա՛ ջան:

Եվ զայրույթը մոռացած մայրը պատմեց, թե ով է այդ Գոքորը, ինչ երգեր ունի և ինչու է նվագում այդտեղ:

— Էլի՞ պտի նվագե, մա՛ ջան:

— Հըբը ի՞նչ պտի էնե. մենակ էսօր խո չէ՞:

Արաքսին մորից առաջ ընկավ: «Ամեն օր պտի երգե»,— հիմնավորվեց աղջկա մտքում: Ու նրա դեմքին փայլեց երանության

ժպիտը: Հաջորդ օրը աղջնակը նորից վազեց սրճարանի կողմը, հիպնոսված արձանացավ դռան առաջ և ականջ դրեց: Լսում էր ու երգում նրա հետ. լսում էր ու երգում, ակնապիշ նայում ներս, որտեղ երգահանն էր: Եվ քանի՛, քանի տաղ սովորեց այդ մատուռի դռանը կանգնած: Եվ զորավոր հրապուրանքն էր պատճառը, որ մի անգամ քիչ էր մնում ներս ընկնի սրճարանի բաց դռնից: Շերամի սրատես աչքից չվրիպեց ուխտավորի պես երգով աղոթող աղջկա ներկայությունը: Իր կատարման ժամանակ նրա ականջը երբեմն բարալիկ մի ձայն էր որսում: Նա շարունակում էր երգել, Արաքսին նույնպես:

Մի օր էլ աղջկան բռնեց, «հանցանքի» պահին: Արաքսին անզգուշաբար գլուխը մտցրել էր ներս ու դայլայլում էր: Երգիչն իսկույն դադարեցրեց կատարումը, նա նույնպես. բայց չփախավ տուն: Վարպետը փոթկացրեց և մոտ կանչեց նրան: Աղջիկը վախվըխելով մոտեցավ և գլուխը կախ՝ սպասեց:

— Ամեն օր էլ կուգա, ուստա՛ Գոքոր,— ժպտուն քմծիծաղով շշնջաց դափահար Կարոն:

— Ըսել է՝ էդ դու կերգեիր հետս, հա՞,— հայացքն աղջկա դեմքից չկտրելով՝ հարցրեց տաղերգուն: Արաքսին ամաչելով կմկմաց.

— Ես էի... կուզե՞ս երգեմ:

— Երգե՝ տեսնիմ:

Եվ փոքրիկ աղջիկը երգեց.

Թառլան, թառլան իմ յարը,
Դարդերիս դեղուծարը ..

Երբ տաղն ավարտվեց, աղջիկն անթարթ նայեց երգչին:

— Շատ էլ լավ ես երգում, բալի՛կ ջան, ապրիս... Ու՞մ աղջիկն ես:

— Աճիկենց Կարապետի,— կապ գցելով՝ ծանոթացրեց աղջիկը:

— Ծո՛, մեր Կարոյի՞, իսկապե՞ս,— զվարթացավ երգիչը:

— Ըհը՛մ... Էստեղից էլ մոտիկ կապրինք՝ Ճիճվի Յոխուշը:

Ու բյուրեղյա սափորի պես աղջնակի և տարեց երգչի բարեկամությունը սկիզբ առավ ջինջ առվակի նման, տարիների միջով հոսեց որպես զուլալ մի գետակ, հոսեց դեպի ծովը հայոց տաղերի:

7

Շերամն այսօր առանց նվագարանի է գնում ավագ որդու տուն։ Վարդուհին հարցրեց.

— Ու՞ր կերթաս, Գրիգոր, թեթև էլ հագել ես...

Տաղերգուն ետ նայեց, նրա դեմքով ոչ այն է դժգոհության, ոչ այն է հպարտության ստվեր անցավ։

— Ու՞ր պիտի երթամ, կնիկ ջան, չիտե՞ս, կամ Վարդգեսենց, կամ երաժիշտների՝ կոլեկտիվ,— պատասխանեց նա,— էլ ու՞ր ունիմ, որ ուր երթամ։

— Կարծեցի գործի կերթաս ու թառդ չես տանի։

— Էլ ի՞նչ գործ։ Համ էլ, էս է, նորից պիտի երթամ Երևան։

— Էլի ի՞նչ ունես էնտեղ։

— Ի՞նչ պիտի ունենամ։ Երգերս սովորողները խո չե՞ն ելնի գա էստեղ. ես պիտի էնտեղ պարապիմ հետները։

— Կարգին վարժապետ ես դառել,— մտերմաբար հեգնեց կինը։— Բոլորովին հանգիստ չունիս...

Նրա խոսքը գուսանը չլսեց։ Նա արդեն փողոցում էր ու մտաձկոտ քայլում էր որդու տան կողմը։ Հասավ, դռան առաջ մի ակնթարթ կանգ առավ՝ արժե՞ այդպիսի տրամադրությամբ մտնել։ Ետ դարձավ, որ իջնի երկաթե սանդուղքի մի քանի աստիճանը, երբ դուռը բացվեց, շեմքին հայտնվեց Վարդգեսը։ Հավանաբար ոտնաձայն էր լսել.

— Հայրի՞կ, ինչու՞ ետ դարձար։

Հայրը մի պահ դժվարացավ արդարանալ։

— Քեֆս լավ չէ, Վարդ ջան, դրա համար էլ...

— Ի՞նչ է, հիվա՞նդ ես,— կտրեց որդին։

— Չէ, ականջս մի բան ընկավ, սիրտս դարդոտավ։

Նրանք ներս մտան։ Ժպտուն Շահանդուխտը կանգնեց նրանց դեմ. ձեռքին ճաշոտ ամաններ նային։

— Ջոքանչդ քեզ չի սիրել, հայրի՛կ,— կատակեց հարսը,— ճաշեցինք, նոր եկար։

— Ջո՞քանչ ուրտից, որ սիրե կամ չսիրե,— խնդաց կեսրայրը,— էդտեղ էլ բախտս չբերեց, Շահան ջան։

— Ես էլ զոքանչ չտեսա, հերըս,— մխիթարեց Վարդգեսը։— Է՛, անոթի չե՞ս։

— Չէ, Վարդ ջան, կնիկս կթողնի՞, որ անոթի մնամ. է՛լ թանով ապուր, է՛լ փլավ .. ի՞նչ ասես, հըբը՛...— էդ հեչ, բայց մի

բան եմ լսել, որ սրտիս դժվար եկավ: Կըսեն, թե պիտի էրթաք Երևան ապրիք, ճի՞շտ է:

— Դեռ հաստատ չէ, հայրիկ:

— Է՛,— ձգեց հայրը,— խո բան չեմ ըսե:

— Սարգիս Բարխուդարյանին ճանաչու՞մ ես:

— Լավ:

— Նրան հրավիրում են, որ Երևանի կոնսերվատորիայում երիտասարդ կոմպոզիտորներ պատրաստի: Թե՛ էստեղ պիտի դասախոսի, թե՛ էնտեղ: Երևանում նրան փոխարինող է պետք, նա էլ ինձ համոզում է, որ գնամ հետն աշխատեմ:

— Ինչ կեղնի՞ որ, վատ չէ, Վարդ ջան,— հետզհետե որդուն Թիֆլիսում պահելու հույսը կորցնելով՝ հավանություն տվեց հայրը:

— Դեռ որոշակի ոչինչ չկա, հայրի՛կ... Դրա համա՞ր թառդ չես բերել Ուզում էի էն մի երգդ ձայնագրել:— Հայրը ձեռքը թափ տվեց ու վեր կացավ:— Կարծում ես քեզ կթողնե՞մ էստեղ:

— Հա՛,— հանկարծ հիշեց հայրը,— էնօրտանքը Արամ Քոչարյանն էր եկել մեր տուն. ճանաչու՞մ ես:

— Իհարկե:

— Նա էլ կուզեր, որ ես ընդմիշտ տեղափոխվեմ Երևան. երաժըշտական կաբինետ են ստեղծում...— մատը դրեց քունքին, ըսա՛վ...

— Գիտահետազոտական,— օգնեց Վարդգեսը·

— Ապրի՛ արևդ... էդպես է: Ինչքան երգ ունիմ, կուզեն ձայնագրեն:

— Հիանալի՛ է:

— Բա դու՞:

— Արամի կաբինետի գլխավոր գործը դա պիտի լինի, հայրի՛կ, իսկ ես... ես էլ հո պարապ չե՞մ մնա... Համ էլ տարբերությունը մեծ է, հերըս. նրանք ձայնագրելու են, նոտագրելու են, ուսումնասիրելու են, երգերդ մեկառմեկ դասավորելու են, քարտարան կազմելու, որ հետագայում դրանց ստեղծագործական պատմությունը ամբողջական լինի:

— Պարզ է, բայց էնքան էլ չէ:

Վարդգեսը ծիծաղեց·

— Մի՛ խնդա, Վարդ ջան, մի՛ խնդա: Ըսել է՝ քու արաժդ քիչ է, հա՞:

— Քիչ չէ, հերոս, քիչ չէ: Կաբինետն ամիսներ շարունակ կարող է զբաղվել քեզանով, ամեն մի երգիդ հետ կապված բոլոր հանգամանքները լրիվ պարզ դարձնել: Իսկ իմ ժամանակը չի ների, որ ես ամեն օր գրի առնեմ, ինչ որ ստեղծել եսչ

Այնուամենայնիվ, Շերամը դժգոհ դուրս եկավ որդու տնից: Միտքն ընկավ կրտսերը. «Էն տղին էլ թերթը մի ամսով տեղ ուղարկե՛ց ..».

Հասավ իր շենքին, բայց միտքը փոխեց ու քայլերն ուղղեց դեպի նվագածուների հավաքատեղին:

8

Անցան օրերը շարան-շարան, անցան տարիները քարավանքարավան . Փոքրիկ Արաքսին դարձավ Արաքսյա Գյուլզադյան: Ծերացավ մեծ գուսանը, ձեռնափայտ առավ ձեռքը, սկսեց դանդաղ քայլել, բայց տաղերը շարունակում էին բխել հոգու անքնին խորքերից:

Նա կրկին ժամանել է հայոց մայրաքաղաք: Դեռևս չի հաստատվել այստեղ, բայց իր գանձերը բուռ-բուռ բաժանում է Գուրգենին, Արաքսուն, Վաղարշակին, Ծողիկին և նորանոր երգիչներին·

Վարդգեսն ու Ծահանդուխտը իրեն ուրախ-զվարթ ճամփու դրեցին:

— Լավ իմացիր, հա՛յր, —ասաց որդին.— դու վերջին անգամ ես մենակ գնում Երևան: Մինչև դու երկու-երեք ամսում ավարտես քո կոնսերվատորիայի դասերը,— Վարդգեսը ցածրաձայն ծիծաղեց,— և ավարտական հանձնես քո շրջանավարտներին, մենք կգանք կհասնենք:

— Հու՛յս աստված,— հառաչելով փակեց Շերամը:

Երևանում նա իմացավ, որ կուլտուրայի տան երաժշտական բաժինը ֆիլհարմոնիա է դարձել, իսկ Լուսավորության ժողովրդական կոմիսարիատում ստեղծվել է երաժշտական բաժին. Արամ Քոչարյանն ու նրա կաբինետի աշխատողները գրկաբաց դիմավորեցին տաղերգուին: Անհամբերությամբ դեմ վազեցին ռադիոյի մենակատարները. Եվ բոլորը երգ են պահանջում իրենից, ինչպես քաղցածը հաց է ուզում, իսկ ծարավը՝ ջուր: Նրա տեղը գտավ նաև նվագածու ընկերը՝ Արծրուն Հովսեփյանը:

Մի երեկո Շերամը գնաց Կոմայգի և նստեց բացօթյա համերգասրահի առաջին կարգում: Նա ունկնդրում էր արևելյան նվագախմբի համերգը: Ջղուտ ձեռքերը դարսել էր ձեռնափայտի գլխին ու լսում էր: Նվագողների արանքով անցավ ու բեմահարթակի առջևում կանգնեց երգչուհին: Հայտարարեցին՝ «Նա մի նազ ունի»: Շերամն ուղղեց մեջքը, ասես ինքն էր երգելու: Կատարումն ավարտվեց: Երգչուհին դարձավ, որ ծափահարության ներքո հեռանա:

— Կարելի՞ է,— տեղից հարցրեց երգի հեղինակը և ձեռքով արեց խմբավարին, բարձրացավ սանդուղքով ու դիմեց երգչուհուն.— մի րոպե սպասիր, աղջիկ ջան:— Երգչուհին հայացքը հառեց նրա վրա·— Դա իմ երգն է, չէ՞:— Աղջիկը գլխով արեց:— Բայց էդպես չեն երգե, չնեղանաս: Էդիկ սիրո երգ է, կացնով փետ ջարդել չէ, որ կըսես՝ նա մի նա՛զ ունի, նա՛զ ունի, նա՛զ ունի...,— ձեռքը կացնի պես իջեցնելով ու բարձրացնելով, շեշտեց տաղերգուն:

Հանդիսատեսները քրքջացին, իսկ Շերամը ձեռնափայտը նվագարանի պես դրեց կրծքին ու մեղմ երգեց. աջ ձեռքն էլ այնպես էր շարժում, որ իբր նվագում է: Ժողովուրդը հմայված լսում էր. Ծերունի գուսանն ավարտեց կարճատև դասն ու եզրափակեց.

— Ա՛յ, էսպես կերգեն, սիրուն ջան, հըբը՛...— Ու թոթվելով երգչուհու ուսը, բեմահարթակից իջավ:— Հա՛, եթե ժամանակ ունիս, արի ռադիո կամ կուլտուրայի տուն, ես քեզ էլի երգեր սորվեցնեմ:

— Ուրախությա՛մբ, վարպետ,— զվարթ արձագանքում է երգչուհին և օդային համբույր հղում նրան: Տաղերգուն ծիծաղում է և ինքն էլ պատասխանում նույնպիսի համբույրով ժողովուրդը ծափահարում է:

Հանդարտ քայլում է նա Աբովյան փողոցով ու զննաբար նայում նոր շենքերին, այգուն, Շահումյանի արձանին: Հետո թեքվում է Սպանդարյան փողոց, մտնում հին տներից մեկի դալանը, անցնում բակով ու բարձրանում քրոջ տուն: Քույրը նստել է պատը շգամբի թախտին ու գործ է անում:

— Բարև՛, քուրիս:

— Բարով էկար, ախպե՛ր ջան, արի նստի:

Եղբայրը ծանրորեն նստում է:

— Օֆ, քիչմ հանգստանամ:

Նա հանում է գդակը և ճերմակած մազերը հարթում դեպի ճակատը, ապա կախված մազափունջը ուղղում վերև: Քույրը սրտացավությամբ նայում է նրան և ասում.

— Ինչքան շա՞տ ման կուգաս, ախպեր ջան. հերիք է, հերի՛ք, մեղք ես:

Եղբայրը խրոխտ դիրք է ընդունում և առարկում.

— Ի՞նչ կըսես, քուրըս. ես դինջ նստիմ ու կյանքը գա քովես անցնի՞:

— Ախր մեծըցել ես, քիչմ էլ հիվանդ կերևաս:

— Չէ՛, պտի էրթամ ռադիո, երգերս պտի սորվեցնեմ, քուրըս, երգե՛րս... թե չէ... ո՞վ գիտե, էսօր կամ, էգուց չկամ,— քթի տակ խնդմնդում է և ավելացնում.— Է՛հ, մնաս բարով...— Եվ բակից դառնում ու բացականչում է.— հըբը Վարդիս հրամանը չկատարե՞մ, ի՞նչ կըսես:

— Բան չեմ ըսե:

— Ողորմի՛ հորըդ:

— Քու հորըդ էլ ողորմի, ախպեր ջան,— մաղթում է քույրը: Եղբայրը փոթկացնում է: Մի հոր, մի մոր զավակներ են ախր:

Ահա նա գնում է ռադիոյի երաժշտական բաժին: Հանկարծ կանգ է առնում, ձեռնափայտի ծայրը մոտեցնում աչքերին ու քրթմնջում. «Հը՛, ես էլ կըսեմ ընչի՞ կարգին չի դիպնի գետնին... Մաշվել է անտերը· Նոր ձեռնափայտ պտի շինեմ»: Հաջորդ առավոտյան նա նորից հանդիպեց Արծրունին ու խնդալով խոսեց.

— Ծո՛, գիտե՞ս, դերձակ Հակոբը մի երգարան ունի՝ «Հայ քնար»: Էնօրն ըսավ, թե՝ «Շերամ, քեզմեն բավականաչափ տաղեր կան հոն»: Էդ Հակոբը Հունաստանից է եկել, դրա համար էլ էդպես կխոսի: Վերջը, հարցրի՝ ի՞նչ երգեր կան, ըսավ՝ «Ջորավար Անդրանիկին»: Ըսի՝ «Խո սխալ-մխալ չե՞ն տպել»: «Ոչ, ըսավ, բայց թերություններ կան»: Ծո՛, գիտե՞ս ինչ թերություններ են.. — Արծրունը բերանը բաց լսում էր: Տաղերգուն շարունակեց — «Սուրբ անունդ» բառերու տեղ տպել են«Քաջ անունդ»— նվագածուն անձայն ծիծաղեց:— Մի խնդա, ականջ էրա: «Ալ ու ալվան ես հագել» երգիս մեջ «բինիշդ» կա, չէ՞:

— Կա, շատ լավ էլ միտքս է,— միջամտեց Արծրունը:

— Բինիշի տեղը տպել են «իշլիկդ»,— նվագածուի ծիծաղին միացավ վարպետի փոթկոցը,— վա՛յ, ձեր թութունը թափի, հա՛... իշլիկդ ո՞րն է, ծո՛:

— Երգարաններդ ձեռները չէ՞ ընկել, ուստա՛ Գոքոր:

— Եսի՞մ, ընկած կեղնի, հըմը բանի տեղ չեն դրել:' Կարգին որ կարդացած էղնին «Սիրուններ, միք նեղանա» երգիս մեջ օյին-բազություն կանե՞ն... «Էնտի յարիս եմ գովում» տողին թավաքյալլի մե պոչմ են կպցրել— «Բալե ջան, բալե ջան»:

— Իա՛,— զարմացավ նվագածուն,— օյի՞ն են, ինչ են:

— Հըբը՛,— քահ-քահ խնդալուց հետո խոսքը փակեց Շերամը: Ապա նրանք մեկ էլ նայեցին միմյանց ու կրկին ծիծաղեցին:

Ընկերները հեռացան այգուց, իսկ ճանապարհին մերթընդմերթ պոռթկում էր նրանց ծիծաղը:

9

Դստեր տունը հին Երևանին հատուկ բակի լայն պատշգամբ ունի: Եթե ուշ գարնանն ու ամռանը Շերամը գալիս էր նրանց հյուր, այդտեղ էր քնում իր ավագ թոռան հետ:

Այդ օրը նա տնից դուրս ելավ ճաշին ու թեքվեց Աբովյանի կողմը: Հասավ անկյունադարձին, մի հայացք նետեց կուլտուրայի տան սևագորշ ճակատին, որտեղ մեկ-երկու ժամ առաջ երգ էր սովորեցնում ջահելներին, և մի քանի քայլ անելուց հետո սկսեց բարձրանալ քարե սանդուղքով:

Իմացա՞ք, թե ուր է գնում նա: Ահա և մեր մտահոգության պատասխանը. «Տեսնիս Արաքսին տա՞նն է, կարծեմ Արամն էլ պտի գա»: Ուրեմն Շերամը բարձրանում է երգչուհու տուն, բայց ո՞ր Արամն է, որ պիտի ծանոթանա նրա հետ: Բնակարանի դուռը բացվեց հանկարծակի, տաղերգուն վեր թռավ:

— Իա՛, վախեցրիր, Արաքսի ջան, սիրտս թփթփաց:

— Վա՛յ, քու սրտիդ մեռնիմ, Շերամ ջան, ոտքերուդ ձենը հեռվից էլ կընկնի ականջս, ախր...

Արաքսու կողքին կանգնած էր ամուսինը: Շուտով եկավ նաև Արամը:

— Արամ Մերանգուլյան,— ներկայացավ նա:

— Շերամ ջան, մեր Արամն էլ թառ նվագող է, ռադիոյի արեվելյան անսամբլի երաժիշտ,— տեղեկացրեց Արաքսին,— համ էլ կարգին ձեն ունի, գիտե՞ս:

— Ուրախ եմ,— դիտելով Արամին՝ ասաց տաղերգուն,— լավ կնվագե՞ս, թե՞:

Սեղանի շուրջը բոլորված հյուրերը ծիծաղեցին, իսկ Արամը մարտահրավեր նետեց.

— Ուզո՞ւմ ես՝ մրցենք:

Սեղանակիցները լարված ժպտացին, իսկ Շերամը ճարպկորեն ճողոպրեց նեղ վիճակից:

— Էդ տեսակ մարդկանց, Արամ ջան, մեր քաղաքում թալնա տեղի լոթի անուն են դնում, այսինքն՝ որտեղ հակառակորդ չկա, լոթի կձևանան:

Եվ տաղերգուն խնդաց ու ավելացրեց.

— Խո չնեղացա՞ր, Արամ ջան:

— Չէ, չէ, վարպետ, կատակ արիր, չէ՞:

— Էդպես հաշվե: Է՛, ոչ ես եմ թառս բերել, ոչ էլ դու, ինչպե՞ս պիտի մրցենք: Էլի ես ձեռնափայտ ունեմ՝ կճնկճնկացնեմ, հըբը դու՞:

— Ես էլ թավան քամանչա կդարձնեմ, ճզուվզ կանեմ:

— Հա՛, իսկականն է, սկսենք:

— Տո՛, կերեք-խմեք, մրցու՞մս որն է,— պնդեց Արաքսու ամուսինը:

Ու երբ ուզեց կոնյակ լցնել երգահանի ըմպանակը, նա զգուշացրեց.

— Մի պուտ լցրու, մի կաթիլ: Էդքան էլ որ խմեմ, մեծ բան է: Գինին էլ մատնոցով կխմեմ:

— Բա եղա՞վ,— դժգոհեց Արամը:

— Ինչու՞ չեղավ: Օղի-մողին որ օգտակար լիներ, ես կծաղրեի՞:

Եվ նա մի կաթիլ գինով կոկորդը թրջեց ու երգեց, թե ինչպես օղին մարդ է տաքացնում, մեկին՝ մերկացնում, մյուսին շապիկ է հագցնում: Ով որ նրան միշտ ուխտ է գալիս, նա շատ հեշտ է հոգին տալիս...

Խմեցին Շերամի կենացը:

Մերանգուլյանը հարցրեց.

— Վարպետ, Շարա Տալյանն ինչու՞ հենց սկզբից քո երգերն իր անսամբլի ծրագրի մեջ չմտցրեց:

Շերամը մասամբ դժգոհ նայեց նրան ու պատմեց.

— Բանն էսպես եղավ: Շարան աշուղական անսամբլն առաջ եկել էր Թիֆլիս: Համերգից առաջ մտավ մեր տուն, թե՝ հորեղբայր, քու երգերիցդ ո՞րը կուտաս՝ մտցնեմ ծրագրի մեջ: Ես էլ ըսի՝ ես աշուղ չեմ, Շարա ջան, ընչի՞ մտցնես:

— Շարա Տալյանին ու Գարեգին Լևոնյանին ըսել է, թե՝ ես աշուղ չեմ, սազանդար եմ,— միջամտեց Արաքսին։

— Հետո՞, հետո՞,— անհամբերությամբ հարցրին մյուսները։

— Հետոն էլ առաջ էր եղել,— կատակով շարունակեց տաղերգուն։— Մի օր էլ նստել եմ ֆիլհարմոնիայի դահլիճում ու աշուղական անսամբլի համերգն եմ լսում։ Երգեցին ես աշուղից, էն աշուղից, բայց իմ երգերից՝ ոչ մեկը։ Ինչդ որ գյումրեցիք կըսեն՝ պոլզցա։— Ծիծաղի շրջլուն անցավ սենյակով։— Համերգը որ պրծավ, գնացի բեմի ետևը։— Բարև, Շարա ջան, ըսի։— Բարև, հորեղբայր,— ու լավ որ աչեց երեսիս, ըսավ.— հորեղբա՞յր, նեղացած կերևաս։— Ըսի,— շարունակեց Շերամը,— նեղացած եմ, հըբը ի՞նչ եմ։— Աչեցի սիրուն երեսին, տեսա՝ քթի տակ կխնդա. — հարազատից որ չնեղենամ, օտարի՞ց պտի նեղենամ,— ըսի· — Ի՞նչ է եղել,— հարցրեց։— Ի՞նչ պտի էղնի,— ըսի.— էդ իմ երգերս արժանի չէի՞ն, որ քու անսամբլդ կատարեր։— Շատ արժանի էին, հորեղբայր, նույնիսկ պատիվ կբերեին,— ըսավ։— Հըբը ընչի՞ չես կատարե։ Ու էդտեղ Շարան միտքս գցեց Թիֆլիսում ըսածս։ Ես էլ կոնըկիս չընկա. ըսի՝ շատ բան եմ ըսել... Աշուղ եմ, գուսան եմ։

— Հետո՞,— նորից միաբերան հարցրին սեղանակիցները։

— Գլուխներդ ինչ ցավեցնեմ, հետո մի քանի երգս մտցրեց ծրագրի մեջ, ինքն էլ երգում էր. «Հազար էրնեկը»[1]։

Արաքսին չհամբերեց ու իր կզակի տակից երկու մատով բըռնած՝ Շերամին խնդրեց՝ երգիր։

Ու Շերամը երգեց նախ ելևէջներով, ապա այնպես, ինչպես Շարան։ Բոլորը լուռ ունկնդրում էին.

Ոսկե թասը լիքը գինով,
Անուշ գինով մուրազի,
Կտաս նրան հազար նազով,
Ով որ քեզ կերազի։

---

[1] Շարա Տալյանի աշուղական խմբում, սկզբնական շրջանում, ընդգրկված էին՝ Հայկ Տալյանը, աշուղ Պայծառեի եղբոր որդին՝ Հայկ Տրդատյանը, Սեդմարը (Շարայի կինը), Երևանի լավագույն թառահարներ՝ Հակոբ Սեդրակյանն ու Սեդրակ Թարվերդյանը, քամանչահար Վարդան Խշտոյանը։ Առաջին համերգը եղավ 1927 թ. դեկտեմբերին. հետո համերգներ՝ Լենինականում, Թիֆլիսում· Բաքվի հայկական ակումբում տված 20—25 համերգների մասին Վ Աղասյանը դրվատանքի խոսք է ասել և բանաստեղծություն նվիրել։ Խարկովում ու Մոսկվայում՝ յոթ համերգ, որոնց մասին Իգումնովը բարձր կարծիք է հայտնել Ծ. Հ.

Ամառ էր: Շերամն ու Կաղլոսը քնած էին պատշգամբում: Կեսգիշերին տաղերգուն հանկարծ արթնացավ ու ծանր շնչելով նստեց անկողնում. խոսեց ինքն իրեն.

— Վարդս պտի տեղափոխվի Երևան, չէ՞... Հըբը ես ու՞ր եմ ծանրումեծ նստել էստեղ. նրան ո՞վ պտի ճամփու դնե: Ես էս գնացքով էրթամ, նա մեկէլ գնացքով գա. էղա՞վ՝ չեղավ: Ի՞նչ էնենք, թե մեկ-երկու երգ էլ պակաս կմնա. հետո կուգամ՝ կսորվեցնեմ. խո երգիչները չփախա՞ն:

Մտածեց, մտածեց, տրորվեց, վշվշաց: Բայց ինչու՞ անհանգըստանան քնած հարազատները: Ոտքերը թեթև կախեց հատակին ու, նայելով աստղերին՝ փորձեց կռահել, թե ժամը քանիսն է: Հետո մաշիկները գցեց ոտքերն ու կատվի քայլերով շարժվեց դեպի սանդուղքը: Մտմտալով իջավ բակ... Երբ նորից անկողին էր մտնում, Կաղլոսն արթնացավ:

— Պա՛պ, ընչի՞ ելար, ի՞նչ է եղել,— բամբ ձայնով հարցրեց նա:

— Հե՛չ, Կաղլո ջան, քնի՛, քնի՛: Մտքերս շատ են, գլուխս՝ փոքր, դրա համար էլ էսդին-էնդին կգցեն:

Թոռը ձայն չհանեց: Պապը երևակայությամբ կրկին սավառնեց հեռու: «Տեսնիս ի՞նչ կենեն տղեքս էնտեղ»:

Առավոտյան դիմեց թոռանը.

— Կաղլո ջան, էս փողը վերցրու՝ ընձի համար Թիֆլիսի տոմսառ:

Թոռը դիմադրեց.

— Հերըս որ իմանա, գիտ՞ես ինչքան կնեղանա, պա՛պ. էդպես բան մի՛ անի: Մենք փող չունե՞նք, որ մի տոմս առնենք՝ ճամփու դնենք: Համ էլ դեռ գործ ունես, չէ՞:

— Էդիկ՝ հեչ,— թղթադրամը նրան պարզելով, համառեց պապը,— կուգամ՝ պարտքս կկատարեմ:

— Լա՛վ, բայց փողը գրպանդ դիր, պա՛պ:

— Ա՛յ տղա, վերցրու, կըսեմ. ես փող շատ ունիմ, հո խեղճ չե՞մ:

— Դու հյուր ես, պա՛պ ջան:

— Իա՛... հըբը կըսեն՝ խելացի տղա ե՞ս. էդքա՞ն է խելքդ: Ես էստեղ հյուր եմ, հա՞... հայ գիտի՛...

Կաղլոսն արդեն հագնվում էր: Քիչ անց դուրս եկավ հայրը, որ գործի գնա:

— Էս ի՞նչ կխոսիք պապ ու թոռ:

— Հե՛չ, Հայկո ջան, գաղտնիք է...— և Շերամը քթի տակ խնդաց։

Ոչ ոք չկարողացավ համոզել նրան, որ գորշի պոչին խռոված չգնա։ Շողիկն էլ նոր էր պատրաստվում սովորելու նրա երգերը։ Երեկոյան Շերամին ճամփու դրեցին։ Հրաժեշտի պահին նա գոչեց հենց վագոնի դռնից.

— Մեկ էլ որ էկա, էլ գնացողը չե՛մ... կուզե՞ կոպալներով ընկնին ետևես։

Եվ նրա ժպիտը վարագուրվեց վագոնի պղտոր ապակիով։

10

Շերամը փութկոտ քայլերով բարձրացավ տուն և շտապելուց արագ թակեց դուռը։ Վարդուհին մոտեցավ.

— Ո՞վ է։

— Տո՛, ես եմ, էլ ո՞վ պտի էղնի,— վրա տվեց, թառն ու պայուսակը դեմ արեց կնոջն ու ավելացրեց,— ժամանակ չունիմ տուն մտնելու, Վարդուհի ջան, պտի էրթամ։

— Ու՞ր կշտապիս, խո կրակ չէ՞, ա՛յ մարդ։

— Կրակ է, հըբը ի՞նչ է։ Չգիտե՞ս, որ Վարդգեսն էսօր-էգուց ճամփու վրա է, Երևան կերթա։

Հայրը որդու տուն հասավ հևասպառ։ Ներս մտավ ու նկատեց, որ սենյակում կապոցներ կան։ Վարդգեսն ու կինը, որ սեղան էին նստել, չզարմացան նրա այդքան շուտ հայտնվելուն։

— Արի, հերըս, արի հաց կեր, հետո կխոսենք,— աթոռ ցույց տալով՝ առաջարկեց որդին։

— Շնորհակալ եմ, Վարդ ջան, ճանապարհին կերել եմ։

— Էսօ՞ր ես եկել։

— Էս առավոտ։

— Գորշդ պրծա՞ր էնտեղ։

— Մի կտոր մնաց, էն էլ հետո։ Բա որ իրար չտեսնեինք, լա՞վ կեղնիր։

— Դե՛,— ծոր տվեց որդին ու դարձավ Շահանդուխտին.— ի՞նչ կասես, հը՞։

Կինը ծիծաղեց.

— Ի՞նչ ասեմ, հայր է, չէ՞։

— Ա՛յ, լավ ըսիր, հարս ջան. հոր սիրտը մոր սրտի պես չէ, բայց էլի համբերանք չունի։

Հայրը տեղեկացավ, որ երեք օր անց որդին գնացքի մեջ կլինի: Եվ նրա մեկնելու օրը նվագարանն առավ եկավ ճաշի:

Գնացքը հեռանում է Թիֆլիսի կայարանից. իսկ Շերամը գամվել է կառամատույցի եզրին ու փորձում է մինչև վերջին ակընթարթը նշմարել որդու գանգրահեր գլուխը, հարսի նրբամաշկ ձեռքը, որ երևում են պատուհանից: Նա երկար կանգնեց կառամատույցի եզրին: Գնացքն արդեն հասել է Նավթլուղ, իսկ դրա ետևից վազող կարոտ սրտին թվում էր, թե ինչքան էլ հեռանա, հայրը պարզ կտեսնի ամեն ինչ. ոչ միայն վերջին վագոնի պոչից կախված կարմիր լապտերը, այլև որդուն և հարսին, նրանց թափահարվող ձեռքերը: Եվ այնքան մթագնած տուն մտավ Շերամը, որ կինը ծպտուն անգամ չհանեց ուշանալու համար: «Մեղք է էս մարդը,— մտովի ցավակցեց նա:— Որ շուտ գնանք Երևան, շատ լավ կլինի»:

Վարդգեսն ու կինն արդեն տեղավորվել էին Արևհատի տանը, երբ մի օր նրանց այցելության եկավ երաժշտագետ Արտակ Տոնիկյանը: Սովորական ողջույններից հետո նստեցին դաշնամուրի մոտ: Վարդգեսը նրան ցույց տվեց իր վերջին ստեղծագործությունների և հոր տաղերի նոտագրություններից, ապա տարվեցին հուշերով:

— Հիշում ես, չէ՞, Հայարտունը, Վարդգես,— հարցրեց Տոնիկյանը:

— Մի՞թե կարելի է մոռանալ: Ինչպիսի՜ եռանդով էինք աշխատում բոլորս:

— Հա՛, չմոռանամ ասել, Կոմպոզիտորների միությունն ինձ ու քեզ ուղարկում է Ջանգեզուր: Արվեստի օլիմպիադա է, տաղանդներ պետք է հայտնաբերենք:

— Ի՞նչ կա որ, կարելի է:

Տոնիկյանը չմոռացավ հարցուփորձ անել Շերամի Երևան գալու և մնալու մասին. Շուտով հավաքվեցին ընտանիքի բոլոր անդամները և նստեցին ճաշի:

— Արաքսի Գյուլզադյանը շատ է երգում հայրիկիդ երգերը, Վարդգես,— հաղորդեց Տոնիկյանը:

— Գիտեմ, գիտեմ. և ինչպես հայրս է ասում՝ ջիգյարով է երգում:

Եվ նա մի պահ մտահոգ դարձավ, աչքին պատկերացավ հայ-

ը, որն, ինչպես կարոտի արձան, հառնել էր կառամատույցի վրա և անթարթ նայում էր գնացքի ետևից...

— Դե՛ լսիր, թե մի անգամ ինչ եղավ: «Շերամը որ էստեղ սկսեց երգ սովորեցնել, շուտ-շուտ գալիս էր մեր տուն,— պատմում էր երգչուհին.— նախքան տեքստը թելադրելը, ինքն ամբողջ երգը կատարում էր, հետո բառերն իր ձեռքով գրում ու տալիս ինձ, մյուս օրն էլ եղանակն էր մաս-մաս սովորեցնում: Այսպես, երգչուհին սովորել է «Հալվեց սարերի ձյունը»:

— Հայրիկն իր ձեռքով նրա բլոկնոտում գրել է հիսուն երգ:

— Ի՞նչ լավ նվեր է, Վարդգես,— հիացավ Տոնիկյանը:

— Այդ երգը ես նոտագրել եմ դեռևս Թիֆլիսում: Հիմա դու լսիր նրանց պատմության շարունակությունը,— տրամադրեց Վարդգեսը, երբ տեսավ, որ տնեցիները ուշադրությամբ լսում են:— Շերամն իր երգերը նրան սովորեցնում էր առանց որևէ վարձատրության. չնայած որ իրավունք ուներ վերցնելու: Արաքսին նրան առաջարկեց, բայց տաղերգուն կտրականապես մերժեց: «Ի՞նչ կխոսիս... խելառ-խելառ մի՛ խոսի: Ամոթ չէ՞ էդպես բան կըսես: Ես պարտավոր եմ սովորեցնել, որովհետև դու իմ արվեստը բարձրացնում ես, իսկ ժողովուրդը կվարձատրի»: Էսքան անշահախնդիր, աչքը լիքը մարդ չէի տեսել,— ասում էր Արաքսին:

Մի քանի օր անց Արտակն ու Վարդգեսը հասան Գորիս, հանգըստացան ու, բնության տեսարաններով հիացած՝ բարձրացան Խնձորեսկ: Հաջորդ առավոտյան երաժիշտներին հրավիրեցին գյուղամեջ, որտեղ, եկեղեցու պատի տակ հարմարեցրած նստարանին, շարքով նստել էին մի քանի ծերունի: Երաժիշտները սրանցից ընտրեցին երկուսին, որպեսզի մասնակցեն օլիմպիադային:

Ամառն անցնում էր օր-օրի ետևից. ցերեկները՝ կիզիչ շոգ, երեկոները՝ զով, Սևանից փչող քամի, որ ասես շոգ ցերեկվան հետապնդելով, քշում էր դեպի դաշտավայր: Թիֆլիսի տոթին էլ փոխարինում էր ոչ այնքան զով երեկոն, և Շերամի անհանգստությունը ժամառժամ բորբոքվում էր: Նրա տագնապը չէին կարողանում մեղմացնել ո՛չ նվագածու ընկերները, ո՛չ եղբոր ու սրա որդու տուն այցելելը, ոչ էլ մոտակա ծաշարան երբեմն մտնելը:

— Ընչի՞ ուշացավ Վարդգեսի պատասխանը. փոխող կա, չկա՞...

— Կեղնի էլի, Գրիգոր, մի քիչ էլ համբերի,— փորձում էր հան-

գըստացնել Վարդուհին. բայց նրա խոսքն ավելի էր ջղայնացնում ամուսնուն:

— Ի՞նչ կխոսիս,— ընդվզում էր նա,— էսպես էրերմնի մնալով ի՞նչ դուրս կուգա. էնտեղ ահագին գործ ունիմ, էստեղ ձեռքերըս ծալած նստել եմ: Անգործությունն ընձի համար մահ է, մա՛հ, Վարդուհի ջան, հասկացի՛,— կինը ձայն չէր հանում, բայց նրան թվում էր, թե կինն իր լռությամբ է հակաճառում:— Տո՛, ես խո հարյուր տարի չպիտի՞ ապրիմ, ա՛յ կնիկ. քանի շատ չեմ ընկել, ինչ որ մտքիս դրել եմ, ինչ որ ժողովուրդը կուզե, պտի կատարեմ, վերջացա՛վ:

Ծերամը ելավ տնից և, ալեկոծ մտորումներով հալածական, քայլեց Քուռ գետի կողմը:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՅԳՈՒ ԾԵՐԱԿՈՒՅՏԸ

1

Ծերամի անհանգստությունը օրեցօր սաստկացավ ցրտող ձմռան պես. բայց Երևանից ուրախալի ոչ մի լուր չեկավ: «Էս տղեն էլ տանը չի նստի, որ մի երկու խոսք տանք-առնինք. հերիք չէ բանաստեղծ է դառել, թերթում էլ աշխատում է... էլ ե՞րբ պտի երեսը տեսնինք»:

Անձյուն անցավ հունվարի կեսը և չոր եղանակն ավելի թրատող դարձրեց սառնաշունչ քամին: Սակայն նա հո չէ՞ր կարող ամբողջ օրը տանը նստել: Մի երկու ոտանավոր գրեց, այն էլ կիսատ թողեց: Իսկ նյարդային վիճակը նրան վախեցնում էր. հանկարծ ու նոպաները կրկնվեն, ինչպես տարիներ առաջ: Այդ վախն էր, որ նրան մղեց եղբոր տունը՝ Զերժինսկու անվան փողոցում, ծեփագործ Դավթի, դռնապան Սամսոնի տունը: Կրտսեր քեռին՝ Սաթոն, իր ընտանիքով արդեն Երևանում էր: «Հըլը տե՛ս. էնոնք էլ գնացին, ես մնացի»:

Մի անգամ էլ, Զերժինսկու փողոցով անցնելիս, երկար կանգ առավ Հայարտան դիմաց ու տարվեց քաղցր հուշերով: Մտաբերեց մանկան պես հմայիչ Սպենդիարյանին, լրջախոհ Քուշնարյանին: Միտքը գնաց հասավ այն հասարակ ծաշարանին: Մոտեցավ եղբոր տան դարպասին ու կտրուկ կանգ առավ: «Իբր թե ընչի կերթա՞մ որ. ի՞նչ պտի խոսիմ: Ամենքն իրանց դարդ ու ցավի հետ

են. խո չպտի՞ նստիմ, որ էնոնք էլ մխիթարեն, թե՝ լավ կեղնի, մի՛ մտաձե»: Ձեռքը թափ տվեց ու ետ գնաց եկաձ ճանապարհով և դնդնաց քթի տակ.

Ձմեռն էկավ, ձյուն չի գա,
Ճամփեն կաշեմ, տուն չի գա...

Ուզեց գնալ հավաքատեղի, բայց մտքերը մտրակեցին նրան: Եվ գուսանը քայլերն ուղղեց դեպի ավագ որդու տունը: Անցավ հրապարակն ու անկյունում գամվեց: «Ծո՛, էս ու՞ր կերթաս, ծերուկ. մոռացե՞լ ես, որ որդիդ Երևանի բնակիչ է արդեն»: Վերադարձավ՝ ինքն իրեն հույս տալով: Լուռումունջ քայլեց դեպի հավաքատեղի: Մտավ տեսավ՝ ջահել-ջուհուլ լցվել են: Ախր սրանք էլ ամեն խոսքի գլուխ՝ Շերամ ջան, վարպետ ջան, համեցե՛ք... Նրան թվաց, թե այն հարգանքը չէ, ինչ որ պետք է. և շուտ հեռացավ այդտեղից:

Երեկոյան կողմ գնաց Կարապետի մոտ. էլի նա կարող է հոգին հանգստացնել. մանավանդ կյանքի բարդ խնդիրները զարմանալի թեթևությամբ լուծող Մաշոն: Գրեթե գիշեր էր, որ տուն մտավ: Վարդուհին բան չհարցրեց, բայց կասկածով նայեց ամուսնու դեմքին:

— Ի՞նչ կաշես,— հակագրոհեց երգիչը,— հը՞լը չեմ խելոել, մի՛ վախենա:

— Խեր բերան բաց, ա՛յ մարդ:

— Խեր բերա՞ն... բերա՞ն երբ մնաց, որ խերով բացվի:

Շուտ պառկեց ու լուսադեմին արթնացավ. «Տեղափոխվելուց առաջ մեկ էլ չգնա՞մ Երևան, հը՞»:

Գարնան բացվելը նույնիսկ չնկատեց: Շուտով իր ծննդյան օրն է լինելու. բայց մի՞թե դա իրեն ուրախություն կբերի, երբ ամբողջ կես տարի պարապ նստել է Թիֆլիսում և սպասում է: Ի՞նչ տանջալից բան է սպասելը: Եվ նա հորինեց իր տխուր տաղերից մեկը: Տարօրինակ է, դարձյալ քնարական ստացվեց: Երգ էլ հորինեց, սակայն տագնապացավին սպեղանի չդրեց դա՝ ո՛չ խոսքը, ո՛չ մեղեդին: Ջայրացած նետեց մատիտն ու քիչ էր մնում պատառոտեր գրածը:

Եկան գարնան անուշ օրեր...

Հիշեց նա իր նոր երգերից մեկի տողն ու ժպտաց. «Շատ մտածելով գործին չես օգնի»,— եզրակացրեց նա և գնաց պուրակ:

Գուցե ծանոթ մարդու՞ հանդիպի, խելք-խելքի տան, թե վերջն ինչ պիտի լինի։

Մի ուշ առավոտ էլ դուռը կամացուկ թակեցին։ Շերամը մոտեցավ ու կիսաբաց փեղկից հարցրեց, թե ում են ուզում։

— Սա Գրիգոր Տալյանի բնակարա՞նն է։

Երգչի սիրտը, լավ բան գուշակելով՝ թրթռաց։

— Բա ի՞նչ է։

Տանտերն ավելի ուշադիր նայեց բարձրահասակ, համակրելի դեմքով, հատուկենտ սպիտակող մազերով այդ մարդուն և նիհարիկ կնոջը, որ կանգնել էր նրան թևանցուկ արած։

— Գրիգոր Տալյանը ես եմ, աշուղ Շերամը, երևի լսե՞լ եք։

— Ո՞ր հայը չի լսել ձեր անունը։

— Բա ձեր երգերը... ախ-ախ-ա՜խ,— գլուխը ծոծեց կինը։

Շերամը հըմ-հըմ արեց ու հայացքը հառեց նրանց վրա՝ ուրիշ ի՞նչ պետք է ուզեն այս մարդիկ։ Նա հյուրերին ներս հրավիրեց։ Ու երբ նրանք նստեցին, տղամարդը խոսեց.

— Ձեր որդին, Վարդգես Գրիգորևիչը, ասաց, որ դուք այստեղի բնակարանը ուզում եք փոխել, ճի՞շտ է։

— Բա իմ որդին ընչի՞ պտի խաբե։

— Դե՛, մենք էլ ուզում ենք տեղափոխվել Թիֆլիս։

— Վարդգեսիս որտեղի՞ց եք ծանաչում։

— Ես այստեղի ծնունդ եմ. մի քանի տարի աշխատել եմ հայկական թերթում որպես թարգմանիչ. այդ տարիներից էլ ծանաչում եմ։ Հետո գնացել եմ Երևան։ Հիմա էլ ուզում եմ ապրել իմ ծննդավայրում։

— Գովելի՛ է, շատ լավ ես անում,— հավանություն տվեց տաղերգուն։— Ազգանունդ ի՞նչ է։

—Մայիլյան, Հայկ Մայիլյան։

— Խո Անտոնի բարեկամը չե՞ս։

— Ոչ, ո՛չ, ես թիֆլիսեցի եմ, վարպե՛տ։

Հետո նրանք պայմանավորվեցին փոխանակման կապակցությամբ, բայց գնալու միտք չունեին կարծես։ Կինը ինչ-որ բան ասաց ամուսնու ականջին, հայացքը տանտիրոջ նվագարանին։ Սա հասկացավ նրա միտքը և, իր ուրախությունն արտահայտելու համար, թառը պատից իջեցրեց և սկսեց նվագել։ Թող երգ ու նվագով լինի այս փոխանակումը...

Ամռան վերջին Շերամն ու Վարդուհին արդեն գնում էին Երե-

վան: Սակայն արտառոց տխրություն էր համակել գուսանի հոգուն: Տեղահան լինելու հոգսից էր, թե՞ Թիֆլիսում ապրած քսան տարին, երբ ինքը տաղերի մի ոսկեղեն շարք ստեղծեց: Գուցե՞ սրտամոտ մարդկանց հետ սերտորեն կապված լինելու հիշողությունը... Ո՞վ գիտե: Ելավ տեղից և երկար ու թախծոտ հայացքով նայեց նա հայրենի քաղաքին:

Մոտենում էին Երևանին: Տարեց ուղեկցողը կանգնեց երգչի կողքին:

— Բարի լու՛յս, ուստա Գոքոր,— մաղթեց նա:

— Բարին արևուդ, ղուրբա՛ն,— առանց նրա կողմը դառնալու պատասխանեց երգիչը.— գյումրեցի՞ ես:

— Խալիս Շիրակի ծնունդ:

— Գյումրեցի շա՞տ կա ձեր մեջ:

— Շա՜տ... երկաթուղին համարյա մեր ձեռքն է:— Ծիծաղեցին ու պատրաստվեցին իջնելու:

2

Շոգ կեսօրից հետո թուխպերը պատեցին ամբողջ երկնակամարը, կուտակ-կուտակ հարձակվեցին իրար վրա, բախվեցին կատաղի, որոտացին, գոռգոռացին, խուրձ-խուրձ կայծակ նետեցին ցած: Մի վայրկյան անց տեղատարափ անձրև թափվեց: Խոշոր ու ծանր կաթիլներն ընկան երկար նստարանին շարված ծերունիների գդակներին, թրջեցին վտիտ ուսերը: Նրանք ցաքուցրիվ փախան մտան ծածկված տաղավարը, որ նաև թեյարան էր: Մարդկանց այլևս չգտնելով, անձրևը զայրույթով ծեծեց թափուր նստարանները: Կարճատև տեղատարափը հանկարծակի կտրվեց ու կիզիչ արևը, այս ու այն կողմ բոթելով սև ամպերի զանգվածները, ավելի սաստիկ դաղեց պատսպարանից վախվխելով դուրս եկած տարեցներին:

Այդօրվա կայծակներից ավելի շլացուցիչ էր այն լուրը, որ քիչ առաջ լսեցին նրանք:

— Թե իմանաք ո՞վ է ժամանել Երևան,— հայտարարեց նվագածու Արծրունը:

Ալեհեր տղաները գլուխները բարձրացրին ու միմյանց նայեցին: Ուստա Գոքորի վաղեմի ընկերակիցը ձեռքը բարձրացրեց, որ լռեն, բայց նրանք ձայներն ավելի զլեցին.

— Ո՞վ է:

— Ո՞վ է, տո՛:

— Էդ վե՞վ է տեսնիս:

Երբ հարցականները պրծան, լրաբերն անշտապ ու ծամծմելով սկսեց.

— Թիֆլիսից Երևան է տեղափոխվել,— հապաղեց ու զննաբար նայեց ծերունիներին, ապա հաղորդեց.— եկել է գուսան Շերամը, Տալոյենց Գրիգորը, ուստա Գոքորը, հըբը՛...

Ծերակույտի «տղաներից» շատերը վեր թռան տեղներից:

— Դու տեսա՞ր իրան, Արծո՛,— հարցապնդեց ախալցիխեցի Խոշոր Վաղոն:

Արծրունը ձեռքը դրեց աչքին և ասաց.

— Էս քոռ աչքովս եմ տեսել. հետն էլ խոսել եմ:

— Վա՛հ, քոռ աչքով տեսածն ի՞նչ պտի ըլի, տո՛,— խոսեց թիֆլիսեցի Վանոն:

— Քոռ աչքով տեսել է, խուլ ականջով էլ՝ լսել,— կատակի տվեց Տեր-Եսայան Ալեքսանդրը. բոլորը քրքջացին: Հետո բացարձակ լռություն տիրեց: Արծրունը շարունակեց իր խոսքը.

— Էն Գոքորը չէ, ախպե՛րս,— տխուր ասաց նա,— շա՛տ է ընկել, տղերք, պառվցել է:

— Ութանասունին մոտ է, հըբը ի՞նչ կեղնի,— թախծալի պահն ավելի խտացրեց կարսեցի վարժապետ Ալեքսանը:

— Բա ձենը, տո, ձենը տեղն ա՞,— հարցրեց Վանոն:

— Ա՛յ օղուլ, խո փողոցի մեջտեղը չերգե՞ց, որ իմանամ,— նեղացած մանկան պես շրթունքներն ուռցնելով, արտաբերեց Արծրունը: Եվ հարցերը մնացին անպատասխան՝ հասցեն, տունը:

Ծերակույտը լրջացավ. բոլորին հետաքրքրում էր, թե ինչպես իմանան նրա տեղը: Մինչ այդ, չորս բոլորը նայելով, նորանոր այգիներով ու հրապարակներով հիանալով, Շերամն անցնում էր կառավարական շքեղ տան մոտով, որ գնա դստեր օջախը: Եթե նա թեքեր ճանապարհը և անցներ քաղաքային այգու ծառուղիով, տարեց տղաներին զբաղեցնող շատ հարցեր անմիջապես կստանային իրենց պատասխանը, սակայն այդ բանը տեղի չունեցավ: Եվ ահա, ապահովված, որ տանն ամեն ինչ կինը կանի, իրերն ու կահույքը կտեղավորի և կդասավորի, նա շտապում էր դստեր՝ Արևհատի տուն:

Շերամը շուտ մտերմացավ իր նոր տանտիրոջ՝ Սրապիոնի հետ, և սա վստահեցրեց նրան.

— Գնա, վարպե՛տ, գնա ուր հարկավոր է, ես ու կինս կօգնենք տիկին Վարդուհուն:

— Հա, Սրապիոն ջան, չեմ կարող հետաձգել: Ինչքան շուտ ֆիմանան տղես ու աղջիկս, որ եկել եմ, էնքան լավ: Համ էլ որ ես մնացի էստեղ, ձեզ ի՞նչ օգուտ. շատ-շատ մի բարձ էստեղից վերցնեմ, էնտեղ պիտի դնեմ:

— Գնա՝ շուտ արի, Գրիգոր,— խնդրեց Վարդուհին:— Արևին էլ բարևիր իմ կողմից, թոռներիդ էլ համբուրիր:

— Կամքդ ի կատար, կնիկ ջան:

Եվ նա այնքան արագ բարձրացավ Արևենց, որ դեմ եկած դուստրը անհանգստացավ: Հայրը նստեց թախտին: Դուրս եկավ փեսան ու ողջունեց.

— Բարով ես եկել, հայրիկ:

— Բարո՛վ, Հայկո ջան, խո շատ լավ չե՞ս:

— Բան պակաս չէ:

— Հրբը Վա՞ղոս ուր է:

— Ջանգեզուր է գնացել, հայրիկ,— պատասխանեց Արևհատը,— տաղանդներ գտնելու:

— Իա՛, էս ղոջա տաղանդը թողած,— մատը դրեց կրծքին,— գնացել է պստի տաղանդնե՞ր գտնելու:

— Վա՛յ, էդ քեզնեն չէր, հայրիկ,— կշտամբեց փեսան,— կյանքիդ մեջ ե՞րբ ես անհամեստ եղել, որ հիմի...

— Ծո՛, հանաք կենեմ, Հայկո ջան, մենակ ես որ էղնեի, անապատի մե՞ջ պտի ձենս գլուխս գցեի: Ուրիշ տաղանդներ որ չեղնեին, ո՞վ պտի ձայնակցեր ինձ:

Փեսայի երեսը պայծառացավ: Այդ պահին դուռը բացեց Շահանդուխտը և լայնաժպիտ ողջունեց նրան: Կեսրայրը պատասխանեց ու համբուրեց հարսի թուշը:

— Հայրի՛կ,— սեթևեթանքով հարցրեց հարսը,— բա կնկա՞դ ուր ես թողել:

— Ճամփեն մարդու տվեցի,— փոթկացրեց Շերամը: Հարսը քրքջաց:— Բա դու՞ որդուս ում ես տվել,— գլուխը կշտամբալից ծոծեց նա:

— Պսակեցի մի սիրուն աղջկա հետ:

Կեսրայրը շինծու զարմանքով նայեց նրա դեմքին և ասաց.

— Քեզնեն սիրունն էլ կա, հա՞:

Շահանդուխտը ամոթխածությամբ աչքերը խոնարհեց:

— Դու որ տգեղ լինեիր, Վարդգեսի պես տղեն խելքը հացի հետ խո չէ՞ր կերել, որ գլխին բեռ դարձներ: Հե՛չ մի ըսե, դու սիրուններու սիրունն ես...

Երգով պսակեց իր խոսքը տաղերգուն, ապա ավելացրեց.

— Կարծում ես չգիտե՞մ, որ ժամանակին ռուս բանաստեղծը սիրահարվել է քեզ ու բանաստեղծություն է գրել, բա՛...

— Սերգեյ Եսենինը,— ավելացրեց հարսը:

— Ապրի՛ս, մտիհան չես արել,— խորամանկեց կեսրայրը:

Շահանդուխտը թեթևակի շառագունեց:

Հաջորդ օրն այնքան շուտ լսվեց նրա ոտքերի թփթփոցը, որ պատշգամբում քնողներն անհանգստացած՝ նստեցին տեղներում: Երգիչը փորձեց անաղմուկ ելնել պատշգամբ, բայց չհաջողվեց: Պատի անկյունից նայեց ու նկատեց, որ թոռն իր կողմն է աչքը գցել:

— Ձեն մի՛ հանե, Կառլո ջան, թող քնին...— և տոտի-տոտի առաջ եկավ:

Կառլոսը ծիծաղեց:

Նույն օրը Գորիսից ժամանած որդու հետ Շերամը հասավ երաժշտական կաբինետ, որ տեղավորված էր կոնսերվատորիայի վերին հարկի նեղլիկ սենյակում: Ու երբ կաբինետի դուռը բացվեց, և բարձրանալուց հևասպառ տաղերգուն կանգնեց շեմքին, Արամ Քոչարյանը անակնկալից կարկամելով ու թևերը լայն տարածած՝ վազեց ընդառաջ: Փառավոր գործի փայլուն հեռանկարից հուզված վարիչը զավակի ջերմությամբ գրկեց Շերամին:

— Վերջապե՛ս, վերջապե՛ս,— դողդոջուն ձայնով կրկնում էր նա.— ա՛յ, հիմա իսկական գործ կանենք...

— Հնում, դու գիտես, Արա՛մ Կարպիչ, որ երբ ծնողները երեխաներին դպրոց էին տանում,— խոսեց Վարդգեսը,— վարժապետին ասում էին՝ միսը քեզ, ոսկորն ինձ: Հիմա հայրիկիս հանձնում եմ քեզ, բայց չեմ ասում՝ միսը քեզ, ոսկորն ինձ:

— Ամբողջովին իմն է, չէ՞,— զվարթ հպարտությամբ վրա բերեց Արամը:— Ես կարծում եմ, Վարդգես Գրիգորևիչ, վարպետն այսօր թող հանգստանա, իսկ վաղն սկսենք: Վաղն առանց թառի չգաս, վարպե՛տ. մեծ գործ ենք սկսելու:

Սովորության համաձայն, տաղերգուն ձեռքը զինվորի պես դիպցրեց գլխարկի հովարին ու դարձավ վարիչին:

— Արամ ջան, ինձ բոլորը Շերամ կըսեն. դու էլ էդպես ըսա:

— Ինչպես կհրամայես, Շերա՛մ:

Օրեր անց, երբ Քոչարյանն արդեն ձայնագրել էր ֆոնոգրաֆով, հետաքրքրվեց, թե որ երգը երբ է հորինել և ինչ առիթով: Եվ Շերամը տվեց տաղերի անուններն ու հիմնավորեց, թե ինչն է եղել տվյալ ստեղծագործության շարժառիթը: Զվարթություն հարուցեցին մանավանդ երկու տաղը:

— Երեսուն տարի առաջ Բաքու էի գնացել,— հոգոց հանելով՝ պատմեց տաղերգուն,— տխուր էի. իմ իդեալից նամակ չէի ստանում. գրել եմ՝ «Սիրելուցս չեկավ նամակ»:

Արամի և բանաստեղծուհի Վալենտինա Մխիթարյանի զուսպ ծիծաղն ընդհատեց նրա խոսքը.

— Մի՛ խնդացեք, Արամ ջան, Վալյա ջան, որ էդպես է եղել, ի՞նչ անեմ: Մի ականջ արեք.

Սիրելուցս չեկավ նամակ,
Տխուր եմ, չլամ, ինչ անեմ.
Մնացել եմ խեղծ, միայնակ.
Տխուր եմ, չլամ, ի՞նչ անեմ,
Իմ դարդերս ո՞ւմ պատմեմ.

Երգչի թախծալի հուշն ու տաղը տխրեցրին նաև Վալենտինային: Արամը նորից գրիչն առավ ձեռքը:

— Ամեն մի անկեղծ զգացմունք սրբություն է, Շերամ, շարունակիր:

— «Նա մի նազ ունի» գրեցիր, չէ՞, Արամ ջան:

— Գրեցի:

— Ապրի՛ արևդ. դա մի քանի տարվա երգ է... Ի՞նչ ասեմ, միշտ սիրահարված եմ եղել: Էդ ազդեցության տակ էլ գրել եմ:

— Շերա՛մ, Շերա՛մ,— ընդհատեց Արամը.— բա որ հայրենիք ես գովերգել, բա որ մեր հերոսներին ես գովերգել, հայ աշխատավորին ես փառաբանել. էդ ոչի՞նչ... Չէ՛, Շերամ, քո սերը շատ մեծ է, շատ խորը, շա՛տ...

Վալյան ժպտում էր և ապշած նայում ծերունի երգչի դեմքին:

— Իսկ, ա՛յ, «Մարմինդ գեղեցիկ»... Է՛, հե, հե՛,— հառաչեց,— ի՞նչ ժամանակ էր,— նայեց նրանց ու շարունակեց.— քառասուն թե հիսուն տարվա երգ է.— քթի տակ խնդաց:— Թունդ սիրեցի մի գեղեցկուհու, բայց նա դիրքով ինձանից շատ բարձր էր... ա էլ էս երգս գրեցի... մախլա՛ս...

— Շերա՛մ, իսկ Քուշնարյանն այս խոսքերդ չի՞ գրել:

— Չէ. նա մենակ երգերս գրեց, էսպես բաներ չգրեց:

— Բայց մեծ գործ արեց, չէ՞:

— Իա՛, էնոր կատարած գործն ուրացողը հալալ հաց չի կրնա ուտե, Արա՛մ ջան:

— Էդ ի՞նչ լավ ըսիր, Շերամ,— բացականչեց բանաստեղծուհին:

— «Խոր մեծ ծովեր» երգս գրել եմ, որ եթե սարերը ծամփա չտան՝ էրթամ յարիս մոտ, ծովերը մեղմանան:

Վալյայի հառաչալից ծիծաղը կտրեց երգչի խոսքը:

3

Շերամի տաղարանի հարստացումն առաջ գնաց ավելի մեծ թափով, երբ երաժշտական գիտահետազոտական կաբինետի խնդրանքով Հայաստանի լուսժողկոմատը նրան կենսաթոշակ նշանակեց ու միանվագ հազար ռուբլի դրամ տվեց: Այս խնդրում մեծ դեր խաղաց նաև կոնսերվատորիայի ղեկավարությունը, իսկ Վարդան Սամվելյանը և Գևորգ Բուդաղյանը նրա համար ստեղծեցին հարմար պայմաններ:

Ահա նա, ամենօրյա ծառայողի նման, ճիշտ ժամին կրկին բարձրանում է «Արամի կաբինետը», ինչպես ինքն էր ասում: «Քիչ մնաց, ուստա Գոքոր, քիչ մնա՛ց,— սրտապնդեց նա ինքն իրեն,— բա կյանքի գագաթ ելնելը հե՞շտ գիտեիր»:

Նրան ամեն օր հոտնկայս էին դիմավորում, նա էլ խոնարհ գլուխ էր տալիս և բարին մաղթում բոլորին: Երբ օրվա անելիքն ավարտում էին, ու Վալյան սկսում էր մեքենագրել երգերի բառերը, Արամը վերանայում էր նոտագրածներն ու, երբեմն աչք գցելով տաղերգուի դեմքին, մտածում. «Ափսոս, որ մի քսան տարի առաջ չի եղել այս հիմնարկը, և Շերամի երգերը չենք ձայնագրել, ինչպես հարկավոր էր»:

Մի օր էլ կաբինետ բարձրացավ Վարդգեսն ու տեղեկացավ, թե ինչ վիճակում են գործերը: Քոչարյանը գովեց նրա հոր տոկունությունը, բայց դժգոհեց կաբինետի ունեցած հնարավորություններից:

— Հանճարեղ հայր ես ունեցել, Վարդգե՛ս Գրիգորևիչ... Եվ որտեղի՞ց են ծնունդ առել այդքան հիասքանչ տաղերը:

Արամի խանդավառությունից շոյված Վարդգեսը չկարողացավ շատ բան ասել:

— Բնաձին տաղանդ է, Արամ, մե՛ծ տաղանդ:

Քանի կաբինետի վարիչը խորանում էր ունեցածի նկարագրության մեջ, այնքան մոայլվում էր գուսանի որդին:

— Ի՞նչ ունենք, ախր. մի հնամաշ ֆոնոգրաֆ և տասի չափ գլաններ. ուղղակի դողդողալով եմ դրանք օգտագործում. ստիպված՝ լսողությամբ եմ գրում:

Վարդգեսը մի շարժում արեց, որ նշանակում էր՝ ծարահատյալ:

— Մի՛ մոռանա, որ հայրս ութսունին է մոտենում:

Շուտով հայտնի դարձավ, որ կաբինետը տեղափոխում են ընդարձակ մի սենյակ: Հենց հաջորդ օրը Շերամն այցելեց ու գոհունակությամբ ասաց.

— Էս ինչքա՞ն լավ տեղ եք էկել, Արամ ջան. տնես հեռու է, սրտես՝ մոտիկ:

Աշնան մի օր նա տխուր-տրտում մտավ կաբինետ, տնքալով նստեց ու խոսեց.

— Շատ հիվանդ եմ, Վալյա ջան: Բոլորովին գաղափար չունեի, թե սրտի ցավ կա: Ամառը թևերս կցավեին. գնացի բժշկի մոտ: Նա էլ վայ թե ինձ նման ծանծաղցած էր. թևերս նայեց, սիրտս քննեց,— ծաղրեց բժշկին,— ըսավ՝ սիրտդ թույլ է: Դրանից հետո սկսեցի ուշք դարձնել սրտիս. թե չէ՛... էս երգերը պտի թողնինք. ինչ գրվեց՝ գրվեց. էդ է... բաբախելն էլ մի կողմից:

— Սիրտը եղել է, որ բաբախի, Շերամ,— կատակեց Արամը:

— Իա՛, ամեն սիրտ էսպե՞ս կբաբախի, ի՞նչ կխոսիս: Հենց ջղայնանում եմ, բաբախում է անտերը: Վաթսուն տարի է գրում եմ, մասխարություն խո չէ՞: Երեխա եմ եղել՝ գրել եմ: Թուրքերեն էլ եմ հնարել, գիտե՞ս:

— Բա դրանք ու՞ր են,— հետաքրքրվեց Արամը:

— Եսի՞մ՝ ուր են... կորել են կամ մտիհան եմ արել:

Երբ գործն ավարտեցին, ու տաղերգուն ոտքի ելավ, Վալյան դիմեց նրան.

— Շերա՛մ, դու ինձ էնպես կսիրես, ինչպես աղջկադ՝ Արևին, չէ՞:

— Բա ի՞նչ. դու էլ իմ աղջիկս ես, Վալյա՛ ջան, ի՞նչ տարբերություն.— և սպասեց, թե էլ ինչ պիտի ասի բանաստեղծուհին:

— Որ էդպես է, իմ և ամուսնուս կողմից խնդրում եմ՝ կիրակի օրը գաք մեր տուն, ծաշի.— և չգիտես ինչու, կարմրեց. գուցե կարծում էր, թե բացասական պատասխան կստանա: Նրա շփոթմունքը փարատեց ինքը՝ երգիչը.

— Է՛, Արամն է՞լ պտի գա:

Արամը ժպտաց.

— Մեծ հաճույքով. ախր էստեղ քեզ լսելն որիշ է, ընտանեկան պայմաններում՝ ուրիշ: Համ էլ դու Վալլայենց տան տեղը չգիտես: Այս անգամ միասին կգնանք, իսկ հետո՝ դու մենակ:

Եվ կիրակի օրը Արամն ու Շերամը կանգնեցին Վալենտինա Մխիթարյանի տան շեմքին, որ Երևանի հին թաղամասերից մեկում էր գտնվում՝ Կոնդում: Նրանց դիմավորեց երգչին անծանոթ մի տղամարդ:

— Բարո՛վ եկաք, վարպետ, բարև, Արամ,— ողջունեց նա:

Շերամն աչքը գցեց ուղեկցի երեսին:

— Ռաֆիկն է,— նրա հայացքի իմաստը կռահելով՝ ճանաչեց Արամը.— Վալլայի ամուսինն է:

— Հա՛,— ձգեց երգիչն ու ձեռքը մեկնեց տանտիրոջը.— բարև, Ռաֆիկ ջան:

Սա թեթևակի զարմացավ անմիջապես մտերմականի անցնելու վրա, բայց երաժշտագետը կանխեց.

—Մեր վարպետն այդպես է, Ռաֆիկ, շուտ է մտերմանում... լավ մարդկանց հետ:

Հենց այդ պահին ամուսնու թիկունքից երևաց տանտիրուհին:

— Համեցեք, Շերամ... Վա՛յ, ի՞նչ լավ է, որ թառդ էլ ես բերել:

— Էս էլ իմ օգնականն է, Վալլա ջան, ինչպես որ դու՝ Արամի:

Այնպիսի հաճույք, ինչպիսին Արամը վայելեց այս տանը, երբեք չէր եղել: Տաղերգուի մենահամերգն այստեղ բոլորովին այլ գեղեցկություն ուներ: Շերամը շատ ցավեց, որ հաջորդ կիրակի Քոչարյանը չկարողացավ գալ Վալլայենց տուն: Այդ օրն Արամի տեղը բռնել էր Ռաֆիկի ընկերը՝ Վարդանը: Եվ սրա հետ էր, որ տեղի ունեցավ, թե՛ զավեշտական, թե՛ դաստիարակիչ այն դիպվածը, որ հետո ամուսինը՝ կնոջը, սա էլ Արամին պատմեց:

Ճաշից հետո, Ռաֆիկն ըստ իր սովորության, ուղեկցում էր Շերամին մինչև Էնգելսի փողոցը, ուր բնակություն էր հաստատել նա: Այս անգամ Ռաֆիկին միացավ Վարդանը: Եռյակն անշտապ ու քաղցր զրուցելով՝ իջնում էր Սպանդարյան փողոցով: Մի տան մոտ Վարդանը կանգ առավ: Կանգնեցին նաև երգիչն ու Ռաֆիկը:

— Ինչու՞ կանգնեցիր, Վարդան,— հարցրեց Շերամը.

— Վարպե՛տ ջան, մի բան պիտի խնդրեմ, բայց չնեղանաս,— թախանձեց նա:

— Ասա՝ տեսնեմ. թե գեշ բան է, պտի նեղանամ, հըբը ի՞նչ պտի անեմ:

Վարդանը մի փոքր հապաղեց, ապա խոսեց.

— Էն տունը տեսնում՞ եք,— ցույց տվեց։

— Տեսնում եմ, հետո՞։

— Ի՞նչ կլինի, գնանք մի քիչ էլ իմ տանը քեֆ անենք։

Շերամն անմիջապես չպատասխանեց։ Մի քանի անգամ ոտից գլուխ չափեց դիմացինին և անսքող զայրույթով նետեց.

— Ծո՛, ես խո զուռնաչի չե՞մ, որ փողոցից տուն կկանչես։

Ասաց ու թառի վիզը թևի տակ խեղդած՝ առաջ ընկավ։ Պոռթկուն քրքիջը հազիվ զսպելով Ռաֆիկը հետևեց նրան։ Մինչև Շերամին հասնելը, նա անվերջ տարուբերում էր գլուխը և ծիծաղելով ետ-ետ նայում տեղում քարացած Վարդանին։

— Տե՛ղն է դրան,— զայրալից ծիծաղով արձագանքեց կինը, երբ Ռաֆիկը պատմեց տեղի ունեցածի մասին,— մարդը բարձր արժանապատվություն ունի, հո ային-օյին չալղծի չէ՞։ Իսկ դու գիտե՞ս նրա մասին ինչ է ասել գյումրեցի նվագածուներից մեկը։

— Ի՞նչ է ասել, հետաքրքիր է,— լրջացավ ամուսինը։

— Ասել է, թե Շերամը մեռելի վրա նվագե՞ր... էդպես բան չկար։ Հապա մի ասեիր, թե՝ էս ռեստորանից էն ռեստորանը նվագելով էրթանք, չեղած բան էր։ Թառը կմտցներ շապկի մեջ, կելներ ու կերթար։

— Իհարկե, ճիշտ է արել.— Ռաֆիկը տեղից ելավ ու սենյակում քայլելով, բացականչեց.— ի՞նչ մարդ է, Վալյա, ինչ հոյակա՛պ մարդ է՝ բանաստեղծ, երգաստեղծ, երաժիշտ... իսկական մարդ։

— Ռաֆի՛կ,— ամուսնու հետաքրքրությունը նորից գրգռեց կինը,— Լենինականում մի նկարիչ կա՝ Գուրգեն Կարապետյան։ Նա պատմում էր, թե իր պապը, որ շատ մոտ է եղել Գրիգոր Տալյանի հետ, ասել է, թե հանդեսի ժամանակ Գոքորին խնդրում էին կրկնել երգը, մերժում էր, մի ուրիշն էր կատարում։ Սա էլ չէր կրկնում, այլ իր մեկ ուրիշ երգն էր երգում։

— Ա՛յ քեզ հետաքրքիր մա՛րդ...

Մի օր էլ կաբինետ եկավ Դանիել Ղազարյանն ու տեսավ, որ Արամը դաշնամուրով փորձում է նոտագրածը, իսկ Շերամը մի կողմ նստել ու լսում է։ Դռան ճայնի վրա դարձավ իր վաղեմի բարեկամին.

— Դանիե՛լ ջան, բարով տեսանք։

— Բարև, Շերամ, էս ի՞նչ ես անում։

Տաղերգուն խնդաց.

— Մինչև հիմի ես կերգեի, սրանից հետո թուղթը պիտի երգե: Ծիծաղեցին. իսկ Արամը հարցրեց.

— Ի՞նչ է, վարպետ, վա՞տ եմ գրել:

— Չէ, չէ, Արամ ջան, ի՞նչ ես ասում. Դանիելը, Վարդգեսը, Քրիստափորն ու դու որ չեղնեիք, երգերս քամին տարել էր:

4

Քաղաքային այգին շուտ արժանացավ Շերամի տեսությանը: Գրեթե ամեն օր, ձայնագրության կամ տաղուսույցի գործին գնալուց առաջ, նա գալիս էր իր տարեց ընկերների մոտ: Այդ օրն էլ նրանք այնպես վրա պրծան, որ միմյանց հերթ չէին տալիս, թե առաջինն ով ողջունի նրան:

— Ո՞րդի ես ապրում, Շերամ,— հարցրեց թիֆլիսեցի Վանոն:

— Էնգելսի փողո՛ց... որ համարն է՞ր,— փորձեց հիշել երգիչը:

— Տասնվեց, ուստա՛ Գոքոր,— հիշեցրեց նստարանին մոտեցողը:

— Արծրու՞ն, դու՞ ես... է՛, դու պալատիս համա՞րն ինչ տեսար:

— Էն օրը ցույց չտվի՞ր:

— Հա՛, վա՛յ, ծիշտ է: Ջահելը դու ես, հըմը արի՝ նստի. ես պտի էրթամ:

— Էսքան շուտ ու՞ր կերթաս,— հարցրեց Գեղամ Եսայանը:

— Քանի ձենս չէ կտրել, կուզեն նոտաներով գրեն, որ հետո դուք առանց ինձ ականջ անեք,— պարզաբանեց Շերամը:

— Էդպես մի՛ խոսի, ուստա Գոքոր,— հակաճառեց Գեղամը:

— Ի՞նչդ կուզես խոսի, վերջն էդ է, վարժապետի՛ս տղա:— Ու դանդաղ քայլերով գնաց Նալբանդյան փողոցի կողմը:

Արամ Քոչարյանն այդ օրը չէր եկել գործի: Եվ տաղերգուն քայլեց դեպի ֆիլհարմոնիա: Այդ տարին հաստատության կառավարիչն էր կոմպոզիտոր Մարտին Մազմանյանը:

Շերամը ներս մտավ այն ժամանակ, երբ Մազմանյանը տաք-տաք վիճում էր մեկ-երկու աշխատակցի հետ: Նա տեսավ գուսանին ու գլխով արեց, բայց սա անհարմար զգաց. ետ դարձավ, որ գնա:

— Վարպե՛տ, ու՞ր ես փախչում.— ձայն տվեց նա. աշխատակիցներն էլ շուռ եկան ու տեսան նրան. և կառավարիչին նշաններով հասկացրին, թե՝ հետո կգան հարցերը լուծելու: Երբ սրանք միջանցք ելան, Շերամն ասաց.

— Ընչի՞ դուրս արեցիր, Մարտիրոս ջան, ես քեզի տեսնելու եմ եկել մենակ։

— Արի, ջա՜նմ, նրանք հետո էլ մտնեն՝ կլինի. բա հո քեզ չէի՞ կարող ետ դարձնել։— Եվ տնօրենը ցույց տվեց աթոռը։ Շերամը նստեց ու հարցրեց.

— Ի՞նչդ ես, Մարտիրոս ջան։

Մազմանյանը ժպտաց.

— Լավ եմ, վարպե՛տ ջան, դու՞ ինչդ ես։

— Փա՛ռք աստծու... բայց մի քիչ հիվանդ եմ։— Ու վեր կացավ։— Էրթամ, Մարտիրոս ջան, դու էլ շատ գործ ունիս։

Եվ գնաց։

Այսպես՝ ամեն օր։ Տաղուսույցի գործից հետո կամ այգի մտնելուց առաջ Շերամն անպայման այցելում էր Մազմանյանին, ջերմ խոսք ու զրույց ունենում հետը։ Մի օր էլ Մարտինն ասաց.

— Վարպետ, կարո՞ղ ես ինձ հետ ոտանավորով խոսել։

Վարպետը մի պահ մտածեց ու պատասխանեց.

— Կարող եմ, մենակ թե՛... սիրո մասին կեղնի.— ու քթի տակ ծիծաղեց, հետո հանպատրաստից ոտանավոր արտասանեց։ Երկուսն էլ անչափ ուրախ էին։

Երկու օր անց ֆիլհարմոնիայի տնօրենին այցելեցին Վարդգեսն ու կինը։ Մազմանյանի աշխատասենյակում խոսք բացվեց տաղերգուի մասին։

— Վարդգե՛ս Գրիգորևիչ, առաջին անգամ է, որ ծանոթանում եմ մեր գուսաններից ամենապայծառ մեկին, և դա Շերամն է։ Իմ ու վարպետի տարիքներն ինչքան տարբեր են, չէ՞։— Վարդգեսը դիմախաղով հասկացրեց, թե՝ պարզ է։— Աշուղ է, թե ով է, Շերամը շերամի էլ քայլվածք ունի՝ հանդարտ, խոհուն։ Դեմքին որ նայում ես, ոնց որ անընդհատ ստեղծագործում է։ Եվ գիտե՞ս, որ նրա ամենօրյա այցելությունը ապշեցուցիչ կերպով տրամադրում է աշխատելու, մարդկանց նկատմամբ բարի լինելու, բարի գործ կատարելու մարդկանց համար։ Մի անգամ էլ եկավ, թե՝ Մարտիրոս ջան, մե լավ երգմ էի գրել. պետք է բերեի քեզ, որ երաժշտեիր, Վարդս ձեռքես առավ։

— Էդպես էլ ասեց, հա՞՝ երաժշտեիր,— ծիծաղի արանքում հարցրեց Վարդգեսը։

— Հա՛, հենց այդպես։— Ու երեքն էլ քահ-քահ ծիծաղեցին։ Մեկ էլ դուռը բացվեց ու շեմքին կանգնեց Շերամը։— Վա՛հ,— վեր թռավ տնօրենը,— դու ե՞ս, վարպետ ջան։

—Ես եմ, բա ո՞վ է: Մերոնց ընչի՞ ես էդքան պահել, Մարտիրո՛ս ջան. էնտեղ մարդիկ տղիս կսպասեն:

Վարդգեսն ու Շահանդուխտը մոտեցան ելքին:

— Դու՞ ուր ես գնում, վարպե՛տ,— հարցրեց Մազմանյանը:

— Իա՜, բա չլսե՞մ, թե ինչդ կերգեն երգերս.— դռան մեջ շուռ եկավ.— տեսնիմ կարգին կփչացնե՞ն...

Մարտինն այնպես քրքջաց, որ ծանր բազկաթոռը տակը ճռռաց:

Փորձից հետո Շերամը գնաց այն ճաշարանը, որտեղ երբեմն հավաքվում էին նվագածուները: Նա մոտեցավ մի սեղանի, որի շուրջը նստած էին երեք հոգի: Սրանցից մեկը ոստնեց ու, դեմ վազելով՝ համարյա գրկեց երգչին:

— Վա՛յ, ուստա Գոքոր, էս ի՞նչ հանդիպում էր...

— Էլ ընչի՞ վայ, Սենո ջան, հա՛մ ուրախ ես, հա՛մ տխուր,— ձեռ առավ տաղերգուն:— Է՞, ասա տեսնիմ, Սենո-Սերոժ, ի՞նչ ես անում էստեղ:

— Մի քիչ գործ կա, վարպետ ջան... Է՛, ինչքան ենք իրար հետ նվագել Թիֆլիս, Լենինական, չէ՞:

— Լավ ես միտքդ պահել, քաչալ ջան:

— Ի՞նչ կուզես ինձ ասա, մենակ թե մի երկու երգդ նորից սորվեցրու:

Եվ Սենեքերիմը հանեց դափն ու նրբորեն տպտպացնելով երգեց.

Լուսնյակը ելավ, լուսնյակը ելավ,
Երկինքն ամպոտ է, ամպոտ է...

Ամառային ճաշարանում հավաքվածները սսկվեցին, կարծես ջրվեժի շառաչը միանգամից կտրվեց: Բոլորը դարձան նվագածուի կողմն ու անծպտուն ականջ դրեցին:

— Էս երգը մեր Շարան էլ շատ կսիրե,— շշնջաց տաղերգուն, երբ Սենեքերիմը կրկնեց:

— Էս ի՞նչդ ես գրել, ուստա՛ Գոքոր, մարդ չի հասկնա:

Շերամը միմիայն ավելացրեց.

— Էգուց էլի արի, Սենո ջան. մի երգ եմ գրել, դրանից լավն է:

— Տո՛, առավոտից իրիկուն քու գերիդ եմ, վարպետ,— հուզված բացականչեց դափահարն ու նորից կլկլացրեց սիրած տաղի կրկներգը.

Շերամը վեր կացավ ու լռության ուղեկցությամբ քայլեց դեպի քաղաքային այգի:

Թևավոր մտքերը նրան տանում էին իր տարեկիցների մոտ...

— Իմ հոգին էլ լացացրեց էդ հասարակ դաֆչին...

Դափահարը երկար նայեց նրա ետևից: Նա հիշեց, թե ինչպես Թիֆլիսում աշխատավարձով էին գործ անում, իսկ Շերամն ասում էր.

— Կարիք ունի՞ք՝ փող կուտամ. աշխատավարձին մի՛ սպասեք:

Ու Սենեքերիմը դափը մոլուցքով մտցրեց պատյանի մեջ ու գոչեց.

— Էսպես մարդն էլ պտի մեռնի, հա՞... Վա՛յ, աշխարհք, քանդվի էլի, աստծուդ հետ միասին...

Նրան չհետևեցին իր սեղանակիցները. թող միայնակ տառապի իր ապրումներից՝ հոգին կթեթևանա:

Շերամը երկար չմնաց այգում:

Խոհերը, ծռնչացող սայլի պես, առաջ էին ընկել ու նրան քաշում էին անհայտ հեռուներ: Արդյո՞ք իր հոգին կհասկանան գալիք սերունդները, արդյոք կբարձրացնե՞ն իր անունը և կկանգնեցնե՞ն մեծամեծ տաղերգուների շարքը:

Եվ նա լուսեղեն վաղվա հույսերով քայլեց դեպի տուն:

5

Աշնանը տաղերգուին անսպասելի հրավիրեցին Լենինական:

Մեկնելու նախօրյակին իմացավ, որ Փարիզում վախճանվել է Կոմիտասը:

Գնաց Վարդգեսենց: Որդին տանը չէր: Բարևեց հարսին ու նստեց սպասելու: Ջրույցն սկսեց սովորական հարցուփորձից: Շահանդուխտը տեսավ, որ կեսրայրը մռայլ է, հարցրեց.

— Ի՞նչ է եղել, հայրիկ:

— Կոմիտաս վարդապետն է վախճանվել, Շահան: Գարնանը՝ մեր պաշտելի Ռոմանոսը, հիմի էլ սուրբ Կոմիտասը:

— Է՛, ի՞նչ կարող ես անել:

— Ուրեմն մենք էլ հեշտ ու հանգիստ ըսենք՝ ինչ արած, հա՞:

— Դե՛... բա ի՞նչ,— հարսը ժպիտը խաղեց:

— Չեղավ, Շահան ջան, չեղա՛վ... Թող լուսահոգի հերրդ՝ Տեր-Ներսեսը կենդանի լիներ ու դու էդպես բան ըսեիր...

Այդ րոպեին Վարդգեսը եկավ։

— Ի՞նչ է եղել, հայրիկ։

— Ի՞նչ պտի էղնի, Շահանը կըսե, թե ի՞նչ կարող ենք անել, որ Կոմիտասը մեռել է։

Վարդգեսն առերևույթ կշտամբանքով նայեց կնոջը, իսկ Շերամն ընդվզեց.

— Դու գիտե՞ս նա ինչ դեր է խաղացել իմ, մյուսի՝, մեկէլի կյանքում, Շահանդու՛խտ թագուհի,— և շեշտակի նայեց հարսին։

Որդին լուռ լսում էր։ Հայացքից երևում էր՝ հիանում է հոր ընդվզումով։ Երբ հայրն ավարտեց իր խրատականը, նա հարցրեց.

— Հիմա ի՞նչ ես ուզում։

—Ի՞նչ պիտի ուզեմ. եկել եմ՝ իմանամ, թե Կոմիտասի աճյունը ե՞րբ պտի բերեն հայրենիք։ Ախր ոտանավոր եմ գրել նրա հիշատակին։ Թարսի պես ընձի էլ կանչել են Լենինական։

— Մինչև Կոմիտասի աճյունը բերեն, կգաս կհասնես։

— Գրա՞ծս ինչ անեմ։

— Կտաս ինձ, տեսնեմ որ թերթը կտպի։

Երկու օր է, որ նա հարազատ քաղաքում է։ Հենց առաջին կեսօրին մտավ նվագածուների հավաքատեղին։ Եվ այնպիսի աղմուկ բարձրացավ սրահում, որ փողոցով անցուդարձ անողները զարմացան։ Շերամը չէր հասցնում նույնիսկ բարև տալ։ Մեկի գրկից ազատվում էր, ընկնում էր մյուսի բազուկների ակցանի մեջ, սրանից պոկվում, դեմ էր առնում ժպտուն դեմքերի։ Վերջում նրան ծամփու դնելու դուրս եկան բոլորը՝ երգ ու տաղով։

Երբ Շերամը տուն էր դառնում շուկայի մոտով, նրա դեմ կանգնեց Երազգավորսում ապրող ավագ քենու փեսան՝ դստրիկի ձեռքից բռնած։

— Վա՛յ, Գոքոր ջան, էս... էս ի՞նչդ որ...

Եվ նա ու երգիչը գրկախառնվեցին։ Ապա տաղերգուն կռացավ ու համբուրեց քենու թոռանը։ Նրա աչքից չվրիպեց, որ աղջկա մազերը կարճացրել են։

— Էս ի՞նչ անուշ աղջիկ ունիս, Վաղարշակ ջան. բայց որ մազերը մի քիչ շատացնի, իսկական հայի աղջիկ կեղնի։— Ապա դարձավ փոքրիկին.— Լենա՛ ջան, բալիկս, բանտիկդ էլ որ քիչ վերև կապես, ավելի սիրուն կլինի։

6

Շերամը շատ անտրամադիր բարձրացավ վագոն: Ո՛չ ծափահարությունը քաղաքային ակումբում, ո՛չ եղբոր կնոջ՝ Սոֆիկի և նրա զավակների աղաչանքը, թե՝ շուտ-շուտ արի, և ոչ էլ նվագածուների թախանձանքը չուրախացրին նրան. Նա հեռանում է հայրենի քաղաքից, և մի խոհ անվերջ ծնշում է հոգին. մի՞թե ինքը վերջին անգամ ոտք դրեց իր տաղարանի, իր բուռն սիրո ծաղկման օրրանը, մի՞թե հեռանում է ընդմիշտ Գյումրի քաղաքից...

Երևան ժամանելու հաջորդ օրը Շերամն շտապեց քաղաքային այգի: Տարեցների խումբը ներկա էր լրիվ կազմով: Միայն Գրիգոր Դուրգարյանը չկար: Ասացին, թե գնացել է Լենինական՝ որդու ուսման գործերով զբաղվելու: Արծրունն էլ շուտով պիտի գնա: Ու երբ երգիչն իմացավ, որ Արամն էլ է եկել իրեն տեսնելու, արագ քայլերով հեռացավ այդտեղից: Պարզվեց, որ կաբինետի վարիչը Վարդգեսին զարմանքով հարցրել է թե՝ դա ի՞նչ ծերակույտ է, նա ասել էր՝ իհարկե, Հռոմինը չէ, բայց, այնուամենայնիվ, ծերակույտ է: Ու տեղն էլ ցույց էր տվել:

Կաբինետը Շերամին դիմավորեց հարգալից ցնծությամբ:

— Է՛, չպրծա՞նք մեր գործը, Արամ ջան,— հարցրեց տաղերգուն:

— Ուզում ես, որ շու՞տ վերջացնենք:

— Չէ, ընչի՞... հը՞մը՛... Մարտիրոսն էսօր գիտե՞ս ինչ ըսավ:

— Ի՞նչ:

— Ըսավ՝ ուսանողներդ ավելացել են, վարպետ, ավելի շատ պտի պարապիս:

— Ուրեմն կոնսերվատորիայի ֆիլիալ ես բացել,— կեսկատակ մեջ գցեց Վալյան:

— Էդպես դուրս կուգա. ինչքան ջահել երգիչ գիտեք, ուղարկեք քովս,— զվարթ ասաց Շերամը,— բոլորին էլ կընդունեմ առանց քննության:

Սրտաբուխ ծիծաղն ասես թարմացրեց սրահի օդը:

Այս օրը Մազմանյանի սենյակում տաղերգուն հանդիպեց որդուն. սա դիմեց հորը.

— Հայրի՛կ, էգուց առավոտ որ գաս էստեղ, քեզ կծանոթացնեմ մի նոր երգչուհու հետ. շատ է ուզում սովորել քո երգերը:

— Ո՞վ է որ:

— Շողիկ Սկրտչյանն է. մեր ուսանողուհիներից:

— Զենն էլ անվան պես լա՞վ է:

Վարդգեսը պատասխանեց.

— Վարժապետը դու ես, հերըս, դու պիտի ստուգես:

— Է՛, վարժապետը ես եմ, պրոֆեսորն էլ դու ես...

Ուշ առավոտ էր, երբ Շերամը, նվագարանը կողքից կախ՝ անցնում էր քաղաքային այգու ծառուղիով: Տարեցները ոտքի կանգնեցին: Երգիչը զարմացած նայեց նրանց:

— Բարի լու՛յս, տղերք. ես ընչի՞ ոտքի ելաք որ:

— Իշխանը որ կանցնի, պտի ոտքի ելնել, ուստա Գոքոր, հըբը ի՞նչ,— պատճառաբանեց Ալեքսոն:

— Մեզի էնպես թվաց, թե էստեղ պետք է նստես ու նվագես, վարպետ,— անհամարձակ խոսեց խմբի նորեկներից մեկը:

— Չէ՛, երիտասարդ. մի օր մեկնումեկիդ տանը կհավաքվեք, ես էլ կուգամ ու ձեզ կուրախացնեմ. հիմի կարևոր գործի կերթամ: Մե աղջիկմ կպել է, թե երգերդ սորվեցրու:

Շողիկ Մկրտչյանի հետ զրուցելիս Շերամն ասաց.

— Որդիս՝ Վարդգեսն ըսավ, թե քեզի կուզեն օպերայի երգչուհի դարձնեն, ճի՞շտ է:

— Ամա՛ն, Շերամ, ես օպերայի հետ գլուխ չունեմ, ես ուզում եմ ժողովրդական և աշուղական երգեր կատարեմ. շատ եմ սիրում: Սպիրիդոն Մելիքյանին ճանաչու՞մ ես,— հարցրեց:

— Շատ լավ: Ի՞նչ է որ. էն է՞լ է դեմ, որ ժողովրդական երգես:

— Չէ՛, բայց պահանջում է, որ առանց նոտաների չերգեմ:

Տաղուսույցը խնդաց և առաջարկեց.

— Լա՛վ, մի պատմի, թե որտեղից ես եկել Երևան:

— Երևան եկել եմ Լենինականից՝ Պոլիգոնի որբանոցից, սրանից մի քանի տարի առաջ:

— Ըսել է, թե քիչմ գլումրեցի ես, էլի,— ընդհատեց տաղերգուն:

— Հապա ի՞նչ. քիչմ չէ, շա՛տմ,— վանեցու սրամտությամբ մեջ գցեց Շողիկը.— Աբովյանի անվան դպրոցն ավարտեցի թե չէ, ընդունվեցի կոնսերվատորիա: Մելիք-Վրթանեսյանն ինձ 25 ռուբլի թոշակ նշանակեց:

— Էդ ինչքա՞ն շատ է տվել:

— Ուզում է հազար նշանակի, ես օպերայի երգչուհի չեմ դառնա. պրծավ գնա՛ց:

Ծերունի գուսանը նվագարանն առավ կրծքին և ստուգեց լարումը:

— Լավ, դու չե՞ս ուզում ինձ հետ պարապել, Շերամ:

— Ո՞վ ասաց... Հիմի մի երգ կսովորեցնեմ, երգե՝ տեսնիմ. «Նա մի նազ ունի» լսե՞լ ես:

— Շատ եմ լսել և անչափ սիրում եմ:

— Հիմի ես կնվագեմ ու կերգեմ, հետո՝ դու:

Եվ Շերամը մատների աշխույժ խաղով ասես տնտղեց նվագարանի լարերն ու երգեց: Շողիկը կախարդված նայում էր նրան ու հետը մեղմաձայն դնդնում: Նա էլ ուշի-ուշով հետևում էր երգչուհու շրթունքների շարժմանը և փորձում որսալ՝ հո սա էլ չի՞ կրկնում այն աղջկա սխալը: Երբ Շողիկը կատարեց նրա պահանջը, նա գոհ սրտով ասաց.

— Էս ի՞նչ ձայն ունիս, աղջիկս. անվերջ գալիս է:

— Մշակել եմ, չէ՞, Շերամ:

— Է՛, բնականից որ չլինի, մշակելը չի փրկի,— հիշելով Ավետիք Իսահակյանի խոսքն իր ոտանավորի մասին, նկատեց տաղերգուն:— Ես էլի երգեր ունիմ, կսորվեցնեմ:

Այդ օրը փորձեցին նաև «Քեզանից մաս չունիմ», մյուս օրը՝ «Ամեն երեկո, ամեն առավոտ» տաղը: Հետո Շերամը հաճախ էր գնում Շողիկենց տուն ու նոր երգեր սովորեցնում, իսկ տանտիրուհին նրան հյուրասիրում էր իրենց հսկա ծառից քաղած ծիրանով:

— Էս ծիրանի պես անուշ էղնիս, Շողի՛կ ջան,— ծաշակելով պտուղը, մաղթեց գուսանը և ապա խորհուրդ տվեց.— դու լավ կանես մի տետրակի մեջ գրես երգերս: Ես էլ որ գոյություն չունեցա, քեզ համար երգարան կլինի:

Շողիկը զայրացավ.

— Ի՞նչ ես չարախոսում քեզ վրա, ա՛յ մարդ...

Մի օր էլ, երբ պարապմունքը վերջացրին, ու տաղուսույցը մեկ-երկու անգամ կրկնել տվեց «Սիրուն ես, հոգյակ» երգը, Շողիկը հարցրեց.

— Շերամ ջան, ա՛յ մարդ, դու առանձնապես սիրուն չես եղել, բայց էդ ինչքա՞ն սեր ես ունեցել. ինչի՞ց է:

Վարպետը զննաբար նայեց նրան ու պատասխանեց.

— Աղջի՛, ճիշտ է, սիրուն չեմ եղել, բայց էնպես սիրահարական բաներ եմ գրել, որ ինչքան սիրուն կար, չորս բոլորս կֆըռֆըռային:

7

Արտակարգ ուրախ էր այդ օրը քաղաքային այգում: Պատճառը և՛ աշնան արևն էր, որ հաճելի ջերմություն էր տեղում տարեցների ուսերին, և՛ կապույտ երկնքում դեռևս ճախրող ծիծեռնակները. ծառուղիներն էլ բազմամարդ էին: Այս ամենին ավելացավ և այն, որ Շերամը շուտ էր եկել այգի: Իսկ նրա «տնօրինեքը» երկար չէր տևել. անուշ-բարիշ զրույցը Մարտիրոսի մոտ՝ հինգ րոպե, դստեր տան խոսքն ու կատակը մի տասը րոպե, քրոջ տանը՝ մի երկու րոպե, այնուհետև ռադիոյի երաժշտական բաժնում հետագա անելիքների ծրագրում՝ քսան րոպե... Եվ ահա նա իր տարեկիցների կողքին է:

Բոլորը լուռ լսում են, թե իրենց ավագն ուր է գնացել և ինչ գործեր է գլուխ բերել:

— Մարտիրոսն ասավ, թե մի երգիչ էլ է ավելանալու աշակերտներիդ թվին,— զեկուցեց Շերամը.— ռադիոյի աշուղական անսամբլից է. Վաղարշակ է, թե՞ Վաղինակ է անունը, չգիտեմ:

— Վայ թե Վաղարշակ Սահակյանն է, ուստա Գոքոր,— պարզաբանեց Արծրունը:

Հետո տաղերգուն առանձին ջերմությամբ խոսեց դստեր, փեսայի, թոռների մասին, քրոջ մասին:

Ապա նա երազկոտ ու անշտապ ասաց.

— Գիտե՞ք, քույրերը երկնքից իջած հրեշտակներ են: Ծո՛, վայթե դրանք մենակ սրտից ու հոգուց են ստեղծված. էդպես էլ իմ քույրը:

Մի րոպե բոլորը խորհեցին իրենց քույրերի մասին, իսկ նա վեր կացավ ու քայլերն ուղղեց դեպի Սվերդլովի փողոց:

Խմբին մոտեցավ պնդակազմ ու լիքը-լիքը մի մարդ. դա խմբի նոր անդամն էր՝ Գևորգ Արամյանը:

Այդքան համերաշխ հավաքույթ տարեցները երբեք չէին ունեցել:

Սակայն մյուս օրվա ասուլիսն էլ պակաս աշխույժ չէր: Ճիշտ է, Շերամը մի փոքր ուշացավ, բայց հենց ոտք դրեց այգի, ծիծաղելով մոտեցավ ընկերներին: Սրանք հետաքրքրվեցին նրա ուշացման հանգամանքներով, իսկ նա բազմեց նստարանի մեջտեղն ու շարադրեց.

— Բանն էսպես եղավ, տղե՛րք...

... Շերամը մտավ ֆիլհարմոնիա, այցելեց Մարտիրոսին, ապա-ելավ միջանցք ու քայլեց այն սենյակի կողմը, որտեղ սովորա-բար ինքը պարապում էր երգիչների հետ: Ու հենց որ թեքվեց անկյունից, ականջին հուզումնալից մի ձայն հասավ: Երգողը տղամարդ էր: Կանգնեց ու սկսեց լսել: Ապա մեղմ ձայնակցեց ան-ծանոթ երգչին, հետո, թե՝ օհո՛, սա ընձեն անցա՛վ...

Սերից էրված պապակ սրտիս
Նորեն դուն էլ կրակ զարկիր,
Արնոտ վերքիս, խորունկ վերքիս
Մահլամի տեղ դանակ զարկիր..

երգում էր տղան: Շերամն ուշադրությունը լարեց.

Վառավ, լա՛ր, սիրտս, ջիգյարս,
Կոտրվեց սազս, քնարս..

«Ջա՜ն, ջա՛ն, դուրբան, էդ ի՜նչ աղբյուր է կոկորդդ, ա՛յ ջա-հել...», ցածրաձայն գովեստն ուղղեց երիտասարդին: Այդ վայր-կյանին երգիչն իր ձայնը մեղմացրեց.

Ձեռքես թռար, ո՞ւր գնացիր,
Իմ կյանքի տերը, սարդարը...

Մոտեցավ դռանն ու զարմանքով թոնթորաց. «Խեղճ տղեն գործիք էլ չունի. չեղա՜վ, ընկեր Մազմանյան...»,— դժգոհեց, բայց դուռը չբացեց. ցանկանում էր երկարացնել հաճելի պահը: Անաղ-մուկ մոտեցավ տնօրենը և Շերամի ականջին շշնջաց.

— Լավ է երգում, չէ՞, վարպետ:

Տաղերգուն ետ չնայեց, զգաց, որ Մարտիրոսն է, որովհետև միայն նրան էր թույլ տալիս իրեն վարպետ կոչել:

— Էս տնաշենի տղեն էնպես կերգե, որ իմ սիրտն էլ լցվավ, Մարտիրո՛ս ջան:

Մազմանյանը զույգ բազուկներով գրկեց վարպետի ուսերը: Իսկ երբ ներսի երիտասարդը հուզմունքով հնչեցրեց տաղի շա-րունակությունը, տնօրենը բացականչեց.

Եթում էի հորից, մորից,
Շքիդ հովին էի ապրում,
Բլբուլ դառած, լա՛ր, քո էշխից,
Միշտ ազատ սեր էի երգում.

Տնօրենը բացականչեց.

— Հրաշալի՜ է, հոյակա՜պ է...

Գուսանը դարձավ նրա կողմը.

— Է՜, խանգարեցիր, Մարտիրոս ջան:

Ջահել երգիչն անմիջապես լռեց: Տնօրենը թափով բացեց դուռն ու Շերամի հետ ներս մտավ:

— Շատ լավ էր, Վաղարշակ, ապրե՛ս,— գովեց նա:

Երգչի դեմքը լուսավորվեց ժպիտով: Նա նույնիսկ կարմրեց, նետվեց դեպի տաղերգուն ու անհամարձակ սեղմեց ձեռքը:

— Ձեռքդ էլ ձենիդ պես զորեղ է, Վաղարշա՛կ ջան,— ասաց քնքշացած ծերունին.— բայց լավ կեղնի, որ ուժդ խնայողաբար ծախսես:— Վաղարշակը զույգ ձեռքն էլ խաչեց կրծքին ու գլուխը խոնարհեց:— Ո՞րտեղացի ես, Վաղարշակ ջան,— հարցրեց Շերամը:

— Պարսկաստանից:

— Շարժուձևիցդ էլ կերևա:

— Դե՛, հիմա դուք գիտեք, վարպետ,— ասաց Մազմանյանն ու գնաց:

Վաղարշակն աթոռ հրամցրեց: Շերամը բախտավորված մարդու դիրքով բազմեց, նվագարանը սեղմեց կրծքին և հարցրեց.

— Սկսենք, չէ՞, երգիչ ախպեր:

— Ես պատրաստ եմ, վարպետա՛ց վարպետ:

— Ա՛յ տղա, էլ ի՞նչ սովորեցնեմ քեզ՝ դու կարգին երգիչ ես, էլի,— գովեց տաղուսույցը, իսկ մտքում ասաց. «Իր երկրի լեզվով կխոսի»:

— Ձէ, չէ՜, մե՛ծն Շերամ. երեխա ժամանակից երազում էի սովորել գյումրեցի Գոքորի աննման երգերը. այսօր երազանքս կատարվելու է, չէ՞...

— Ճիշտ է, Վաղարշակ ջան. դու և մեկէլները պտի ծաղկեցնեք իմ անջուր պարտեզը:

Այս պատմությունն այնքան ազդեցիկ էր, որ ծերակույտը մի քանի րոպե լռեց. ապա Գևորգը հարցրեց.

— Լա՞վ երգիչ է Վաղարշակ Սահակյանը:

— Էնպես մտավ հոգուս մեջ, Գևո՛րգ ջան... Էնոր մասին որ գեշ բան ասեմ, լեզուս կչորնա: Է՜հ, ես էրթամ տուն. էսօր էսքանն էլ հերիք է:

Շերամը շարունակեց տաղուսույցի գործունեությունը: Ճիշտ է, արդեն զգացվում էր հոգնածությունը, բայց նա չհրաժարվեց դրա-

նից: Երբեմն Վարդգեսն ուղեկցում էր նրան և նստեցնում սրահի մի անկյունում, իսկ ինքը պարապում երգիչների հետ:

Մի օր էլ, երբ հայր ու որդի դանդաղ գնում էին «Շերամի կոնսերվատորիան», Վարդգեսն անցած մի դեպք հիշեցրեց. ուզում էր փարատել հոր լռակյաց տրտմությունը:

— Մի՞տքդ է, թե ինչպես ձայնագրվեց քո մի երգը Արևենց տանը՝ «Ալղանադ դուշ ես»:

— Ի՞նչ էղավ որ:

— Խեղճ Արամը ֆոնոգրաֆը, գլանները... ամեն ինչ շալակած եկավ, որ հանգիստ ձայնագրի: Դու եռանդով սկսեցիր. նա էլ ուշադիր լսում էր ու հետևում ֆոնոգրաֆին, մեկ էլ բառերը մոռացար:

— Դե, ծերությունն էդպես բան է... Մի դեպք էլ եղավ Քուշնարովի ժամանակ, միտքդ կուգա՞,— և նվագարանը որդու ձեռքից վերցնելով՝ ասաց.— Էսօր դաս շատ ունիս, չէ՞:

— Ունեմ, հայրի՛կ,— հիշեց որդին ու նայեց ժամացույցին:

— Գնա, Վա՛րդ ջան, չուշանաս. էսօր մենակ յոլա կտանիմ:

Շերամը մտավ ներս ու մտովի հաշվեց, թե Վաղարշակը քանի երգ է յուրացրել արդեն: Սրահում երգիչը կրկնում էր երեկվա սովորածը.

Միշտ քեզ եմ սիրել, հոգիս նվիրել,
Էդ անուշ լեզուդ խելքս է տարել. .

Տաղերգուն երկու մատի ճլթոցներով կարգավորում էր ռիթմը.

— Հե՛յ գիտի,— ընկնելով աթոռին, արտաբերեց տաղերգուն,— քանի տարվա երգ է:

Շերամի պարապմունքները միշտ էլ անցնում էին զվարթ կատակներով. բայց մի անգամ այնքան անսպասելի բան տեղի ունեցավ, որ երգչի լեզուն կապ ընկավ: Փորձում էին «Ջան, տիկին» երգը: Եվ Վաղարշակը ոգեշնչված կատարեց: Վարպետը զարմանքից դադարեցրեց նվագակցելը և ինքն էլ երգեց.

Զուկը դրիր՝ խաշեցիր,
Կաթի սերը քաշեցիր,
Անուշ-անուշ խոսելով,
Բոլոր կյանքս մաշեցիր:

Ու երբ երգիչը կանգնած էր վարժապետի դիմաց և սպասում էր նրա խրախուսանքին, Շերամը տարավ-բերեց և այնպիսի մի ապտակ շրխկացրեց նրա դեմքին, որ երիտասարդի աչքերը ար-

ցունքով լցվեցին: «Ինչի՞ համար»: Շերամը ծիծաղեց ու ոտքի կանգնելով խոսեց.

— Վաղարշա՛կ ջան, գիտե՞ս, էսիկ աշուղական օրենք է. ուստեն աշկերտին պտի սիլլե և անուն դնե:— Երգչի դեմքին նորից շողաց ժպիտը:— Քու անունդ ես կդնեմ աշուղ Շավաղի. իմ սիլլեն ուստի սիլլա է, չնեղանաս:

Վաղարշակն այնքան պինդ գրկեց վարպետին, որ սա շնչասպառ բողոքեց.

— Ծո՛, ի՞նչ կենես, Շավաղի. հըլը էնքան երգ ունիմ սովորեցնելու՛...

Եվ Վաղարշակ Սահակյանի մականունն այդպես էլ մնաց:

8

Ուշ աշուն էր: Անձրևոտ այգու ծառուղիով անցնողները ծուռծուռ նայում էին երկար նստարանին, որի վրա, ամռանն ու աշնանամուտին, կողք կողքի նստում էին տարեց մարդիկ: Անցորդներին թվում էր, թե արդեն կազմալուծվել է ծերակույտը. սակայն տեղյակ չէին, որ իմաստնացած տարեցները հավաքվում էին այգու անկյունի փայտաշեն սրճարանում:

Մի օր տարեկիցները խնդրեցին, որ Շերամը հիշեցնի, թե որտեղ և ինչ է սովորել: Նա էլ պատմեց.

— Երկու տարի սովորել եմ Պետրոս խալֆա Մատնիշյանի մոտ. սովորելը ո՞րն է. գրաճանաչ եմ դարձել, էլի: Կարդացել եմ փոքր սաղմոս, մեծ սաղմոս, կտակարան: Կրկնեցինք երկու անգամ:

— Լա՛վ է,— զարմացան ընկերները:

— Հե՛չ մի զարմացեք. մեկ է, որ ես էլ բան չէի հասկնա, դաս տվողն էլ:

Ծաձկի տակ է մտել ծերակույտը. բայց էլի տեղը գտնողներ լինում էին: Թիֆլիսից եկավ դափահար Պողոսն ու դիմեց Արծրունին.

— Ուզում եմ Տալոյանցին տեսնել, տո՛:

— Ի՞նչ պտի էնես Տալոյանցին,— հարցրեց նվագաձուն.— ամեն մարդու խո չե՞նք ըսե էնոր տեղը:

— Վա՛հ, սեկրետ ա՞, տո՛:

— Թե կուզես Թիֆլիս տանիս, չի գա, պրծա՛վ...

Կատակեցին, ծիծաղեցին, բայց տեղն ասացին: Թե ինչ գործ ուներ Պողոսը նրա հետ, չհետաքրքրվեցին:

Անցավ աշնան վերջին ամիսն էլ: Հետզհետե սաստկացավ սառնամանիքը: Զյուն տեղաց ու պսպղուն դարձրեց թե՛ տաղերգուի ծանապարհը, թե՛ քաղաքային այգին: Ցուրտ էր, բայց Շերամը քիչ էր մնում տանը, չնայած Վարդուհու զգուշացումներին: Ավելի հաճախ դարձան նրա այցելությունները ավագ որդու տուն, ամենօրյա դարձան Արամ Քոչարյանի ձայնագրությունները...

Քիչ չէին նաև այն օրերը, երբ տաղերգուն բարձրանում էր կենտրոնական փոստի հինգերորդ հարկը, որտեղ այդ ժամանակ ռադիոկենտրոնի երաժշտական բաժինն էր· Այստեղ նոր երգիչների հետ էլ որ չծանոթանար, Արտակ Տոնիկյանի հետ քաղցր զրույց կաներ և իր ձեռքով գրած տաղերը կնվիրեր: Չէ՞ որ երաժշտագետը հարազատ որդու նման էր դարձել ու նրա մի քանի համերգը վարեց ռադիոյով. Մարտին Մազմանյանն այլևս ֆիլհարմոնիայի դիրեկտորը չէր, որ Շերամը թեկուզ մեկ րոպեով մտներ նրա մոտ ու հարցներ

— Ի՞նչդ ես, Մարտիրոս ջան:

Ու նա պատասխաներ.

— Լավ եմ, վարպետ ջան, դու՞ ինչդ ես.

Շերամը պարտադիր կարգով այցելում էր դստեր ու քրոջ տունը: Եվ ուր էլ գնար, խոհերով ու խրատներով էր լցված նրա հոգին: Վերջին տարիներն էր ապրում նա և օրինաչափ հաճախականությամբ էին այցի գալիս նրան փիլիսոփայական խորհրդածությունները ծերության, առողջության, կյանքի և մահվան մասին:

Նա շուտ-շուտ գնում էր նաև ամենակրտսեր քենու տուն: Այստեղ, այդ օրերին, հյուրընկալվում էր ավագ քենին, որ ժամանել էր Երազգավորսից և կուրանալու վտանգը կրնկակոխ հետևում էր նրան: Եվ տաղերգուն, չնայած իր տկարությանը, նրան ամբողջ մի ամիս կառքով տանում էր ակնաբույժ Քալանթարյանի մոտ ու բերում տուն: Նրա աչքի առաջ անվերջ ծառանում էր մայրը՝ Խաթունը, որ կուրացել էր և ման էին տալիս ձեռքից բռնած: «Գուցե Լուսնթագին փրկե՞նք կուրանալուց»,— մտածում էր Շերամը:

Տխուր էր այս ամենը. բայց տարօրինակ կերպով տխուրն ու զավեշտականը երբեմն սերտ հարևաններ են լինում.

Եվ ահա մի օր այդ պարտականությունը սրբությամբ կատարելուց առաջ, երբ նա և դուստրը՝ Արևհատը, եկել էին քենակալ Վաղարշակին ու կնոջն այցելության, հետները բերելով Վարդու-

հու պատրաստած խմորեղենը, պատահեց մի դեպք, որ բնորոշ է լավատես երգչի համար:

Բարեկամներն ու հարևանները հավաքվել էին նրանց շուրջը: Հայրը նվագում ու երգում էր դստեր ձայնակցությամբ: Հենց այդտեղ էլ խաղում էին մի քենու թոռը և մյուսի աղջիկը: Հանկարծ նրանք դիպան թիթեղյա վառարանին ու շուռ տվեցին: Շերամը երգն ընդհատեց և առանց չարության ասաց.

— Բա եղա՞վ, աղջիկ ջան. վառարանը շրջեցիր ու երգս մրոտեցիր:— Բոլորը ծիծաղեցին՝ երգն էլ մրոտվի՞: Ռուզանն աչքերը չռեց հոր քենակալի վրա, իսկ Լենան հոնքերը կիտեց ու քաշվեց մի անկյուն: Տաղերգուն շոյեց նրա ծամերն ու փաղաքուշ ձայնով ասաց.— բալի՛կ ջան, մի անգամ էլ երգում էի Ախալքալաքում. էշի քուռակը գոմից վազեց մտավ օդեն, սոպեն՝ վառարանն էլի, շուռ տվեց ու գյուզալմ երգս մրոտեց:

Շերամը դարձյալ իր ընկերների շրջապատում է: Մեկ էլ նա վեր թռավ ու բացականչեց.

— Տղե՛րք, ինձ կներեք, պիտի երթամ: Կառավարական գործ ունիմ՝ երգի դասատու եմ նշանակվել:

— Էդ գիտենք, հետո՞,— դարձավ նրան Մեխակ Ավետիսյանը:

— Հետո էլ, Պարտնո՛ ջան, մեր Արաքսու համերգին եմ հրավիրված:

Նստել է, ահա, ծերունազարդ գուսանը դահլիճի առաջին կարգի մեջտեղը, գլուխը հակել կրծքին ու մտքերի մեջ ընկել: Նա չլսեց անգամ, թե ինչպես սկսվեց համերգը, բայց երբ Արաքսին հնչեցրեց գեղեցկության գովերգի առաջին տողերը, նա սթափվեց հուշերի թմբիրից:

... Այս ի՞նչ աղմուկ է, մի՞թե իրեն են ծափահարում, և ինչու՞ այսքան ուժեղ:

— Շերա՛մ ջան, Շերա՛մ...— բեմից գոչում է երգչուհին ու ձեռքով անում:

Տաղերգուն ոտքի կանգնեց և անփորձ դերասանի նման գլուխ խոնարհեց ժողովրդի առաջ: Ծափահարությունն ավելի որոտալից դարձավ. ոմանք դոփում են հատակն ու գոռում.

— Շերա՛մ, Շերա՛մ...

... Այս ե՞րբ ավարտվեց համերգը... Հասարակությունը ծափահարելով՝ լքում է դահլիճը: Ինքն էլ շուրջը նայելով, ելնում է միջանցք ու քայլում դեպի ետնաբեմը: Երկչոտությամբ բացում է դուռը, աննկատ մտնում ներս ու... Այս ինչքա՞ն մարդ կա երգչու-

հու շուրջը. իսկ սա բոլորին հրում է այս ու այն կողմ և նետվում իր սրբության գիրկը: Շերամը դողդոջուն շրթունքներով համբուրում է իր տաղարանի ուղեկցին ու խզված ձայնով մրմնջում.

— Է՛հ, Արաքսի ջան, հիմի գիտեմ, որ ընձեն ետև... իմ գործն առաջ տանող կա... դու էլ ինձ անմահ կպահես...

Երգչուհու աչքերից հակինթի կաթիլներ են թափվում. նա անկարող է որևէ բառ արտասանել. բռնել է մեծ գուսանի վաստակած ձեռքերն ու սիրահարի կրակոտ հայացքով նայում է նրա բարի դեմքին: Հանկարծ նրա թիկունքից զնգաց մի ձայն.

Վառավ, յա՛ր, սիրտս, ջիգյարս...

— Վաղարշա՛կ, զզվելի՛,— կատակեց երգչուհին ու հարձակվեց արվեստակից ընկերոջ վրա.— Էստեղ էիր, հա՞, անպետք... հըբը ինչի՞ ձեն չհանեցիր:

Իսկ Վաղարշակը միայն ժպտաց ու փարվեց Շերամի թիկունքին...

Ձմեռը չի նահանջում. ձյուն էլ եկավ, բայց եղանակը չտաքացավ: Շերամը տնից շատ բացակայելու կարիք չունի: Արամն արդեն հարյուր երգից ավելի է գրի առել, սակայն դրանով չի բավարարվում. ինքն էլ ընդհատումներով է պարապում ջահելների հետ. օգնում է Վարդգեսը: Նա հոր մեկ-երկու տաղը մշակել է երգչախմբի և անսամբլների համար: Էլ ի՞նչ է պետք, որպեսզի ստեղծագործական կյանքը վատ բորբոքված խարույկի պես չհանգչի:

Մտածում է տաղերգուն, մտածում, ու մեկ էլ տեսար՝ մի կայծ բռնկեց հոգում: Նա գրիչ է վերցնում ու գրում: Վարդուհին գնացել է մեծ աղջկա տուն, և երգչին մենակությունն ավելի է տրամադրում ստեղծագործելու: Ինչ որ Երևան է տեղափոխվել, ոտանավոր գրել է, բայց մեծ մասը՝ խրատական:

«Խրատականից ձեռ չես քաշում, էլի, Գրիգոր: Սիրույս աղբյուրը ցամաքե՞լ է երևի,— ինքն իր վրա զայրանում է ու գրիչը գցելով սեղանին, վեր կենում, քայլում է, ծխում:— Էս մեկն էլ գրեմ ու... գուցե մարդկանց պետք գա»: Եվ նա, դեմքը մոտեցնելով թղթին, գրում է.

Ծեր օրերում սեր մի՛ անի,
Ծույլ մարդուն խեր մի՛ անի...

Կեսօրին գնաց քաղաքային այգի: Ներս մտավ սրճարան ու զարմացած կանգնեց շեմքին. «Քչանալու տեղը շատացե՞լ են տնա-

շենները. ցուրտը հեչ չի ազդե երևի»: Մոտեցավ սեղաններից մեկին:

— Էս ընչի՞ մեկ-մեկ կերևաս, ուստա՛ Գոքոր,— կշտամբեց Ստամբոլցյան Մեխակը:

— Ցուրտ է, Մեխակ ջան, համ էլ տնից ոտքս դուրս կդնեմ թե չէ, միտքս մի բան կընկնի՝ ետ կդառնամ:

— Գրիգո՛ր Տալյանց,— դիմեց նրան վանեցի Ոստանիկը.— ինչու՞ մեր խորոտ Աղասու վերափերյալ մեկ քերթություն չես ստեղծե:

Շերամն ուշադիր նայեց նրան և միևնույն ժամանակ մըտմըտաց. «Իսկապես, Աղասի Խանջյանն ի՞նչ պակաս գործիչ է, որ մի տող էլ չեմ գրել»:

— Աչքի՛ս վրա, Ոստանիկ եղբայր, գրեմ,— վստահեցրեց երգիչը:

— Եղանակով, գիտե՞ս,— պատվիրեց վանեցին,— հապա՛...

— Էդ մի քիչ դժվար է, եղբա՛յր պատվական:

— Թժվարություն մարդոց խամար ի, Շերա՛մ:

— Է հա՛, ոչ թե ծերացած մարդու համար:

— Համենայն դեպս,— չզիջեց Ոստանիկը:

— Տղե՛րք, մի էս ոտանավորս էլ ականջ էրեք՝ «Իզուր կանցնին»:

Եվ նա կարդաց.

Կույրի առջև լույս մի՛ դնիր,
Ժայռի կրծքին բույս մի՛ դնիր,
Անգութ մարդուն հույս մի՛ դնիր,
Այդ բոլորը իզուր կանցնին

Ոտանավորի վերջին քառատողը վեճի առիթ տվեց, քանի որ հեղինակն ասում է.

Շերամն եմ, լսիր խրատս,
Պարզը ասա իմ արատս.
Գուցե ծաղրես, հարազատս...
Այդ բոլորը իզուր կանցնին:

— Հապա եղա՞վ, Գրիգոր Տալյանց,— նորից բողոքեց Ոստանիկը,— եթե մեր խոսք իզուր պետք է անցնի քո արատներու վերափերյալ, ինչու՞ ասենք:

— Ծո՛, էնպես կըսե, խո,— հակաճառեց Մեխակը:— Մեր Գոքորն արա՞տ երբ ունի:

— Համենայն դեպս որոշ փառեր պետք է փոխել, եղբայր պատվական, այո՛,— պնդեց վանեցին:

Ու մի առավոտ էլ Շերամը ներշնչվեց ու ստեղծեց իր վերջին գովերգը հերոսական:

Նվագելն սկսեց թե չէ, խոսքն ու մեղեդին բխեցին շատրվանի պես:

9

Շերամը մոտենում է բանկի շենքին: Ճաշարանը փակ է: Նայում է չորս կողմը: Ռեան առաջ կանգնած են նվագածու ընկերները. ահա Արծրունը, թառահար Սեդրակը, դափահար Պողոսը: Նրանք ձեռքով կանչում են երգահանին:

Նա անցնում է մյուս մայթը և բարի լույս մաղթում նրանց:

— Բարով, Շերամ,— պատասխանում են նրանք,— էս ի՞նչ է, քունդ չի՞ տարել էսօր:

— Նոր երգ եմ գրել, տղե՛րք, աշեք՝ տեսեք ի՞նչ է,— ծոցագրպանից հանելով թուղթը տալիս է Սեդրակին, իսկ ինքը մեղմաձայն երգում է:

— Էս ի՞նչ անուշ բան է, ուստա Գոքոր,— գովում է Արծրունը:

Այդ պահին դուռը բացվեց: Նվագածուները ներս մտան, նրանց ետևից՝ տաղերգուն: Նա Սեդրակի նվագարանը վերցրեց ու, ինքն իրեն նվագակցելով՝ երգեց.

Անղուտի պես պտույտ եկար մեր շուրջը,
Ու շինեցիր անյել ձորի կամուրջը ..

Վերջին հնչյունի վրա հայտնվեց Ոստանիկը:

— Եղբա՛յր պատվական,— սկսեց նա,— ինչու՞ չտեղեկացրիր, որ արդեն հեղինակել ես: Բրավո՛,— բացականչեց նա, երբ երգն ավարտվեց:— Հապա եղանա՛կ...

Եվ վանեցին հիացած ծոծեց գլուխը:

Գարնան կեսօր է: Շերամը դուրս է եկել բակի լայն պատշգամբ, թիկունքը դեմ արել արևին, թազբեհ է քաշում ու խորհում: Գուցե վերջին երգի դժվարին ճակատագի՞րն է զբաղեցնում նրան, թե՞ վշտանում է, որ վաղեմի սիրո կրակը չի մնացել հոգում... Նա դարձավ հարևան բակի կողմը, որ իրենցից բաժանվում է ցածրիկ պատով, մի րոպե հայացքը սահեցրեց այնտեղի ապակեպատ պատշգամբով, հետո մտազբաղ մտավ իր սենյակը, վերցրեց նվագարանն ու նորից ելավ դուրս:

... Իրեն հրավիրել են, որ աշուղական անսամբլին սովորեցնի իր տաղերը: «Սովորեցնեմ, ախպեր, քանի մտիհան չեմ արել»: Լավ է, որ անսամբլի ղեկավարը Վաղարշակ Սահակյանն է, իսկ գեղարվեստական ղեկավարն ու խորհրդատուն՝ Շարա Տալյանը:

Տաղերգուն նստեց, թառը դրեց կրծքին, որ կրկնի վերջին երգը, երբ դիմացի բակից լսելիքը շոյեց մի կնոջ ձայն.

Արազն եկավ լափին տալով,
Ժեռ քարերին, ափին տալով...

Շերամը նվագարանն այնքան զգույշ իջեցրեց ծնկին, որ կարծես այդ շարժումը պիտի խանգարեր երգչուհուն... «Ի՞նչ էլ անուշ կերգե անաստվածը»:

Արազ, Արազ, ջուրդ վարար ..

— Վարար է, հը՞մը կեսը արցունք է՛...— Եվ ինքն իրեն հարց տվեց.— Տեսնիս ու՞մ կնիկն է, ու՞մ հարսն է:

Երգչին մոտեցավ տանտերը՝ Սրապիոնը և հարցրեց.

— Լավ է երգում, չէ՞, վարպետ:

Առանց աչքը դիմացի բակից կտրելու, տաղերգուն էլ իր հերթին հարցրեց.

— Էդ ո՞վ է որ, Սրապիոն·— Իսկ մտքում ասաց. «Վարդուհին էլ շատ լավ կերգեր մի ժամանակ»:

Տանտերը, թե՝ Գևորգ Արամյանի կինն է, Շամունեն: Եվ նա պատմեց.

— Էս տները շատ հին են, վարպե՛տ Շերամ: Առաջ պատկանել են մի մեծ ընտանիքի, հետո՝ ինչ է եղել, ինչ չի եղել, բաժանել են երկու մասի ու էն մարդաբոյ պատն էլ քաշել ընդարձակ բակի մեջտեղով, և մի տունը երկու տուն է դարձել, մի բակն էլ՝ երկու բակ: Պատշգամբներն էլ, տեսնու՞մ ես, ինչքան մոտիկ են, չէ՞:

— Շա՛տ մոտիկ են,— չգիտես ինչու, ախ քաշեց Շերամը:

— Էնքան մոտիկ են,— շարունակեց տանտերը,— որ իրար հետ կարող ենք խոսել:

— Է՛հ, Սրապիոն ջան, էստից էնտեղ խոսելն ի՞նչ համ կունենա: Խոսել որ ուզենամ, կելնիմ կերթամ էնոնց տուն ու աչքաչքի խորաթա կենեմ:

— Դե՛, էդպես է... Արամյան ընտանիքը երկրորդ հարկում է

ապրում, իսկ առաջին հարկում՝ մի վանեցի պառավ, Զարուհին: Նրան բոլորը Զարե խաթուն են ասում:

— Է՛... իմ մորս անունն էլ էր Խաթուն, Սրապիոն ջան, հըմը էդոնք ի՞նչ խաթուն են որ, խեղճ ու կրակ մարդիկ...

Սրապիոնը տխրեց. ինչու՞ պիտի այդպիսի մայրերը խեղճ ու կրակ լինեն, ախր:

— Խե՛ղճ Զարե խաթուն,— հառաչեց երգիչը:

Մի պահ ձայն չհանեցին: Մեկ էլ գուսանը հարցրեց.

— Էդքա՞ն:

— Չէ, վարպե՛տ Շերամ: Գևորգն ու Շամունեն պսակվել են ու եկել էստեղ: Գևորգն աշտարակցի է, Շամունեն՝ էջմիածնեցի:— Երգիչն ուշադրությամբ ականջ էր դնում:— Շամունեն, վարպետ, բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի հորեղբոր աղջիկն է...

— Տո՛, ի՞նչ կըսես, օղո՞րթ,— հանկարծակիի եկած՝ դարձավ տաղերգուն և առանց պատասխանի սպասելու, հարցրեց:— Էդ Հովհաննիսյանը գիտե՞ս ինչ մարդ էր.

— Գիտեմ, բանաստեղծ էր.

— Շատ քիչ է գիտեցածդ, ընկե՛ր Սրապիոն,— գիտակ մարդու խստությամբ ասաց Շերամը, գնաց ներս, նվագարանը թափով վերցրեց, դրոշի նման բարձր պահած՝ արագ իջավ սանդուղքով ու մտավ Արամյանի բակը·— Էրթամ կարգին ծանոթանամ:

Քիչ անց, դիմացի պատշգամբից լսվեց թառի մեղմ նվագն ու Շամունեի ձայնը.

Կանչե, կռունկ, կանչե, քանի գարուն է,
Ղարիբներու սիրտը գունդ-գունդ արուն է...

Եվ ապա Արամյան Գևորգի հարկի տակ երկար ծոր տվեց տաքուկ խոսքն ու զրույցը:

— Էս երգը, Գևորգ ջան, չեմ կրնա ըսե, թե ինչքա՞ն կսիրեմ:

— Հա՛, լավ երգ է, շատ լավ երգ է:

— Տիկին Շամունեն էլ խո շատ ջիգյարով կերգե:

Հաջորդ օրը, երբ Շերամը դուրս եկավ պատշգամբ և հպարտորեն բազմելով աթոռին, սկսեց ճնկճնկացնել, Արամյանի որդիներն իրար անցան ու կպան մորից.

— Մայրիկ, դուրս եկավ... կանչե՞նք,— խնդրեց ավագը:

— Կանչեք,— ասաց Շամունեն, իսկ որդիներից միջնեկն արդեն երգչի մոտ էր և հրավիրում էր իրենց տուն.

Եվ այսպես, գրեթե ամեն օր: Տաղերգուի կինը հաճախ բացակայում էր տնից, և նա թառն առնում գնում էր իր նոր բարեկամների մոտ: Բայց սովորականի պես չէր գնում. հագնվում էր, մազերը սանրում, մի տեսակ ծանրանում էր ու դանդաղ քայլերով մտնում մյուս բակը: Անցնում էր Զարե խաթունի դռան մոտով, հազում, գլուխ տալիս նրան, ուղղում ժամացույցի շղթան և բարձրանում երկրորդ հարկ: Ինչպիսի հանդիսավորությամբ որ գնում էր, նույնպես էլ վերադառնում էր: Եվ Զարե խաթունը միշտ էլ ծածուկ նայում էր նրա ետևից ու Շամունեին հարցնում.

— Էդա հալիվոր վանեցի՞ ի, տիկին Շամունե.

— Ոչ, Զարու,— պատասխանում էր տանտիրուհին,— գյումրեցի է:

Շերամը գնում էր տուն, իսկ Շամունեն որդիներին պատմում էր նրա և իր հորեղբոր որդու մտերմության մասին.

— Քեռիդ, որդիս, շատ էր սիրում էդ տեսակ մարդկանց: Առաջին անգամ որ մեր տուն եկավ, դեռ Շերամ չէր: Սև-սև, նիհար ու բարձրահասակ մարդ էր. արխալուղով, չուխեն հագին, ժամացույցի շղթան կրծքովը մեկ գցած: Բարակ բեղեր ուներ: Եկավ, ներկայացավ: Քեռիդ գրկեց, համբուրեց: Ես շուտ թել դրեցի, սեղան բաց արի: «Գիտե՞ս սա ով է, Շամունե,— հարցրեց ապերը (ես Հովհաննես Հովհաննիսյանին ապեր էի ասում).— Գոքորն է, գյումրեցի Գոքորը, աշուղ Գոքորը, լսած կա՞ս»: «Լսել եմ, ապեր, երգերից մեկն էլ գիտեմ»: «Դե՛ որ գիտես, Շամունե ջան, երգիր՝ թող Գոքորը լսի»: Ու ես էլ երգեցի... Է՛, հորըս մահվանից հետո, ախր, ապերն էր ինձ պահել մեծացրել...

Եվ Շամունեն տրտում շոյեց որդու գլուխը:

... Հովհաննես Հովհաննիսյանի տանը մի կողբեցի կար, անունը՝ Վարդևան: Գաղթած մարդ էր, լավ մարդ էր ու լավ էլ ձայն ուներ: Երբ Կոմիտաս վարդապետը գալիս էր բանաստեղծի տուն, նրան միշտ երգել էր տալիս. Եղիշե Թադևոսյանն էլ նկարում էր նրան:

— Քանի Գոքորը մեր տանն էր,— շարունակեց մայրը,— ապերն ապսպրեց, որ գնամ Վարդևանին կանչեմ: Գնացի կանչեցի: Կանգնեցինք Գոքորի դեմ-դիմաց ու երգեցինք: Գոքորը հուզվեց... Հետո ինքն էլ երգեց, քեռիդ էլ ձայնակցեց կամաց: Լավ էր երգում Գոքորը, շա՛տ լավ: Եվ տեղնուտեղը մի երգ հորինեց Վարդևանի վրա:

Ու Շամունեն կամացուկ երգեց.

Վարդևանն եմ, նաչաղ եմ,
Կողբա գեղեն դաչաղ եմ .

Հե՛յ, սարեր, սարեր,
Ձյունոտ, վշտահար սարեր

Եվ ահա, Արամյան ընտանիքի հարևանը դառնալու երկրորդ տարվա ամառնամուտի օրը Շամունեն դարձյալ սպաս էր եփել: Շերամն էլ եկավ նրանց տուն: Գլխի շարժումով բարև տալուց հետո նա սպասի հոտն առավ ու ասաց.

— Զարուհու սպասը գիտես թե լավն է, չնեղենաս, տիկին Շամունե:

— Իհարկե լավը կլինի,— իբր նեղացած՝ նկատեց տանտիրուհին,— Զարուհին որ սպաս է եփում, տղամարդիկ հոգու վրա նստած չեն լինում:

— Էրթանք, Գևո՛րգ եղբայր, էրթանք՝ հետո գանք,— դիմեց Շերամը նրա ամուսնուն,— տիկին Շամունեն ճիշտ կըսե:

— Նստիր,— միջամտեց Գևորգը,— Շամունեն կատակ է անում:

— Գիտե՛մ, կհասկնամ, որ հանաք կանե. հըմը էդ հանաքի մեջ մեծ ճշմարտություն կա: Մեր տունը որ հաց կթխեին, տղամարդոց թոնրին մոտիկ չէին թողնի. կըսեին՝ հացը կուտ կերթա:

Շամունեն ծիծաղեց և ավելացրեց.

— Էլ կուտ չի էրթա, արդեն եփել է:

... Այսօր էլ Շերամի սիրած սպասն է եփել նա: Զոր լավաշն ու ամանները սեղանին դնելիս տանտիրուհին քթի տակ կամաց սկսեց դնդնալ տաղերգուի սիրած երգը՝ Կանչե, կռունկ, կանչե... Շերամը ճգվեց աթոռի վրա և ձայնակցեց նրան: Ու երբ մարող վերջալույսի նման երգը հանգավ վերջին տողում, տաղերգուն հանեց գունավոր թաշկինակն ու սրբեց արցունքոտ աչքերը: Շամունեն նկատեց այդ, լռեց ու փայտե շերեփով լցրեց ամանները: Շերամը վերցրեց փայտե գդալը, ծաղիկ հացը բրդեց քրեղանի մեջ, մի քանի գդալ խփշտեց և ասաց.

— Քո եփած ապուրը Զարե խաթունի սպասի նման է:

Ոչ ոք չարձագանքեց: Միայն Զարե խաթունն էր, որ պատուհանի տակ ախ քաշեց:

Մի օր էլ Շերամը նվագարանը գրկած՝ բարձրացավ Արամյանի պատշգամբ ու խնդրեց տանտիրուհուն.

— Տիկի՛ն Շամունե, լսիր, էս տունն էլ ականջ էրա՝ միտքդ պահե, ես էրթամ մեկէլ տունը հնարեմ:

Եվ նա նվագեց ու երգեց իր նոր տաղը, իսկ երբ համոզվեց, որ Շամունեն այլևս չի մոռանա, շտապեց տուն՝ երգի հաջորդ տները գրելու: Տանտիրուհին նրա ետևից կանչեց.

— Դու մի՛ վախենա, Գոքոր (Շամունեն միշտ այսպես էր դիմում), մի՛ վախենա՝ չեմ մոռանա:

Շերամն արդեն բակից խոսեց.

— Բա ի՞նչ անեմ, որ չվախենամ, քի՞չ եմ կորցրել: Աստված ամեն ձիրք տվեց, էդ մեկը չտվեց: Վարդգեսս կուգա՝ կգրի: Համ էլ, ապրի հայրենակիցդ՝ Արամ Քոչարյանը, էնքան երգ է ձայնագրել ո՛ր... Դե լա՛վ, էրթամ, թե չէ մտքիս թելը որ կտրավ, էլ կապել չեմ կրնա:— Եվ արդեն իրենց սանդուղքի վրայից Շերամը հոգոց հանեց և ասաց.— Է՛, ձերացել եմ, տիկին Շամունե, ձերացել... հիմիկվա կտրվածը՝ կտրված է, կորածը՝ կորած...

Այդ իրիկուն Շերամը հանկարծ հայտարարեց.

— Սիրտս կվկայեր, ես ի՛մ աստված, սիրտս կվկայեր: Ես էլ կըսեմ՝ ընչի՞ էսքան կսիրեմ քու ընտանիքդ, Գևորգ եղբայր: Դու մի ըսե՝ Հովհաննեսիս հարազատն եք:

Եվ նա հանդարտ, ինչ-որ տեսիլով հրապուրված՝ իջավ ու գնաց:

Ահա նա բարձրանում է իրենց աստիճաններով՝ ամբողջովին վերացած իրական աշխարհից: Նրան գորովագութ խղճահարության ժպիտով դիմավորում է Վարդուհին:

Արամյանները հետո իմացան, թե ինչ էր կատարվում նրա հոգում: Նա նոր երգ էր ձոնել ծերունի բանաստեղծին՝ Հովհաննիսյանին: Ու երբ լուռ աղոթքի նման նա մրմնջաց այդ տաղը, Շամունեն կանգնեց նրա կողքին, ու նրանք մեղմաձայն երգեցին:

— Երգե, տիկին Շամունե, մի՛ վախենա, էլ մտիհան չենք անի էս երգը:

Նրանք երգեցին միասին, համաձայն ու թախծոտ. մեկն իր ապոր, մյուսն իր պաշտելի բանաստեղծի հիշատակի երգը...

10

Դարձյալ աշխուժացել է քաղաքային այգին. դարձյալ նվիրական նստարաններին շարվել են տարեցներն ու ծերունիները: Վիճում են ինչ-որ խնդրի շուրջ: Քիչ անց նրանց է մոտենում մի երիտասարդ: Մոխրակապույտ խոշոր ու ջինջ աչքեր ունի նա,

Ծավալուն քիթ, պարզ մի ժպիտ: Ու երբ մոտենում է մեծերին, որոնց մեջ է նաև նրա հայրը՝ Գրիգոր Դուրգարյանը, Ուսուլ Գրիգորը, լրջանում է: Գրիգորի կողքին նստած է Շերամը: Երիտասարդը բոլորին ձեռք է տալիս և իր անունն ասում: Հայրը գլխով արեց տաղերգուի կողմը և ծանոթացրեց.

— Գրիգոր հորեղբայրդ է, Կարո՛ ջան, հայտնի Շերամը:

Աչքը գցած Շերամի դեմքին՝ Կարոն հիշեց, որ Ալեքպոլի տանը նա շատ է եղել: Սա դարձավ Գրիգորին.

— Գրի՛շ ջան, էս մե մա՞նչն ունիս:

— Հա՛, Գրիգոր ախպեր. էս մեկն է:

— Աստված զորացնե: Համալսարա՞ն կերթա. ի՞նչ պտի դառնա:

— Կերթա. տեսնինք ինչ կդառնա:

Շերամը նայեց երիտասարդին ու խոսեց.

— Էս խեղճ հերրդ, Կարո ջան, շատ դառնություններ է տեսել ընձի պես: Մենք կրթություն չտեսանք. մերն անցա՛վ... Հիմի ուրիշ ժամանակ է. շատ պտի կարդաք, շատ բան իմանաք, որ աշխարհքից ետ չմնաք: Հիմիկվա պես կինո, թատրոն չկար էն ժամանակ, ղայֆեն էր մենակ, որ հիմի սրճարան կըսեք:

Կարոն ափսոսաց, որ երգիչն այդքան փոխվել է և ասաց.

— Ես ձեզ վաղուց եմ ճանաչում, հորեղբա՛յր:— Եվ հակիրճ հիշեցրեց նրա հոբելյանը.— իսկ հայրս այնպես ներկայացրեց ձեզ, որ կարծես գյումրեցի արհեստավորներից եք:

— Է՛, ես արհեստավոր էլ եմ. իմ արհեստն էլ հորը դ արհեստից էր. հըմը ամեն մեկս գնացինք ուրիշ արհեստի ետևից. հերդ դառավ զինվոր, ես՝ երգիչ: Աշխարհքի բանը չի իմացվի, մա՛նչս . Դու էնպես արհեստ սովորի, որ հետո չփոշմանես: Մարդս ինչքան արհեստ էլ որ իմանա, էլի քիչ է. արհեստավոր մարդը միշտ, ամեն տեղ հարգանք ու պատիվ ունի, ամեն տեղ գործ կունենա: Ուսումն էլ արհեստի պես բան է. մեկը դուրգյար կեղնի, մեկը՝ բժիշկ, մեկը՝ դարբին, մեկէլը՝ վարժապետ կամ ինժեներ: Լավ ու գեշ արհեստ չկա, բոլորն էլ պետքական են մարդկանց համար. Աշխարհքը արհեստով է շենացած...

— Հիմա էլ երգեր գրու՞մ եք, հորեղբայր,— ընդմիջեց Կարոն:

Տաղերգուն մի պահ մտածեց, իսկ Գրիգորն ասաց, թե Շերամը շատ երգ է հորինել:

— Պապիդ էլ լավ գիտեր Գրիգոր ախպերս, մորդ էլ, քեռուդ էլ:

— Կեցի հըլը՛,— դարձավ երգիչը մանկության ընկերոջը,— մեծ ախպորդ՝ ուստա Մկրտչին, լավ գիտեի. բայց հորը չեմ հիշե։

— Խոսքս Կարոյի մորական պապի մասին է։ Ալեքսան խալֆին կհիշե՞ս, վարժապետ Մխիթարյանցին։

— Իա՛, ի՞նչդ չեմ հիշե. լուս իջնի էնոր գերեզմանին։ Գիտե՞ս ինչքան ամագ ունի վրես.— խոր հոգոց հանեց։— Ուրի՛շ մարդ էր մեր վարժապետը...

Շերամը ճանրորեն վեր կացավ, հրաժեշտ տվեց Գրիգորին, կրկին հորդորեց Կարոյին՝ այցելել իրեն թառ նվագել սովորելու համար, և գնաց տուն։

Կարոն հետո իր համակուրսեցիներին պատմում էր Շերամի մասին և ավելացնում, որ նա երիտասարդ տարիներին հորինած բազմաթիվ երգեր գրի չի առել. արտակարգ համեստությունը խանգարել է։ Նա երբեք չի մտածել մեծ փառքի մասին։

— Գիտե՞ս, Կարո,— խոսեց մեկը,— դա երևի հատուկ է տաղանդավոր մարդուն, որն իր ուժերի վրա վստահ է։

— Հենց այդպես էլ կա։

Հաջորդ օրը Կարոյի խումբը Շերամին գտավ այգում։

— Տղանե՛ր,— դարձավ նրանց ծերունի երգիչը,— նոր էս ընկերների հետ կվիճեինք. ես կըսեի, թե արհեստներու մեջ ամենից շատ գործիքը դուրգյարները կբանեցնեն, էնոնք կզոռեին թե՝ ղոնդաղչիք։

Այս խոսքի վրա տարեցների մեջ ղլվլոց ընկավ։ Մի զինագործ բացականչեց.

— Նախ բացատրիր, թե ղոնդաղչին ինչ է, հետո քո հաշիվն արա։

— Գիտենք, գիտենք,— կանխեցին երիտասարդները։

— Տեսա՞ք,— հարձակվեց երգիչը։— Ինչքան չեղնի համալսարան կերթան մարդիկ... Էսպես սկսեցինք հաշվել։ Ես մե երկու հարյուր գործիքի անուն տվի. մե էդքան էլ կեղնի, որ միտքս չի գա։ Տուն որ էրթամ, պտի նստիմ ու գրեմ. տեսնինք ինչքան կեղնի։

— Բա որ ես գրեմ մեր գործիքների անունները,— նորից խոսեց զինագործը։

Կարոն համարձակվեց միջամտել.

— Հորեղբա՛յր, եթե բոլոր գործիքների ցուցակը կարողանաք գրել, շատ օգտակար գործ կատարած կլինեք:

— Պա՛րտքս լինի՝ գրեմ,— խոստացավ գուսանը:— Ուրիշ արհեստներուց էլ եմ հասկանում, գիտե՞ս... Էնքան գործիք կա, ո՛ր... գրեմ՝ թող մնա:

— Ծերա՛մ,— տեղից խոսեց զինագործը.— արի իրար հետ կազմենք:

— Ինչո՞ւ, մեր գործիքների անուններն էլ ձերի վրա՞ դնես, հա՞: Երգի վարժապետ դարձա, հիմա էլ արհեստավորների վարժապետ դառնամ...

Ծառուղիում նորից ճարճատեց ծիծաղը:

ՇՈՂԱՐՁԱԿ ՄԱՅՐԱՄՈՒՏ

1

Սանդուղքի կողմից թփթփոց լսվեց. հաջորդ վայրկյանին մեկը սրընթաց անցավ լուսամուտների առջևով: Հետո միջանցքի դուռը ճռռաց, սենյակինը բացվեց, ու շեմքին կանգնեց Վարդգեսը: Նա հևում էր: Քույրն ուզեց հարցնել, թե ինչ է պատահել, եղբայրը կանխեց.

— Ու՞ր է հայրիկը:

Փեղկերի շրխկոցն ընդհատել էր նաև Կառլոսի պարապմունքը: Նա դուռը բացեց և ավագ մորեղբորը տեսնելով՝ ձեռքի նոտաները գցեց սեղանին ու...

— Ի՞նչ է եղել, Վարդգե՛ս Գրիգորևիչ,— քեռու պոռթկումը չբորբոքելու համար գրեթե անձայն հարցրեց նա:

Արևհատը ձեռքի կարը իսկույն նետեց մահճակալին ու կմկմաց.

— Էսօր չի երևացել, ախպե՛ր ջան:

Վարդգեսը հրամայեց.

— Էս րոպեիս գնա տես՝ պապդ որտեղ է, երգի՛չ:

— Հենց հիմա գնամ... բայց որտե՞ղ փնտրեմ Ցուցե ձայնագրության է գնացել:

— Ի՞նչ ձայնագրություն, ա՛յ տղա,— ընդհատեց Վարդգեսը,— Արամը կոնսերվատորիայում է:

— Գնա հորքուրանց, բալա՛ ջան,— անհանգստացած՝ խորհուրդ տվեց Կառլոսին մայրը:

— Վայ թե ռադիո է բարձրացել,— վախվորած շշնջաց Կառլոսը:

— Էս ժամին ռադիոյում էլ չի լինի, տո՛. Տոնիկյանն էլ է այնտեղ.— ասաց Վարդգեսն ու տեսնելով քրոջ ու սրա տարակուսանքը՝ գոռաց.— Ամերիկայից մի խումբ հայեր են եկել և անպայման ուզում են տեսնել ու լսել Շերամին, հասկացա՞ք:

Երեքն էլ մտածմունքի մեջ ընկան՝ որտե՞ղ կարող է լինել տաղերգուն:

— Հա՛, Կառլոս, վազիր բուլվարը. այնտեղ կլինի: Նախ թռիր հորքուրանց, հետո՝ այգի, շուտ: Ես շտապում եմ կոնսերվատորիա. մարդիկ սպասում են:

Եվ Վարդգեսն ու քրոջ որդին սլացան դուրս. մեկը վազեց դեպի Աբովյան փողոց, մյուսը՝ երաժշտանոց: Շերամն իր քրոջ տանը չէ: Այստեղ էլ Փեփրոնը վախեցավ, թե չլինի՞ եղբորը բան է պատահել, իրեն իմաց չեն տվել:

— Քա՛, Կառլոս ջան, ի՞նչ է եղել,— հարցրեց նա:

Երիտասարդն ստիպված երկու խոսքով հանգստացրեց պապի քրոջն ու դեռ վերջին բառը բերանում՝ աճապարեց Աբովյան փողոցով ներքև: Ահա մոտենում է քաղաքային այգուն. հեռվից տեսնում է պապին, որ, տարեց ընկերներով շրջապատված՝ ինչ-որ բան է պատմում: Շերամը նկատեց թոռանը և դարձավ խմբին.

— Էն էլ իմ թոռն է, տղե՛րք. կուգա, որ ընձի ճաշի տանի... Ըսա էլ ընչի՞ կվազես. ես կուգայի, էլի:

— Ի՞նչ գործ կենե թոռդ, ուստա՛ Գոքոր,— հարցրեց նկարիչ Գևորգ Բրուտյանը:

— Կոնսերվատորիայի ուսանող է, Գևորգ ջան. ձենը կմշակե: Էնպես ձեն ունի, ո՛ր...— հպարտանում է Շերամը:

Կառլոսը հևիհև մոտենում է խմբին:

— Բարև՛ ձեզ,— ընդհանուր ողջունում է նա և իսկույն դիմում պապին.— պա՛պ.— ուզում է ասել, թե ինչի համար է եկել, բայց պապը հնարավորություն չի տալիս:

— Կառլո՛ ջան, մե հըլը ծանոթացի ընկերներիս հետ, հետո:

Եվ թոռն ստիպված սեղմում է յուրաքանչյուրի ձեռքը և դարձ-

յալ փորձում հաղորդել մորեղբոր հանձնարարությունը. պապը չի շտապում:

— Կառլո՛ ջան, գիտեմ՝ ընչի ես էկել.— թոռն աչքերը չռում է՝ որտեղի՞ց կարող էր իմանալ նա...— մի քիչ կեցի՝ կերթանք, ճաշը խո չի՞ պաղի:

— Տո՛, չէ, ա՛լ պապ,— նորից է փորձում պապին հաղորդել հաճելի նորությունը:

— Լավ, լավ, հիմի կերթանք,— ժպտալով ասում է Շերամը:

Կառլոսը կռանում է և պապի ականջին վերջապես հաղորդում այն, ինչ որ քեռին հանձնարարել է: Շերամը վեր է կենում ու բարձրաձայն հայտնում.

— Տղե՛րք, թոռս կըսե, թե Ամերիկայից հայեր են էկել և կուզեն ինձ տեսնել ու լսել...

— Օ՛...— որոտացին տարեցները և ուժգին ծափահարեցին:

— Զենդ Ամերիկա էլ հասավ, պարոն Տալյան,— գոչեց Ալեքսոն:

— Հըբը ի՞նչ գիտես, ա՛լ օղուլ:

Ու բռնելով թոռան թևը, պապը քայլեց նրան համընթաց:

— Հաջողություն, Շերա՛մ,— մաղթեց ամբողջ ծերակույտը:

— Շնորհակալ եմ, շնորհակալ եմ,— ետ նայելով՝ բացականչեց նա, ապա դարձավ թոռանը.— քելե, Կառլո ջան, քելե՛. էսօր ճանս էլի ալչու կայնավ:

Մինչև երաժշտանոց պապը հարցերով անվերջ ռմբակոծեց թոռանը. ովքե՞ր են ժամանել, ի՞նչ մարդիկ են, ի՞նչ տեսքի են: Կառլոսը պատասխանեց, թե ինքը չի տեսել, բայց մորեղբոր ասելով՝ պատկառելի մարդիկ են: Երբ թոռն ասաց, թե եկածները կրթված անձնավորություններ են, պապը նայեց իր հագուստին ու տրտնջաց.

— Հըբը էս շորերով ի՞նչդ հարմարվիմ նրանց:

Կառլոսը միայն կարողացավ ասել.

— Գնանք, պապ ջան, էնտեղ կերևա:

Արդեն կոնսերվատորիայի մուտքի մոտ էին, երբ Արծրունը հևասպառ հասավ նրանց. նրա ձեռքին ինչ-որ զգեստ կար:

— Ուստա՛ Գոքոր,— ձայն տվեց նվագածուն. Շերամը ետ նայեց. —առ էս չուխեն ու արխալուղը հագի. մեզի պատիվ չի բերե, որ մեր թագավորը հասարակ շորերով երևա ամերիկացոց:

— Ծո՛, ու՞րտից ճարեցիր:

— Դու հրը մե հագի, որ թաշախուստով հանդես գաս, հետո կըսեմ:

Եվ նվագաձուն միացավ ներս մտնողների բազմությանը: Կառլոսը պապին տարավ իրենց լսարանը, շորերը փոխել տվեց և առաջնորդեց դահլիճ: Այդտեղ նրանք հանդիպեցին Վարդգեսին: Սա զարմացավ, որ հայրն ավանդական տարազով պիտի բեմ ելնի:

— Եկա՞ր, հայրիկ,— ուրախացավ նա, իսկ մտքում տարակուսեց. «Ջգե՞ստը որտեղից ճարեց»:

Մինչ այդ, առջևի աթոռներին բազմած ամերիկահայերը ծափահարեցին ու, միմյանց նայելով՝ բացականչեցին.

— Բրավո՛... օքե՛յ...

— Ծո՛, սա պարզ և հասարակ մա՞րդն է եղեր Շերամը,— բավականին բարձր հարցրեց նրանցից մեկը մյուսին: Նրա հարևանը միմիայն շրթունքները սեղմեց, հոնքերը վեր մղեց ու գլուխը վերուվար արեց:

Շերամը նստել է և աչքերը կկոցած՝ նայում է, թե հյուրերից բացի է՞լ ով է ներկա այդտեղ: Ահա Արամ Քոչարյանը՝ եկվորների շարքում. նա պատասխանում է նրանց հարցերին: Ահա Դանիել Ղազարյանը, որ նստել է Վալենտինայի կողքին և ցաշրաձայն զրուցում է նրա հետ... Այն ջահելն էլ Պարույր Իսահակյանն է՝ Կառլոսի ընկերը. ձեռքին լուսանկարչական ապարատ կա. պետք է նկարի երևի... «Էն էլ Մարտիրո՞սն է, պրոֆեսոր Մազմանյանը»: Տաղերգուն զվարթանում է: Ներկա են նաև՝ Ռուբեն Թերլեմեզյանն ու Արտակ Տոնիկյանը, լուսժողկոմն ու իր տեղակալը. Նաիրի Ջարյանը նույնպես...

Վարդգեսը մոտեցավ և հոր ականջին շշնջաց.

— Հայրի՛կ, հյուրերն ուզում են, որ դու մեկ-երկու բան երգես:

Հայրը դարձավ նրա կողմն ու ժպտալով ասաց.

— Առանց թառի ի՞նչ երգեմ, Վա՛րդ ջան:

Սա զայրացավ.

— Կառլո՞ս, թառն ինչու՞ չբերեցիք, ա՛յ տղա:

Կառլոսը կայծակնային արագությամբ թռավ դուրս· Հյուրերից մեկը դարձավ Մարտինին.

— Ինչու՞ կհապաղեն, պարոն Մազմանյան.

Սա բացատրեց հապաղելու պատճառը:

— Է՞, դաշնամուրով չը՞լլար,— հարցրեց մյուսը:

Մազմանյանը մոտեցավ Վարդգեսին, իսկ սա հասկացրեց, թե չի լինի և խնդրեց նրան, որ մի քանի խոսք ասի, մինչև թառը

բերեն: Մազմանյանը ձեռքը բարձրացրեց, որպեսզի ներկաները հանդարտվեն ու պատմեց Շերամի մասին: Նրա խոսքի կեսն էլ չէր անցել, որ Կառլոսը ներս ընկավ ու թառը դրեց պապի գոգը: Սա վարժ շարժումով նվագարանի վիզն ազատեց կապերից, շապիկը տվեց թոռանն ու սկսեց նվագել: Ու հենց առաջին հնչյունը ղողանջեց, դահլիճում մեռելային լռություն տիրեց:

Մայրի՛կ ջան, մնաս բարով,
Ես կերթամ սարով-քարով ..

Մոր և որդու բաժանման տաղը լարվածություն ստեղծեց անգամ այն ունկնդիրների մեջ, ովքեր շատ էին լսել այդ: Հյուրերից ոմանք չկարողացան հանգիստ մնալ տեղերում. հառաչելով՝ գլուխները ճոճեցին, ոմանք էլ հիացմունքով գոչեցին.

— Կեցցե՛ս...

Իսկ երբ տաղերգուն պատգամեց իմաստուն խորհուրդն իր՝

Նպատակեդ չշեղվիս,
Որ պիտանի մարդ լինիս.
Աղոթքս անեծք կդառնա,
Թե որ չարին հետևիս:

Հյուրերն աղաղակեցին.

— Ատա՛նկ է, Շերամ:

— Ճշմարի՛տ է...

— Կեցցե՛ս, մայր...

Հետո երգիչն իրար ետևից հնչեցրեց՝ «Պարտիզում վարդեր բացված», Կոմիտասի հավանաճ՝ «Ալ ու ալվան ես հագել»: Մարդիկ հասկացան, որ Շերամը հոգնել է, բայց չուզեց նահանջել և կատարեց.

Ամպերն ելան բլուր-բլուր
Մասիս սարի կատարեն...

Այդ երգից հետո հյուրերից մեկը ելավ տեղից ու խնդրեց.

— Վարպե՛տ, կաղաչեմ քեզի՝ «Շորորան»... այդ անու՛շ սիրերգը կատարե...

— Հապա «Դու իմ մուսան ես».— ավելացրեց մյուսը՝ ալեհեր մի մարդ:

Շերամը մոտ կանչեց որդուն և ասաց.

— Վա՛րդ ջան, չեմ կրնա... խո գիտե՞ս...

Որդու դեմքն այնքան պաղատալից էր, որ հայրը նահանջեց։ Եվ բոլոր շշուկները միանգամից կտրվեցին, երբ Ճերամը խանդավառված սկսեց։ Տաղի վերջին տողն էր հնչում արդեն, երբ ժողովուրդը խնդրեց, որ գուսանն էլի երգի։

— Շատ ներողություն, բայց էլ չեմ կարող,— խոստովանեց նա։

Սակայն տեղի ունեցավ ապշեցուցիչ մի անակնկալ։ Ներկաներից շատերը հայացքները հառեցին երկու հոգու վրա, որոնք կրկնեցին սիրո այդ հուզերգը։ Հեղինակը չուզեց պակաս մնալ և Ճերունական ձայնը միացրեց նրանց ձայնին՝

Գիշերն անցավ՝ քուն չունիմ..

Մի հաճելի անակնկալ ևս տեղի ունեցավ։ Այս անգամ երգեցին բոլոր հյուրերը։ Եվ Ճերունազարդ երգիչը միայն նվագակցեց։ Երբ տաղն ավարտվում էր, նրա ձայնը խոխոջալով միացավ բոլորի հորձանուտ գետին։ Եվ այդ պահն այնքան սրբազան խռովք առաջացրեց ամենքի մեջ, որ արդեն բոլորն էին հնչեցնում սիրահարի անքուն գիշերվա մեղեդին։

2

Երկու պատկառելիներ անշտապ իջան Աբովյան փողոցով ու թեքվեցին գրողների տան կողմը։ Մեկն ակնոցավոր է, անթեք կեցվածքով, իսկ մյուսն արդեն ճաղատացող գլխով ու մի փոքր կքված։

Նրանց դեմ ելավ ճերմակահեր Գեղամ Սարյանը։

— Բարի օր վարպետներին,— ողջունեց նա։

— Գեղա՞մ,— դիմեց պատկառելիներից մեկը, որ Դերենիկ Դեմիրճյանն էր,— չգիտե՞ս՝ ինչ հարցեր ենք քննելու էսօր։

— Դե՛... վարչության նիստ է, էլի, վախենում ես հարց չլինի՞ քննելու,— յուրովի խնդալով՝ պատասխանեց Գեղամը։

— Չէ, չէ՛ մի... մի պարզ ասա,— թեթևակի կակազելով շարունակեց Դեմիրճյանը,— ինչ-որ երիտասարդ գրո՞ղ ենք ընդունելու միության մեջ։

— Այո, շա՛տ երիտասարդ...— Եվ Գեղամը ուզեց երգով հասկացնել.

Դու իմ մուսան ես...

— Հասկացանք, լա՛վ,— ձեռքով ընդհատեց Դեմիրճյանը և սուր ժպիտով նայեց Ստեփան Զորյանին,— քաղցր ձայնդ պահիր նիստի համար, Գեղամ:

Եվ բոլորը ծիծաղելով ներս գնացին:

Առաջինը քննության դրեցին ընդունելության հարցը:

— Ընկերնե՛ր, ես մի փոքր ծանոթացնեմ Շերամի կյանքին ու գործունեությանը,— սկսեց Գևորգ Աբովը:

— Ծանոթացրու, ծանոթացրու՛... թեպետև քեզանից ավելի լավ ծանաչողներ կան այստեղ,— ժպտադեմ խոսեց Հրաչյա Քոչարը:

Աբովը խեթ նայեց նրան, սակայն ժպտաց, որից այտերը փոս ընկան: Նա պատմեց, որ մեկ-երկու տարի առաջ, երբ ինքը Լուսժողկոմի տեղակալ էր և ղեկավարում էր արվեստի բաժինը, աշուղական անսամբլի երգացանկում Շերամի առնվազն մի տասնյակից ավելի երգերը կային: Ապա ռադիոյի երաժշտական բաժինը կազմակերպեց գուսանական անսամբլ, որը մի քանի համերգ տվեց և դրա երգացանկի զգալի մասը նրա երգերն էին:

— Բա ի՞նչ, իհարկե,— ձեռքը բարձրացրած՝ ոտքի կանգնեց Գեղամ Սարյանը.— Թույլ տուր, ընկեր նախագահ, թվեմ այն երգերը, որ Գրիգոր Տալյանը հորինել է Թիֆլիսում՝ քսան տարվա ընթացքում:

— Հապա, հապա՛,— ոգևորվեց Նաիրի Զարյանը:

Եվ Գեղամը, մատները ծալելով՝ սկսեց թվել.

— Թառը դոշիս...

Ներկաներից մեկն ուզեց հիշեցնել երգի մեղեդին, բայց նախագահը մատիտով այնպես կոտորակեց բաժակին, որ իսկույն լռություն տիրեց: Գեղամը շարունակեց.

— Գալիս եմ դուռդ՝ երկու, Աչքդ խումար, Սարեր կաղաչեմ...— և ձեռքը պարզեց Մասիսի կողմը, որի գագաթը երևում էր հրապարակին նայող լուսամուտից:

Աբովը կանգնած սպասում էր, որ թվարկողը վերջացնի, իսկ բանաստեղծը խոժոռ նայեց նրան և ծոր տվեց.

— Հլա ու՛ր ես...

— Ա՛յ Գեղամ,— տեղից խոսեց Սիրասը,— Էնպիսի գործերի անուն ես տալիս, որ մարդ քիչ է մնում երգի:

—Եթե Աբովը թույլ կտա, ի՞նչ կա որ. երաժշտական բաժնի վարիչ է եղել,— մեջ գցեց Դերենիկ Դեմիրճյանը:

Նորից որոտաց Նարրի Զարյանի քրքիջը, բայց Գեղամը թվարկումը չդադարեցրեց:

— Եվ սրանցից ամեն մեկը ընտիր բանաստեղծություն է, այո՛,— շեշտեց Գեղամն ու նստեց: Մի պահ պերճախոս լռություն տիրեց:

— Մի երկուսն էլ ես ասեմ, Գևորգ, հը՞,— չգիտես պնդեց, թե հարցրեց Նաիրին և առանց թույլտվության սպասելու արտասանեց «Իմ իղձը»: Հետո իր բառերով հաղորդեց գուսանի սիրո բոցավառումը և ավելացրեց.— այսպիսի երգ հազվադեպ է գրվում, ընկերներ... Մի այլ բանաստեղծություն, որ ինքը Շերամն անվանել է «Արեգ յարս»:— Նախագահողն արձանացած նայում էր ու լսում: Նիստի մասնակիցներից ոչ մեկը ձայն չէր հանում, իսկ Նաիրին արտասանում էր.

Թե որ, աշխա՛րհ, արև չունիս,
Խնդրե յարիս՝ վեր բարձրանա,
Թե որ, աշխա՛րհ, ցերեկ չունիս,
Խնդրե յարիս՝ կուրծքը բանա:

— Օ՛...— ցաշրաձայն մեջ գցեց Ստեփան Զորյանը,— իսկական բանաստեղծ է մարդը:

Նաիրին նստեց, իսկ Դեմիրճյանը տեղից գոչեց.

— Հա՛յ գրողներ, եթե Շերամ չունիք, խնդրեք՝ թող գա ձեր մեջ մնա...

Ճափշափեց ճափահարությունը: Արանքում լսվեց Նաիրի Զարյանի ձայնը.

— Ի՞նչ պակաս Քուչակ է, ի՞նչ պակաս՝ Սայաթ-Նովա...

Նախագահը մատիտով թխկթխկացրեց, և հենց որ ուզում էր անցնել նիստի պաշտոնական մասին, Նաիրին նորից խոսք ուզեց:

— Ների՛ր, ընկեր նախագահ, իմ կարծիքով վարչության անդամներին կհետաքրքրի, թե ինչպես ընդունեցին Շերամին ամերիկահայերը: Աբովն այնտեղ էր, բայց...

Ու նա պատմեց կոնսերվատորիայում կայացած հանդիպման մասին: Եվ կարծես նրա խոսքի շարունակությունն էր, որ Հրաչյա Քոչարը երգեց.

Խնուս գեղի մեջտեղը
Խրամալեց մենծ շեխը,
Թորգեց գիս լաց ու շիվան.
Յարս ի տարավ մենծ պեխը:

Երբ Հրաչն սկսեց կրկներգը, նրան անսպասելի միացավ Սիրասը, ապա և մյուսները.

Տարան, տարան զիմ յարը,
Տարան զիմ մեկուճարը,
Հավար էրեք Սարոյին՝
Տարան խորոտ Կառոյին.

Աբովը փնթփնթալով նստեց տեղը:

— Դարձրիք աշուղական անսամբլի համերգ, ընկե՛ր Սիրաս, չեղավ, չէ՞...

— Հապա ի՞նչ անենք, Գևորգ,— խոսեց Սիրասը,— երբ այդ մարդու մեղեդին նույնքան սրտամոտ է և ազդեցիկ, որքան տեքստը: Մեր երգելը լուրջ խոսքի տեղ չի՞ անցնում:

— Անցնում է, Սիրաս, բայց այսօր տեղը չի, ախր,— կիսաբռունցք արած ձեռքը խմբավարի պես թափահարելով՝ ասաց Աբովը:

— Դե որ էդպես է,— խոսք գցեց Գեղամ Սարյանը,— ես առաջարկում եմ Շերամին մի օր հրավիրել այստեղ, թող համերգ տա:

— Կարելի է,— չվիճելու համար կտրեց նախագահը,— բայց հիմա մենք քննում ենք նրան ընդունելու կամ չընդունելու խնդիրը և ոչ թե համերգի: Ուրեմն, ընկերներ, առաջարկություն կա Շերամին ընդունել գրողների միության մեջ, ո՞վ է համաձայն:

— Սպասի՛ր, Գևորգ,— ձեռքը բարձրացնելով նկատեց Ստեփան Զորյանը.— սա ի՞նչ շտապողականություն է. մի թող խոսենք էդ մարդու մասին, քննենք լրջորեն:— Եվ նա բարձրացավ տեղից ու հայացքը չկտրելով նախագահի չափ տվող ձեռքից, հանդարտ ու անվրդով շարադրեց.— դու չե՞ս զարմանում, որ Շերամին մինչև հիմա միության մեջ չենք ընդունել:

— Դե՛...— անորոշ ձգեց Աբովը, —այդպես է ստացվել, ի՞նչ կարող ես անել:

— Լավ է ուշ, քան երբեք,— միջամտեց Քոչարը խնդալով:

— Հրա՛չ, խոսե՞լ ես ուզում:

— Ես իմ խոսքն արդեն ասացի·

— Դնում եմ քվեարկության,— կարծեց Աբովը:

— Սպասիր, ընկե՛ր նախագահ,— կրկին էլավ Նաիրին: Աբովը շրթունքները ծպպացրեց՝ ալ քեզ կրակ,— եթե ուզում եք իմանալ, նրան կոմպոզիտորների միության անդամ էլ պետք է ընդունեն:

— Իրա՞վ է,— մտմտալով՝ ավելացրեց Ջոչարը:

— Կոմպոզիտորների միության մեջ դժվար թե ընդունեն,— կասկածով ու ծուլորեն հարեց Գեղամ Սարյանը:

— Ինչու՞,— նետեց Նաիրին:

— Որդին այնտեղ քարտուղար է, որքան գիտեմ,— դիմախաղով փորձեց համոզել Գեղամը:

— Հետո՞ ինչ,— դարձյալ որոտաց Նաիրի Զարյանի բամբը,— եթե Վարդգեսը միայն կոմպոզիտոր է, ապա Շերամը և՛ բանաստեղծ է, և՛ երգահան:

— Դե՞,— վերջ տվեց նախագահը,— ո՞վ է համաձայն:

Բոլորը ձեռք բարձրացրին:

— Դերենի՛կ, դու ինչու՞ ես երկու ձեռքդ բարձրացրել,— հարցրեց Աբովը:

— Այդպիսի ստեղծագործողի օգտին մի ձեռքով քվեարկելը անխղճություն է,— ծիծաղն աչքերից կայծակելով՝ սրախոսեց Դեմիրճյանը:

Բոլորը ձեռքերն իջեցրին և հախուռն քրքջացին:

Շերամն ընդունվեց գրողների միության անդամ:

3

Քայլում է ծերունին քաղաքային այգու ձյունաճաճկ ծառուղիով, անկյունի տաղավարի առաջ մի պահ կանգ է առնում, խորը հոգոց հանում ու շարունակում ճանապարհը: «Ընչի՞ կանչեցին որ... Ես նոր տարի դիմավորելու տրամադրությո՞ն ունիմ»: Մի քիչ հետո կանգնում է ուզած տան առջև, նայում արդեն լուսավորված պատուհաններին ու ժպտում:

Դանդաղ բարձրացավ սանդուղքով և, ըստ իր սովորության, նայեց ներս. ականջը որսաց թոռան հաստ ձայնը.

— Պա՛պը եկավ:

Քիչ անց նա դստեր գրկում էր. Շուտով ներս մտան Վարդգեսն ու Շահանդուխտը:

— Աչքդ լու՛յս, հայրիկ. քեզ գրողների միության մեջ են ընդունել,— հաղորդեց որդին:

— Օգու՞տն ինչ:

— Ինչու՞, հայրիկ:

— Հայ-հայս գնացել է, վայ-վայս է մնացել, Վարդ ջան. էլ ի՞նչ պտի անեմ:

— Ի՞նչ է եղել որ:

— Ընձի կթվա, թե վերջս էկել է,— տխուր ասաց հայրը:

— Վաղնևեթ ես քեզ բժշկի կտանեմ:

— Կաուլո՛ ջան, մե թառս տուր. մինչև սեղան-մեղան գցելը, ես քիչմ ճնկճնկացնեմ,— խոսքը կտուրը գցեց Շերամը, գրկեց թառն ու սկսեց նվագել:

Արևհատը հիշեց իր և հոր վաղուցվա գործընկերությունն ու երգեց: Բոլորը ոտքի կանգնեցին և, նոր տարուն բարի գալուստ մաղթելով, բաժակները պարպեցին: Դուստրը նկատեց, որ հայրը մի ծտի բաժին հաց էլ չկերավ և ամուսնու ականջին շշնջաց՝ «Հերըս կարգին հիվանդ է»: Տաղերգուն, այնուամենայնիվ, աջխուժով նվագեց ու երգեց, մյուսներն էլ ձայնակցեցին: Մեկ էլ նա, թե՝

— Կաուլո՛ ջան, կուզե՞ս մրցենք.

— Մրցենք, պա՛պ ջան, —արձագանքեց թոռը:

Եվ պապ ու թոռ միասին երգեցին. Ծերունի երգչի տարեցտարի նվազող ձայնը կորավ երիտասարդի ձայնի ձորակներում: Շերամն ուրախ բացականչեց.

— Յալլա՛, էդքան էլ ձե՞ն էղնի: Զէ՛, բալա ջան, ես քեզի հետ ի՞նչ ընկեր...

Վարդգեսն զգաց՝ հոր խոսքի մեջ թե՛ ուրախություն կար, թե՛ անսփոփ վիշտ ու դարձավ փեսային.

— Հա՛յկ, հիմի էլ դու երգի:

Բոլորը քահ-քահ ծիծաղեցին, իսկ նա խոսքի տակ չմնաց.

— Կուզես, որ ագռավ չմնա՞ Երևանում:

Շահանդուխտը ծիծաղի միջից առաջարկեց.

— Հա՛յկ, արի իրար հետ երգենք:

Վարդգեսը դիմեց մյուսներին.

— Որ էդպես է, մենք գնանք փողոց. չխանգարենք այս գեղեցիկ դուետը:

Զվարթաձայն քրքիջը բարձրացրեց նաև տաղերգուի տրամադրությունը:

Մի քանի օր անց, նրանք իսկապես ապաստանեցին փողոցում: Գիշերվա կեսին երկրաշարժը վեր թռցրեց բոլոր բնակիչներին: Սարսափահար դուրս նետված մարդիկ հազիվ էին հասցրել ծածկելու իրենց մերկությունը և, վերմակ կամ որևէ ծածկոց գցած ուսերին, իջել ներքև: Մինչև փողոցի խաչմերուկը բոցկլտում էին խարույկները:

Վաղորդյան երկինքը նոր էր պողպատափայլ դարձել, երբ հևի-հև եկավ Ճերամը։ Պրպտող աչքերից ու կապ գցելով խոսելուց երևում էր, որ խիստ անհանգստացել էր։

— Ինչպե՞ս եք, խո շատ չվախեցա՞ք։

— Բա չվախեցա՞նք, հայրիկ,— ասաց Արևհատը,— ամբողջ գիշեր փողոցում էինք։

— Ձեր տո՞ւնն ինչպես է,— հարցրեց փեսան։

— Դեռ կանգուն է, Հայկո ջան. մի քիչ ծռծռաց, բայց չքանդվեց։ Էնտեղ էնպես մարդ կապրի, որ երկրաշարժը բա՞ն կարող է անել։— Բոլորն ակամա խնդացին։— Է՛, տեսնիս Վարդիս վիճա՞կն ինչպես է։

Այդ խոսքի վրա եկավ Կառլոսն ու հաղորդեց, թե ավագ մորեղբորը ոչ մի վնաս չի եղել։ Երրորդ օրը, երբ բոլորն արդեն տեղափոխվել էին իրենց տները, ժամանեց գուսանի կրտսեր որդին։ Քրոջ ամբողջ ընտանիքը ճաշի էր նստել։ Երիտասարդը դուռը բացեց թե չէ, քույրը վեր թռավ ու բացականչեց.

— Քա՛, ընչի՞ էկար, էստեղ երկրաշարժ եղավ։

— Դե՛... արձակուրդս պրծավ՝ եկա... դպրոցն է, թերթն է,— շվարած պատճառաբանեց տղան։

4

Ճերամը ելավ պատշգամբ, կկոցած աչքերով նայեց երկնքին, մի տեսակ ճգմգվեց։ Նրան թվում էր, թե գարնանամուտի գունատ արեգակը կջերմացնի իր մարմինը, եթե դուրս գա փողոց, տան պատի մոտ արևկող անի մի քիչ, հետո կամաց-կամաց գնա տեսնի, թե ինչ են անում նվագաձու ընկերները բանկի ճաշարանում. գուցե մի քանի րոպեով էլ Արամյանի տուն մտնի։ Եվ իջավ բակ ու գնաց։

Վարդուհին, գուրգուրալի խղճահարությունը դեմքին, երբեմն հետևում էր, թե ուր է գնում Ճերունի երգիչը, հիվանդ-հիվանդ ինչու՞ է գնում. բայց մի տհաճ վեճից հետո շատ էլ չէր հետամտում։ Վաղեմի սերը դեռ նշուլում էր հոգում։ Վեճի պատճառն այն էր, որ նա պառավական կեսկատակ խանդոտությամբ հարցրեց ութսուն տարեկան ամուսնուն, թե էդ ի՞նչ էր խոսում սիրուն հարևանուհու՝ Նադյայի հետ։ Այդ կատակախառն խոսակցությունը կարող էր շուտ փակվել, եթե միջնեկ դուստրը, որ ամուսնու և մանչուկի հետ եկել նեղացրել էր նրանց տեղն ու ներքին գզվրոտոցով ծանրացրել մոր և հոր պայմանները, չարությամբ չհուհուար։

Երգիչն այս դեպքը մտաբերեց, երբ Զարուհուն բարևելուց հետո բարձրանում էր Արամյանի սանդուղքով:

Քիչ մնաց նա սիրելի ընտանիքի հարկի տակ, քիչ էլ խոսեց: Այդ տարին մերթընդմերթ կրկնվող նյարդային նոպաները հանգըստանում էին միմիայն հարազատ օջախներում ու նվագաձու ընկերների շրջապատում, ու մեկ էլ, երբ ավագ որդին տանում էր պրոֆեսորի մոտ բուժման: Նա ջղայնանում էր նաև, երբ ճաքած ձեռնափայտը փողոցի խորդուբորդ գետնին զարկելով՝ գնում էր մոտակա այգին:

— Ե՞րբ պտի ազատվիմ էս անտերից,— մի օր բողոքեց նա և զայրացած հրեց ճաշարանի դուռը: Նվագաձուները թռան վարպետին ընդառաջ:

— Իա՛, ուստա Գոքոր,— տագնապեց Արծրունը.— էդ ու՞մ հետ կկռվիս:

— Ճքիս հետ:

Ընկերները նրան նստեցրին, սուրճ հյուրասիրեցին և հարցական հայացքները գամեցին նրա բերանին:

— Ծո՛, էս փետը ջղերուս վրա կազդե. ընձի պես պառվցել է,— պոռթկաց նա, դուռը բացեց ու փայտը շպրտեց դուրս:

— Առանց ձեռնափայտ ինչպե՞ս պիտի ման գաս, ուստա՞ Գոքոր,— ցավակցեց ընկերը:— Մեկ-երկու մանեթ արժե, տուր՝ առ, էլի:

— Ե՛ս կշինեմ... էս ձեռքերուս ի՞նչ եմ տվել, որ ուրիշի սարքածն առնիմ: Ո՞րն է լավ, սեփական քրտինքով շինա՞ծը, թե՞ պլպլան ֆինտիֆլուշկաներով տրոստին: Խո երկու մանեթին չեմ ափսոսա, ծո՛. թամբալություն չեմ սիրե:

— Ձեռքերդ քոր կուգան, էլի:

— Բա ի՞նչ գիտես. հա՛, քոր կուգան. էն էլ շատ անտանելի:— Ընդոստ վեր կացավ:— Էդքան սազն ու թառը որ շինել եմ, հոգիս դու՞րս է եկել. մեկն էլ քեզի եմ տվել:

— Սազն ու թառը՝ ուրիշ,— գրեթե բերանփակ ասաց Արծրունը:

— Ապրի՛ս, իհարկե, ուրիշ են: Չէ՛, ես պտի շինեմ:

Երրորդ օրվա առավոտյան Շերամն այնպիսի հպարտությամբ իջավ սանդուղքով, որ նայողին կթվար, թե բարձրարժեք ստեղծագործություն է ավարտել: Անցավ Էնգելսի փողոցն ու ելավ այգու ծառուղին: Մոտեցավ տարեցներին, խոնարհ ողջույն տվեց, ապա ներկայացրեց նոր ձեռնափայտը:

— Իսկ սա՞... լավ ականջ դրեք.— զվարթ բացականչեց նա և կարդաց իր նոր ոտանավորը աշխատասիրության մասին:

Նրա շուրջը հավաքված տարեցներն ու ջահելները հավանեցին բանաստեղծությունը, որ վերջանում էր իրեն՝ հեղինակին վերաբերող խորիմաստ տողերով:

— Տեսնում եք. ես ինձ էլ եմ խորհուրդ տալիս, թե՝ երբեք չլինի ծուլանաս և աշխատող ընկերներից ետ մնաս:

5

Երազանքնե՛ր, երազանքնե՛ր...

Պատանեկան տարիներից երազանքները եղան Ճերամի անբաժան ուղեկիցները, մշտապես քայլեցին նրա հետ և՛ դյուրին, և՛ դժվարին ճամփաներով: Երազանք ծաղկուն հայրենիքի, երազանք երջանիկ ապագայի, երազանք անաղարտ սիրո, ժողովուրդների բարեկամության... Ինքը գիտեր, որ վաղ թե ուշ հայրենի հողն իր գիրկն է առնելու իրեն, բայց մարդկությունը թող ապրի համերաշխության մեջ: Եվ նա հորինեց վերջին իմաստուն տաղերից մեկը, որ երազանք էր ու բաղձանք:

Մարդիկ զարմանում էին, թե ինչու՞ Ճերամի հոգում չկա և չի եղել իր եսն ու անձնականը ամենից վեր դասելու մի հնչյուն անգամ: Հանդիպում ունենար քաղաքային այգում, թե երիտասարդ գրողների հետ, համերգի ներկա լիներ, թե զրույցի, ամենուրեք նրան դեպի լուսավոր հորիզոն էր տանում երազանքը, իրենից հետո գոյատևող մարդկության ճակատագրի երազանքը: Եվ դա էր, որ երգչին մղեց դեպի գրասեղանը, գրիչ տվեց ձեռքը և հրամայեց.

— Հնչեցրու քո վսեմ երազանքի երգը, տաղերգու՛:

Եվ նա հորինեց «Այսպես կցանկամ» բանաստեղծությունը:

Հավերժական սիրո առաքյալը, որ Նարեկացու, Ախթամարցու, Մագիստրոսի և այլ մեծերի անվանակիցն էր, երազում էր լեռան կատարից նայել ու տեսնել, որ բոլորն իրարու կարեկից են դարձել, չարիքները ջնջվել են աշխարհից, և մարդիկ ապրում են սիրով ու խաղաղ:

Արևհատը լսեց հոր ոտնաձայնը և պատշգամբ ելավ: Հայրն ջտապ մոտեցավ դստերը. ինչու՞ իրեն վախեցած դիմավորեց նա:

— Ի՞նչ անեմ, հերըս,— ձեռքը կրծքին դնելով՝ թոթովեց Արևհատը,— էնպես եկար, որ սիրտս թռավ:

— Ղուրբան էղնիմ սրտիդ, Արև՛ ջան, ի՞նչ պտի պատահի,— դստերը հանգստացրեց հայրը։— Գիտուն Կառլոս տա՞նն է։

— Չէ, հերրս, Հայկն է տանը։

— Ի՞նչ է եղել, որ...

— Գլուխը մի քիչ տաք է՝ շուտ է եկել։

— Բան չկա, Արև ջան, ո՞ր կոշկակարը խմելու հետ պիրով չէ՞ որ...

Փեսան աներոջը դիմավորեց ձեռքերը կարկառած և փոռձեց երգել՝ սեղանը դիոլ դարձնելով.

Ձուկը դրիր՝ խաշեցիր,
Կաթի սերը քաշեցիր...

Աները կանգնած մնաց· ժպտուն աչքերով նայեց փեսային և ընդհատեց.

— Էդպես որ երգես, Հայկո՛ ջան, ո՛չ ձուկ կխաշվի, ոչ էլ կաթի սեր կքաշվի։

— Ընչի՝ չիտե՞մ. վայ թե ձուկն էլ թողնի ու փախնի, չէ՞։

— Հըբը ի՞նչ։

— Որ էդպես է, դու՛ երգե, հայրի՛կ, ի՞նչ կեղնի, կտեսնիս, որ քեֆս լավ է՝ երգ է հարկավոր։

Ներս մտավ Կառլոսը։

— Կառլո՛ ջան,— դարձավ նրան պապը,— նոր ոտանավոր եմ գրել, կարդա՝ տես կհավնի՞ս։

Եվ հենց որ պապը գրպանից հանեց գրածն ու տվեց թոռանը, փեսան ձեռքը թափ տվեց ու գնաց քնելու։ Կառլոսը կարդաց ու հավանեց պապի ոտանավորը։

Դստեր տնից ելնելով տաղերգուն գոհ սրտով իջնում էր քաղաքային այգու կողմը, երբ ղիմացից եկան ու նրան շրջապատեցին մի խումբ երիտասարդներ։

— Ողջու՛յն մեծն Շերամին,— խոպոտ ձայնով ու ձեռքը բարձրացնելով՝ գոչեց թիկնեղ ու հպարտ կեցվածքով մի տղա.— ես Մեսրոպ Մերուժանն եմ։

— Բարև՛, տղերք,— երիտասարդի հանդիսավոր ողջույնի վրա խնդաց տաղերգուն։— Ո՞վ եք, ի՞նչ եք,— կատակով հարցրեց նա։

— Ոչ թե՝ ինչ ենք, այլ երիտասարդ բանաստեղծներ ենք, Շերա՛մ,— միջամտեց Մեսրոպի հետ քայլող, սուր դիմագծերով, նիհար, շարժուն ու տեղի-անտեղի խնդացող, հարթ մազերը ոսուդեն ցրիվ տվող ջահելը։

Երգչի հայացքը գրավեց այդ տղան:

— Էն խելոտու՞կն ով է, Մեսրոպ ջան,— կամացուկ հարցրեց նա:

Մեսրոպը բամբ-բամբ ծիծաղեց ու, ընկերոջ թևից բռնած՝ առաջ քաշեց և ասաց.

— Ի՞նչ խելոտուկ, վարպե՛տ... Մեր միջի ամենատաղանդավոր բանաստեղծն է, գյումրեցի Հովհաննես Կարապետյանն է՝ Շիրազը...

— Չի կրնա գյումրեցի էղնի,— կասկածեց Շերամը:

— Հաստատ գյումրեցի եմ, վարպե՛տ,— երդվելու նման ասաց Շիրազը:

— Որ գյումրեցի ես, հըբը անունդ ընչի՞ է Շիրազ, ինչդ որ Պարսկաստանից էկած էղնիս:

— Ախր դա այդ երկրի վարդաստանն է, Շերա՞մ:

— Հա՛, դրա համա՞ր ես անունդ Շիրազ դրել: Իսկ գիտե՞ս, թե Պարսկաստանի մյուս գավառներն ինչով են հայտնի,— խոսքը հարցով ավարտեց Շերամը:

— Օրինա՞կ,— ծերունի երգչին վեճի տրամադրեց բանաստեղծը:

— Օրինա՛կ... Խորասանի գավառը,— անթարթ հայացքը՝ երիտասարդի բարակ շրթունքներին, աքլորացավ տաղերգուն.

Շիրազը սրա-նրա թևին հարվածելով ինչ-որ հարցեր տվեց. երևի ստուգում էր իր իմացության ճշտությունը: Եվ գյուտ արածի պես բացականչեց.

— Խորասանի գավառը հայտնի է իր գորգերով:

Շերամը քթի տակ խնդաց.

— Ես էլ որ էդքան մարդու հարցնեի, հիմի պրոֆեսոր էի դարձել:

— Դու էլ քո գործի պրոֆեսորն ես, Շերամ, հայոց երգի պրոֆեսորը,— վեճի սուր ծայրը կորացրեց Շիրազն ու դարձավ ընկերներին.— Տղե՛րք, մտնենք էս ճաշարանը, մեկ-մեկ բրդուճ հաց ուտենք:— Եվ տաղերգուի թևը ճանկելով տարավ նկուղային ճաշարանը: Շերամը հրաժարվեց կոնյակ խմելուց և կաթ ուզեց:

— Կաթո՞վ պիտի պատվենք քեզ նման երգչին, ո՛վ Շերամ,— հոխորտաց Մեսրոպը: Մյուսները ձայն չհանեցին, երբ տեսան, որ ծեր վարպետը ձեռքը դրեց կրծքին ու խնդրեց.

— Չե՛մ կարող, տղերք ջան, հիվանդ եմ...— Եվ ծոցագրպանից հանելով թոռան գոված բանաստեղծությունը, տվեց Շիրա-

գին։— Որ սրանց միջի ամենաշնորհալին դու ես, առ մի տես, թե ութսուն տարեկան երգիչը կարո՞ղ է էսպես բան գրել։

Շիրազը կտրուկ շարժումով խլեց թուղթն ու, արագ աչքի անցկացներով, հայտարարեց.

— Տղերք, սուսե՛ք՝ կարդամ, տեսեք, թե ձեզանից ո՞րը ուժ կունենար էսպես մի տուն գրելու...— և կարդաց.

Կուզեմ ես ապրել մինչ հազար տարին,
Արժվի պես՝ անժայր լեռան կատարին,
Տեսնիմ ջախջախված գանգը մեծ չարին...

Ծափահարությունն ու գովասանքի բառերը խլացրին բանաստեղծության վերջին տողերը։

— Հոտնկա՛յս խմենք մեծն Շերամի կենացը, տղերք,— որոտմունքով հայտարարեց Մեսրոպն ու տեղից ելավ։

— Խմե՞նք, խմե՞նք...— գոչեցին բոլորն ու ոտքի կանգնեցին։

Մի քանի րոպե անց տաղերգուն քաղաքային այգում պատմում էր երիտասարդ բանաստեղծների հետ հանդիպելու մասին.

6

Աշխույժ զրուցելով, համերգասրահ են շտապում երկու երիտասարդ. Ապա դահլիճով անցնելիս նրանցից մեկը բռնեց մյուսի թևը.

— Սպասիր մի րոպե։ Առաջին կարգում նստած ծերունիներից մեկին ճանաչում եմ. կոմպոզիտոր Ազատ Մանուկյանն է։

— Դե՛, դու կճանաչես, Արմեն,— խոսեց Արշավիրը.— երաժշտական կրթություն ունես... իսկ նրա կողքին նստած ծերունին ո՞վ է։

— Հը՛մ,— արեց Արմենը,— նրան չեմ ճանաչում։

Կոմպոզիտորն անընդհատ թեքվում էր ալեհերի կողմը։ Արմենը քաշեց ընկերոջ թևը.

— Արի՝ ծանոթացնեմ։

Այս խոսքը հասավ Մանուկյանին. նա ժպտաց ու ողջունեց.

— Բարև՛, քաջեր։— Տղաները նրա երկայնափեշ բաճկոնի կրծքին տեսան փքուն ժապավեն-փողկապը։— Ինչո՞վ կարող եմ ծառայել մեր երիտասարդությանը,— հարցրեց կոմպոզիտորը։

— Ոչի՞նչ... ընկերս ցանկանում է ծանոթանալ ձեզ հետ։

Ազատ Մանուկյանը սեղմեց նրանց ձեռքերն ու կրկնեց իր անունը։ Ալեհեր և կարծես արևայրուք ընդունած մարդը դիտում

էր երիտասարդներին: Հանկարծ կոմպոզիտորն սթափվեց ու դարձավ զրուցակցի կողմը.

— Պա՛հ, ո՞նց մոռացա, տղանե՛ր... Շուտ մոտեցեք և ծանոթացեք: Գիտե՞ք ով է այս ծերունին:— Երիտասարդները դիմախաղով հասկացրին, թե չգիտեն:— Այս մարդը գուսան Շերամն է, հապա՛...

— Վա՛հ,— դուրս թռավ ջահելների բերանից:

Ամենից ապշահարն Արշավիրն էր: Նա՝մի ակնթարթ նույնիսկ մոռացավ ձեռք տալ մեծ տաղերգուին, ապա ուշքի եկավ ու, մի փոքր կոանալով՝ զույգ ափերի մեջ ամփոփեց նրա ջղուտ, լիարյուն երակներով ձեռքը: Գյուղից մայրաքաղաք եկած ջահել ակումբավարի համար աներևակայելի հայտնություն էր դա: Զէ՞ որ ինքը և իր հասակակիցները տարիներ շարունակ ունկնդրել են նրա տաղերն ու զմայլանքի ժամեր ապրել: Ընկերները զրուցում էին կոմպոզիտորի հետ, իսկ Արշավիրը հայացքը հառել էր Շերամի դեմքին ու թվում էր, թե լսում է նրա հոգեպարար մեղեդիները: Հիացմունքի կախարդական րոպեն հատեց ինքը՝ գուսանը.

— Ի՞նչ գործ ես անում, Արշավիր:

— Ստեփանավանի շրջանում Գյուլագարակ գյուղ կա, վարպետ, գիտե՞ք:

— Զեմ տեսել, բայց լավ գիտեմ. փոքր որդիս էնտեղ ուսուցիչ է եղել. ճանաչու՞մ ես:

— Ինչպե՞ս չէ, շատ լավ գիտեմ:

— Նա իմ փոքր որդին է: Է՞, ի՞նչ գործի եք եկել էստեղ:

— Պատրաստվում եմ ուսումս շարունակել, վարպետ:

Շերամը խորը շունչ քաշեց և իր խորհուրդները շարադրեց երիտասարդների համար:

— Գիտե՞ք, տղամարդը հենց ձեր հասակին է տղամարդ դառնում. իսկական տղամարդն էն է, որ իր խոսքի տերն է լինում. ինչ վճիռ որ ընդունում է, պետք է կատարի: Ձեր նպատակը սովորելն է, չէ՞:

— Այո,— միաբերան ասացին տղաները:

— Որ էդպես է,— շարունակեց երգիչը.— լավ պիտի սովորեք: Դե՛, կարող է դժվարություն էլ լինի. էլ ինչ տղամարդ, որ դժվար օրի չդիմանա:

Ազատ Մանուկյանը դարձավ նրա կողմը.

— Շերա՛մ, ինչու՞ ես երիտասարդներին էդքան խրատում. լավ կսովորեն, կաշխատեն, էլի:

Գուսանը զարմանքով նայեց կոմպոզիտորին:

— Սպասի՛ր, Ազատ, ի՞նչ ասացի որ. ես էլ ուզում եմ, որ էս ջահելները իսկական տղամարդ լինեն, հա՛յ տղամարդ:

Քիչ անց համերգն սկսվեց: Արշավիրը լուռ ունկնդրում էր երգիչներին և մտածում, թե ինչքան բարի և իմաստուն մարդ է Շերամը: Ամբողջ դահլիճը ծափողջունեց նրան, երբ բեմ հրավիրեցին: Նա գլուխ տվեց, ցավալի ժպտաց, զգուշավոր քայլերով իջավ դահլիճ և անցավ իր տեղը, իսկ ծափահարությունը դեռ շարունակվում էր:

Տարիներն անցնում էին շարվեշարան, իսկ Արշավիրն ու նրա ընկերները չէին մոռանում մեծ երգչի խորհուրդը՝ տղամարդն իր խոսքի տերը պիտի լինի. որոշեց, ուրեմն ինչ էլ գա գլուխը, պետք է կատարի: Դժվարությունները կհաղթահարի նա, ով կամքի ուժ ունի:

7

Այդ օրը նա դստեր տուն ոտք դրեց այնքան մռայլ, որ փեսան վախեցած հարցրեց.

— Ի՞նչ է եղել, հայրիկ:

— Տխուր եմ, էլի,— բուն խոսքը կտուրը գցեց Շերամը:

Փեսան այլևս չշարունակեց հարցուփորձը և աներոջ թողած թիթեղյա տուփով դոմինոն դրեց սեղանին:

— Խաղա՞նք,— հարցրեց աները, ձեռնափայտը մի անկյուն դնելով ու գդակը կախելով դռան մոտի կախարանից:— Է՛, դու խաղա՞լ երբ գիտես, որ ընձի հետ ոտք մեկնես:

Հայկը կամացուկ ծիծաղեց ու խաղաքարերը շուռ տվեց սեղանին, խառնեց և իր բաժինն առանձնացրեց: Շերամը նայեց փեսայի դեմքին. ուզում էր մի բան հարցնել, բայց կուլ տվեց ու միայն հառաչեց.

— Է՛, Հայկո ջան, աշխարհք իրար է խառնվել...

— Էս քարերի պես. պտի խառնեն, որ հետո ջոկջկեն:

Շերամը չարձագանքեց փեսայի խոսքին, բայց խաղաժամի կեսին շրթունքները մոտեցրեց նրա ականջին և անսպասելի փսփսաց.

— Գևորգ Հանեսօղլյանին էլ...

Հայկն առանց մի բառ իսկ արտաբերելու, գլխով արեց ու խաղը շարունակեց: Ծանր լռությունը կրկին խախտեց երգիչը.

— Ընչի՞ բռնեցին:

Հայկի հայացքից երևում էր, որ չի ուզում փորփրել կյանքի առեղծվածներից մեկը. բայց հերթական քայլը կատարելուց հետո չհամբերեց և գրեթե անձայն ասաց.

— Բռնեցին, էլի...— և հոնքերի տակով խորունկ նայեց անեռոջը:

Շերամը խաղն ընդհատեց,

— Մենակ նրա՞ն հո չեն բռնել:

Տաղերգուն խաղաքարն այնպես շրխկացրեց սեղանին, որ մյուս սենյակից ներս վազեց Արևհատը:

— Էդ ի՞նչ եղավ, հայրիկ,— ահաբեկված հարցրեց նա:

Հայրը թեքվեց նրա կողմն ու խոսեց.

— Հե՛չ, Արև ջան. էնպես խոսում ենք, էլի:

Արևհատը կասկածով նայեց մեկ սրան, մեկ նրան ու գնաց իր գործին: Մեկ էլ հոգնած, բայց երջանիկ մարդու քայլվածքով ներս մտավ Վարդգեսը. նա ժպտում էր:

— Ծննդատնից եմ գալիս,— հոր և փեսայի հարցումը կանխելով՝ հայտնեց նա:

— Է՛հ ,աչքդ լույս, Վարդ ջան, հայր դարձար: Է, ի՞նչ է բերել Շահանդուխտ թագուհին:

— Աղջիկ:

— Անու՞նն ինչ պիտի դնես:

— Չգիտե՞ս, մորս անունը՝ Սալվինազ:

Շերամը վիզը ծռեց և ժպտաց: Աչքալուսանք մաղթեցին նաև մյուսները...

Մի օր էլ Շերամը տխուր-տրտում մտավ դստեր տուն, թե՝ Արև ջան, կնիկս գնացել է Համամլու:

— Ինչու՞ է գնացել:

— Մեծ տղեն կայարանապետ է, չէ՞, էնտեղ: Ասեց՝ դու էլ արի, չգնացի:

— Էլ ինչի՞ ես տխրել. արի մնա մեր տանը:

Ճաշից հետո տաղերգուն գնաց քաղաքային այգի, բայց շուտ եկավ տուն: Եվ գիշերվա կեսին Արևհատը տնքոց լսեց: Մյուս սենյակում հայրը ախուոֆ էր անում: Գնաց տեսավ՝ նա նստել է անկողնում ու վայվայը գցել, հետն էլ անվերջ ասում է.

— Հըբը՛, թութ կուտե՞ս, հըբը, թութ կուտե՞ս...

Արևհատը զարմանում է, թե տարվա այդ ժամանակ ի՞նչ թութ։ Պարզվեց, որ հայրը ցերեկը չոր թութ է կերել և ստամոքսի այրոցը տանջում է նրան։ Դուստրը նրան սոդայաջուր է տալիս, հանգստացնում, իսկ նրա խոսքը դառնում է թևավոր։

Հետագայում ով մի սխալ գործեր, մերձավորները հիշեցնում էին թթի պատմությունը և ավելացնում.

— Հըբը, թութ կուտե՞ս։

Այսինքն՝ էլ սխալ կգործե՞ս։

Եվ այդ պարզամիտ խոսքը մինչև այսօր ասույթի պես է հնչում։

ՎԵՐՋԻՆ ԵՐԳԸ

1

Անցավ ևս մի լացող աշուն, անցավ ևս մի սրսփացող ձմեռ։ Հավքերի ճռվողյունով ու մանկանց կարկաչյուն ծիծաղով բացվեց սաղարթախիտ գարունը։ Քաղաքային այգու ծերակույտը նորից գումարվեց, բայց դրա գլխավորն սկսեց ուշ-ուշ այցելել զրուցակից ընկերներին։ Նվազաձու Արծրունը մեկնեց Լենինական, իսկ թիֆլիսեցի Վանոն՝ իր ծննդավայրը։ Հայրենիք վերադարձավ Ավետիք Իսահակյանը։ Արդեն երևու անգամ է, որ անցնում է ծառուղիով, ուզում է տեսնել Շերամին, սակայն երգիչը չի երևում։ Եվ բանաստեղծն անհանգստացած հարցուփորձ է անում.

— Ու՞ր է Գոքորը, ինչու՞ չի գալիս այգի, ի՞նչ է եղել։

— Ասում են հիվանդ է, վարպե՛տ,— պատասխանում է նկարիչ Գևորգ Բրուտյանը.— տնից շատ դուրս չի գալիս։

Ավետիք Իսահակյանը սուր հայացքը նետի պես արձակեց ջահելության ընկերոջ տան կողմն ու ախ քաշեց։ Հաջորդ օրը բանաստեղծը շատ ուրախացավ, երբ նրան տեսավ իմաստնացած Շերունիների շարքում ու ողջունեց.

— Բարո՛վ տեսանք, Գոքոր։ Ծո՛, ու՞ր ես, տնաշեն։

— Բարև, Ավո ջան, էս ինչքան ժամանակ է եկել ես ու չես երևա,— մտերիմի հարցի պատասխանը ականջի ետև գցելով ու թախծոտ ժպիտը սուզելով նրա խորախորհուրդ աչքերի մեջ, կըշտամբեց Շերամը։ Բանաստեղծը հետաքրքրվեց.

— Ի՞նչպես ես, Գոքոր:

— Հիվանդ եմ, Ավո ջան, հիվա՞նդ եմ...

Երբ երկու մեծերին տարեցները նստելու տեղ տվեցին, Ավետիքը հուսադրեց.

— Լսել եմ, որ բուժվում ես:

— Հա՛, էդպես մի բան կա:

— Դե՛, ուրեմն կառողջանաս, էլի, Գոքոր:

— Եսի՞մ, Ավո ջան. պրոֆեսորը ծառագայթ-մառագայթ կուտա. էն էլ քեզի պես կըսե՝ կլավանաս.— և խորը հոգոց հանեց ու ավելացրեց.— խելքս չի կտրե, թե լավանա՛մ... ութանասուն տարեկան մարդուն էլ ի՞նչ լավանալ,— և ոտքի կանգնեց:

— Ինչու՞ ելար,— հարցրեց Իսահակյանը:

— Պտի էրթամ տղիս տուն՝ իմանամ, թե պրոֆեսորը մեկ էլ ե՞րբ պտի ընձի դաղե էդ անտեր ծառագայթներով:

Բանաստեղծն էլ ոտքի ելավ:

— Քելե, Գոքոր, քելե՛ էրթանք...

— Քելե, լաո, քելե էրթանք մըր էրկիր,— մեղմաձայն ու լալագին երգեց Շերամը:

Մի քանի քայլ ընթացան անտրոփ ու տրտում: Բանաստեղծը խոսեց ծանրորեն.

— Է՛, տխուր են մեր երգերը, Գոքոր, տխո՛ւր են...

Շերամը հառաչեց միայն, հառաչեց հոգու խորքից:

Եվ երկու հայրենակիցները հանդարտ քայլեցին դեպի Շահումյանի հրապարակ:

Գյումրեցի թիթեղագործ Աղասի Պապոյանը երկար ծանապարհ դրեց նրանց հայացքով և հիշեց.

— Հե՛յ գիտի, ուստա Գոքոր,— լռեց մի պահ.— միտքս կուգա, տղերք, Գոքորն ամեն օր արհեստանոցիս դռնից կանցներ... էդ ինչ շիքով մարդ էր. հավասարը չկար: Ասում էի՝ բարև, Գրիգոր եղբայր:— Բարև, Աղասի ջան,— կըսեր ու կանցներ... Ուրիշ մարդ լիներ, հասարակ արհեստավորին ինչու՞ պիտի բանի տեղ դներ, բարև տա՛ր...

Նայեց երկու մեծերի գնացած ուղղությամբ ու լռեց:

Շուտ գնացին տուն տարեցներն այդ օրը: Ամեն մեկն իր հոգու խորքերն էր պեղում և մտաբերում անցած-գնացած տարիները և կարծես չէր ուզում իր նվիրական զգացմունքները հասարակացնել, մանր դրամ դարձնել և արժեցող կամ չարժեցող մարդկանց բերանները գցել:

Նրանց միմիայն մտահոգում էր մի հանգամանք՝ մի՞թե քաղաքային այգու ծերակույտը քայքայման ուղին է բռնել...

Դրան հակառակ, երիտասարդությունն ավելի ու ավելի էր հրապուրվում ժողովրդական և գուսանական երգերով:

Երկու երիտասարդ մոտենում էին Ազիզբեկովի հրապարակին. երկուսի ձեռքին էլ ոլորած թղթեր կային: Նրանցից մեկը խախտեց լռությունը.

— Գարեգի՛ն, էս հոդվածը վաղվա համարու՞մ պիտի լինի:

— Չգիտեմ, Հրաչ. Աշփալն ասում էր, թե շուտ պետք է ուղարկեն տպարան:

Հրապարակի կեսն անցել էին, երբ երգի ու նվագի ձայն ընկավ նրանց ականջը: Երկուսն էլ մի պահ կանգ առան և, գլուխները դեսուդեն դարձնելով՝ փորձեցին որսալ, թե որտեղ է համերգը:

— Խմբագրությունում է:

Նրանք գրեթե վազելով մոտեցան «Խորհրդային Հայաստան» լրագրի խմբագրության կիսաբաց լուսամուտին ու, ոտնաթաթերի վրա ձգվելով՝ ճգնեցին տեսնել, թե ինչ է կատարվում ներսում:

— Շատ ծանոթ ձայն է,— կռահեց Հրաչը:

Ներս մտան և գամվեցին պատասխանատու քարտուղարի ընդարձակ սենյակի բաց դռան շեմքին: Հայացքները պտտեցին այդտեղ հավաքված բազմության վրայով: Այս ի՞նչ է, բոլորը կլանված նայում են սենյակի մեջտեղը նստած երգչին:

— Շերամն է,— գոհունակությամբ ասաց ընկերը Գարեգինին:

Ահա և Աշոտ Փալանջյանը՝ Աշփալը: Սա մատը դրեց շրթունքներին, թե ձայն չհանեք:

Տղաները նայեցին չորս բոլորը. ազատ աթոռ չկա: Խմբագիրը ձեռքով արեց՝ այդպես մնացեք: Գարեգինն իր շշուկը լցրեց ընկերոջ ականջը.

— Բա սա էն հիվա՛նդն է, որ ասում էին:— Ապա կռացավ ու Աշոտին հարցրեց.— Էս ի՞նչ կապակցությամբ եք հրավիրել:

— Խմբագրությանը չափաձո նամակ է գրել Էնգելսի փողոցի մասին. մենք էլ կանչել ենք խմբագրություն. թառն էլ հետն է բերել:

Գարեգինը հետո իմացավ, որ տաղերգուն իր նամակում արտահայտել է այն միտքը, թե՝ անհարմար չէ՞, որ այդ մեծ մարդու անունը կրող փողոցն այդքան անբարեկարգ է մնացել՝ դարուփոս, մայթերը քանդված...

Երբ երգերի արանքներում ծափահարությունը երկարում էր, տաղերգուն նվագարանը սեղմում էր կրծքին և ուժգին զարկում լարերին. երևի նրա համար, որ ունկնդիրները շատ չշռայլեն գովեստները: Մի տաղից հետո երգիչը դադար ունեցավ. Աշփալը հարցրեց.

— Վարպե՛տ, ձեզանով վերջանու՞մ է աշուղությունը. չէ՞ որ հիմա բոլորը դպրոց են գնում, ուսում են առնում, երաժշտություն սովորում:

Շերամը ժպտաց ու խոսեց.

— Էդ բոլորը ազդում են, իհարկե, Աշո՛տ ջան. մարդ կար՝ աշուղ կարող էր դառնալ, բանաստեղծ դարձավ. բայց աշուղությունը կմնա, քանի ժողովուրդը կա· Ափսոս է, որ աշուղական ձևերը կորչեն:— Հայացքը հառեց լուսամուտից դուրս և շարունակեց.— իսկական աշուղը, իսկական էլ բանաստեղծ է: Մի Սայա՛թ... մի՞թե բանաստեղծ չէ:

Բազմության մեջ ծայր առավ ինչ-որ բվվոց. հավանության խուլ ձայնն էր դա: Մի քանիսն իրարից խոսք խլելով՝ խնդրեցին, որ տաղերգուն պատմի իր կյանքից: Գարեգինը համարձակվեց դիմել նրան.

— Վարպե՛տ, ծի՞շտ է, որ եթե ուժեղ չսիրահարվեիք, աշուղ չէիք դառնա:

Շերամը քմծիծաղով հաստատեց այդ կարծիքը, ապա խոսեց.

— Երբ մուսա, բան ասում են, սերն է որ կա... Ես էլ բուռն կերպով սիրահարված եմ եղել, բայց... Լավ, էդ հետո...— Եվ ախ քաշեց ու հնչեցրեց տաղերից մեկը, որ աղերսանք էր հեռավոր ծովերին ուղղված, որպեսզի ճանապարհ տան՝ գնա սիրեցյալի մոտ:

Խոր, մեծ ծովեր, մեղմացուցեք
Ալիքները ձեր կատաղած...

Հանպատրաստից համե՛րգն ավարտվեց: Երգչին ճանապարհ դնելիս խմբագիրը հավաստիացրեց, որ Էնգելսի փողոցի խնդիրն անպայման կլուծեն: Նա պատվիրեց նաև, որ Գարեգինն ու Աշփալը Շերամին ուղեկցեն մինչև տուն:

Եվ ահա, երեքն էլ հանգիստ իջնում են Նալբանդյան փողոցով: Գարեգինը նվագարանն է տանում, իսկ Աշոտը երբեմն բռնում է երգչի թևը, երբ սա մի վայրկյան կանգնում է շունչ քաշելու: Մի կանգառի պահին երիտասարդ լրագրողը հարցրեց.

— Ի՞նչ կասեիք Ջիվանու մասին.

Երգիչը նայեց նրան և իր հերթին հարց տվեց.

— Ի՞նչ է, Ջիվանուն շա՞տ կսիրես:

— Այո, մանավանդ «Զախորդ օրերը»,— ասաց Աշոտը:

Շերամը դարձյալ մեկառմեկ զննեց նրանց դեմքերի արտահայտությունը և շարադրեց իր կարծիքը.

— Տղե՛րք ջան, Սայաթ-Նովան ու Ջիվանին մեր ժողովրդական արվեստի սյուներն են. կլասիկ եք ասում, ինչ եք ասում, էապես է: Ինչքան որ կհասկնամ, Սայաթ-Նովան ամբողջ մարդկությանն է, իսկ Ջիվանին ազգային է: Է՛, որ ազգային է, մյուսներինն էլ է, էլի... Ժողովրդի ճակատագրի մասին էլ է գրել: Ժողովուրդը սիրում է Ջիվանուն, բայց դեռ կարգին գնահատված չէ:— Մի ակնթարթ ամփոփվեց խոհերի մեջ, ապա շարունակեց.— Էս երկու մեծերին արձան պտի կանգնեցնել:

Աշփալը նորից հիշատակեց Ջիվանու երգը: Շերամն ասաց.

— «Զախորդ օրերը» մեծ երգ է, համաշխարհային:

— Ձեր երգերը սիրո մասին են, չէ՞,— մեջ գցեց Գարեգինը:

— Քի՞չ բան է,— խնդաց երգիչը:

— Չէ՛, իհարկե, բայց ուրիշ երգեր չե՞ք գրել:

— Ընչի՞ չէ, գրել եմ: Ժամանակին շատ էր տարածված «Անդրանիկին» երգս.— ու մեղմ ձայնով հիշեցրեց.

Իբրև արծիվ սավառնում ես լեռ ու ժայռ,
Թնդացնում ես երկինք, գետինք տենչավառ...

Ապա մեկեն ընդհատեց և թախծեց.— Էդպես ուրիշ-ուրիշ երգեր էլ ունիմ:

— Իսկ ի՞նչ բարեկամական կապ կա ձեր և Ջիվանու միջև,— հետաքրքրվեց Աշոտը:

—Հորեղբորս՝ Հովհաննեսի աղջիկը նրա կինն էր, Շարա Տալյանի հորաքույրը: Շարան հորեղբորս թոռն է, աշուղ Ջամալու որդին:— Մի խոսքից հետո, ոգևորված բացականչեց.— եթե ես գրել չիմանայի, ինչպես որ եկել էի, էնպես էլ պտի գնայի կյանքից՝ աննշան. հարյուրավոր երգերս պտի իզուր կորչեին: «Էդ ոսկեթել մազերդ» երգիս համար գժվում էին. ինչե՛ր էին անում... Հիմա լավ է... ո՛չ սեր, ո՛չ բան: Իմ բարեկամ Մուշեղ Մամիկոնյանն ասում էր, թե դու պետք է լավ բանաստեղծ լինես և...,— մի վայրկյան լռեց,— և անպայման պետք է սիրահարվես:

Ես զարմացա. ինչպե՞ս թե՝ սիրահարվեմ,— ասի,— զակազով սե՞ր կեղնի...

Լրագրողները ծիծաղեցին:

Հասան Շերամի տան մոտ: Ուղեկցողները հետաքրքրվեցին, թե մեկ էլ ե՞րբ կգա խմբագրություն, ե՞րբ կհանդիպեն: Երգիչը տարուբերեց գլուխն ու գուշակողի խորհրդավոր ձայնով փակեց զրույցը.

— Հիվա՞նդ եմ, ասի՞մ՝ մեկ էլ երբ կհանդիպենք. ինձ էլ որ չհանդիպեք, երգերուս կհանդիպեք...

Երիտասարդներն ի՞նչ իմանային, որ դա վերջին տեսակցությունն էր մեծ տաղերգուի հետ:

2

Ծառուղիով դանդաղ քայլում է Շերամը: Մերթընդմերթ բարձրացնում է գլուխը, հենվում ձեռնափայտին և նայում ծախրող թռչուններին, արևի շողերի հետ չարաճճիորեն խաղացող տերևներին, երկնքում նավող ծերմակ ամպերին:

Անցավ նա մարդկանց առջևով, գլխի թեթև հակումով ողջունեց բոլորին, խոր շունչ քաշեց ու դիմեց դեպի վերջին նստարանը, որ դրված էր ավազանի դիմաց: Այստեղ էին հավաքվում իր զրուցակիցները, որ մերթ դիվանագետներ էին դառնում, մերթ կենցաղագետներ: Շատրվաններից մեղմ խոխոջյունով ցայտում էին ադամանդյա շիթերը: Ծերունի երգիչը նայեց խնդուն աղջիկներին ու տղաներին, որ արագ անցնում էին իր մոտով, ու փիլիսոփայեց. «Կյանքն հիմի էսոնցն է, Շերամ. դու էլ բաժին չունիս էս գեղեցկությունից, շա՛տ ափսոս...»: Եվ հոգու անհայտ խորքերից, այնուամենայնիվ, բխեց երգի շատրվանը: «Դեռ ե՞րգ կա մեջդ, Շերամ...»:

Նա շեղեց ճանապարհն ու մտովի երգելով, անցավ: Նրան սպասող տարեցները տեղներից ելան ու տարակուսեցին, ուզեցին ձեռքով կանչել նրան, բայց մնացին այդ դիրքում: Իսկ նա մոտեցավ իրենց տան դռանը, ձեռնափայտով հրեց՝ բաց արեց ու հևասպառ ոտք դրեց պատշգամբ, մտավ սենյակ ու վերարկուն չհանած՝ նվագարանն առավ ձեռքը. նստեց, գործիքը մերկացրեց, շապիկը շպրտեց մահճակալին և սկսեց նվագել: Մի քանի անգամ երգելով՝ կրկնեց նոր տաղի առաջին տողերը: Նվագարանը ցած դրեց ու ոնդնալով՝ թուղթ ու մատիտ հանեց սեղանի դարակից և սկսեց գրել: Ու ծնվեց նոր երգը:

— Է՛, ու՞մ քովը երգեմ, որ մտիհան չանեմ(Աղջիկս մոտս չէ, որ միտքը պահե, Վարդս էլ հեռու է...— Եվ նա, թառը ձեռքին, մոտեցավ Արամյանի տանն ու հենց շեմքից ձայն տվեց.— տիկի՛ն Շամունե, երգ եմ գրել, մի լսիր՝ տես:

— Էս րոպեիս, Շերամ,— զվարթաձայն արձագանքեց տանտիրուհին ու, ձեռքերը սրբելով, նստեց նրա դիմաց.— հլա երգի՝ տենամ:

Շերամը երգում էր, երբ ներս մտավ Գևորգ Արամյանը. լուռ կանգնեց. նրա հետ էր կրտսեր որդին:

— Ապրի՛ս, Շամունե ջան, դու որ չեղնեիր, երգս կորած էր: Լավն է, չէ՞:

— Էլ խոսք կա՞, Շերամ, շա՞տ լավն ա:

Երգիչը մոտեցավ դռանը: Գևորգը բռնեց նրա թևը.

— Ու՞ր ես շտապում, ա՛յ մարդ, մնա՝ ծաշենք:

— Չէ՛, Գևորգ ջան, մեկ էլ էղնելիս: Հիմի երթամ, երգիս մնացածն էլ սարքե՛մ, ռանդե՛մ, կոկե՛մ, ներկե՛մ... շնորհակա՛լ եմ:

«Զարմանալի մարդ է. էդքան հիվանդ և էդքան կենսուրախ,— անցավ տանտիրոջ մտքով:

Նա իր սենյակում է. վերջին երգն է մշակում: Նախ մաքրագրում է այն տողերը, որ հղկված են թվում.

Կուրծքդ պարտեզ է շամամի,
Լեզուդ քնար կնմանի...

Թուջի պես ծանր քայլերով է ելնում Շերամը կենտրոնական փոստի չորրորդ հարկը. «Քիչ մնաց, քի՛չ մնաց» մտովի կրկնում է նա և շարունակում նվաճել բարձունքը: Ինքը պետք է հասնի ռադիոկոմիտե, տեսնի նախագահին և հայտնի իր ցանկությունը:

Ահա և միջանցքը: Շերամը խոր շունչ քաշեց ու նայեց չորսդին: Երկու երիտասարդ զրուցում էին: Այս ի՞նչ բան է. երեք տարի է, որ կյանքն իրեն ջահելների հետ է հանդիպեցնում. մի՞թե սա ճակատագրի չար կատակ չէ: Մռայլ մտքերը վանելու համար նա մոտեցավ տղաներին ու հարցրեց.

— Ներողություն, նախագահը որտե՞ղ է նստում:

Երիտասարդներից մեկը, որ հպարտ կեցվածք ուներ, ընդհատեց զրույցն ընկերոջ հետ ու դարձավ երգչին.

— Իսկ ի՞նչ հարցով, եթե գաղտնիք չէ:

— Գաղտնիք չէ, ի՞նչ գաղտնիք. երգի հարցով: Դու էստե՞ղ ես աշխատում, անուշ ջան:

— Այո, այո. երկուսս էլ. իմ անունը Բաբկեն է, հայրիկ:

— Դե՛ արի ցույց տուր ինձ նախագահի տեղը:

Ու երեքն էլ քայլեցին դեպի ընդունարան: Քարտուղարուհին ասաց, թե նախագահը զբաղված է: Բաբկենը պատվիրեց, որ երբ ազատվի, իրեն իմաց տա, և տաղերգուին հրավիրեց իրենց սենյակը: Նստեցին սպասելու: Ծերունի գուսանը հանկարծ սթափվեց մտորումներից և ասաց.

— Հա՛, անուշ ջան, չծանոթացանք. ես Շերամն եմ:

Երիտասարդները մոտեցան ու սեղմեցին նրա ձեռքը: Նա ժպտաց. «Զէ՛, սա չար կատակ չէ»:

— Ես ձեզ մանկությունից գիտեմ,— պարծեցավ Բաբկենը:

— Ջորանա՛ս,— գոհ ասաց տաղերգուն.— խոսելուցդ կերևա, որ կամեցող սիրտ ունիս:

Կարճ տևեցին անմոռանալի րոպեները: Շուտով հեռախոսի զանգը գրավեց նրանց ուշադրությունը: Քարտուղարուհին հայտնեց, որ նախագահը կանչում է վարպետին: Բաբկենի ուղեկցությամբ Շերամը մտավ տնօրենի աշխատասենյակը: Նախագահը խնդրեց, որ տաղերգուն նստի, իսկ երիտասարդին՝ հայտնելու նրա այցելության նպատակը: Իսկ նա ցանկանում էր, որ Արաքսի Գյուլզադյանն իր տաղերից կազմված մի համերգ տա ռադիոյով: Նախագահը ուշադիր լսեց և ասաց, թե դա մեծ պահանջ չէ, ապա հարցրեց.

— Ուրի՞շ:

— Էդքան բան, Հովհաննե՛ս ջան,— հեզությամբ փակեց Շերամը:

Սակայն նրանց զրույցը դրանով չվերջացավ: Նախագահն ուզում էր իմանալ տաղերգուի կենսագրության մանրամասները. ինչպես է առողջությունը, էլ ինչ խնդրանք ունի և այլն: Իսկ վերջում նա վստահեցրեց Շերամին.

— Կլինի այնպես, ինչպես կամենում եք, վարպետ:

— Քիչմ որ շուտ էղնի, ավելի լավ... մեկ էլ տեսա՛ր...— խոսքը կիսատ թողեց տաղերգուն: Նախագահը հասկացավ նրա միտքը և հուսադրական կշտամբեց:— Դե, իմ ցանկությունն էլ էդ է, բայց.. .ամեն մարդ էլ մահկանացու է, Հովհաննես ջան...— հառաչանքով եզրափակեց իր խոսքը տաղերգուն: Թախծալի

մթնոլորտը լիցքաթափելու համար նախագահը դարձավ Բաբկենին.

— Երաժշտական բաժնի հետ մի լավ համերգ կկազմակերպեք, ընկե՛ր Կարապետյան. խոսքն էլ դու կգրես։— Ապա կանչեց քարտուղարուհուն և հարցրեց.— մեքենան այստե՞ղ է.— աղջիկը գլխով արեց.— դե՛ թող վարպետին տուն տանի։

— Չէ, չէ՛, Հովհաննես ջան, ի՞նչ կարիք կա,— ոտքի կանգնելով՝ հակաճառեց Շերամը,— պա՞պս է մեքենայով ման եկել, որ ես ման գամ... Համ էլ տունս մոտիկ է։— Նախագահը մի շարժում արեց, որ նշանակում էր՝ դու գիտես։

Բաբկենը երգչին տարավ մինչև Լենինի հրապարակ, բայց նա չթողեց, որ շարունակի ուղեկցել. ձեռքով արեց և ասաց.

— Գնա՛, անուշ ջան, գնա, գործեր կունենաս. գնա գործդ էրա։

Ու Շերամը, տեսիլքի պես սահեց իր սովորական ճանապարհով, իսկ երիտասարդը երկար ժամանակ նայում էր նրա ետևից ու մտորում...

Ու մեծ տաղերգուն ասես ճուլվեց արևոտ հորիզոնին, ասես երկինք համբարձավ։

3

Այդքան կիպ-կիպ, այդքան մտերմիկ երբեք չեն քայլել նրանք՝ հայր և որդի։ Որդին թևանցուկ է արել հորը և անշտապ տանում է նրան դեպի երգատուն, իսկ հայրն անծնշում հենվել է որդու բազկին և հլու-հնազանդ գնում է առաջ, ասես ծեմում է համընթաց։

Ահա նրանք մտան շքամուտքից ու թեքվեցին փորձասրահի կողմը։ Լայն դուռը բաց է. մի կողմում նստած են նվագածուները։ Ու հենց որ Շերամը ոտք դրեց սրահ, բոլորը ելան տեղներից ու նվագով ողջունեցին նրան։ Տաղերգուն մեկառմեկ դիտեց խմբի մասնակիցներին ու ժպտուն զարմանքով բացականչեց.

— Ծո՛, Վաղարշա՞կ, դու է՞լ էստեղ ես։

— Էստեղ էլ եմ, էնտեղ էլ եմ, Շերամ։

—Էնտե՞ղը որն է, չհասկցանք։

— Էնտեղ, վարպետ ջան, ռադիոյի աշուղական անսամբլը։

— Վա՛րդ ջան,— դարձավ որդուն,— գիտե՞ս սա ով է։— Որդին գլխով արեց՝ գիտեմ, սակայն Շերամը հարկ համարեց ավելի հանգամանորեն ներկայացնել երգչին.— Էնքան էլ չիտե՛ս... Էսիկ

աշուղ Շավաղին է, հըբը՛... ես եմ կնքել։— Հանկարծ տեսավ՝ Մուշեղ Աղայանին, Ռուբեն Թերլեմեզյանին, Վարդան Սամվելյանին և հրծվագին գոչեց.— Ծո՛, էս ինչ զորավոր խումբ է... Բարև, երգիչներ, բարև, բարև՛... է՛, ձեր ուստաբաշի՞ն ով է, վարպետներ։

Հենց այդ պահին ներս մտավ Շարա Տալյանը։

— Հորեղբա՞յր, էս ինչպե՞ս է, որ,— զվարթ ասաց նա։

— Վարդգես Գրիգորևիչն ըսավ, թե անսամբլդ մեկ-երկու երգս կուզե սովորել, դե... մենք էլ եկանք։

— Բարով եկաք, հորեղբայր։

— Շարա՛ Նիկիտիչ,— տեղեկացրեց Վարդգեսը,— հայրիկիս առողջությունը մի քիչ վատ է։ Հիմա հետս եկել է, որ տեսնի, թե ինչպես եմ սովորեցնում իր երգերը։

— Հրաշալի՛,— ուրախացավ Շարան,— դու էնտեղ առոք-փառոք բազմի, հորեղբայր, թող ախպերս պարապի։

— Է՛հ, թող էդպես էղնի,— համաձայնեց տաղերգուն ու նստեց մի փոքր հեռու։

Հետո նա իմացավ, որ պետական գուսանական անսամբլը պետք է մասնակցի հայ արվեստի տասնօրյակին Մոսկվայում։ Դրա համար նորից հրավիրել են Շարա Տալյանին որպես գեղարվեստական ղեկավար։ Շուտով պետք է ժամանի նաև Քուշնարյանը որպես խորհրդատու։

Պարապմունքը սահուն էր ընթանում։ Մի տաղի կեսին Վարդգեսը նկատեց, որ հայրը թեքվել է, ձեռքը դրել որովայնին ու տնքում է։ Անմիջապես ընդհատեց փորձն ու մոտեցավ հորը.

— Հայրի՞կ, ի՞նչ եղավ։

Հայրը գունատ էր և շրթունքները՝ սեղմած։

— Գնանք տուն, հայրիկ, գնանք,— ու նայեց խմբին շտապող հայացքով։

— Տար, Վարդգես, տար տուն,— հորդորեց Շարան,— թող պառկի հորեղբայրս։

Հայր ու որդի ելան փողոց։ Շերամը ձեռքը դրեց որդու ուսին ու մրմնջաց.

— Չէ՛, Վարդ ջան, Արևիս տունն ավելի մոտիկ է,— և մյուս ձեռքով ցույց տվեց դստեր տան ծանապարհը։

Այդքան կիպ-կիպ, այդքան մտերմիկ երբեք չէին քայլել նրանք՝ հայր և որդի...

ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔ ՈՐԴՈ ԳՐԻԳՈՐԻ

Ա

Արդ, հասել է ժամը, երբ ես պետք է բացահայտեմ իմ իսկությունը...

Ես, Տալոյենց տան գլխավոր ճյուղի քրտնաջան ու համբերատար գրիչս, որ մկրտված եմ Վազգեն անվամբ, Գյումրի քաղաքի սուրբ Ամենափրկիչ եկեղեցում, 1907 ամի 10-ին դեկտեմբերի, մեծ տաղերգու Գրիգոր Կարապետի Տալյանցի կրտսեր որդին եմ. համեստ մի երկնող, որ սույն շարադրանքով և այլ բարի արարքներով փորձում եմ հատուցել նրան տրվելիք ահագնաչափ պարտքիս մի բուռը լոկ:

... Երբ երիտասարդ էի, մեծագործ երախտավոր Գրիգորի տաղերի վերա չարարեցի այն, ինչ ուխտս էր սրբազան: Եվ այժմ, երբ զրկված եմ մեծն երգչի գանձարանի նեցուկ տնօրինողներից և նրանց՝ Վարդգես եղբորս և Արևհատ քրոջս սատարումից, միայնակ եմ տանում իմ խաչը ի լյառն դժվարին, առանց իսկ տըրտընջալու, առանց իսկ դժգոհության:

Ընդունի՛ր, ուրեմն, իմ ողջակեզ նվիրումը և մի՛ զայրացիր, հա՛յր իմ, շնորհաշատ իմ ծնող...

Բ

... Նստած եմ նրա մահճի մոտ, որին գամվել է նա, բայց ոչ պարտված կյանքի վերջին ճակատամարտում: Հնաձև մահճակալը համր է, անբողոք, որովհետև հիվանդը հանգչում է անշարժ: Սենյակը կիսամութ է: Ահասարսուռ անդորրը խլացնում է իր լռությամբ: Փողոցից երբեմն մեքենաների հոնդյուն է լսվում, ձիերի դոփյուն: Սենյակ են թափանցում հատուկենտ անցորդների ձայները: Պատից կախված է նվագարանը, որի վրա փոշի է նստել:

Ծերամը բաց է անում աչքերը և նայում դռանը, շարժում է շրթունքները և ի խորոց սրտի հառաչում: Եվ կյանքի պատկերներն անցնում են անվերջանալի քարավանի պես, և հնչում են տաղերն իր...

Հավքեր կուգան երամ-երամ,
Անուն ունիմ՝ աշուղ Շերամ.
Էնքան յարիս պիտի կանչեմ,
Տեյմոր վառիմ, որպես Քյարամ։

Երգչի դեմքին դառը ժպիտ է խաղում...

Գ

Անցյալի տեսիլները հաջորդում են իրար։ Նրա աչքի առաջ հառնում է Ջիվանին, լրջախոհ նայում իրեն և խորհուրդ տալիս։ Երևում է Մուշեղ Մամիկոնյանը՝ հորաքրոջ տղան։ Նա թոթվում է երգչի թիկունքը. գովում է երևի։

... Լճակի ափին երևում է Կոմիտասը։ Մի ձեռքը դնում է երգչի ուսին, իսկ մյուսով ցույց է տալիս հորիզոնը...

Ահա և Հովհաննես Հովհաննիսյանը։ Նա հմայված նայում է Գոքորին և սպասում։ Իսկ ինչու՞ է երգչի ձայնը կտրվել. ձգնում է երգել, բայց չի կարողանում։

... Սպենդիարյանը նստել է դաշնամուրի մոտ և ժպտում է։ Պատկերն աղոտացավ, աղոտացավ ու մերվեց լուսնի լույսին...

... Տարտամ քայլերով իրեն է մոտենում Սալվինազը։

— Ողորմի՜ հոգուդ, Սալվի ջան, ներո՜ղ էղի...,— շշնջում է հիվանդը, և նրա աչքերում փայլում են արցունքի կաթիլները... Սրբացած կինը հեռանում է և աստիճանաբար ձուլվում մշուշին, որի միջից նայում է Վարդուհին։ Սա երևաց դռան մեջ և լուռ արտասվելով՝ նայեց ինձ։

... Հիվանդին թվաց, թե ներս մտավ Ավետիք Իսահակյանը. թևերը հանեց վերմակի տակից, իսկ բանաստեղծի պատկերը լուծվեց շատրվանի շիթերին...

Երգչի թևերն ընկան վերմակին...

... Մահճին մոտեցավ Արամ Քոչարյանը։ Շերամը ձգնեց երգել, բայց ձայն դուրս չեկավ, ինչպես երազում...

Պատկերները խառնվեցին իրար, պտույտ գործեցին և անհետացան անթափանց խավարում։ Հիվանդի գլուխը պտտվեց. նա թմբիրի մեջ ընկավ...

Դ

1938 թվական. հիվանդասենյակ։ Ներս մտա զգուշավոր քայլերով։ Հայացքը կտրեց առաստաղից, ոնգային երգն իր ընդհա-

տեց ու սևեռուն նայեց ինձ... Աստվա՜ծ իմ, մի՞թե շարունակում է իր կյանքի մեղեդին...

— Էկա՞ր, Վազգեն ջան,— խուլ ձայնով խոսեց։

Ես մի պահ արձանացա։

Ահա նա, հռչակավոր տաղերգուն, սիրո տառապյալը, առասպելորեն կենսասեր ու անձնազոհ ասպետը սիրո։ Ծունկի իջա նրա մահճի մոտ և համբուրեցի աջը։ Նա զգաց աչքերիս թացությունը։

— Մի՛ լա, բալա ջան, մի՛ լա...— խոսեց նվաղած ձայնով և, ո՛վ զարմանք, ժպտաց։

Հեգնանքի ապտակ էր դա մահվան դեմքին։ Փորձեցի վերմակն ուղղել, չթողեց. իր մատներով վեր քաշեց։

Նրա ձեռքերը հանգչում էին վերմակի վրա։ Ուստա Գոքորի ձեռքերն էին դրանք, աշխատանքի և ոգեշունչ արարման ձեռքերը, որ կամոքն իրենց տիրոջ ստեղծել էին նվագարաններ և շունչ տվել դրանց. նրա ձեռքերը, հայրական վաստակած ձեռքերը, իմ հարազատի ձեռքերը...

Ե

Հանգավ մեծ տաղերգուն... Ու ծիածանի պես գեղեցիկ կամուրջ դարձավ հին ու նոր երգաստանների միջև։ Ասես իմաստուն մի ուղևոր էր նա, որ եկել էր դարերի խորքերից ու գնում էր դեպի հեռուները գալիքի։ Ասես Գողթան երգիչներն էին ճանապարհ դրել քաջալերիչ բարեմաղթություններով։ Հին երգիչների դեսպանն էր նա և նոր երգիչների հոգեհայրը դարձավ։

Եվ հանգիստ առավ նա հայրենի աշխարհում, ուր մշտավառ սիրո նման հավերժ կհուրհրա փառավոր անունը նրա...

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ակունք 3
Արի իրիկնահովին 20
Անջուր պարտեզ 33
Դու իմ մուսան ես 42
Անհաղթ առյուծի երգը 48
Ճանապարհս ընկավ Թիֆլիս 61
Երբ ալեկոծ ծովի վրա 80
Փետրվարից փետրվար 105
Ծագեց արև, կարմիր արև 125
Անվերջանալի են ճամփաները սիրո 146
Ամենուրեք տաղարանն է աստղերի 161
Հազար էրնեկ էն գիշերին 179

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Վարդեր ու փշեր բարձունքի ճամփին 200
Բաղեն թռած բլբուլ եմ 218
Սիրով բարձած քարավանի պետը 234
Քաղաքային այգու ծերակույտը 264
Շողարձակ մայրամուտ 301
Վերջին երգը 321
Խոստովանանք որդո Գրիգորի 331

ՎԱՋԳԵՆ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԼՅԱՆ
ՇԵՐԱՄ

Վեպ-վավերապատում

ТАЛЯН ВАЗГЕН ГРИГОРЬЕВИЧ
ШЕРАМ

Роман

(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван 1986

Խմբագիր **Մ. Ա. Մկրտչյան**
Նկարիչ՝ **Հ .Գ. Կարախանյան**
Գեղ. խմբագիր՝ **Հ. Ս. Մալխասյան**
Տեխ. խմբագիր՝ **Ա. Վ. Հովհաննիսյան**
Վերստուգող սրբագրիչ՝ **Վ. Դ. Ազատյան**

ИБ 5114

Հանձնված է շարվածքի 28.05.86 թ.: Ստորագրված է տպագրության 18.09.86: ՎՖ 09129: Ֆորմատ՝ 84×108 1/32. Թուղթ՝ տպագր. № 2: Տառատեսակ՝ «Արմենուհի»: Տպագրություն՝ բարձր, 17,64 պայմ. տպ. մամ., 15,85 հրատ. մամ.: Տպաքանակ՝ 10 000: Պատվեր՝ 596:
Գինը՝ 1 ռ. 10 կոպ..
«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:
Издательство «Советакан грох»
Ереван-9, Теряна, 91.
ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 6 տպրաան, Երևան, Թումանյան փող. № 23/1:
Типография № 6 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР. Ереван, ул. Туманяна, 23/1.